Ես Գէորգ գիրքս այս

ստացայ [illegible] 1835

Կաճեճեան. Հօրն Միքայէլ 1835

Քերականութեան [illegible]

Հայկազեան Լեզուի

Ես Գէորգ գիրքս այս

[illegible] 1835

[illegible]

է Կաճեճեան

1830

491·99
Գ-19

ՉԱՄՉԵԱՆ ՀՕՐՆ ՄԻՔԱՅԷԼԻ

# ՔԵՐԱԿԱ՛ՆՈՒԹԻ՛Ն

## ՀԱՅԿԱԶԵԱՆ ԼԵԶՈՒԻ

ՀԱՄԱՌՕՏԱԳՐԵԱՑ ՊԱՐՈՆ ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՎԴԱԼ-ԵԱՆՑ՝ ԱՆԴԱՄ ԱՍԻԱԿԱՆ ՄԻԱԲԱՆՈՒ-ԹԵԱՆՆ ԲԱՆԳԱԼԱՑ ԵՒ ԴԱՍԱՍԱՑ ՚Ի ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՃԵՄԱՐԱՆԻՆ։

՚Ի ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԵՌԱՄԵԾ ՏԵԱՌՆ ՏԵԱՌՆ ԵՓՐԵՄԱՅ՝ ԱՄԵ-ՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ։

՚Ի ԳՈՐԾԱՐԱՆԻ ՆՈՐԻՆ ԻՄԿ ՃԵՄԱՐԱՆԻ։

---

՚Ի ԿԱԼԿԱԹԱ

1830։

ՆԱԽ ՊԱՐՏ Է ԶՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆՆ ՈՒՍԱՆԵԼ.

Գրիգոր Մագիստրոս։

11851

# ՄԻ ԿԱՐՃ ԲԱՆ

## ԱՌ ԸՆԹԵՐՑՕՂՍ ԶԱՅՍ ՄԱՏԵԱՆ

Որոց միանգամ աւանդեցաւ յառաջնորդութիւն մատաղերամ մարդկանց մտացն մշակութեան, հարկ է 'ի վերայ նոցա ոչ միայն արկանել 'ի բանաւոր անդս նոցին զսերմանս ուղղափառ գիտութեան և առաքինաճաճոյ առաքինութեանն, այլև ջան 'ի գործ դնել զսերմանեալսն անընդհատ հոգածութեամբ աճեցուցանել. որով և յաջողեսցէ բերել 'ի վերջոյ զպտուղս երեսնաւորս. վաթսնաւորս և հարիւրաւորս:

Զնոյն խորհեալ և ես զպարտիս ուսուցչի, միանգամայն և հորդել զճանապարհ արհեստին ուղղախօսութեան աշակերտելոցն ընդ մեօք 'ի Մարդասիրական Ճեմարանին՝ ջեռն 'ի գործ արկի համառօտագրել զլիակատար Քերականութեանն Հօրն Միքայէլի Չամչեանց. որ 'ի հայեցի գրագիտացն Հնդկաստանի նախապատուի քան զայլս հեղինակացն համարի վասն բանից վայելչահիւս հարթութեան և կանոնացն ախորժելի դասակարգութեան: Յայս ձեռնարկ ծառայութեան եղելոց է բանասէր ծննդոց զգոյն մեր հաւանորեր. և որդեանն արժէն Մեկենասայ՝ որպէս երբեմն առ առնէզէն դարուն երջանկին Օգոստեայ՝ վասն այնց մերց մայր և նեցուկ լինել հրատարակել:

Յընթացս երկարութեան իմոյ յաշխատելն կամ կարօղ լինելոյ զկանոնս առանձնակի 'ի հեղինակէն: Զանելով առ մեզ չէ վերջոյ համառօտելն նորին՝ նոր ինչ զաւել կարօղ համառօտագրելոյ: Յառաջին մասին ոնց որոշթեր անուանց զգլխաւորագոյն մեկնութիւնս յԱնգղիական փոխեցի առ 'ի նպաստել ընթացաւորութեան համեմատ. և զերկուս մի Հնդկայերանց Քերթողական մենեցի: Յերկրորդ և յերրորդ մասանս զբայելոց օրինակն յաւելեցի՝ զամբողջութիւն կանոնացն յամենայնի պահելով նոյն: Ընծայեմ եմ ինչ

որդւոց և եղբարց՝ պիտանիս ազգս էութեան խնդրոց ՚ի մ
տեսակ Եովինականել և զամենայն խնդիր էութեան անուանել.
Եայց խորհելով էր ողջունել հարկ լինէր զեղանակ այլայլութեա
մատուցանել ՚ի նախադաս խնդրատուութեան Եայնց, զանց առարար զի
և էջէ նորայն քաղաքականութեամբ։ Եւ եթէ ըստ Եանի հեղին ոչէն
դժուարին էջէ համեմատաց զբեռանս խնդրոց ոլորել, կարեն
վաղու ամենայնի առել խնդրի էութեան և այնպէս կոչել։

Խրատամէք գովեցաւ յորդոր հայասէր Եռանդագէ-
ալց Վեհերախնամութեան Հօրն Գաբրիէլի, որ ՚ի հին ջեռա-
գրաց Հայ մատենագրաց եղանակ նորանոր քերականական ձայնո-
թութիւնս քաղեալ Հնեւեղեան մեղուաց դէս՝ զարհեստն քերթո-
ղական ճոխացուցեալ եռանդաւաճեցայց. Եայց առաւել զի գա-
ւառական լեզուն՝ որով զատուցին և զերձոտ մասանս զարդ-
գութեան՝ հնչէ յանդնդել աչաչ համեմատ մերոց Աւրաբեցէ
և Սնեւթացէ։

՚Ի վերջան ամենայնի մատուցանեմ ներողութիւնս
զայս մատեան ուսուցանողաց աշակերտացն Ճեմարանին մերոյ և
հայասէր գրագիտացն ընդհանրապէս, յուսալով զի և ընթերցող
Եւրեւաէր չամօք յօժարեցին ընդունել զայն՝ ոչ ատ աղագրական
ինչ վերէպակաց համարելով զայն խոտան. քանզի և ըստ կըրա-
տեալ գտանին յոլով անգամ ադակնեալ հատ ինչ ՚ի քաղցրա-
ւեշէ նառան՝ զոր չէ պարտ վաան այնր ՚ի եաց ջնջել։ Նա՝ և չէ
ինչ ՚ի ծերջաառուաց անյայտ զի աա անվրէպ ապագրութեան
մատենից զերոյ են հարկաւորաւոր աշխատողաց Աւրգոոի։

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՎԴԱԼԵԱՆՑ։

## ՈՒՂԵՐՁ ՍԻՐՈՅ

Գ.

ԱՌ ԲԱՐԵՊԱՐԻՇՏ ԱԶՆԻՒ ԱՂԱՅ ՅՈՎԱՆՃԱՆ
ԷԼԻԱԶԵԱՆ.

ՍԱՏԱՐԵԼ ազատական արուեստից առաւել քան այլոց իրաց՝ յատուկ գործ է առն առատաձեռնի, ասէ հռչակեալն 'ի կաճառս իմաստասիրացն արտաքնոց Արիստոտէլ. յոր և յարէ զպատճառն ասելով՝ զի չէ ըմբռն թէ Մուսայքն՝ որոց խնամածու գոլ վիճակեցաւ մակացութեանց և գիտութեանց՝ 'ի պակասութենէ ընչից մնացեն մուրակք:

Արդ՝ դիւրել կամելով քո Հայեցի մանկտւոյ զարուեստ ուղղախօսութեան, յօժարական յառաջ մատեայ սատար լինել ծախուց

տպագրութեան այսր մատենին. որով ոչ միայն գրաւէր համբակաց մերայնէից նպաստել բարերարեցեր, այլ և վարժս բաղում քեզ 'ի յերկինս անդ գանձեցեր. քանզի եթէ Վարդապետն մեր վերին արբուցանողացն փոքրկանց զաւանց ծախուց բաժակ մի ջուր ցուրտ խոստացաւ զբազում երանութիւնս, ապա ուրեմն որքան առաւել և նոցա՝ որք զօրէն քո զգոյս իւրեանց մատուցանեն 'ի շինութիւն ազգի և յօգուտ հայրենեաց:

Կալով մնամ՝

'Ի Մարդասիրական
Ճեմարանին,
'Ի 1 Մայիսի 1830:

Պատուականութեան ձերում՝
Խոնարհ Ծառայ՝

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՎԴԱԼԵԱՆՑ:

# ՅԱՌԱՋԱԲԱՆՈՒԹԻՒՆ.

ԱՌ բանաւորապէս վարելոյ մարդկան ընդ միմեանս ըստ քաղաքական կենաց՝ հարկ էր յայտնել իներոց զխորհուրդս մտաց իւրեանց ՚ի ձեռն խօսից։ Եւ քանզի խօսք մարդկան կարէ ոչ էապէս փոփոխիլ՝ և յուղղութենէ իւրմէ ես վրիպիլ՝ յարտասանելն և ՚ի գրելն, պիտոյ էր գտանել զարուեստ ինչ կառավար խօսից. այնինքն է՝ արուեստ քերականութեան։ Ա՛նկ գրեթէ ամ̃ ազգք մարդկան՝ որք ուղղախօսութեան փոյթ կալան, զնոյն հնարել ջանացան։

Երեւելի հնարիչք և հեղինակք այսր արուեստի եղեն քաջ լեզուագէտք իւրաքանչիւր ազգաց. որպէս՝ յունաց պղատոն. բայց քաջ ևս արիստոտէլ, ևս և թէոդեկտէս։ հռովմայեցւոց կրատէս մալլովտէս։ եբրայեցւոց ռաբբի յուդան չիուկ ՚ի ֆէս քաղաքէ ափրիկոյ՝ յամին 140. ըստ գրելոյ լուտովիկոսի մոլլերեայ։ Սոյնպէս և այլք՝ այլոց ազգաց։

Իսկ ՚ի հայս՝ որք միանգամ ՚ի սկզբանէ հետէ ուղիղ գիրս շարադրեցին, նոքա հեղինակք քերականութեան համարեցան. ոչ զի քերականութեան կանոնս գրեցին, այլ զի զուղղութիւն խօսից և գրոյ ըստ հանգամանաց լեզուի մերոյ մեզ աւանդեցին։ ՚Ի մէջ որոց սուրբն մեսրովպ եգիտ ըզգիր. իսկ յաշակերտաց նորա դաւիթ անյաղթ փիլիսոփայն գրեաց ըստ յունականն օրինակի զհամառօտ ինչ քերականութիւն. զոր յետ ժամանակաց մեկնեաց յոհան երզնկացին։ Եւ այլ ոմանք ևս յորդորեցան զնոյն ընդարձակել. և ՚ի կամելն առաւել ճոխացուցանել ոմանք ՚ի հանգամանաց յատկութեն լեզուիս հայոց խոտորեցան. և ոմանք

ևս զոճ խօսից այլոց ազգաց 'ի ներքս մուծին . որով
սկսաւ խանգարիլ վայելչութիւն լեզուիս մերոյ ։

Զայս տեսեալ հօր մերում ամենապատիւ Մխիթարայ աբբահօր՝ կամեցաւ շարադրել զնոր ինն քերականութիւն . և նովին վերածել յառաջին ուղղութիւն զգրաբառ լեզուս հայոց ։ Բայց քանզի յայնմ ժամանակի նորոգ հանդիսացեալ էին բազում քերականութիւնք բազում հեղինակաց , որք բազում ինչ նոր և օտար խառնեալ էին 'ի լեզու մեր , ո՛չ էր հնար հակառակ նոցին ուսանել կանոնս ըստ բուն նախնի ուղղախօսութեան ։ Նմին իրի ջանացաւ հայրն մեր այնպէս կարգել զքերականութիւն իւր , զի մի ներհակ երևեսցի նոր հեղինակաց . բայց դիտելով միանգամայն ևս հորդել զճանապարհ հասանելոյ յուղղութիւն նախնի լեզուին մերոյ ։

Եւ թէ յիրաւի գիտումն հօր մերոյ այս եղև , յայտ է 'ի բազում բանից , զորս գրէ 'ի քերականութեան իւրում . յորս ջանայ յորդորել զուսանօղսն զհետ գնալ սովորութեան նախնեաց մերոց . և ըստ կանոնի նոյին վարիլ 'ի շարադրութիւն ։ Քանզի նախ՝ 'ի Գ մասին . գլ . 17 . 'ի գրոց նախնեաց յառաջ բերեալ զբազմապատիկ օրինակս շարադրութեան՝ նոքիմբք յորդորէ զուսանօղսն՝ քաղցրաբանութեան նոցին հետևիլ . ուստի և 'ի վերջոյ յարէ՝ ասելով . * Արդ՝ բաւականասցին օրինակք այսքանք , զորս առբերաք 'ի գրուածոց և 'ի շարադրութեանց նախնեաց մերոց՝ առ 'ի ցուցանել համբակագունից զոճս ոմանս , և զճանապարհ քաղցրաբանութեան 'ի շարադրութիւն բանից || ։ Երկրորդ՝ 'ի Է մասին . գլ . 16 . յետ ցուցանելոյ՝ թէ անուանք ինչ այսպէս 'ի գործ ածէին 'ի նախնեաց , յարէ . * Ըստ այսմ հետազօտելիք են և այլք նմանք՝ հայելով 'ի սովորութիւն լեզուին , և 'ի հեղինակութիւն նախնեաց . և ոչ ըստ տեսանելոյ զանուն ինչ արտաքոյ հասարակի կանոնի՝ իսկոյն ժպրհիլ և ասել , թէ այս այնպէս պարտիւր գոլ , և ոչ այսպէս || ։ Զայս ասացեալ՝ յաւելու ևս . * Զայսքանս տե՛ս սակաւուք առ այս վախճան բազմա-

տուեալք աստէն, զի մի՛ դուցէ ոմանք ուսանելով զմասնս կանոնս՝ խակոյն մտացեալք՝ սրբագրիչք նախնեաց և սովորութեան լեզուի լինիցին || ։

Երրորդ՝ ՚ի Գ մասին. գլ. 3. յետ կանոն տալոյ՝ թէ չէ հարկ նախադաս ածականաց թուով և հոլովով համաձայնիլ ընդ գոյականաց՝ յաւել զայս. * Ըստ ասացելոյս բազմիցս վարեցան նախնիքն մեր ՚ի շարադրութիւնս բանից, որպէս և երևի. վասն զի յարմարութիւն արտաբերման բառից մերոց ՚ի բազում տեղիս պահանջէ զայն ։ Եւ եթէ ոք բռնաբարեալ զսովորութիւն լեզուին ամ ուրեք կամիցի ներգործութ համաձայնեցուցանել զնախադասեցեալ ածականն գոյականի իւրում թուով և հոլովիւ, ՚ի բազում տեղիս մերժէ զքաղցրութիւն արտաբերմանց բառից. և անհարթ առնէ զշարադրութիւնս. և այլն || ։ Ըստ այսմ և ՚ի Է մասին. գլ. 16. ցուցանէ, թէ ոչ է պարտ բռնաբարել զսովորութիւն լեզուին՝ հոլովելով զի և իցէ ածականս, թէ և ասէ հարկ լինի այն. և սովորութիւն ասելով՝ իմանայ զնախնեացն ։ Չորրորդ՝ ՚ի Է մասին. գլ. 11. յետ ասելոյ՝ թէ հինք այսպէս ՚ի գործ ածեն զայս ինչ հոլով՝ ՚ի մէջ բերեալ զնորոյն՝ ասէ, թէ այս * բառնայ զհամեղութիւն շարադրութեանց. և հակառակի երևի հնոյ սովորութեան լեզուին || ։

Հինգերորդ՝ ՚ի Է մասին. գլ. 25. յայտ առնէ, թէ համեղ են ձևանան կրաւորական բայք երկրորդ լծորդութեան՝ եթէ ըստ հնոյ սովորութեան ՚ի գործ ածցին էական բայիւ. և զնոյն կրկնէ և պատշաճագոյն ցուցանէ ՚ի գլ. 26 ։ Դարձեալ և ՚ի նոյն գլ. զեղանակ խոնարհմանց բայից ՚ի հնոյ բերեալ, բաղդատելով զնոսին ընդ նորոյն՝ յարգի ցուցանէ ։ Նոյնպէս և ՚ի Գ մասին. գլ. 13. և ՚ի Է մասին. գլ. 14. զեղանակ վարելոյ նախնեաց զընդունելութիւնս առաջի եդեալ գովելի իմն ցուցանէ զնոյայն ։ Իսկ ՚ի գլ. 12. Գ մասին. զնորոց հնարեալ կրաւորական ընդունելութիւնս յանդգնեալս ՚ի օգ՝ անգործածելի ։

Յասացելոցս յայտնի երևի, թէ փոյթ և դիտումն հօր

մերոյ այս էր, զի զվայելչութիւն լեզուին մերոյ հանդիսա-ցուսցէ ըստ սովորութեան նախնեացն ։ Այլ սակայն եթէ զոր դիտէին՝ յայտնապէս գրէր, և զնոյն կանոնս իւր ըստ այն կարգէր, թշնամի յարուցանէր գրութեան իւրում զբա-զումս ՚ի նորոյ. որով ոչ ժամանէր այնմ, զոր դիտէր ։ Այլ և հարկ եղև նմա ՚ի բազում իրս ընդ մտաց նորա յար-մարել զձևս քերականութեան ՚ի հոլովմունս, ՚ի ծոր-դութիւն, և ՚ի համաձայնութիւն մասանց բանի ։ Եւ այսու համեալ զմիտս նոցա՝ հնարիւք իմն առաջնորդել յոր-դիսութիւն վայելչութեան լեզուի մերոյ ։ որպէս և յայտնեալ իսկ էր զմիտս իւր ձեռնասուն աշակերտաց իւրոց. որոց և մեք գոյք աշակերտեալ ։

Յայս դիտումն հօր մերոյ հայեցեալ՝ կամեցաք զայս քե-րականութիւն ՚ի լոյս ընծայել, յօրինեալ ամենևին ընդ հա-գամանս ոճոյ լեզուիս մերոյ. յաղեալ աչալրջութեամբ ՚ի գրութիւնս նախնեաց մերոց զուգութիւն խօսից՝ թէ ըստ հո-լովման անուանց, և թէ ըստ ծորդութեան բայից. թէ ընդ համաձայնութեան անձանց, և թէ ընդ խնդրառութեան մա-սանց բանի. յամի ջանացեալ ՚ի նոցանց բերել զօրինակ կանոնաց աւանդելոց ՚ի սմին ։

Այլ՝ որք միանգամ ՚ի ձեռս առեալ ընթեռնուցուն զսա, չունին տեղի զմեզ մեղադրելոյ, և կամ ասելոյ եւ զինչ պիտոյ էր շարադրել զայդ. ո՞չ ահա կայ ընդար-ձակ քերականութիւն երջանիկ միխիթարայ աբբայհօրն. այլ՝ մանաւանդ յօժարութեամբ ընկալցին՝ ծանիցեն, թէ սովին փոյթ եղև մեզ զդիտաւորութիւն հօրն մերոյ յայտ-նել. և զքերականութիւն նորա առաւել ևս ՚ի յարգուն ընծայել ։

Այլ աստ արժան է ծանուցանել ինչ ինչ վասն այսր գործոյ. իբր զի յայսմ քերականութեան ՚ի տալ մեր ըզ-կանոնս՝ ՚ի բազում տեղիս ոչ եդաք զպատճառն այլ մի-այն զօրինակս հանեալ ՚ի գրոց նախնեաց մերոց. վասն զի գործածութիւն լեզուի ոչ ՚ի պատճառէ կանոնաց, այլ ՚ի սովորութենէ և ՚ի յաճախութենէ. և քանզի այս սովորու-

Թն և յատկութն ՚ի գիրս նախնեաց միայն գտանի ․ վկայ-
ութք բանից նոցին միայն կարեն ճշմարտել կանոնք քերա-
կանութե ․ և ոչ թէ պատճառաւ ․ այլ թէ ոչ՝ նոյն պատ-
ճառ յամ լեզուս պարտ էր զօրել ․ որ ո՛չ է այնպէս ։
Զո՛ր օրինակ ․ ՚ի լեզուի մերում նախադաս ածականք հա-
սարակօրէն ոչ համաձայնին ընդ գոյականաց թուով և հո-
լովիւ ․ իսկ ՚ի լատինս ըստ ամի պարտին համաձայնիլ ։ արդ
եթէ յետ աւանդելոյ զայս կանոն՝ թէ նախադաս ածա-
կանք ոչ պարտին համաձայնիլ ընդ գոյականաց ․ յարէաք
զպատճառ ինչ՝ թէ վասն զի ՚ի համաձայնիլն՝ շփոթութն
լինէր ․ արդեօք բաւականայի՞ն էին նոքա միմեանց՝ թէ
յատկացուցիչ ։ Այս պատճառ ոչինչ զօրէր ․ և լինէր ևս
սուտ ․ զի և ՚ի մեզ իսկ երբեմն ըստ պահանջելոյ վայել-
չութե բանին համաձայն դնին ։ Այնպէս իմա և վասն այ-
լոց կանոնաց ։

Իսկ վն վկայութեցն՝ զորս բերաք յօրինակ ՚ի քերակա-
նութե աստ ․ Գիտելի է նախ ․ զի յընտրել մեր զնոսին՝
հայեցաք զգուշութբ ՚ի պէսպէս ձեռագիրս ․ և որք ըն-
տիրքն էին ․ նոցին հետևեցաք ․ և ՚ի նոցունց զընտիրսն
առաք ։ Ուստի եթէ ոք այլուր՝ մանաւանդ ՚ի տպագիրս
այլազգ գտցէ քան զոր աստ եդաք՝ և կամ իւիք այլայլ-
եալ ․ մի՛ մեղադրեսցէ զմեզ ․ զի այն այլայլութի ոչ է ՚ի
մէնջ ․ այլ ՚ի պէսպիսութէ ձեռագրաց ․ յորս գտանին
անհամար խանգարմունք սպրդեալք յանհմուտ գրչաց ։
Եւ զայս քաջ կարէ իմանալ ամ ոք՝ եթէ զբազում ձե-
ռագիրս ընդ միմեանս բաղդատեսցէ ․ ըստ որում և իմացան
իսկ փորձիւ՝ որք բաղդատութբ բազում ձեռագրաց նո-
րոգ տպագրեցին զաղօթագիրս Նարեկացւոյն ․ որպ է տե-
սանել ՚ի յառաջաբանութե և ՚ի վերջաբանութե նորին ։

Գիտելի է երկրորդ ․ զի բազում ուրեք ՚ի բերել մեր
զվկայութիս ․ տեսեալ՝ թէ գտանին ՚ի նոսա բառք ինչ՝
որք ոչինչ իւիք հային յայն կանոն ․ առ որ բերին յօրի-
նակ ․ ՚ի բաց առաք զնոսին ՚ի միջոյ նոցա ․ եդեալ ՚ի
տեղի նոցին զերիս կէտս կարգաւ այսպէս ․ ․ ․ առ ՚ի

ցուցանել՝ թէ բարձեալ են անտի բառք ինչ, և կամ հատուած ինչ բանի ։ և սակաւ ուրեք եւ՛ ուր ՚ի բաց բառնալին էր մի կամ երկու բառ, զանց արարաք դնել զերիս կէտսն ։ Եւ ուրեք ուրեք եւս ՚ի մէնջ յաւելաք յօրինակսն անդ բառս ինչ փակագծիւ, որ փարենթազզաւ՝ առ ՚ի պարզ իմացուցանել զմիտս բանին ։

Գիտելի է երրորդ, զի ՚ի նշանակել մեր զտեղիս վկայութեանն՝ բազում ուրեք կիսատ եդաք՝ վասն ոչ ծանրաբեռնելոյ զգործ մեր աւելորդ բառիւք ․ ուստի փոխանակ դնելոյ՝ լամբրոնացին ՚ի յառաջաբանութե, կամ ՚ի մեկնութե պատարագի, կամ ՚ի Ճառն կարգաւորութե եկեղեցւոյ, կամ ՚ի մեկնութե սաղմոսի ․ գլ․ 8 ․ կամ ՚ի մեկնութե յայտնութե ․ և այլն ․ եդաք, լմբ․ առջն ։ լմբ․ պտր ։ լմբ․ եկեղ ։ լմբ․ սղմ․ 8 ։ լմբ․ յայտ․ և այլն ։

Փոխանակ դնելոյ՝ շնորհալին ՚ի թուղթսն, կամ յընդհանրականն թղթին, կամ ՚ի ներբողս հրեշտակաց, կմ ՚ի դաւանութե, կամ յառաջնախօսութե ․ և այլն ․ եդաք, շնորհ․ թղթ ։ շնորհ․ ընդհանր ։ շնորհ․ հրեշտ ։ շնորհ․ դաւան ։ շնորհ․ առջն ․ և այլն ։

Փոխանակ դնելոյ՝ սարգիս վրդպ ՚ի մեկնութե, ա, յովհ․ Ճառ․ 8 ․ կամ ՚ի մեկնութե յակոբայ ․ Ճառ․ 3 ․ եդաք, սարգ․ ա․ յովհ․ 8 ։ սարգ․ յակ․ 3 ։

Փոխանակ դնելոյ՝ իգնատիոս վրդպ ՚ի մեկնութե ղուկասու ․ գլ․ Ժգ․ համար․ 7 ․ եդաք, իգնատ․ ղկ․ 7 ։

Փոխանակ դնելոյ՝ գէորգ վրդպ ՚ի մեկնութե եսայեայ ․ գլ․ 1 ․ եդաք, գէորգ․ 1 ։

Փոխանակ դնելոյ՝ եղիշէ վրդպ ՚ի պատմութե ․ գլ․ Է ․ և եւս ՚ի մեկնութե հայր մերին ․ ՚ի մեկնութե դատաւորաց ․ ՚ի խրատն միանձանց ․ ՚ի Ճառն թաղման տն ․ եդաք, եղիշ․ Է ։ եղիշ․ հայր մեր ։ եղիշ․ դատ ։ եղիշ․ խրատ ։ եղիշ․ թաղ ։

Փոխանակ դնելոյ՝ եզնիկ կողբացի ՚ի գիրս Եղծմանց ․ Ճառ․ կա ․ ( ըստ որոշմանն տպագրելոյն ) ․ եդաք, եզնկ․ Ճա ։

Փոխանակ դնելոյ՝ մովսէս խորենացի ՚ի գիրս պատմութեան · գիրք · Բ · գլուխ · 6 · կամ յաշխարհագրութեան, կամ ՚ի ներբողն հռիփսիմեանց, կամ ՚ի ճառն վարդավառի · եդաք, ԽՈՐ · Է · 6 ։ ԽՈՐ · Ծ ։ ԽՈՐ · ՀՌԻՓ · ԽՈՐ · ՎԱՐԴ ։

Փոխանակ դնելոյ՝ գրիգոր նարեկացի · ՚ի բանն ԼԲ · կամ ՚ի մեկնութեան երգոյ երգոյն սողոմոնի · եդաք, ՆԱՐ · ԼԲ ։ ՆԱՐ · ԵՐԳ ։

Փոխանակ դնելոյ՝ յակոբ մծբնայ հայրապետ · ՚ի ճառն · Զ · եդաք, ՄԾԲ · Զ ։

Փոխանակ դնելոյ՝ ՚ի յաճախապատումն լուսաւորչին մերոյ · գլ · Ք · եդաք, յաճախ · Ք ։

Փոխանակ դնելոյ՝ ՚ի շարականս · կանոն ԺԱ · եդաք, ՇԱՐ · ԺԱ · (ըստ կարգի շարականին տպագրելոյ ՚ի կոստանդնուպօլիս · յամի տն · 1742 · և հայոց · ՌՃՂԱ ։)

Փոխանակ դնելոյ՝ յոհաննէս իմաստասէր յեկեղեցական կանոնադրութիւնս · գլ · Ե · եդաք, ՅՈՀ · ԻՄԱՍՏ · Ե ։

Փոխանակ դնելոյ՝ նանայ իմաստասէր ՚ի մեկնութեան յովհաննու · գլ · Զ · համար · 6 · եդաք, ՆԱՆԱՅ · Զ · 6 ։

Փոխանակ դնելոյ՝ ոսկեբերան ՚ի մեկնութեան յովհաննու · հատոր · Ա · ճառ · 16 ։ կամ ՚ի մեկնութեան ղուկասու · գլ · 15 · համար · 11 ։ կամ ՚ի մեկնութեան մատթէի · գլ · 1 · համար · 3 · եդաք, ՈՍԿ · Ա · 16 ։ ՈՍԿ · ՂՈՒԿ · 15 · 11 ։ ՈՍԿ · ՄԱՏ · 1 · 3 ։

Փոխանակ դնելոյ՝ ՚ի վարս հարց · գլ · Զ ։ ՚ի գիրս վեցօրէից բարսղի · ճառ · Բ ։ ՚ի գիրս կիւրղի · այն է կոչումն ընծայութեան · գլ · Զ · համար · 7 ։ ՚ի գիրս սեբերիանոսի եպիսկոպոսին էմեսու · ճառ · Ժ ։ ՚ի գիրս խուրի եփրեմայ, ՚ի մեկնութեան թագաւորաց, և այլն ։ եդաք՝ ՎԱՐՔ ՀԱՐՑ · Զ ։ ՎԵՑՕՐ · Բ ։ ԿԻՒՐ · Զ · 7 ։ ՍԵԲԵՐ · Ժ ։ ԵՓՐԵՄ ։ ըստ այսմ ձևի և վասն այլոց ։

Իսկ յորս ոչ գոյր գլխակարգութիւն ինչ, որպիսի են մատեանքն ագաթանգեղոսի, մեծին խոսրովու ՚ի մեկնութեան ժամագրքի, և ՚ի ճառն աղուհացից · յովհաննու կաթուղիկոսի · գրիգորի մագիստրոսի · գրիգորի վկայասիրի ·

Թովմայի վարդապետի՝ աշակերտին եղիշէի • Ճառք մամբրէի • Ճառք պետրոսի սիւնեաց եպիսկոպոսի • Ճառք միսայէլի եպիսկոպոսի • Ճառք աբրահամու մամիկոնէից եպիսկոպոսի · գովեստ և Ճառք յովհաննու երզնկացւոյ • և այլն ։ Եւ ևս՝ գովեստքն լուսաւորչին առաքեալ յոսկեբերանէ · գիրք պիտոյից · Ճառընտիրք · և այլն ՚ Երկար լինէր զորոշեալ տեղիս սոյանշանաւ խիք ՚ի մէջ բերել · վսն եղաք այսպէս ագաթ ։ խոսրով ։ յոհն · կթղ ։ մագիստ ։ գրէգ · նիւս ։ ներս · կլյ ։ մամբրէ ։ պետ · սիւն ։ միսայէլ ։ աբրահամ ։ երզն ։ գով · լուս ։ պիտոյ ։ ճառընտ ։

Սոյնպէս և յայլս ։

Գիտել արժան է և զայս ՚ զի յառաջին մասին այսր քերականութեան հանդերձ անուանց և բայից դասակարգելոց ութ իւրաքանչիւր հոլովմամբք և լծորդութեամբք եդաք ըղ-ռամկական բառս ինչ ՚ի բացատրութեանց · զի նորօք իմացեալ ուսանողաց զնշանակութիւն ինչ բառիցն՝ յօժարութ ՚ի միտ առնուցուն զխօսսն ։

՚Ի վախճանի յորդորեմք ՚ միանգամայն և զգուշացուցանեմք զուսանողսն ՚ մանաւանդ զնորավարժս ՚ ուղիղ ընթանալ յուսումն քերականութեան · և մի խիք թիւրիլ ։ Ուղիղ ընթանալն ՚ յորժամ ըստ կանոնաց եղելոց ՚ի սմա վարժին · և ըստ այնմ ՚ի շարադրութիւնս վարին ։ Թիւրիլ սխալին ՚ յորժամ թողեալ զկանոնսն՝ և զորս են ՚ի հասարակ գործածութեան ՚ հային ՚ի խոտորմունս · ըստ յայնս՝ որք գտին իբր արտաքոյ կանոնի ։

Զոր օրինակ ՚ ՚ի կանոնս համաձայնութեան ածականաց եդեալ է յառաջին կանոնի ՚ թէ ածականք յորժամ յետադասին գոյականաց ՚ պարտին համաձայնիլ ընդ նոսա թուով և հոլովիւ · և յետոյ եդեալ ևս է ՚ թէ ուրեք ուրեք երբեմն առանց համաձայնութեան գտնին ։ Արդ եթէ ուսանողն ըստ կանոնին ընթասցի ՚ ուղիղ շարադրութ կացցէ · իսկ եթէ ըստ խոտորմանն վարեսցի ՚ թիւրի · և պատճառ թիւրելոյն ոչ է այս ՚ զի այն համաձայնութիւն է թիւր · այլ՝ այս ՚ զի ոչ գիտէ ըստ տեղւոյն ՚ի կիր առնուլ զայն,

խոստովանիմ ։ Եւ մի՛ ոք ասիցէ, թէ ընդէ՞ր ապա եդեալ կան այնպիսի խոստովանութիւնք զհետ ուղիղ կանոնաց. վասն զի այդպէս վայել էր. և հարկն իսկ ստիպէր դնել. զի ուրեք ուրեք վայելչութիւն շարադրութեան պահանջէ այնպիսեօք վարիլ. թէպէտ և նորավարժք չիցեն ձեռնհաս ըստ օրինի կարգել ։ և եթէ մեք ՚ի շնորհս նորավարժից զանց առնէաք դնել զնոսին, գործ մեր այս լինէր թերակատար. նաև պատճառ ամփոփելոյ զընդարձակութիւն

լեզուիս հայոց ։

Արժան է աստանօր յորդորել նաև զուսուցիչսն, զի փոյթ մեծ կալցին յերիս ։ Նախ՝ ցանկալի և կարևոր երևեցուցանել աշակերտաց զուսումն քերականութեան ։ Երկրորդ՝ առանց նախանձու լիալիր հաղորդել նոցա զամենայն պիտանիս՝ որ ՚ի սմա ։ Եւ երրորդ՝ դիւրին ճանապարհաւ վարժել զնոսա յայս արուեստ. և մի՛ ընդ առապարս ածել՝ դժուարին ոճով առաջնորդելով. և մի՛ ևս ահաբեկ առնել՝ իբր անհաս իմն ցուցանելով. և մի՛ իւիք ևս աղօտացուցանել՝ մթին բառիւք մեկնելով. ապա թէ ոչ, սակաւք ցանկան ուսանել զայն. բազումք ևս յուսահատին. իսկ որք ուսանիցին, անկատար մնան ։ Եւ այս իսկ է պատճառն, զի յազգի մերում սակաւք գտանին տեղեակք քերականութեան. փոխանակ զի պարտ էր յայժմու ժամանակիս, յորում սկսան երևիլ ՚ի մեզ ծաղիկք իմաստութեան, փոյթ ունիլ ամենայն զայն ստանալ. և սովին առ գերագոյն իմաստս բերիլ. զի որ զայն ստանայ, ստանայ գրեթէ զամենայն գիտութիւն յամենայն գիրս. զի ՚ի քաջ վարժիլն ՚ի սոյն՝ դիւրին լինի նմա իմանալ զգրեանս, որովք և իմաստնացեալ բերկրի հոգին. և զպատուական ժամանակս ՚ի պատուականս ծախելով՝ լինի և ինքն պատուական ։

# ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

## ՀԱՅԿԱԶԵԱՆ ԼԵԶՈՒԻ։

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ Է ՈՒՍՈՒՑԱՆԵԼ մարդոյ ուղիղ կարդալ զխօսս։ Եւ քանզի խօսք մարդկան կազմին ՚ի բառից, քերականութիւն յայնժամ ուսուցանէ ուղիղ խօսիլ, յորժամ զբառսն է կանոնօք կարգաւորէ։ Արդ՝ ՚ի խօսս մարդկան ութն ցեղք բառից գտանին։ Նախ՝ անուն, որ նշանակէ զիրն. որպէս, **մարդ**. **փայտ**. **քարէ**. **իմաստուն**. **խնդրուածք**. ևն։ Երկրորդ՝ դերանուն, որ յուցանէ զդէմս իրայն. որպէս, **ես**. **դու**. **նա**. **սա**. **այդ**. **նոյն**. և այլն։ Երրորդ՝ բայ, որ զբառս կամ զկիրս իրին նշանակէ ընդ ժամանակաւ. որպէս, **գրեմ**. **գնամ**. **խօսիմ**. **ընթանամ**. և այլն։ Չորրորդ՝ ընդունելութիւն, որ նշանակէ զիրն ընդ գործողութեամբ. որպէս, **գրօղ**. **գնացեալ**. **խօսեցեալ**. **առեալ**. և այլն։ Հինգերորդ՝ նախդրութիւն, որ զպարագայս իրին նշանակէ. զոր օրինակ, ՚ի **վերայ** նորա. **հանդերձ** նովաւ. **վասն** քաջութեան. և այլն։ Վեցերորդ՝ մակբայ, որ զեղանակս գործողութեանց նշանակէ. զոր օրինակ, **արագ** ընթանայ. գայ ՚ի **վերջոյ**. **ամենեքեան** եհաս. և այլն։ Եօթներորդ՝ շաղկապ, որ զբառս և զբանս ՚ի միասին շաղկապէ. որպիսի են բառքս, **և**. **զի**.

առնչոյն · եւեթ · և այլն ։ Ութերորդ՝ միջարկութիւն, որ զկիրս հոգւոյն ցուցանէ · զորօրինակ՝ վահ · ոհ · և այլն ։

Այսոքիկ ութն ազգք բառից կոչին մասունք բանի · զո-րոց խօսի քերականութիւն յերիս մասունս ։ Յառաջնումն պարզապէս առաջի դնէ զգործածութիւն սոցա · յերկրորդումն քննէ զորպիսութիւն սոցին · իսկ յերրորդումն խօսի զհամաձայնութենէ սոցա ընդ միմեանս · ըստ որում և մեք ունիմք կարգել զայս քերականութիւն ։

# ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ·

## Յաղագս գործածութեան մասանց բանի ։

Այս մասն քերականութեան պիտանի է քան զայլսն և հարկաւոր · զի է դուռն լեզուիս Հայոց · ևս և գործարան համօրէն բանից · վասն զի 'ի սմա պատրաստին ՝ և որպէս թէ տաշին և կոկին ամ՟ ազգք բանից 'ի ձեռն հոլովից և խոնարհմանց և դասաւորութեան իւրեանց ։ Ապա որք միանգամ կամին ուսանիլ զլեզուս Հայոց ՝ արժան է նոցա յառաջ քան յայլ ինչ ձեռնարկել՝ սրտի մտօք զսոյն խնդրել · յօժարակամ փութալ 'ի սոյն դիմել · անխոնջ ջանիւ 'ի սոյն դեգերիլ · և ուղիղ պարզմտութ՟բ զամ՟ գրեալս 'ի սմա 'ի յիշողութեան գանձել ՝ նախ՝ զհոլովս անուանց և դերանուանց · յետոյ զխոնարհմունս բայից · և ապա զայլսն ՝ զորս առաջի դիցուք կարգաւ ։

## ԳԼՈՒԽ · Ա ·

### Յաղագս հոլովման անուանց ։

Անուանք պէսպէս ձևանան 'ի գործածութեան իւրեանց · որպէս անունս աշխարհ՝ տասն օրինակաւ կարէ ձևանալ 'ի խօսակցութեան · զոր օրինակ ՝ աշխարհ · աշխարհի · յաշխարհ · զաշխարհ · յաշխարհէ · զաշխարհէ · աշխարհաւ · զաշխարհաւ · յաշխարհի · ով աշխարհ ՝ կամ՝ աշխարհք · աշխարհաց · ընդ աշխարհս ·

զաշխարհս · յաշխարհայ · զաշխարհայ · աշխարհօք · զաշխարհօք · յաշխարհս · ով աշխարհք ։ Եւ այսպիսի փոփոխութիւն մի և նոյն անուան կոչի՝ հոլով ։ Իսկ որոյ անունք · ուղղական հոլով · սեռական հոլով · տրական հոլով · հայցական հոլով · բացառական հոլով · պատմական հոլով · գործիական հոլով · պարառական հոլով · ներգոյական հոլով · կոչական հոլով ։

Այլ այս հոլովք՝ յամ անուանս ոչ են միօրինակ , այլ՝ բազմապատիկ · զի ունիմք յանուանց 'ի հոլովին եզերին 'ի է · էւ · ունիմք 'ի ոյ · ով · ունիմք 'ի ան · ամբ · ունիմք 'ի եր · երբ · ունիմք 'ի եղ · եղբ · սոյնպէս և այլք ։ Եւ այսպիսի պէսպէսութիւնք վերջաւորութեան զանազան անուանց՝ կոչին հոլովմունք անուանց · և են քսան · որոց չորեքտասանքն են հասարակք · իսկ վեցքն՝ յատուկք կամ մասնաւորք ։ Զորոց զօրինակսն ունիմք դնել աստ կարգաւ ։

## Յաղագս հասարակ հոլովման անուանց ։

### Օրինակ առաջին հոլովման ։

| | Եզակի ։ | Յոգնակի ։ |
|---|---|---|
| Ուղղական · | Բառ · | Բառք · |
| Սեռական · | Բառի · | Բառից · |
| Տրական · | Բառի · 'ի բառ · | Բառից · 'ի բառս · |
| Հայցական · | զԲառ · | զԲառս · |
| Բացառական · | 'ի Բառէ · | 'ի Բառից · |
| Պատմական · | զԲառէ · | զԲառից · |
| Գործիական · | Բառիւ · | Բառիւք · |
| Պարառական · | զԲառիւ · | զԲառիւք · |
| Ներգոյական · | 'ի Բառի , կամ 'ի բառ · | 'ի Բառս · |
| Կոչական · | ո՛վ Բառ ։ | ո՛վ Բառք ։ |

Ըստ այսու օրինակաւ պարունակին բազում անուանք · որոց 'ի հոլովին՝ ոմանք անկորուստ և անփոփոխ պահեն զձայնաւոր տառսն՝ յուր յանգին · զոր օրինակ ։

| | | |
|---|---|---|
| Ախտ , | ախտի · | Malady, Ail. |
| Ազխ , | ազխի · | Buckle, Ring. |
| Արքայ , | արքայի · | King. |
| Բաղդ , | բաղդի · | Fortune. |
| Բան , | բանի · | Word, Speech. |
| Բանտ , | բանտի · | Prison, Gaol. |
| Գահ , | գահի · | Throne. |
| Գան , | գանի · | Bastinado. |
| Դաշտ , | դաշտի · | Field. |
| Դարպաս , | դարպասի · | Palace. |
| Երեխայ , | երեխայի · | Catechumen; Infant. |
| Զարմ , | զարմի · | Race; Nation. |

| | | |
|---|---|---|
| Զրահ , | զրահի . | Cuirass. |
| Ընծայ , | ընծայի . | Present. |
| Կաթսայ , | կաթսայի . | Kettle. |
| Կանթ , | կանթի . | Pedicle. |
| Կայմ , | կայմի . | Mast. |
| Կարթ , | կարթի . | Hook, a fish hook. |
| Կրիայ , | կրիայի . | Turtle. |
| Հաց , | հացի . | Bread. |
| Հսկայ , | հսկայի . | Giant. |
| Հրացան , | հրացանի . - - | Fire-lock. |
| Ձայն , - - - - | ձայնի . - - - - | Voice. - - |
| Ճառ , | ճառի . | Narration. |
| Ճառագայթ , | ճառագայթի . | Ray. |
| Մայր , | մայրի . | Mother; Tree. |
| Մարտ , | մարտի . | Battle. |
| Նպաստ , | նպաստի . | Aid. |
| Շղթայ , | շղթայի . | Chain. |
| Ջահ , | ջահի . | Torch. |
| Ջան , | ջանի . | Diligence. |
| Սայլ , | սայլի . | Car, Wagon. |
| Սանձ , | սանձի . | Bridle. |
| Սաստ , | սաստի . | Reprimand. |
| Սպայ , | սպայի . | Officer. |
| Սրահ , | սրահի . | Porch, Piazza. |
| Վաշխ , | վաշխի . | Interest. |
| Վարմ , | վարմի . | Net. |
| Վկայ , | վկայի . | Witneſs. |
| Փայտ , | փայտի . | Wood. |
| Փեսայ , | փեսայի . | Bridegroom. |
| Քաղցրաբան , | քաղցրաբանի . | Eloquent. |
| Քայլ , | քայլի . | Step. |
| Քարբ , | քարբի . | Asp. |
| Արհեստ , | արհեստի . | Art. |
| Բարեձև , | բարեձևի . | Well-shaped. |

| | | |
|---|---|---|
| Բդեշխ , | բդեշխի . | Consul. |
| Լուսազգեստ , | լուսազգեստի . | Lightsome. |
| Ծաղկազգեստ , | ծաղկազգեստի . | Florid. |
| Ծերպ , | ծերպի . | Gap. |
| Կերպ , | կերպի . | Shape. |
| Համեմ , | համեմի . | Sauce. |
| Համետ , | համետի . | Saddle. |
| Նետ , | նետի . | Arrow. |
| Նժդեհ , | նժդեհի . | Alien, Stranger. |
| Շեղջ , | շեղջի . | Heap. |
| Սեռ , | սեռի . | Gender. |
| Ցեղ , | ցեղի . | Tribe; Sort. |
| Ափսէ , | ափսէի . | Plate. |
| Բազէ , | բազէի . | Falcon. |
| Հալուէ , | հալուէի . | Aloes. |
| Քրովբէ , | քրովբէի . | Cherub. |
| Իժ , | իժի . | Viper. |
| Ալոճ , | ալոճի . | Neapolitan Medlar. |
| Ալոջ , | ալոջի . | Female-kid. |
| Բողբոջ , | բողբոջի . | Sprout . |
| Գոյ , | գոյի . | Existence. |
| Դշխոյ , | դշխոյի . | Queen. |
| Դոնն , | դոնի . | Tunny. |
| Զոհ , | զոհի . | Sacrifice. |
| Խորշ , | խորշի . | Angle; Corner. |
| Կոփածոյ , | կոփածոյի . | Sculptured. |
| Հոլով , | հոլովի . | Declination. |
| Նոճ , | նոճի . | Cypreſs. |
| Տող , | տողի . | Line. |
| Արօտ , | արօտի . | Pasturage. |
| Ծնօտ , | ծնօտի . | Jaw. |
| Կրօն , | կրօնի . | Religion. |
| Հօտ , | հօտի . | Flock. |
| Յօդ , | յօդի . | Joint. |

| | | |
|---|---|---|
| Պաշտօն , | պաշտօնի . | Office. |
| Վառօդ , | վառօդի . | Gunpowder. |
| Տօն , | տօնի . | Feast, Holy-day. |
| Օձ , | օձի . | Snake. |
| Գիւտ , | գիւտի . | Invention. |
| Երկիւղ , | երկիւղի . | Fear. |
| Քառանիւթ , | քառանիւթի . | Composed of four substances. |
| Ուխտ , | ուխտի . | Vow. |
| Ուրուր , | ուրուրի . | Kite. |

Ոմանք կորուսանեն զձայնաւոր տառն , յորս յանգին . զոր օրինակ .

| | | |
|---|---|---|
| Ատեան , | ատենի . | Tribunal. |
| Լեարդ , | լերդի . | Liver. |
| Խաչազգեայ , | զգեյի . | Crofs-bearer. |
| Հրեայ , | հրէի . | Jew. |
| Մատեան , | մատենի . | Book. |
| Մեհեան , | մեհենի . | Pagod. |
| Ջահազգեայ , | զգեյի . | Torch-bearer. |
| Վայրկեան , | վայրկենի . | Moment. |
| Առիթ , | առթի . | Cause. |
| Բիծ , | բծի . | Spot. |
| Գիծ , | գծի . | Line. |
| Դլբին , | դլբնի . | Dolphin. |
| Լօդիկ , | լօդկի . | Cloak. |
| Խիղճ , | խղճի . | Scruple. |
| Կիրճ , | կրճի . | Defile. |
| Ձիր , | ձրի . | Gift. |
| Ճշմարիտ , | ճշմարտի . | True. |
| Սիրտ , | սրտի . | Heart. |
| Սկզբնատիպ , | տպի . | Original. |
| Բրուտ , | բրտի . | Potter. |

| | | |
|---|---|---|
| Դուքս, | դքսի · | Duke. |
| Խուլ, | խլի · | Deaf. |
| Խումբ, | խմբի · | Troop. |
| Խուց, | խցի · | Chamber. |
| Կարկուտ, | կարկտի · | Hail. |
| Սնակուշտ, | կշտի · | Flank. |
| Օգուտ, | օգտի · | Benefit. |

Ոմանք փոփոխեն զձայնաւոր տառն՝ յորս յանգին · զոր օրինակ ։

| | | |
|---|---|---|
| Գմբէթ, | գմբեթի · | Dome. |
| Էջ, | էջի · | Page. |
| Խենէշ, | խենեշի · | Dissolute. |
| Կէտ, | կետի · | Point; whale. |
| Ուղէշ, | ուղեշի · | Branch. |
| Պատճէն, | պատճենի · | Copy. |
| Ծէս, | ծիսի · | Rite. |
| Համդէս, | հանդիսի · | Celebrity. |
| Հէն, | հինի · | Privateer; rogue. |
| Վէճ, | վիճի · | Dispute. |
| Իղձ, | ըղձի · | Desire. |
| Պրտուեայ, | պրտուէի · | Made of bulrush. |
| Փախստեայ, | փախստէի · | Runaway. |
| Արոյր, | արուրի · | Brass. |
| Ժամացոյց, | ցուցի · | Watch. |
| Խրախոյս, | խուսի · | Courage. |
| Ծարոյր, | ծարուրի · | Antimony. |
| Կարեւորագոյն, | գունի · | More useful. |
| Կոյտ, | կուտի · | Heap. |
| Համբոյր, | բուրի · | Kiss, buss. |
| Հեղոյս, | հեղուսի · | Nail. |
| Նշոյլ, | նշուլի · | Gleam. |
| Ողջոյն, | ողջունի · | Salute; whole. |

| | | |
|---|---|---|
| Վատթարագոյն, | գունի. | Worse. |
| Տոյժ, | տուժի. | Fine. |

## Անեզականք :

| | | |
|---|---|---|
| Աղօթք, | թից. | Prayers. |
| Ելք, | ելից. | Resource. |
| Խնճոյք, | ճոյից. | Regalement. |
| Խօսք, | սից. | Words. |
| Հրաշք, | շից. | Wonders. |

## Օրինակ երկրորդ հոլովման :

| | Եզական. | Յոգնական. |
|---|---|---|
| Ուղ. | քաղաք. | քաղաքք. |
| Սեռ. | քաղաքի. | քաղաքաց. |
| Տր. | քաղաքի. 'ի քաղաք. | քաղաքաց. 'ի քաղաքս. |
| Հայց. | զքաղաք. | զքաղաքս. |
| Բաց. | 'ի քաղաքէ. | 'ի քաղաքաց. |
| Պատմ. | զքաղաքէ. | զքաղաքաց. |
| Գործ. | քաղաքաւ. | քաղաքօք. |
| Պատ. | զքաղաքաւ. | զքաղաքօք. |
| Ներգ. | 'ի քաղաքի կամ 'ի քաղաք. | 'ի քաղաքս. |
| Կոչ. | ով քաղաք. | ով քաղաքք. |

Ըստ այսմ օրինակի պարունակին բազում անուանք. որոց 'ի հոլովելն՝ ունին անկորուստ և անփոփոխ պահեն զձայնաւոր տառսն՝ յորս յանգին. զոր օրինակ.

| | | |
|---|---|---|
| Ագարակ, | ի. | Village. |
| Ազգ, | ի. | Nation. |
| Ախորժակ, | ի. | Stomach. |
| Առասան, | ի. | Rope. |
| Արձան, | ի. | Statue. |

| | | |
|---|---|---|
| Աւազան , | ի . . . . . | Fountain; font. |
| Բաժակ , | ի . . . . . | Cup. |
| Բաժանարար , | ի . | Divisor. |
| Բանակ , | ի . . . . . . | Camp. |
| Բարեկամ , | ի . | Friend. |
| Բարերար , | ի . . . . . | Benefactor. |
| Բուրաստան , | ի . | Garden, orchard. |
| Գազան , | ի . . . . . | Beast. |
| Գաւառ , | ի . | Province. |
| Գերան , | ի . . . . . | Beam. |
| Դատաստան , | ի . | Court. |
| Դեսպան , | ի . | Embassador. |
| Երիտասարդ , | ի . | Youth. |
| Զաւակ , | ի . | Issue, offspring. |
| Թաշկինակ , | ի . | Handkerchief. |
| Իշխան , | ի . | Prince, chief. |
| Խաւար , | ի . | Dark, obscure. |
| Խորան , | ի . . . . . | Tabernacle. |
| Կարգ , | ի . . . . . | Rank, class. |
| Կոնդակ , | ի . | Bull. |
| Հասակ , | ի . | Age. |
| Հնձան , | ի . | Wine-press. |
| Ղենջակ , | ի . | Apron. |
| Ճաշակ , | ի . | Relish, gust. |
| Մաճկալ , | ի . | Ploughman. |
| Մշակ , | ի . | Labourer. |
| Յատակ , | ի . | Bottom. |
| Յարկ , | ի . | Roof, story. |
| Նամակ , | ի . | Letter, epistle. |
| Նուագարան , | ի . | Musical instrument. |
| Շրջան , | ի . | Revolution. |
| Ուռկան , | ի . | Net. |
| Պաշտգամբ , | ի . | Porch, portico. |
| Պատգամ , | ի . | Message. |

| | | |
|---|---|---|
| Ջնջան , | ի . | Rag, duster. |
| Վանական , | ի . | Conventual. |
| Վիշապ , | ի . | Dragon. |
| Վսեմական , | ի . | Stately. |
| Վրան , | ի . | Tent, pavilion. |
| Տեսակ , | ի . | Sort, kind. |
| Փապար , | ի . | Cave, cavern. |
| Աղգապետ , | ի . | Governor. |
| Աշակերտ , | ի . | Disciple, scholar. |
| Բերդ , | ի . | Fort. |
| Բևեռ , | ի . | Nail, pole. |
| Ջառեկ , | ի . | Gold leaf. |
| Ընկեր , | ի . | Associate. |
| Լապտեր , | ի . | Lantern. |
| Պատկեր , | ի . | Picture. |
| Ստուեր , | ի . | Shade. |
| Աղբիւս , | ի . | Dunghill. |
| Աքիս , | ի . | Weasel. |
| Աւելորդ , | ի . | Superfluous. |
| Երաշխաւոր , | ի . | Bail, security. |
| Զինուոր , | ի . | Soldier. |
| Թագաւոր , | ի . | King. |
| Թակոյկ , | ի . | Vessel. |
| Խարտոց , | ի . | File. |
| Կշռորդ , | ի . | Balance, scales. |
| Հոգևոր , | ի . | Spiritual. |
| Հոտոց , | ի . | Pruning knife. |
| Ձկնորս , | ի . | Fisherman. |
| Միջոց , | ի . | Space, interval. |
| Ուղևոր , | ի . | Conductor. |
| Վաստակաւոր , | ի . | Labourer. |
| Առու , | ուի . | Canal, channel. |
| Արու , | ուի . | Male. |
| Լեզու , | ուի . | Tongue. |

| | | |
|---|---|---|
| Խորհրդածու, | ուի · | Counsellor. |
| Խրատատու, | ուի · | Instructor. |
| Մեղու, | ուի · | Bee. |
| Վաշխատու, | ուի · | Usurer. |
| Վերակացու, | ուի · | Overseer, steward. |
| Վերարկու, | ուի · | Raiment, vesture. |
| Ծանրախօս, | ուի · | Stammerer. |
| Հզօր, | ուի · | Potent, valiant. |
| Չարախօս, | ուի · | Backbiter. |

Ոմանք կորուսանեն զձայնաւոր տառսն, յորս յանգին․․ զոր օրինակ ։

| | | |
|---|---|---|
| Ահեակ, | ահեկի · | Left. |
| Արբանեակ, | նեկի · | Servant. |
| Դայեակ, | դայեկի · | Nurse. |
| Դղեակ, | դղեկի · | Fort. |
| Լեռնակեաց, | կեցի · | Mountaineer. |
| Մանեակ, | մանեկի · | Chain. |
| Մաշկեակ, | մաշկեկի · | Leather-bag. |
| Որդեակ, | դեկի · | Son. |
| Ջորեակ, | րեկի · | Grass hopper. |
| Սենեակ, | նեկի · | Chamber, room. |
| Փափկակեաց, | կեցի · | Voluptuous. |
| Վառամանեակ, | նեկի · | Neck-chain. |
| Բեռնակիր, | կրի · | Porter. |
| Բժիշկ, | բժշկի · | Doctor, physician. |
| Գաւիթ, | գաւթի · | Hall, yard. |
| Գրիչ, | գրչի · | Pen. |
| Դահիճ, | դահճի · | Executioner. |
| Դարբին, | դարբնի · | Smith. |
| Դպիր, | դպրի · | Scribe. |
| Կօշիկ, | կօշկի · | Shoe, slipper. |
| Հալածիչ, | ծչի · | Persecutor. |

Մահիճ, մահճի. Bed.
Մունետիկ, տկի. Proclaimer, crier.
Մրրիկ, մրրկի. Storm, hurricane.
Նենգամիտ, մտի. Perfidious person.
Նիգ, նգի. Bar.
Շահախնդիր, խնդրի. Covetous person.
Շաւիղ, շաւղի. Footstep, track.
Շիրիմ, շիրմի. Sepulchre.
Պարակից, կցի. Fellow dancer.
Պարզամիտ, մտի. Simpleton.
Պարիսպ, պարսպի. Battery, wall.
Ջիղ, ջլի. Nerve.
Սնդիկ, սնդկի. Quicksilver.
Վշտակից, կցի. Fellow-sufferer.
Տիկ, տկի. Water-bag.
Փիղ, փղի. Elephant.
Քիլ, քլի. Span.
Աղմուկ, աղմկի. Disturbance.
Բազում, բազմի. Many, several.
Դդում, դդմի. Pumpkin.
Սկնդուկ, սկնդկի. Lapdog.
Ստրուկ, ստրկի. Vassal.
Վհուկ, վհկի. Wizard, sorceress.
Տզրուկ, տզրկի. Leech.
Քուրմ, քրմի. Heathen priest.

Ոմանք փոփոխեն զձայնաւոր տառսն, յորս յանգին. զոր օրինակ.

Դեւ, դիւի. Devil.
Հիմն, հիմանի. Hin.
Քարընկէց, կիցի. Catapult.
Դէմ, դիմի. Visage, countenance.
Դէտ, դիտի. Spy.

| | | |
|---|---|---|
| Մահազէն, | զինի · | Deadly weapon. |
| Մեղսասէր, | սիրի · | Lover of sin. |
| Մէգ, | միգի · | Darkness. |
| Մոմեղէն, | ղինի · | Wax candle. |
| Տէգ, | տիգի · | Lance, javelin. |
| Գրիւ, | գրուի · | Epha. |
| Հովիւ, | հովուի · | Shepherd, pastor. |
| Պղամուլամոյն, | նունի · | Balm. |
| Բոյթ, | բութի · | Thumb. |
| Մարդելոյզ | լուզի · | Sycophant. |
| Ուղեցոյց, | ցուցի · | Conductor, leader. |
| Սամոյր, | մուրի · | Fur. |
| Վարագոյր, | գուրի | Curtain, veil. |

Անեզականք ։

| | | |
|---|---|---|
| Աղաչանք, | նաց · | Request, petition. |
| Բաղձանք, | նաց · | Desire, longing. |
| Լանջք, | ջաց · | Breast, bosom. |
| Կամք, | մաց · | Will, intention. |
| Կեանք, | կենաց · | Life. |

Օրինակ երրորդ հոլովման ։

| | Եզակի ։ | Յոգնակի ։ |
|---|---|---|
| Ուղ. | գետ · | գետք · |
| Սեռ. | գետոյ · | գետոց · |
| Տր. | գետոյ · ՚ի գետ · | գետոց ՚ի գետս · |
| Հայց. | զգետ · | զգետս · |
| Բաց. | ՚ի գետոյ · | ՚ի գետոց · |
| Պատ. | զգետոյ · | զգետոց · |
| Գոր. | գետով · | գետովք · |
| Պար. | զգետով · | զգետովք · |
| Ներ. | ՚ի գետ · | ՚ի գետս · |
| Կոչ. | ով գետ ։ | ով գետք ։ |

Ըստ այսմ հոլովին բազում անուանք առանց կորուսման և փոփոխման ձայնաւոր տառիցն՝ յորս յանգին. զոր օրինակ :

| | | |
|---|---|---|
| Աթոռ , | ոյ . | Chair, stool. |
| Ամպ , | ոյ . | Cloud. |
| Այս , | ոյ . | Devil. |
| Անդամ , | ոյ . | Member. |
| Աներ , | ոյ . | Father-in-law. |
| Արարած , | ոյ . | Creature. |
| Արդար , | ոյ . | Just, righteous. |
| Արմատ , | ոյ . | Root, principle. |
| Արմաւ , | ոյ . | Date. |
| Արտ , | ոյ . | Arable land. |
| Աւազ , | ոյ . | Sand. |
| Բերան , | ոյ . | Mouth. |
| Գործուած , | ոյ . | Work. |
| Դարձուած , | ոյ . | Return. |
| Երազ , | ոյ . | Dream. |
| Երկաթ , | ոյ . | Iron. |
| Մարախ , | ոյ . | Locust. |
| Շարաւ , | ոյ . | Sanies, matter. |
| Շերամ , | ոյ . | Silkworm. |
| Սեղան , | ոյ . | Altar, table. |
| Տղայ , | ոյ . | Boy. |
| Բեր , | ոյ . | Product, fruit. |
| Գեղ , | ոյ . | Village. |
| Դեղ , | ոյ . | Remedy; poison. |
| Թել , | ոյ . | Thread, wire. |
| Ծեր , | ոյ . | Old man. |
| Հետ , | ոյ . | Vestige. |
| Ստեւ , | ոյ . | Bristle. |
| Տերեւ , | ոյ . | Leaf. |
| Երէ , | ոյ . | Wild beast. |

| | | |
|---|---|---|
| Դի, | ոյ · | Carcass, Corpse. |
| Լի, | ոյ · | Full. |
| Ձի, | ոյ · | Horse. |
| Աղիւս, | ոյ · | Brick. |
| Ընձիւղ, | ոյ · | Branch, sprout. |
| Իւղ, | ոյ · | Oil, perfume. |
| Կնիւն, | ոյ · | Flag. |
| Հիւթ, | ոյ · | Humour; juice. |
| Նիւթ, | ոյ · | Substance, matter. |
| Բոց, | ոյ · | Flame. |
| Գող, | ոյ · | Thief. |
| Գործ, | ոյ · | Action; deed. |
| Խմոր, | ոյ · | Leaven. |
| Խոյ, | ոյ · | Ram. |
| Խոտ, | ոյ · | Herb, grass. |
| Ծոց, | ոյ · | Cavity, Bay. |
| Հոգ, | ոյ · | Care, diligence. |
| Հողմ, | ոյ · | Wind. |
| Հոտ, | ոյ · | Smell, scent. |
| Որջ, | ոյ · | Den. |
| Որս, | ոյ · | Game, venison. |
| Ջրհոր, | ոյ · | Well. |
| Սափոր, | ոյ · | Pitcher, jar. |
| Բու, | ոյ · | Owl. |
| Ձու, | ոյ · | Egg. |
| Յու, | ոյ · | Roof. |
| Ամօթ, | ոյ · | Shame. |
| Անօթ, | ոյ · | Vessel. |
| Ցօղ, | ոյ · | Dew. |
| Քօղ, | ոյ · | Veil. |

Կորուսմամբ ·

| | | |
|---|---|---|
| Աստուած, | աստուծոյ · | God. |
| Հասեալ, | հասելոյ · | Arrived; ripe. |

ՀՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ... ԳՐԱԴԱՐԱՆ

| | | |
|---|---|---|
| Մոլեալ, | մոլելոյ. | Vitiated. |
| Սեամ, | սեմոյ. | Threshold. |
| Սեաւ, | սեւոյ. | Black. |
| Ուղեղ, | ուղղոյ. | Brain, marrow. |
| Անկողին, | կողնոյ. | Bed, quilt. |
| Գին, | գնոյ. | Price, value. |
| Գինձ, | գնձոյ. | Coriander. |
| Գչիր, | գչրոյ. | Piercer, borer. |
| Եղինձ, | եղնձոյ. | Thistle. |
| Երինջ, | երնջոյ. | Heifer. |
| Խաւարային, | րայնոյ. | Gloomy. |
| Խնդիր, | խնդրոյ. | Request, object. |
| Ծովային, | վայնոյ. | Marine. |
| Կաղին, | կաղնոյ. | Nut, Filbert. |
| Կացին, | կացնոյ. | Hatchet, axe. |
| Կնիք, | կնքոյ. | Seal; sentence. |
| Կշիռ, | կշռոյ. | Scale, weight. |
| Մարմին, | մարմնոյ. | Body, corpse. |
| Մոխիր, | մոխրոյ. | Ashes. |
| Նաշիհ, | նաշհոյ. | Flour. |
| Սկիհ, | սկհոյ. | Cup, bowl. |
| Ստորին, | ստորնոյ. | Below. |
| Վերջին, | վերջնոյ. | Last, extreme. |
| Տիղմ, | տղմոյ. | Mire, dirt. |
| Անասուն, | անասնոյ. | Beast, animal. |
| Անուր, | անրոյ. | Collar. |
| Բլուր, | բլրոյ. | Hill, hillock. |
| Բուստ, | բստոյ. | Coral. |
| Գանգուր, | գանգրոյ. | Curl. |
| Գուբ, | գբոյ. | Ditch. |
| Գութ, | գթոյ. | Compassion. |
| Զեռուն, | զեռնոյ. | Reptile. |
| Զմուռս, | զմռսոյ. | Myrrh. |
| Թուզ, | թզոյ. | Fig. |

| | | |
|---|---|---|
| Թուխ , | թխոյ . | Black, Brown. |
| Թուր , | թրոյ . | Sword. |
| Թրթուր , | թրթրոյ . | Palmerworm. |
| Լուծ , | լծոյ . | Yoke. |
| Լուր , | լրոյ . | News. |
| Խունկ , | խնկոյ . | Incense. |
| Ծծումբ , | ծծմբոյ . | Sulphur. |
| Ծուխ , | ծխոյ . | Smoke. |
| Հունձ , | հնձոյ . | Harvest. |
| Մամուլ , | մամլոյ . | Press. |
| Մուրճ , | մրճոյ . | Hammer. |
| Մսուր , | մսրոյ . | Crib, stall. |
| Մրուր , | մրրոյ . | Lees, dregs. |
| Նուշ , | նշոյ . | Almond. |
| Շամփուր , | շփրոյ . | Spit. |
| Շունչ , | շնչոյ . | Breath. |
| Շուք , | շքոյ . | Glory, honour. |
| Պտուղ , | պտղոյ . | Fruit, produce. |
| Սուգ , | սգոյ . | Mourning. |
| Վարունգ , | վարգնոյ . | Cucumber. |
| Տուղտ , | տղտոյ . | Marsh-mallow. |
| Տունկ , | տնկոյ . | Plant. |
| Ցուպ , | ցպոյ . | Staff. |
| Փետուր , | տրոյ . | Feather, plume. |

Հուր , հրոյ , հրով , կամ հուրբ , հրովք , կամ , հուրբք .
Ջուր , ջրոյ , ջրով , կամ ջուրբ , ջրոց , կամ ջուրց .
ջրովք , կամ ջուրբք .

Փոփոխմամբ .

| | | |
|---|---|---|
| Անդեայ , | անդէոյ . | Herd. |
| Էշ , | իշոյ . | Ass. |
| Ձէթ , | ձիթոյ . | Oil. |

| | | |
|---|---|---|
| Սէզ՝ | սիզոյ . | Grass. |
| Սէր , | սիրոյ . | Love, Affection. |
| Արծիւ , | արծուոյ . | Eagle. |
| Թիւ , | թուոյ . | Number. |
| Խռիւ , | խռուոյ . | Briars, tuft. |
| Պատիւ , | պատուոյ . | Honour, Respect. |
| Քիւ , | քուոյ . | Cornice. |
| Արշալոյս , | լուսոյ . | Twilight. |
| Բոյս , | բուսոյ . | Plant. |
| Գոյն , | գունոյ . | Colour, tincture. |
| Լոյս , | լուսոյ . | Light. |
| Ողկոյզ՝ | կուզոյ . | Bunch, cluster. |
| Ունգ , | ընգոյ . | Chaff. |
| Ունդ , | ընդոյ . | Pulse. |
| Ռումբ , | ռմբոյ . | Mortar-piece. |
| Ռուպ . | ռըպոյ կամ ռուպիոյ . | Sirup. |

## Անեզականք .

| | | |
|---|---|---|
| Անուրջք , | անրջոյ . | Dream. |
| Դժոխք , | դժոխոց . | Hell. |
| Կուռք , | կռոց . | Idol. |
| Յանցուածք , | ծոց . | Transgression. |

Գիտելի է , զի բազմաց 'ի սոյանէ եզակի ներգոյականն յանգի երբեմն նաեւ 'ի ի . որգոն , 'ի սեղան՝ կամ 'ի սեղանի . յանկողին՝ կամ յանկողնի . 'ի պատիւ՝ կամ 'ի պատուի . 'ի ծով՝ կամ 'ի ծովի . եւ այլն : Երբեմն եւս 'ի ում , մանաւանդ այնոցիկ անուանց՝ որք յանգին 'ի ին , եւ 'ի եալ որգոն , 'ի ներքին՝ կամ 'ի ներքնում . 'ի հանդերձեալ՝ կամ 'ի հանդերձելում . եւ այլն : Իսկ ձայնն երբեմն 'ի ոյ եւս յանգի . զոր օրինակ , * Ոչ բնակէ ( իմաստութիւն ) 'ի մարմնի մեղուցելոյ մեղօք || . Իմաստ . Ա . 4 . * Տագնապէին 'ի լճին [illegible]ցելոյ || . Ղուկ . Ը .

Երբեմն սոյն ձայնի տրականն, ևս և սեռականն՝ յանգին 'ի ում. զոր օրինակ, * Հաճեցար ընդ պարտեցելումս զմահուն ճաշակել բաժակ. Նորէն. ԽԵ ։
* Ընդարձակեցեր թշուառացելումս զառագաստն || . Նոյնն. ԺԷ ։ * Վերջնումս աւասիկ եկեալ հանդիպեցաք ժամանակի || . Յովհ. Իմաստ. ԺԲ ։
* Հաստ եղէ և անճառելիդ վերնումդ հանգստեանդ || .
Լամբ. Սաղ. Ձ ։
* Դու միայն օգնեա ինձ միայնումս || . Եսթ. ԺԴ. 3 .

Օրինակ չորրորդ հոլովման ։

| | Եզակի ։ | Յոգնակի ։ |
| --- | --- | --- |
| Ուղ. | Եկեղեցի . | Եկեղեցիք . |
| Սեռ. | Եկեղեցւոյ . | Եկեղեցեաց . |
| Տրա. | Եկեղեցւոյ. յեկեղեցի. | Եկեղեցեաց. յեկեղեցիս. |
| Հայց. | զԵկեղեցի . | զԵկեղեցիս . |
| Բաց. | յԵկեղեցւոյ . | յԵկեղեցեաց . |
| Պատ. | զԵկեղեցւոյ . | զԵկեղեցեաց . |
| Գործ. | Եկեղեցեաւ . | Եկեղեցեօք . |
| Պատ. | զԵկեղեցեաւ . | զԵկեղեցեօք . |
| Ներ. | յԵկեղեցւոջ. կամ յեկեղեցի. | յԵկեղեցիս . |
| Կոչ. | ով Եկեղեցի . | ով Եկեղեցիք . |

Ըստ այսմ հոլովին ձայն անուանք յոգնավանկք՝ յանգեալք 'ի ի. ( բայց 'ի յատուկ անուանց ) . զոր օրինակ ։

| | | |
| --- | --- | --- |
| Աղաւնի , | նւոյ . | Pigeon. |
| Առաքինի , | նւոյ . | Virtuous. |
| Ասղանի , | նւոյ . | Thread. |
| Գերի , | րւոյ . | Captive. |
| Գործի , | ծւոյ . | Instrument. |
| Գօտի , | տւոյ . | Girdle, zone. |
| Երանելի , | լւոյ . | Beatifick, blessed. |

| | | |
|---|---|---|
| Ըմպելի, | լւոյ. | Drink, drinkable. |
| Ընկուզի, | զւոյ. | Walnut-tree. |
| Լեղի, | ղւոյ. | Gall. |
| Ծղխնի, | նւոյ. | Hinge. |
| Կաղնի, | նւոյ. | Oak; filbert-tree. |
| Կղզի, | զւոյ. | Island. |
| Հայրենի, | նւոյ. | Parental. |
| Հովանի, | նւոյ. | Umbrage, shade. |
| Ձիթենի, | նւոյ. | Olive-tree. |
| Ունելի, | լւոյ. | Attainable, catch. |
| Պատանի, | նւոյ. | Youth. |
| Վկայուհի, | հւոյ. | Female-witness. |
| Տեղի, | ղւոյ. | Place, Room. |

Անեզականք.

| | | |
|---|---|---|
| Աւետիք, | տեաց. | Annunciation. |
| Ընթրիք, | րեաց. | Supper |
| Կարծիք, | ծեաց. | Opinion. |
| Տանիք, | նեաց. | Roof. |

Ասացի՝ յոգնականք, զի եթէ միականք են՝ ըստ երրորդ օրինակաւ հոլովին, թէ պարզ իցեն, և թէ բարդ. որգոն. Ձի, ձիոյ. տի, տիոյ. և այլն. Միաձի, ձիոյ. սակաւատի, տիոյ. և այլն.

Են ևս անուանք ինչ ըստ այսու տեսակաւ, որք 'ի հոլովս ինչ ըստ երրորդ օրինակաւ հոլովին. զոր օրինակ.

Ասուի, ւոյ, ւով, եայ, ւովք, կամ եօք. Woollen.
Գարի, ւոյ, ւով կ, եաւ, եայ, ւովք, կ եօք. Barley.
Ծերունի, ւոյ, ւով, կ եաւ, եայ, եօք. Old-man.
Կալոտի, ւոյ, ւով, եայ, կ ւոյ, ւովք. Thrasher.
Կարասի, ւոյ, ւով, կ եաւ, եայ, եօք. Furniture.

| | | | | |
|---|---|---|---|---|
| Կոգի , | ւոյ , ւով , | եաց , ւովք ։ | Butter. |
| Հելլենացի , | ւոյ , ւով , | ւոց ւովք ։ | Greek. |
| Հոգի , | ւոյ , ւով , | ւոց , ւովք ։ | Soul. |
| Մորի , | ւոյ , ւով , | եաց , ւովք ։ | Den. |
| Որդի , | ւոյ , ւով , | ւոց , կ եաց , ւովք ։ | Son. |

Ոմանք ևս յանուանց ընդ սովոր եղելոց ՚ի սեռականն և ՚ի տրականն յանգին երբեմն ՚ի ւոջ . որգոն , հոգւոջ , տեղւոջ , տարւոջ . և այլն ։

Յորժէ և ՚ի բացառականն յանգին ՚ի ւոջէ . որգոն , ՚ի տեղւոջէ , ՚ի տարւոջէ . և այլն ։

## Օրինակ հինգերրորդ հոլովման ։

| | Եզակի ։ | Յոգնակի ։ |
|---|---|---|
| Ուղ. | Աղեղն ։ | Աղեղունք ։ |
| Սեռ. | Աղեղան ։ | Աղեղանց ։ |
| Տր. | Աղեղան . յաղեղն ։ | Աղեղանց . յաղեղունս ։ |
| Հայց. | զԱղեղն . | զԱղեղունս ։ |
| Բաց. | յԱղեղանէ . | յԱղեղանց ։ |
| Պատմ. | զԱղեղանէ . | զԱղեղանց ։ |
| Գործ. | Աղեղամբ ։ | Աղեղամբք ։ |
| Պար. | զԱղեղամբ ։ | զԱղեղամբք ։ |
| Ներ. | յԱղեղան . կամ յաղեղն . | յԱղեղունս ։ |
| Կոչ. | ով Աղեղն ։ | ով Աղեղունք ։ |

Ըստ այսու օրինակաւ հոլովին բազում անուանք առանց կրճատման և փոփոխման ձայնաւոր տառից՝ յորս յանգին . զոր օրինակ ։

| | | |
|---|---|---|
| Ակն , | ական . | Gem, prec'ous-stone. |
| Ամառն , | ռան . | Summer. |
| Ատամն , | ման . | Tooth. |
| Գագաթն , | թան . | Top, crown. |

| | | |
|---|---|---|
| Գեղմն, | ման. | Wool. |
| Ձմեռն, | ռան. | Winter. |
| Ջերմն, | ման. | Fever. |
| Սերմն, | ման. | Seed. |
| Ստեղն, | ղան. | Branch. |
| Հիմն, | ման. | Foundation, basis. |
| Հիւսն, | սան. | Carpenter. |
| Որդն, | դան. | Worm. |
| Որոմն, | ման. | Darnel; tares. |
| Տոռն, | ռան. | Rope, string. |
| Անուն, | ուան. ուանք. | Name. |
| Լուսն, | սան. | Cataract. |
| Ուռն, | ռան. | Hammer. |

Կորուսմամբ ։

| | | |
|---|---|---|
| Այծեամն, | այծեման. | Antelope. |
| Եղեամն, | եղեման. | Frost. |
| Ասեղն, | ասղան. | Needle. |
| Թիթեղն, | թիթղան. | Plated metal. |
| Մրջիմն, | մրջման. | Ant, pismire. |
| Սկիզբն, | սկզբան. | Beginning. |
| Քիրտն, | քրտան. | Sweat, perspiration. |
| Աշուն, | աշնան. | Autumn. |
| Բուռն, | բռան. | Force, violence; fist. |
| Գարուն, | գարնան. | Spring. |
| Խոստումն, | խոստման. | Promise. |
| Ծագումն, | ծագման. | Rise. |
| Ձուկն, | ձկան. | Fish, pisces. |
| Ճպուռն, | ճպռան. | Grashopper. |
| Մանուկ, | մանկան. | Child. |
| Մուկն, | մկան. | Mouse, rat. |
| Նուռն, | նռան. | Pomegranate. |
| Տուն, | տան. | House, family. |
| Դուռն, դրան. | դրունք. | Door, Gate. |

### Փոփոխմամբ ։

| | | |
|---|---|---|
| Փայծաղն , | փայծեղան ։ | Spleen. |
| Եղէգն , | եղեգան ։ | Reed, bamboo. |
| Ոլոռն , | ոլեռան ։ | Bean. |
| Պոյտն , | պուտան ։ | Pot. |

### Անեղականք ։

| | | |
|---|---|---|
| Բաջաղմունք , | մանց ։ | Prattle. |
| Բոհմունք , | մանց ։ | Terrour, threat. |
| Լորձունք , | ձանց ։ | Spittle. |
| Ցոլմունք , | մանց ։ | Flash. |

### Օրինակ վեցերորդ հոլովման ։

| | Եզակի ։ | Յոգնակի ։ |
|---|---|---|
| Ուղ. | Նեղութիւն ։ | Նեղութիւնք ։ |
| Սեռ. | Նեղութեան ։ | Նեղութեանց ։ |
| Տրա. | Նեղութե՛ · ՚ի նեղութե՛ · | Նեղութեց՛ · ՚ի նեղութիս՛ · |
| Հայց. | զՆեղութիւն ։ | զՆեղութիւնս ։ |
| Բաց. | ՚ի Նեղութենէ ։ | ՚ի Նեղութեանց ։ |
| Պատ. | զՆեղութենէ ։ | զՆեղութեանց ։ |
| Գործ. | Նեղութեամբ ։ | Նեղութեամբք ։ |
| Պար. | զՆեղութեամբ ։ | զՆեղութեամբք ։ |
| Ներ. | ՚ի Նեղութեան ։ | ՚ի Նեղութիւնս ։ |
| Կոչ. | ով Նեղութիւն ։ | ով Նեղութիւնք ։ |

Այսպէս հոլովին ամ՟ անուանք յանգեալք ՚ի ութիւն · զոր օրինակ ։

| | | | |
|---|---|---|---|
| Տղայութիւն , | թեան ։ | ա | Infancy. |
| Մանկութիւն , | թեան ։ | բ | Childhood. |
| Պատանեկութիւն , | թեան ։ | գ | Youth. |

Երիտասարդութի՛ թեան . ը Manhood.
Ծերութիւն , թեան . թ Old age.
Զառամութիւն , թեան . ժ Decrepitude.
Յաւիտենականութի՛ թեան . ի Eternity.

Ըստ այսմ հոլովին և այլոքիկ անուանք .

Արիւն , արեան , րենէ . Blood.
Գալուստ , լստեան , լստենէ . Coming.
Ծնունդ , ծննդեան , 'ի ծննդենէ . Birth, nativity.
Կորուստ , րստեան , րստենէ . Loss, perdition.
Հանգիստ , գստեան , գստենէ . Rest, tranquillity.
Տեսիլ , տեսլեան , 'ի տեսլենէ . Vision, visage.

Անկիւն , անկեան , կեանէ . Angle, Corner.
Կորիւն , րեան , րեանէ . Whelp.
Ձիւն , ձեան , 'ի ձեանէ . Snow.
Սիւն , սեան , 'ի սեանէ . Pillar.
Վաղիւ , ղուեան , ղուէ . Morrow.
Տիւ , տուընջեան 'ի տուէ , կ . 'ի տուընջենէ . Day.

Անանիանք , նիանց , նիանս . Ananians.
Իսրայէլեանք , լեանց , լեանս Israelites.

Օրինակ եօթներորդ հոլովման .

| | Եզակի . | Յոգնակի . |
|---|---|---|
| Ուղ . | Գառն . | Գառինք . |
| Սեռ . | Գառին . | Գառանց . |
| Տրա . | Գառին . 'ի գառն . | Գառանց . 'ի գառինս . |
| Հայց . | զԳառն . | զԳառինս . |
| Բաց . | 'ի Գառանէ . | 'ի Գառանց . |
| Պատ . | զԳառանէ . | զԳառանց . |
| Գործ . | Գառամբ . | Գառամբք . |

| | | |
|---|---|---|
| Գործ. | զԳառամբ. | զԳառամբք. |
| Ներ. | 'ի Գառին, կ. գառն. | 'ի Գառինս. |
| Կոչ. | ով Գառն. | ով Գառինք. |

Ըստ այսմ հոլովին անուանք սակաւք. զոր օրինակ.

Խաշն, շին, շանէ. Cattle.
Կաթն, թին, թանէ. Milk.
Բեռն, ռին, ռանէ. Load, burden.
Եզն, զին, զանէ. Ox.
Եղն, ղին, ղանէ. Hind, Roe.
Ձեռն, ռին, ռանէ. ձեռք, ձեռաց, ձեռամբք, կ. ձեռօք.
Նեռն, ռին, ռանէ Antichrist. ( Hand.

Ազն, ազին, յազնէ. Nation.
Անձն, ձին, ձնէ. Person.
Դաշն, շին, շնէ. Agreement, bargain.

Արմն, մին մնէ. մունք. Trunk.
Գետափն, փին փնէ. փունք. Strand.
Հարսն, սին սնէ. սունք. Bride.
Մասն, սին, սնէ. սունք. Part, portion.
Մատն, տին, տնէ. տունք. Finger.
Ստաշխն, խին, խնէ. խունք. Stacte.
Սանդխառն, ռին ռնէ. ռունք. Pestle.
Թոռն, ռին, կ. ռան, ռնէ, կ. ռանէ. ռունք. Grand-child.
Ոտն, ոտին, յոտանէ. ոտք, ոտից, ոտիւք. Foot.
Լեռն, լերին, 'ի լեռնէ, լերամբ. լերինք, լերանց. Mount, Hill.

Օրինակ ութերորդ հոլովման.

| | Եզակի. | Յոգնակի. |
|---|---|---|
| Ուղ. | Զգեստ. | Զգեստք. |
| Սեռ. | Զգեստու. | Զգեստուց. |
| Տրկ. | Զգեստու. 'ի զգեստ. | Զգեստուց. 'ի զգեստս. |

| | | |
|---|---|---|
| Հայց. | զՁգեստ. | զՁգեստս. |
| Բաց. | ՚ի Ձգեստէ. | ՚ի Ձգեստուց. |
| Պատ. | զՁգեստէ. | զՁգեստուց. |
| Գործ. | Ձգեստու, կ. ով. | Ձգեստուք. |
| Պատմ. | զԳեստու, կ. ով. | զՁգեստուք. |
| Ներ. | ՚ի Ձգեստ, կ. ՚ի զգեստու. | ՚ի Ձգեստս. |
| Կոչ. | ո՛վ Ձգեստ: | ո՛վ Ձգեստք: |

Ըստ այսմ հոլովին անուանք սակաւք առանց կրկնուման և փոփոխման ձայնաւոր տառիցն՝ յորս յանգին. զոր օրինակ.

| | | |
|---|---|---|
| Ագռաւ, | ու. կ. ոյ. | Crow. |
| Բադ, | ու. - - | Duck. |
| Գանձ, | ու. կ. ի. իւ. - | Treasure. |
| Գրաստ, | ու. - - | Jument. |
| Դաս, | ու. - - - | Class, rank. |
| Ժամ, | ու. - - - | Hour, time. |
| Կաքաւ, | ու. - - - | Dance; partridge. |
| Հաւ, | ու. - - - - | Fowl. |
| Ձագ, | ու. - - - - | Young. |
| Ձաղ, | ու. - - - - | Ridicule. |
| Նկար, | ու. - - - | Picture, embroidery. |
| Պահ, | ու. - - | Custody; time. |
| Պար, | ու. - - - | Dance; circle. |
| Սակաւ, | ու. - - - | Few, little. |
| Վարձ, | ու. - - - | Hire, wages. |
| Քաղց, | ու. - - - | Hunger. |
| Կով, | ու. - - - | Cow. |
| Մոգ, | ու. - - - | Mage, Sage. |
| Որթ, | ու. - - - - | Calf; vine. |
| Սով, | ու. - - - | Famine. |
| Առաւօտ, | ու. - - - | Morning. |
| Նարօտ, | ու. | Broidered-work. |
| Առիւծ, | ու. կ. ոյ. | Lion. |

| | | |
|---|---|---|
| Այգ, | գու, գուէ · | Morning. |
| Զարդ, | դու, դուէ · | Ornament. |
| Խրատ, | տու, տուէ · | Instruction. |
| Նախանձ, | ձու, ձուէ · | Envy; emulation. |
| Ուղտ, | տու, տուէ · | Camel. |
| Զօր, րու, | րուէ, րաց, րօք · | Army. |

Կորուսմամբք ։

| | | |
|---|---|---|
| Ցուլ, | ցլու, կամ ցլոյ · | Bull. |

Փոփոխականք ։

| | | |
|---|---|---|
| Աղուէս, ուխտու, կ· ուեսու · | | Fox. |
| Զէն · | զինու · | Arm, weapon. |
| Վրէժ, | վրիժու · | Vengeance, revenge. |
| Ինձ, | ընձու · | Leopard, pard. |

Անեզականք ։

| | | |
|---|---|---|
| Բարք, | բարոյ · | Habit, custom. |
| Վարք, | վարոյ · | Behaviour, conduct. |
| Պարտք, | պարտոյ · | Debt. |
| Բովք, | բովոյ · | Furnace. |

Օրինակ իններորդ հոլովման ։

| | Եզակի ։ | Յոգնակի ։ |
|---|---|---|
| Ուղ · | Փոքր · | Փոքունք · |
| Սեռ · | Փոքու · | Փոքունց · |
| Տրա · | Փոքու · առ փոքր · | Փոքունց · Ը փոքունս · |
| Հայց · | զՓոքր · | զՓոքունս · |
| Բաց · | 'ի Փոքուէ · | 'ի Փոքունց · |
| Գոր · | զՓոքուէ · | զՓոքունց · |

| | | |
|---|---|---|
| Գործ . | փոքու , կամ փոքումբ . | փոքումբք . |
| Պարուն . | զփոքու , կամ զփոքումբ . | զփոքումբք . |
| Ներգ . | ՚ի փոքու , կամ ՚ի փոքր . | ՚ի փոքունս . |
| Կոչ . | ով փոքր : | ով փոքունք . |

Այսպէս հոլովին ըստ խմիք և սակաւ այս բառք .

Թանձր , ձու , ձու . Թանձունք , ձունց , ձամբք .
Ծաղր , ղու , ղու . Ծաղունք , ղունց , ղուք .
Ծանր , նու , նու . Ծանունք , նունց , նուք .
Մանր , նու , նու . մանունք , նունց , նամբք .
Մեղր , ղու , ղու . մեղրք , մեղրից , մեղրօք .
Քաղցր , ցու , ցու . քաղցունք , ցունց , ցուք .
Բարձր , ձու , ձու կամ . ձամբ , բարձունք , ձանց , ձամբք .
Յօգունք , յօգունց , յօգումբք ՚ի յօգունս .
Խորձունք , ձանց , կամ . ձունց , խորձամբք , ՚ի խորձունս .

Օրինակ տասներորդ հոլովման .

| | Եզակի . | Յոգնակի . |
|---|---|---|
| Ուղղ . | Աղբիւր . | Աղբիւրք , կամ աղբերք . |
| Սեռ . | Աղբեր . | Աղբերաց , կամ աղբերց . |
Մի՛ ոք 'ի բամբասանս յօժարեսցի, Թէև ուղիղ իցէ · Բո՛ղ Թէ զբանհետ վարեալ || · Շնորհ · ընդհանր ·

Համեմատական · Մինչ չէ · մինչ չէ և · մինչ · մինչև · մինչև չէ, մինչև անգամ · մինչ անգամ · չէ և ոչ անգամ · անգամ · անգամ եւս · չէ · չէ և · նա · ևս · զոր օրինակ ·

*Այնքան կուրացեալ յատելութենէ, մինչ չէ ոչ միայն զկարծիս ազգին, այլ և զազգն ողջոյն բամբասես || · Լամբ · ատեն ·

*Այնչափ գտան հնարաւորութիւն հաճոյք էր, մինչ չէ և զճաշ հանդերձ հրեշտակօք ընկալան || · Շնորհ · ընդհան ·

*Այնպէս կաշկանդեալ կայեյան, մինչ ոչ կարէին կալ կանգուն || · Գէորգ Վարդապետ · 'ի մեկն · եսայ · գլ · 42 ·

*Այնչափ աշխատեցան մարմնով (սուրբքն), մինչև արտաքոյ հանին զմիտս՝ երևելեացս || · Լամբ · ատղ · 70 ·

*Յաղթութեանցն ուշ առնել խորհէին, մինչև զկեանս անգամ արհամարհել || · Եղիշէ նոզէ · ծէ ·

*Այնպէս էր առապար դժնեայ, չէ և ոչ նստելոյ անգամ տեղի անդ գտաւ նոյա || · Եղիշէ · Է ·

*Նաւաստութիւն՝ Թող զայլ ամ վտանգս ··· զկնի մահուանն՝ և Թաղմանն անգամ չառնէ արժանի || · Պլատ ·

*Բնաւ ամենեքին զմտաւ անգամ եւս մի ածցեն || · Ակէօր · Ա ·

*Այնպէս մեծաւ խնդութ տանէին զնեղութիւն, զի ամենեքին ոչ ոք տրտունջ հայհոյութեան 'ի բերանոյ նոցա լուաւ || · Եղիշէ · Ե ·

*Այնքան բազումք են և զարմանալի (խնամքն էր), չէ և ոչ բան բաւական իցէ բովանդակ յայտնել || · Իգնատիոս · ծա · 5 ·

*Զի Թէ յիշէիր դու զբանսգրոց ··· նա դու 'ի մէջ գազանաց ընտրէիր բնակել || · Վարդ հարց · Ճ ·

Վարանական · Գոնէ · գոնեա, կամ գոնեայ · գէթ · [illegible] · զոր օրինակ ·

*'Ի մեծագունիցն գործոյ առնու զօրինակն · զի գոնէ զփոքրն արասցուք || · Ոսկեբերան · Է · 25 ·

*Մովսէս 'ի վերայ թշնամեացն աղօթէր .... դու փո՛նեա մի ումեք չարի չար հատուցանել || . Խոսրով ։
*Այս մեր ասումն և խօսումն և իմացական բնութիւն մարդկանս՝ զի՞րդ գէթ ոչ նմանիցույս, թողուլ զանզգամութիւն և կեալ || . Եփրեմ ։

Թեական . ԵԹԷ . ԹԷ . ՉԷ ԹԷ . ՉԷ ԵԹԷ . ԵՒՍ ԹԷ . ԵՒՍ ԵԹԷ . ԱՊԱ ԹԷ . ԱՊԱ ԵԹԷ . ԱՊԱ ԹԷ ՈՉ . ԱՊԱ ԵԹԷ ՈՉ . ԱՐԴ ԵԹԷ . ՆԱ ԹԷ . ԱՅԼ ԹԷ . ԱՅԼ ԵԹԷ . ևն . զո՛ր օրինակ .
*ԵԹԷ չէք սրբութիւն սրտի, պահք չեն ընդունելի || . Մծբ ։
*Թէ ոչ էր փորձութիւնն բարւոք, ոչ մատնէր ած 'ի նոյն զսիրելին իւր || . Լամբրոն . 'ի Մէկն . սաղ . 65 ։
*Չէ ԹԷ ոչ աշխատի մշակն՝ ոչ հնձէ զպտուղն 'ի դէպ ժամանակի || . Խոսրով . 'ի Մէկն . Ժամագրքի ։
*Աղ 'ի ջրոյ գոյանայ . ԵՒՍ ԵԹԷ մերձեսցի 'ի ջուր՝ հալի և կորնչի || . Վարք հարց . Է ։
*Հրամայեալ է մեզ զմերն զամ տալ այլոյ . ԱՊԱ ԹԷ մեր զայլոյն յափշտակեմք, որ յոյս կենաց եղիցի մեզ || . Ոսկեբերան . Է . 21 . յորդոր ։
*Քա՛ւ լիցի ինձ լինել կորիս և դատան հանապազակ ընտրելոյն այ . ԱՊԱ ԹԷ ոչ՝ բացցէ երկիր զբերան իւր, և կլցէ զիս կորստեամբ || . Յոհն . հաթ ։
*Մարդ՝ մեռեալ ունելով զհոգին 'ի մեղսն՝ շնչաւոր է, և ո՛չ հոգևոր . ՆԱ ԹԷ կամիս՝ ընդ առաջին մարդն նայեա՛ց || . Սարգիս . յաճ . Գ ։

Մեկնական . ԱՅՍԻՆՔՆ . ԱՅՍԻՆՔՆ Է . ԱՅՍԻՆՔՆ ԹԷ . ԱՅՍԻՆՔՆ Է ԹԷ . ԱՅՍԻՆՔՆ Է ԶԻ . ԱՅՍ Է . ԱՅՆ Է . ԱՅՆԻՆՔՆ Է . ՆԱ Է . ՍԱ Է . ևն . Եւ ևս՝ ՈՐՊԷՍ ԹԷ . ՈՐՊԷՍ ԵԹԷ . ՈՐՊԷՍ ԱՅՆ ԹԷ . ԻԲՐ ԹԷ . ԻԲՐԵՒ ԹԷ . ԻԲՐՈՒ ԹԷ . ԻԲՐ ԱՅՆ ԹԷ . ԻԲՐՈՒ ԱՅՆ ԹԷ . ևն . զո՛ր օրինակ .
*Մի՛ տեսակ օտար զգեցեալ լիցուք . այլ՝ զկնիքն քի բարձցուք . ԱՅՍԻՆՔՆ զխոնարհութիւն նորա || . Վարք հարց . Է ։
*Գոչէ մարգարէն, անցցեն ընդ ծովն յաղթ . և հերձցեն զալիս ծովուն . ԱՅՍԻՆՔՆ է՝ զամպարշտութիւն || . Ագաթ ։
*Որ գրովք ոչ վարի, և ընդ այլ տեղի ելանէ . ԱՅՍԻՆՔՆ

Թէ՝ այլ ճանապարհ իւր համարանէ՝ որ ոչ է օրինաւոր, այնպիսին է աւազակ և գող || · Յոհ · Ժ · 1 3 ·
*Ցամաքեցաւ խոտն · այս է՝ մեռաւ || · Գէորգ · Եսայ · 40 ·
*Որդի մասեկայ ընդոծնի իմոյ, այն է եղիազար դամաս-կացի ··· ժառանգեսցէ զիս || · Ծնն · ԺԵ · 2 ·
*Այնպէս բերանաբացեալ կայ ՚ի սնոտիս, որպէս թէ մի-անջենաւոր ՚ի սմա կալոյ է || · Սոփոկլէս · յոհ · Է ·
*Ոչ կարէք ասէ՝ այ ծառայել և մամոնայի · Լեւոն թէ՝ որ այ ծառայն է, մամոնայի ոչ հնազանդի || · Նոյնն · Է ·
*Ոմանք ՚ի շանց ոչ կարացեալ զօրութ մարմնոյ կռուել մեծամեծս և ծանունս հաչեն · Եւեթ այն թէ՝ ՚ի ձեռն հաջմանն երևեցուցանել զկարելն || · ՚ի պարտավարեցան

Աշխատասիրէ ։ Սոյնպէս և այլքն ·

Յարայոսյական · Ըստ այնմ · ըստ որում · որպէս · օրինակ · զորօրինակ · եւն · զոր օրինակ ·
*Տէր մեր սուաքեցաւ ՚ի հօրէ քարոզ հեթանոսաց · ըստ այնմ՝ եդի զքեզ յուխտ ազգի և ՚ի լոյս հեթանոսաց || · Անտոնիոս վարդապետ ։
*Այլք ծնեալք ՚ի փարթամութի, և հոգւով աղքատք · ըստ որում՝ աբրահամ և յոբ || · Լոմէ · ատղ · 50 ·
*Եւ ՚ի մեռեալս գտանին սիրելիք նորա · որպէս՝ աբրահամ, իսահակ, յակոբ || · Նոննոս · յովհ · ԺԲ · 1 ։
*Ոյք և բնակեալ էին՝ օրինակ իմն իբրու յանքոյթ համ-գրատարանի || · ՚ի Գերմանոսէ ։
*Զմեծամեծսն հնազանդէ մեզ · զոր օրինակ, զփիղս, զուղ-տըս, զառիւծս, զինձս և զյովազս || · Եղիշէ · ԽԵ ·
Ըստ այսմ վարին և հարցական մակբայքս՝ Զինչ · Զիարդ · Զիարդէս · Որպէս · Որպիսի · Որչափ · Որքան · Որպէս · եւն ։
Եւս և բառքս՝ որպէս թէ · Եւս առաւել · օրինակի պէս · եւն ։ Այլ սք չեն ՚ի գործածութե, բայց եթէ ՚ի բանս մակայութեց · այսինքն ՚ի քերականութե · ՚ի տրա-մաբանութե · եւն · զոր օրինակ ·
*Տրամադրութիք ասին՝ որք են դիւրաշարժք և արագա-փոխք · որպէս՝ ջերմութիւն և ցրտութիւն || · Պորփիւ · առօրոգ · Ա · 2 ։ Սոյնպէս և այլքն ·

Պատճառականք · Զի · քանզի · փոխանակ զի · վասն զի · ո- զի · զի մ՛ · եթէ որ զի · եթէ զի · եթէ ոչ զի · որպէս զի · այլ զի · այս զի · այդ զի · այն զի · այնու զի · ոչ այն զի · նա զի · մանաւանդ զի · մինչ · որովհետև · որպէս · ուր · որ · ևն · զո՛ր օրինակ ·

*Խօսեցարո՛ւք զճշմարտութիւն իւրաքանչիւր ընդ ընկերի իւրում՝ և մի՛ զխաբէութի՛ և զստութի՛ · զի ճշմարտութի՛ն յայդ է ՝ և ստութի՛ն ՚ի սատանայէ || · Շնորհ · Բղբ ։

*Փոխանակ զի նախանձեցաւ օձն ընդ ադամ ՚ի դրախտի անդ ՝ զերիս անէծս ընկալաւ ՚ի պատիժ պատուհասից իւրոց || · Մծբ · Ը ։

*Հասցէ նմա յանկարծակի կորուստ ապականութե՛ · եթէ զի հանդերձեալ պահին չարեաց նորա պատիժք պատուհասից || · Վերջոր · Է ։

*Մեզ հա՛րկ եղև ՚ի սիրոյ բարեկամաց՝ ըստ մերում տկարութե՛ ՝ ապաւինեալ յայդ շնորհսն՝ մխիլ ՚ի խնդիր ճառխօսս · մանաւանդ զի յուսացեալ եւս վստա՛հ եմք յուղիղ ունկնդրաց մտադրութիւն || · Եղիշէ · Է ։

*Չե՛ն ինչ զարմանք, թէ նոքա ( այսինքն հրեշտակք ) արարածոց անուամբքս անուանին · ուր և նոյն արարիչն ոչ գարշի զայնպիսի անուանս զինքեամբ առնուլ վասն իրիք իրիք տեսչութեց || · Նոննոս · ԺԶ ։ Սոյնպէս և այլքն ։

Հետևողականք · Վ̄ այսորիկ · վ̄ այդորիկ · վ̄ այնորիկ · վ̄ այն · վ̄ այնր · վ̄որոյ · այսուհետև · այսր աղագաւ · այսորիկ աղագաւ · այդորիկ աղագաւ · այնորիկ աղագաւ · յաղագս այսորիկ · յաղագս այդորիկ · յաղագս այնորիկ · որոյ · որոյ աղագաւ · առնել որոյ · առնել այսորիկ · առնել այդորիկ · առնել այնորիկ · յայս առնել · յայդ առնել · յայն առնել · սոյն եթէ · դոյն եթէ · նոյն եթէ · ապաքէն · ևն · զո՛ր օրինակ ·

*Ոչ կամին ՚ի սէրն խոնարհիլ · այլ՝ բուռն հարկանեն զայլ կարծեաց ՝ թէ նոքա զմերս առեն ազգ ՝ վ̄ այսորիկ և ՚ի մէնջ առեալին ։ Կուփեն և կեղեքեն և հայհոյեն զմեզ ՝ յաղագս այսորիկ և ՚ի մէնջ հայհոյեալին|| · Լամբ · ատեն ։

*Խորհեցյան կամաւոր հնազանդ լինել Թագաւորին խոստ-րովլու · որին երբ՝ գրեն առ նա Թուղթ || · Խորէն · Գ · 48 ։ Սոփոկլէս և այլքն ։

Սակարեւորական · Ոսկեհ · տող · տող Խ · տող Ոսկեհ · Նոր Ոսկեհ · յերկուս Ոսկեհ · տոմարին · Քա · ԵՃ · զոր օրինակ ·

*Ո՛չ է արժան մարդոյ խառնել զմեղը ընդ լեղւոյ · Ոս-կեհ եթէ պահեսցէ որ ՚ի հացէ և ՚ի ջրոյ, մի խառ-նեսցէ նա ՚ի պահս իւր անէծս նզովից և բամբասանս հայհոյութե || · Մծբ · Գ ։

*Եթէ հուր առանց նիւթոյ շիջանի, տող Խ յանկութե ՚ի պահոց || · Յաճախապատում · Ը ։

*Արքայութիւն երկնից բռնադատի, և բռունք յափշտ-տակեն զնա · տող Ոսկեհ չէ հնար ծուլութբ հասա-նել նմա || · Ոսկեբերան · Է · 8 ։

*Եթէ ընդդիմակաց քո են, տոմարին ոչ են Թոյլ տուել լինել եղելոյն || · Նոյնն · Է · 18 ։

*Այս Թէ ես զփառս առաքելին խնդրեմ խնդրեմ, Քա ըն-դէ՞ր կամիցիմ՝ այլ ինչ քան զնորայն ուսուցանել || · Նոյնն · Է · 3 ։

Սկզբնաւորական · Արդ · տյլարդ · եօթ արդ · Քայց արդ · Խ արդ · եօթ · տոմարին · Նո տառնէջ · ԵՃ · զոր օրինակ ·

*Ինքեանք ուսուցին անողորմքն, եթէ չէ պարտ ողորմել · արդ՝ իւրեանց ախտին դատի զնա ( տէրն ) || · Սար-գիս Վարդապետ · ՚ի Թղթն · յակ · 6 ։

*Աշխարհ՝ յուսացին յան հզօր և ոչ ՚ի փայտս և ՚ի քարինս || · Գեորգ · Եսայ · 10 ։

*Որ մեղանչէ՝ օրինազանց է · եւ որ զօրէնսն լուծանէ՝ զինչ է անուն նր || · Լամբրոն · ՚ի Թղթն · պատարագի ։

*Աղօթքն՝ որ գլխոյն հայր է, նոյն և մարմնոյն || · Խոսր ։

*Նա՛ տառնէջ աղդ եղև յականջս մն զօրութեց այդ ամ || · Եսայ · Գլ · Ե · համար · 9 ։

Թուարմատար · Թե · ԵՌԵ · ԽՌԵ · ՉԵ · Խ ՉԵ · Քա, կամ Քայ · Քամ · ոչ · զոր օրինակ ·

*Մի տար գիտել Թշնամւոյն, Ռէ ՚ի խռովութեան է ընդ

քեզ ողահապան քո || . Խոսրով . ՚ի Մեկնութ. ժամագրքին :
*Ո՛վ որք համարձակիք , եթէ սուրբ իցէ ՚ի մեղաց || .
Ոսկէ . Է . 9 . ՚ի Ձեռագիրս .
*Լուսոյ և կենաց լինին պատճառ ( ո՛ր գիրք ) քննողաց
նոցա՝ ըստ ասացելոյն , Ճրագ են բանք քո ոտից իմոց .
և եթէ՝ լոյս են հրամանք քո ՚ի վ[ե]ր երկրի || . Շնորհ . Եղբ :
*Յարդեանցն հաստատացաք և ծանեաք , չէ զորդին իւր միածին ետ վասն մեր , և չէ զհոգին սուրբ պարգևեաց
մեզ || . Աթանաս . ա . յոհ . 7 :
*Բանիւք ասէ՝ քո սիրեմ զքեզ . և յարդեանցն պակասեալ
գտանի || . ՚Ի Նոյնն :
*Տէ՛ր զսիրտ իմ . և յորժամ յասնու խորհուրդ ,
դու ասա՛ չունիմ սիրտ՝ որ յասնում || . Նեղո .

## ԳԼՈՒԽ . ԺԱ .

### Յաղագս Միջարկութեանց .

Տեսակք միջարկութեանց են բազումք ։ Երանական . ըղձական . զարմանական . զարհուրական . հառաչական . եղկական . աղաղական . ցաւակցական . կոչական . բացականչական . յորդորական . խնդական . գովողական . հեգնական . արհամարհական . երգիծական :

՚Ի սոսա թէպէտ կան բազում միջարկութիւնք . այլ մեք զգործածականսն և եթ կարգեսցուք աստ ընդ իւրաքանչիւր տեսակօք :

Երանական . Երանի . Երանի թէ . Երանի եթէ . զո՛ր օրինակ .
*Երանի՜ վաստակոյդ ձեռաց , որում ես ցանկացայ || .
Ոսկեբ . գով . Լուսաւոր :
*Երանի՜ թէ՝ երազ միայն էր ( մեծութիւն իմ ) , և ոչ առիթ
տանջանաց || . Գէորգ Վարդապետ . ՚ի Մեկն . Եսայ . գլ . ԽԹ :
*Երանի՜ եթէ մարմնով և եթ էաք ՚ի գերութ. , և ոչ ընդ
նմին և հոգւով և մտօք || . Սարգ . յաղ . Գ . յորդ :
Ըղձական , կամ յօժարական . յԱնկարծ . յանկարծ . իցէ

ըէ. ով. զոր օրինակ, *յԱնկա՛րծ երթայր տէր իմ առաջի մարգարէին այ || . Դ. Թագ. Ե. 3.
*Իսկ յանկա՛րծ գայր միջնորդ, և յանդիմանէր, և լսէր ՚ի մէջ երկոցունց || . Յոբ. Լ. 33.
*Իջէ՛ ըէ յաւելուց հայել զբազմախորտակելի տապանակ մարմնոյս իմոյ նորոգեալ || . Նար. ԻԵ.
*Ո՛վ որպիսեաց՝ մեզ պէտք են բանից և ժուժկալութեան՝ համասարեցուցանել շնորհին և ողորմութեանն զբանս || . Իգնատ. ԾԵ. 9.

Զարմացական. Ո. ով. ով ըէ. Եովէ. զոր օրինակ.
*Ո՛ մեծի անպատում սքանչելեաց շնորհացս || . Կոչ. ԾԷ.
*Ո՛վ զինչ զօրութի է՝ որ լուսաւորեաց զքեզ || . ՚Ի Նոյն.
*Ո՛վ ըէ քանի՛ անչափ են խնամքն քո, զխո՛րդ զծածուկ կամս հօրն յայտնեաց մեզ || . Իգնատ. ԾԵ. 20.
*Եովէ՛ զիա՛րդ վրէպ եղէր ՚ի չարութեն թշնամւոյն || . Վարք հարց. Գւ. ԵՂ. պատմութե. 20.

Զարհուրական. Ով. ո. ոո. ոհ. ոհոհ. զոր օրինակ.
*Ո՛վ որպիսի ահ և դողումն եկեսցէ ՚ի վրա մեր յայնժամ. ո՛ որպիսի զեղջ կալցի զմեզ || . Վարք հարց. Է.
*Ո՛ ո փախերո՛ւք յերկրէ հիւսիսոյ ... ՚ի սիոն դիմեալ ապրեցարո՛ւք || . Զաքար. Բ. 6. ձեռագիր.
*Ո՛հ պաշարեաց տէր զերիս թագաւորս եկեալս տալ ըզ-սոսա ՚ի ձեռս մովաբայ || . Դ. Թագ. Գ. 10.
*Ո՛հ ոհ օր, զի մերձ է օր տն, օր մգի. հասեալ է վախճան ազգաց || . Եզեկ. 30. 2.

Հառաչական. Ոհ. ոհ ըէ. ով. զոր օրինակ. *Ո՛հ մայր իմ՝ ընդէ՛ր ծնար զիս՝ այր դատապարտեալ՝ տեսանել զթշուառութիս մարդկան || . Գող. լոռ.
*Ո՛հ ըէ կարող լինէի լսել զփուշս իմ || . Վարք հարց. ԾԶ.
*Գոչեաց մեծաձայն, և ասէ. ո՛վ թշուառութեանս ... մարդ մի խնդրեմ խօսիլ ընդ նմա, և ոչ գտանեմ || . ՚Ի Նոյն.

Եղկական, կամ ողբական. Եղուկ. վայ. վայ վայ. ոհ. ով. Եովէ. զոր օրինակ.

*Եղո՛ւկ՝ որ չարչարեայն զքեզ || · Բարուք · Դ · 31 :
*Մեզ վա՜յ Թշուառականացս՝ յաղագս մտաւորական կուրութեան || · Ղամբ · տող · 118 :
*Դու կոչեցեր զժամանակն զայն · և եղև ինձ վա՜յ վայ || · Ողբ · Ա · 21 :
*Ո՜հ որոց թողեալ էին զճանապարհս ուղիղս || · Առակ · Բ · 3 :
*Ո՜վ քանի մեծ է կուրութիւնն իմն · յորքան բարձրութէ փառաց մերկանալովդ կողոպտեցին զանձինս իւրեանց || · Իգնատ · Է · 32 :
*Բարձք կուրութէ մտացն, և անհնարին անըմբռնութեան || · Սարգ · յակ · 2 · յորդորակ :

Աւաղական · Աւաղ · վայ · ոհ · ով · զո՛ր օրինակ · *Աւա՜ղ՝ ո՜ւր այրարատեան գունդն և ասքանազեան զօրն || · Մագիստ :
*Վա՜յ՝ զի անօրէնութիւնք զա՛մ աւուրս կենաց իմոց անցուցի || · Վարք հարց · Գլուխ · ԺԲ :
*Ո՜հ ես մեղայ նման նմին՝ և յանցանց մօրն եւային || · Յ̄ · որբ :
*Ո՜վ դիւրապատիր մարմին երկրածին, որո՜վք ձայնարկութեամբք զքեզ ապաշեցից || · Նարէկ · ԽԲ :

Ցաւակցական · Ով · ո · ոհ · վայ վայ · զո՛ր օրինակ · *Ո՜վ հնարիմաց խորամանկութեան ողորմելի բնութեանս՝ անողորմ Թշնամեաց || · Ղամբ · տող · 55 :
*Ո՜ մինչև ցմահ Ջգնեցին եղբարքս այս || · Վարք հարց · Է :
*Ո՜հ քանի պակասութիւն է մեզ և երկրի՝ մեկնիլն ՚ի մէնջ սրբոյն մեծին անտոնի || · ՚ի նոյնն · ԽԷ · 19 :
*Վա՜յ վայ քաղաք մեծ, որով ա՛մքն մեծացայաք || · Յայտ · ԺԸ · 19 :

Կոչական · Ով · ո · զո՛ր օրինակ · *Ո՜վ որք զգեցեալ էք զզէնն քո՛ւ՝ ուսարո՛ւք զգործ պատերազմի || · Մծբ · Է :
*Յայսպիսի ահագին սպառնալեացս պա՛րտ էր երկնչել և դողալ մեզ ո՜ սիրելիք || · Սարգ · յակ · 9 · ճառ :

Բացականչական, կամ խրոխտական · Ըյ · ով · ոհ · զո՛ր օրինակ ·
*Ը՜յ դառնացեալ ծեր, զի՞ կայ իմ և քո, զի համբերես զիս || · Վարք հարց · ԽԷ · 15 :

*Ո՜վ յիմա՛ր դու, զի՛արդ այլոց մաքրիչ (լինիս), և ոչ անձին || . Իգնատ . Է . 43 .

*Օ՜ն ՚ի մի՛տ առ, զայն կամիլն ասել, եթէ թագաւոր է հրէից || . Նոննոս . ԺԶ . 34 .

Յորդորական . Աղէ . հապա . Ե՛ր . ձն . ձն այսուհետև . զոր օրինակ .

*Աղէ՛ եկ դու՝ ընկա՛լ ՚ի լսելիս քո զասացեալն ՚ի մարգարէէն || . Մովսէս . ա . ոսկերանամ :

*Հապա՛ առաքինի՛ք՝ եհաս ժամ պսակման մերոյ || Եղիշէ . Ը .

*Ե՛ր ՚ի աստանօր բացցո՛ւք զամենայն գիրս, յորս գտանեմք զճշմարտութեանն ճանապարհ || . Գրիգ . Լուս .

*Օ՜ն եկա՛յք ՚ի վեր յերկինս ելեալ մնասցուք, ո՛չ տեղեաւ և բանիւք, այլ գթով և միոք || . Ոսկեբ . Ա . I .

*Իսկ արդ՝ քանզի յայտնապէս ՚ի չորրորդ վերիպեցաք, օ՜ն այսուհետև մեր՝ յերկրորդն դիմեսցուք || . Ոսկեբ . մատ . գլ . Ա . համար . I .

Խնդական, կամ ախորժական . Վաշ . վաշ վաշ . ահ ահ . զոր օրինակ .

*Վա՛շ ինձ, զի ջեռայ, և տեսի զկրակ || . Եսայ . ԽԴ . 16 .

*Վա՜շ վաշ անձանց մերոց, զի ընկլուզաք զնա || . Սաղ . ԼԴ . 25 .

*Տաւիղն և երգելով ասէին, ա՜հ ա՜հ պամբոյ ժպտեցաւ || . Վարք հարց . ԺԱ .

Գովողական . Ով . ո . զոր օրինակ . *Ո՜վ քանի՛ անչափ է մարդասիրութիւն նորա . զի՛արդ զոր առնու՝ բազմապատիկ հատուցանէ || . Իգնատ . ԺԷ . 37 .

*Ո՜վ ամենաբարի բնութեանն . զո՛րպիսի ինչ նուէրս ընկալաւ յո՛րպիսւոյ ձեռաց || . Նոյնն . Է . 46 .

*Ո՜ մեծի զօրութեանն՝ որ արար զայն || . Ոսկ . Է . 4 .

Հեգնական . Վահ . հապա . զոր օրինակ . *Վա՜հ՝ եղև ադամ իբրև զմի ՚ի մէնջ || . Երզնկացի . ՚ի Ծննդ . Քերակ . Ղուկ .

*Հապա՛ նախ գայ մի՛ր || . Եսայ . ԺԱ . I .

Արհամարհական, կամ ծանակական . Վաշ . վաշ վաշ . ահ ահ . զոր օրինակ .

*Վա՜շ նոցա անմտութեանն ||․ Ովսէէ․ Է․ 3 ․

*Վա՜շ վա՜շ ՚ի վերայ գարշելեացն և չարեաց տանն Իսրայէլի ||․ Եզեկ․ Զ․ 11 ։

*Ո՜ կալի է առասպելըն, այլ և առասպելեաց առասպել || Խօր․ Է․ 7․

*Աղաղակեցին միաբան, ո՜հ ո՜հ՝ արդարն մոլորեցաւ ||․ Յոյժմա․ հոլւ․ ԵԳ․

Երգիծական․ Վաշ․ վաշ վաշ․ զո՛ր օրինակ․ *Եթէ ոսնահար եղէ ՚ի վ՛ր գլորման Թշնամւոյ իմոյ, և ասացի ՚ի սրտի իմում՝ վա՜շ, ապա լուիցէ ունկն իմ զանէծս իմ ||․ Յոբ․ ԼԱ․ 29 ։

*Կրեսցեն զամօթ առ ժամայն վաղվաղակի՝ ոյք ասէին ինձ վա՜շ վա՜շ ||․ Սաղ․ ԼԹ․ 16 ․

Գտանին և այլ պէսպէս միջարկութիւնք, որք չէն այնչափ ՚ի գործածութեան․ վասն ոչ դնեմք զնոսա աստ․ այլ յերկրորդ մասին․ Գլ․ ԵԸ․

Աւարտ առաջին մասին ։

# ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ.

Ցուցակ օրինակութիւն մասանց բանի :

ԶՈՐ ՄԻԱՆԳԱՄ ԱՒԱՆԴԵցաք նորավարժից յառաջին մասին անդ, արժան է աստ քննել զնոսին, և տեսանել՝ թէ զինչ իցեն, և որպիսի. և զոր յատկութիւնս կամ պարագայս ունիցին. առ ՚ի խելամուտ առնելոյ ամի նց զուսանողն : Այլ հարկ է նոցա յայսմ՝ վերջի ունել մտադրութի յօժար՝ առ բարուոք իմանալոյ զգրեալսն ՚ի սմա : Զի որպէս առ ուսումն առաջին մասին՝ պիտոյ է արագութիւն յիշողութեան, նոյնպէս և յայսմ մասին հարկաւոր է պատրաստութիւն մտաց. զի անդ առաջի դնին սերտելիք. իսկ աստ քննին մտաց ախորժելիք : Առ այս կարէ նպաստել դասատուն, եթէ յառաջ քան զսկիզբն առնել այսր մասին՝ տայցէ ուսանողաց ՚ի միտ առնուլ զհամառօտութիւն քերականութեան, (զոր դնեմք յաւարտ գործոյս) մեկնելով նոցա ըստ կարգի զամ՝ որ ՚ի նմա. որպէս զի նոքին դոյն ինչ զօրացեալ մտաց նորավարժիցն և ընտելացեալ ծանօթութեան այսր արուեստի, դիւրին լիցի նոցա գտանել զմուտ ՚ի սոյն : Զայսոսիկ ծանուցեալ՝ մատիցուք ՚ի Ճառս. նախ՝ ՚ի քննութիւն քերականութե, և ապա ՚ի բացատրութիւն մասանց բանի :

## ԳԼՈՒԽ · Ա ·

### Յաղագս Քերականութեան, թէ զինչ իցէ, եւ քանի՛ գլխաւոր մասունք նորա ·

Քերականութիւն է արուեստ ուղիղ խօսելոյ՝ եւ անսխալ շարադրելոյ · քանզի որպէս հիւսնութիւն է արհեստ ըստ կարգի եւ ըստ պատշաճի շինելոյ զկերտուածս, որպէս զարկղ, զաթոռ, եւ այլն, սոյնպէս եւ քերականութիւն է ազատական ինչ արուեստ, որոյ ուսանօղն՝ ըստ կարգի եւ ըստ ուղղութեան կազմէ զխօսս · եւ պատանց սխալանաց կարգէ զնոյն՝ թէ ՚ի խօսելն, եւ թէ ՚ի գրելն ·

Գլխաւոր մասունք քերականութեան, կամ հարկաւոր ուսանելիք ՚ի քերականութեան՝ են չորք · գիր, վանկ, բառ, եւ բան ։ Այլ զի զարդանէ միայն խօսի քերականութիւնն՝ իբրեւ զայնց, որք գլխաւորաբար եւ յատկապէս ուսանելի են ՚ի քերականութեան · զի որովհետեւ ոչ այլ ինչ գործէ քերականութիւնն, բայց եթէ ուղիղ եւ անսխալ կարգել զբանս, հարկ է նմա յատկապէս զայնցանէ խօսիլ, յորոց կազմին բանք · եւ քանզի բանք կազմին ՚ի բառից, եւ բառք ՚ի վանկից, եւ վանկք ՚ի գրոյ, պիտոյ է, զի յատկապէս զայնցանէ խօսեսցի քերականութիւնն ։ Արդ թէպէտ զգրոյ եւ զվանկից խօսի ինչ ինչ յայբբենարանի, (որ կոչի եւս քերական), բայց նիւթապէս միայն · իսկ աստ խօսի տիրապէս՝ քննելով զորպիսութիւն նոցա ·

### Յաղագս Գրոյ ։

Գիրն է գիծ ինչ, որ կարգեալ է ՚ի նշանակել զտառն · որպիսի են նշանագիրքս՝ ա · բ · գ · դ · եւ այլն · Իսկ տառն է հնչումն ինչ յօդելի եւ հեգելի · այսինքն՝ այնպիսի հնչումն, որ յօդի ընդ այլում հնչման · եւ հեգեալ ընդ նմա՝ զկատարեալ ձայն հնչէ · որպէս հնչումնս Բ՝ յօդի

ընդ հնչմանս է . և հեգեալ ը՛ նմա այսպէս , ը՛ = է , հըն-
չէ զկատարեալ ձայնս զայս՝ ըէ :

Ուստի հնչումն ինչ եթէ չիցէ հեգելի ընդ այլում հընչ-
ման , ո՛չ է տառ . զի ոչ լինի տառը կատարեալ ձայնի . իսկ տառն ըստ ստուգաբանութեան իւրում՝ պարտի լինել տառը ձայնի , որպէս բաղկացուցիչ նորա : Եւ ևս՝ եթէ հըն-
չումն ինչ իցէ յօդեալ և հեգեալ , ո՛չ ասի տառ , այլ վանկ . զի ոչ է հեգելի , այլ՝ հեգեալ :

Տառք ՚ի մերս լեզու յերեսնևվեց գիրս բովանդակին . որոց ձևք և հնչմունք այսպէս կերպաւորին :

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| ա | ԱՅԲ . | խ | ԽԷ . | չ | ՉԱ . |
| բ | ԲԵՆ . | ծ | ԾԱ . | պ | ՊԷ . |
| գ | ԳԵՄ , կմ ԳԻՄ . | կ | ԿԵՆ . | ջ | ՋԷ . |
| դ | ԴԱ . | հ | ՀՈ , կմ ՀՕ . | ռ | ՌԱ . |
| ե | ԵՉ . | ձ | ՁԱ . | ս | ՍԷ . |
| զ | ԶԱ . | ղ | ՂԱՏ . | վ | ՎԵՒ . |
| է | Է . | ճ | ՃԷ . | տ | ՏԻՒՆ . |
| ը | ԵԹ , կմ ԸԹ . | մ | ՄԵՆ . | ր | ՐԷ . |
| թ | ԹՈ , կմ ԹՕ . | յ | ՅԻ . | ց | ՑՈ , կմ ՑՕ . |
| ժ | ԺԷ . | ն | ՆՈՒ . | ւ | ՅԻՒՆ , կմ ՀԻՒՆ . |
| ի | ԻՆԻ . | շ | ՇԱ . | փ | ՓԻՒՐ . |
| լ | ԼԻՒՆ . | ո | Ո , կմ ՎՈՈ . | ք | ՔԷ : |

Յորս յաւելեալ զտառս օ և ֆ՝ լինին երեսունևութն : զորոյ զյատկութիւն տես ՚ի բառարանի :

Եօթն ՚ի սոցանէ ձայնաւորք ասին . զի ինքնին տան ըզ-
ձայն . և են սոքին . ա . ե . է . ը . ի . ո . օ . ընդ որս դասի և ձայնաւոր հնչումնս ու՝ իբր ութերորդ : Իսկ մնացեալ տառք բաղաձայնք ասին . զի բաղադրութեամբ ձայնաւորի տան զձայն . և են սոքին . բ . գ . դ . զ . թ . ժ . լ . խ . ծ . կ . հ . ձ . ղ . ճ . մ . յ . ն . շ . չ . պ . ջ . ռ . ս . վ . տ . ր . ց . ւ . փ . ք . ֆ :[a]

Իսկ գիրս և՝ յատկապէս ոչ դասի ընդ սոսա . զի ոչ է

նշանակին յատուկ տառի, այլ՝ երկուց որոշ տառից․ զի
ծչէ և ուրանէ․ և ՚ի նոյունց կազմեալ․ զի ՚ի կիսատ ելէ,
և ՚ի հնչմանէ, փոխանակ բառիս ես ։

Այսորիկ նշանագիրք մեր ՚ի հինգ ձևս սովոր են նկարիլ․ Նախ՝ յայս ձև․ ա․ որ անուանի բոլոր գիր․ և ՚ի գործ ածի այժմ առաւելապէս ՚ի տպագրութիւնս ։

Երկրորդ՝ յայս ձև․ ա․ որ անուանի նօտր գիր․ և ՚ի գործ ածի հասարակօրէն ՚ի գրութիւնս քաղաքիցայ, և ՚ի շարագրութիւնս ուսումնասիրաց ։

Երրորդ՝ յայս ձև․ Ա․ որ անուանի երկաթագիր․ և ՚ի գործ ածի հասարակօրէն ՚ի սկսուածս բանից գրելոց բոլոր գրով ։

Չորրորդ՝ յայս ձև․ Ա․ որ անուանի գլխագիր․ և ՚ի գործ ածի ՚ի սկսուածս բանից գրելոց նօտր գրով ։

Հինգերորդ՝ ՚ի պէսպէս վայելչազարդ ձևս․ և կոչի փառագիր․ որ եթէ ծաղկամբք, կամ դրուագօք նկարեսցի, ասի ծաղկագիր, կամ դրուագագիր․ իսկ եթէ կերպարանօք մարդոյ, կամ թռչնոյ, եւն, կոչի մարդագիր, կամ ձագագիր․ որպէս տեսանի ՚ի սկսուածս պէսպէս ճառից և գլխոց մատենից ։

Թէ չորեքեան տառք, Ղ․ Յ․ Ո․ Ւ․ զինչ զօրեն ։

Վերոյ նշանակեցաք երեւմնութեան տառից չորեքին սոքա Ղ․ Յ․ Ո․ Ւ․ ընդ որս և հնչումնս սոցա՝ պէսպէս ՚ի գործ ածին ։

Ղատն՝ երբ առանց մակակետի է, ունի զիւր ձայն․ զոր օրինակ, Աղբիւր․ ղեկ․ լուղիլ․ եւն ։ Եւ երբ մակակետիւ է, երբեմն հնչէ որպէս ղեան նուրբ․ զորօրինակ, Այղ․ հոյղ․ եղի եղի․ գաղիղեա․ աղեղուխա․ եւն ։ և այս առաւել ՚ի գործ ածի յայլազգական բառս ։ Իսկ երբեմն որպէս զասկաձայն ղատ․ զորօրինակ, Աղաղակ․ եղիա․ երկիւղ ; եւն․ և ըստ այսմ անուանի ղեան ։

Յին՝ յորժամ է ՚ի սկզբան բառից, է բաղաձայն․ զոր

օրինակ ՝ Յարմար · յօժար · յօն · յաթոռ · յերկրէ · ևն ։ Եւ եթէ վասն բարդութե ՝ կամ վասն նախդրից՝ այսպիսի սկզբնատառ յէ՝ ՚ի մէջ բառի կամ նախդրի անկցին , տակաւին իբր բաղաձայն հնչեն · զոր օրինակ ՝ Բարեյարմար , և ոչ բարէյարմար · ինքնայօժար ՝ և ոչ ինքնայ-օժար · բարձրայօն ՝ և ոչ բարձրայ օն · ՚ի յաթոռ ՝ և ոչ ՚ի յ աթոռ · առ ՚ի յերկրէ ՝ և ոչ առ ՚ի յ երկրէ · ևն ։ Իսկ յորժամ դասի զկնի ձայնաւոր տառի ՚ի վերջոյ ՝ իբր անձայն վարի · զոր օրինակ · Ծառայ · տղայ · գայ · ապշեցայ · սայ · նորայ · ՚ի բացեայ · ՚ի վերայ · յապայ · նոյ · գոյ · քոյ · յարգոյ · ՚ի ներքոյ · բերանոյ · զրօյ · ևն · բայց յայլազգական բառից · և բայց ՚ի բառիցս ՝ Ա՜յ · Եայ · Հայ · Ճայ · Նայ · Վա՜յ · Խայ · Հոյ ։ Այլ սակայն եթէ զկնի վերջադաս յէ տառից յարեսցի տառ ինչ՝ կամ վանկ ինչ և կամ բառ ՝ յայնժամ իբր ձայնաւոր հնչէ · զոր օրինակ ՝ Ծառայական · տղայամիտ · գային · ապշեցայք · սայս · նորայն · նոյի · գոյից · քոյոց · յարգոյամեծար · ՚ի ներքոյս · բերանոյն · զրօյիւք · ևն ։ Իսկ ՚ի բառսդ՝ վերոյգրեալ , վերոյեդեալ ՝ վերոյասացեալ , ևն ՝ յէ տառն դնի իբր անձայն · զի սոքա ոչ նկատին իբրև բարդք ՝ այլ իբրև կըրկին բառք ։

Ո՛ երբ յառաջէ քան զտառն վ ՝ հնչէ որպէս օ · զոր օրինակ ՝ Ո՛վ · կով · ծով · կողով · յակովբ · Հռովմ · մեքենովք · ևն ։ Եւ սակայն եթէ զկնի վեւին գուցէ միւս ևս այլ ո ՝ յայնժամ նախընթացն ո հնչէ ըստ մէջ ոյէ և ոյէ · զոր օրինակ ՝ Սովոր · սովորութիւն · խռովելի · ևն ։ Այլ յորժամ դնի ո յառաջ քան զտառն յէ · որոյ ըզկնի լինի տառ բաղաձայն ՝ հնչէ որպէս ու · զոր օրինակ · Սոյզ · թոյն · յոյս · խնջոյք · ևն ։ Իսկ յայլ՝ հնչէ ո՛ · զոր օրինակ ՝ Լոյծ · արբօ · գող · խոզ · գոմ · ալոճ · բորակ · գոյեղ · գոյից · գոյութիւն · ևն ։

Իւրն սպարդ՝ ( յ առանց նախընթացին ոյէ ) ՝ յորժամ նախադասի ձայնաւոր տառից ՝ միշտ իբր բաղաձայն վարի · և ունի զհնչումն վեւի · զոր օրինակ ՝ Աւազակ ՝ մանաւանդ ·

աւետարան , առաւելուլ . յաւէտ , պտղաւէտ . գաւիթ , շաւիղ . զօրաւոր , գինւոյ , հոգւով . փառաւոր , առաւօտ . և այլն :

Իսկ յորժամ յարի զկնի ինէ տառին , երբեմն վարի իբր բաղաձայն . զոր օրինակ , Տիւ . քիւ . անիւ . խաչիւդ . պատիւն . ևն : Եւ երբեմն իբր ձայնաւոր՝ որպէս իւ կամ իու . զոր օրինակ , Իւր . հիւր . գիւղ . լալիւն . բարութիւն . բանիւք . խաչիւք . ևն :

Նոյնպէս և յորժամ յարի զկնի եչին՝ Թէպէտ հասարակօրէն իբր բաղաձայն վարի . զոր օրինակ , Եւ . դեւ . ևն . բայց ըստ հին ձեռագրաց ինչ՝ երբեմն նաև իբր ձայնաւոր հնչէ՝ որպէս իւ . զոր օրինակ , Եւղ . բեւր . առեւծ . ևն . Իւղ . բիւր . առիւծ :

Այլ նկատելի է և , զի եթէ ՚ի մէջ երկուց ձայնաւորաց՝ ինէ , նախընթացն հնչէ որպէս նուրբ հօյ . իսկ հետևեալն իբր վեւ . զոր օրինակ , ւիւթ . ւիւծ . ւիւսել . ևն . տայ ՚ի բառէս՝ ձայնդ . որոյ միջանկեալ հնչիւնն հնչէ որպէս վեւ :

Ու՝ եթէ չունիցի նախ քան զինքն բնաւ ինչ տառ , իբր ձայնաւոր հնչէ . ո՛րգոն , Ութն . ուր . ուղիղ . ուտեստ . ումեք . ևն : Նոյնպէս եթէ չունիցի զկնի իւր ինչ տառ , իբր ձայնաւոր հնչէ . զոր օրինակ , Նու . զօրու . փայլածու . խորհրդատու . ևն :

Իսկ եթէ իցէ ՚ի մէջ երկուց տառից , որոց առաջինն իցէ բաղաձայն , երբեմն որպէս վեւ հնչէ . զոր օրինակ , Նուագ . զուարթ . պտտուեղէն . Թուել . ՚ի զօրուէ . նուիճ . ասուի . պատուոյ . Թուոյ . անուօք . ևն : Եւ երբեմն որպէս ըձայնաւոր . զոր օրինակ , Գութ . սողուն . ընթեռնուաք . զբօսնուաք . խուել . էմմանուէլ . Թողուլ . ընուիր . ընկենուլին . ևն :

Այլ եթէ նախընթաց տառն իցէ ձայնաւոր , և կամ յէ իբր ձայնաւոր , հնչէ որպէս վեւ . զոր օրինակ , Էութի . լուծի . գոյութիւն . վկայութիւն . ևն :

## ԳԼՈՒԽ · Բ ․

### Յաղագս Վանկի ։

Վանկն է ձայն ինչ՝ որ միով հնչմամբ ելանէ 'ի բերանոյ մարդոյն՝ բաղկացութիւն ձայնաւոր և բաղաձայն տառից · որ օրինակ ՝ Գա · հե · նէ · գո · իյ · ղու · օք · եւն ։

Ասի՝ միով հնչմամբ · զի եթէ բազում հնչմամբ ելանիցէ, ոչ ասի վանկ · այլ բառ · զոր օրինակ, Բանի · ընտանի · մեծապէս · ևայլն ։

Ասի և՝ ելանէ 'ի բերանոյ մարդոյն · որով որոշի նախ յայն ամ ձայնից ՝ որք հնչին յանկենդան իրաց, և յանբանից · որպիսի են ձայնք ջուրց ՝ հողմոց ՝ պղնձեաց ՝ քնարից ՝ տաւղաց ՝ թռչնոց ՝ գազանաց ՝ եւն ։ Երկրորդ՝ որոշի նաև յայնպիսի ձայնից ՝ որք թէպէտ ելանեն 'ի բերանոյ մարդոյ ՝ սակայն ոչ իբր մարդոյ ՝ այլ իբր անասնոյ · որպէս են ձայնք սուլելոյ ՝ հազալոյ ՝ փռնգալոյ · եւն ։

Ասի դարձեալ՝ բաղկացութիւն ձայնաւոր և բաղաձայն տառից · քանզի առ 'ի առնել ձայնի իրիք տիրապէս վանկ՝ պիտոյ է այնմ բաղադրիլ 'ի բաղաձայն և 'ի ձայնաւոր տառից · և միով հնչմամբ ելանել ը բերանն · որ օրինակ ՝ Ըն · եր · գեղ · քէն · եւն ։ Միայն իրի ձայնաւոր տառքս՝ է և օ ՝ , ոչ ասին յատկապէս վանկ ՝ այլ անյատկապէս և պիտակաբար ՝ ըստ որում միով հնչմամբ ելանեն 'ի բերանոյ մարդոյն ։

Ըստ այսմ են և այլ ձայնաւոր տառք՝ եթէ առանց բաղադրելոյ ընդ բաղաձայն տառից հնչեսցին · որպէս ՝ ա · է · ը · ի · ո · զի ըստ այսմ տառ ասին · ոչ հեգելի և յօդելի ձայն · և են նիւթ և տարր վանկի ՝ և ոչ տիրապէս վանկ ։ Իսկ եթէ փաղառութիւն բաղաձայն տառից հնչեսցին ՝ ասին յատկապէս վանկ · զոր օրինակ , այբ · էչ · եւն · զի ըստ այսմ հեգմամբ և փաղառութեամբ տառից ձևա-

նան ։ Եւ վասն այսր պատճառի վանկն կոչի նաև հեգ և փաղառութիւն ։

Վանկից բաղում են տեսակք · ոմանք են միատառ, կամ միագիր · և ոմանք յոգնատառ, կամ բազմագիր ։ Միատառք են եօթն ձայնաւորքս, ա · ե · է · ը · ի · ո · օ · որք ըստ վերոյգրելոյդ պիտակապէս միայն ասին վանկ ։ Իսկ յոգնատառք են, որք ՚ի բաղում տառից բաղկանան · ոմանք յերկուց · և կոչին երկատառ · որպէս, Աղ · մի · օդ · եւն ։ Ոմանք յերից · և ասին երրատառ · որպէս, Հայ · հող · բեր · եւն ։ Ոմանք ՚ի չորից · և ասին քառատառ · որպէս, Ջարկ · բեղկ · չուր · եւն ։ Ոմանք ՚ի հնգից · և ասին հնգատառ · որպէս, Սուրբ · Թեամբ · գամբք · եւն ։ Ոմանք ՚ի վեցից · և կոչին վեցատառ · որպէս, Կուրծք · չուրբք · Թեամբք · սեամբք · եւն ։

Դարձեալ՝ ոմանք ՚ի վանկից են միաբարբառ, կամ միաձայն · և ոմանք երկբարբառ, կամ երկձայն ։ Միաբարբառք են նոքա, որք ունելով զմի ձայնաւոր տառ՝ ըղձայն միոյ հնչեն · զոր օրինակ, Հար · Թող · զոլ · Ճիռ · եւն ։ Իսկ երկբարբառք են նոքա, որք ունելով զերկուս ձայնաւորս՝ իբրև զմի ձայն հնչեն · զոր օրինակ, Լեալ · եօթն · լայն · լոյս · ձիւն · տուն ։ Յորմէ երևի՝ թէ վանկք լինին երկբարբառ, յորժամ զկնի եչեն յարի այբ, կամ օ ։ կամ այբ և ո ունին զկնի իւրեանց զ յի ։ կամ ինի և ո ունին զհետ իւրեանց զհիւն անիթաւ · զոր օրինակ · Կեանք · գեօղ · այն · գոյն · իւղ · զուր ։ Եւ ըստ այսմ՝ երկբարբառ վանկքն կազմին ՚ի վեցից աստի · եա · եօ · այ · ոյ · իւ · ու ։ Իսկ տառքս՝ է, և ը, ոչ կազմեն զերկբարբառ վանկս, բայց եթէ յայլազգական բառս · զոր օրինակ · եէմէք · եէր · ե՛րդմանկ · ե՛րքլմաք · եւն ։

Դարձեալ՝ ոմանք ՚ի վանկից են աննշանք, և ոմանք նշանականք ։ Աննշանք են նոքին, որք ՚ի հայ բարբառ ինչ ո՛չ նշանակեն · զոր օրինակ, Մա · բե · գէ · եւն ։ Իսկ նշանականք են՝ որք առանձինն նշանակեն ինչ · զոր օրինակ, Լար · Թել · պէն · եւն · բայց սոքին ոչ ըստ որում նշանա-

կանք, այլ՝ ըստ որում են նիւթ նշանակութեան, և ըստ որում միով հնչմամբ ելանեն ընդ բերանն, ասին վանկ. զի ըստ որում նշանականք՝ յաւէտ բառ ասին, քան վանկ։

## ԳԼՈՒԽ. Գ.

### Յաղագս Բառի։

Բառն է ձայն նշանական. այսինքն այնպիսի ձայն, որ կարգեալ է՝ առ ՚ի նշանակել ինչ. որով և որոշի ՚ի վանկէն. զի նա է ձայն միահնչիւն՝ ըստ ինքեան աննշան՝ կարգեալ առ նշանական ինչ, այսինքն առ բառն։ Իսկ բառն է նշանական ձայն. զի միշտ նշանակէ ինչ. այսինքն, կամ զնոյն իրն, կամ զգործողութիւն իրաց, և կամ զպարագայս նոցին։

Զայնն՝ որ նշանակէ զիրն, և յորջորջէ զնոյն այս ինչ, ասի անուն որպէս՝ Քար. Հող. անասուն. տեսիլ. փառք. ևն։

Զայնն՝ որ նշանակէ զգործողութիւն, կամ զկիրս, և կամ զլինելութիւն իրաց ընդ ժամանակաւ, կոչի բայ. զո՛ր օրինակ, Բանամ. խօսեցայ. եղէ. ևն։

Զայնն՝ որ նշանակէ զիրն ՚ի գործողութեան, կամ ՚ի կրելութեան, կոչի ընդունելութիւն. զո՛ր օրինակ, Տեսօղ. տեսեալ. տեսանելի. և այլն։

Զայնն՝ որ զպարագայս իրաց և գործողութեանց նշանակէ, է հնգապատիկ. զի կամ զդէմս իրաց ցուցանէ. և այս կոչի դերանուն. զո՛ր օրինակ, Ես. դու. սա. դա. ևն։ Կամ սոսկ զպարագայս ինչ իրաց յայտնէ. և այս կոչի նախադրութիւն. զո՛ր օրինակ, ՚Ի. զ. ընդ. վասն. ևն։ Կամ զկիրս հոգւոյն յայտ առնէ. և սա կոչի միջարկութի. զո՛ր օրինակ, Ո՜վ. աւա՜ղ. ևն։ Կամ զպարագայս գործողութեանց և կրից ՚ի մէջ բերէ. և սա կոչի մակբայ. զո՛ր օրինակ, Այսօր. յետոյ. ուր. ևն։ Եւ կամ զայս ամ̃ նշանական բառս ընդ միմեանս կապէ. և սա անուանի շաղկապ. զո՛ր օրինակ. Սակայն. թէ. և. ևն։

Ցայսյանէ յայտնի երևի, թէ ութն են ազգք բառից. այ, Անուն. դերանուն. բայ. ընդունելութիւն. նախադրութիւն, միջարկութիւն. մակբայ, և շաղկապ ։

Արդ՝ սոքա որպէս վասն գոլոյ ձայնք նշանականք՝ բառք ասին, նոյնպէս և վասն բաղկացուցանելոյ զբան՝ այսու և այնու եզանակաւ նշանակելով՝ մասունք բանի կոչին, ոմանք իբր անուն. ոմանք իբր բայ. ևն ։

## ԳԼՈՒԽ. Դ ։

### Յաղագս Բանի ։

Բանն է կարգաւոր շարամանութի՛ բառից՝ յայտնող տրամախոհութեան մտաց ։ Յասելն՝ կարգաւոր շարամանութեամբ բառից ցուցանէ, թէ ՚ի կազմութեան բանի՝ շարք բառիցն պարտին լինել ըստ կարգի զետեղեալք. զոր օրինակ, * Յանկանել մեղայն՝ յառնէ արդարութիւն ||. Իգնատ. Է. 34 ։ Ուր ահա ըստ կարգի դասաւորեալ են բառք ։ Իսկ եթէ խանգարեսցես զկարգն, ոչ ևս մնայ բան. զոր օրինակ, Յառնէ յանկանել արդարութին մեղայն ։ Զի բառք սորա թէպէտ նոյն են՝ որ ինչ ՚ի նախընթացդ, յորում կազմեալ էին զբան. բայց յանկարգս զետեղեալ՝ ոչ առնեն զկազմութիւն բանի ։

Իսկ յասելն՝ յայտնող տրամախոհութեան մտաց, ցուցանէ, թէ յայնժամ շարուածք ինչ բառից բան ասի, յորժամ զդատմունս, կամ զխօսս մտաց մերոց յայտնէ. թէ իցէ ՚ի սակաւ բառից կազմեալ, և թէ ՚ի բազմաց. զոր օրինակ, * Լաւ է կոյր աչօք՝ քան կոյր մտօք ||. Խրատ. ։ Ահա այս բան յայտ առնէ զայն դատումն, որով խօսիմք ՚ի միտս մեր, և հաստատեմք, թէ լաւ է մարդոյ կոյր լինել աչօք՝ քան մտօք ։

Ասացի՝ զդատմունս մտաց. զի եթէ միայն զպարզ հայեցողութիւն, կամ զըմբռնումն մտաց յայտնեսցէ, ոչ է բան ըստ քերթողաց. որպիսի են սոքին. Զօրաբանել ատ-

ղաթիելեան · բանական կենդանի · լուսատու և զուարթարար · ևն ։ Զի սոքա միայն զըմբռնմունս մտաց յայտնեալ՝ յաւէտ շարայարեալ բառք ասին՝ քան թէ բանք ։ Եւ այս ոչ վասն այսորիկ՝ զի բայ չէ եդեալ ՚ի նոսա ներգործութ · այլ՝ վասն այնպիսի պակասութե․ ըստ որոյ և ոչ զօրութ ըմբռնի բայն ։ Իսկ եթէ բայն զօրութ իմասցի․ է անկատար բան · զոր օրինակ, * ՚Ի քէն տանջանք․ և ՚ի մէնջ յանձնառութիք · սուր քոյ․ և պարանոց մեր ||· Եղիշ · Է ։ Ուր զօրութ ըմբռնին այսպիսի ինչ բայք․ տուեալ լինին․ ընծային, և պատրաստ է · որպէս թէ ասացեալ էր · ՚Ի քէն տուեալ լինին տանջանք․ և ՚ի մէնջ ընծային քեզ յանձնառութիք տանջանացդ · և որպէս պատրաստ է սուր քոյ․ սոյնպէս և պատրաստ է պարանոց մեր ։

Ոմանք ՚ի բանից են կատարեալ․ և ոմանք անկատար ։ Կատարեալ բանն է․ որ անթերի յայտնէ զտրամախոհութ մտաց · որով լսողն ոչ ևս սպասէ այլոց բառից՝ առ ՚ի առնուլ ՚ի միտ · զոր օրինակ․ * Մարդիկ յօրինակն առաւել հային՝ քան ՚ի ճշմարտութիւնն || · Նեղ․ ։

Իսկ անկատար բանն է․ որ ՚ի բառից կարգաւ շարադրեալ՝ թէպէտ յայտնէ զտրամախոհութիւն մտաց․ բայց անկատար և թերի · և կամ տայ զսկզբնաւորութի իմանալոյ զտրամախոհութիւն մտաց, բայց ոչ աւարտէ · այլ՝ որպէս թէ ՚ի կախ թողու · զոր օրինակ․ Եթէ յանկարծ հասանել փառացն · Թէպէտ և յամ աշխարհ գոլին և երանեն զնեզ · Ոչ թէ զպէտս ընչիցն խօսէ · ՚Ի լարել աղեղանն հզօրին · Կամելով ուժգինս ընթանալ · ՚Ի փոքունցն փախուցեալ · Յորժամ յաղթեմք · Որ սակաւուք ոչ զգաստանայցեն · ևն ։ Զի ահա սոքա զթերի ինչ դատմունս մտաց յայտնեալ․ թէպէտ և սկիզբն առնեն իմացուցանելոյ․ այլ ոչ կատարեն · բայց եթէ յաւելցի ՚ի նոյ այլ բան, կամ բայ · զոր օրինակ ·

* Եթէ յանկարծ հասանել փառացն, փախիցուք ՚ի փառաց անտի || · Ոսկեբերան · Ա · 2 · Յորդոր ։

* Թէպէտ և յամ աշխարհ գոլեն և երանեն զնեզ ( մար-

դիկ ) , զինչ օգուտ են մեզ ||․ Վարդ հարց․ Է ։
* Ոչ թէ զմեծամ ընչիցն խօսէ , այլ զգժնդակ մտօքն ||․ Գէորգ Վարդապետ․ ՚ի Մեկն․ Եսայեայ․ 2 ։
* ՚Ի լուրն աղեղան հզօրին տկարացան || ․ Փոքր․ Լուսն ։
* Կամեցեալ ուժգինս ընթանալ ընկլայ սաստկապէս ||․ Նար․ ձէ ։
* Ի փոքունցն փախուցել` մեծամեծայն մատնեցայ ||․ Ի Նոյն․
* Յորժամ յաղթեմք , ցնծամք ||․ Ոսկեբ․ Հատ․ ․ Ճառ․ 3 ։
* Որ սակաւուք ոչ զգաստանայցեն , և ոչ բազմօքն խրատեսցին ||․ Ոսկեբ․ Եփես․ ։

Այլ ևս պարտ է գիտել , զի ըստ չորից եղանակաց բայից` են և չորք եղանակք բանից․ որ են , Սահմանական , Հրամայական , ստորադասական , և աներևոյթ , կամ անորոշ․ յորս բովանդակին և այլ բազում եղանակք բանից․ զորոց ոչ է հարկ խօսել աստանօր․ զի ՚ի խօսելն զեղանակաց բայից` բաւականապէս յայտնին և նոքին ։ Եւ ևս արտաքոյ սոցա գտանին բազում եղանակք բանից․ որոց ոմանք են ողբականք․ ոմանք խնդականք․ ոմանք զարմացականք․ ոմանք զարհուրականք․ ևն ։ Այլ զայս յանձն Ճարտասանից է խօսել ։

Իսկ վասն մասանց բանի գիտելի է , զի մասունք բանի են ութն ազգք բառից , զորս յիշեցաք ՚ի վերոյ․ որ են , Անուն․ դերանուն․ բայ․ ընդունելութիւն․ նախադրութիւն․ մակբայ․ շաղկապ , և միջարկութիւն ։ Եւ սոքա յայս սակս ասին մասունք բանի , զի միայն ՚ի սոցանէ բաղկանայ բանն իբր ՚ի մասանց ։

Սոցա չորքն` որ Անունն , դերանունն , բայն և ընդունելութիւնն` հոլովականք են․ զի կամ ՚ի սկիզբն , և կամ ՚ի վերջն պէսպիսանան․ և այս պէսպիսութիւն իբր հոլովումն է նոցա ։ Իսկ միւս չորքն են անհոլովք ։

՚Ի վախճան ծանօթութեանց գլխաւոր մասանց քերականութեան` համառօտեսցուք զսահմանս նոցա յայս ոտանաւոր , առ դիւրին սերտողութիւն համբակաց ։

Գիրն է գիծ ինչ նշան տառի․
տառն է հնչումն ինչ հեգելի ։

Վանկն միով՝ հնչմամբ յօդի,
բաղկայութք՝ պէսպէս տառի։
Բառն է ձայն ինչ՝ նշանակտն,
՚ի յութ՚ն ազգըս՝ բաժանական։
Բանն է կարգաւ՝ բառի հիւսուած.
յայտնիչ ներքին դատման մտաց։

Արդ՝ յետ խօսելոյ մեր զչորից մասանց քերականութեան, հարկ է խօսիլ զութն մասանց բանի՝ զիւրաքանչիւրոց առանձինն։

## ԳԼՈՒԽ. Ե.

### Յաղագս Անուան։

Թէ զի՞նչ է և պատահմունք իցէ անուանն։

Անունն է մասն բանի, որով իրն յորջորջի. այսինքն է՝ այնպիսի բառ, որով իրն անուանի՝ և ասի այս ինչ կամ այսպիսի ինչ. զոր օրինակ, Մարդ. քար. խունկ. լոյս. պայծառ. տկար. եւն. զի սոքօք պէսպէս իրք պէսպէս օրինակաւ այս ինչ կամ այն ինչ անուանին՝ մինն մարդ, մինն քար, մինն խունկ. եւն։ Հնար է և սահմանել այսպէս. Անունն է մասն բանի, որ զէութիւն իրին նշանակէ. այլ այս և զնոյն զօրութիւն ունի. քանզի անունն յայնժամ նշանակէ զէութիւն իրին, յորժամ իրն նովաւ անուանի այս ինչ, կամ այսպիսի ինչ. որպէս անունս մարդ՝ յայնժամ նշանակէ զէութիւն մարդոյ, յորժամ նովաւ անուանի իրն այնպիսի. այսինքն՝ մարդ։

Անուանց ոմանք են գոյական, և ոմանք ածական։ Գոյական անունն է, որ ինքնին վարի ՚ի բանս. և նշանակէ զիրս էական, կամ իբր էական. թէ բնականք իցեն, և թէ արհեստականք. զոր օրինակ, Մարդ. մարմին. տունկ. եւն. որք են էականք և բնականք։ Աթոռ. թուղթ. տուն. եւն. որք են էականք և արհեստականք։ Գոյն. լոյս. հա-

ւաստ․ քաղցրութիւն․ եւն․ որք են իբր էականք և բնականք ։ Նկար․ փորձ․ շինութիւն․ եւն․ որք են իբր էականք և արհեստականք ։

Գոյական անուանց ոմանք են յատուկ, որք և ՚ի հնոց [illegible] ասին․ ոմանք հասարակականք, որք և [illegible] կոչին․ և ոմանք ընդհանուրք կամ հասարակք, որք և ասին [illegible] ։

Յատուկ անունն է, որ կարգեալ է՝ առ ՚ի զմի ինչ նշանակել, և զմիոջէ միայն ասիլ․ զոր օրինակ, Սիմոն․ յուդա․ եհեմ․ տարոն․ տիգրիս․ գեհոնն․ քորեբ․ սինայ․ եւն․ Զի սոքա հնարեալ են վասն նշանակելոյ զմի մարդ, զմի գաւառ, զմի գետ, զմի լեառն, եւն․ ուստի և զմիոջէ միայն ասին․ վասն որոյ և ոչ վարին յոգնականապէս ։

Եւ թէպէտ յատուկ անուանք մարդկան՝ այլոց ևս դնին, բայց այն է ըստ պատահման․ և զնոյանէ ևս իբրև զմիոջէ ասին ։ Իսկ եթէ կամիցիմք որոշել զնոսին յայլոց, յաւելումք ՚ի նոսա երբեմն զբառս ինչ նոյին յատկացեալս․ զոր օրինակ, Սիմոն [illegible]․ սիմոն [illegible]․ սիմոն [illegible]․ սիմոն մոգ ։ Յուդա մակաբէ․ յուդա [illegible]․ յուդա [illegible]․ և այլն ։

Հասարականն է, որ միով եզական ձայնիւ զբազում իրս հաւաքմամբ միացեալս՝ իբրև զմի ինչ նշանակէ․ զոր օրինակ, Շեղջ․ կոյտ․ դէզ․ հօտ․ երամ․ խումբ․ ժողովուրդ․ տոհմ․ հոյլ․ պար․ և այլն ։ Զի սոքա ոչ զմի ինչ յինքեանս նշանակեն, և ոչ ևս զբազումս իբր ՚ի միմեանց զատեալս, այլ իբրև հաւաքեալս ՚ի մի ։ Որպէս հօտն՝ ոչ նշանակէ զմի ոչխար, այլ զբազում ոչխարս, ոչ առանձինն առանձինն, այլ իբր ՚ի մի հաւաքեալ ։

Իսկ ընդհանուրն՝ կամ հասարակն է, որ նշանակէ զընդհանուր ինչ էութիւն տարածեալ առ բազում անհատս․ կամ որ զբազմաց ասի հասարակաբար․ զոր օրինակ, Մարդ․ հաւ․ ծառ․ գետ․ տուն․ գահ․ զոհ․ խորհուրդ․ բանաւորութիւն․ փառք․ և այլն ։ Զի սոքա ոչ զմիոջէ միայն,

այլ և զբազմաց ասին 'ի հասարակի ։ Որպէս ծառն՝ ոչ ասի զմիոջէ ծառոյ միայն , այլ և զամենայն ծառոյ . զի զոր ինչ նշանակէ անունս ծառ՝ գտանի այն յամենայն ծառս ։

Ածական կամ ըստ հնոյ մակադրական անունն է , որ ինքնին ոչ վարի 'ի բանս . այլ պահանջէ յարիլ 'ի գոյականս՝ իբր յայտնիչ որպիսութեան նորա . զո՛ր օրինակ , Բարի . չար . առատ . սակաւ . անստուեր . վեհագոյն . կարևոր . ամենափայլ . կենդանարար . բարեատեայ . և այլն . Որք առանձինն ոչ վարին 'ի բանս . այլ յարադրելով 'ի գոյականս ։ Եւ պատճառն է , զի ունին զնշանակութիւն իբր ճապաղ . քանզի թէպէտ և յայտ առնեն զորպիսութիւն ինչ բայց ոչ որոշեալ առ այս կամ առ այն . որով և միտք մարդոյ 'ի լսելն՝ մնայ տատանեալ , և որոնէ , թէ որո՛յ իցէ արդեօք որպիսութիւնն է այն , զոր նշանակէն ։ Այլ եթէ ընդ գոյականի վարեսցին , որոշի նշանակութիւն նորա առ այս կամ առ այն . որով և միտք լսողին հանգչի . զո՛ր օրինակ , յասելն ,

* Ծառ բարի՝ պտուղ բարի առնէ . և ծառ չար՝ պտուղ չար առնէ || , ( Մատ . 7 . 17 . ) ածական անունս բարի՝ յարելով 'ի գոյական անուանդ ծառ և պտուղ՝ որոշի առ այս և առ այն . այսինքն առ ծառն և առ պտուղն . որով և միտք լսողին ոչ ևս որոնէ . թէ բարին զո՛ր իր նշանակէ աստ , կամ զորո՛յ իցէ որպիսութիւն յայտնէ ։ Ըստ այսմ և անունդ չար յարելով յանուանսդ՝ ծառ և պտուղ , որոշի 'ի նշանակութեան իւրում ։

Այլ գիտելի է նախ , զի թէպէտ ածականն պահանջէ յարիլ 'ի գոյականս , բայց ո՛չ է հարկ միշտ ներգործութեամբ ունիլ զնոսին . այլ բաւական է և զօրութեամբ միայն ունել . զո՛ր օրինակ , յասելն , * 'Ի փոքունս նկարեաց զմեծն , և 'ի մարմնականն զհոգևորն || , ( Իգնատ . Է . 10 . ) ածական անուանքս՝ 'ի փոքուն , զմեծն , 'ի մարմնականն , զհոգևորն՝ զօրութեամբ ունին զգոյական իւրեանց . այսինքն է՝ իր , գործ , գործողութիւն , խորհուրդ . որպէս թէ ասէր .

՚ի փոքու իրի նկարեալ գործ մեծ, և ՚ի մարմնական գործողութեան զխորհուրդ հոգևոր ։

Այս առանձին վարուք ածականաց առաւել յայտ ՚ի գործ ածի, որք յաւէտ մարդոյ պատշաճին․ որպիսի են ածականքս, Արդար․ ամբարիշտ․ խորագէտ․ չարագործ․ երկրաքարշ․ անմիտ․ և այլն․ զոր օրինակ, * Արդարոց հասցէն բարութիւնք․ Ճանապարհք ամբարշտաց մոլորեցուսցեն զնոսա ||․ Առակ․ 12․ 26 ։

Գիտելի է երկրորդ, զի երբեմն ոմանք յածական անուանց՝ իւիք մասնկամբ ածանցեալ՝ լինին գոյականք․ որպէս ածական անուանքս՝ չար, բարի, նուազ, պակաս, արձակ․ և այլն, ՚ի ձեռն մասնկանցս՝ ութիւն, ութի, ուրդ, և այլն, լինին գոյական․ զոր օրինակ, Չարութիւն, բարութի․ նուազութին, պակասութի․ արձակուրդ․ և այլն ։

Սոյնպէս և բազում անգամ գոյական անուանք լինին ածականք պէսպէս բարդութեամբ, կամ ածանցմամբ, և կամ բաղադրութբ․ զոր օրինակ, Լոյս, լուսաւորիչ, լուսաւոր, անլոյս․ բան, բանաւոր, բանական, անբան․ գեղ, գեղապանծ, գեղեցիկ, տգեղ․ և այլն ։

Գիտելի է երկրորդ, զի կան անուանք ինչ, որք թէպէտ հասարակօրէն գոյականապէս վարին, բայց երբեմն ՚ի գործ ածին նա և իբր ածական․ որպիսի են անուանքս, Բարեխօս․ բժիշկ․ գող․ դաստիարակ․ զինուոր․ զօրավար․ ընկեր․ թագաւոր․ ժառանգ․ միջնորդ․ ջատագով․ սպասաւոր․ և այլն ։ Եւ սոքա կոչին Միջակք ։

Գիտելի է չորրորդ, զի նա և ընդունելութիւնք վարին իբրև անուն ածական․ զոր օրինակ, Որոշօղ, որոշեալ, որոշելի․ իմացօղ, իմացեալ, իմանալի․ և այլն ։ Զորոց ունիմք խօսիլ յիւրեանց տեղիս ։

Ածական անուանց ոմանք դրականք ասին․ ոմանք բաղդատականք․ և ոմանք գերադրականք ։

Դրականք են, որք ցուցանեն զորպիսութիւն կամ զորքանութիւն իրին պարզապէս՝ առանց ճոխացուցանելոյ, կամ նուազեցուցանելոյ․ զոր օրինակ, Բարի․ սպիտակ․

գեղեցիկ · վատթար · պակաս · երկայն · կարճ · և այլն ։

Բաղդատականք են, որք բաղդատելով զմի իր ընդ այլում իրի՝ ցուցանեն զորպիսութիւն կամ զորքանութիւն նորին առաւելեալ կամ նուազեալ քան զմիւսոյն · և սոքա կազմին մասնկամբս՝ գոյն · զոր օրինակ, Բարեգոյն · սպիտակագոյն · գեղեցկագոյն · վատթարագոյն · պակասագոյն ·
երկայնագոյն · կարճագոյն · և այլն ։

Սոքա այլազգ ևս ձևանան · երբեմն յարելով՝ ի դրականս զմասնիկդ՝ ևս · որգոն, Եւս չար · ևս հնարաւոր · ևն · կամ Լաւ ևս · խուժադուժ ևս · ևն · զոր օրինակ, * 'Ի հոգս աշխարհիս զբաղեալ կամք՝ ևս չար քան զծականն || · փ̃ չարագոյն քան զծականսն · Մարգ · յոհ · 5 ։

Երբեմն յաւելլով՝ ի դրականս զբառսդ՝ քան · առաւել · առաւել ևս · ևեթ · ևն · զոր օրինակ, * Պախճան նորա դառն է քան զթոյն օձի || · փ̃ դառնագոյն · Մծբ · ծն ։

Երբեմն միայն խնդրառութ դրականին · որ, * Ամենայն նախարարացն աւագ դու էիր || · փ̃ աւագագոյն · Եղիշ · Գ ·

Գերադրականք են, որք ցուցանեն զորպիսութիւն իւրին յոյժ առաւելեալ, կամ յոյժ նուազեալ քան զայլոյն · և սոքա կազմին մասնկամբս՝ ամեն · զոր օրինակ, Ամենաբարի · ամենագեղեցիկ · ամենավատթար · ևն ։

Սոքա այլօրինակ ևս ձևանան · երբեմն յաւելլով՝ ի բաղդատականսն զմասնիկդ՝ ևս · որգոն, Եւս վերագոյն · ևս մեծագոյն · ևն · կամ Լուսաւորագոյն ևս · զօրագոյն ևս · ևն · զոր օրինակ, * Եւս վերագոյն փառաց աթոռ զսա գործեալ || · Դաւթի Անյաղթի · 'ի Ձոն Խաչի ։

Երբեմն մասնկամբս՝ եղեր · որ, * Երկիր թշուառական է զոր դուռն առագաստին ոչ ընդունի || · Աղբերիս ։

Երբեմն բառիւքս՝ Յոյժ · կարի · առաւել · անհնարին · ապշելի · ևն · զոր օրինակ, * Յոյժ իմաստուն էր այրն հոգևորական գիտութեամբ || · Ոսկեբերան · 'ի գործ · ըստ ։

Երբեմն բարդութեամբ · և այս վայելչագոյն ևս · որգոն · Գերամաքուր · գերակատար · մեծավայելուչ · նախամեծար · վեհափառ · ևն · զոր օրինակ, * Գերամաքուրն յո̃ զեր

կայց , դպրապետաց այսպէս ասացց || . Կորողեա վէրդ ։ Երբեմն կրկնելով զնոյն անուն . զոր օրինակ , * Դաշինս հաւատարիմ կռուէր ընդ նմա ծանր ծանր երդմամբք || . իմ ամենածանր երդմամբք . Է || . Մակ . Դ . 34 ։

Այսպիսի կրկնումն նաև ՚ի գոյական անուանս սաստկացուցանէ զնշանակութիւն նոցա ՚ի ձեռն յատկացուցչի . որպ յորժամ ասի , ունայնութիւն ունայնութեանց . երգ երգոց . եւն . որ նշանակէ ասել , ամենևին ունայնութիւն . գերագոյն երգ . եւն ։ Եւ երբեմն յոգնական ևս առնէ զանուանս . որպէս տեսցի . ՚ի Գլ . Է ։

Գիտելի է , զի ոմանք աստ զայլ բազմադիմի բաժանմունս անուանց ՚ի մէջ բերեն . զորս մեք աւելորդ վարկաք գրել . զի տրամաբանք միայն խօսին զայնպիսեաց վսն նրբութեան նոցին ։

Եւ սակայն արժան համարիմ խօսիլ զայնոցիկ անուանց , որք կոչին դերանունք . և բաժանին ՚ի հինգ տեսակս . որք են , Վերբերականք . Հարցականք . մասնականք . Հանրականք , և Թուականք ։

Վերբերականք են որք ՚ի մէջ բերեն զբաղդատութիւն ինչ որպիսութեան կամ որքանութեան . որոց ոմանք կոչին նմանականք . և են սոքա . Սոյնպիսի , դոյնպիսի , նոյնպիսի ։ Ոմանք ցուցականք . և են սոքա . Այսպիսի , այդպիսի , այնպիսի ։ Եւ ոմանք դերհատուցականք . և են սոքա . Այսքան , այդքան , այնքան . սոյնքան , դոյնքան , նոյնքան ։ Ընդ որս դասին և բառքս՝ Այսչափ , այդչափ , այնչափ . սոյնչափ , դոյնչափ , նոյնչափ . որք առանց հոլովելոյ վարին ։

Հարցականք են , որք հարցականապէս վարին . որոց ոմանք են իբր գոյական . և են սոքա . Ո՞ . ո՞վ . զի՞նչ . ո՞վ ոք . ո՞յք ։ Եւ ոմանք իբր ածական . և են սոքա . Ո՞ր . զի՞նչպիսի . ո՞րպիսի . ո՞րչափ . ո՞րքան . քանի՞ ։ ( ՚Ի սոսա բառքս՝ որպիսի . որքան . քանի . որչափ . վարին երբեմն նաև իբր վերբերականք առանց պարոյկի ) ։

Մասնականք , որք և մակբաշխ ասին , են նոքա , որք

մասնաւորէն զնշանակութիւն անուան իրիք · և սոքա են չորեքկին ։ Առաջինն որոշէ զմին 'ի յերկուց · և է բառս այս Մեւս · զոր օրինակ ՝ * Յայդ երկու ճանապարհք կոչեցան · մին լայն և ընդարձակ · իսկ մեւսն նեղ և անձուկ ||· Ոսկ · ա · 43 · յորդ ։ Սա չունի յոգնական ։ Եւ թէպէտ 'ի նախերգանսն ակերբերանին · երես · 8 · և այլուր ևս կայ եդեալ ՝ մեւոյն ՝ կամ մեւք · բայց չէ 'ի հասարակ գործածութեան ։

Երկրորդն որոշէ զմին 'ի բազմաց · որպէս սոքին ՝ Ոմն · ոք · իմն · ինչ · զոր օրինակ , * Զոմն ( 'ի մարդկանէ ) սատ պատժէ ՝ և անդ պսակէ ||· Նար · 'ի ՁԵն · դառ ։

Երրորդն յուցանէ զերկուսն մի մի յիւրեանս · և է բառս այս Երկոքեան · զոր օրինակ ՝ * Զկերպարանս երկոքանչիւրոց առ միմեանս եդեալ զմի և զնոյն վհատութեան ննուննդս արտադրեն ||· Նար · Ծ ։

Չորրորդն յուցանէ զբազումս 'ի միասին անձնաւորաբար ՝ և ոչ հաւաքապէս · և է բառս Իւրաքանչիւր ՝ կամ Իւրաքանչիւր ոք · զոր օրինակ ՝ Առանձինն ունի իւրաքանչիւր անուամբ զիւրաքանչիւր գործ || · Նար · Իրգ ։

Ըստ այսմ նշանակութեան վարի և բառս Ամենայն · թէպէտ և սակաւ ուրեք 'ի գործածի · զոր օրինակ , * Ամենիւր այր զիւրոյ ամուսնոյն դաշն ամբողջ և հաստատուն պահեսցէ || · 'Ի Գիրս Պիտոյից ։

Առ սոսա վերաբերին ըստ իմիք և բառքս՝ Դի դի · Դին դի · Այր այր · Ընկեր ընկեր · եւն · և սոքա կոչին կրկնաւոր · զորոյ ունիմք խօսիլ 'ի վախճան ԺԱ գլխոյ այսր մասին · և 'ի վերջ ԾԷ գլխոյ երրորդ մասին ։

Համառականք են բառքս՝ Ամենայն ՝ ամենեքեան , կամ ամենեքին · բոլոր ՝ բոլորեքեան , կամ բոլորեքին ։

Ընդ որս կարեն դասիլ և անուանքս՝ Բազում , բնաւ , համայն ՝ համակ ՝ համօրէն · եւն ։

Թուականք են ՝ որք նշանակեն զթիւ · որոց են հինգ տեսակք ։ Առաջինն տեսակքն ասին ընդարձակք · որք արձակապէս նշանակեն զթուեալսն · որպէս՝ Մի · երկու ·

երեք . չորս . հինգ . վեց . տասն . հնգետասան . քսան . քսանամի . երեսուն . ևն ։ Երկրորդ տեսակքն ասին դասականք . որք կարգաւ յուցանեն զթուեալսն . որպէս՝ Առաջին , կամ՝ առաջներորդ . երկրորդ . երրորդ . չորրորդ . հինգերորդ . տասներորդ . հնգետասաներորդ . ևն ։ Երրորդ տեսակքն ասին զատականք . որք նշանակեն զթուեալսն իբր զատուցեալս և առանձնացեալս . զո՛ր օրինակ , Միակ . երկեակ . երեակ . հնգեակ . եօթնեակ , կամ՝ եօթներեակ . յիսնեակ , կամ՝ յիսներեակ . ևն ։ Չորրորդ տեսակքն ասին անձներականք . որք զբազմութն ընդ միով թուով իւրաքանչիւրաբար նշանակեն . զո՛ր օրինակ , երկոքեան , կամ՝ երկոքին . երեքեան , կամ՝ երեքին . չորեքեան , կամ՝ չորեքին . հնգեքեան , կամ՝ հնգեքին . վեցեքեան , կամ՝ վեցեքին . տասնեքեան , կամ՝ տասնեքին . ևն ։ Հինգերորդ տեսակքն ասին կրկնականք . որք զկրկնումն թուոյ յուցանեն՝ վերջաւորութեամբս պատիկ . զո՛ր օրինակ , Քառապատիկ , ( այսինքն քառիցս կրկնեալ ) . հնգապատիկ , ( այսինքն հնգիցս կրկնեալ ) . եօթնապատիկ , ( այսինքն եօթնիցս կրկնեալ ) . ևն ։

Յամանս՝ի սոցանէ յարի և մասնիկս կին՝ այնու նշանակութ՝ , զոր ունի մասնիկս պատիկ . զո՛ր օրինակ , Երեքկին . չորեքկին . հնգեկին . վեցկին . ևն ։

## ԳԼՈՒԽ . Զ ։

### Յաղագս պարագայից անուանց ։ Եւ նախ՝ յաղագս Սեռից ։

Պարագայք անուանց ասին այնք , որք շուրջ զանուամբ մտածին՝ իբր հետևումն որպիսութեան նորա . ուստի նաև հետևանք կոչին . և են վեց . այսինքն , Սեռ , ձև , տեսակ , թիւ , հոլով և հոլովումն ։ Սեռք կամ սերք անուանց են որոշմունք գոյական անուանց՝ ըստ նշանակելոյ նորա զսեռս իրաց , այսինքն զարու և զէգ ,

կամ զհասարակ ինչ, և կամ զչէզոք ։ Ուստի և անուանք ըստ սեռին են չորք՝ արական, իգական, չէզոքական, և հասարակ ։

Արականն է, որ նշանակէ զարու․ զոր օրինակ՝ Աբրահամ․ Իսահակ․ հայր․ եղբայր․ այր․ փեսայ․ աներ․ հաւ․ պապ․ քեռի․ եզն․ ցուլ․ արջառ․ քաղ․ եւն ։

Իգականն է, որ նշանակէ զէգ․ զոր օրինակ՝ Սառա․ Աննա․ կին․ տիկին․ դշխոյ․ հարսն․ մայր․ քոյր․ զոքանչ․ հանի․ նու․ հօրաքոյր․ մայրադիր․ մօրու․ կով․ երինջ․ մաքի․ ալոջ․ մարի․ եւն ։

Հասարակն է, որ միով ձայնիւ նշանակէ զարու և զէգ․ զոր օրինակ՝ Զաւակ․ որդի․ թոռն․ կորիւն․ կողուն․ մորուկ․ ձագ․ եւն ։ Եւ ևս՝ Մարդ․ առիւծ․ ձի․ նապաստակ․ պլտուտ․ անգղ․ եւն ։

Չէզոքականն է, որոյ նշանակեալն ոչ արու է, և ոչ էգ․ զոր օրինակ՝ Ջուր․ օդ․ հող․ մոմ․ ճրագ․ թուղթ․ լոյս․ մեծութիւն․ ծնունդ․ եւն ։ Իսկ եթէ անկենդան իրք կոչեսցին երբեմն արու կամ էգ․ զոր օրինակ՝ Արու կամ էգ ծղխնի․ արու, կամ էգ արմաւենի․ արու, կամ էգ պղինձ․ եւն, այն նմանութեամբ ասի, և ոչ տիրապէս ։

Ասացի ՚ի վերոյ՝ թէ այս որոշմունք են [illegible] անուանց․ զի ՚ի լեզուի մերում ոչ գտանի որոշումն սեռի ածական անուանց ըստ արականի և ըստ իգականի․ զի որչափ և ածականս ունիմք՝ կամ հասարակ են արուի և իգի, և կամ չէզոք․ և բազումք ևս հասարակ են մարդկան և անասնոց՝ զգայնոց և անզգայից՝ արհեստականաց և բնականաց ։

Ասացի և ևս՝ ըստ նշանակելոյ նոցա զսեռս իրաց․ զի սեռք անուանց ոչ նկատին ՚ի մեզ ըստ վերջաւորութեան՝ կամ ըստ յօդից ինչ․ որպէս ՚ի լատինս, և ՚ի յոյնս․ այլ ըստ նշանակութեան նոցին․ իբր զի եթէ նշանակեալն անուանն իցէ արու, անունն ասի արական․ եթէ էգ, իգական․ եթէ երկոսին ևս պատկանեալ՝ հասարակ․ և եթէ և ոչ միում պատշաճեալ՝ չէզոք ։

Եւ թէպէտ ոմանք յածականաց ունելով զվերջաւորութիւ

ածէ՝ որոշին 'ի սեռ իգական ․ զոր օրինակ , Արքունի ․ երանուհի ․ եւն ․ բայց այս վերաբերի յածանցումն անուանց՝ զորմէ տեսցես 'ի Գլ․ Է ։

Եւ դարձեալ՝ 'ի յատուկ անուանս թէպէտ կան՝ որք ըստ այս ինչ վերջաւորութեան արականապէս նշանակեն ․ զոր օրինակ ․ Յովհաննէս ․ Հերովդէս ․ Կիւրոս ․ Յուստինոս ․ Յուլիանոս ․ եւն ․ և ըստ այլ ինչ վերջաւորութեան իգականապէս ․ զոր օրինակ ․ Յովհաննա ․ Հերովդիա ․ Կիւրիա ․ Յուստինանէ ․ Յուլիանէ ․ եւն ․ Բայց այս ոչ է 'ի յատկութենէ լեզուիս մերոյ ․ այլ՝ գրեթէ 'ի թարգմանութէ անուանց այլոց ազգաց ․ որպէս և յայտ է ։

Իսկ եթէ պիտոյ լիցի 'ի լեզուի մերում զանուն ինչ հասարակ իգականապէս 'ի գործ ածել , յաւելումք յայն զանուն իգական ․ զոր օրինակ , Կին մի վհուկ ․ Ա ․ Թագ ․ ԻԸ ․ 7 ։ Կին մարգարէ ․ Դատ ․ Դ ․ 4 ։ Կին ժողովուրդ ․ Աղոտէ ․ ԺԹ ․ 10 ։ Կին մարդ ․ Ա ․ Տիմ ․ Է ․ 11 ։ Աղջիկն՝ որ դռնապանն էր ․ Յովհ ․ ԺԸ ․ 17 ․ եւն ։ Եւ ևս՝ Մատակ ձի ․ մատակ առիւծ ․ էգ աղուէս ․ էգ կատու ․ եւն ։

Իսկ առ 'ի արականապէս նշանակել հասարակ անուան ․ ոչ է հարկ յաւել 'ի նոյն զանուն արական ․ զի հասարակ անունն յորժամ ինքնին բացարձակ վարի , իբր 'ի բազում արականապէս նշանակէ ․ որպ անուանքս՝ Մարդ , առիւծ , աղաւնի , եւն , հասարակօրէն փոխանակ արուի նշանակեն ։ Այլ եթէ հարկն պահանջեսցէ որոշել , յայնժամ յաւելումք 'ի նոսա զանուն ինչ նշանակիչ արուի ․ որգոն , Այր մարդ ․ որձ առիւծ ․ որձ աղաւնի ․ և այլն ։

# ԳԼՈՒԽ. Է.

## Յաղագս Ձեւոց անուանց ։

Ձեւք անուանց նկատին ըստ պարզութեան, ըստ բարդութեան և ըստ բաղադրութեան նոցա ։ Ուստի և անուանք ըստ ձեւոյն երրեակ են. Պարզ, բարդ և բաղադրեալ ։

Պարզ անունն է, որ կայ յինքեան միայնակ և առանձինն. և ոչ է զօդեալ ընդ այլում նշանական բառի և ոչ ունի յաւելուածոյ զանազան ինչ մասնիկ. զո՛ր օրինակ, Սուր. Հոգի. բարի. խառն. կեղծիք. ելք. եւն ։

Բարդն է, որ յերկուց նշանական բառից զօդեալ է 'ի մի անուն 'ի ձեռն յօդից, ա, ե, է, ի, ու, կամ ե. զո՛ր օրինակ, Սովամահ. բարեմիտ. Հոգեկիր. խառնիխուռն. կեղծուպատիր. ելևէջ. եւն ։ յորս յօդքդ ե և է՝ եղեալ են փոխարկմամբ ենի տառին ։

Այլ բազում անգամ առանց այսպիսի յօդից ևս բարդի անունն. զո՛ր օրինակ, Երկձայն. վրէժխնդիր. ողջանդամ. բարձրնոտիր. եւն ։

Բայց այն բառք՝ յորոց բարդի անունն առանց յօդի, պարտին բաղկացութեամբ զօդիլ ընդ միմեանս, և ո՛չ լոկ յարադրութեամբ. ապա թէ ո՛չ՝ այն ո՛չ ասի բարդ անուն՝ այլ Շարք անուանց. զո՛ր օրինակ, Ոգի չար. ծաղիկ վայրի. եդեմիս քաղաք. լեառն արարատ. եւն ։

Այլ գիտելի է, զի անունն բարդի ընդ պէսպէս մասանց բանի. Նախ՝ ընդ ինքեան. զո՛ր օրինակ, Պարագլուխ. սկզբնաչար. բազմապարգև. մեծապայծառ. եւն ։

Երկրորդ՝ ընդ դերանուան. զո՛ր օրինակ, Ինքնագոյ. իւրահնար. նոյնատիպ. քոյինատեղծ. եւն ։

Երրորդ՝ ընդ բայից. զո՛ր օրինակ, Զարախնդայ. Թագընկէց. ծովահեղձոյց. վարձահատոյց. բեռնաբարձ. տի-

զերթակալ · սրատես · դիւահար · ականջալուր · եւն ։ Եր՛րեմն ևս ըստ արմատս բայից · զոր օրինակ ՝ Բազմածին · զինակիր · լուսակիզն · հոգեպատում · և այլք բազումք ։ ՚Ի սոսա ոմանք ունին զզօրութիւն օղէ ՝ և ոմանք ետլի · քանզի չորրորդս նշանակէ զխնդրայօղն ըստ չորիս · Եւթներորդն՝ զթագընկեցօղ · Երրորդն՝ զբեռն բարձօղ · Երկմորդն՝ զբազումս ծնանօղ · չորրորդն՝ զզէնս կրօղ · եւն ։ Այնպէս և ծանօթերորդս նշանակէ՝ ՚ի ծովու հեղձեալ, կամ ՚ի ծովու հեղձուցանօղ · հոգեպատումն՝ հոգւով պատմեալ ՝ կամ զհոգւոյն պատմօղ · դիւահարն՝ ՚ի դիւէ հարեալ · լուսակիզն՝ ՚ի լուսոյ կիզեալ ՝ ևն վառեալ · եւն ։

Չորրորդ՝ ըստ ընդունելութեան · զոր օրինակ ՝ Ներոգամիտ ՝ քերթողահայր · տեսանողագուշակ · առաքելաշնորհ · ընտրելակից · սքանչելագործ · եւն ։

Հինգերորդ՝ ըստ նախադրութեան · զոր օրինակ ՝ Գաղտամիտ · ընդդիմամարտ · հեռաբնակ · միջասահման · մօտաքաղաք · շրջապարիսպ · եւն ։

Վեցերորդ՝ ըստ մակբայի · զոր օրինակ ՝ Յառաջադաս · յարադալար · յաւէտահրաշ · մշտանուէր · նախաժաման · ներքսակողմն · եւն ։

Հնար է անուանց բարդիլ նաև ըստ միջարկութեան և ը շաղկապի · զոր օրինակ ՝ Վաշխաշաւէր · Թէախնդիր · եւն· այլ սոքա չեն ՚ի գործածութեան ։

Գիտելի է ևս ՝ զի ըստ հին քերականութեան՝ բարդումն անուանց լինի քառակի · Նախ՝ յերկուց ամբողջ բառից · զոր օրինակ ՝ Մեծահանդէս · գեղատեսիլ · հրեշտակակերպ · լայնախորհուրդ · չքեղապայծառ · եւն ։ Երկրորդ՝ յերկուց պակասելոց կամ փոփոխելոց · զոր օրինակ ՝ Լուսատու · երկդիմի · երկնաւոր · բազմագունի · եւն ։ Երրորդ՝ ՚ի միոջէ փոփոխելոյ ՚ի հաւիլն ՝ և ՚ի միոջէ ամբողջէ ՚ի յանգիլն · զոր օրինակ ՝ Գեղեցկատիպար · ժողովրդապետ · բարեկիրճակ · տանուտէր · չարեպապալատ · ձերբակալ · եւն ։ Չորրորդ՝ ՚ի միոջէ ամբողջէ ՚ի հաւիլն ՝ և ՚ի միոջէ փոփոխելոյ ՚ի յանգիլն · զոր օրինակ ՝ Յոգ-

նապխսի · մեծազգի · միածոր · անապըւածևծար · ևն ։ Ի բաց · անուանս դասին և այլ քանի մի անուանք · որք կոչին յարաբարդք · զի յերկս նշանական բառից զօդին ՝ի մի անուն · որք և չեն այնչափ ՝ի յաճախ գործածութե · որպիսի են սոքին ·

| | |
|---|---|
| Անաչառատեսխուռ · Նոր · ղէ ։ | Մեռկերպունակ · Մամբրէ ։ |
| Անձնապահպետ · Խոր · Գ · 56 ։ | Միաբանամբոխ · Մծբ · ծԸ ։ |
| Ածահրահոյլ · ՝ի Մաշտոցի ։ | Միագլխապետ · Խոր · Գ · 6 ։ |
| Արծաթափոխատու · Մծբ · ծԸ ։ | Շրթնուշղթայաշար · Նոր · ղԸ ։ |
| Երեկնիրհասէր · Յովհ · Ոսկ · Ճ ։ | Որբերգարկուն · Նոր · ղէ ։ |
| Երեքփառատրեան · Նոր · ծէ ։ | Չարախստավատ · Յովհ · կոԲ ։ |
| Հնգետասանամեայ · Գող · ըաս ։ | Չարախստաւոր · Ազ գործոց ։ |

Իսկ բաղադրեալ անունն է ՝ որ յառաջոյ զօդեալ ունի զանուշան մասնիկ ինչ բաղադրական · որպիսի են մասնիկունքս ՝ Ազն · Ապ · Առ · Արտ · Ապր · Հակ · Համ · Հոմ · Ենթ · Ընդ · Ներ · Ա · Տժ · Դժ · ևն · որպէս ՝ Ազներկիւղ · ապերախտ ՝ ապաբան ՝ ապենիազ ՝ ապիկար · առողջ · արտաքոյ ՝ կամ զարտաքոյ · արտաժամ · հակաճառ · համախոհ · համասեռ · ենթաձայն · ընդանուն · ներանձն · ակար · տժգոհ · դժպատեհ · և այլն ։

## ԳԼՈՒԽ · Ը ։

### Յաղագս Տեսակաց անուանց ։

Տեսակք անուանց են որպիսութիւնք անուանց ըստ նախնական և ըստ ածանցական նշանակութեան նոցա ։ Ուստի և անուանք կրկին են ըստ տեսակին · Նախագաղափար ՝ և ածանցական ՝ որ ՝ի հնոց կոչի նաև յարանուն ։

Նախագաղափար կամ նախատիպ անունն է ՝ որ կայ յառաջին նշանակութեան իւրում · և կամ յայնմ որպիսութեան ՝ զոր ինքնին նշանակէ · թէ գոյական իցէ ՝ և թէ ածական · թէ պարզ իցէ ՝ և թէ բարդ ՝ կամ բաղադրեալ ։ Ըստ որոյ և կոչի նախագաղափար ՝ կամ նախատիպ ·

իբր թէ նախկին օրինակ և ձևոյ ՝ յորմէ կարեն ածանցիլ և յօրանուանիլ այլք • որպիսի են սոքա • Լոյս • երկիր • գործ • մահ • բարի • զուարթ • լուսափայլ • բարեգործ • անմահ • եւն :

Ածանցական անունն է նոյն նախատիպ անունն՝ ՚ի ձեռն ածանցականակերտ անկչուն մասնկանց տրամադրեալ ՝ և ածեալ յայլ իմն կերպ նշանակութեան • որպէս ՝ Լուսաւոր ՝ երկրային • բարեգործութիւն • անմահական • եւն : Յորս որպէս տեսանի , նախատիպ անուանք՝ ածանցիչ մասնկամբք կերպաւորեալք՝ ածին յայլ իմն եղանակ նշանակութեան • որպէս ահա անունդ լոյս՝ ածանցիչ մասնկամբս ւոր՝ եղանակաւորեալ՝ ածեալ է յայլ իմն կերպ նշանակութեան • զի ՚ի կերպաւորիլն լուսաւոր՝ ոչ ևս նշանակէ զլոյսն , այլ զունողն լուսոյ : Ըստ այսմ և անունս բարեգործ՝ տրամադրեալ ածանցիչ մասնկամբս ութիւն , ոչ նշանակէ զայն ՝ որ գործէ զբարի • այլ զգործս նորա բարւոք կատարեալս : Ըստ այսմ իմա և զայլոց :

Ածանցականակերտ կամ ածանցիչ մասնիկք բազում են յոյժ • որոց ոմանք են ՚ի յաճախ գործածութեան • զի բազում բառից ածանցութիւնք լինին նոքօք • և են սոքին • Ած , ուած • ակ , եակ , անակ • այ , եայ , այք , եայք • ան , եան , քեան , կան , ական , պան , ստան , արան , եանց , անք , եանք • աս : եղ • եաս : եղէն • ուէս : ի , ուհի , անի , ենի , ունի , ոտի , ոցի , եցի • իկ , պատիկ • ին , գին , ային , քին • իչ : ումն , ութիւն : ածոյ , ուածոյ , ոյթ • ոտ • ւոր , աւոր , որդ , րորդ , երորդ • ոց , անոց : ու , ցու • ուկ • ուհի • ուն , ունդ • ուչ • ուստ • ուտ • ուրդ :

Իսկ ոմանք չեն այնչափ յաճախեալ • իբր զի սակաւ բառից ածանցութիւնք լինին նոքօք • և են սոքին • Երեակ , նակ , պանակ • չեայ , այն • ման , ձան • ատ • գար , արդ : եկ • եմ : են , կէն • ծէտ : ակի , եկի , եղի , նի , ճի , այնի , ցի • իճ • իմ , արիմ , երիմ • կէն , ինչ • ինջ , ինք • իք , ունիք : ող • ոց , ոյկ , ոյն , անոյշ , ոյք , անոց • կոտ • որ • ենոց : ածու • ջուկ • ուկք • ունչ , ունջ , ունք • ույց : օթ • օն :

Կան ևս մասնիկք ինչ՝ որովք հազիւ ածանցին քանի մի բառք · և են այսքին · Դակ, անդակ, աղակ, ենակ, տակ, տատակ, ուսակ, ակն · ամ · եայ, արեայ, ափեայ, իայ, ենայ, էայն · աղան, եսան, անդ, անդն, կանք · աշ · ար, Լար · այք · աք ։ դեհ · եղտ ։ րէն, էնք ։ դէ, անդէ, կէ, եմ, դանէ, տատնէ, օնէ, ղէ, րէ, արէ · իւ · իկք, արէն · իտ · էր · կէք ։ ոփ · այր · ոս · ծատ, ղատ · ոք ։ կոս · չոստ · ուք, օտ · օտ ։

Ոմանք 'ի սոցանէ առ մի տեսակ ածանցութեան միայն վերաբերին · և բազումք ևս առ բազում տեսակս՝ վասն պէսպէս եղանակաւ յարելոյ նոցա յանուանս · որպէս տեսցես յառաջիկայդ ։

Իսկ տեսակքն՝ յորս սոքա բովանդակին, և ընդ որովք գետեղին, են երեսուն · որոց անուանք են այսքին · Հայրանուանական · ազգական · տեղական · հետևողական · յարաղական · գեղծական · տնկական · գոյացական · մանուցական · ծանկողական · գործիքական · պարունական · վարողական · տուչական · ստացական · ունակական · ընդունական · պատադրական · ենթակայական · թուական · առատական · նուազական · պակասական · ձևացական · հաղորդական · պաշտպանական · վերացական · բայածական · յարմարական, և նոյնական ։

Հայրանուանականք են, որք յարեալ յանուն հօր ուրուք՝ առն նշանակեն զորդին յանուանէ հօրն ։ Եւ սոքա են կրկին՝ արական և իգական ։

Արականքն են այսքին · եան, եայ, եանց · զոր օրինակ, Բաղակ սեպփոլեան · այ որդի սեպփոլայ · Թուոց · ԻԲ · 16 ։ Բաղաամ բէովրեան · այ որդի բէովրայ · Բ · Պետ · Բ · 15 ։
Յեսու յովսեդեկեայ · այ որդի յովսեդեկի · Անգ · Բ · 5 ։
Աղեքսանդր փիլիպպեայ · այ որդի փիլիպպոսի · Յովհ · ոսկ ·
Բորովամ նաբատեանց · այ որդի նաբատայ · ՄԹԲ · Բ ։
Ռոբովամ սողոմոնեանց · այ որդի սողոմոնի · Գ · թագ · ԺԱ

Եւ այսպիսի ածանցեալ անուանքս հայրանուն կոչին . և վարին ածականապէս ։

Իգականքն են սոքա . անոյշ , կամ անուշ , դուխտ , ուհի . որպէս , Սմբատանոյշ , կամ սմբատանուշ . այ դուստր սմբատայ . Խոր . Է . 34 ։ Սահականոյշ . այ դուստր սահակայ . Խոր . Գ . 51 ։ Որմզդուխտ . այ դուստր որմզդի . Խոր . Գ . 36 ։ Խոսրովիդուխտ . այ դուստր խոսրովի . Ագաթ . Սմբատուհի . այ դուստր սմբատայ . Խոր . Է . 34 ։ Վարդուհի , կամ վարդանուհի . այ դուստր վարդանայ . 'ի յայսմաւուրս . դեկտ . ԻԵ ։ Սոքա ևս կոչին Հայրանուն . և վարին գոյականապէս ։

'Ի սոյս մասնիկս ուհի՝ յարեալ երբեմն և յանուն եղբօրն՝ տայ նշանակել զքոյր նորին . որպէս , Տիգրանուհի . զամպէտուհի . ևն . այ քոյր տիգրանայ . քոյր զամպէտոսի ։ որպէս յայտ է 'ի Խոր . Ա . 27 . և 28 . և 'ի վերջ դուդէոսհէայ ։

Այլ գիտելի է , զի մասնկունքս ուհի և անոյշ՝ յաւելին երբեմն նաև 'ի հասարակ և 'ի չեզոքական անուանս . որպէս , Վկայուհի , արքայուհի , սրբուհի . քրմանոյշ , տիկնանոյշ , գեղանոյշ . ևն ։ Եւ ըստ այսմ ոչ ասին հայրանունականք . այլ սոսկ իգականք . զի ոչ յանուանէ հօրն անուանին . այլ յայլ անուանց ։ Յորս յանգեալքն 'ի անոյշ՝ վարին գոյականապէս . Թէպէտ ածականապէս ևս կարեն վարիլ ։ Իսկ յանգեալքն 'ի ուհի՝ եթէ վարեսցին իբր յատուկ անուն , կամ իբր որոշեալ անուն , նշանակեն գոյականապէս . ապա թէ վարեսցին իբր հասարակ անուն՝ նշանակեն ածականապէս ։

Ազգականք են , որք յարեալ յանուանս ազգաց կամ գաւառաց՝ տան նշանակել զայնս , որք են յայնց ազգաց . և են սոքա . ացի , եցի , եան , եանց , եայ , ունի , ունիք . որպէս , Ինկլացի , լատինացի . եբրայեցի . Թորգոմեան , մամիկոնեան . զարայեանց , ռուբինեանց . արամազնեայ , հայկազնեայ . արշակունի , պալհաւունի . մանդակունիք , բագրատունիք . ևն . և սոքա նշանակեն ածականապէս՝ բայց

ձայնից, որք յանգին ՚ի ածնէ։ Իսկ որք ՚ի ծանց յանգին,
երբեմն իբր յատկացուցիչ եւս վարին։

Ազգականք կամ տոհմականք կոչին և մասնիկքս, ա, ի, եայ, կամ եայ․ զի տան նշանակել զտոհմակցութիւն ինչ․ որգոն, Մօրա, Հօրա․ քեռի․ Թոռնեայ, կամ Թոռնեայ, սկեսրեայ․ ցմ խորթ մայր, խորթ հայր․ մօր եղբայր․ Թոռան Թոռն․ սկեսրայր․ և սոքա վարին գոյականապէս։

Տեղականք կամ քաղաքականք են, որք յարեալ յանուանս տեղեաց կամ քաղաքաց՝ տան նշանակել զայնոսիկ, որք են ՚ի տեղեաց կամ ՚ի քաղաքաց անտի․ կամ զբնակօղս ՚ի նոսին․ և սոքա են կրկին։ Ոմանք յարին ՚ի յատուկ անուանս․ և են սոքին․ ացի, եցի, ցի, էկ, ա, եայք, այք․ որգոն, Անտիոքացի, պոնտացի․ Հռոմայեցի․ կոստանդինուպօլսեցի․ գալիլեացի, արաբկերցի․ պարսիկ, հնդիկ․ սարակինոս, սպանիոս․ հայաստանեայք․ պաղեստինեայք․ սողոմնայք, գոմորայք․ եւն․ և սք նշանակեն ածականապէս։ Իսկ ոմանք յարին ՚ի հասարակ անուանս․ և են սք․ ական, աւոր, ացի, եցի, իկ, ակ․ որգոն, Շինական, վանական․ վրանաւոր, անապատաւոր․ քաղաքացի, բլրացի․ գեղջի․ գուեհիկ․ գեղջուկ․ այսինքն բնակօղ ՚ի շէնս, ՚ի վանս, ՚ի վրանս, յանապատս, ՚ի քաղաքի, ՚ի բլրի, ՚ի գեղի․ ՚ի գաւառս, ՚ի գիւղս․ սոքա եւս նշանակեն ածականապէս։

Հետեւողականք կամ հետեւականք են, որք յարեալ յանուն հեղինակի վարդապետութեան ինչ, կամ աղանդոյ իրիք, և կամ գործոյ, եւն, տան նշանակել զհետեւօղս այնր հեղինակի․ և են սոքա․ եան, եանք, եայք, այք, ական, ականք, եցի, ացի․ որգոն, Պօղոսեան․ եպիկուրեանք․ սողոմոնեայք․ պիւթագորեայք․ արարատեանք․ պղատոնական․ հերովդիանոսք․ մանիքեցի․ սաբելացի․ և սոքա նշանակեն ածականապէս։ Ընդ որս դասի և անունն՝ քնեայ․ որ նշանակէ զքնեայս։

Յարողականք են, որք ՚ի յարիլն յանուն իրիք՝ տան նշա-

նակել զյարեալն ՚ի նոյն, կամ զհետամուտ նորին, և կամ զզակատեալն զհետ նորուն . և են սոքա . ձուն . ծէտ, ծոտ, ղոտ . որգոն, Գինեձուն, դասաձուն, տիրաձուն . որկորածէտ, նենգածէտ . նենգածոտ . լեզուաղոտ, պատղոտ . և սոքա նշանակեն ածականապէս ։ Ընդ որս դասի և անունն՝ որկորոյթ, կամ որկորէոյթ . որ նշանակէ զորկորամէտս ։

Զեղծականք են, որք յարեալ յանուն իրիք՝ տան նշանակել զեղծեալն նորա, կամ զաղաւաղեալն ՚ի նմին . և են սոքա . գոր, ծէտ . որգոն, խեղագոր, լուսագոր, կաւագոր . խեղածէտ, ախտածէտ . ևն . սոքա ևս նշանակեն ածականապէս ։

Տնկականք են կրկին . ոմանք յարեալ յանուանս պտղոց կամ ծաղկանց՝ տան նշանակել զտունկս նոցին . և են սոքա . ենի, ի . որգոն, Արմաւենի, նշենի, վարդենի . տանձի, բալենի, կաղնի . ևն . և սք՟ նշանակեն գոյականապէս ։ Իսկ ոմանք յարեալ յանուանս այլոց իրաց՝ տան նշանակել զտունկ ինչ, կամ զծաղիկ, կամ զպտուղ, և կամ զխոտ . և են սք՟ . ի, իճ, ուկ, ուտ, ու, ոտ, ոկ, իկ . որգոն, Հերձի, սղոցի . դառնիճ, պատառիճ . մեղրուկ, քնարուկ . մորուտ, հօրուտ . կայծու . փշոտ . վարսոկ . դժնիկ . սոքա ևս վարին գոյականապէս ։

Ոմանք ՚ի մասնկանց աստի յարեալ յայլ անուանս ևս՝ տան նշանակել զկենդանի ինչ . և կոչին կենդանականք . զոր օրինակ, Եղջերուկ . մեղու . արքայիկ . խատնիճ ։

Գոյացականք են, որք ՚ի յարիլն յանուն իրիք՝ տան նշանակել զիրն գոյացեալ յայնմանէ կամ նմա . և են սոքա . եայ, ի, եղէն, ենի . որգոն, Արծաթեայ, պղնձեայ . երկաթի, արծաթի . մոմեղէն, լուսեղէն . օդենի, ուլենի . քաղցրուենի, քաղցրաւենի . ևն . այ՟ եղեալ յարծաթէ, յերկաթոյ, ևն . և սոքա նշանակեն ածականապէս . Թէպէտ յանգեալքն ՚ի ենի՝ երբեմն գոյականապէս ևս նշանակեն ։ Առ սոսա վերաբերին և բառքս՝ մաշկեակ, և կտաւատեակ .

որք նշանակեն զզգեստ մաշկեայ և կտաւեայ · և վարին գոյականապէս ։

Մածուցականք կամ մակբուղականք են , որք 'ի յարիլն յանուն իրիք՝ տան նշանակել զիրն մածեալ այնու · և են սոքա · ոտ , ոտի , ուտ , չուտ , ուկ , եղի · որպէս , Ձիթոտ · զազրոտի · տղմուտ · խաւարչուտ · արտասուտուկ · արտեղի · որ մածեալ ձիթով , զազրութեամբ , տղմով , եւն ։ և սոքա նշանակեն ածականապէս · այլ [illegible] գոյականապէս և ս վարին ։

Ծածկողականք են , որք 'ի յարիլն յանուանս՝ տան նշանակել զծածկոյթ իրիք · և են սոքա · անոց , ոց , ոյթ , ու , ոկ , ան , ենեք , պան , պանակ , եք , եկ · որպէս , Գլխանոց , լանջանոց · Թիկնոց , սիւնոց · ծածկոյթ · վերարկու · ներքնակ · պատան · պատենաք · բազպան · կշտապանակ · տանեք · կափարիչ · որք նշանակեն զայն ինչ որով ծածկի կամ պատի իմն · որ գլուխն , լանջքն , Թիկունքն , և կամ այլ ինչ իր · և սոքա ըստ որում են ծածկողականք՝ վարին գոյականապէս ։

Գործիքականք են , որք 'ի յարիլն յանուն իրիք՝ տան նշանակել զգործի ինչ առնելոյ զնոյն · և են սոքա · ոց , որդ , ան , արան , անք , ակ , նակ , անակ , եակ , էք , է , ուկ , ուր , էկ , այ · որպէս , Ծխարոց · կշռորդ · խԹան · Նուագարան · փականք · տապակ · կոճնակ · ըմպանակ · խածեակ , կամ խածէք , աղօրէք , գործէ · կամ գործէք · յեսուկ · պարգուր · բրէկ · ծնծղայ · այսինքն գործի խարտելոյ , կշռելոյ , խԹելոյ , եւն · և սոքա նշանակեն գոյականապէս ։

Ընդ սոսա կարեն դասիլ և մասնիկքս , եկ , իկ , ողակ , ուիլ , չէն · որպէս , Հմայեկ · խաղալիկ · փականակ · խըրտուիլ , կամ խրտուիլակ · ռմբիչէն · որք նշանակեն զգործիս հմայելոյ , խաղալոյ , փակելոյ , խրտուցանելոյ , և ռումբս ձգելոյ ։

Պարունակականք են , որք յարեալ յանուն իրիք՝ տան նշանակել զտեղի նորին , կամ զպարունակօղն նր · և են սոքին ·

տան, ոյ, անոյ, ենոյ, ատեն, ատենէ, ան. և ևս՝ ազան, ճակ, ծէ. որգոն, Ճեմարան, վարժարան. դպրոց, ծաղկոց. վաճառանոց, Հիւանդանոց. անխնոց. ծառաստան, Հայաստան. այգեստանէ, անխստանէ. դիտան, կայան. և ևս՝ կախաղան. օթեւան, ոսկեան. վարդենի. որ տեղի ճեմելոյ, վարժելոյ, դպրութեան, եւն. և սոքա նշանակեն գոյականապէս :

Վարողականք կամ գործառականք են, որք 'ի յարելն յանուն իրիք՝ տան նշանակել զվարօղ նորին, կամ զպաշտօնեայն. և են սոքա. որդ, որդ. որգոն, Այծորդ, Նախրորդ, անդէորդ, ջանգորդ, սայլորդ, բաղնորդ, այգորդ. գինուոր, ջրուոր. եւն. որ վարող այծից, նախրայ, գինւոյ, եւն. և կամ պաշտօնեայ բաղանեաց, այգեաց, ջրոյ, եւն. և սոքա 'ի գործ ածին գոյականապէս. բայց վարին ևս իբր միջակք : Ընդ որս կարեն դասիլ և բառքս՝ վաճառական, և տապաստանեան :

Տուչականք են, որք 'ի յարելն յանուն ինչ՝ տան նշանակել պտղել իւր վասն այնր, զոր նախադասին անունն նշանակէ. և են սոքա. անակ, չէայ. որգոն, Յաղթանակ, մրցանակ. աւետչեայ, առհաւատչեայ. որ այն՝ որ տուեալ լինի վասն յաղթութեան, վասն աւետելոյ, եւն. և սոքա նշանակեն գոյականապէս. և երբեմն վարին իբր միջակք : Ընդ որս կարէ դասիլ և բառս՝ փոխարէն. որ նշանակէ զհատուցանելն ինչ փոխանակ իրիք :

Ստացականք են, որք 'ի յարելն յանուն իրիք՝ տան նշանակել ոչ զնա, այլ զնորայն. թէ ստացուած իցէ, և թէ այլ ինչ վերաբերեալ առ նա. և են սոքա. ական, կան, եան, եայ, աւոր, որ, եղէն, այեն, այ, այի, անի, ենի, եմի, ունի, նի, ի, էն, որէն, էնք, էք, էկ, եակ. որգոն, Մարմնական. Հոգեկան. արևելեան. ժամանակեայ. երկնաւոր. կարեւոր. ծնեղէն. մարդկայեն. ակամայ. առնոյի. պիտանի. մայրենի. վաղեմի. տէրունի. գաղտնի. իրաւի. խաւարէն. երեկորէն. աջէնք, աՀեկէնք. աջէք, աՀեկէք. ընկէկ, նաւագնացէկ. Հինգամեակ, Համաղնեակ.

ևն · և սոքա վարին ածականապէս · և նշանակեն ոչ զիրն , այլ զիմն իրին · զի մարմնականն նշանակէ զայն՝ որ մարմնոյ է , կամ որ մարմնոյ պատշաճի · որպէս գործ , յօժարութիւն , ևն ։ և արուեստականն նշանակէ զայն՝ որ արուեստից է · որպէս հողմ , կողմն , ևն ։ Այնպէս խմն և վասն այլոց ։ Եւ յայս սակս երբեմն փոխանակ ասելոյ՝ գործ մարմնական , հողմն արուեստեան , ևն , ասեմք՝ գործ մարմնոյ , հողմն արուեստից , ևն ։

Գտանին ևս և այլ ածանցական անուանք ինչ , որք թէպէտ իբրև գոյական վարին , բայց ըստ ինքեան ստացականս վերաբերին · և կազմին մասնկամբքս , ոյք , էք , նէք , ոյն , որէոյ , կամ որէ · որպէս , Մարմնոյք · պատարագէք · լուցնէք · վաղորդայն , կամ վաղորդեայն , կամ վաղորդեան · երեկորեայ , կամ երեկորէ · զի իրք մարմնոյ · իրք պատարագի · նիւթ լուցման · ժամ առաւօտեան · ժամանակ երեկոյի ։

Այլ գիտելի է , զի բազում անգամ նախատիպ ածականք դնին՝ ի տեղի ստացականաց · որպէս երևի յառաջիկայ օրինակսդ · * Երջանիկ արիութեամբ պսակեցան՝ ի քնէ ||· զի երջանկական արիութբ · Հար · Ճբ ։

Ածականականք են , որք ՝ի յարիլն յանուն իրիք՝ տան նշանակել զունօղ նորին · և են սոքա · աւոր , որ , ական , ային , եայ , եան , անի , ի , ացի , ուն · իկ , եմ , իմ , արիմ , երիմ , ած , ան , եղէն , ատ , որ , որդ , օտ , օն , այ , կոտ , ոտ , ուկ , ուտ , ու , եղէ , տանի , ակ , ին · որպէս , Թագաւոր · ալեւոր · բանական · բնական · բարեմաշեայ · չորեքթեւեան · երկոտանի · ծառայի · մտացի · իմաստուն · գեղեցիկ · խոհեմ · ուշիմ · հաւատարիմ · ողորմած · արժան · հոտեղէն · հաստատ · մոլոր · ուղղորդ · կարօտ · գգօն · քաղցրաբարոյ · մաղասկոտ · բորոտ · դիպուկ · խաղաղուտ · արգասու · մեղկ · կենդանի · քառադիմակ · նկարէն ։ զի ունօղ զթեւ , զալիս , զբան , ևն · և սոքա նշանակեն ածականապէս ։

Ընդ որս կարէ դասիլ և բառս՝ թօնօտ, կամ թօնօղ. որ նշանակէ ունօղ զթօն, այսինքն զխոնաւութիւն օդոյ:

Կան ևս քանի մի անուանք, որք թէպէտ և գոյականք են, և գոյականապէս վարին, բայց ՝ի զօրութենէ նշանակութեան իւրեանց՝ կարեն առ ունականս վերաբերիլ. և կարգին մանկամբքս, ակ, անակ, ենակ, եակ, ան. որպէս Գոյակ. շրջանակ. ճեղքնակ. Հիւսէակ. խորշխորշան. այսինքն գոյութիւն ունօղ, շուրջ ունօղ, ևն: Ընդ սոսա դասին և մանիկքս, եմ, ամ. որպէս, Համեմ. վարսամ. որք նշանակեն՝ համ ունօղ խոտ ինչ, և վարս ունօղ աստղ:

Ընդունականք են, որք ՝ի յարելն յանուն իրիք՝ տան նշանակել զընդունակն կամ զկատարիչն ներգործութեան նորին՝ ըստ նշանակութեան ընդունելութեանց յանգելոյ ՝ի օղ. և են սոքա. իչ, ուչ, ակ, եակ, նակ, էկ, ուակ, իկ, ուկ, ու, որդ, աւոր, արան, ական, կան, ան, ոտ, կոտ, ուն, եայ, էայ, այ, ատ, ուրդ. որպէս, Հալածիչ. տեսուչ. խնդրակ. վերելեակ. պահնակ, կամ պահանակ, կամ պահէկ. պարուակ. մարտիկ, երգեցիկ. յաղթուկ, կամ յաղթկու. երկրպագու. ժառանգորդ. աղաչաւոր. բայցարան. օգնական. գուժկան. վկայական. կասկածոտ. բաջաղկոտ. խօսուն, աճեցուն. փախստեայ. խաբեբայ. ազդայ. զգաստ. անկրթուրդ. այսինքն Հալածօղ. տեսօղ. խնդրօղ. ՝ի վերելօղ. պահօղ. պարօղ. մարտնչօղ. երգեցօղ. յաղթօղ. երկրպագօղ. ժառանգօղ. աղաչօղ. բացօղ. ևն. և սոքա նշանակեն ածականապէս: Ընդ որս դասին և անուանքս, ուտիճ. ուղղէակ. իշխան. որք թէպէտ և գոյականապէս վարին, ևս և իբր միջակք, բայց ունին զզօրութիւն օղի:

Արտադրականք են, որք ՝ի յարելն յարմատս բայից՝ տան նշանակել զիրն ընդ իւիք արտադրութեամբ՝ կամ լինելութեամբ՝ ըստ նշանակութեան ընդունելութեանց յանգելոյ ՝ի եալ. և են սոքին. ուած, ած, ուածոյ, ածոյ, ածու. որպէս, Ստեղծուած, յօրինուած. արարած, շինած. Հիւսուածոյ, փորուածոյ. ձուլածոյ, կոփածոյ, ձուլածու,

կոփածոյ · եւն · Ի սահեղծեալ · արարեալ · հիւսեալ · ձուլեալ · եւն ։ կամ հիւսմամբ եղեալ · ձուլմամբ եղեալ · եւն ։ Յորս որք յանգին ՚ի ածու, վարին գոյականաբար ։ Իսկ որք յանգին ՚ի ած, վարին իբր միջակք ։ Եւ որք յանգին ՚ի ածոյ, ածոյ, և ածու, վարին իբր ածականք · երբեմն և իբր միջակք ։

Ընթակայականք են, որք ՚ի յարելն յանուն իրիք՝ տան նշանակել զընթակայն ուղղութեան նորին՝ ըստ նշանակութեան ընդունելութեանց յանգելոյ ՚ի ԼԻ · և են սոքա · ցու · ուտ, ուկ, ելի, ալի, ական, աւոր, ոյ, ի, ոյ · որգոն, Քահանայացու, առաքելականացու · կիզանուտ, բեկանուտ · յեղյեղուկ, դիւրանկուկ · վաղախոխուկ, անսասանուկ · անայլայլուկ, անապակուկ · եղծական, լուծական · պատժաւոր, զարմանաւոր · հաճոյ, մեծարոյ, կամ մեծարու · յարգի · անուղղոյ · որ է ընթակայ քահանայութեան, կիզման, յեղյեղման, եւն ։ կամ քահանայանալի · կիզանելի, յեղյեղելի · վաղախոխելի · անայլայլելի · եղծանելի · պատժելի · հաճելի · մեծարելի · յարգելի · անուղղելի · և սոքա նշանակեն ածականաբար ։

Թուականք են, որք ՚ի յարելն յանուանս թուոց՝ տան նշանակել զդասակարգութիւն նոցին, կամ զչափ թուելոյն, և կամ զյաճախութիւն թուոյն · և են սոքա · որդ, րորդ, երորդ, եր, ակ, եակ, երեակ, եկի, ակի, պատիկ, կին, եքին, եքեան, ան, որգոն, Նախորդ · երկրորդ · ե-եր · իններորդ · միակ · քառեակ · հնգեբեակ · վեցեկի · եօթնակի · ութնպատիկ · չորեքկին · տասնեքին · վեցեքեան · հնգետասան · և սոքա նշանակեն ածականաբար ։ Ընդ որս կարեն դասիլ և բառքս՝ նախնի, կամ նախնին · առաջին, և վերջին ։

Այլ երկոքին մասնիկքս եքեան և եքին՝ կազմեն նաև զհաւաքական անուանս · որգոն, Ամենեքեան, բոլորեքեան · ամենեքին, բոլորեքին ։

Սաստկականք կամ յաճախականք են, որք ՚ի յարելն յանուն իրիք՝ տան նշանակել զիրն առաւելուլ, կամ առա-

ւելեալ նոյնս · և են սոքա · գին՝ եղ՝ ւէտ՝ ուտ՝ ոտ՝ ջէն · որգոն՝ ցօթագին՝ յաւագին՝ զուարթագին · հանճարեղ՝ ճաճանչեղ՝ յոնչեղ · պտղաւէտ՝ գինեւէտ · ապառաժուտ՝ թփուտ · մայրուտ՝ շամբուտ · խորշէն՝ ծաղկոտջէն · ևն · և սոքա նշանակեն ածականապէս ։ Ընդ որս դասի և բառս՝ բերրի · որ նշանակէ զառատ բերս ունօղ ։

Նուազականք են, որք ՚ի յարիլն յանուն իւրեանց՝ տան նշանակել զփոքրն այնորիկ · և են սոքա · ակ՝ եակ՝ անակ՝ ուկ՝ իկ՝ եկ՝ ոյկ · որգոն՝ նաւակ · պատանեակ · գանձանակ · սկնդուկ · ձորձիկ · ճայեկ · գրքոյկ ։ Սոքա գոյական կամ ածական լինին համարակօրէն նկատի ըստ նախագաղափարին · զի եթէ նախագաղափարն իցէ գոյական, վարին իբր գոյական · իսկ եթէ իցէ ածական, վարին իբր ածական ։

Ոմանք ՚ի սոցանէ կազմեն ևս և զփաղաքշական անուանս · որգոն՝ Անուշիկ · որդեակ · հայրիկ՝ քաղցրիկ · ևն · որք ՚ի փաղաքշութիւնս բանից ՚ի գործ ածին ։

Պակասականն է մասնիկս՝ ատ · որ ՚ի յարիլն յանուն իւրեանց՝ տայ նշանակել զիրն պակասեալ յայնմանէ · որգոն՝ Տերևատ՝ ծայրատ՝ հերատ՝ կառափնատ՝ ձեռնատ՝ քըթնատ՝ ևն · և սոքա նշանակեն ածականապէս ։

Ձևայականն է մասնիկս՝ արդ · որ ՚ի յարիլն յանուն իւրեանց՝ տայ նշանակել զձևայեալն ՚ի նոյն՝ կամ զունօղն այնր ձևոյ և որպիսութեան · որգոն՝ Խորանարդ՝ գըմբեթարդ՝ կոնթարդ՝ վիմարդ՝ ևն · այսինքն ունօղ զձև խորանի՝ գմբեթի՝ ևն · և սոքա վարին իբր ածական ։

Ընդ ձևայականաց կարէ դասիլ և մասնիկս՝ շի · որգոն՝ Բոլորշի՝ լայնշի · այսինքն բոլորաձև՝ լայնաձև ։ Այնպէս և մասնիկս իք՝ կարէ համարիլ իբր ձևայական ՚ի գոյական բառս՝ խորոմիք՝ և կոնթիք · զի խորանիքն նշանակէ ունօղ զձև խորանի · և կոնթիքն՝ ունօղ զձև կոր ընդթերև · զորոց զիսկական նշանակութիւնս տես ՚ի բառարանի ։

Հաղորդականն է մասնիկս՝ որդ · որ 'ի յարելն յանուն իրիք՝ տայ նշանակել զհաղորդակիցն ընդ այլում յայնմ իրի · որգոն · Ձայնորդ · բաժանորդ · հասարակորդ · նըմանորդ · լծորդ · զուգորդ · ևն · կամ ձայնակից · բաժանակից · ևն · և սոքա նշանակեն անձականապէս ։

Պաշտպանականն է մասնիկս՝ պան · որ 'ի յարելն յանուն իրիք՝ տայ նշանակել զպաշտպան նորա · որգոն · Պարտիզպան · դռնապան · սենեկապան · պահապան · ևն · և սոքա վարին իբր միջանկ · զի թէպէտ անձականապէս նշանակեն · բայց վարին իբր գոյական ։ Ընդ սոսա կարէ դասիլ և բառս՝ պատմուճան · որ նշանակէ պատմուճանապան ։

Վերացականն է մասնիկս՝ ութիւն · որ 'ի յարելն յանուն իրիք՝ տայ նշանակել զայն իբր առանց ենթակայի · կամ իբր վերացեալ յենթակայէ · որգոն · Մարդկութիւն · ձիութիւն · սպիտակութիւն · ևն · և այսպիսի անուանք կոչին վերացեալք · և վարին գոյականապէս ։

Բայածականք են · որք յաւէտ յարմանս բայից յարելով՝ հայցուցանեն զնոսա անուանս · որք կոչին բայածականք · ըստ նշանակութեան անուանց յանգելոց 'ի ումն · և այսպիսի մասնիկք են բազում · և են սոքին · ումն · ուստ · իւն · ութիւն · ոյթ · ուած · ած · եալ · եշտ · իստ · ուն · օն · ուրդ · ունդ · ուկ · ուք · ուց · ոց · ակ · ատակ · ան · անք · անդ · անդն · եան · ին · իք · ինչ · ինջ · ունչ · ունջ · և ևս՝ օն · ջանք · եայք · անք · իք · որգոն · Հնչումն · փախուստ · գոչիւն · փրկութիւն · ձանձրոյթ · հայցուած · կոտորած · գովեալ · հրաժեշտ · հանգիստ · արթուն · պաշտօն · խառնուրդ · սնունդ · զայրացուկ · գինեբուք · այտուց · մխոց · վրիպակ · յիշատակ · հրաւիրան · հայհոյանք · սպանդ · եռանդն · ներբողեան · զննին · կարծիք · կռինչ · քրքինջ · մռունչ · շշունջ ։ և ևս՝ լալօն · խաբջանք · կամ խաբեայք · պոռոչանք · ձկլնթայիք ։ Եւ սոքին միշտ գոյականապէս նշանակեն · և երբեմն իբր վերացեալ անուն վարին ։

Սոքա յայն սակս կոչին բայածականք · զի 'ի վարելն իբր

անուն՝ ունին ևս պշօլութիւն ինչ և զսեռ բայից, յորոց ածանցին. ուստի և երբեմն զնոյն իբր գերբայ խնդրով հանդերձ. և երբեմն իբր ընդունելութիւն. զորոց ու-
նիմք խօսել յերրորդ մասին. Գլ. Գ:

Գիտելի է, զի երբեմն բայանուանք կազմին նաև 'ի ձեռն տառիս՝ ք, 'ի յարիլ նորա յարմատս ինչ բայից, և կամ յորոշեալ ինչ դէմս նոյին. որգոն, Զարմանք, Թշնամանք. ընթայք, գնայք, հայեայք. կոչք, ուռոյք. և այլն:

Յարմարականք են, որք 'ի յարիլ յանուանս, կամ յարմատս բայից՝ վերածեն զայնս առ յարմարական նշանակութիւն ինչ նախագաղափարին: Ոմանք ածականացեն. և են սոքա. օր, ոյ, ող, որդ, ուղ, ուն, ան, ական, ակ, ենակ, անակ, անդակ, դակ, ող, անդէ, եաց, էն, ակ. որգոն, Ծանօթ. պիտոյ. ձախող. աւելորդ. վայելուչ. թագաւոր. գի-ղեան. գեղջկան. պարարուն. խոտորնակ. մերձաւոր. այլա-դակ. դժնդակ. աղաւաղ՝ կամ աղուաղ. վաղաղնդէ. հա-մբաւ. ընկեցիկ. ծովահեղձուկ:

Իսկ ոմանք գոյականացեն. և են սոքա. ուած, ակ, ան, անք, աք, անի, են, էլ, որ, օն, ունք, ոց, ուրդ, ուն, ունք, ոց, ող, ոյր, ոյն, ոք, էղ, էնք, ոցք, ի, ու. որ-գոն, Ջանդաւած, դիպուած. Ճաշակ, հասակ. մխան, խուժան. վարձանք, փրկանք. հրաշք, խորխորատ. մատա-նի, աղանի. բաժին, լուսին. տեսիլ, կաթիլ. հատոր, բեկոր. կտրօն, կրօն. շնորհանք, երկեղանք. խայ-տառակ, սպխտակոց. կայսրութ, ժողովուրդ. աղաւն, մա-ծուն. խրախճանք, պարզպաշտանք. խաւրոց, մեջոց. կոթող, խանձող. պարոյր, կահոյր. պարոյն, խարոյն. փորոք. տաշեղ. ծուէնք. ընչոցք. խածի. քաղցու: Եւ ևս՝ գո-ղանի, կամ կողմնի. ծիրանի, դալարի. ձմերանի, ամա-ռանի, ձմերայնի, ամարայնի: սոքա յետինքս եթէ ածակա-նացեն ևս վարեսցին, վերաբերին առ սստայականս:

Ընդ սոսա կարեն դասիլ և մասնիկքս, այն, այթ. ուտ, ուտ, ենա, դէհ. որգոն, Ողջոյն. Հասոյթ. ապրուստ.

ուրդ . ուտէս . Հրդեհ . որք առ բայածականս ևս վերաբերին ։

Նոյնականք են , որք ՚ի յարիլն յանուանս՝ առանց փոփոխելոյ զնշանակութիւն նոցա՝ այլազգ ձևացուցանեն զնա ։ Ոմանք գոյականապէս . և են սոքա . ան , արան , աստան , ջան , ակ , ար , ակ , է , այ , ոռ , ոք . և ևս՝ այ , ենայ , ակն . որգոն , Պատուիրան . կերպարան . դաստառակ . վաշտջան . երասանակ . տիպար . սարսափ . տոկոսէ . երեկոյ . կիտառ . ստուգառ ։ և ևս՝ պղպջակ . հեգենայ . դիակն ։ Ընդ որս դասի և բառս՝ գումարտակ . որ մերթ նշանակէ գումար , և մերթ՝ գումարեալ ։

Ոմանք ածականապէս . և են սոքա . ակ , ան , ական , ին , ի , ղի , ուի , ունի , ենի , ուն , ոփ , ենոյ , էք , ունչ , ոյն , ուենոյ , օր . որգոն , Խաւսնակ . կուսան . Թշուառական . դժուարին . նմանի . անձրևի . օտարոտի . ծերունի . բարետոհմիկ . յածուն . Նորոգ . վատթար . անյարիր . անտէրունչ , կամ անտէրունջ . ամենայն . դուզնաքեայ . կարճառօտ ։

Այս նոյնականն և առ յարմարական ածանցութիւնս վերաբերին և տառք ինչ , որք յարին յանուանս առ ՚ի գոյդ , կամ առ ՚ի այլապէս նշանակել . որգոն , Թմրութիւն , Թմբրութիւն . բաժին , բաժժին . կռապաշտ , կռապարիշտ ։ մարմաջ , մարմանջ . ոգեղ , ոգեղծ . եզերք , եզերաք . պարար , պարարտ . ևն ։ Այլ գայսպիսին տես ՚ի բառարանի ՚ի մեկնութիւնս իւրաքանչիւր տառից ։

Գտանին և այլ բազում անուանք , որք թէպէտ մասնական իւիք երևին ածանցեալ , բայց վարին իբր նախադասականք , կամ իբր բարդք՝ ըստ ստուգաբանութեան իւրեանց . որպիսի են սոքին . Կապուտ . կենդող . ամբարհաւաճ . իշխան . գահաւանդ . կապարճ . միաստանք . ընտել . աղբեր . աղտեղ . բարեձայն . խոշոր . ևն ։

Հնար էր աստանօր ՚ի մէջ բերել և զկերպարանութիւնս յատուկ անուանց . որպիսի են մանիկեցի , ացի , էն , ի , եան , ի , ոն , ևն . որգոն , Փիլիպպեան . աղեքսանդրեան .

կատարինէ ․ գրիգորիկ ․ եսայի ․ ոսկիտ ․ սեբաստիա ․ եւն ։ Բայց քանզի սոքա ոչ ածանցեն, այլ միայն յատուկ անուն կայուցանեն, և այն ևս մանաւանդ յայլազգական բառս, վասն որոյ թողաք զասսին ։

Ոմանք աստանօր յաւելուն ՝ի վերայ նախատիպ և ածանցական անուանց նաև զկրկնածանցականս ․ ըստ որում անունն կարէ կրկնակի, և մերթ ևս երրակի ածանցիլ՝ ՝ի կրկին՝ կամ յերրեակ ածանցից մասնկանց ․ որգոն՝ Բուն՝ բնաւոր, բնաւորական ․ տէր, տէրունի, տէրունական ․ ժողով, ժողովուրդ, ժողովրդական ․ կարիք, կարօտ, կարօտութիւն ․ մահ, մահական, մահկանացու ․ երեկ, երեկոյ, երեկոյին ։ Պէտք, պիտանի, պիտանաւոր, պիտանաւորութիւն ․ կիրք, կրօն, կրօնաւոր, կրօնաւորական ․ եւն ։

## ԳԼՈՒԽ․ Թ․

### Յաղագս Թուոց անուանց ։

Թիւք անուանց են միութիւն կամ բազմաւորութիւն նշանակութեան անուանց ըստ ձայնին ։ Եւ են կրկին ․ եզական, և յոգնական ․ կամ միաւորական, և բազմաւորական ։

Եզականն է, որ ըստ ձայնին զմի ինչ նշանակէ ․ զոր օրինակ, Հոգի ․ մարմին ․ խոնարհ ․ հօտ ․ եւն ։ Զի թէպէտ նշանակեալն այսպիսի անուանց ՝ի բազումս է, բայց ըստ ձայնին ոչ իբրև բազում նշանակի, այլ իբրև մի ։

Իսկ յոգնականն է, որ ըստ ձայնին զբազումս նշանակէ ․ զոր օրինակ, Հոգիք ․ մարմինք ․ խոնարհք ․ հօտք ․ և այլն ։

Արաբացիք, և յոյնք՝ յաւելուն զմիւս ևս թիւ, որ ոչ եզական է, և ոչ յոգնական ․ այլ երկուորական, կամ երկական ․ զի զերկուս միայն նշանակէ ․ զ՛ր երկու տուն, երկու մարդ, եւն ։ Եւ զայս թէպէտ ՝ի մեզ բերէ զա-

ւիթ անյաղթն՝ ՚ի յունաց առեալ, բայց օտար է սա ՚ի մեր լեզուէ · որպէս և գրէ յոհան երզնկացին՝ ՚ի մեկն ·

Դէր · Զաւղէ ։

Այլ գիտելի է, զի ՚ի բարբառս մեր անուանք երրակի լինին յոգնականք · Նախ՝ յաւելլով յեզականին զտառս ինչ · որպէս յուղղական և ՚ի գործիական հոլովն՝ ք · զոր օրինակ, Բանք, բանիւք · մարմինք, մարմնովք · գրաստք, գրաստուք · եւ։ Իսկ ՚ի հայցական և ՚ի ներգոյական հոլովն՝ ս · զոր օրինակ, Զբանս, ՚ի բանս · զմարմինս, ՚ի մարմինս · զգրաստս, ՚ի գրաստս · եւ։ Այլ ՚ի սեռականին և ՚ի բացառականին՝ ց · զոր օրինակ, Բանից, ՚ի բանից · մարմնոց, ՚ի մարմնոց · գրաստուց, ՚ի գրաստուց · եւ։

Երկրորդ՝ յաւելլով յեզականսն զվանկս ինչ, կամ զմասնիկս յոգնականակերտս · որպիսի են հետագայ մասնկունքդ ·

Այք · աղախնայք · հագագայք · հերեսիովտայք · եւ։
Եայք · արուարձանեայք · այգեստանեայք · եւ։
Որայք, և Երայք · բերդորայք · դաշտորայք · վաներայք · եւ։
Որէայք · վանորեայք · դեղորեայք · աղտորեայք · եւ։
Այնք · սերմանք · կողմանք · մեղանք · դսրովանք · եւ։
Ինք · անձինք · բեւլինք · եզինք · խաշինք · աղինք · եւ։
Իք · գրուատիք · կեղծիք · սերմանիք · որքանիք · եւ։
Ունք · աստամունք · երիկամունք · մատունք · եւ։
Ոյք · դահոյք · գործոյք · տեղոյք · սօսոյք · բաշխոյք · եւ։
Օնք · լալօնք · մուայօնք · եւ։
Էք, և օրէք · անդէք · գիւղօրէք · եւ,
Այնի · աղատանի · աւագանի · համդերձանի · եւ։
Տի, և ատի · մանկտի · ծակտի · ոսկերոտի · եւ։
Եան · խոզեան · ջորեան · գրեան, կ գրեանք · եւ։
Եար · վարժեար · իշեար · բարձկնեար · նաւկնեար · եւ։
Եր · ներդեր · կշտեր · օրեր · եւ · որք իբր Տաբառ վարին ·
Իկ · մարդիկ ։ և ևս՝ շանթիկ · զգեստիկ ։
Ական · զօրական · բազմական · փախստական · և · զր ·

* Սեպուհ մի . . . ընտրեցին յամ՛ զօրականէն || · փոխանակ ասելոյ, յամ՛ զօրաց · Եղիշէ · Է ·
* Բոլորեցաւ ակումբ ժողովականէն || · փ բազմողացն · Եղիշ · Ը ·
* Երթային զհետ ժողովրդականէն || · փ փախչողաց · Եղիշ · Է ։
Եւս · մանկտեակ · զոր օրինակ, * Այլ յանէին մանկտեակն զլերանաւ վարդապետի նր || · Եփրեմ · Դ · Բրգ ։

Երրորդ՝ անուանք լինին յոգնական՝ կրկնմամբ մի և նոյն անուան · որգոն · Դրօշու դրօշու, ( փ դրօշիւք ) · քաղաքի քաղաքի, ( փ քաղաքաց ) · ընտիր ընտիր, ( փ ընտիրք ) · գունակ գունակ · ազգի ազգի · ևն ։ Եւ ևս՝ Մեծամեծ · Նորանոր · ևն · զոր օրինակ, * Տեսանէր զգնդայն դրօշու դրօշու պատրաստուն || · Ե · Մակ · ԺԵ · 21 ։

Երբեմն այս կրկնումն անուանց պատահի և ՚ի յոգնական · և զնշանակութիւն նոյա առնէ յանձնական · և զրեթէ ՚ի մէջ բերէ զզօրութիւն բառիս՝ Ժողովն · զոր օրինակ ·
* Թողում ասել զբազմայն գումարութիւն՝ խառնարհեալ առ կարկս կարկս || · փ առ բազում կարկս · Նար · 70 ։

Գիտելի է դարձեալ, զի ՚ի բարբառս մեր բազում անուանք կան, որք ըստ ինքեանց անյոգնականք են · զոր օրինակ, Խաւար · լոյս · տիւ · սէր · յոյս · և այլն ։ Սոյնպէս անյոգնական են և ամ՛ յատուկ անուանք աստեղաց, ամսոց, քաղաքաց, գետոց, լերանց, կղզեաց, մարդկան, ևն · զոր օրինակ, Լուսին · յունվար · վաղարշապատ · երասխ · մասիս · կիպրոս · Հայկ · ևն ։ Գտանին և անուանք ինչ՝ որք առաւել եզականապէս վարին՝ քան յոգնականապէս · զոր օրինակ, Հանգիստ · սուգ · քուն · մութն · երկիր · խիղճ · ահ · այբ · ովսաննայ · հեռաստան · ևն ։

Կան ևս բազում անուանք՝ որք անեզականք են · զոր օրինակ, Աղաչանք · բաղձանք · փականք · բարք · փառք · կամք · խելք · վայելք · մեղք · կապէնք · ծունկք · ալիք · ժանիք · կարծիք · ընթրիք · դժոխք · ցնորք · սրունք · կուռք · աղօթք · և այլք բազումք ։

Են և՛ որք մանաւանդ յոգնականապէս վարին՝ քան եզականապէս · զո՛ր օրինակ ՝ Յանցուածք · Հաւատք · դադարք · մատեանք · ցաւք · ելք · հէնք · օրէնք · վրէժք · աղէտք · վէրք · միտք · ցոյցք · ագոյցք · շնորհք · ունչք · յօնք · կրօնք · եւն ։

Յայսոսիկ անեզական անուանս՝ երբեմն փոխանակ ՔԷՆ՝ ՍԷ դնի · որգոն ՝ կարծիս · երախտիս · աւետիս · տարակուսանս · հարուածս · կեանս · մեղս · և այլն · զո՛ր օրինակ · * Զի էր կարծիս առ ամենեսեան՝ եթէ ՝ի մեղս իւրեանց կորեան || · Իգնատիոս Վրդ · Ղուկ · ԺԳ · 1 ։

Ըստ այսմ ձևանան բազում անգամ և այլ յոգնական անուանք ՝ յորժամ լինին անուանական խնդիր բայից՝ մանաւանդ ներգործականաց · զո՛ր օրինակ ՝ * Ազատս և անսպիս և անմահս և անապականս զմեզ արար || · Խոսրով ։

Եւ ևս գիտել արժան է ՝ զի անեզական անուանքս ՝ ՄԵՂՔ ՝ ՃԱՄՔ ՝ ԴԱՐՔ ՝ եւն ՝ յորժամ յարին ՝ի բայս ինչ՝ իբրև միալարելով ընդ նոսին ՝ կամ իբր դիմազուրկ ՝ երբեմն եզականապէս դնին · զո՛ր օրինակ ՝ * Ընձանց մեղ գիտեն չհաւանօղքն ՝ և մի այլ || · Եզնիկ Կողբացի · ԿԷ ։
* Ընձանց իւրեանց մեղ է ՝ և ոչ փրկողին || · Իգնատ · Ճ · 54 ։
* Որոյ զսի՛րտ կամ եղև անձանց իւրեանց ՝ բերին նուէրս տեառն || · Ելից · ԼԵ · 21 ։

## ԳԼՈՒԽ · Ժ ։

### Յաղագս Հոլովից անուանց ։

Բառս հոլով՝ ըստ հասարակ առմանն նշանակէ Թաւալումն և գլորումն ՝ կամ շրջումն ։ Այլ ըստ քերականաց՝ նշանակէ այսպէս փոփոխումն մի և նոյն անուան ՝ի սկիզբն ՝ կամ ՝ի վերջն ՝ և կամ յերկոսին միանգամայն · Որպէս անունս Բոյս ՝ի հոլովիլն այսպէս փոփոխի՝ կամ ՝ի վերջն ՝ կամ ՝ի սկզբան ՝ և կամ յերկոսին ևս · զո՛ր օրինակ ՝ Բոյս ՝ բուսոյ ՝ ՝ի բոյս ՝ զբոյս ՝

՚ի բուսոյ ․ զբուսոյ ․ բուսով ․ զբուսով ․ ՚ի բոյս ․ ո՜վ բոյս ։

Եւ այսպիսի փոփոխութիւնք կամ զանազանութիւնք միոյ անուան՝ կոչին հոլովք անուանց ․ և են տասն ․ ը՟ ․ Ուղղական ․ սեռական ․ տրական ․ հայցական ․ բացառական ․ պատմական ․ գործիական ․ պարառական ․ ներգոյական ․ կոչական ։

Ուղղական կամ անուանական հոլովն է ․ յորում իրն ուղղակի և արձակաբար նշանակի ․ զո՛ր օրինակ ․ Հայր ․ անձն ․ հիմն ․ ևն ։ Իսկ յայլ հոլովս անուղղակի և հոլովակի նշանակին իրք ․ որպէս ունիմք մեկնել այժմ ։

Այս հոլով թէպէտ և փոփոխմամբ իւիք ոչ ձևանայ ․ բայց դասի ՚ի հոլովս վասն երկուց պատճառաց ․ Նախ՝ զի է իբր արմատ այլոց հոլովից ․ և երկրորդ՝ զի ՚ի յոգնակին փոփոխի ․ զո՛ր օրինակ ․ Հայք ․ անձինք ․ հիմունք ․ ևն ։

Սեռական կամ ստացական հոլովն է ․ յորում ո՛չ իրն ․ այլ իմն իրին զօրութեամբ նշանակի ․ թէ ազգ իցէ նորա ․ թէ տուն ․ և թէ այլ ինչ ․ որպէս յասելն ․ Մարդոյ ․ զօրութեամբ նշանակի իմն՝ որ մարդոյն է ․ որպիսի են միտք ․ խօսք ․ դէմք ․ ձեռք ․ զգեստ ․ և կամ այլ ինչ ․ որ ո՛չ է նոյն ինքն մարդն ․ այլ իմն նորա ։

Եւ վասն այսորիկ այս հոլով կոչի սեռական ․ զի ցուցանէ ․ թէ որո՛յ սեռի է այս իր ․ ը՟ թէ որո՛յ է ․ և կամ ո՛յր ստացուած ․ նմին իրի ստացական ևս կոչի ։

Եւ յայտնի է ․ զի երբեմն փոխանակ սեռականի վարեմք զստացական յարանուանս ․ զո՛ր օրինակ ․ Լոյս երկնային ․ պարծանք պօղոսեան ․ տուն Տէրունեան ․ բարբառ յովհաննեան ․ ևն ․ փոխանակ ասելոյ ․ լոյս երկնից ․ պարծանք պօղոսի ․ ևն ։

Տրական ․ ը՟ տուողական հոլովն է ․ յորում նշանակի իրն իբր այն ինչ՝ որում տալի է իմն ․ կամ առ որ հայելի է ․ կամ դիմելի ․ ևն ։

Այս հոլով կրկին է ․ վերջահոլով և նախադրիւ ։ Վեր-

ջահոլովն է, որոյ վերջաւորութիւնն միայն այլայլի՝ նման սեռականին. զոր օրինակ, Աչքի. դրան. դասու. ևն.

Որոյ յոգնակին լինի, Աչքայ. դրանց. դասուց. ևն.

Իսկ նախդրիւն է, որոյ սկզբնաւորութիւնն փոփոխի ՚ի ձեռն նախդրացս, ՚ի, յ, առ, առ՚ի, ց, ընդ. զոր օրինակ, ՚ի խունկ. յարուեստ. առ Թագաւոր. ցանձն. ընդ լեառն. ևն. Որոյ յոգնակին լինի, ՚ի խունկս. յարուեստս. առ Թագաւորս. ցանձինս. ընդ լերինս. ևն.

Գիտելի է, զի թէպէտ յոգնակի նախդրիւ տրականն զք տառն ուղղականին միշտ փոփոխէ ՚ի ս. զոր օրինակ, Նիւթք, ՚ի նիւթս. եղականք, յեղականս. Հարսանիք, ՚ի հարսանիս. ևն, բայց երբեմն և սակաւ ուրեք պահէ զայն. զոր օրինակ. * Մինչև ՚ի նիւթքն մարմնաւորք միայն էր նշանակք խորհրդոյ նոյա ||. Լամբրոն. ատեն.

Զսոյն պարտ է իմանալ ևս և զներգոյական և զհայցական հոլովից. որգոն, * Զոր օրինակ հերք ծնանին ՚ի գգալիս գլուխ, նոյնպէս և բանք ՚ի միտքն ||. Յն ՚ի միտսն. Լամբրոնացի. ՚ի մէկն. առղ. 68.

Այս կերպ տրականի և հայցականի յաճախ գտանի յընդունելութիւնս՝ յանցեալ ժամանակն. զոր օրինակ. * Ըստ աւետեաց մարգարէին՝ որ առ փրկեալքս արեամբ գառին ||. Յն առ փրկեալս. ՚ի Շնորհալւոյն. խա.

Հայցական հոլովն է, յորում նշանակի իրն իբր ենթակայ խնդրոյ, կամ իբր ենթակայ ներգործական գործողութեանց. և ձևանայ այսպէս. Զկողով. զպտուղ. ըզմատն. ևն. Որոյ յոգնակին լինի, Զկողովս. զպտուղս. զմատունս. ևն.

Այս հոլով բազում ուրեք զօրութեամբ ունի զ՚զ. և կոչի անորոշ հայցական. զի փոխանակ ասելոյ, զՃանապարհ. զյոյս. զոգի. զաջ. զվիշտ. զկարգս. զմարտս. ևն, ասեմք երբեմն, Ճանապարհ. յոյս. ոգի. աջ. վիշտ. կարգս. մարտս. ևն. զոր օրինակ, * Ցոյց ինձ Ճանապարհ, յոր գնացից ||. Սաղմոս. ճխբ. 8.

Այլ սակայն ՚ի գերանուանս ո՛չ է այսպէս. զի հայցա-

կան նորա միշտ դայեա ձեւանայ . զի ոչ լինի ասել , Յի-
շեա́ լա . այլ * Յիշեա́ զիս || . Ղուկ . իգ . 42 ։ Եւ ոչ
լինի ասել , Որո́ն որ որսայցէք , ըմբռնեսցէ ձեզ . այլ
* Որո́ն զոր որսայցէք , ըմբռնեսցէ զձեզ || . Խոր . է . 89 ։
Եւ ոչ լինի ասել , Այս ամ՛ և առաւել քան սոյն խօսէր .
այլ * Զայս ամ՛ և առաւել ք̄ զսոյն խօսէր || . Եղիշ . գ̄ ։
Ըստ այսմ ձևմ և վասն այլոց ։ Թէպէտ 'ի յալաբերա-
կանս՝ ուրեք ուրեք առանց դայե ևս դնի . զո́ր օրինակ ,
Զայն ինչ՝ որ ( ո̄ զոր ) բնութ̄ 'ի մեզ ոչ եդ , զնորին
և զկատարումն ոչ խնդրէ 'ի մէնջ || . Սարգ . ա̄ . պետ . 2 ։

Բայց այս չէ 'ի յաճախ գործածութեան ։

Բացառական , կամ ըստ հնոց՝ առաքական հոլովն է ,
յորում նշանակի իրն իբր այն ինչ , յորմէ ելանէ իմն ,
կամ ծագէ , կամ 'ի բաց բառնի , և կամ առաքի . զո́ր
օրինակ , 'Ի սենեկէ . 'ի բերանոյ . 'ի գայթակղութենէ .
եա̄ ։ Որոյ յոգնակին լինի , 'Ի սենեկաց . 'ի բերանոց . 'ի
գայթագղութեանց . և այլն ։

Այլ գիտելի է , զի յորժամ մի և նոյն անունն 'ի բաց-
առական և 'ի տրական հոլովն միանգամայն 'ի գործ ածի ,
նախդիրն բացառականին , կամ տրականին՝ իբր 'ի բազում
ներգործութեամբ ոչ դնի . զո́ր օրինակ , * Արար հալա-
ծական քաղաքէ 'ի քաղաք || . Մծբ . ձա . ծբ̄ ։

Այլ ուրեք ուրեք դնի ներգործութ̄ ևս . ո̄ր , * Հալա-
ծեալ շրջէյայ 'ի քաղաքէ 'ի քաղաք || . Յովհ . հա̄ ։

Պատմական , ո̄ ճառողական հոլովն է , յորում նշանա-
կի իրն իբր ենթակայ պատմելոյ , կամ ասելոյ , և կամ
առնելոյ ինչ վասն նորա . զո́ր օրինակ , Զսենեկէ . զփայտէ .
զծագմանէ . եա̄ ։ Որոյ յոգնակին լինի , Զսենեկաց . զփայ-
տից . զծագմանց . եա̄ ։

Գործիական հոլովն է , յորում նշանակի իրն իբր միջ-
նորդ՝ կամ գործի , 'ի ձեռն որոյ առնեմք ինչ . զո́ր օրի-
նակ , Սուսերաւ . գլխով . եղնգամբ . եա̄ ։ Որոյ յոգնակին
լինի , Սուսերօք . գլխովք . եղնգամբք . եա̄ ։

Պարառական հոլովն է , յորում նշանակի իրն իբր պար-

առեալ իւիք, կամ իբր ենթակայ այնպիսի գործողութեանց, որք ցուցանեն զփախչիլն, կամ զպարառնուլն, և զայլ սոյնպիսիս. զոր օրինակ, Զքաղաքաւ. զսեղանովն. զտամբ. եւն. Որոց յոգնակին լինի, Զքաղաքօք. զսեղանովք. զտամբք. և այլն.

Ներգոյական հոլովն է, յորում նշանակի իրն իբր ենթակայ մնալոյ, կամ կալոյ, և կամ լինելոյ իրիք ՚ի նմա. զոր օրինակ, ՚ի տապանակի. յատենի. ՚ի լերին. եւն. Որոց յոգնակին լինի, ՚ի տապանակս. յատեանս. ՚ի լերինս. եւն.

Այլ գիտելի է, զի նաև եզակի նախդրիւ տրականն փոխանակ ներգոյականի վարի բազում ուրեք՝ գրեթէ յամ հոլովմունս. որգոն, ՚ի բանի, կամ ՚ի Բան. ՚ի քաղաքի, կամ ՚ի Քաղաք. եւն. ըստ որում եղաք յառաջին մասին. յորոյ ապացոյց՝ դիցուք զօրինակս զայս. * Յերկիւղ տեառն յոյս զօրութ || . Ֆ յերկիւղի տն. Առակ. ԺԴ. 26.

Կոչական, կամ ըստ դաւթի՝ հոչական հոլովն է, յորում նշանակի իրն իբրև կոչեցեալ. զոր օրինակ, Ո՛վ ազգ անհաւատ. ո՜վ կին դու. ո՜ տէր. ո՜ արք. ո՜ ոսկերք. եւն. Այս հոլով բազում անգամ առանց կոչական մասնկանց եւս ձևանայ. զոր օրինակ, * Ո՛րդեակ պահեա՛ զբանս իմ || . փոխանակ ասելոյ, ո՛վ որդեակ. Առակ. Է. 1.

Գիտելի է եւս, զի այս հոլով Թէպէտ ըստ հնչման ձայնի զնոյն սկզբնաւորութիւն և վերջաւորութիւն ունի՝ զոր ունի ուղղականն, բայց ՚ի յատուկ անուանս երբեմն վերջաւորի ՚ի է. զոր օրինակ, * Քաջալերեա՛ պօղէ || . փոխանակ ասելոյ, պօղոս. Գործ. ԻԳ. 11. * Ղա՛զարէ՝ արի եկ արտաքս || . Յովհ. ԺԱ. 43. * Զա՛քէ՝ փութա՛ էջ այտի || . Ղուկ. ԺԹ. 5. * Փախի՛ր մա՛րդկանէ || . Վարք հարց. ԻԷ. 17. * Ո՛վ պետրէ՝ լո՛ւր ձայնի || . Շար. արևելք. * Ո՛վ տիմոթէէ՝ պահեա՛ զաւանդն || . Ա. Տիմ. Զ. 20.

# ԳԼՈՒԽ· ԺԱ·

## Յաղագս Հոլովմանց անուանց :

Հոլովմունք անուանց են պէսպիսութիւնք վերջաւորութեանց նոցա 'ի սեռական և 'ի գործիական հոլովս միանգամայն : Իբր զի այն անուանք, որք ըստ սեռականին միանգամայն և ըստ գործիականին՝ այսպիսի ինչ վերջաւորութեամբք յանգին, կայուցանեն զայս ինչ տեսակ հոլովման. որգոն, Բառ, բառի, բառիւ : Եւ որք այնպիսի ինչ վերջաւորութեամբք յանգին, կայուցանեն զայն ինչ տեսակ հոլովման. որգոն, Աղբիւր, աղբեր, աղբերբ :

Եւ քանզի այսպիսի վերջաւորութիւնք լինին առ հասարակ քսան օրինակաւ, հոլովմունք անուանց ևս համարին քսան. որոց չորեքտասանքն ասին հասարակք, և վեցքն յատուկք, կամ մասնաւորք :

Հասարակքն են այս, Բառ, ի, իւ. Քաղաք, ի, աւ. Գետ, ոյ, ով. Եկեղեցի, ւոյ, եաւ. Աղեղն, ան, ամբ. Նեղութիւն, եան, եամբ. Գառն, ին, ամբ. Զգեստ, ու, ու. Փոքր, ու, ումբ. Աղբիւր, եր, երբ. Աստղ, եղ, եղբ. Տրդատ, այ, աւ. Եսայի, եայ, եաւ. Հայաստանեայք, եայց, եօք :

Սոքա եթէ միայն ըստ վերջաւորութեան եզակի սեռականացն նկատեսցին, թուին ութն՝ ըստ ութն յանգիցս, ի. ոյ. ան. ու. այ. ին. եղ. եր. որգոն, Բառի, կամ քաղաքի. գետոյ, կամ եկեղեցւոյ. աղեղան, կամ նեղութեան. զգեստու, կամ փոքու. տրդատայ, կամ եսայեայ. գառին. աստեղ. աղբեր :

Այսոքիկ հոլովմունք կոչին հասարակք, զի իւրաքանչիւր նոյա՝ բազում անուանց հասարակ է. իբր զի բազում անուանք հոլովին ըստ օրինակի նոյա :

Իսկ յատուկք են սոքին. Տէր, տն, տերամբ. Հայր,

Հօր, հարբ · Քուր, քեռ, քերբ · Կին, կնոջ, կնաւ·
Գիւղ, գեղջ, գիւղիւ · Օր, աւուր, աւուրբ ։

Սոքա ասին յատուկ, զի ըստ օրինակի իւրաքանչիւրոց ՝ի սոյանէ՝ մի կ̄ երկու անուան հոլովի, և կ̄ բաղդեալքն այնր անուան · ո՛չ եդաք յառաջին մասին ։

Յայսոսիկ հոլովմանս բովանդակին ամ̄ անուանք լեզուիս հայոց, թէ անեզականք իցեն, և թէ անյոգնականք · թէ յատուկք իցեն, և թէ ընդհանուրք · ո՛չ եթէ ամենեքին ընդ ամենեքումբք, այլ՝ ոմանք ընդ առաջնով · որ̄,
Ամբոխ, ամբոխի, իւ · Բարձ, բարձի, իւ · ևն̄ ։
Ոմանք ը̄ երկրորդիւ · որ̄, Ազգ, ազգի, աւ · ամ, ամի, ամաւ · ևն̄ ։ ըստ այսմ և այլք ընդ այլովք ։ Եւ բազումք ես ընդ երկոքումբք · իբր զի ոմանք հոլովին միանգամայն ընդ առաջնով և ընդ այլով · որ̄ ·
Ակօս, ակօսի, իւ, ից, իւք ։ կ̄ ակօս, ակօսի, աւ, աց, օք ։
Աղոխ, աղոխի, իւ, ից, իւք ։ կ̄ աղոխ, աղոխոյ, ով, ոց, ովք ։
Ծախ, ծախու, ու, ուց, ուք ։ կ̄ ծախ, ի, իւ, ից, իւք · ևն̄ ։
Ոմանք ես ՝ի հոլովս ինչ ը̄ առաջնով, և ՝ի հոլովս ինչ ը̄ այլովք · որ̄, Հասկ, ի, իւ, ից, օք ։ Քար, ի, իւ, կ̄ ամբ · քարինք, րանց, րամբք · ևն̄ ։

Սոյնպէս խմն և վասն այլոց ամ̄ն · որոց քաջ կարես հասու լինել՝ ո՛չ կանոնօք, և ո՛չ օրինակօք · այլ՝ յաճախ ընթերցմամբ գրոց, և ՝ի բառարանի դեգերելով · զի ՝ի նմա եդեալ կան ը̄ կարի հոլովմունք ամ̄ անուանց ։

Այլ ասա գիտելի է, զի կան անուանք ինչ՝ որք ՝ի հոլովելն ընդ զանազան հոլովմամբ՝ փոխեն զնշանակութիւն իւրեանց · որպէս Անուանս Գայլ՝ ՝ի հոլովելն՝ ի, իւ, ից, իւք, նշանակէ զքէշլէմչէ · որ է գործի ինչ տանջանաց ։ Իսկ ՝ի հոլովելն՝ գայլոյ, ով, և այլն, նշանակէ զլուրտ գազանն ։

Անուանս Փող՝ ՝ի հոլովելն՝ ի, իւ, ից, իւք, նշանակէ ըզխուշափողն ։ Իսկ ՝ի հոլովելն՝ փողոյ, փողով, ևն̄, նշանակէ զփօռու և զդուռնայ · ես և զդրամն ։

Անուանս Գեղ՝ ՝ի հոլովելն՝ գեղոյ, ով, ոց, ովք, նշանա-

կէ զգեղեցկութի ։ Իսկ ՚ի հոլովին՝ գեղի , իւ , իւյ , իւք , նշանակէ զգիւղ ։

Ընունս որթ՝ ՚ի հոլովին ոյ , ով , ոյ , ովք , նշանակէ զտունկ խաղողոյ · որ է ասմայ ։ Իսկ ՚ի հոլովին , ու , ու , ույ , ուք , կամ օք , նշանակէ զծնունդ կովու · որ է տասնայ ։

Ընունս օդ՝ ՚ի հոլովին՝ ոյ , ով , ոյ , կամ իյ , ովք , նշանակէ զմին ՚ի չորից տարերաց · որ է հաւայ ։ Իսկ ՚ի հոլովին՝ ի , իւ , իյ , իւք , նշանակէ զագանելիս ոտից ։

Ըստ այսմ են և այլ քանի մի անուանք ։

Եւ եւս գիտելի է , զի գտանին բազում անուանք անձականք , որք ո՛չ փակին ընդ իւիք հոլովմամբ · այլ՝ նախադրիւ միայն հոլովին · ո՛րգոն , Ազգազուն · բնիկ · գիճին · դիպուկ · զուրկ · խիտ · համակ · յահուր · նկարէն · ուրախ · պատիր · տրտում · փառայի · ևն ։ Ըստ այսմ և բարդեալք բազումք յոյժ · ո՛րգոն , Աճիւնաճիւղ · բոյաճաճանչ · գաղտնաշշուկ · դիւասարսուռ · երազապատում · զուգագուարճ · ընդունայնաթօղ · Թեթևախորտիկ · ժամահամբոյր · իմաստաճեմ · լայնատարր · խուարասնունդ · ծիրանածուէն · կամարածածուկ · հրաշաղննին · ձիախըրոխտ · ղամբարախայլ · ճամարտակաձայն · մահահրաւէր · յախուռնախօս · նորանշոյլ · շնորհաշաւիղ · որոգայթադիր · չորեքկարգեան · պարունակաձև · ջրահեղձոյց · սաղարթափթիթ · վսեմախառն · տիեզերասաստ · ցօղատարափ · փառակենդարդ · քարայատուսաստ · քրտնակնդրուկ · օձաջամբ · օրակշիռ ։ Եւ այլք բազումք ։

Ըստ այսմ են և բազում անուանք գոյականք , որք նախադրիւ միայն հոլովին · ո՛րգոն , Ակճիռ · ամբոկ · այց · աւեր · դատ · դերև · երկեղուկ · երր · Թասալ · խանձ · խիրտ · ծունր · կոխան · կոչ · հեճուկ · հիռ · ճահ · ճեմ · յագ · նինջ · ուրասա · պատկառ · պայթիւն · վայթիւն · վար · ցիր · սխալ · ևն ։ Որոց բազումք ընդ բայս յարելով միայն վարին · ևբ , * Ընձնագեղայն պարոնից յոխնճութեան կալոն || · Խորէն · Գ · 65 ։

Են ևս անուանք ինչ՝ որք իբր 'ի բաղումն և ոչ իսկ նախադրիւ հոլովին, այլ ընդ բայս յարելով վարին · որպիսի են սոքին · Անփոյթ · գոհ · զանց · ընդհատ · ընդոստ · ժամանն · խոստովան · հասու · նկուն · ևն · զր ·
* Անփոյթ առնել ծանուցին՝ համանգամայնին է 'ի բայ բարձումն || · Յովհաննէս Ոսկեբերան · Է ։

Բազում անուանք ևս կան՝ որք թէպէտ և տիրապէս հոլովին, բայց բազում անգամ՝ և ընդ բայս յարելով վարին իբր մի բայ · որպիսի են սոքին · Ակն · անդորր · ապաստան · բուռն · գլուխ · դէմ · երես · հոգ · ճարակ · ոգի · ոտք · պայքար · փոյթ · և այլք բազումք · զր ·
* Որ ոչ ձեռն ածէ զերեսս անօրինաց յանդիմանել, չէ գովելի || · 'Ի Գիրս առակաց · ԻԲ · 21 ։

'Ի վերայ հոլովից անուանց, և հոլովմանց նոցին՝ զայլ ինչ հարկաւոր գիտելի ոչ ունիմք աստ գրել ։ Իսկ 'ի վերայ միջակաց անուանց, որք են՝ հանրականք, մասնականք, հարցականք, ևն, կան քանի մի գիտելիք · զորոյք ոչ կամիմք զանց առնել · վասն որոյ,

Գիտելի է նախ՝ զի հանրական անունս ամենայն՝ որով հետև ունի զնշանակութիւն բազմաւորական, երբեմն եզական ձայնիւ իբր յոգնական վարի · զր, * Ամենայն երևոյթք են || · Մարգարէ Վերտ · 'Ի Ճենն · յոհ · 4 ։

Իսկ երբեմն՝ և սակաւ ուրեք յոգնական ձայնիւ իբր եզական վարի · յորմէ և պարտ իսկ է զգուշանալ · զր ·
* Ամենայնք եկաց է և ստուեր || · Մարգ · ա · յոհն · 4 ։

Գիտելի է երկրորդ, զի մասնական անուանց եզակի տրական՝ դնի երբեմն փոխանակ սեռականի · զր · * Եւ Ա ձեռամբ նուաճէ առանց ձեռն աշխատութեան || · փոխանակ ասելոյ, առանց իրիք · Յովհ · Խոր ։

Ըստ այսմ լինի երբեմն և տրականին հարցական անուանս ... · զր, * Վասն որոյ արդեօք աշխատեցայ այսպէս || ·

Ճառընտ ։

Եւ ներհակ այսմ՝ ուրեք ուրեք սեռականն մասնական անուանց դնի 'ի տեղի տրականի · թէպէտ և այս չէ այն-

չափ 'ի սովորութեան ։ որ ՝ * Զի ոչ եթէ մարդոյ ու- րուք տալոյ է զհամարն || · փոխանակ ասելոյ ՝ մարդոյ ու- մեք ։ Սարգիս ։ Ա ։ ղեւ ։ 6 ։

Դարձեալ և եզակի բացառականն մասնական անուանս են՝ ուրեք ուրեք փոխանակ դնելոյ յոգնակին՝ դնի յեզակին ։ որ ՝ Ճշդիւ պահանջէ իբր 'ի պարտականէ ընկերէ || · Խոս- րով ։ 'Ի մեկնութեան ժամագրոց ։

Եւ ևս եզակի ուղղականն մասնական անուանս ընդունո- ղաց ՝ դնի երբեմն՝ մանաւանդ թէ բազում անգամ՝ 'ի տեղի սեռականի ։ որ ՝ Մարմինք ընդունողաց սուրբ սե- ղան || · ի իւրաքանչիւրոց ։ Եղիշէ ։ Է ։

Եւ երբեմն 'ի տեղի տրականի ։ որ ։ * Շնորհէ ընդունո- ղաց բարւոք զկենդանականն || · ի իւրաքանչիւրում ։ Մովսէ- սէ Վերծանողն ։

Իսկ երբեմն 'ի տեղի բառիս ընդունողաց՝ դնին կրկ- նակ բառքս՝ մի մի ։ մէն մի ։ այր այր ։ եւն ։ որ ՝ * Տես զկնորդ ընդ մի անգամ 'ի թիւ արկեալ՝ բացայայտէ || · Նարե ։
* Բաշխէր մոյ մոյ 'ի նոյանէ զգանձսն || · Խորեն ։ Է ։ 42 ։
* Տալ ռոճիկ արքայի և տան նորա ընդ մի ամիս 'ի տար- ւոջ || · ի յիւրաքանչիւր ամիսս ։ Գ ։ Թագ ։ Դ ։ 7 ։
* Զայր այր յիւրաքանչիւր գահ հրամայէր մատուցանել || · Գ ։ Մակ ։ Ե ։ 8 ։
* Զտուն տուն զքաջութիւն պատմէր նոցա || · Եղիշէ ։ Գւ ։ Է ։

Երբեմն ևս 'ի միաւորն դնին ։ որ ՝ * Պահապանս դրան արքունի կարգէ զչորսս՝ ընդ մի ընդունողաց՝ բնուրովք վառելովք || · Խորեն ։ Հռոմ ։ Է ։ պրակ ։ 7 ։

Գիտելի է երրորդ ՝ զի բազում անգամ մասնական և հարցական անուանք յարին ընդ միմեանս ՝ և վարին իբր զմի հարցական անուն ։ որ ՝ * Ո՞վ ոք գտաւ ինքեան միա- սակար ՝ և ոչ ստգտաւ || · Նարեկ ։ ԽԲ ։

Բազում անգամ ևս մասնական անուանք յարին յանուանդ ՝ Մի ։ որ ։ ով ։ ո ։ այլ ։ ոչ ։ Ճողամ ։ Գրանշամ ։ ամ ։ եւն ։ և վարին նոքօք հանդերձ իբր մի անուն ։ որ ։ * Ինչ մի կա-

մեր աւելի պաշտօն 'ի տեղի անդր յուսյանել || . Ա . Մա-կաբ . Ա . 6 :

Գիտելի է չորրորդ , զի երբեմն փոխանակ մասնական անուանց դնի , է՛ որ . էր՛ որ . էն՛ որ . գր , * Է՛ որ պահէ 'ի հացէ և 'ի ջրոյ , մինչև քաղցիցի և ծարաւեսցի . և է՛ որ պահէ , զի եղիցի կատարեալ կուսութեամբ . . . է՛ որ պահէ , զի դիցէ զդուռն բերանոյ իւրոյ . . . և է՛ որ պահէ 'ի սրտմտութենէ || . Մծբ . Դ : Ուր բառդ է որ՛ եղեալ է փոխանակ մասնական անուանս ոմն . որպէս թէ ասէր . ոմն պահէ 'ի հացէ , ոմն պահէ , եւն :

Երբեմն և դնին բառքս՛ այլ , և կէս . գր , * Ումեմն 'ի հոգւոյն տուեալ է բան իմաստութեան . այլում բան գիտութեան ըստ նմին հոգւոյ . միւսումն հաւատք նովին հոգւով . այլում շնորհք բժշկութեանց նովին հոգւով . այլում յաջողութիւնք զօրութեանց . այլում մարգարէութիւն եւն || . Ա . Կոր . ԺԲ . 8 : Ուր բառս այլ՛ եղեալ է փոխանակ մասնական անուան . որպէս թէ ասէր . ումեմն տուեալ է բան գիտութեան . ումեմն շնորհք , եւն :

* Կէսք դաժանք 'ի գործելեացն՝ որպէս զմուռսն . կէսք անուշահոտ՝ իբրև զխունկն . կէսք յանկատեսակք՝ որպէս ծաղիկք || . Նար . Երգ : Ուր բառդ կէսք՛ եղեալ է փոխանակ մասնական անուան . որպէս թէ ասէր . ոմանք 'ի գործելի իրաց դաժանք են . ոմանք անուշահոտք . ոմանք յանկալիք :

Ընդ մասնական անուանս թուին և բառքս՝ ինչ և իցէ , կամ զինչ և իցէ . որ և իցէ , կամ ո և իցէ : և երբեմն և բառս՝ որ . գր , * Մի՛ ոք յեղբարց տրտնջօղ լինիցի զառաջնորդէ իւրմէ յընչինչէք պատճառս տրտնջման || . Կանոնաւոր . Ընդհանր :

# ԳԼՈՒԽ · ԺԲ ։

## Յաղագս Դերանուանց ։

### Թէ զի՞նչ ըստ սահմանադրութեան իցէ դերանունն ։

Դերանունն է մասն բանի՝ որ փոխանակ անուան դնի, և առ որոշեալ դէմս վերաբերի · որպէս՝ Դու · իմ · այն · որ · ևն · զր, * իմ կամքս է այն, զոր դու սիրես || · Ղամբ · առաջ · ՃԾԷ · 30 ։

Ուր դերանուանքս՝ այն · որ · դու · իմ, եդեալ են փոխանակ անուանց · այնն փոխանակ անուանն՝ որ ցուցանէ զկամեցեալ իրն ։ Որն փոխանակ անուանն՝ որ ցուցանէ զսիրեցեալ իրն ։ Իսկ դուն՝ փոխանակ անուանս Թդ ։ Այսպէս և իմն եդեալ է ՚ի վերայ անուանս կամք՝ ՚ի տեղի անուան կամեցողին · իսկ յօդս ս՝ զկամմն որոշեալ է առաջին դէմն ։ Յորս որպէս տեսանի՝ զերկուս պաշտօնս վարէ դերանունն · Մի՝ զի փոխանակ անուան դնի · ըստ որոյ և կոչի դերանուն · դր փոխանակ անուան · քանզի դեր ն փոխ լսի · յոր միտս ասեմք, դերպաշտօնատար · դերասան · դերանմանել · ևն ։ Իսկ երկրորդ՝ զի ցուցանէ, Թէ յոր դէմս վերաբերի անունն՝ որոյ փոխան դնի · և վասն այսորիկ ասացաք ՚ի սահմանին, Թէ դերանունն առ որոշեալ դէմս վերաբերի · զորմէ ունիմք ևս խօսել ՚ի յառաջորդ գլուխդ ։

Դերանունն է հնգատեսակ · Դիմական, ցուցական, ըստացական, յարաբերական, և դիմորոշական ։

Դիմական դերանունն է, որ գոյականապէս և որոշակի նշանակէ զդէմս իրին · որպիսի են սոքա · Ես · դու · ինքն · իւր, իւրեան ։ Ընդ որս դասին և սոքին · միմեանց և իրերաց · որք պակասին ՚ի յուղղականին ։

Ցուցական դերանունն է, որ փոխանակ անուան եդեալ՝ իբր յանդիմանս ցուցանէ զայն, զորմէ է բանն · որպիսի են

տողս . Սա , դա , նա . այս , այդ , այն . սոյն , դոյն , նոյն :

Ստացական դերանուն է , որ անձականապէս նշանակէ զիմն որոշեալ դիմաց . որպիսի են տողքն . իմ . քոյ . մեր . ձեր . իւր , իւրոյ : Զի տողս ( յերրորդ դէմս գոլով ) նշանակեն զայն ինչ , որ է այսր կամ այնր դիմի , թէ մարմնին իցէ այն , թէ հանդերձի . և թէ գործք . եւն . այլն , յասելն , * Կորուսանէ զմարմին իւր այր անողորմ || , ( Առակ . ԺԱ . 17 . ) դերանունս իւր՝ ցուցանէ զիմն երրորդ դիմի , զորմէ է այս բան : Եւ յասելն , * Տուր ՚ի խրատ զախտ քոյ || . ( Առակ . ԺԹ . 12 . ) դերանունս քոյ՝ ցուցանէ զիմն երկրորդ դիմի , առ որ է այս բան :

Եւ որպէս յայտնի տեսանես , այսոքիկ դերանունք կազմին ՚ի սեռականաց էական դերանուանցս , Ես , դու , մեք , դուք . զի սեռական սոցա լինի , իմ , քո , մեր , ձեր : Եւ վասն այսորիկ բազում անգամ նաև սեռական հոլովք ցուցական դերանուանցս , Սա , դա , նա , յաւելմամբ յ տառին իբրև ստացական վարին . որգոն , Սորայ կամ սորայն , դորայ կամ դորայն , նորայ կամ նորայն . սոցայն , դոցայն , նոցայն . որոց յոգնականն լինի , Սորայք , դորայք , նորայք . սոցայք , դոցայք , նոցայք . եւն . այլն , * Բոլորովին ըստ նորայոյն փառաւորեցաւ բանի || . ՚ի Գեր . Նիւսայց :

Ցարաբերական դերանուն է , որ ՚ի կարգս բանի՝ զօրութ յառաջ բերեալ փոխանորդութեան կամ զյաջորդ բառն դնի ՚ի տեղի նորա , յոր հոլով և պահանջեսցէ բանն . և է բառս այս՝ որ . եւն . այլն , * Երանեալ է այր , որ եգիտ զիմաստութիւն || . Առակ . Գ . 13 : Ուր բառս որ՝ եդեալ է ՚ի տեղի անուանս՝ այր :

Սա դերանուն ասի , ոչ զի ներգործութեամբ առ որոշեալ դէմս յարակայ . այլ զի փոխանակ անուան դնի՝ յոր դէմս և իցէ անուն . ուստի և ասի զանանէ , թէ զօրութեամբ ցուցանէ զդէմսն : Այլ յաղագս այսր դերանուան բազում ինչ ունիմք ասել յերրորդ մասին . Գլ . ԾԷ :

Դիմորոշականքն են երեքին տառքս այսոքիկ ՝ ս · դ · ն · որք իբր յօդք լինին յարելով ՝ի մասունս բանի՝ որոշեն զդէմն նոյա · զբ ՝ * Իմ կամքս ՝ի քո Ճշմարիտ Ճանապարհիդ սերն է || · Ղոմէ · ռող · ճժը · 30 ։

Սոքա թէպէտ ընդ դերանուանս դասին ՝ բայց չեն յատկապէս դերանուն · զի ոչ դնին փոխանակ անուան · բայց քանզի որոշեն զդէմն բանից ՝ և լինին ևս սկզբունք ՝ յորոց բղխեն ցուցական դերանունքս ՝ Սա ՝ դա ՝ նա · սոյն ՝ դոյն ՝ նոյն · այս ՝ այդ ՝ այն ՝ վասն այսորիկ առ դերանուանս վերաբերին ։

## ԳԼՈՒԽ · ԺԳ ։

### Յաղագս Պարագայից դերանուանց ։

Պարագայք դերանուանց են հինգ · Տեսակ ՝ դէմք ՝ թիւ ՝ հոլով ՝ և հոլովումն ։ Ոմանք եօթն դընեն ՝ յաւելեալ ՝ի սոսա զսեռ և զձև ։ Բայց յայտ է՝ թէ ՝ի դերանուանս սեռ ամենևին ոչ գտանի · այլ առ առաւելն՝ կարէ միայն ենթադրել ըստ սեռի այնր անուան ՝ որոյ փոխան դնի ՝ կամ ընդ որում վարի · զբ ՝ յասելն ՝ * Կին դու՝ հաւատա ինձ || ՝ ( Յովհ · դ · 21 · ) դուն ենթադրէ փոխանակ իգի · զի ցուցանէ՝ զէգ նշանակել՝ վասն յարելոյ յանուան իգական ։ Եւ յասելն ՝ * Ա՛յր դու՝ չգիտեմ || ՝ ( Ղուկ · ԻԲ · 60 · ) դուն ենթադրէ փոխանակ արուի ։

Սոյնպէս և ստացական դերանունք ՝ի յարիլն ՝ի սեռաւոր անուանս՝ ըստ այսմ և եթ կարեն ենթադրել · զբ · * Ընդ երկնեայ զքեզ մայր քո || · Երգ · ը · 5 ։ Ուր դերանունս քոյ՝ իգականապէս ենթադրէ՝ վասն լինելոյ ածական իգական անուանս՝ մայր ։ Բայց այսպիսի ենթադրութիւնք ոչ կացուցանեն զսեռ մասանց բանի · զի ոչ ինքնին այնպէս նշանակեն ՝ այլ վասն յարելոյ յայլս ։

Նմանապէս և ձև դերանուանց ոչ գոյ · զի դերանունք

՚ի բարդիլն ընդ այլ մասունս բանի՝ ոչ ևս միայն դերա-նուն · այլ փոխադրին յանուն · որզոն ՚ Իւրակերտ · Նոյնա-բան · Նոյնահրաշ · ինքնակալ · ինքնագոյակից · քոյնա-շունչ · եւն · Որք ո՛չ վարին իբր դերանուն · այլ իբր անուն · իսկ առ ՚ի ունիլ դերանուան զձև՝ հարկ է ՚ի բար-դիլն իբր դերանուն վարիլ ։

Այսպէս և բառքս ՚ Երկաքանչիւր ՚ իւրաքանչիւր ՚ կամ իւրաքանչիւրոք ՚ որոք ՚ որինչ ՚ եւն · ( զորս ոմանք ի դեր-անուանս դասեն իբր զբայթս ) ՚ ո՛չ առ դերանուն ՚ այլ առ մասնական անուանս վերաբերին · զի իբր մասնական ա-նուն վարին · որպէս և եդաք ՚ի վերոյ ։ Ուրեմն միայն հինգ պարագայք և եթ դերանուանց · այ ՚ Տեսակ ՚ դէմք ՚ Թիւ ՚ հոլով ՚ և հոլովումն ։

Տեսակք դերանուանց են երկու ՚ որպէս և անուանցն · այ նախաստիպք ՚ և ածանցականք ։ Նախաստիպք են սոքին · Իմ · քոյ · մեր · ձեր · նոյն · իւր · ինքն ։ և ևս՝ սորա · դորա · նորա · եւն ։

Իսկ ածանցականք են նոյն նախաստիպ դերանուանք վերա-ծեալք յայլ իմն եղանակ նշանակելոյ՝ ՚ի ձեւն աննշան մասնկանցս ՚ ային ՚ ին ՚ ական ՚ անոյ ՚ ուր ՚ ութեան · և ձևանան այսպէս ։

Ային · Մերային · ձերային · իւրային · իւրեանցային · սորային · սոցային · դորային · դոցային · նորային · նոցային · զր ՚ * Մերայէն կերպիւ ՚ի վերայ խաչին տեսաւ || · Խոս-րով · ՚ի Մեկն · Ժամագրքի ։

Ին · Մերոյին · իւրոյին · քոյին · ձերոյին · իմոյին · զր · * Տայէ մեզ տէր զխաղաղութիւն ՚ի մերմեանց ՚ և ՚ի մե-րոյէն իսկ խորհրդոյ || · Խոսրով ։

Այսպիսի դերանուանք առ ստացական վերաբերին · և ստացականք կոչին ։ Իսկ հետագայքդ ըստ իմիք առ ան-ուանս վերաբերին · և ըստ իմիք առ ստացական դերան-ուանս · ( զորս և չէ պարտ յաճախել ) ։

Ական · Ինքնական · իւրական · իմոյական · եւն · զր · * Յետ այսորիկ յինքնականն պատւին վերադարձել || · Ըմբ ·

Աշնոյ · Այսանակ · գր ՝ * Կարաւան թշնամեաց՝ տյանեալ ձաղանօք գնացեալ՝ մտին ՚ի դուռն քաղաք ||· Յովհ · հա ։
Աշտար · Ինքնաւոր · գր ՝ * Ոնի մշտածին ընտանոր ամարօրադիր բոյս բիւրաստեղունս ||· Նոր · գն ։
Ոսթիան · Ինքնութիւն · Նոյնութիւն · նմն · գր ՝ Տրպաւորէ չընտնութե փառաց իւրոյ ||· Լամբ · ՚ի մէկն · պատ ։

Դէմք դերանուանց են յայտարարութիւնք որոշեալ անձանց ՝ կամ այնց՝ որք իբր դիմաւոր նկատին ՝ և իբր դիմօք որոշին · և են երեակ · առաջին ՝ երկրորդ ՝ և երրորդ ։

Առաջին դէմքն յայտ առնէ զայն ՝ յորմէ է բանն · կամ որ խօսի · որգոն ՝ Ես · մեք ։

Երկրորդ դէմքն յայտ առնէ զայն ՝ առ որ է բանն · կամ ընդ ում լինի խօսիլ · որգոն ՝ Դու · դուք ։

Երրորդ դէմքն յայտ առնէ զայն ՝ զորմէ է բանն · կամ յաղագս որոյ լինի խօսիլ · որգոն ՝ Նա · նոքա · նոր ։ Արդ այս երրորդ դէմն վերաբերին և այլ ամ դերանունք · թէ ստացականք · որգոն ՝ Իմ · մեր · քոյ · ձեր · նոր ՝ այլ ։ և թէ ցուցականք · որգոն ՝ Սա · դա · այս · այդ · այն · սոյն · դոյն · նոյն ։ զի սոքա ամենեքին յայտ առնեն զայն ինչ ՝ զորմէ լինի բան ։ Եւ սակայն համեմատութեամբ միմեանց՝ ՚ի սոսա ևս կան որոշմունք երից դիմաց · զի ՚ի ստացականս՝ ոմանք նկատին ըստ առաջին դիմաց · որգոն ՝ իմ · մեր · իմոյին · մերոյին · նմն ։ վասն զի սոքա ցուցանեն զայն ինչ ՝ որ է առաջնոյ դիմի ։ Ոմանք նկատին ըստ երկրորդ դիմաց · որգոն ՝ քոյ · ձեր · քոյին · ձերոյին · նմն ։ զի սոքա ցուցանեն զայն ինչ ՝ որ է երկրորդ դիմի ։ Եւ ոմանք նկատին ըստ երրորդ դիմաց · որգոն ՝ նոր · նորային · նմն ։ զի սոքա ցուցանեն զայն ինչ ՝ որ է երրորդ դիմի ։

Նոյնպէս և ՚ի ցուցականս համեմատութեամբ միմեանց՝ ոմանք նկատին իբր առաջին ՝ կամ իբր մօտաւոր · որգոն ՝ սա · այս · սոյն ։ Ոմանք նկատին իբր երկրորդ ՝ կամ իբր միջին մօտաւորին · որգոն ՝ դա · այդ · դոյն ։ Եւ ոմանք

նկատին իբր երրորդ ՝ կամ իբր հեռաւոր · որգոն ՝ Նա · այն · նոյն ։

Այլ գիտելի է ՝ զի դերանունս ինքն՝ յորժամ առանձինն վարի ՝ թէպէտ յերրորդ դէմս վերաբերի ՝ սակայն յորժամ ընդ դերանունս յարի ՝ կարէ վերաբերիլ յառաջին և յերկրորդ դէմս ես · քո ՝ * Ես ինքն սպանի զնա || · Վարք հարց · Գլ · ԺԵ ։

Դու ինքն խառնեցար ՚ի սոյն մաքրութի || · Նոյն · ԻԷ ։

Թիւք դերանուանց են երկու · եզական ՝ և յոգնական ։ Զի որ իբրև զմի նշանակէ ՝ ասի եզական ՝ թէ միոյ դիմի իցէ ՝ և թէ բազմաց · որգոն ՝ Ես · դու · իմ · մեր · ձեր · ևն ։ Իսկ որ իբրև զբազում դիմաւորս նշանակէ ՝ ասի յոգնական · որգոն ՝ Մեք · դուք · մերք · իմք · և այլն ։

Հոլովք դերանուանց են տասնապատիկ փոփոխմամբ մի և նոյն դերանուան՝ ըստ օրինակի անուանց · որոց և բազմաց կոչականքն պակասին · ըստ որում եդաք յառաջին մասին ։

Հոլովմունք դերանուանց են պէսպիսութիւնք հոլովից նոցա · որպէս և անուանցն · ըստ որում յայտ է յեդելոց յառաջին մասին անդ ։

Այլ գիտելի է նախ ՝ զի ցուցական դերանունքս՝ Սոյն ՝ դոյն ՝ նոյն՝ նախադրիւ միայն հոլովին · իսկ յայլ հոլովսն լրանան ՚ի ցուցական դերանունս ՝ Սա ՝ դա ՝ նա ՝ ՚ի հոլովիլ նոցա՝ Սա ՝ սորին · դա ՝ դորին · ևն · որպէս եդաք յառաջին մասին ։

Սոյնպէս և վաղնջական դերանունքս՝ Սէ ՝ դէ ՝ նէ ՝ միայն նախադրիւ հոլովին · թէպէտ և այժմ չեն ՚ի գործածութեան ։

Գիտելի է երկրորդ ՝ զի ցուցական դերանունս ՝ Այս ՝ այդ ՝ այն · սա ՝ դա ՝ նա ՝ եզակի տրականքն ՝ որք են՝ այսմ ՝ այսմիկ · այդմ ՝ այդմիկ · այնմ ՝ այնմիկ · սմին · դմին · նմին · յորժամ յարին յառաջոյ ՚ի բայառականն՝ նաև ՚ի պատմական հոլովս անուանց ՝ իբր բայառական և

պատմական վարին . ո̃ր , Բազում ծնանին հերձուածք յայսմ պատճառէ || . Ղեւոնդեայ . Ըղբ :

Եւ երբեմն եւս՝ յորժամ յարին ՚ի սեռական անուանս , իբր սեռական վարին . ո̃ր , * Գալուստն քո՝ մեզ յաւիտենից սպասումն է || . Խոսրով :

Սոյնպէս եւս յորժամ առանձինն վարին , ուրեք ուրեք դնին փոխանակ սեռականի . ո̃ր , * Եթէ մեզ արտաքոյ եմք , ՚ի նմին է աշխատութ̃ին || . Լամբ . թղ . ԺԷ :

Դարձեալ՝ եզակի սեռականք սոցա դնին երբեմն փոխանակ տրականի , եւ երբեմն փոխանակ բացառականի , եւ երբեմն եւս փոխանակ գործիականի . եւ տրականքն երբեմն փոխանակ գործիականի , եւ երբեմն փոխանակ բացառականի՝ նաեւ ՚ի յետադասին . եւ գործիականքն փոխանակ սեռականի եւ տրականի , ե̃ն : Եւ թէպէտ սոքա չեն ՚ի յաճախ գործածութեան . մանաւանդ թէ զգուշալի եւս են , բայց դիցուք աստ զօրինակս զայս , առ ՚ի տեղեակ առնել նոցա զուսանօղսն . որպէս , * Ըստ մեր ապացուցի եւ զքոյդ տեսանեմք պարզ՝ ակամբ մտաց լուսաւորու̃թ || . ի̃ ըստ այսմ ապացուցի . Շնորհ . Բղբ :

Եւ դարձեալ՝ սոքա եզական ձայնիւ՝ վարին երբեմն իբր յոգնական , մանաւանդ յուղղականն . ո̃ր , * Երկու այլ եւս քահանայք երանելիք , որոց անուանքն են սոյն՝ ( ի̃ այսոքիկ ) սամուէլ եւ աբրահամ || . Եղիշէ . Է :

Սոյնպէս եւ ցուցական դերանուանքս՝ Սոյն , Դոյն , Նոյն , երբեմն եզական ձայնիւ իբր յոգնական վարին . թէպէտ եւ չեն յաճախ ՚ի գործ ածելի . ո̃ր , * Սոյն են ( ի̃ այսոքիկ են ) ինձ յոյս եւ կեանք , եւ նոյն փրկութիւն եւ բարերարութիւն || . Գրիգոր տղայ :

Գիտելի է երրորդ , զի ստացական դերանուանց եզակի սեռականքն՝ բազում անգամ իբր տրական վարին . ո̃ր , * Որդեակ՝ իմոյ իմաստութեան անսա || . փոխանակ ասելոյ , իմում իմաստութեան . Առակ . Ե . I :

Եւ ներհակ այսմ , եզակի տրականք սո̃ց բազում անգամ իբրեւ սեռական վարին . ո̃ր , * Իմում խռովութ̃ե հաշ-

տարանք || . փխն ասելոյ ՝ իմոյս խուռոլուծ . Նար. ԼԸ .

Իսկ քանզի ուրեք ուրեք դնի ևս փոխանակ սեռականի էական դերանուանս՝ զոր ՝ իբր յատկացուցիչ . զր ՝ * Դու քեզէն ՝ի քոյդ լրութենէ փառաւորեալ իսկ էիր || . փոխանակ ասելոյ . ՝ի քո լրութենէդ . Նարեկ . ԼԷ .

Գտանին և այլևս խոտորմունք ինչ ՝ի հոլովս այսպիսի դերանուանց՝ մանաւանդ յոքնին . որք ոչ են ՝ի յաճախ գործածութեան . յորոց և պարտ իսկ է զգուշանալ . որպիսի են սոքին . * Ջորդին իւր . . . . առաքեաց յերամ ծոցոյն || . այսինքն յիւրոյ կամ յիւրմէ ծոցոյ . Սարգ .

Ըստ այսմ լինի երբեմն և տրականն բառիս՝ մի և այլ . զր ՝ * Դարձեալ այլ գաւազանք ՝ի մեամ մնջէ || . փոխանակ ասելոյ ՝ ՝ի միոյ մնջէ . Մեկնութ. Եղիշէի վարդ. հայոց .

* Ոչ եթէ իբրև ցայլազն ումեքէ խնդրեցի ես որդի ՝ այլ յքո || . փոխանակ ասելոյ ՝ յայլմէ ումեքէ . Եփրեմ .

Գտանի է չորրորդ ՝ զի յարաբերական որն յուղղական հոլովին՝ երբեմն իբր սեռական վարի . զր ՝ * Գթացաւ ՝ի նոսա այն ՝ որ ոչ երբեք պակասեցաւ գութ նր || . փոխանակ դնելոյ ՝ որոյ ոչ երբեք ՝ եւն . Իգնատ . Ը . 10 .

Երբեմն իբր տրական և բացառական . զր ՝ * Նման լինի յուդայի մատնչի ՝ որ յետ պատառոյն այս եմուտ ՝ի նա սատանայ || . փոխանակ ասելոյ ՝ յոր յետ պատառոյն այս եմուտ ՝ի նա սատանայ . Շնորհ . ընդհանր .

Երբեմն ևս իբր գործիական ՝ կամ ներգոյական . զր . * Եւ թէ պարսաւէ ոք ( զիս ) ՝ և դատի յայն ինչ ՝ որ ՝ի մտացս խղճէ ոչ դատիմ՝ ոչ փոյթ ինչ առնեմ || . զո-րով ոչ դատիմ ՝ի խղճէ մտացս . Շնորհալի . Ընդհ .

Յայտնի է վերոյգրեալ օրինակս ՝ յորս որն դնի իբր սեռական ՝ իբր տրական ՝ իբր բացառական ՝ եւն ՝ հնար է համարել ևս իբր շաղկապ թարմատար ՝ կամ պատճառական . Այլ յայսպիսիս պարտ է զգուշութեամբ վարել . և միայն ՝ի պահանջել հարկի վայելչութեան բանին առնուլ ՝ի կիր .

Երբեմն ևս այս դերանուն ՝ի սեռական հոլովի իբր տր-

բակման վարի · զր , * Որոյ հետևի արտօսրն || · մինչ
ասելոյ , որում հետևի · Ղամբ · աող · 72 ։

Եւ ներհակ այսմ՝ ուրեք ուրեք 'ի տրական հոլովն իբր
սեռական վարի · զր Որում սակի և զքոյդ խմանամք սիրտ ||·
զր որոյ սակի · Շնորհալի · Ըղշ ։

Գիտելի է ևս , զի բաղում անգամ յարի սա 'ի բառսդ ,
Էնչ · Ընդդէմ · Թէ · և վարի ընդ նոսա իբր մասնական ա-
նուն · որպէս յայտ է յեղելոյ 'ի վախճան մա գլխոյն ·
բայց այնու ևս՝ ոչ կորուսանէ զյարաբերականութիւն իւր ·
որպէս երևի 'ի սոսա · * Յոր էնչ հայի ոք , 'ի նոյն փո-
խի մոօք || · Նար · 'Է Մէջն · Երգ Երգոց ։

* Որ Ընդդէմ ունի զոխութի 'ի սրտի իւրում , զեղ բժշ-
կութեան նորա չիք || · Մծբ · Ճառ · Ծը ։

* Որ թէ ատ սիրէ երկայնել զբանս վարդապետութե ,
զգիրսն յոլհաննու ընթերցցի զոսկեբերանին || · Իգնատ ։

Պարտ է ևս գիտել , զի 'ի գիրս ինչ սորա յոգնակի
սեռականն , տրականն , բացառականն և պատմականն՝ գը-
նին , Ոյց · յոյս · յոյց · Վոյց · և եզակին ևս ունի , յասմէ ։
Բայց ոչ է արժան յաճախել զայսոսիկ իբր յարաբերա-
կանս ։

'Ի վախճան դերանուանց տմն գիտելի է և այս , զի 'ի
հոլովս սոյա գտանին ուրեք ուրեք խոտորմունք ինչ ար-
տաքոյ սովորութեան , զոր ոչ էր մարթ գնել յառա-
ջին մասին՝ վասն անգործածելի գոլոյ նոցին · որպիսի են
սոքին · Քեզդն · զր քեզ ։ 'Ի Մէջէն · զր 'ի մէնջ ։ Զին-
քեանքն · զր զինքեանս ։ Նոյնց · զր նոցա ։ Նմնց · զր նոցուն ։
Զնոցա · զր կնոջս ։ Սոյց · զր սոցա ։ Նոցունց · զր նոքօք ։
Այսուիւ · այդուիւ · այնուիւ · զր այսուիկ · այդուիկ · այնուիկ ։
Այսուն · այդուն · այնուն · զր այսու · այդու · այնու ։ Այսց-
ցոց · այնոց · 'Է Նոյնում · զր այդոցիկ · այնոցիկ · 'ի նմին ։
Այսոքօք · այդոքօք · այնոքօք · զր այսոքիւք · այդոքիւք · այ-
նոքիւք ։ Զայսոսէն · զայդոսէն · զայնոսէն · զր զայսոսիկ ·
զայդոսիկ · զայնոսիկ ։ Այս առ այսոսէն · առ այդոսէն · առ
այնոսէն · զր առ այսոսիկ · առ այդոսիկ · առ այնոսիկ ։

Ցուցումնեայ · ցուցչումնեայ · ցոյցումնեայ · կը յայսմանէ · յայդմանէ · յայնմանէ ։ Եւ այլևս բազումք · յորոց գործածութենէ պարտ է զգուշանալ ։

# ԳԼՈՒԽ · ԺԴ ։

## Յաղագս Բային ։

### Թէ զինչ է սահմանաւորէն եղանակ բային ։

Սա է մասն բանի, որ զառս, կամ զկիրս, և կամ զլինելութիւնս իրաց՝ ըստ ժամանակաւ նշանակէ՝ ըստ որոշեալ դիմաց · վասն զի յայտ առնէ կամ զներգործել իրաց յայլս, կամ զկրել նոյին յայլմէ, և կամ ըռկ զգործել և զլինել նոյին՝ ըստ այս ինչ կամ ըստ այն ինչ դիմաց · որպէս յասելն, * Ահա մեղաւորք լարեցին զաղեղունս իւրեանց ||, (Սաղ. Ժ. 3.) նշանակի ներգործել մեղաւորայն յաղեղունս · և այս՝ յերրորդ դէմս ։ Եւ յասելն, * 'Ի գաւառն նեղից բանտարկութիւն վիրաւորեցայ ||, (Հոր. ԼԲ.) նշանակի կրելն անձին 'ի նեղից բանտարկութիւն · և այս՝ յառաջին դէմս ։ Եւ յասելն, * Լեցե՛ր դու հաւատարիմ յամի ||, (Ժողով. Է. 8.) նշանակի հաւատարիմ լինելն անձին · և այս՝ յերկրորդ դէմս ։

Արդ՝ որովհետև յատուկ է գործողութեանց և լինելութեանց 'ի ժամանակի կատարիլ, կամ 'ի ներկայի, կամ յանցելոյն, և կամ յապագայի, բայն ևս՝ որ զգործողութիւնս և զլինելութիւնս նշանակէ, ցուցանէ զնոսին ըստ ժամանակաւ · կամ ըստ ներկայիւ · որգոն, գործեմ · կամ ըստ անցելով · որգոն, գործեցի · և կամ ըստ ապագայիւ · որգոն, գործեցից ։

Բայք բաժանին յերկուս, յէականն և յառաքական ։ Էականք են, որք նշանակեն սոսկ զլինելութիւն իրին ըստ ժամանակաւ · և են չորեքին սոքա · Եղանիմ · լինիմ · եմ, և գոլ ։ Իսկ առաքականք են, որք զառնել կամ զկրել ի-

րայն նշանակեն․ որպ․ Ծնկեմ․ Թանամ․ լնում․ աղօթեմ․
մատչիմ․ ազատիմ․ մաքրիմ․ ևն։

Առքական բայք բաժանին ՝ի կանոնաւորս և յանկանոնս։ Կանոնաւորք են, որք ՝ի խոնարհմունս, կամ ՝ի վերջամունս իւրեանց՝ հասարակօրէն անփոփոխ մնան ձայնիւ, անթերի ժամանակաւ, և անպակաս դիմաւ։ Եւ են սոքա․ Գործեմ․ հատանեմ․ ասեմ․ զօրայուցանեմ․ մատուցանեմ․ դիմեմ․ մտանեմ․ կալեմ։ Աղամ․ խոստանամ․ բանամ․ բառնամ․ գնամ․ գոհանամ․ դառնամ։ Թողում․ լնում․ ընկենում․ ընթեռնում․ զարթնում․ զբօսնում։ Հաշտիմ․ սնանիմ․ փախչիմ․ շահիմ․ ուսանիմ։ Եւ որք ընդ սոքօք պարունակին։

Իսկ անկանոնք են, որք ըստ վերոյգրեալ տեսակաց ոչ ծորդին ամբողջ․ այլ կամ պակասին ՝ի ժամանակս ինչ, և յայլոց լրանան․ և կոչին պակասաւորք․ և են սոքա․ Ուտեմ՝ կերայ․ ըմպեմ՝ արբի․ լսեմ՝ լուայ․ Ճանաչեմ՝ ծանեայ․ ունիմ՝ կալայ․ երթամ՝ չոգայ։ Կամ զարտուղին, իբր այլայլին ձայնիւ ՝ի խոնարհիլն իւրեանց․ և կոչին զարտուղիք․ և են սոքա․ Առնեմ՝ արարի․ դնեմ՝ եդի․ տամ՝ ետու․ մեղանչեմ՝ մեղայ․ յառնեմ՝ յարեայ․ գամ՝ եկի։ Եւ կամ երբեմն պակասին յառաջին և յերկրորդ դէմսն, ևս և ՝ի յոգնականսն․ և կոչին դիմազուրկք․ որպիսի են սոքա․ Յաջողէ․ լուսանայ․ Թուի․ հարկ է․ և որք ընդ սոքօք են։ Զորոյ ամենայն զծորդութիւնս եդաք առաձինն յառաջին մասին։

## ԳԼՈՒԽ․ ԺԵ․

### Յաղագս պարագայից բայից։ Եւ նախ յաղագս Սեռից։

Պարագայք բայից են այսպէս հետեւմունք որոշիսութեան նոյա․ և են ինն․ Սեռ, ձև, տեսակ, թիւ, դէմք, ժամանակ, եղանակ, խոնարհմունք, և ծորդութիւնք։

Սեռք բայից , որք 'ի հնոյ կոչին տրամադրութիւնք , են որոշմունք նոյա ըստ ներգործականութեան , եւ կրաւորականութեան , ըստ հասարակի՝ եւ ըստ չէզոք գոլոյ : Ուստի եւ են չորք . Ներգործական , կրաւորական , հասարակ , եւ չէզոքական :

Ներգործականք են նոքա , որք նշանակեն զներգործել իւրեանց 'ի կրօղն՝ որով եւ իցէ գործողութեամբ , թէ արտաքին իցէ , եւ թէ ներքին . որգոն , Խորտակեմ . գովեմ . սիրեմ . ևն . Որովք նշանակի այնպիսի գործողութիւն , զոր խորտակօղն՝ գործով ներգործէ 'ի խորտակեալն . գովօղն՝ բանիւ ներգործէ 'ի գովեալն . սիրօղն՝ սրտիւ ներգործէ 'ի սիրեցեալն . որպ , * Դու խորտակեցեր զգլուխ վիշապին || . Սաղ . ՀԳ . 13 : * Գովեսցէ զքեզ ընկերն , եւ մի՛ քո բերան || . Առակ . ԻԷ . 2 : * Սիրեսցուք զԱծ , որ ատեցեն զմեզ || . Խոստով :

Կրաւորականք են , որք նշանակեն զկիրս իւրեանց յումեքէ ներգործողէ՝ որով եւ իցէ կրելութեամբ . որգոն , Խորտակիմ . գովիմ . սիրիմ . ևն . Յորս նշանակի կրելութիւն խորտակելոյն 'ի խորտակողէն . գովելոյն 'ի գովողէն . սիրելոյն 'ի սիրողէն . որպ , * Վէմք խորտակեսցին 'ի նմանէ || . Նաւում . Ա . 6 : * Բերան իմաստնոյ գովի 'ի մարդկանէ || . Առակ . ԺԷ . 8 . * Որ սիրէ զիս , սիրեսցի 'ի հօրէ իմմէ || . Յովհ . ԺԴ . 21 :

Հասարակք են , որք միով կրաւորական ձայնիւ մերթ զներգործութիւն իւրեանց առ կրօղն նշանակեն . եւ մերթ զկրելութիւն իւրեանց յումեքէ ներգործողէ . որգոն , Ծնանիմ . համբուրիմ . դատիմ . ևն . Որովք մերթ նշանակի ներգործութիւն ծնողին , համբուրողին եւ դատողին . եւ մերթ կրելութիւն ծնելոյն , համբուրելոյն եւ դատելոյն . որպ . * Մի՛ ոք դատեսցի զընկեր իւր , զի մի՛ եւ ինքն դատեսցի յարդարադատն այ || . Ընդհ . ընդհանր :

Չէզոքականք են , որք զներգործութիւն գործողին յինքեան 'ի գործօղն նշանակեն . եւ ոչ իբր 'ի ներգործողէ առ կրօղ ոք . որպ , Փախուցեալ երթայ ամբարիշտն առանց

ուրուք հալածելոյ ||. Աշտոն. ԾԸ. I :

Սոքա կամ՝ ըստ ներգործական բայից լծորդին, եւ կամ ըստ կրաւորականաց :

Որք ըստ ներգործականաց լծորդին, կոչին ներգործակերպ չէզոքականք . որպիսի են այն ամ՝ չէզոքական բայք, որք յանգին ՚ի եմ, ՚ի ամ, եւ ՚ի ում . զր, Դիմեմ . գնամ . զարթնում . եւ որ ընդ սոքօք :

Իսկ որք ըստ կրաւորականաց լծորդին, կոչին կրաւորակերպ չէզոքականք, կամ՝ ձայնակրականք . որպիսի են այն ամ չէզոքական բայք, որք ՚ի իմ յանգին . զր, Հաշտիմ . անանիմ . փախչիմ . եւ որ ընդ սոքօք :

Այլ գիտելի է զի բազում բայք ներգործականք՝ մանաւանդ որք ՚ի եմ յանգին, երբեմն իբր չէզոքական վարին . որպիսի են սոքին .

| | | |
|---|---|---|
| Ասպատակեմ . | ճարտարապետեմ . | վաշխեմ . |
| աւետաւորեմ . | ճարտարեմ . | փոխանորդեմ . |
| բղխեմ . | մերձենայեմ . | փողեմ . |
| ծագեմ . | յաճախեմ . | կարդամ . |
| համակեմ . | յերաղեմ . | համբառնամ . |
| հիմնարկեմ . | նաւավարեմ . | առաւելում . |
| հնարաւորեմ . | շառաւիղեմ . | յաւելում . |
| ճաճանչեմ . | պահակերեմ . | զեղում . |
| ճամարտակեմ . | պայմանեմ . | ցելում . եւն : |

Են եւ բազում բայք չէզոքականք, որք երբեմն իբր ներգործական վարին . որպիսի են սոքին .

| | | |
|---|---|---|
| Ագահեմ . | յաջողեմ . | քաղցրաձայնեմ . |
| աշտանակեմ . | որոճեմ . | անգիտանամ . |
| լուեմ . | չարակնեմ . | բաղձամ . |
| խնայեմ . | պատուասիրեմ . | ըղձամ . |
| հնչեմ . | սպասաւորեմ . | հոգամ . |
| հմայեմ . | ստեմ . | մերկանամ . |
| մաղթեմ . | տիեզերակալեմ . | որոտամ . |
| միապետեմ . | փայլատակեմ . | վստահանամ . |
| միջնորդեմ . | փայլեմ . | տգիտանամ . |
| մրմնջեմ . | փչեմ . | տեղեկանամ . եւն : |

Դարձեալ կան և բազում կրաւորական բայք բղխեալք ՚ի բայից եղելոց ընդ գործեմիւ, և ընդ հոմանեմիւ, որք իբր ձայնակրական վարին. որպիսի են սոքին.

| | | |
|---|---|---|
| Ամբոխիմ. | Հանդերձիմ. | բեկանիմ. |
| բորբոքիմ. | ձգտիմ. | բերիմ. |
| գումարիմ. | ճեպիմ. | գտանիմ. |
| դրդուիմ. | մեկնիմ. | դիզանիմ. |
| զինիմ. | մերժիմ. | զատանիմ. |
| ընկղմիմ. | յածիմ. | զեղծանիմ. |
| ընկճիմ. | յորդորիմ. | լուծանիմ. |
| Թաւալիմ. | շարժիմ. | լքանիմ. |
| Թիւրիմ. | պատսպարիմ. | հատանիմ. |
| կախիմ. | պարզիմ. | հարկանիմ. |
| կանգնիմ. | փոխիմ. | հեղձանիմ. |
| կարկառիմ. | քաջալերիմ. | սուզանիմ. ևն։ |

Եւ ևս ոմանք ՚ի կրաւորական բայից երբեմն իբր հասարակ վարին. որպիսի են սոքին.

| | | |
|---|---|---|
| Արածիմ. | կերպարանիմ. | վարդապետիմ. |
| գիլիմ. | կոծիմ. | վարժիմ. |
| ըմբոշխնիմ. | հարկիմ. | արկանիմ. |
| կերակրիմ. | պատճառիմ. | յարկանիմ. |

Սոյնպէս և ոմանք ՚ի ձայնակրական բայից երբեմն իբր հասարակ վարին. որպիսի են սոքին.

| | | |
|---|---|---|
| Անիրաւիմ. | կեղծաւորիմ. | պաղատիմ. |
| աշխատիմ. | հաղորդիմ. | պարծիմ. |
| գօտեւորիմ. | հաճիմ. | վաստակիմ. |
| կասկածիմ. | հոտոտիմ. | տարակուսիմ. |
| կարողիմ. | նայիմ, հայիմ. | օգտիմ։ |

Կան և բայք ինչ, որք թէպէտ կրաւորականք են՝ բայց քանզի անխտիր իբր հասարակ վարին, վասնայսորիկ հասարակս եդաք զնոսա յառաջին մասին. Գլ. ԾԳ. և են սոքին.

| | | |
|---|---|---|
| Ախորժիմ. | հաշուիմ. | տուգանիմ. |
| դատիմ. | հնարիմ. | տուժիմ. |
| դաւանիմ. | վարձիմ. | ցնկնիմ. |
| համարիմ. | վրիժակիմ. | վարկանիմ։ |

Գիտելի է և այս, զի գրեթէ ամ՟ բայք ձայնականք, որք իբրև զհաղորդեմն ընթերցին, բազում անգամ ՝ի նմ՟ յանգեալ՝ իբրև զներգործակերպ չէզոքականս վարին. և ամենևին իբրև զչէզոքն խոնարհին. որպէս յայտնի երևի բազում ուրեք ՝ի գիրս Նախնեաց. յորոց գիտուք աստ քանի մի օրինակս. ո՛րգոն, * Ո՛չ ընդդիմանամ, և ո՛չ հակառակեմ. այլ՝ կամաւ իմով հրաժարեմ ՝ի բաց || Շնորհ. Եղբ.

## ԳԼՈՒԽ. ԺԶ.

### Յաղագս Ձևոց բայից.

Ձևք բայից մտածին ըստ պարզութեան, ըստ բարդութեան, և ըստ բաղադրութեան նոցա. ուստի և բայք երեք են ըստ ձևոյն. Պարզ, բարդ, և բաղադրեալ. Պարզ բայն է, որ զպարզ նշանակութիւն առնելոյ կամ կրելոյ ցուցանէ. ո՛րգոն,
Բեկանեմ. Հարկանեմ. զարդարեմ. ստեղծում. եւն.

Իսկ բարդ բայն է, որ զօդեալ ընդ այլում նշանական բառի՝ զերկուս իմացուածս առնելոյ կամ կրելոյ ՝ի մէջ բերէ. ո՛րգոն, Ահաբեկեմ. յաղթահարեմ. գեղազարդեմ.
կենդանաստեղծում. եւն.

Ոմանք յայսպիսի բայից վասն բարդութեան այլազգ խոնարհին՝ քան զոր յառաջն. զր՟, Բերեմ, բերի, բե՛ր. ընծայաբերեմ, բերեցի, բերեա՛. Հարկանեմ, հարի, հա՛ր. յաղթահարեմ, հարեցի, հարեա՛. եւն.

Իսկ բաղադրեալ բայն է, որ բաղկանայ բաղադրական մասնկամբքս, Տոր. Եող. որբ. որամ. համ. մոկ. ոճ. ուոր. եւն. Եւ այս քառակի.

Նախ՝ առ ՝ի զարդ, կամ առ ՝ի եղանակաւորել զնշանակութիւնն. ո՛րգոն, Տորակորզեմ. Եողձխսեմ. Եոցորոչեմ. վիճակաւորեմ. յանկաւորեմ. եւն.

Երկրորդ՝ առ ՝ի փոփոխումն նշանակութե. զր՟, Անհարգեմ. ոգտանեմ. ոգխտանամ. ոճգոհեմ. ոչփաբերեմ.

հոմաձայնեմ. մօտադրեմ. փառաբանեմ. եւն:

Այլ յաճախ գործածութիւն մասնկանց՝ առ. համ. մակ. տրամ. տար. բաղ. եւն, աղաւաղէ զնորին կազմութեան բայից:

Երրորդ՝ առ 'ի վերածել յայլ իմն լծորդութիւն 'ի ձեռն մասնկանս՝ ան. որպ, Օծեմ, օծանեմ. բուծեմ, բուծանեմ. եւն:

Չորրորդ՝ առ 'ի յաճախականապէս նշանակել 'ի ձեռն յօդից, ոտ, ատ, տ, չ, եւն. որպ, Խոցել, խոցոտել. յօշել, յօշոտել: կտրել, կտրատել. պատել, պատատել: բեկել, բեկտել. քակել, քակտել. նողկալ, նողկտալ: գրգռել, չգրգռել. եղծանել, չեղծանել. ընկենուլ, չընկենուլ. անցանել, չանցանել. եւն:

Այս կերպ յաճախման բայից լինի երբեմն նաեւ կրկնելով առաջնոյ վանկի բային. որգոն, Բեկել, բեկբեկել. կցել, կցկցել. բախել, բաբախել. ջախել, ջախջախել. շրջել, շրջշրջել. եւն:

Լինի այս երբեմն նաեւ կրկնմամբ նոյն բայի. որպ. * Լուարուք լուարուք բանից իմոց ‖ Յոբ. ԺԳ. 17:

Երբեմն դրութեամբ դերբայից այնր բայի. որպ, * Քակելով քակեսցին՝ զոր ինչ նա շինէր ‖. Մծբ. Ճառ. Ա:

Երբեմն դրութեամբ աներեւութին. որպ, * Են բազումք՝ որ սիրել սիրեն, այլ ոչ սերտիւ ‖. Մարգիս:

Երբեմն դրութեամբ ընդունելութեան ըստ անցելոյն. որպ. * Են ոմանք՝ որ պահեալ պահեն. բայց դատապարտեն զայնոսիկ, որք ուտենն ‖. Կոչ. Ժ. 36:

Այլ զգուշանալ պարտ է 'ի յաճախելոյ զայսպիսիս:

Երբեմն դրութեամբ արմատոյ բային. որպ, * Նզովիւք նզովեցաք զանձինս՝ ոչ ինչ ճաշակել ‖. Գործ. ԻԳ. 14:

Բազում անգամ եւս 'ի ձեռն յաճախական կամ սաստկական մակբայից. որպ, * Առաւելապէս հաստատեաց զայն 'ի վերայ իւր ‖. Գրիգոր Նիւսացի:

# ԳԼՈՒԽ. ԺԵ.

## Յաղագս Տեսակաց Բայից։

Տեսակք բայից նկատին ըստ նախնական և ըստ անցողական նշանակութեան իւրեանց. ուստի և բայք կրկին են ըստ տեսակին. նախագաղափար, և անցողական։

Նախագաղափար կամ նախատիպ բայք են, որք կան 'ի նախկին նշանակութեան իւրեանց. թէ պարզ իցեն, թէ բարդ, և թէ բաղադրեալ. և ցուցանեն զառս գործողին միայն. որգոն, Բարկանամ. խոնարհիմ. զարթնում. ևն։ Սոքա կոչին Նախագաղափար, կամ Նախատիպ, զի են իբր գաղափար և տիպ անցողականաց. մանաւանդ թէ իբրև արմատ նոցին։

Իսկ անցողական կամ ածանցական բայք են, որք 'ի ձևոյն ածանցականէ ըստ մասնկանս ուցան՝ ածին և իբր թէ անցուցանին յայնպիսի որպիսութիւն, որով նշանակեն ոչ միայն զգործողութիւն առնողին, այլև զգործել կրողին 'ի ներգործելոյ անտի արարողին. որգոն, Բարկացուցանեմ. խոնարհեցուցանեմ. զարթուցանեմ. ևն. որ առնեմ՝ զի այլ ոք բարկասցի. առնեմ, զի խոնարհեսցի. առնեմ, զի զարթիցէ. ևն։

Արդ՝ թէպէտ բազում բայք լինին անցողականք, բայց առաւելապէս չէզոքականքն. որպէս, Ծեծեմ, ծեծեցուցանեմ. մերձենամ, մերձեցուցանեմ. զայրանամ, զայրացուցանեմ. ևն։ Եւ յաճախագոյն ևս ձայնակրականքն. որպէս, Զկծիմ, զկծեցուցանեմ. Թմրիմ, թմրեցուցանեմ. խոնջիմ, խոնջեցուցանեմ. սողիմ, սողեցուցանեմ. Հանգչիմ, հանգուցանեմ. ևն։

Այլ գիտելի է, զի գտանին բազում բայք, որք թէպէտ ըստ ձայնին ոչ են անցողականք, այլ նախագաղափարք, բայց ըստ նշանակութեանն՝ վարին իբր անցողականք. և ասին սոքա զօրութեամբ անցողական. որպիսի

են հասարակօրէն այն բայք, որք ձայնակրական գոլով ը՝ ընդդութեամբ հոլովեն բային՝ ՚ի եմ յանգին · որպէս է տեսանել ՚ի սոսա ։

| | | | |
|---|---|---|---|
| Աշխատիմ, | աշխատեմ · | մանկաղիմ, | մանկաղեմ · |
| երկմտիմ, | երկնմտեմ · | մնտիմ, | մօտեմ · |
| զբաղիմ, | զբաղեմ · | յուսահատիմ, | յուսահատեմ, |
| խոտորիմ, | խոտորեմ · | յօժարիմ, | յօժարեմ · |
| ծածանիմ, | ծածանեմ · | նուաղիմ, | նուաղեմ · |
| ծաղկիմ, | ծաղկեմ · | պատկառիմ, | պատկառեմ · |
| ծիւրիմ, | ծիւրեմ · | պատշաճիմ, | պատշաճեմ · |
| ծփիմ, | ծփեմ · | պարապիմ, | պարապեմ · |
| կատաղիմ, | կատաղեմ · | սասանիմ, | սասանեմ · |
| կարկիմ, | կարկեմ · | սպրդիմ, | սպրդեմ · |
| հնազանդիմ, | հնազանդեմ · | վհատիմ, | վհատեմ · |
| հպատակիմ, | հպատակեմ · | վրիպիմ, | վրիպեմ · Եւն ։ |

Բայց պարտ է եւ գիտել, զի այսպիսի բայք ո՛չ միշտ վարին իբր անցողական, այլ նաեւ իբրեւ ներգործակերպ չէզոքական · որպէս ասացաք ՚ի վերոյ ՚ի Գլ · ԾԵ ։

Գիտելի է դարձեալ՝ զի երբեմն անցողականք կազմին ՚ի ձեռն բային՝ տալ · որպէս · * Աներխոր տան գործել զանարժանն || · որ գործեցուցանեն · որ է տալ, առնել՝ զի այլք գործեսցեն · Մարկ · յոհ · Է ։

## ԳԼՈՒԽ · ԺԸ ։

### Յաղագս Թուոց, եւ Դիմաց Բայից ։

Վասն թուոց եւ դիմաց բայից սակաւ ինչ ասնիմք ասել · զի զոր ինչ խօսեցաք զթուոց անուանց, եւ զդիմաց դերանուանց, նոյնօք յայտնին ըստ իմիք եւ թիւք եւ դէմք բայից ։ Զի որպէս թիւք անուանց մնացին ըստ եզականութեան եւ ըստ յոգնականութեան նոյին · նոյնպէս եւ թիւք բայից մնածին ըստ եզականութեան եւ

ըստ յոգնականութեան իւրեանց․ ուստի և են երկու․ եզական, և յոգնական։

Եզականն է, որ նշանակէ զմիակի ներգործութիւն կամ կրելութիւն միոյ գործողի կամ կրողի․ որպէս, Գործեմ, գործիմ․ եւ այլն։

Յոգնականն է, որ նշանակէ զբազում ներգործութիւնս կամ կրելութիւնս բազում գործողաց կամ կրողաց․ որպէս, Գործեմք, գործիմք․ եւ այլն։

Դէմք բայից են այնք, որք ցուցանեն զգործողութիւնսն լինել որոշեալ անձին․ և են երեք։ Առաջին՝ գործեմ․ Երկրորդ՝ գործես․ Երրորդ՝ գործէ։ Քանզի գործք և կիրք՝ կամ նորա են, որ խօսի․ և ըստ այսմ է առաջին դէմքն․ ո՛րգոն, Գնամ․ պատմեմ․ եւ այլն։ Կամ նորա, ընդ որում լինի խօսիլն․ և ըստ այսմ է երկրորդ դէմքն․ ո՛րգոն, Գնաս․ պատմես․ եւ այլն։ Եւ կամ նորա, զորմէ լինի խօսիլն․ և ըստ այսմ է երրորդ դէմքն․ ո՛րգոն, Գնայ․ պատմէ․ եւ այլն։

## ԳԼՈՒԽ․ ԺԹ․

### Յաղագս Ժամանակաց Բայից։

Ժամանակք, կամ ըստ Հնոց՝ ամանակք բայից են, որք ցուցանեն զառս կամ զկիրս լինել յայս ինչ, կամ յայն ինչ ժամանակի․ որպէս, կամ 'ի ներկայն, կամ յանցեալն, և կամ յապառնին․ ուստի և են երեք․ Ներկայ, անցեալ և ապառնի։ Եւ անցեալն քառակի նկատի․ այսինքն՝ իբր անկատար, իբր կատարեալ, իբր յարակատար, և իբր գերակատար։ Եւ ըստ այսմ ժամանակք բայից առին լինել վեց․ որպէս, Ներկայ, անցեալ անկատար, անցեալ կատարեալ, անցեալ յարակատար, անցեալ գերակատար, և ապառնի։

*Ներկայն է, յորում բայն նշանակէ զառս և զկիրս յառաջիկայ կէտ ժամանակի, կամ այժմ նորոգ սկսեալ․

օրգոն , Վարեմ , վարես , վարէ · զենում , զենուս , զենու · եւն ։

Անկատար ժամանակն , կամ ըստ հնոց՝ յարաձգականն է , յորում բայն նշանակէ զառս և զկիրս արդէն սկսեալ , բայց դեռ 'ի Ճանապարհի առ 'ի կատարիլ · օրգոն , Վարէի , վարէիր , վարէր · զենուի , զենուիր · եւն ։

Կատարեալ ժամանակն , կամ ըստ հնոց՝ յարակայն է , յորում բայն նշանակէ զառս և զկիրս կատարեալ կամ վՃարեալ · օրգոն , Վարեցի , վարեցեր , վարեաց · զենի , զեներ · եւն ։ Այլ վասն ձևանալոյ յոգնականի սորա յերկրորդ դէմս՝ ունիմք ասել 'ի յաջորդ գլուխն ։

Յարակատար ժամանակն է , յորում բայն նշանակէ զառս և զկիրս վՃարեալ , և ժամանակ ինչ ևս 'ի վերայ անցեալ · օրգոն , Վարեալ եմ , ես , է · զենեալ եմ , ես , է · եւն ։

Գերակատար ժամանակն է , յորում բայն նշանակէ զառս և զկիրս ոչ միայն վՃարեալ , այլև յետ վՃարման բազում ժամանակ ևս 'ի վերայ անցեալ · օրգոն , Վարեալ էի , էիր , էր · զենեալ , էի , էիր , էր · եւն ։

Ապառնի ժամանակն է , յորում բայն նշանակէ զառս և զկիրս իբր եղանելի , կամ իբր հանդերձեալ առ 'ի լինիլ · օրգոն , Վարեցից , վարեսցես , վարեսցէ · զենից , զենցես , զենցէ · եւն ։

Վասն յարակատար և գերակատար ժամանակաց , ( ընդ որս և վասն անցելոյ ստորադասական եղանակին ) գիտելի է նախ , զի յոգնական սոյա կրկնակի ձևանայ · Երբեմն առանց +է+ · զր , * Խաւարեալ եմք 'ի զբաղմունս իրաց աշխարհիս || · Լամբրոն · 'ի Մեկն · սաղ · 90 ։

Իսկ երբեմն +էիւ+ · զր , * Քնի շնորհին փրկեալք եմք || · Լամբրոնացի · 'ի Մեկն · սաղ · 68 ։

Արդ՝ որովհետև այս ժամանակք առաւել առանց +է+ 'ի գործ ածին՝ քան +էիւ+ , վասն որոյ և մեք յառաջին ձևին առանց +է+ եդաք · մանաւանդ զի յայսպիսիս յաՃախուն +էին+ ծանրալուր առնէ զխոնարհմունս բայից ·

Գիտելի է երկրորդ, զի սոքա թէպէտ նախադաս լի-
նելով էական բայի ձեւանան. որգոն, Հատեալ եմ,
ես, է. Թողեալ էի, էիր, էր. եւն, բայց ՚ի գործա-
ծուճ՝ յետադաս լինելով՝ վայելուչ եւս կերպարանին. օր.
* ՚Ի քեզ եմք ապաւինեալ քո̃ մայր ա̃յ մերոյ ||. Շար. Ըն.
Երբեմն այլ մասն բանի եւս ընդ մէջ անկանի. օր. * Իմ
է օրն լինելութեան նզովեալ, եւ ո՛չ յոբայ, կամ՝ երե-
միայ ||. Նարեկացի. ՚Ի բանն. կը.

Գիտելի է երրորդ, զի սոյա եզակի երրորդ դէմն վա-
րի ՚ի տեղի երից դիմաց եւս, թէ իբրեւ եզական, եւ թէ
իբրեւ յոգնական. որգոն, Գործեալ է իմ, գործեալ է
քո, գործեալ է նորա. գործեալ է մեր, գործեալ է ձեր,
գործեալ է նոցա. Գործեալ էր իմ, քո, նորա. գոր-
ծեալ էր մեր, ձեր, նոցա. Գործեալ իցէ իմ, քո, նր̃.
գործեալ իցէ մեր, ձեր, նոցա. օր. Զի՛նչ չինաս գոր-
ծեալ է իմ, եւ ո՛ր յանցանս յանցուցեալ ||. Եղիշէ.

Գիտելի է չորրորդ, զի սոքա բազում անգամ առանց
էական բայի վարին ՚ի բանս. որգոն, Թողեալ. ծնեալ.
կործանեալ. եւն. եւ յայնժամ կոչին դերբայք. եւ այս
կարի յաճախեալ է ՚ի գիրս մեր. օր. * Թողեալ ոմանց
զօրէնս՝ պարծին ՚ի մեղս ||. Մծբ. ծը.

Գիտելի է հինգերորդ, զի դրադէմք եւ ընդունելութիւնք
ներգործական եւ հասարակ բայից, մանաւանդ եղելոյ ընդ-
օրինակաւ գործելին եւ ուտելին, թէպէտ ՚ի դէպ յանգին.
բայց երբեմն յանգին նաեւ ՚ի եալ. օր. * Անձնիշխան
կամօք ատեցեալ զչարն՝ խոտորեցան ՚ի բարւոյն ||. Լամբ.
Իսկ կրաւորականքն այսպիսի դրադէմ բայից եւ ընդու-
նելութեանց հասարակօրէն եւ իբր ՚ի բազումս լոկ ՚ի եալ
յանգին. օր. * Յօրինայն անէծեալ էր զխայտակ կոխեալն ||.
Խոսրով.

Այլ երբեմն եւս եալ դնին, մանաւանդ յընդունելու-
թիւնս. օր. * Լեզու խուովք պիտոյիցն վարեցեալ՝ հաւր
զարդ է բարեպաշտութե̃ ||. Սարգ. յակ. ե.

Այսպէս պարտ է իմանալ եւ զչէզոքականաց. օր.,

* Բանիւդ քո փրկութե ծածանեալ՝ հասից քաւութե || · Նար ·
Արդ՝ որոյհետեւ առաւել յաճախեալ է յայսպիսիս եղելն՝ քան թէ եղեալն, վասն որոյ եւ մեք 'ի ընտրդութեան գործածմին 'ի ներգործականն եդաք միայն եղեալ · որգոն, գործեալ · իսկ 'ի կրաւորականին զերկոսին եւս · որգոն, գործեալ կամ գործեցեալ ։ Այնպէս եւեաք եւ յընդունելութիս ոմանց 'ի բայից ։

Գիտելի է վերջերորդ, զի գրադէմք երբեմն յարեալ՝ յեակական բայդ լինել 'ի գոյն անձին ընդ նմին յամ ժամանակս, 'ի ներկայն, յանկատարն, եւ · որ, * Թողեցեալ լինիմք, եւ ոչ խոնարհիմք || Նարեկ · ծե ·

Պարտ է եւս գիտել, զի եթէ 'ի սոսա դրադէմքն իցեն ներգործականք, ուրեք ուրեք պահեն զներգործականութիւն իւրեանց · որ, * Որ պատուէ զխաչն քո, եւ զպատկեր նորին, զնոյն ինքն պատուեալ լինի զքո || · որ պատուէ զնոյն ինքն զքո · Յովհ · Իմաստ · ծբ ·

Այլ պարտ է զգուշանալ 'ի գործածութե սց ։

## ԳԼՈՒԽ · Ի ·

### Յաղագս Եղանակաց Բայից ·

Եղանակք բայից են պէսպէս կերպք կամ առոճանք նշանակելոյ նց զատս եւ զկիրս, կամ զլինելութիս · եւ են չորս · Սահմանական, Հրամայական, ստորադասական, եւ աներեւոյթ՝ կամ անորոշ ։

### Յաղագս Սահմանական Եղանակի ·

Սահմանական եղանակն է, յորում բայքն արձակաբար եւ որոշակի նշանակեն զատս կամ զկիրս՝ առանց ցուցանելոյ զկախումն ինչ · որգոն, Գրեմ · խօսիմ · գնայի · ուսեայ · եւ · Նս տմ բանք սահմանականք, դատականք, ծանուցականք, խոստովանականք եւ հաստատողականք՝ այսու եղանակաւ ձեւանան ։

Այս եղանակ բայից ունի կատարելապէս զվեց ժամա-
նակս . այսինքն զներկայ , զանկատար , զկատարեալ , զյառա-
կատար , զգերակատար , և զապառնի ։

Այլ վասն կատարեալ ժամանակի սորա պարտ է գիտել
զի ըստ հին սովորութեան լեզուի մերում՝ յոչինչ բայս
երկրորդ դէմն յոգնականի սորա յանգի ՚ի եք . որպէս ,
Հատեք . գնայեք . լցեք . բարձեք . եւս ։ այլ ՚ի էք . որգոն ,
Հատէք , գնայէք . լցէք . բարձէք . եւս ։ կամ ՚ի այք . որ-
գոն , Կերայք . շահեցայք . եւս , և կամ ՚ի բուք . որգոն ,
Լուաբուք . դարձաբուք . եւս ։

Եւ սորա պատճառն է , զի ՚ի նախնումն զյոգնակի ներ-
կայի հրամայական եղանակին ՚ի գործ ածէին անխտիր ՚ի
տեղի կատարեալ ժամանակի , չէ շատ միայն դնելով ՚ի վերջն
հրամայականին ։

Ուստի և յայտնի բայս , յորս հրամայականին ներկայն
յանգի միայն ՚ի էք . որգոն , Գործեցէք . հատէք . ասա-
ցէք . զօրացուցէք . մատուցէք . աղացէք . բացէք . բարձէք .
Թողէք . լցէք . ընկեցէք . արարէք . արբէք . և որ ընդ սո-
քօք , ( թէ ներգործականք իցեն , և թէ չէզոքականք ) ,
զկատարեալն սոյս ևս այնու յանգիւ ընէին՝ առանց շեշ-
տի . որպէս յայտնի երևի ՚ի ձեռագիրս . գր , * Եւ արդ՝
չար գործեցէք , զոր արարէքդ || . փոխանակ ասելոյ , չար
գործեցիք . զոր արարիքդ . Ծննդոց . խդ . 5 ։
* Զբաժակ մահու արբէք ուրախութ || . Հաբ . ձգա ։

Իսկ յորս հրամայականն ոչ յանգի լոկ ՚ի էք . այլ՝ ՚ի
բուք . կամ ՚ի բուք և ՚ի էք . կամ ՚ի բուք և ՚ի եք . և
կամ լոկ ՚ի եք . որգոն , Գործեցաբուք . շահեցաբուք .
խոստացաբուք . լուաբուք . մեղաբուք ։ գոհացաբուք , կամ
էք . դարձաբուք , կամ էք . կալաբուք , կամ էք . հաշտե-
ցաբուք , կամ էք . մնաբուք , կամ էք ։ ուսաբուք , կամ եք .
ընթերցաբուք , կամ եք . զբօսաբուք , կամ եք . փախեբուք ,
կամ եք . ծանեբուք , կամ եք ։ առէք . զարթէք . և որ ընդ
սոքօք - զսոյս կատարեալ ժամանակն ՚ի գործ ածէին ան-
խտիր . Երբեմն վերջաւորութիւն՝ այք . որգոն , Գոր-

ծեցայք ․ շահեցայք ․ խոստացայք ․ լուայք ․ եւն ․ որպէս և եդաք յառաջին մասին ։ Իսկ երբեմն վերջաւորութիւն քոյք ․ որպէս է տեսանել ՚ի գործածութիւնս Նախնեաց ․ յորոյ դիցուք զօրինակս զայս ․ * Այլ լուացաքոյք ՚ այլ սրբեցաքոյք ՚ այլ արդարացաքոյք յանուն տն մերոյ յսի քսի || ․ փոխանակ ասելոյ ՚ այլ լուացայք՝ այլ սրբեցայք ՚ այլ արդարացայք ․ Ա ․ Կոր ․ Զ ․ 11 ։

Սոյնպէս է և ՚ի կատարեալն եղանակ բային ․ որ ՚ * Զի որոգայթք եղէքոյք դիտանոցին || ․ Ովս ․ Ե ․ 1 ։

Այս գործածութիւն հասարակ էր առ Նախնիս մեր յամ բայս ՚ բայց յերկուց բայից աստի ՚ գնեմ և գամ ․ զորոց զկատարեալ ժամանակն դնէին եգէք և եկէք ։ Իսկ յետոյ ( իբր առ ԺԲ դարու ) սկսան ոմանք փոխանակ էքի՝ էք դնել ըստ աշխարհաբառին ․ և զնոյն ՚ի բազում ձեռագիր գրեանս մուծանել ․ որպէս երևի յօրինակդ ՚ որ զկնի ․ * Զանմահ հոգիսդ մահկանացու արարէք || ․ Եղիշէ ։ Եւ այս կիրառութիւն յանցանել ժամանակաց՝ առաւել ևս հաստատեցաւ ՚ և եղև հասարակ ․ մինչև ցայժմ իսկ այժմ այսպէս վարել ․ վասն որոյ և մեք յառաջին մասին այսպէս եդաք ։

Գիտելի է ևս ՚ զի Նախնիք մեր՝ որպէս զհրամայականի յոգնակի երկրորդ դէմն ՚ի գործ ածէին փոխանակ կատարեալ ժամանակի սահմանականին ․ Նոյնպէս և զսահմանականին՝ երբեմն ՚ այլ ՚ի սակաւ՝ ՚ի գործ ածէին փոխանակ հրամայականին՝ շեշտիւ ․ որ ՚ * Որոշեցէք յամ հեթանոսաց երկրի || ․ որ որոշեցարուք ․ Ա ․ Եզր ․ Ժ ․ 9 ․ ձեռագր ։

Որպէս ուրեք ևս առ Նախնիս մեր՝ սահմանական եղանակի ներկային յերկրորդ դէմն յոգնականին եդեալ լինէր ՚ի տեղի հրամայականի ․ որպէս է տեսանել ՚ի հին ձեռագիրս ․ որ ՚ * Լուէք ՚ ահաւասիկ ել սերմանօղ սերմանել || ․ որ լուարուք ․ Մարկ ․ Դ ․ 2 ։

Բայց այսպիսի գործածութիւն խափանեալ է այժմ ․ և առ Նախնիս մեր իսկ հազիւ ուրեք երևի ։

## Յաղագս Հրամայական եղանակի:

Հրամայական եղանակն է, յորում բայքն ցուցանեն զառնել կամ զկիր՝ ոչ արձակաբար, կամ իբր անկախ, այլ ընդ հրամայողութեամբ, կամ իբր հրամայելով. որգոն, Արա՛. տո՛ւր. գթա՛. հայեա՛ց. եւն: Եւ ամ̃ բանք հրամայողականք, մաղթողականք, սպառնականք, կոչականք, յորդորականք, խրատականք եւ արգելականք՝ այսու եղանակաւ ձեւանան:

Այս եղանակ ունի զերկուս ժամանակս միայն, զներկայ եւ զապառնի: Ներկայն ունի զմի դէմ միայն. յ̃ զերկրորդն. որգոն, Թո՛ղ, մի՛ թողուր. Թողէ՛ք, մի՛ թողուք: Եւ ապառնին ունի ՚ի յեզականն զերկուս դէմս միայն. յ̃ զերկրորդ եւ զերրորդ. որգոն, Թողջի՛ր, կամ Թողցե՛ս. Թողցէ՛: Իսկ ՚ի յոգնականն ունի զերիս դէմսն եւս. որգոն, Թողցո՛ւք, Թողջի՛ք, Թողցե՛ն:

Սոքա թէպէտ (բաց ՚ի յանգելոյն ՚ի ջիր) ըստ ձայնին նոյն են ընդ սահմանականի ապառնւոյն, բայց կարեն որոշիլ կրկնակի: Նախ՝ յեղանակէ նշանակելոյն. զի հրամայականն հրամայողականապէս նշանակէ. օր̃, * Այսուհետեւ յօժարեսցիս սիրել առ աղօթս || . Մծբ: Իսկ սահմանականին՝ ծանուցողապէս. օր̃, * Արդարուն խոնարհի առաջնորդեսցէ նմա || . Մծբ. Ը:

Երկրորդ՝ ՚ի ձեռն շեշտի. զի ՚ի վերջն հրամայականին դնի շեշտ. որգոն, Հանցե՛ս, Հանցէ՛. Հանցո՛ւք, Հանջի՛ք, Հանցե՛ն: Իսկ ՚ի վերջն սահմանականին ոչ դնի շեշտ. որգոն, Հանցես, Հանցէ. Հանցուք, Հանջիք, Հանցեն:

Ըստ այսմ եւս՝ եթէ դիցի շեշտ ՚ի վերջն ապառնւոյ ստորադասականին, կամ արգելական մակբայ ՚ի սկզբանն, լինի իբր հրամայական. որգոն, Կայցէ՛, մի՛ կայցէ. Ընթերցցի... Ըննուցո՛ւ, մի՛ ընուցու. բանայցե՛ն, մի՛ բանայցեն. եւն. որպէս եւ բազումք ներգործութ̃ դնեն ՚ի խոնարհմունս բայից:

## Յաղագս Ստորադասական Եղանակի.

Ստորադասական եղանակն է, յորում բայն նշանակէ զանս կամ զկիրս՝ ոչ արձակաբար, այլ ցուցմամբ ըղձի, կամ թէութեան, կամ պատճառի, կամ ժամանակի, կամ տարակուսանաց, կամ հարցման, եւ այլն. զի ստորադասելով զնշանակեալ գործողութիւն ընդ ըղձիւ, կամ ընդ թէութեամբ, կամ ընդ պատճառաւ, եւ այլն. յայս սակս իսկ այս եղանակ՝ ստորադասական կոչեցաւ.

Արդ՝ եթէ ը̅ ըղձիւ նշանակեսցէ, կոչի ըղձական. եւ բացատրի միջարկութեամբք՝ Երանի՛ թէ, Եղէ՛ թէ. եւ այլն. Եւ յայնժամ հաստատակօրէն լինի ժամանակօք սահմանականին. որպէս.
* Երանի՛ թէ չէի պատահեալ այնմ աւուր ||. Պետրոսեան.

Եթէ ըստ թէութեամբ նշանակեսցէ, կոչի Թէական. եւ ըստ ոմանց՝ ստորակայական, կամ անկատարական. եւ բացատրի ՚ի ձեռն շաղկապիցս՝ Եթէ, Թէ, քան թէ, Թէպէտ եւ, մինչ թէ, եւ այլն. * Եթէ լուիցես, հառաչեմ. եթէ ունկն մատուցանիցես, պաղատիմ ||. Նար. ԽԵ.

Եթէ ըստ պատճառաւ նշանակեսցէ, կոչի պատճառական. եւ բացատրի ՚ի ձեռն շաղկապիցս՝ Զի, որպէս զի, չի թէ, ոչ զի, այլ զի, եւ այլն. որպէս, * Ոչ տուան կերակուրք, զի կերակրիցիմք. եւ ոչ զի կերակրովք զոգի եւ զմարմին կորուսանիցեմք ||. Գէորգ. Գ. ԻԷ.

Եթէ ըստ ժամանակաւ նշանակեսցէ, կոչի ժամանակական. եւ բացատրի մակբայիւքս՝ Մինչեւ, մինչ չեւ, Երբ, յորժամ, եւ այլն. որպէս, * Բիւր բանս աղերսանաց խօսի, մինչեւ տեսանիցէ զնա դադարեալ յարտասուացն ||. Սարգիս. ՚ի Մեկն. յոհ. Ը.

Եթէ ըստ տարակուսանօք նշանակեսցէ, կոչի երկբայական, կամ տարակուսական. եւ բացատրի մակբայիւքս՝ Թերեւս, գուցէ, որպէս թէ, եւ այլն. եւ շաղկապիւս՝ կամ. որպէս.
* Թերեւս արդեօք ՚ի հանդերձեալ յաւիտենին ՚ի քէն զնոյն ճշմարտապէս վայելիցեմք ||. Յովհաննէս Երզն. Գ.

Եթէ ընդ հարցմանց նշանակեսցէ, կոչի հարցական. և բացատրի մակբայիւքս՝ Արդեօք, մի, երբ, միթէ, եւն.
որ. * Մոռանայցեմք արդեօք զհոգևոր օրհնութիւնս || Եղիշէ։

Այս եղանակ ունի զերկուս յատուկ ժամանակս. զմի զանցեալ. որպէս, Տեսեալ իցեմ, իցես, իցէ. եւն։ և զապառնի. որպէս, Տեսանիցեմ, իցես, իցէ. եւն։ Սահմանաց ներկայ ևս կոչի։

Ասացի՝ յատուկ ժամանակս. քանզի բայց յերկուց աստի՝ բազում անգամ իբր իւր ժամանակս վարէ նաև զժամանակսն սահմանականին. թէ ըստ ներկային, թէ ըստ անկատարին, և թէ ըստ այլոյ։

Ըստ ներկային. որ, * Եթէ մեռանիմք, կեամք. և եթէ մեռուցանեմք, նոյն կենդանութիւն առաջի կայ մեզ || . Եղիշէ։
Ըստ անկատարին. որ, * Երանի՛ թէ զազատութին, զոր ետ ած բնութեանս, բարւոք ՚ի կիր արկանէաք || . Շնորհ։
Ըստ կատարելոյն. որ, * Եթէ յարեայք ընդ քի, ապա զվերինն խնդրեսջիք || . Կողոս. Գ. Ա։
Ըստ յարակատարին. որ, Եթէ այսու կենօքս միայն յուսացեալ եմք ՚ի քս, ողորմելի եմք քան զամ մարդիկ || . Ա. Կոր. ԺԵ. ԺԹ։
Ըստ գերակատարին. որ, * Եթէ դարձեալ էր նոցա առնա, գոյր նոցա տեղի ապաշխարութեն || . Մծբ. Գ։
Ըստ ապառնւոյն որ, * Գուցէ մոռացայց զշահ բնութեն || . Լամբրոնացի. ՚ի Մէկն. աղ. ԾԹ։

Յաղագս Աներևութի եղանակի։

Աներևոյթ կամ անորոշ եղանակն է, յորում բայն իբր վերացեալ նշանակէ զառս կամ զկիրս՝ առանց որոշման ժամանակաց, դիմաց՝ և թուոց. որ, Փրկել. բարերարել. խոնարհել. ընթանալ. լինել. եւն։

Այս եղանակ բայի վասն այսորիկ կոչի աներևոյթ, զի ոչ երևի ՚ի նմա ժամանակ ինչ. կոչի և անորոշ, զի դիմօք ոչ որոշի. և սակայն ՚ի ձեռն դերանուանց, կամ դիմո-

րոշական տառիս՝ կարէ նկատիլ ՚ի նոսա կարգ ինչ ըստ օրինակի դիմաց · որպ , * Փրկէ՛ր՝ ո՛չ է իմով զօրութեամբ , այլ՝ քոյին խնամօքդ ‖ · Լամբրոնացի :

Այլ գիտելի է , զի ՚ի հնումն սակաւ ուրեք ՚ի կիր առնուին զվերջաւորութիւնս իլ , թէ ՚ի հասարակ բայս , թէ ՚ի ձայնակրականս , և թէ ՚ի կրաւորականս · մանաւանդ այնոցիկ՝ որոյ ներգործականի ներկայն յանգի ՚ի ամ , և ՚ի ում · այլ՝ ըստ վերջաւորութեան ներգործականացն ձևացուցանէին զնոսին : Ուստի փոխ ասելոյ՝ Լինիլ · ծագիլ · բառնիլ · լնանիլ · թողանիլ · զեղանիլ · ևն · ասէին , Լինել · ծագել · բառնալ · լնուլ · թողուլ · զեղուլ · հերձուլ · առնուլ · ևն · որպ երևի յառաջիկայ օրինակդ · * Խրատեցայր ոչ լինել քան զօրէնսն օրինաւոր ‖ · Լամբ :

Եւ սակայն յորժամ հարկն պահանջէր , դնէին նաև վերջաւորութիւնս էլ · որպ , * Զեմ արժանի կոչիլ , և ո՛չ ընդունելի առ այս անուանիլ , ո՛չ միայն որդի , այլ և անպիտան սպասաւոր վարձկան ‖ · Ներսէս · ՚ի Բանն · ԽԷ :

Այլ արդ այժմ քանզի առաւել ՚ի գործածութեան է վերջաւորութիւն՝ իլ , քան՝ էլ , վնյ և մեք այսպէս կարգեցաք յառաջին մասին : Իսկ ՚ի ընդրութիւն յանգելոց ՚ի ամ և ՚ի ում , ուրեք ուրեք զերկոսին ևս եդաք ՚ի կրաւորականսն · զի ուր վայելչութիւն բանին պահանջեսցէ՝ ու դնել կամ ում , քան էլ , այնպէս արկցին ՚ի կիր : Զի յայսպիսիս՝ յաւէտ վայելուչ է այնպիսի վերջաւորութեամբ վարիլ , քան էլով · զի առաւել քաղցր է ասել , * ՚Ի բառնալ մեղացն՝ բարձաւ և պատերազմն , որ ընդ այ և մարդկան ‖ , ( Իգնատ · Է · 13 · ) քան ասել , ՚ի բառնիլ մեղացն : Եւ ևս՝ առաւել քաղցր է ասել , * ՚Ի լնուլ ձորոյն այնմիկ դիակամբք անթաղ մեռելոյն ‖ , ( Իգնատ · ՃԶ · 14 · ) քան ասել , ՚ի լնանիլ ձորոյն : Ըստ այսմ և յայլսն իմա :

Գիտելի է ևս , զի այս եղանակ բայի՝ ( որպ յիշեցաք յառաջին մասին , ) իբրև անուն հոլովի ընդ Գերուն՝ յեզակին և եթ · ո՛րգոն ·

Ուղղական. Գոլել.
Սեռ. Գոլելոյ.
Տր. Գոլելոյ. 'ի գոլել, առ 'ի գոլել.
Հայց. զԳոլել.
Բաց. 'ի Գոլելոյ.
Պատմ. զԳոլելոյ.
Գործ. Գոլելով.
Պարագ. զԳոլելով.
Ներ. 'ի Գոլել. 'ի գոլելս. 'ի գոլելդ. 'ի գոլելն, ևն։

Եւ այսպիսի Հոլովեալքս՝ ԴԵՐԲԱՅՔ կոչին. զի փոխանակ բայի. զի չեն յատկապէս բայ. որովհետև ո՛չ նշանակեն զժամանակս և զդէմս. այլ են մէջ բայի և անուան. զի իբր անուն Հոլովին. և փոխանակ բայի վարին. որ, յասելն, * 'Ի խաղաղանալս լինում՝ ամբոխիմ ||, (Նար. հզ.) դերբայս 'է խաղաղանալ՝ իբր անուն Հոլովեալ ներգոյական Հոլովիւ եդեալ է իբր բայ. որպէս եթէ ասէր. յորժամ՝ խաղաղիմ՝ ամբոխիմ։

Գիտել պարտ է և զայս, զի 'ի Հոլովել սոյա՝ բազում անգամ նախդիրն զօրութիւն ունի 'ի տրականն. որ, * Որ եկն կեցուցանել, ո՛չ կարաց անտես առնել ||. փոխանակ ասելոյ, որ եկն 'ի կեցուցանել. Իգնատիոս. ծէ. 10։

Եւ երբեմն ևս 'ի մէջ սոյ և 'ի մէջ նախդրին անկանի խնդիր սոյն. որ, * 'Ի զերկրորդն խուզել՝ զնախնին կորուսի ||. փոխանակ ասելոյ, 'ի խուզելն զերկրորդն՝ զնախնին կորուսի. Նար. ծէ.

Գիտելի է դարձեալ, զի աներևոյթ բայն յորժամ յարի 'ի նախադրութիւն՝ Վասն, Յաղագս, Ըստ, Փոխանակ, Զկնի, Յետ, երբեմն ունի առանց Հոլովման, կամ իբր զօրութիւն Հոլովեալ. որ, * Վասն զփառաբանութիւն ընդունել աղօթեայ ||. զի վն ընդունելոյ զփառաբանութիւն. Լամբ.

Այլ չէ պարտ յաճախել զայսպիսիս։

Երբեմն ևս, այլ սակաւ ուրեք՝ փոխանակ ունելոյ 'ի սեռական Հոլովն՝ ունի 'ի գործիականն. (թէպէտ և չէ արժան 'ի գործ ածել). որ, * Վասն ընդունելով սմա

զօրհնութեան յորդամանու զտ̃ր աղաչեսցուք || . ք̃ս վասն ընդունելոյ սմա . ՚ի մաղթոցէ:

## ԳԼՈՒԽ. ԻԱ.

### Յաղագս Խոնարհմանց և Լծորդութեանց բայից. և Բղխմանց նոցին:

Բառքս խոնարհմունք և լծորդութիւնք՝ բազում անգամ ՚ի տեղի միմեանց դնին ՚ի քերականութեան. որպէս և խոնարհիլն և լծորդիլն. զի փոխանակ ասելոյ, խոնարհմունք բայից, ոմանք ասեն լծորդունք, և ոմանք ևս վերադրմունք. և փոխանակ ասելոյ, խոնարհիլ բայից՝ ոմանք ասեն լծորդիլ, և ոմանք՝ վերանալ. ըստ որում և մեք ուրեք ուրեք եդաք:

Եւ սակայն մեծապէս զանազանին սոքա յիւրեանս ը̃ն նշանակութեան. ք̃զ զանազանին ՚ի միմեանց հոլովք և հոլովմունք անուանց. որպէս տեսցի այժմ:

Խոնարհմունք բայից են՝ պէսպէս փոփոխութիւնք մի և նոյն բայի ՚ի զանազան վերջաւորութիւնս, ՚ի դէմս, և ՚ի ժամանակս. թէ յեզականին, և թէ ՚ի յոգնականին. որգոն, Գործեմ, գործես, գործէ. գործեմք, գործէք, գործեն. գործէի, գործէիր, գործէր. գործէաք, գործէիք, գործէին. գործեցի, գործեցեր, ևն: Ըստ այսմ և յայլ ա̃մ բայս:

Այսպիսի փոփոխմունք վ̃նկ կոչին խոնարհմունք բայից, զի սոքօք զիջանին և խոնարհին բայք առ այս, կամ առ այն դէմս. առ այս, կամ առ այն ժամանակս, ևն:

Զի որ̃պ յանուանս՝ պէսպէս փոփոխութիւնք մի և նոյն անուան՝ կոչին հոլովք՝ վ̃ս հոլովելոյ և թաւալելոյ անուան յայնպիսի փոփոխմունս, նոյնպէս և ՚ի բայս պէսպէս փոփոխութիւնք մի և նոյն բայի՝ կոչին խոնարհմունք՝ վ̃ս խոնարհելոյ և իջանելոյ բային յայնպիսի այլայլութիւնս:

Եւ այլ խոնարհմունք բայից այնչափ են, որչափ փոփո-

խի մի և նոյն բայն ՚ի զանազան դէմս և ՚ի ժամանակս ։

Իսկ լծորդութիւնք բայից ոչ են պէսպէս փոփոխութիւնք նորին ըստ դիմաց և ըստ ժամանակաց, այլ՝ որոշմունք նոցին ընդ զանազան վերջաւորութեանց սահմանականի ներկայի ։ որպէս և հոլովմունք անուանց ոչ են պէսպէս փոփոխութիւնք մի և նոյն անուան, այլ՝ որոշմունք նոցա ընդ զանազան վերջաւորութեանց սեռականացն և գործիականաց ։

Արդ քանզի այսպիսի վերջաւորութիւնք սահմանականի ներկայի՝ են չորք ։ եմ, ամ, ում, իմ, լծորդութիւնք բայից ևս՝ ասին չորք ։ Առաջինն յանգեալ ՚ի եմ ։ Երկրորդն ՚ի ամ ։ Երրորդն ՚ի ում ։ և Չորրորդն ՚ի իմ ։ ընդ որովք լծին ամենայն բայք ։ և լծելով՝ որոշին առ այս, կամ առ այն տեսակ լծորդութեանց ։ ընդ որում եդաք յառաջին մասին ։ զորոց զօրինական թուեսցուք աստ կարգաւ ։

Ընդ առաջին լծորդութեամբ են այսոքիկ երեք օրինակք ներգործական բայից՝ հանդերձ իւրեանց կրաւորականօք ։ Գործեմ, հատանեմ, ասեմ ։ գործիմ, հատանիմ, ասիմ ։

Ընդ որս են և երկու օրինակք անցողականաց ։ Զօրացուցանեմ ։ մատուցանեմ ։ Եւ երեք ևս ներգործականաց չէզոքականաց՝ Դնեմ ։ մտանեմ ։ կարեմ ։ դնեմն ընդ գործեմին ։ մտանեմն ըստ հատանեմին ։ և կարեմն ընդ ասեմին ։ Զսոսա թէպէտ յայլևայլ տեղիս եդաք յառաջին մասին ։ բայց այն էր վասն որոշելոյ և եթ զչէզոքականսն ՚ի ներգործականաց ։

Ընդ երկրորդ լծորդութեամբ են չորս օրինակք ներգործական բայից ։ Աղամ ։ խոստանամ ։ բանամ ։ բառնամ ։ Եւ երեք ևս օրինակք ներգործականաց չէզոքականաց ։ Գնամ ։ կահանամ ։ դառնամ ։ գնամն իբրև զաղամն ։ կահանամն իբրև զխոստանամն ։ և դառնամն ընդ խմիք իբրև զբառնամն ։

Ընդ երրորդ լծորդութեամբ են չորս օրինակք ներգործական բայից ։ Թողում ։ Ջեռում ։ ընկենում ։ ընթեռնում ։

Եւ երկու ևս օրինակք չէզոքական բայից ։ Զարթնում ։ զջեռնում ։ որք ընդ խմիք առ խոնարհումն ընթեռնումին վերաբերին ։

Ըստ չորրորդ լծորդութեան են երեք օրինակք ձայնաւորական բայից. Հաղթեմ. Անանեմ. Փոխչեմ ։ հաղթեմն ըստ կրաւորականի գործեմին. անանեմն ըստ կրաւորականի հատանեմին. իսկ փոխչեմն խոստոյի ։

Ըստ սոսա են և երկու օրինակք Հասարակ բայից. Շոհեմ. ատանեմ ։ շոհեմն ըստ կրաւորականի գործեմին. և ատանեմն ըստ կրաւորականի հատանեմին ։ Թո՛ղ զանկանոն բայսն. որոց ոմանք առ առաջին տեսակ լծորդութեանց վերաբերին. և ոմանք առ երկրորդն ։

Յայսոսիկ լծորդութիւնս բովանդակին ամ՛ բայք լեզուիս Հայոց ։ Իսկ թէ ո՛յք են որոց խոնարհին, ուսանօղն ինքնին կարէ ուղղել. եթէ բարւոք ՚ի միտ առցէ զայն ամ՛, զոր եդաք յառաջին մասին ։ Բայց զգուշասցի՛ ևս, զի մի՛ բռնադատեսցէ զամ՛ բայ՝ ուր և իցէ՝ յամ՛ ժամանակս և ՚ի դէմս խոնարհեցուցանել. մանաւանդ զայնոսիկ, որք են ընդ օրինակօք հատանեմին և Նաղամեմին. զի թէպէտ և եդաք մեք ընդ նոքօք զամ՛ առ ամբողջութի գործոյս, բայց քերթողն ևս պարտի հայել ՚ի վայելչութի լեզուին. և ըստ այնմ վարել զնոսին ։

Եւ առ զգուշութի այսր՝ զոմանս ՚ի բայից անտի, որք են ընդ օրինակաւ հատանեմին և Նաղամեմին, և այլոց ևս ոմանց, պակասեալ եդաք ՚ի դէմս ինչ, մանաւանդ կատարեալ ժամանակին. և զոմանս ևս կարգեցաք խոտորմամբ իւիք. ըստ որում գտաք ՚ի շարադրութիւս նախնեաց ։

Նաև ծանուցաք անդ՝ թէ այս ինչ բայ, որ ընդ այսու օրինակաւ պարունակի, ընդ այլով ևս լծորդի. որպէս զի շարադրողն՝ եթէ տեսցէ, թէ այս ինչ բայ ըստ այսմ լծորդութե խորդ լինի ՚ի շարադրութեն՝ զոր առնէ, ըստ այլում օրինակի լծորդեսցէ. և զվայելչութն ընտրեսցէ ։

Եւ ևս պա՛րտէ զգուշանալ ՚ի գործածութիւս կրաւորական բայից. զի բայք ՚ի յառաջին լծորդութեանց, որք են՝ Գործեմ և հատանեմ. և որ ընդ նոքօք. ո՛չ է արժան յանձնել զկրաւորականս այլոց լծորդութեանց. բայց եթէ զկատարեալն և զապառնին և եթ ։ Մանաւանդ զի բազումք ևս ՚ի նո-

ցանէ ՝ի կրաւորականն պակասին. ընդ որում կարգեսցուք յառաջին մասին։ Եւ զորս եղաք ևս անդ, ո՛չ է պարտ նաև զնոսին վարել անխտիր. այլ ընդ տեղւոյն, ուր հարկն ստիպեսցէ, և կամ վայելչուն բանին պահանջեսցէ՝ ՝ի բացատրութիս մեկնութեց և մակացութեց։ Այսմ քեզ յարացոյց առ զնախնիս մեր, որք միայն ՝ի հարկաւոր տեղիս և ընդ պահանջելոյ բանին՝ ՝ի գործ ածէին զայսպիսիս. որպէս յայս օրինակ. * Լուանիցեմ, և նովին զազրանամ ||. Նար։

Իսկ եթէ կրաւորականապէս դնելն խորդ թուեսցի ՝ի ոսոա, միթէ է կազմել զայն էական բայիւ. որպէս և նախնիք մեր առնէին. որպէս, * Լուացեալ լինիցիմ, և ո՛չ պայծառանամ ||. Նարեկ. կէ։

Այլ եթէ չգուցէ ինչ հարկաւորութի. և կրաւորական լինելն բայից լիցէ յայտնի, հնար է ՝ի տեղի կրաւորականաց վարել զներգործականս նոցին. որպէս երևի բազում ուրեք ՝ի գիրս նախնեաց մերոց. որպէս, * Դու այն երկիր ես, որ ոչ Թանաս ||. ընդ Թացել լինիս. Եզեկ. իբ. 24։

Զայս մի ինչ ևս արժան համարիմ ծանուցանել աստանօր. զի նախնիք մեր որպէս զներգործական բայս երբեմն վարէին փոխանակ կրաւորականի, սոյնպէս ևս երբեմն, այլ սակաւ ուրեք՝ զկրաւորականսն վարէին ՝ի տեղի ներգործականի. որպէս, * Եդաւ զթագ զասխայուոյն ||. ընդ եդ. ա. Մակ. ժա. 13. Յետադիր։

Այլ պա՛րտ է զգուշանալ ՝ի գործածութե այսպիսեաց։

Իսկ յաղագս բղխմանց ժամանակաց բայից, և վն կերպաւորելոյ դիմաց նոցին՝ գիտելի է, զի սք են հետևմունք խոնարհմանց բայից. իբր զի ՝ի խոնարհիլ բայից՝ յարմատոյ նոցին, (որ ՝ի կանոնաւոր բայս միայ անփոփոխ), ծագին և հետևին ժամանակք և դէմք նց՝ ՝ի ձեռն սահմանականի ներկայի և կատարելոյն. որգոն, Գործ= եմ, ես, է. եմք, էք, են. էի, էիր, էր. էաք, եւն։ Գործ= եցի, եցեր, եաց. եցաք, եցիք, եւն։ Գործ= եսցի, եսցես, եսցէ.. եսցուք, եւն։

## ԳԼՈՒԽ · ԻԲ ·

### Խոտորմունք ինչ ՚ի խոնարհմանս բայից :

Կան ՚ի հին գրեանս պէսպէս խոտորմունք խոնարհմանց բայից , զորս անպատշաճ համարեցաք դնել յառաջին մասին : Քանզի ոմանք յայնցանէ՝ ոչ են ՚ի սովորութեան, և ՚ի յաճախ գործածութեան · այլ է տեսանել ՚ի սոսին·

* Ընթացայ ՚ի նաւահանգիստն || · Տր ընթացայ · Ոսկ · ղուկ · ծէ · 20 :
* Լուր լինի գրաբարու քոյ || · Տր լսելի · Եփրեմ · ծ · 24 :

Եւ այլ ևս նմանք , զորս աւելորդ վարկաք դնել :

Առ սոսա վերաբերին և այսոքիկ բայք , զորս ոչ եդաք յառաջին մասին · Անցանիմ · Հեծանիմ · երդնուլիմ · երթանամ · գիտենամ · յղենամ · մտեմ · վերանին · գնանին · գումարեայ · փախուցեայր · մի խնայեար · արձակեայր · սքանչանի · տողանի · դնանիլ · քնանիլ , կամ քնանել · չուգալ · լինոյել · եղոյել · էք · եսցէ : Փոխանակ աւելոյ · Անցանեմ · Հեծանեմ · երդնում · երթամ · գիտեմ · յղանամ · մտանեմ · վերանամ · գնիմ · գումարէ · փախուցեր · մի խնայեր · արձակեր · սքանչանայ , կամ սքանչելի լինի · տողի · դնիլ · քնանիլ , կամ քնանուլ · երթալ · լինել · եղանիլ · է · լիցի :

Ոմանք ևս յայսպիսի խոտորմանց դնին ՚ի բեր Ծաբառ վն պարզ իմացուցանելոյ զմիտս բանին · որպէս են սք ·

* Անհաս || · Տր եղէ · Նարեկ · ՚ի Մեկն · Երգերգոց :
* Ողջ լեք || · Տր ողջ լերուք · Մագիստրոս · առ Գագիկ :

Եւ այլ ևս նմանք · զորս ոչ է արժան առնուլ ՚ի կիր :

Այսպէս և յընդունելութիւն գտանին ինչ ինչ խոտորմունք · յորոց պարտ է զգուշանալ · որպիսի են սք ·

* Որք արդն գեղեցիկ , այլաբանութեանս կերտողօղ || · Տր կերտող · Գրիգոր Մագիստրոս · առ Սարգիս վրդ :

Որպէս ուրեք ևս գտանին խոտորմունք ինչ , որք երևին

լինել սխալանք, կ̄ այլայլութք մտեալք յանհմուտ գրչաց · ուր է տեսանել ՚ի սոսին ·

* Զայս գիտմ Թմգաւոր || · փ̄ գիտեմ · ՚ի Ճառընտիրս ։

* ՚ի նշանայն ծանաք || · փ̄ ծանեաք · Նոննոս · Է · 70 ։

Ընտ սոքին, և այլևս բազումք յոյժ՝ յայտնի սխալանք են · ըստ որում տեսաք ՚ի բաղդատութեան պէսպէս ձեռագրաց ։

## ԳԼՈՒԽ · ԻԳ ։

### Յաղագս ընդունելութեան ։

Թէ քանի՞ էջք, և քանի՞ դարձուածք նր ։

Ընդունելութիւն է մասն բանի, որ նշանակէ զիրն ՚ի յառնելութենէ, կ̄ ՚ի կրելութենէ · և մերթ զառս կ̄ զկիրս ընդ ժամանակաւ · որգոն Այրօղ · այրեալ, կ̄ այրեցեալ · այրելոց · այրելի ։ Զի այրօղն նշանակէ զիրն յառնելութենէ այրելոյ զայս ՚ի ներկայ ժամանակի ։ Իսկ այրեցեալն նշանակէ զիրն ՚ի կրելութենէ այրման յանցեալ ժամանակի ։ Սոյնպէս և այրելոցն միապէս նշանակէ զիրն ՚ի ներգործութենէ այրելոյ յապայն · և այրելին՝ ՚ի կրելութենէ այրման յապառնին ։

Յորս ոչ երևի, ընդունելութիւնք ունելով զզօրութիւն անուան, ունին միանգամայն և զզօրութիւն բայի · զի են իբր անուն ՚ի բայից բղխեալ՝ ՚ի ձեւն չորից վերջաւորութեանց՝ օղ, եալ, լի, լոց ։ Իւ միանգամայն ցուցանեն զայնպիսի առս և զկիրս, զորս նշանակեն բայքն յորոց բղխեն ։

Այս մասն բանի՝ կոչի ընդունելութիւն վ̄ն երկուց · Նախ՝ զի ընդունի զանուն ՚ի յառնից, կ̄մ ՚ի կրից, յորս իցեն նշանակել լինել · զի որ այրէ, ՚ի յայրելոյն առեալ զանունն՝ այրօղ ասի · և որ այրի, յայրմանէ անուն՝ այրեալ կ̄մ այրեցեալ կոչի · ըստ այսմ խմա և վ̄ն այլոյն ։ Երկրորդ՝ զի յերկուց մասանց բանի նա ընդունի զպարագայս · փ̄ յանուանէ և ՚ի բայէ · ուր տեսցի այժմ ։

Պարագայք ընդունելութեանց են վեց · այս է, Սեռ, Ձև, տեսակ, ժամանակ, թիւ, և հոլով ։ Սեռն, Ձևն, տեսակն և ժամանակն՝ որպէս բայից · իսկ թիւն և հոլովն՝ որպէս անուանց ։

Սեռք ընդունելութեանց չորք են, որպէս և բայից · Ներգործական · փրկօղ · փրկեալ · փրկելոյ ։ Կրաւորական · զրկեալ, կամ զրկեցեալ · զրկելի, կամ զրկելոյ ։ Չէզոքական · ընթացօղ · ընթացեալ · ընթանալոյ · ընթանալի ։ Հասարակ · խօսօղ · խօսեալ, կամ խօսեցեալ · խօսելոյ · խօսելի ։

Ձևք ընդունելութեանց են երեք · Պարզ · գործօղ · գործեալ ։ Բարդ · կենագործօղ · կենագործեալ ։ Բաղադրեալ · ներգործօղ · ներգործեալ ։

Տեսակք ընդունելութեանց են երկու · Նախադիպ · հնչօղ · հնչեալ ։ Ածանցական · հնչեցուցանօղ · հնչեցուցեալ ։ Ոմանք որպէս անուանց ևս կարգեն տեսակ ընդունելութեան այսպէս · հնչողական · հնչողութիւն, ևն · բայց այս կարգութիւն վերաբերի առ անուանս · զի այսպիսի բառք իբր անուանց վարին ։

Ժամանակք ընդունելութեանց են երեք · Ներկայ · գրաւօղ ։ Անցեալ · գրաւեալ ։ Ապառնի · գրաւելոյ · գրաւելի ։

Թիւք ընդունելութեանց են երկու · Եզական · ծագօղ · ծագեալ · ծագելի ։ Յոգնական · ծագօղք · ծագեալք · ծագելիք ։

Հոլովք ընդունելութեանց են տասն, որպէս և անուանց · զորս գիտելի է, զի որք ՚ի եալ յանգին, հոլովին՝ որպէս գետ, գետոյ, ևն, զօրացեալ, զօրացելոյ · զօրացեալք, զօրացելոց, ևն ։ Եւ որք ՚ի լի յանգին, հոլովին՝ որպէս եկեղեցի, եկեղեցւոյ · ևն, գովելի, գովելւոյ · գովելիք, գովելեաց ։ Իսկ որք ՚ի լոյ յանգին, ոչ հոլովին ։ Այլ որք ՚ի օղ յանգին, որպէս եզականին հոլովին՝ որպէս ճառօղ ճառողի · փոխարկելով զօ տառն ՚ի ո · իսկ որպէս յոգնականին՝ որպէս ճառողք, ճառողաց · ևն ·

| | |
|---|---|
| Վաճառօղ · | Վաճառօղք · |
| Վաճառողի · | Վաճառողաց · |
| Վաճառողի · ցՎաճառօղ · | Վաճառողաց · ցՎաճառողս · |
| զՎաճառօղ · | զՎաճառօղս · |
| 'ի Վաճառողէ · | 'ի Վաճառողաց · |
| զՎաճառողէ · | զՎաճառողաց · |
| Վաճառողիւ · | Վաճառողօք · |
| զՎաճառողիւ · | զՎաճառողօք · |
| 'ի Վաճառօղ, կ̃ 'ի վաճառողի · | 'ի Վաճառօղս · |
| ով Վաճառօղ ։ | ով Վաճառօղք ։ |

## ԳԼՈՒԽ · ԻԴ ։

### Գիտելի ինչ 'ի վերայ ընդունելութեանց 'ի ժամանակս ։

Վասն ընդունելութեանց յանգելոյ 'ի օղ գիտելի է, զի 'ի կրաւորական բայից բնաւ ոչ ելանեն ընդունելութիւնք վերջաւորութեամբ օղ · այլ եալ, լի և լոց ։
Եւ թէպէտ ուրեք ուրեք դնի եցօղ · որպէս, Այրեցօղ · սիրեցօղ · ատեցօղ · եւն, բայց այսոքիկ 'ի գործ ածին 'ի ներգործականս և 'ի չէզոքականս · որ, * Զբոցն 'ի բաբելոն՝ (արար զնա) մանկանցն ցօղ, և քաղդէացւոցն հուր այրեցօղ || · Շնորհ · Բղբ ։
Իսկ 'ի կրաւորականս՝ փոխանակ օղի դնեմք եալ · որ · * Հրաշալի ծննդութիւն 'ի յերկրի նահատակեալ, և 'ի յերկինս պսակեալ || · 'Ի Շարականացն · Կոչման · Ճծէ ։
Ըստ այսմ և ընդունելութիւնք այսց չէզոքական բայից, որք են ըստ օրինակաւ գործնականին, ոչ լինին օղ, այլ եալ · ուստի և փոխանակ դնելոյ, Զարթնօղ · Հարթնօղ · Թաքնօղ · սառնօղ · եւն · դնի, Զարթուցեալ · Հարթուցեալ · Թաքուցեալ · սառուցեալ · եւն · որ, * Եղեն որպ երազք զարթուցելոյ || · Սաղ · ՀԲ · 20 ։
Նոյնպէս և ընդունելութիւն կամ բային հասարակօրէն ոչ դնի յանգիւս օղ, այլ եալ · որ, * Զկուսութեանց ըղձնի եկեալքս || · 'Ի եկօղքս · Խորհրդ ։

Թէպէտ ուրեք ուրեք օղ յանգիւ ևս գտանի եդեալ. որպ,
* Գրով աւանդեցին զա՛մն զկնի եկողացս ||. Հնոց։
Գիտելի է ևս, զի բազում անգամ միայն օղէ դնին զի-
մաւոր բայք՝ մասնկամբս որ. որպ, * Որ առնէ զմեղս,
( որ առնօղն մեղաց ) ծառայ է մեղաց ||. Յովհ. Ը. 34։
Երբեմն ևս դնին ածականք անուանք ընդունականք. որ-
գոն, Կիզիչ. անարգու. պահանորդ. գտակ. զարթու-
ցիչ. և այլն. որ կիզօղ. անարգօղ. պահօղ. գտօղ. զար-
թուցանօղ. և այլն։

Վասն ընդունելութեց յանգելոյ ՝ի ԵԱԼ գիտելի է, զի
սքն երբեմն իբրև բայ վարին, և երբեմն իբրև անուն. որպ
ունիմք աստ և յերրորդ մասին. գլ. ԺԲ։

Դարձեալ գիտելի է, զի սքն երբեմն դնին փոխանակ ան-
երևութի. որպ երևի յայսմ օրինակի. * Այնպէս ու-
րախացեալք ՝ի սէրն այ՝ մինչև չհամարեալ զինքեանս
՝ի մարմնի, այլ՝ յերկինս ||. որ չհամարել. Եղիշէ։

Այս պարտ է ՝ի գործածութե սց զգուշանալ։

Վասն ընդունելութեց՝ որք յանգին ՝ի ԼՈՑ, գիտելի է, զի
սք միշտ իբր բայ վարին, թէ ՝ի ներգործականս, թէ
՝ի կրաւորականս, և թէ ՝ի չէզոքականս։

՝Ի ներգործականս. որպ, * Լսելոց են զբօթ և զգոյժ ա-
հաւոր սպառնալեօք ՝ի անէ ||. Յաճախապատում. Է։

՝Ի կրաւորականս. որպ, * Կշտամբելոց եմ ո՛չ յօտարաց,
այլ՝ ՝ի բերանոյ իմոյ ||. Լամբ. ՝ի Մեկն. պտ։

՝Ի չէզոքականս. որպ, * Արդ զինչ արարից մեղուցեալ
անձամբս, որ չեմ ապրելոց յահագին հրոյն ||. Հար։
* Ելանելոց եմք ՝ի մարմնոյ աստի ||. Եղիշէ Վրդ. Է։

Բայց գիտելի է, զի յաճախ գործածուի այսպիսի ընդու-
նելութեց ստգեղայութեանն զկատարումն չարադրութեց. վասն որոյ
բազում անգամ ՝ի տեղի այ դնեմք զբայսդ հրամայեցեալ,
կամ անցիլ. և մերթ ևս՝ հաստատ. որպ. * Իթէ հան-
դերձեալ էք քոյ լինել գործակից, պարտիք և Ճանա-
պարհի նորին լինել հետևօղ ||. այ, եթէ լինելոց էք
գործակից քոյ. Հնոց. ԲԺԲ։

* Եւ եթէ անտես առնէ, ունի տոկոսեօք վճարել առաջի քո || . փխ վճարելոց է . Շնորհ . ընդհանր ։

* Զի՛ պիտոյ էն ինձ այն կեանք, եթէ մեղօք հասանէ ինձ կեալ || . 'ի Ճառընտիր ։

Երբեմն և դնեմք, դարձ է, կամ դարձեալ, ևն . օր, * Ո՛չ պարտի մարդ երանել զբարերախտութիւն իւր մինչև ցվախճան || . Յովհաննէս Ոսկ ։

* Եթէ արատ ինչ մեղաց տեսանիցէ յոք (առաջնորդն), սիրով և արտասուօք պարտ է բժշկել || . Ներս . Եկեղ ։

Գիտելի է և, զի ընդունելութիւնս գործոց և ընթերցոց՝ ուրեք ուրեք նաև իբր անուն վարին՝ նախդրիւ միայն հոլովելով . օր, * Եւ զգալոյն պատմեսցէ ձեզ || . Յովհ ։

* Յաղագս մանէ հոգւոյն զլինելոյս նախատեսեալ . . . . . պատրաստէր || . Յովհ . Իմաստ . ա ։

Վասն ընդունելութեանց յանգելոց 'ի ւէ՝ գիտելի է, զի սք բղխեն յամ կրաւորականն և 'ի ձայնակրականն և 'ի հասարակ բայից . և նշանակեն իբրև լինելի . որգոն, Պատմելի . հրաժարելի . դառնելի . ևն ։

Իսկ եթէ բղխեսցեն և 'ի ներգործականաց, ունին յայնժամ զզօրութիւն օշի . օր, * Ինչքն և ստացուածքն՝ գուշակելեայն լիցին || . փխ գուշակողացն . Է . Մաշ . Է . 18 ։

Ըստ այսմ վարին երբեմն և բղխեալքն 'ի չէզոքականաց . օր, * Քանզի կայրէ և ոչ գնալ գնալին, և ոչ տեսանել տեսանելին || . փխ գնայօղն . Դաւիթ անյաղթ ։

Այլ 'ի յաճախ գործածութէ սդ պարտ է զգուշանալ ։

Ոմանք յընդունելութեանց առաւ դնին երբեմն և փոխ ընդունելութեանց յանգելոց 'ի ւոց՝ մանաւանդ ընդունելութեան գերբէն . օր, * Խնդրէ ջերմեռանդն արտասուօք զքաւութի . և առնու զխնդրելին || . Յաճախ . ծէ ։

Գիտելի է և, զի այսպիսի ընդունելութիւնք բազում անգամ յարելով յէական բայս՝ վարին գրեթէ իբր դիմազուրկ բայ . օր, * Անկարելի է . . . երկուց հակառակ տերանց ծառայել, և հաճոյանալ || . Շնորհ . ընդհ .

Այլ գիտել պարտ է, զի բազում անգամ փոխ վարելոյ

զսոսա իբրեւ զբայ , դնեմք զաներեւոյթս սոյին էական բայ-լս՝ է , կամ գոյ , կամ դիմազուրկ բայիւքս՝ պարտ է , արժան է , պիտի , եւ այլն . որպէս * Բայց ինձ ոչ փոքր է հիա-նալ || . որ է ոչ փոքր հիանալի է . Շնորհ . Եղբ .

## ԳԼՈՒԽ . ԻԵ .

### Յաղագս Նախադրութեան .

Նախադրութիւն է մասն բանի , որ ՚ի յարիլն յան-ուանս՝ եւս եւ յայլ մասունս բանի իբր յանուանս , ցուցանէ զպարագայս ինչ իրին , զոր անուանն նշանակէ . իբր զի եղեալ յառաջոյ անուանն , յայտ առնէ զայն ինչ , որ շուրջ զիրօք մնածի ։

Արդ՝ նախադրութիւնք բաժանին յերկուս ազգս . այսինքն ՚ի հոլովակերտս , որք նախդիր կոչին . եւ ՚ի հոլովառուս ։ Այլ հոլովակերտք , որք են , ՚ի . յ . առ . ըստ ՚ը . ց . զ . եւ ընդ . տես ՚ի բառարանի ։ ընդ որս տես եւ զբառս ։

Իսկ վասն հոլովառութեան , զորս ըստ կարգի հոլովից եդաք յառաջին մասին . Գլ . ԺԶ . Գիտելի է նախ , զի ոմանք ՚ի նոցանէ երբեմն առնուն զկրկին խնդիր ՚ի միասին . եւ ոմանք զայլ՝ փոխանակ բուն խնդրոյ իւրեանց . որպէս է տեսանել ՚ի հետագայդ ։

Նախադրութիւնքս՝ մինչ , մինչեւ , երբեմն առնուն միանգամայն զբացառականն եւ զնախդիրն տրականն . որպէս .
* ՚Ի դաւթէ մինչ ՚ի քրիստոս հազար ամ է || . Վարդան . տող . 83 ։
Նախադրութիւնքս՝ յառաջ քան , յետոյ քան , ՚ի վերայ քան , եւ այլն առնուն միանգամայն զհայցականն եւ զգործիականն . որպէս .
* Գտանեմք զժամանակս կիւրոսի՝ երկերիւր ամաւ յառաջ քան զներքսանեբայ ( ժամանակն ) || . Խոր . Է . 12 ։
Նախադրութիւնքս՝ հեռի , ՚ի բացեայ , մեկուսի , առնուն երբեմն զբացառականն եւ զգործիականն , մանաւանդ ՚ի փարիլն էականն բայիւ . որպէս եւ նախադրութիւնքս՝ մերձ , մօտ , հանդէպ , առնուն երբեմն զտրականն եւ զգործիականն . որպէս . * Թաղեցին

պատուով՝ ՚ի մէջ պողոտային՝ չորս աստղաբխաւ հետեւ ՚ի
քաղաքէն || . Յայսմաւ . յուլիսէ . ծէ ։

Նախադրութիւնքս՝ Մերձ , Մօտ , Հուպ , երբեմն հանդերձ նախադրիւս առ՝ առնուն զվերջահոլովն տրական . դր . * Մերձ առ նմին հանգուցեալ || . Երզնկացի . ՚ի փող . ըստ ։

Նախադրութիւնքս՝ շուրջանակի և հանդերձ , երբեմն՝ այլ սակաւ ուրեք արտաքոյ սովորութեն առնուն զսեռականն . դր . * Շուրջանակի նր յարդարեաց կալուածս || . Յովհ . չոբէ ։ * Թողլով՝ ՚ի նոսա զմասն ալքունի . . . . հանդերձ առանձին մնոյ և ուռձկաց || . Խորէն . է . 21 ։

Գրելի է երկրորդ , զի զատանին և ես նախադրութիւնք ինչ՝ զորս մեք ոչ եդաք յառաջին մասին . վն զի առ նախնիս մեր հազիւ ուրեք երեւին նոքին , և կամ յատենաւոր բանս միայն . որպիսի են սք . Թարց . Բանց . Մակ . Մաս . Հետ . Հետե . ՚ի հետ . ՚ի յետ . ընդդէմ . էնդ . Ետզոս . Կարաս . պարէԷր . Տէղ վէրայ . պէա . չէյէն . չէա . եւն ։ Ընդ որս դասի և բառս փոխ՝ ՚ի վերինն մինչ նախադրութեան՝ Յաց . դր . * Թարց միոյ երկբայութեան զնորայնունի բարեմնութն || . պեաց ։

Գրելի է երրորդ , զի երբեմն ոմանք ՚ի մակբայից ևս խնդիր առեալ՝ վարին իբրև զնախադրութի . դր . * ՚Ինքեա բերքացուցին ոչինչ թեթև վիշտս ( էր ) || . է . Մակ . 15 ։

Երբեմն ևս ածականն անուանք ինչ խնդիր առեալ՝ վարին իբր նախադրութի . որպիսի են սոքին . Նման . Հանգոյն . Չէզ . Ներհակ . Մերձ . Օտար . Ընդհատ . Զուգ . Խառն . Յանձնա . եւն ։ Ընդ որս կարէ դասիլ և բառս՝ Ճահ , կ ՚ի Ճահ . դր . * Որ սիրէ զնձ , նման նմին սիրէ զնմ մարդոյ զկեանն || .

Խոսրով ։

Այնպէս ևս երբեմն գոյականն անուանք ինչ՝ հոլովմամբ իւեք խնդիր առեալ ՚ի սեռականն հոլովի ( որ համարի իբր յատկացուցիչ նց ) վարին իբրև նախադրութի . որոց զբաղումն՝ որք համառօտօրէն իբր այնպիսի վարին , եդաք յառաջին մասին . ընդ որս կարեն դասիլ և սոքին . ՚ի դէմս . ՚ի դէմ . յերեսաց . ՚ի շնորհս . առ ՚ի պատճառս . պատճառաւ . ՚ի թիկանց . ՚ի հանդիմանց . ընդ հանդէպ . ընդ հա-

զոյ · յուէց · 'ի մօէց · առ մօէ · եւն · որ ·
* 'Ի դէմս եկեղեցւոյն սկսանի օրհնել զԱծ || · Սղմ ·
Գրաւելի է չորրորդ, զի նախադրութիւնք թէպէտ հասարակօրէն յառաջոյ դնին խնդրոյ իւրեանց, ըստ որոյ և կոչին նախադրութիւնք · բայց բազում անգամ ևս յետոյ դնին ·
որ, * Զարին զնա միտեցոյ || · Նուրբէ · կէ ·
Եւ երբեմն ևս՝ ըստ մէջ նախադրութեան և խնդրոյն անկանի այլ մասն բանի · որ՝ կամ բայ, կամ խնդիր խնդրոյն, և կամ՝ այլ ինչ · որ, * Զհայր առաքինութեան բարձին, և զնոյն գնային քի || · որ գնային զկնի քի · Շնորհ. :
Գրաւելի է հինգերորդ, զի յայնպիսի նախադրութիւնս, որք ունին զնախադիր, որպէս են, զկնի, զհետ, յաղագս, եւն, երբեմն կրկնի նախադիրն նաև 'ի վերայ խնդրոյ նոցա · որ ·
* Զմիմեանց զկնի անհետ 'ի վր գային || · Խոր · ա · 2 :
Իսկ երբեմն դնի միայն 'ի վերայ խնդրոյ նոյին · որ,
* Զմիմեանց կնէ կալգեալ տոլեսցին || · Ագաթանգեղոս :
Երբեմն ևս՝ ուր պիտոյ է կրկնել նախադրութեան՝ նախադիրն միայն կրկնի 'ի տեղի նր · որ, * Ընթ զհետ արդարութե, զաստուածպաշտութե, զհաւատոյ, զսիրոյ, զհամբերութե, զհեզութե || · ա · Տիմ · զ · 11 : Յորս զօրութք կրկնի նախադրութիս՝ զհետ · որպ թէ ասէր · երթ զհետ արդարութե, զհետ աստուածպաշտութե, զհետ հաւատոյ, եւն :

## Վ̃ Խնդրառութեան նախադրութեանց, Իբրև · իբր · իբրու, որպէս · քան :

Սորա թէպէտ հասարակօրէն առնուն զխնդիր 'ի հայցական հոլովն · որպ և եդաք յառաջին մասին · բայց բազում անգամ ևս ըստ պահանջման բանին և 'ի զօրութ բային պէսպէս խնդիրս առնուն՝ գրեթէ յամ հոլովս յուղղականն, 'ի սեռականն, եւն :
Յուղղականն · որ, * Իբրև այլազգիք և այլալեզուք տանիմք և բերեմք ( բամբասանք ) զմիմեանս || · Յոհ · Ոսկ :
'Ի սեռականն · որ, * Իբրև օձի զթոյնս 'ի բաց եդեալ՝ ցեսպանս առ իշխանն տոմ առաքէր || · Յոհ · Ոսկ :

Ի վերջահոլով տրականն . որ , * Իբրև անմահից հա- տուցանէ մեզ զվարձս վաստակոց մերոց || . Եղիշէ . Է :

Ի նախդրիւ տրականն . որ , * Զգէ զբանն առ ոչ ինտրոս իբրև ի գլուխ աշակերտացն || . Իգնատ . ԻԷ . 30 :

Ի հայցականն . որ , * Մինչ իբրև զգալ դարբնոց ան- ուան յանմուեալ քարացեալ սրտին || . Նար . ԻԵ :

Արդ երբեմն զօրութիւն ունին զհայցականն՝ և ներգոր- ծութիւն զյատկացուցիչ նոցա . որ , * Ո՛չ իբրև զմահկանա- ցուի համարի զմահս մեր || . Որ ո՛չ իբրև զմահս մահ- կանացուի համարի զմահս մեր . Եղիշէ . Է :

Ի բացառականն . որ , * Ի բարկութենէ և ի նորին չա- րութենէ իբրև ի կատաղի գազանէ զերծեալ ի բա՛ց դարձու- ցուք || . Մարգ . յոհ . Ը . յորդոր :

Ի պատմականն . որ , * Ո՛չ ասէ զսակաւ՝ իբրև զբազ- մաց , այլ՝ իբրև զմիոյ || . Գաղ . Գ . 16 :

Ի գործիականն . որ , * Վերակացուք մարդկան ունին բա- նիւ կակղել զխստութիւն մտաց՝ իբրև բրչաւ || . Իգն . ԾԷ :

Ի պարառականն . որ , * Իբրև զփեսայիւ էարկ զինև զվարկածն || . Կոչ . ընծայ . Ը . 2 :

Ի ներգոյականն . որ , * Կալով ի լռութեան իբրև ի խոր- հրդեան՝ առաւել քառասուն || . Արիստակէս Վրդ :

Նախադրութիւն . որ , * Զանձն իւր եդ ի վր ձեր իբ- րև ի վերայ սիրելեաց և բարեկամաց || . Մարգէլ :

## ԳԼՈՒԽ . ԻԶ :

## Յաղագս Մակբայի :

Մակբայն է մասն բանի , որ պարագայս կամ զե- ղանակս գործողութեանց նշանակէ , զի եղեալ մակ բայից , որ ի վերայ բայից՝ ցուցանէ զպէսպէս եղանակաւ կատարիլն գործողութեանց . և զի այս պէսպիսութիւն կարէ մի- տածիլ երեսուն և երեք օրինակաւ , յայն սակս երեսուն և երեք տեսակք մակբայից թուին . Որակական . քանակա-

կան. Ժամանակական. տեղական. եւն. ոչ եղաք յառաջին մասին. զորոյ զբացատրութիւն առաջի դիցուք աստ համառօտիւ:

Որակականք են, որք 'ի յարիլն 'ի բայս՝ ցուցանեն զորակութիւն կամ զորպիսութիւն գործողութեան կամ՝ կարողութեան, զոր բայքն նշանակեն. որպէս, * Որք տարփնաբօր անցանեն ընդ վիշտս . . . ուրախ առնեն զանձ || Յոհան. ԺԷ:

Քանակականք են, որք 'ի յարիլն 'ի բայս՝ ցուցանեն զքանակութիւն գործողութեան, կամ կարողութեան. որպէս, * Որքան կարեմ, զայն առնեմ || Մագիստրոս:

Ժամանակականք են, որք ցուցանեն երբ լինելն գործողութեան. որպէս, * Աւուր թագաւորեցաք, յորժամ զբարիս գործեցաք || 'Ի Հոր Ոսկեբերանէ:

Տեղականք են, որք ցուցանեն ուր լինելն գործողութեան. որպէս, * Որք տունէն ոչ լուսաւորին, ուր զշիջանել ունին || Խոսրով:

Դասականք են, որք ցուցանեն զկարգ կամ զդասաւորութիւն ինչ 'ի գործողութեան. որպէս, * Մի քան զմի առաւելուն բարեբախտութեամբ || 'Ի Գիրս Պիտոյից:

Հարցականք են, որք ցուցանեն զխնդրելն կամ զհետազօտելն գործողութեան. որպէս, * Ընդէ՞ր զինեալ լինիցիմ քո ներհակ || Ներսէս. 'Ի Բանն. ԽԷ:

Ժողովականք կամ հաւաքականք են, որք ցուցանեն զհաւաքմամբ լինելն գործողութեան. որպէս, * Մեծամեծ զօրօք ամբարձեն 'ի տեղիս խուրեանց դառնան || Վեցօր. Է:

Համայնականք են, որք ցուցանեն զմիանգամայնութիւն կամ զբովանդակութիւն ինչ 'ի գործողութեան. որպէս, * Միանգամայն արբին զհուր հոգւոյն || Ագաթ:

Զատականք են, որք ցուցանեն զորոշումն ինչ 'ի գործողութեան. որպէս, * 'Ի բաց խոտորեցուք 'ի մոլար վարդապետաց || Գէորգ. Եպս. 43:

Ստորասականք կամ յանձնառութականք են, որք ցուցանեն զստուգութիւն կամ զյանձնառութիւն ինչ գործողութեան. որպէս, * Աշխարհին գալիք ամենայն էին աշակերտքն ( քնի ).

զոր ինչ լսէին , զնոյն և հաւատային || . Մովսէս . Զսա
դաւիթ անյաղթն կոչէ խոստերդմնական . իբր զի ՚ի մէջ
բերէ սովաւ խօսն ինչ եղանակ երդման ։

Բացասականք են , որք յայտնեն զբացասելն գործողութեան .
որպ . * Ոչ փոփոխին կարգք արարածոց || . Եզնիկ . Է . 43 .
Զսա կոչէ դաւիթ անյաղթն ապերդմնական . իբր զի սո-
վաւ առանց երդման բաց ասի գործողութիւն ։

Արգելականք կամ հրամայականք են , որք յայտնեն զար-
գելումն գործողութեան . որպ . * Մի տրտմեցուցաներ զոք .
և մի տրտմիր յումեքէ || . Ներս ։

Նմանականք կամ համգունականք են , որք յայտնեն ըղ-
համգիտութիւն ինչ գործողութեան . որպ . Որպէս՝ կարև և զանձ-
րև և զիմ բարութիւ վայելեն արդարք և մեղաւորք , այս-
պէս և զբաժակ պատուհասին ՚ի միասին ըմպեն . իսկ իւ-
րաքանչիւրոյն պատիւ և պատուհաս՝ առ հանդերձեալն
պահի || . Մաղաքեայ Կթղ . Օձն ։

Ներհակականք են , որք յայտնեն այլապէս կատարելն կ
ներհակ լինելն գործողութեան . որպ . * Փոխանակ սիրելոյ
և զտէրունական օրէնսն կատարելոյ՝ հակառակ ըլնդդէմ
ներգործէ || . Սարգ . Շ . Յովհ . Է ։

Սաստկականք են , որք յայտնեն զսաստկութիւն ինչ գոր-
ծողութեան . որպ . * Սաստկապէս մածեալ ունէր զնա մեր
( բռնութիւն գերչայ ) || . Յովհ . Կաթ ։

Յաճախականք են , որք յայտնեն զյաճախելութիւն գործո-
ղութեան . որպ . * Եւս քան զեւս ճնշէր զանձն իւր ՚ի խստա
պահս || . Վարք հարց . Ժէ ։

Նուազականք են , որք յայտնեն զնուազութիւն զգործողութեանց .
որպ . * Սակաւ մի աշխատիս , և անծերանալի է ուրախու-
թիւն || Ոսկեբ . Շ . 35 . յորդ ,

Երագականք են , որք յայտնեն զվաղվաղումն կամ զարա-
գութիւն գործողութեան . որպ . * Աճապարակի գայր յեդովմայ || .
Մեկնութիւն Եղեկեղեաց հայոց ։

Յանկարծականք կամ իսկոյնականք են , որք յայտնեն ըղ-
յանկարծականութիւն գործողութեան . որպ . * Ժողովեալ

բիւրաւորեալ զկրուեալսն՝ յանկարծօրէն հասանէ ՚ի վերայ վնաս սաստիկ առնելով || . Խոր. Ա. 31 :

Յամրականք են, որք յայտնեն զյապաղութիւն կամ զդանդաղութիւն ՚ի գործողութեան. որ, * Անօգուտ ուրեմն ծանուցեալ խոստովանիմ || . Լամբ. ԵՀԵԴ :

Յայտնականք են, որք յայտնեն զյայտնայանդիմանութիւն կամ զբացայայտութիւն գործողութեանց. որ, * Յայտնապէս ասէ ած զփառս իմ այլում ոչ տամ || . Ի ԳԻՐՍ ԴԱՐՁՄ. Գլ. ԽԲ.

Ծածկականք են, որք յայտնեն զծածկապէս լինելն գործողութեանց. որ, * Գաղտագողի շուրթեն և գողանան || . Երեմ.

Ցուցականք են, որք առաջի առնեն զցուցանելն կամ ըզերկայ լինելն գործողութեանց. որ, * Ահաւասիկ կամ հընազանդեալ տէրունական հրամանին || . Գով. Լստ :

Երկբայականք կամ տարակուսականք են, որք յայտնեն զերկբայութիւն ինչ, կամ զկասկած զգործողութեանց. որ, * Գուցէ ոչ հաշտեսցի վաղիւն, որ այսօր հաշտիլն կամի || . Եփրեմ. ՚ի Թէկն. Է. Բան :

Յօժարականք են, որք յայտնեն զյօժարականութիւն ինչ ՚ի գործողութեան. որ, * Յօժարափոյթ անցանեն ընդ փորձ հանդիսից || . Մծբ. Ճառ. ԺԶ :

Բռնադատականք են, որք յայտնեն լինել գործողութեան ընդդէմ յօժարութեան. որ, * Ակամայ գործեն, զոր առնեն ||. Գրիգոր Արշարունի :

Կրկնականք են, որք յայտնեն զկրկնակի լինելն գործողութեան, կամ զկրկնումն նորին. որ, * Մերթ անդրէն զարդարեսցի պատկերն ըստ առաջին ածատեսակ նմանութեան || . Յովհան. Իմաստ. ԺԲ :

Նախընտրականք են, որք յայտնեն առաւել ընտրելի լինել այս ինչ գործողութիւն քան զայլն, կամ առաւել ուրոշել գործողութեան առ այս ինչ քան առ այն. որ, * Առաւելեւս ծովու քան զմանուկ զանձինս հաւատան ( նաւորդք ) || . Նիւսացի. ՚ի Վերջն.

Ընդարձակականք են, որք յայտնեն զընդարձակ լինելն գոր-

ծողութեան. որ. Ջուր տարադարձուց սպանէք զնոսա ||.
Եղիշէ Վրդ. գլ. Է.

Անձնականք են, որք յուցանեն զգործողութիւն լինել ո-րոշ անձին. որ. * Մեք միայն գիտասցուք, թէ ոչ ինչ վը-նաս գոյր 'ի նմա ||. Կոչ. ԾԳ. 43.

Ազգականք են, որք ցուցանեն զգործողութիւն լինել ըստ այս ինչ ազգի. և այս յաւէտ յոյնպիսիս, որք բանիւ կամ գրով վճարին. որ. * Խօսեսցի ընդ ծառայս քո ասորերէն ||. Դ. Թագ. ԺԸ. 26.

Փոխաբերականք կամ փոխանակականք են, որք յուցանեն զգործողութիւն լինել փոխանակութ. որ. * Կորոյս (Ադամ) զմեծային զփառսն . . . և զդրախտին վայելչութ. և փո-խանակ ընկալաւ զերկիր փշաբեր ||. Ղեւոնդ. Երէց.

Երդմնականն է. որ տայ նշանակել փոխանակ երդ-ման. որ. * Օ՛նօ՛ն արասցէ տէր յովնաթանու, և օ՛նօ՛ն յաւելցէ, եթէ ոչ քննեցից ||. Ա. Թագ. Ի. 13.

Այլ արդ՝ գիտելի է նախ, զի մակբայից ոմանք են բը-նականք. որպ. Այժմ. աստ. անդ. դեռ. մերթ. երբ. միշտ. հիմ. այո. ոչ. ուր. և այլն.

Իսկ ոմանք, մանաւանդ թէ բազումք՝ կազմին յանուանց, և և յայլ մասանց բանի՝ 'ի ձեռն պէսպէս վերջաւո-րութեց կամ մասնկանց. որպ են, բար, գէս, էն, րէն, ովի, ացի, ին, իցս, ապէս, և այլն. որգոն, Առիւծաբար. մեծապէս. ինձէն. այսրէն. հայերէն. ուժգնովի. նշան-ացի. ինքնին. բիւրիցս. այլապէս. և այլն.

Գիտելի է երկրորդ, զի մակբայք՝ երբեմն նախադասին բայից. որ. * Մինչ ուսանիմ, և երբէք 'ի գիտութ ճըշ-մարտութ ոչ հասանեմ . . . աւաղ ինչ քաջալերիմ, և առա-ւելապէս լքանիմ ||. Նարեկ. ՀԱ.

Իսկ երբեմն յետադասին. որ. * Կացորդակից լեր ծած-կոցաց, և մի 'ի խոյզ ընտրութ կոչեր դատաստանաւք ||. Նար. ԽԳ.

Եւ երբեմն և ընդ մէջ մակբայի և բայի այլ բան անկանի. և կամ այլ մասն բանի. որ. * Յաճախ՝ որ այժմս բանա-

սպառնայն՝ խորխտաձայն՝ սիգայօղ՝ բարձրապարանոց ․ ա֊
նձեւ ընէմ զի անկենդան || ․ Նարեկ ․ ՀԴ ։

Գրելի է երրորդ ․ զի մակբայք բազում անգամ երկու կամ երեք ՚ի միասին դնին ․ Երբեմն նոյն տեսակաւ ․ որ ․ * Որ վայրապէս դու ընդդէմ քեզէն քոյովդ բանիւ մեզ սահ֊
մանեցեր || ․ Նարեկացի ․ ՚ի բանն ․ Գ ։

Եւ երբեմն ևս մի և նոյն մակբայն կրկնելով դնի առ ՚ի յաճախականապէս նշանակել ․ որ ․ * Մեծապէս այրն
յոյժ յոյժ || ․ որ կարի յոյժ ․ Ծննդոց ․ 30 ․ 43 ։

Գրելի է չորրորդ ․ զի մակբայք ոչ միայն դնին ՚ի վերայ բայից ․ այլև ՚ի վերայ ընդունելութեանց ․ որ ․ * Ամենից տի֊
րօղ հաւատարապէս || ․ Նարեկ ․ ՚ի բանն ․ Գ ։

Երբեմն ՚ի վերայ բայանունաց ևս ․ որ ․ * Լուսոյ զմոլեգ֊
նաբար գոչումն || ․ Եղիշէ Վրդ ․ Գ ։

Երբեմն ևս դնին ՚ի վերայ այնպիսի ածականաց ․ որք ունին զհաւասարութիւն բայից ․ որ ․ * Բնաւին բարերար ․ հա֊
մայն կենդանարար || ․ Նարեկ ․ ՚ի բանն ․ ԽԳ ։

Երբեմն ևս դնին յայնպիսի բանս ․ յորս զօրութիւն կայ բային ․ որ ․ * Այսօր ՚ի կառս ․ վաղիւն ՚ի դագաղս || ․ որ
այսօր նստեալ կայ ՚ի կառս ․ ևն ․ Լամբրոն ․ առղ ․ 72 ։

Գրելի է հինգերորդ ․ զի երբեմն մակբայք ինչ ածա֊ կանն լինին գոյականաց ․ և իբր ածական վարին ․ որ ․ * Զառա֊ ջի կենդանեաց գիշեր կոչեաց առաքեալն || ․ Խոսրով ։ Որ մակբայս առաջի՝ լեալ է ածական՝ անուանս կենդանեաց ։ Ըստ
այսմ է և ՚ի սոսին ։

Եւ ևս՝ երբեմն նախդիրքն խնդրոյ բայից՝ դնին ՚ի վերայ մակ֊ բայից ․ որ ․ * Բարեպաշտ արքայն կոստանդիանոս յառաջ֊ ընթեր տարբերէլ սուն հաւատոյ ․ ․ ․ անխախտելի ամրութը
պնդեալ հաստատեաց || ․ Լամբ ․ առէն ։

Գրելի է վեցերորդ ․ զի բազում անուանք ածականք երբեմն իբրև զմակբայ վարին ․ որ ․ * Ջերմ գիւրաթա֊ ւամ պատրաստ զարդարէ || ․ Իգնատ ․ ԺԷ ․ 32 ։ Որ ածա֊ կան անունս պատրաստ եղեալ է իբր մակբայ՝ փոխանակ
բառիս պատրաստաբար ։

Այս կիրառութիւն յաճախ է ՚ի բարդ ածականս․ որ․ *
* Պարզերեսն կայցիք առաջի աստուածոցին ձեզ զօտաւանդ պատուիրանին || · Ղևտացւոց․ ընդհանր ։

Նոյնպէս և ածական անուանք, որք ունին զբաղադրական մասնիկս՝ ան, կամ զբաղդատական մասնիկս՝ գոյն, բազում՝ անգամ՝ վարին իբրև զմակբայ․ որ, * Աննոյնտոփ կարօղ եմք գնալ ընդ Ճանապարհս կենդանութեան ՚ի յերկինս || · Ղուկ․ աող․ 49 ։

Երբեմն և անուանք ինչ ածականք ունելով ՚ի վերջոյ զյօդս՝ ա, կ զբառդ՝ եան, իբր մակբայ վարին․ որ․
* Բազումս առաքինանամք || · Խոսրով․ ՚ի Ճէշն․ ծաձագր ։

Գիտելի է եօթներորդ, զի երբեմն անուանք ինչ, թէ ածականք և թէ գոյականք՝ հոլովմամբ իւիք իբր մակբայ վարին․ որ, * Մինչ կենդանեօք խօսիմ՝, մեռեալ եմ անհասից || · Նար․ կէ ։

Եւ երբեմն և մի և նոյն անունն կրկնելով՝ իբրև մակբայ վարի․ որ, * Մատեան Ճոխոք ոսկեաք և մանկունք քաջ նախարարաց || · Խոր․ գ․ 37 ․ Ուր բառդ Ճոխոք ոսկեաք՝ դնի իբր մակբայ ։

Եւ ևս՝ երբեմն այլ և այլ անուանք, և կմ նաև այլ մասունք բանի՝ ՚ի միասին եկեալ՝ իբրև մակբայ դնին․ որ, * Մեծամեծ այդ հերթ ՚ի վեր տապալեցաւ || · Եղիշէ ։ Ցայս վերաբերին և սոքին․ յանկարծ, բոլորովին․ ՚ի գլխովին․ նշ ։ և ևս՝ այսպիսի այսպէս եղելոյ, կմ կարգելոյ․ նշ․ որ, * Ցական թօթափել յառնեն մեռեալք || · Մծբ․ է ։
* Ըստէն ՚ի քթթել ական ազատեցաւ || · Սոկ․ ա․ 34 ․
* Այսոյնկ այսպէս եղելոյ՝ գայ ժողովն յեհմ || · Ձագանոց ։
* Այսոյնկ այսպէս կարգելոյ՝ և գծիր ուխտին ընդ իւր առեալ արգարու՝ գաւռնայ || · Խոր․ է․ 27 ․
* Եւ այգուն եղելոյ ․ ․ ․ զօրականեալն Թալէլ հրամայեաց || · Նոյնն․ է․ 43 ․

Գիտելի է ութերորդ, զի յոչակաւն դերանուանքս՝ այդ, դոյն, նոյն, յարեալ յանունդ օրինակ՝ վարին ըշ նման իբրև զմակբայ, ունելով երբեմն զնախդիրդ՝ զ․ որ, * Զայդ

օրինօք և ծերունին այն (նոյ) յայնժամ՝ ՚ի սուգ տրտմութե
վտանգեալ էր ||. Ոսկ. շող. ԾԶ. 23.

Ըստ այսմ՝ ձևանայ և ցուցական դերանունք՝ այս. որպ.
* Եւ նա զայս օրինօք փոխեցուցանէ ||. Է. Մակ. ԺԶ. 46.

Դարձեալ և բայս՝ է, վասն երբեմն իբրև ժամանա-
կական և տեղական մակբայ ըստ բառիցս՝ այսրէն, այսր,
այդր, որ. որպ., * Նա այսրէն այսր բանիւ վճարէ ... և է՝ այն
ձեռն դնէ ||. որ ուրեք ուրեք, կ երբեմն. Իփն.

* Նա այսրէն ընդ քաջաց յաղթեցաք թշնամեացն, և է՝ այն
նոքա մեզ յաղթեցին. և ճշմարիտ այն է՝ որ յաղթօղ
պատեալ եմք, և ոչ յաղթեալք ||. Եղիշէ. Է.

* Առ տգէտս և վայրենաբարոյս առաւել զօրինայ (աստե-
ղունի). է՝ որ վն յափշտակելոյ ՚ի ժողովրդենէ մեծամեծ
ապահունէ ախտից, և է՝ որ յաղագս հարստահարե-
լոյ զընկերին՝ փառասիրութե աղագաւ ||. Շնորհ. ընդհ.

Գիտելի է լինելոյն, զի մակբայքս՝ Այսր, այդր, անդր.
այսր, անդր. այսրէ, անդրէ, այդրէ, դնին երբեմն փոխանակ
ցուցական դերանուանց. որպ., * Եւ են կրկին կարօտ ՚ի
տարաբնակ լինել ՚ի բնակութե այսր ||. որ յայսմ բնա-
կութե. Յովհաննէս Կոզ.

Երբեմն ևս դնին ՚ի տեղի գիմորոշական տառից. որպ.
* Դիզրգեալ սատանեյաց ողորմելի նա մեր ՚ի մերոյ
այսր ||. որ ՚ի մերոյս. Յովհաննէս Կոզ.

Եւ երբեմն ևս դնին իբր զարդ. որպ. * Կեցցեմ ՚ի հի-
ւանդութե այսր խմեն յայսմանէ ||. Դ. Թագ. Ը. 8.

Գիտելի է ՚ի վախճանի, զի երբեմն բառք ինչ դնին եւ
մակբայի իբր բացայայտիչ մակբային. որպ. * Զինուորքն
տարան զնա ՚ի ներքս ՚ի գաւիթն ||. Մարկ. ԺԵ. 16.

Զայս մի ինչ ևս արժան համարիմ ծանուցանել, զի ոմանք
՚ի մակբայից երբեմն առնուն զխնդիր եւ անուանցն, յորոց
կազմին. որպ. * Ընդ տունէր արարչական ընդ հօր համա-
պատուաբար ||. Մանէրէ. Ուր ընդ հօրն՝ է խնդիր մակ-
բայիս՝ համապատուաբար. զի և անունս համապատիւ՝ զայն-
պիսի խնդիր առնու.

# ԳԼՈՒԽ. ԻԵ.

## Յաղագս Շաղկապի ։

Շաղկապն է մասն բանի, որ յարէ և միաւորէ ը մի– մեանս զայլ մասունս բանի, նաև զնոյն իսկ զբանս. և բաժանի 'ի վեցտասան տեսակս. որք են բաղհիւսական. տրոհական. ևն. ոպ կարգաւ եդեալ յառաջիկն մասին. զորոց աստ ևս խօսեսցուք ինչ համառօտիւ 'ի բացատրութե իւրաքանչիւրոց նոցին ։

Բաղհիւսականք, կամ ըստ դաւթի՝ ջոկմանն շաղկապք են նոքին, որք զզանազան բառս կամ զբանս առ նոյն կար– գելով շաղկապեն. զր, * Երկին 'ի անէ, և խոտորեալ յամ շարութէ ||. Աստղ. Գ. 7 ։

Տրոհականք կամ անջատականք են, որք զզանազան բառս կամ զբանս տրոհմամբ շաղկապեն. զր, * Կամ աստ կա– մաւ, կամ անդ ակամայ՝ վն տանջանացն պարտիմք ողբալ ||. Վարք հարց. ծը ։

Բացատրականք են, որք իբր որոշելով կամ 'ի բաց առնլով զմին յերկուց բանից՝ շաղկապեն զնս ը միմեանս. զր, Քաղցր է մեղր. Բայց ախտացեալ մարմնոյ վնաս է ||. Նեղոս ։

Ընկատարականք, կամ ըստ հնոյ՝ բաղմանք են, որք իբր անկատար թողեալ զմիտս միոյ բանի՝ շաղկապեն ը այ– լում իբր ընդ լրացուցչի նորին. զր, * Թէպէտ և ամբն գլխաւորք էին, սակայն զպետութս նոցին գլուխ կարգէ ||. Երզնկացի. 'ի Մեկն. Մաթ. Ծ. 2 ։

Նախընտրականք, կամ ըստ հնոյ՝ տարբաղմանք են, որք զնախընթաց բանն առաւել ընտրելի կամ դիւրին ցուցա– նելով քան զհետևեալն՝ շաղկապեն զնս ը միմեանս. զր, * Դիւրագոյն է երկրագործաց զկորդացեալ երկիր 'ի գործ արկանել, քան թէ գետնոյ զօգտակարն առնել 'ի հաւա– նութի ||. Մամբրէ Վերծանող ։

Առաւելականք կամ բաղդատականք են, որք ցուցանեն բաղդատութիւն և առաւելութիւն իմն յարել միոյ բառի կ՛ բանի յայլ · օր. * Եւ արդ զմեզ ո՛վ ոք լայցէ և ողբասցէ, որ ամ̅իւ թշուառականք · հեղգ յաղօթս, և երկմիտ 'ի խնդրուածս · Ժողովուրդ Եէ ամենեւին իսկ անարժանք, և բնաւ ազգի ազգի աղտեղութեան աղտեղեալք || · Մագ ·

Համեմատականք, կամ ը̅ստ հնոյ՝ գերբաղդատք են, որք իւիք համեմատութեան հաստատելով փոխանորդութեան բանն՝ ցուցանեն զառաւելութի հեռաւեցելոյն իբր 'ի նախընթացէ պատճառաւ · օր. * Այնքան առել (պարտ է զմեզ), մինչև յիշատակ նոյին ոչ հեշտութե, այլ տրտմութե բերել մտայն || · Շնորհ · ընդհանր ·

Պարականք են, որք 'ի շաղկապելն զերկուս բանս՝ կամ զերկուս բառս՝ թէպէտ յայտ առնեն առաւել լինորելն լինել միոյն, բայց վասն անձեռնհաս գոլոյ առ այն՝ լինելի ցուցանեն զմիւսն · օր * Թէ և ոչ վ̅ս ածային փառացն, գոնէ վ̅ս մարդկային փառաց՝ անսալ պարտ է և խոնարհել || · Իգնատ · ծը · 10 ·

Թէականք են, որք ցուցանելով զկախումն միոյ բանի զմիւսոյն՝ շաղկապեն ը̅ն միմեանս · օր. * Եթէ ներեսցես, աղաչեմ · Եթէ առ իս դառնայցես, գոչեմ · Ապա եթէ անտես առնիցես, կորնչիմ · Իսկ եթէ առ ոտն հարկանիցես, լամ || · Նարէկ · Ը ·

Մեկնականք են, որք զհետևեալ բանն կ զբառն ցուցանեն լինել մեկնութի նախընթացին · օր. * Աղաչեմ զձեզ · · · հոգալ միշտ և ստանալ (զարքայութի) նուազ իրօք, այս է՝ անցաւորիս նուազ աշխատանօքն || · Ոսկեբերան · Է · 10 ·

Յարացուցականք են, որք զհետևեալ բանն կ զբառն ցուցանեն լինել յարացոյց, կ վկայութի նախընթացին · օր. * Ճերբև իջուցին (զտ̅ր մեր) 'ի գերեզմանն, եղև խաղաղութի ծխ · Ըստ այնմ՝ թէ եղև խաղաղութի թաղումն ն̅ր || ·

Անանիայ Քերթողէ ·

Պատճառականք, կմ ը̅ստ հնոյ՝ պատճառաբանականք են, որք զմի բան իբր պատճառ միւսոյ շաղկապեն · օր.

* Ետուն զանձինս խուրեանց նեղութե · զի խուրեանցն նե-
ղուբն · · · վկայ լինիցին այնորիկ , որ կամաւ կրեայ
զայն || · Ագաթանգեղոս ։

Հետեւողականք , կամ ըստ հնոյ՝ փաստաբանականք են , որք զմի բան իբր հետեւութի միւսոյն շաղկապեն · որ , * Եւ քանզի յոյժ սիրելի էր Շապհոյ խռովութի եւ արիւն- հեղութի , վասն այսորիկ յանձն լեր տարաբերել՝ թէ յո՞ թափեսցի զթոյնս դառնութե || · Եղիշէ · ա ։

Մակաբերականք են , որք ցուցանեն մակաբերել միոյ բանի ՚ի միւսոյն · որ , * Եթէ առաքեալ է յայ , ապա առաքէն զպատգամն այ խօսի || · Նանայ · ա · 6 ։

Սկզբնաւորականք են , որք յաւարտիլ նախընթաց բանին՝ սկզբնաւորեն զայլ բան · եւ կամ որք դնին պարզապէս ՚ի սկիզբն բանից · որ , * Դուք կոչէք զիս վարդապետ եւ տր · եւ բարւոք ասէք , քզի եմ իսկ · Իսկ արդ՝ եթէ ես լուացի զոտս ձեր՝ տրս եւ վրդպս , եւ դուք պարտիք զմի- միեանց զոտս լուանալ || · Յովհ · ժգ · 13 ։

Թարմատարք են , որք վս շարայարութե կարգի դնին ՚ի բանս · որ , * Համբերելովն ծանուսցուք մարդկան , զի սուտ է ասացեալն զմէնջ || · Խոսրով ։

ԱՅլ գիտելի է , զի երբեմն վս վայելչութե բանին զօրութե դնին շաղկապք ինչ · որպիսի են հաստատականքն՝ եւ · Բայց · ապա · այլ · իսկ · այսորիկ · ևս · յորժամ յաւաւելուն ս՟ց դնին շաղկապքդ՝ Եղծել · կամ դի · ևս · որ · * Թէպէտ փակեալ եւ կնքեալ պղընձիս եկեղեցեաց ը՟ն ամ հն պարսից ( Բայց ) ն՟ք զամ տուն եկեղեցի արարին || · Եղիշէ ։

Իսկ երբեմն ներհակ այսմ շաղկապս եւ՝ իբր յաւելուած դնի ՚ի դրադէմ բանս եւ ՚ի դերբայութս · որ , * Ու եր- կիւղի անկանելոյն զարհուրեալ՝ եւ թմրեալ || · Մովսէս · յոհ · ա ։ Որ եւ անեանելին թարմատար դնի ։

ԱՅլ պարտ է զգուշանալ յայսպիսի ոճոյ ։

Գիտելի է դարձեալ , զի շաղկապս Բայց երբեմն միայն առ ՚ի զարդ դնի ՚ի բանս · որ , * Ինքն Բայց է ամ յամե ազգեր բարեաց || · Յաճախ · ժէ ։

# ԳԼՈՒԽ. ԺԸ.

## Յաղագս Միջարկութեան.

Վերայ միջարկութեան սակաւ ինչ ունիմք խօսել. զի սակաւ է և գործածութիւն սորա։ Զսա ոմանք ընդ մակբայս դասեն. բայց ոչ երևի այս ուղիղ. զի մակբայն ցուցանէ զպարագայս գործողութեանցն. իսկ միջարկութիւն ՝ի միջի արկեալ ՝ի բանս՝ յայտ առնէ զբնական կիրս հոգւոյն. որպիսի են կիրք ուրախութեան, արտմութեան, ցաւոյ, երկիւղի. եւն։ Վասնզի յասելն, * Բաբէ՜, որչափ է որովայնամոլութիւն բռնաւորութեան || ,, ( Ոսկ. ա. 41. ) միջարկութիւնս Բաբէ՜ ոչ ցուցանէ զպարագայս գործողութեանցն, այլ զկիրս հոգւոյն պատճառեալ ՝ի զարմանալոյն ՝ի վերայ բռնութեան որովայնամոլութեան։ Եւ յասելն, * Հապա՝ որում օրինակ, զինչ կամիս առնել՝ կատարեա՛ || , ( Եղիշէ. Է. ) միջարկութիւնս Հապա՝ յայտ առնէ զկիրս եռանդեան հոգւոյն առ ընդունելութիւն իրիք։ Եւ յասելն, * Ո՜վ զիարդ միանգամ վճիռ եհատ, և փչեցելի զձայնն արձակեաց || ,, ( Մարգ. յոհ. Է. ) ոչն ցուցանէ զկիրս զարհուրանաց ընդ ահագին վճռոյն։ Ըստ այսմ իմա և զայլոց։

Այլ գիտելի է նախ, զի միջարկութիւնք երբեմն յարին յանուանս նշանակիչս այնց՝ յորոց վերայ է կիրք հոգւոյն. զոր, * Ո՜վ սքանչելեացս, գործ՝ առ որ տկարանայ բըռնութիւն թագաւորաց, և ուժգնութիւն իշխանաց || . Լամբրոնացի։ Բայց պարտ է և նկատել, զի ՝ի վերայ միջարկութեանց ընդ անուանս՝ հաստատագօրէն զկիրս հոգւոյն զօրութեամբ ցուցանեն. և զորպիսութիւն իրացն՝ յորոց անուանս յարին, ներգործութեամբ յայտնեն որպէս յասելն, * Վա՜յ ախտացելոցն յախտէ, որ խոցի և ոչ ընդոստնու || . ( Շնորհ. Եղբ. ) միջարկութիւնս Վա՜յ զօրութեամբ յայտնէ զկիրս ցաւոց հոգւոյն ՝ի վերայ այնպիսի ախտացելոյն. իսկ զվայելն լինելն նորա յայտնէ ներգործութեամբ. որպէս թէ այս լինէր միտ բանիցն. որ հ.

վայելի և եղկելի է ախտացեալն այն, որ խայթի՛ և ոչ զգայ։

Այլ յայսպիսի բանս՝ գրեթէ միշտ զօրութիւն գտանի բայ ինչ. ոպ եթէ ասացեալ էր. վայ է մեղաւորին. աւաղ կարդամ տգիտութեանս. երանի տամ կրօնաւորի։ Եւ այս յայտ անտի է, զի երբեմն հանդերձ բայիւք դնին սոքին. որ, * Վա՛յ է նոցա, զի ըստ Ճանապարհին Կայենի գնացին ||. Յուդայէ. ՚ի համարն. 11։

Գտանելի է երկրորդ, զի անուանք ինչ երբեմն ՚ի գերազանց շարադրութիւն՝ մանաւանդ ողբական և զարմանալական բանից՝ իբրև միջարկութիւնք դնին. ոպ երեւի ՚ի սոսա. * Դատեցին զինձ առ ի մասունս Ժ քաղցրաւենեայն Ճաշակայ. առ ստայօղն միշտ նենգաւորս, և առ բանսարկուն յաւէտ հաւատարիմս. աւա՜ղ աղէտիս. վի՜շտ վտանգիս. խառնա՜կ ամօթոյս. ծո՜ւփ պատկառանացս. զխո՜րդ և առբանիս յանդիմանութի հանրաձայնեցայց։ Մեծ է ձայնս գուժի. և անբերելի բողոքս աղաղակի ||. Նարեկացի։

Գտանելի է երրորդ, զի առ միջարկութիւն վերաբերին Ժ խիք և կոչական անուանք. զի ըստ օրինակի միջարկութեց իբր անկանի ՚ի բայէն և ՚ի խնդրոյ նորա դնին ՚ի բանս՝ յերկրորդ դէմս. որ, * Ընկա՛լ ո՜վ ա̄ծայինդ Գրիգորիոս՝ զփոքրիմայ բանս նուազ մերոյ տեսութեանս ||. Իգն. էջ. 52։

Աւարտ Երկրորդ մասին ։

# ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ․

Յաղագս համաձայնութեան մտաց բանի ։

ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ ԱՐՈՒԵՍՏԻ քերականութե՛ յայսմ մասին պայծառանայ . զի 'ի սմին ըստ՝ բանք առ միմեանս եկեալ պէսպէս համաձայնութբ՝ կազմեն խնճոյս բանի . որով և միտք ուսանողաց տեսեալ զխայտալ բառից ընդ իրեարս յայս սեղան՝ զուարճանան և բերկրին . ևս և ախորժանօք վայելեն զպտուղս վաստակոց իւրեանց , զոր վաստակեցին յառաջին և յերկրորդ մասին ։

Համաձայնութիւնք մտաց բանի են կապակցութիւնք նոցա ընդ միմեանս՝ առ 'ի կազմել զբան ։ Այս կապակցութիւնք լինին ութն եղանակաւ՝ ը̅ ութից մասանց բանի ։ Նախ՝ անուան ը̅ անուան ։ Երկրորդ՝ դերանուան ը̅ դերանուան և ը̅ անուան ։ Երրորդ՝ ընդունելութե ը̅ ընդունելութե , ը̅ անուան և ը̅ դերանուան ։ Չորրորդ՝ բայի ը̅ անուան , ը̅ դերանուան և ը̅ ընդունելութե ։ Հինգերորդ՝ նախադրութե ը̅ անուան , և ը̅ այնս , որք իբր անուն համարին ։ Վեցերորդ՝ մակբայի ը̅ բայի , և ը̅ այնս , որք ունին

զզօրութի բայի ։ Եօթներորդ՝ միջարկութեան ընդ բանի ։
Ութերորդ՝ շաղկապի ը̄ բանի, և մասանց նորա ։

Յայսոսիկ ութն համաձայնութիս առաջի դնին ութն հարկաւոր գիտելիք ՚ի շարադրութե․ որք են այքն ։ 1, բացայայտիչ և բացայայտեալ․ 2, յատկացուցիչ և յատկացուցեալ․ 3, ածական և գոյական․ 4, յարաբերական և յարաբերեալ․ 5, անուն բայի․ 6, խնդիր․ 7, արգելիչ խնդրոյ․ 8, նախդիր ։ Որոց հանգամանք և պիտանութիք յայտնի լինին ՚ի բացատրութե վերոյգրեալ ութն համաձայնութեց ։

Այլ գիտելի է, զի զհամաձայնութե նախադրութե, մակբայի, միջարկութե և շաղկապի՝ զոր ինչ արժան էր գիտել, խօսեցայք յառաջին և յերկրորդ մասին․ ուստի չունիմք ինչ խօսիլ զսոցանէ յայսմ մասին․ այլ միայն զհամաձայնութե անուան, դերանուան, բայի և ընդունելութե․ յորս բովանդակին ամենայն զօրութիք արուեստի քերականութե ։

Եւ նախ կամեցեալ խօսիլ զհամաձայնութե անուան ը̄ անուան՝ գիտելի է, զի անուանք որովհետեւ կ̄ գոյական են, և կ̄մ ածական, ՚ի գալ սոցա առ միմեանս՝ հարկ է, զի կ̄ գոյականք ը̄ գոյականաց յօդեսցին․ կ̄մ ածականք ը̄ ածականաց․ կ̄մ գոյականք ընդ ածականաց․ և կ̄մ ածականք ը̄ գոյականաց ։ Իսկ գոյական անուանք երրակի կարեն յօդիլ ընդ գոյականաց․ նախ՝ իբր բացայայտիչ․ երկրորդ՝ իբր յատկացուցիչ․ և երրորդ՝ իբր խնդիր․ զորոց խօսեսցուք կարգաւ ։

# ԳԼՈՒԽ . Ա ։

## Յաղագս համաձայնութեան գոյական անուանց ընդ գոյականաց. եւեթ բացայայտէլ . կամ

### Յաղագս բացայայտչի ։

Յորժամ ՚ի բանս կամիմք զգոյական անուն ինչ բացայայտել՝ թէ յինչ միտս դնի , և կամ փոխանակ որոյ նշանակէ , յարեմք ՚ի նոյն պայլ միւս եւս անուն գոյական՝ թուով և հոլովիւ համաձայն նմին՝ առանց շաղկապի . և զայն կոչեմք **Բացայայտիչ** , որպէս երևի յայս բան . *Այսօր բուսաւ յաննայէ մորենին մարիամ||. Շարակ . ա ։ Ուր անունս **մարիամ**՝ յարեալ յանունս **մորենի**՝ լեալ է նմին բացայայտիչ . զի բացայայտէ , թէ մորենին աստ առեալ լինի փոխանակ մարիամու ։

Այլ գիտելի է նախ , զի բացայայտիչն երբեմն դնի և յառաջ քան զբացայայտեալն . որ , * Աբրահամ հայր ձեր ցանկայր տեսանել զօր իմ || . Յովհ . ը . 56 ։ Ուր յառաջոյ եդեալ անունս **Աբրահամ**՝ է բացայայտիչ բառիս՝ **հայր ձեր** ։

Երբեմն և ՚ի մէջ բացայայտչին և բացայայտելոյն անկանի բայ . որ . * Զկորուսեալ դրամն խնդրեաց՝ զթագաւորական պատկերն || . Իգնատ . ժէ . 22 ։ Ուր անունս **Թագաւորական պատկեր**՝ է բացայայտիչ **կորուսեալ դրամոյն** , ՚ի մէջ անկանելով բայիս՝ **խնդրեաց** ։

Գիտելի է երկրորդ , զի երբեմն բազում եզական անուանք լինին բացայայտիչ միոյ յոգնականի . որ . * Որդիք աբէլ յուսկանն պապ և աթանագինէս . . . մահ անձանց նխութեցին || . **Յովհաննէս կաթ** ։ Ուր երկու եզական անուանքս **պապ և աթանագինէս**՝ են բացայայտիչ միոյ յոգնական անուանս՝ **որդիք** աբէլ յուսկանն ։

Երբեմն եւս պէսպէս անուանք լինին բացայայտիչ միոյ

եզական անուան , կամ որ իբր եզական վարի . զօր . * Յամ արարող մաքրեալ լիցի ( հոգի մեր ) , յատելութենէ , ի մախանաց , յոխակալութենէ , յագահութենէ , յամբարտաւանութենէ , եւն || . Խոսրով ։ Ուր կարգաւ դասեալ անուանքդ՝ յատելութենէ , ’ի մախանաց , եւն , են բացայայտիչ անուանս՝ յամ արարող ։

Եւ ներհակ այսմ՝ երբեմն եզական անուն ինչ լինի բացայայտիչ բազում այլաբանական անուանց . զօր . * Երգ վկրկութեն , հնչմամբ ահաւոր , ազգի մարդկան պարծանք՝ Երգ մաւթէոս || . Հար . էա ։ Ուր անունս Երգ մաւթէոս՝ է բացայայտիչ կարգաւ եդեալ անուանցդ՝ Երգ վկրկութեն , հնչմամբ ահաւոր , եւն ։

Եւ դարձեալ երբեմն անեզական անունք լինին բացայայտիչ եզական անուանց . և Է հակառակն՝ երբեմն եզական անուանք լինին բացայայտիչ անեզական անուանց . զօր , * Տեսանել ըզ երկնաւոր փեսայն՝ զարդարեալ լուսով՝ հայրական փառօք || . Հար . ճա ։ Ուր անեզական անունս՝ հայրական փառօք՝ լեալ է բացայայտիչ եզական անուանս՝ լուսով ։ * Աւետարանեաց նա մեզ զկեանսն յաւիտենական՝ զհոգին ար || . Մարգ . Ա . յոհն . 4 ։ Ուր եզական անունս զհոգին ար՝ լեալ է բացայայտիչ անեզական անուանս՝ զկեանսն յաւիտենական ։

Գիտելի է երրորդ , զի Թէպէտ բացայայտիչն առանց շաղկապի յարի ՚ի բացայայտեալն . որպէս և եդաք ՚ի վերոյ . բայց որոշելու բացայայտիչն է իբր մեկնութիւն բացայայտելոյն , ուր ուրեք կայ բացայայտիչ , անդ կայ զօրութիւն և մեկնական շաղկապ ինչ . որպէս յայս բան , * Զտիրական մարդն՝ զհոգին Թշնամանեցին || , ( Մարգ . Է . դէպ . 5 . ) կայ զօրութիւն մեկնական շաղկապս՝ այսինքն . որպէս եթէ ասէր . զտիրական մարդն , այսինքն զհոգին Թշնամանեցին ։

Եւ զի յաճախ ՚ի սոսա միշտ զօրութիւն կայ շաղկապ մեկնական , վասն բազում անգամ հանդերձ նովաւ դնի բացայայտիչն . զօր , * Յամօթեսցին պատրաստք դեռոց . այսինքն՝ մեղաց յորդորութեք || . Աբովր ։ Ուր անունս մեղաց յորդորութեք՝

Հանդերձ շաղկապիւս որպէս՝ լեալ է բացայայտիչ ան-
ուանս՝ դիմորդ գէտաց ։

Երբեմն եւս բայիւ Հանդերձ դնի . որ , * Ընթացայ՛ք այս-
ուհետեւ ՚ի մէջ լերինան , ՚ի մարգարէսն ասեմ եւ յառա-
քեալս || . Գաղ . ա ։ Ուր անուանքս ՚ի մարգարէին եւ յա-
ռաքելոց՝ Հանդերձ բայիւս առեալ՝ են բացայայտիչ անուանդ՝
՚ի լերինն ։

Եւ դարձեալ երբեմն ամբողջ ինչ բան իբրեւ անուն ինչ՝
լինի բացայայտիչ անուան . որ , * Ամենայն օրէնք ՚ի մի
բան կատարին , ՚ի սիրեսցես զընկեր քո իբրեւ զանձն
քո || . Գաղ . Ե . 14 ։ Ուր բանս՝ սիրեսցես զընկեր քո
եւն , է բացայայտիչ անուանս՝ ՚ի մի բան ։

Այլ այսպիսի բացայայտիչք հասարակօրէն յանորոշ
բանս դնին . որ յայսպիսիս , որք աներեւոյթ բայիւ կազ-
մին . որ , * Այսօր լցաւ խոստումն այ առ նահապետսն՝
՚ի զաւակէ նորին օրհնիլ ամ ազգաց || . Հռվ . Դ ։ Ուր
այս բան՝ ՚ի զաւակէ նորին օրհնիլ ամ ազգաց , է բացայայտիչ
բառիս՝ խոստումն այ առ նահապետսն ։

Այս եղանակ բացայայտչի առաւելապէս ՚ի գործ ածի
՚ի վերայ ցուցական դերանուանցս՝ այս , այդ , այն . սոյն ,
դոյն , նոյն . որ , * Զիարդ լինիցի այդ՝ փոխանակել զիմ
ախտացեալ ոչխարն ընդ առողջ գազանին || . Խոր . Գ . 63 ։
Ուր բանս՝ փոխանակել զիմ եւն՝ է բացայայտիչ դեր-
անուանս՝ այդ ։

Երբեմն եւս բան բանի լինի բացայայտիչ իբրեւ երկու
անուն . որ , * Իւրաքանչիւր ոք ՚ի մէնջ փարխսեցի եղեւ
ասատանօր . Հայն միշտ աղաղակէ , տ՛ր իմ գոհանամ զքէն՝
որ չարարեր զիս հոռոմ . եւ հոռոմն զնոյն բան երկրոր-
դէ , թէ՝ որ ոչ արարեր զիս հայ || . Լամբրոն . Ատեն ։
Ահա ՚ի սմին՝ բանս այս , հայն միշտ աղաղակէ եւն , մինչեւ
՚ի վերջն՝ է բացայայտիչ նախընթաց բանին , թէ իւրա-
քանչիւր ոք ՚ի մէնջ փարխսեցի եղեւ ։

Գտանելի է չորրորդ , զի ուրեք ուրեք յատուկ անուանք
առանց համաձայնելոյ եւս լինին բացայայտիչ հասարակ

անուանց . իբր զի երբեմն դնին յուղղական հոլովն ( իբր ածական ) . որ ՝ * Հունն յորդանան գետոյ երկուս անգամ բաժանեցաւ || . Մծբ . ա : Ուր յատուկ անունս յորդանան՝ է բայայայտիչ գետոյն յուղղական հոլովն :

Իսկ երբեմն՝ այլ ՚ի սակաւս , դնին ՚ի սեռական հոլովն ( իբր յատկացուցիչ ) . որ ՝ * Նստէի ես ՚ի լեառն սինայի || . Աթոռ հոռոմ . ծէ : Ուր անունս սինայի՝ է բայայայտիչ լերին ՚ի սեռական հոլովն :

Եւ երբեմն ևս յարելով ՚ի բառդ անուն՝ նովաւ համդերձ լինին իբրև մի բայայայտիչ համառօտ անուան . ( և այս յաճախ ՚ի յատուկ անուանս մարդկան ) . որ ՝ * Երեց մի պետրոս անուն || . Եղիշէ . դ : Ուր պետրոս անունն է բայայայտիչ բառիս՝ երեց մի :

Գիտելի է հինգերորդ , զի ՚ի բայայայտիչս նախդիրն իբր ՚ի բազումս դնի ՚ի վր̅ երկուսն ևս , որ ՚ի վր̅ բայայայտելոյն և ՚ի վերայ բայայայտչին . մանաւանդ եթէ անջատեալ իցէ ՚ի միջի այլ մասն բանի . որ ՝ * Զփրկականն սաղմոսաւոր ՚ի գլուխ եդեալ զնշան խաչին || . Շար . փոխարէնդ : Ուր նախդիրդ զ եդեալ է ՚ի վր̅ երկուսն ևս . որ ՚ի վր̅ բայայայտելոյն՝ որ է բառս փրկականն սաղմոսաւոր , և ՚ի վր̅ բայայայտչին՝ որ է բառս նշան խաչին :

Իսկ երբեմն դնի ՚ի վերայ նախընթացին միայն . որ ՝ * Զաստուծոյ խաղաղութեն̅ քո սիրով ՚ի մեզ ընկալցուք || . Խորհրդ : Ուր նախդիրդ զ եդեալ է ՚ի վերայ նախընթացին միայն , այս է աստուծոյ խաղաղութեն̅ . որոյ լեալ է բայայայտիչ անունս քո :

Դարձեալ երբեմն ևս՝ այլ ՚ի սակաւս , զի նախդիրն միայն ՚ի վր̅ յետադասին դնի . որ ՝ * Քաղցր սպեղանիս ՚ի վր̅ դնէ՝ զյոյս թողութեն̅ || . Մաշտ . Է . գլխ . 5 : Ուր նախդիրդ զ ո՛չ է եդեալ ՚ի վր̅ նախադաս բառիդ՝ քաղցր սպեղանիս , որ է բայայայտեալն . այլ ՚ի վր̅ յետադաս բառիս՝ յոյս , որ է բայայայտիչն :

՚Ի վերոյգրեալ օրինակդ արժան է նկատել և զայս , զի բայայայտիչն և բայայայտեալն բազում ուրեք եդեալ

են համդերձ յատկացուցչաւ՝ կամ ածականաւ. ո՛չ երևի և յայսմ. * Շուրջ եղեն շունք բազումք՝ ըմբռնողք պի-ղատոսի ||. Հաբ. ԽԲ. Ուր բազմայայտիչն, զի անունս ըմբռ-նողք՝ եղեալ է համդերձ յատկացուցչաւ, որ է բառս՝ պիղատոսի. և բազմայայտեալն, զի անունս շունք՝ եղեալ է համդերձ ածականաւ, որ է բառս՝ բազումք:

Գիտելի է վերջերորդ, զի երբեմն թէպէտ գոյական անուանք համաձայն դնին ՚ի բանս առանց շաղկապի, բայց ոչ համօրէն բազմայայտիչ միմեանց, այլ իբր խնդիր բայի. որ, * Երևեցաւ մովսէսի վառմամբ հրոյ ՚ի մորենւոջ յանապատին ||. Գործք. Է. Ուր երկոքին գոյական անուանքս ՚ի մորենւոջ և յանապատին՝ թէպէտ առանց շաղ-կապի յարեալ են ընդ միմեանս համաձայն թուով և հո-լովիւ, բայց ոչ են միմեանց բազմայայտիչ. այլ երկոքին ևս խնդիր բայիս՝ երևեցաւ:

## ԳԼՈՒԽ. Բ.

### Յաղագս համաձայնութեան գոյական անուանց ընդ գոյականաց՝ իբր յատկացուցիչ. կամ

### Յաղագս յատկացուցչի.

Երբեմն յորժամ կամիմք յայտ առնել, թէ մերձեօք նշանակեալ իրիք գոյական անուան՝ որո՛ւմ յատկա-նայ, կամ որո՛յ է, դնեմք առ նմին զայլ գոյական անուն ՚ի սեռական հոլովի, որ զնշանակութիւն միւս անուան իւր-ացուցանէ, կամ ինքեան յատկացուցանէ. այսինքն ցուցանէ՝ թէ նշանակեալն այնր անուան՝ իւր է. և զայն սեռական հոլով կոչեմք յատկացուցիչ. որ, * Որ զբեռն ընկերին բառնայ, կատարէ զօրէնսն քրիստոսի ||. Գաղ. Զ. Ուր գոյական անունդ ընկերին՝ լեալ է յատկացուցիչ բեռին. զի իւրացուցանէ զբեռն. այսինքն ցուցանէ զբեռն՝ որ ընկերին է. և ոչ որ նորուն, կամ այլոյ իրիք: Այսպէս և գոյա-

կան անուանց դէմ՝ լինել է յարակայութիւն բառիս՝ պօրէնան ․ զի սեփականէ լինելոյն զնոյն ․ որ յայտ առնէ՝ թէ քոյն է այն օրէնք ․ և ոչ ծնի ․ կամ այլոյ ։

Այլ գիտելի է նախ ․ զի յարակայութիւնն բազում անգամ նախադասի յարակայելոյն ․ որ ․ * Որում շատ տուաւ գիտութեան իմաստ ․ շատ խնդրեսցի 'ի նմանէ առաքինութեան տեսակ || ․ Խորհրդ ։ Որ անունս Գիտութեան՝ լինել է նախադաս յարակայութիւն Իմաստին ․ որպէս և անունս առաքինութեան՝ տեսակին ։

Երբեմն 'ի մէջ յարակայութեանն և յարակայելոյն այլ ման բանի անկանի ․ որ ․ * Յախտս թշուառ մեղաց || ․ որ յախտս մեղաց թշուառ ․ Շնորհ ․ ընդհանր ։

Այլ պարտ է զգուշութիւն ունել զայսպիսի ոճ ․ և միայն ի պահանջելոյ վայելչութեան բանին ։

Երբեմն և ամբողջ բան մտանէ 'ի մէջն ․ որ ․ * Եւ ըզմկրտութեանն 'ի մատթէոսէ զաւետարանին ընթեռնլով՝ օրհնեսցին զջուրն || ․ որ օրհնեսցին զջուրն մկրտութեան ընթեռնլով զաւետարանն 'ի մատթէոսէ ․ Յովհ ․ Իմաստ ․ Է ։

Զայս ոճ 'ի գերադրական շարադրութիւնս և եթ պարտ է առնուլ 'ի կիր ի պատշաճի տեղւոջն ։

Գիտելի է երկրորդ ․ զի երբեմն միոյ անուան լինին բազում յարակայութիւնք ․ որ ․ * Մթերս՝ ոսկւոյ և արծաթոյ և քարանց պատուականաց և զգեստուց և պէսպէս գունոց և անկուածոց ․ ․ ․ բազմացոյց || ․ Խոր ․ Ա ․ 23 ։ Որ անուանքս՝ ոսկւոյ ․ արծաթոյ ․ քարանց ․ ևն ․ են յարակայութիւնք անուանս՝ Մթերս ։

Երբեմն և բազում գոյական անուանք լինին միմեանց յարակայութիւնք ․ որ ․ * Տիպք կերպարանաց Քրիստոսի բանից զգեցեալ ուխտի զհօտոյն իմաստս || ․ Իգնատ ․ Ա ․ 2 ։ Որ Ճշմարտութեան բանիցն է յարակայութիւն հերձուածողաց ․ և հերձուածողացն է յարակայութիւն անուանս՝ Իմաստ ։

Գիտելի է երրորդ ․ զի եթէ յարակայութիւնն կամ յարակայելին լինի նախադասեալ ․ նախդիրն յարակայելոյն հասարակօրէն դնի միայն 'ի վերայ նախընթացին ․ որ ․

* Զլուսոյն ճառագայթ տպաւորէր 'ի յինքեան || . Հոմ. ԺԷ ։ Ուր նախդիրս զ՛ եդեալ է 'ի վ՟ր լուսոյն , որ լեալ է նախադաս յատկացուցիչ ճառագայթին ։

Երբեմն ևս՝ և սակաւ ուրեք դնի միայն 'ի վ՟ր յետադասին . որ՟ , * Ծառայի առեր զկերպարան || . յ՟ս առեր զկերպարան ծառայի . Հոմ. ՃԻԶ ։

Երբեմն 'ի վ՟ր երկուցն ևս դնի , մանաւանդ եթէ անկեալ իցէ 'ի միջի այլ մասն բանի . որ՟ , * Զմահու փարատեայ զերկիւղ || . Հոմ. ԵԶ ։ Ուր նախդիրն եդեալ է 'ի վերայ երկուց անուանցս՝ մահու և երկիւղ . որոյ մինն է յատկացուցիչ , և միւսն յատկացուցեալ . որ՟ եթէ ասէր . զերկիւղ մահուն փարատեայ ։

Իսկ երբեմն դնի նախդիրն նաև 'ի վերայ այլոց բառից՝ որք յարին 'ի յատկացուցիչն կամ 'ի յատկացուցեալն , զիարդ և իցէ . որ՟ , * Զմեծին 'ի ծնունդս կանանց զկարապետին և զմկրտչին յովհաննու զառաքինութեան զհանդէս տօնելով այսօր 'ի Հայս հնչման , Եծ || . Հոմ. ԾԶ ։ Ուր միանգամ միոյ նախդրի եդեալ կան բազումք . զորս հնար էր չդնել՝ և կարգել այսպէս . 'ի Հայս հնչման տօնելով այսօր զհանդէս առաքինութեան կարապետին և մկրտչին յովհաննու մեծին 'ի ծնունդս կանանց ։

Պարտ է նկատել և զայս , զի եթէ յատկացուցիչքն կամ յատկացուցեալքն իցեն բազում , նախդիրն իբր 'ի բազմաց կրկնի նա և 'ի վ՟ր երկրորդ յետադասին . և երբեմն 'ի վ՟ր մի՟ . իսկ երբեմն ոչ կրկնի . որ՟ , * Ըստետարանն որոշէ զկարգ աշակերտութե՟ն և զքաղաքավարութե՟ն || . Լումք . [illegible] ։ Ուր նախդիրն յատկացուցելոյն , որ է բառդ՝ զ[illegible] , կրկնեալ է 'ի վ՟ր երկրորդ յատկացուցչին , որ է բառդ՝ զ[illegible] ։

Երբեմն ևս զօրութ՟ե եդեալ զյատկացուցելոյն՝ նախդիրն դնի 'ի վ՟ր յատկացուցչին . և այնու իբր զօրութ՟ե իմացեալ լինի յատկացուցեալն . որ՟ , * Որք [illegible] խորհրդաբար կերպարանիմք || . Պինդ. Դղբ ։ Ուր զօրութ՟ե կայ յատկացուցելոյն , որոյ լեալ է յատկացուցիչ բառս

Քերովբէից · որպէս թէ ասէր · զիմաստութիւն քերովբէից խորհրդաբար կերպարանիմք ։

Ըստ այսմ պատահի և 'ի դերանուանս · որ ՝ * Պտուղ հոգւոյն զմերս ասէ առաքեալն ( այս է զգործ մեր ) ՝ որ է սէր ՝ խաղաղութիւն · և ոչ թէ զհոգւոյն ( այս է զգործ նորա ) ՝ որ էր հեռ ՝ նախանձ ՝ ևայլն || · Լամբրոն · թուղթ ։

Եւ երբեմն ևս առանց նախդրի եդեալ յատկացուցչին՝ զօրութիւն կրկնի յատկացուցեալն · որ ՝ * Զի մի զգործն՝ նենգաւոր համարեսցին || · Ոսկ · Զ · 17 ։ Որ նենգաւորն է յատկացուցիչ բառին գործ ՝ որ զօրութիւն դնի · ոչ թէ ասէր · զի մի զգործն համարեսցին գործ նենգաւոր ։

Գիտելի է չորրորդ ՝ զի թէպէտ յատկացուցիչն միշտ 'ի սեռական հոլովի դնի ՝ բայց երբեմն յոր հոլով և գտցի յատկացուցեալն՝ ինքն ևս յայն հոլով յարի ՝ մանաւանդ 'ի գործիականն և 'ի բացառականն · որ ՝ * Բազում բանիւք օգտակարօք ածէր զթագաւորն 'ի հաւանութիւն || · այս է բազում բանիւք օգտակարաց · Եղիշէ · Ե ։

Զայս մի ինչ արժան է նկատել 'ի վերոյգրեալ օրինակդ ՝ զի յատկացուցիչն բազում ուրեք եդեալ է հանդերձ ածականաւ · որ է տեսանել և 'ի սմա · * Ոչ անցանէ ըստ մոլեխառնիր օրինայն կարգ || · Արիստոտէլ · Վէրլ ։ Որ մոլեխառնիւր է ածական օրինայն ՝ որ լեալ է յատկացուցիչ կարգին ։

## ԳԼՈՒԽ · Գ ·

### Ցուցակ համաձայնութեան գոյականի առաւելոյ ընդ գոյականաց իւր խնդրեր · հոմ

### Ցուցակ խնդրոյ գոյականաց ։

Գոյական անուանք բայց 'ի համաձայնելոյ ընդ գոյականաց իբր բացայայտիչ և իբր յատկացուցիչ ՝ յարին 'ի նոյն նաև իբր խնդիր՝ համաձայն բնութեան նոցին ։

Վասն զի բաղումք 'ի նոյանէ ունելով զհաղորդութիւն ընդ բայից՝ լոկ պահանջելով բնութեան բայիցն առնուն երբեմն զխնդիր 'ի պէսպէս հոլովս · որպիսի են բայանունքն , զի այնք որք 'ի բայից ածանցին · որգոն , Ճաշակումն · առումն · տեսութիւն · ժառանգութիւն · խոնարհութիւն · ծնունդ · ասացուած · ևն ։ և կամ են իբր ածականք նոցին · որպէս ,

Պատճառ · քարոզ · վիշտ · բարբառ · ևն ։

Ոմանք յայսպիսի անուանց ունին զհաղորդութիւն ընդ ներգործական բայից , և կոչին Ներգործականահաղորդք · ոմանք ընդ կրաւորականաց , և կոչին կրաւորականահաղորդք · և ոմանք ընդ չէզոքականաց , և կոչին չէզոքականահաղորդք ։ Թէպէտ ուրեք ուրեք ներգործականահաղորդքն իբր կրաւորականահաղորդ ևս վարին · և կրաւորականահաղորդքն՝ իբր չէզոքականահաղորդ · ևս և չէզոքականահաղորդքն՝ իբր ներգործականահաղորդ , և իբր կրաւորականահաղորդ , ըստ պահանջման տեղւոյն և բանին ։

Ըստ այսմ՝ խնդ՛ և զածական անուանց ։

Այսպիսի անուանք երբեմն ունին զզօրութիւն դերբայի՝ մանաւանդ 'ի հոլովսն · և երբեմն ևս զզօրութիւն ընդունելութեան յանգելոյ 'ի օղ և 'ի իչ ։ Ուստի և ըստ այնմ առնուն զխնդիր ։

Այլ գիտելի է , զի 'ի մէջ սոցա ներգործականահաղորդքն և կրաւորականահաղորդքն առնուն զկրկնատեսակ խնդիր · մի՝ խնդիր սեռի · և մի ևս՝ խնդիր բնութեան · իսկ չէզոքականահաղորդքն՝ միայն զխնդիր բնութեան ։

Գիտելի է ևս , զի այսպիսի գոյական անուանք ոչ միայն առնուն խնդիր զգոյական անուանս , այլև 'ի տեղւոջ նոցա զածականս , ևս և զդերանուանս և զընդունելութիւնս · զորոց թէպէտ ունիմք յիշել յիւրեանց տեղիս , բայց աստ ևս 'ի կարգել զօրինակս կանոնաց՝ նաև յայնց բերեմք քանի մի ։

Այլ առ 'ի տնօրէնել , թէ զորպիսի խնդիր առնուն գոյական անուանք , և յոր հոլով , դիցուք զչորս կանոնս ։

Կանոն ․ Ճ ․

Անուանք ներգործական հաղորդք՝ յորժամ իբր դերբայ վարին , առնուն խնդիր սեռի 'ի սեռական հոլովն ․ որ , * Ճողոպրեալք մեղաց ճաշեցի զնա || ․ Ժամագիրք ։ Ուր սեռական հոլովս մեղաց՝ լեալ է խնդիր սեռի ճողոպրման ․ որ եթէ ասէր ․ ճաշակելով զմեղս ճաշեցի զնա ։

Եւ երբեմն եւս ( այլ սակաւ ուրեք , ) առնուն զխնդիր հայցական փոխանակ սեռականի ․ որ , * Կենդանացուցեր զնա՝ փչմամբք քո 'ի նա զհոգի բանական || ․ 'Ի ծաղկոցէ ։ Ուր հայցական հոլովդ զհոգի փչմամբն՝ լեալ է խնդիր սեռի փչմանն ․ որ թէ ասէր ․ կենդանացուցեր զնա՝ փչելով զհոգի բանական ։

Իսկ եթէ այսպիսի անուանք ունիցին զզօրութիւն բառից յանգելոյ 'ի օղ , եւ 'ի իչ , ոչ առնուն զհայցական , այլ զսեռական՝ իբր զխնդիր սեռի ․ որ , * Աղբիւր կենաց ես , եւ բղխումն ողորմութեան , խնդրեմք 'ի քէն զթողութիւն մեղաց || ․ Ի բղխօղ ողորմութեան ․ Շար ․ ՃԾ ։

Որպէս եւ անուանքս , Պատճառ ․ առիթ ․ քարոզ ․ վիշտ ․ էակ ․ նշանակ ․ եւն ․ ունելով երբեմն զզօրութիւն օղի՝ առնուն զխնդիր 'ի սեռական հոլովն ․ որ ․ Ինքն է պատճառ ամենայնի || ․ Եզնիկ Կողբացի ․ Ա ։

Այլ եթէ խնդրեսցես , զինչ պատճառ է որոշել զայսպիսի սեռականահոլով խնդիր 'ի յատկացուցչէ , կա՛լ քեզ զայս կանոն , իբր զի եթէ սեռական հոլովն ցուցցէ զտէր գործողութեան՝ կամ զսեփականութիւն նորին , եւ չկարիցէ փոխիլ 'ի հայցական , դնի իբր յատկացուցիչ ․ որպէս յասելն , * Առաքմամբ մեր հոգւոյն յանապատէ կոչեցար || ․ ( Շար ․ Ճ ․ ) սեռական հոլովս մեր հոգւոյն՝ դնի իբր յատկացուցիչ ․ զի նշանակէ զտէր գործողութեան առաքելոյն , որպէս եթէ ասէր ․ 'Ի յառաքել մեր հոգւոյն զքեզ , կամ զժողովուրդն առ քեզ՝ կոչեցար յանապատէ 'ի պատիւ եպիսկոպոսութեան ։ Իսկ եթէ ցուցցէ զենթակայն կամ զեղելն գոր-

ծողութն , և կարիցէ փոխիլ 'ի հայցական հոլովն · դնի
իբր խնդիր · որպէս յասելն , * Առնէ ( քո ) խաղաղութի
Է ձեզ՝ հոգւոյն սրբոյ առաջմամբ || , ( Լամբրոն · համբերանց · )
սեռական հոլովս հոգւոյն սբյ՝ դնի իբր խնդիր · զի նշա-
նակէ զենթակայն գործողութեան առաջելոյն · ապա եթէ ասէր ·
քո առնէ ընդ ձեզ խաղաղութի՝ առաջելով առ ձեզ
զհոգին սբ ։

Ապա եթէ համբակք և նորավարժք չիցեն բաւական որո-
շելոյ զայս , կարեն զայսպիսեաց ասել առ հասարակ՝
յատկացուցիչ · քանզի և սոքին Է իբր զզօրութի յատկա-
ցուցչի ունին ։

Այլ գիտելի է , զի ներգործականահաղորդ անուանք
փոխանակ սեռականի կամ հայցականի երբեմն առնուն
զխնդիր սեռի յայլ հոլովս · որ , * Զիք ինչ 'ի մէջ
մեր և Է առ քո հաղորդակցութեան հակառակութի || · Լամբ ·
առաջն ։ Ուր բառս առ քո՝ է իբր խնդիր սեռի հաղորդակցութեան ։

Կանոն · Է ։

Անուանք ներգործականահաղորդք բայց 'ի սեռական և 'ի
հայցական խնդրոյ , և կամ առանց նց ևս , առնուն եր-
բեմն 'ի վսեմ շարադրութիս զխնդիր բնութե յայնպիսի
հոլովի՝ զորպիսի պահանջեն բայքն , Է որոց ունին զհա-
ղորդութի ։

Ոմանք առնուն զզուղական , ( թէպէտ և սակաւք · ) որ ·
* Եղբայր յորջորջիմք զնս՝ լուծանէ զհակառակութիւն || ·
Ոսկ · հառվմ · ծբ · 10 ։ Ուր եղբայրն է ուղղական խնդիր
յորջորջման · ապա թէ ասէր · յորջորջելով զնս եղբայր՝ լու-
ծանէ զհակառակութիւն ։

Ոմանք զներգահոլով տրական · որ , * Լուայք զոն անսաստ
ձեզ խոստմանն || · Լամբրոն · առաջն ։ Ուր ձեզն՝ է տրական
խնդիր խոստմանցն ։

Ոմանք զանախտրիս տրական · որ , * Տուր մեզ զխաղաղութի
քո , զոր շնորհեցեր մեզ քո յառաջելոյ՝ հինամբ քո 'ի

Նմ զկենդանացուցիչ և զամենազօր Հոգիդ քո սբ || · Փառաբերք ։ Ուր բառդ ՚ի նմա՛ է նախդրիւ տրական խնդիր կցման · որպ թէ ասէր · փչելովդ քո ՚ի նմ զհոգիդ ։

Ոմանք զբայառական · զր ՝ * Առաւել քան զտարօրինակն յոյժ է զսմ՝ մեծագոյն փրկութի զվերջինսն իմանայիր || · Եղիցի · Է ։ Ուր յոյժէն՝ է բայառական խնդիր տարօրինակն · որպ թէ ասէր · առաւել մեծագոյն փրկութի իմանայիր զվերջինսն՝ քան զարարչագործեալ զսմ յոյժ է ։

Ոմանք եւ զայլ հոլովս · զր ՝ * Վերագոյն է այս զբազար- տուէ տառացուած զմեզ՝ քան զհեթանոսականացն առա- պելեալ անձարանութե՛ն || · զր ասելն զմեզ զայս զբազար- տութի վերագոյն է եւ · Շնորհաւէ · Եղբ ։

Կանոն · Զ ։

Անուանք կրաւորականահաղորդք առնուն զխնդիր սեռի ՚ի բայառական հոլովն · զր ՝ * Զարգելեալն մարդկային հոգւոյ ՚ի մարմնոյ՝ խափանեաց մեռելութին քո || · Խորհրդ ։ Ուր բայառական հոլովս ՚ի մարմնոյ՝ է խնդիր սեռի կրաւորականահաղորդ բայանուանս զարգելեան · որպ թէ ասա- ցեալ էր · մեռանելն քո խափանեաց զարգելեալ լինելն մարդկային հոգւոյ ՚ի մարմնոյ ։

Այսպիսի անուանք բայ ՚ի բայառականէ ՝ և կմ՝ առանց նր՝ առնուն ուրեք ուրեք նաեւ զայլ խնդիր՝ իբր զխնդիր բնութե · զր ՝ * Իմանալի արեգականն յառաջընթաց առ ՚ի յերկիր ծագմանն ՚ի կուսէն || · զր ծագելոյ ՚ի կուսէն ՚ի յերկիր ։ Հար · ԿԶ ։

Կանոն · Է ։

Անուանք չէզոքականահաղորդք զայնպիսի խնդիր առնուն ՝ զորպիսի ըստհանչեն բայքն՝ որոց հաղորդին ։

Ոմանք առնուն զներգահոլով տրական · զր ՝ * Աղ- չկ... զարթնուցն հասուցման՝ ընդունողակէ զոգիսն ՚ի գործ

բարութ || . Կոր . ԺԷ . Ι : Ուր բառս հատուցման փորձանացն՝ է տրական խնդիր անհնարութե . որպ թէ ասէր . ակնունելն հատուցման վարձուց՝ ընդարձակէ զոգին 'ի բարեգոր-ծութիւս :

Ոմանք զխնդրիւ տրական . որպ , * Ո՞ այլ զտապանակն այ արար գերի այլազգեաց , թէ ոչ քահանայից առ 'ի պաշտօն իւրեանց հեղգութեն . . . քանի՞ն մեր առաւել առ որդւոյն այ պաշտօն ժպրհութե || . Ղամբ . 'Ի ճնն . պատ : Ուր բառս առ 'ի պաշտօն իւրեանց՝ է խնդիր հեղգութեն . և բառս առ պաշտօն որդւոյն այ՝ խնդիր ժպրհութեն . որպ թէ ասէր . ո՞ այլ զտապանակն այ գերի արար այլազգեաց , եթէ ոչ հեղգանալն քահանայից առ պաշտօն իւրեանց . ապա քանի՞ առաւել ժպրհիլն մեր առ պաշտօն որդ-ւոյն այ :

Ոմանք զբացառական . որպ , * Ահագին է անջատումն հոգւոյ 'ի մարմնոյ || . Ճառընտ : Ուր 'ի մարմնոյն է բացառական խնդիր անջատման . որպ թէ ասէր . ահագին է անջատիլն հոգւոյ 'ի մարմնոյ :

Ոմանք՝ ( այլ սակաւք ) զպատմական . որպ , * Յաւիտեան է մեր զնմանէ գոհութիւն , որպ և շնորհն || . Ղամբ . առղ . հշ : Ուր զնմանէն է պատմական խնդիր գոհութե :

Ոմանք՝ ( այլ կարի սակաւք ) զպարառական . որպ , * Թա-գաւորելին մեղք 'ի ժամանակէ անտի յանցաւորացն ադամայ զպատուիրանաւն || . Մծբ . Է : Ուր պարառական հոլովս զպատուիրանաւն՝ է խնդիր յանցաւորացն . որպ թէ ասէր . Թագաւորելին մեղք 'ի ժամանակէ անտի՝ յորմէ հետէ յան-ցեաւ ադամ զպատուիրանաւն այ :

Ոմանք զներգոյական . որպ , * Խոստացաւ զերանութի և զհանդերձեալ յարքայութե իւրում || . Մծբ . Է : Ուր բառս յարքայութե՝ է ներգոյական խնդիր հանդերձելոյն :

Ոմանք ևս 'ի ձեռն նախադրութե . որպ , * Որդի հօր ասե-լով՝ զէութենակցութեն ը հօր յայտ առնէ || . Խոսրով . Ուր ընդ հօրն՝ է նախադրութե խնդիր էութենակցութե :

Այլ գիտելի է , զի ոմանք յայսպիսի անուանց երբեմն

համդերձ բուն խնդրովն իւրեանց առնուն նաեւ զայլ խըն-
դիր ․ որպ ՝ * Աշխարհախմբան յոյժ յայսմանէ յոյն կենդա-
նեաց ǁ ․ Ցովհ ․ կթ ․ Ուր անուն աշխարհախմբան՝ առեալ է
զերկուս խնդիրս՝ զնախադրիւ տրական ․ այս է՝ յոյն կեն-
դանեաց՝ իբր բուն խնդիր ․ և զբացառական ․ այս է՝ յոյժ
յայսմանէ՝ իբր երկրորդական խնդիր ։

Գիտելի է դարձեալ ՝ զի ոմանք ՝ի գոյական անուանց
յունելով զհաղորդութի և բայից՝ և պատահման առնուն
երբեմն զխնդիր ․ որպ ՝ * Աշխարհ ամ բարեգործութեց է
յոյս յարութե ǁ ․ Կոչ ․ ծը ․ ։ Ուր ամ բարեգործու-
թեց է իբր սեռական խնդիր որոշոյն ։

Այլ պարտ է գիտել ՝ զի այսպիսի պատահական խնդր-
առութիք անուանց են յաւէտ վասն էական բայիցն՝ որք
զօրութե դնին ․ որպ ՝ յայս բան ՝ * Նէ ․ ՝ի գիրկս կորն-
չեալ՝ խնդրեն ՝ի գրկայն զօրութի ǁ ․ ( Կոչ ․ ու ․ 5 ․ )
զօրութե դնի՝ որոշ իւն ․ որպ թէ ասէր ․ նեաք՝ որք են ՝ի
գիրկս կորուսեալ ՝ եւ ։

## ԳԼՈՒԽ ․ Դ ։

### Ցուցակ համաձայնութե գոյական անուանց ընդ ածականաց ․ չմ

### Ցուցակ խնդրոյ ածականաց ։

Համաձայնութի գոյականաց և ածականաց ոչ այլ ինչ է՝ բայց եթէ լինելն գոյականաց՝ խնդիր ածականաց ․ և այնմ՝ զոր ասացաք ՝ի նախընթացս գլուխ զխնդրոյ գոյականաց ․ զի որպ գոյական անուանք ունելով զհաղորդութի և բայից՝ առնուն զխնդիր ՝ի պէսպէս հոլովս ․ Սոյնպէս և բազումք յածականաց ․ և յորոց երբեմն իբր ածական վարին ՝ վս ունելոյ զհաղորդութի ինչ կմ զվերաբերութի առ բայս՝ առնուն զխնդիր և կանոնաց խնդրառութե գոյականացն ․ որպ տեսցի յառաջիկայ կանոնս ։

Այլ գիտելի է ՝ զի որպ ասացաք զգոյականաց ՝ սոյնպ և

ածականք ոչ միայն զգոյական անուանս առնուն իւրեանց խնդիր, այլ և ՚ի տեղի նոյն երբեմն զածականս իբր գոյականս, և զդերանունս, և զդերբայս, եւս և զընդունելութիւնս, զորոյ զօրինակն կարես տեսանել զկնի ։

Կանոն. Ա.

Ածականք ներգործականականք ունելով զզօրութիւն ընդունելութեանց յանգելոց ՚ի օղ՝ առնուն զխնդիր սեռի ՚ի սեռական հոլովի. որպէս, * Ձեռքն են գործաւնեաց գործոյ||. Նար. ԵԲ ։ Ուր սեռական հոլովս գործոյ՝ է խնդիր սեռի անուանս գործաւնեաց ։

Երբեմն ունին յայսպիսի ածականաց, այլ սակաւք յոյժ՝ առնուն զհայցական փոխ սեռականի. որպէս, * Որ ուտես զհաց ցաւոյ . . . եւ ՚ի մէջոյ մատուցանողացդ զդոյն||. Ղամբ. առաջ. ԾԵԶ ։ Ուր հայցական հոլովդ զդոյն՝ է խնդիր սեռի բառիս՝ մատուցանողաց ։

Իսկ ունին յածականաց փոխ սեռականի և հայցականի առնուն զայլ հոլով. որպէս, * Ըմպօղ և մահու . . . յաղթահարն||. Նար. գող. առաջ ։ Ուր տրական հոլովքս օլութեց և մահու՝ լեալ են խնդիր սեռի յաղթահարին ։

Այլ գիտելի է, զի բարդ ածականք բազում անգամ ՚ի բարդուածէ ունելով զխնդիր սեռին՝ առնուն միայն զխնդիր բնութեան յայլ հոլովս. որպէս, * Սոքա են նաւաբեկումարացուցք ՚ի պատերազմէ||. Մծբ. ԺԸ ։ Ուր ՚ի պատերազմէն՝ է խնդիր բնութեան անուանս նաւաբեկեցուցք. Իսկ խնդիր սեռին նկատի ՚ի բարդութեան, և է բառս նաւաբ. որ թէ ասէր. սոքա են դարձուցանօղք զկապարճս ՚ի պատերազմէ ։

Սոյնպէս է տեսանել ուրեք ուրեք և ՚ի բարդ գոյականս, այլ ՚ի սակաւս յոյժ. որպէս, * Աղօթք զէն են քեզ և նետաձգութիւն ընդդէմ սատանայի||. ՅԺ, են ձգումն նետի ընդդէմ սատանայի. Նեղոս ։

Գիտելի է եւս, զի սեռական խնդիրք բարդ ածականաց

կարեն նկատիլ և ս բազում ուրեք իբր յատկացուցիչ արմատոյն, յորմէ բարդին. որպէս յասելն, * Անմահութեց պարգևատուն երևեցաւ մեզ ||, ( Ճառ. խե. ) սեռական հոլովս անմահութեց կարէ համարիլ իբր յատկացուցիչ պարգևին, յորմէ բարդի անունս պարգևատու. որպէս թէ ասացեալ էր. տուօղն զպարգևս անմահութեց երևեցաւ մեզ:

Կանոն. Է.

Ածականք ներգործականահաղորդք բայ ՚ի խնդրոյ սեռի, կամ բայ ՚ի սեռականէ՝ առնուն երբեմն նաև զայլ խնդիր յայլմէ հոլովէ, յորպիսի պահանջեն բայքն, ըստ որոց ունին զհաղորդութի, ուրեք ուրեք ըստ ինքեան, և ուրեք ուրեք ըստ պատահման և իբր երկրորդաբար. որպ, * Գործակից է առն խորամ՝ ամ բարեաց ||. Առակ. ժգ. 12. Ուր բառս ամ բարեաց՝ է սեռական խնդիր գործակցէն. իսկ բառս առն խորամ՝ է տրական խնդիր. որպէս թէ ասէր գործօղ է ամ բարեաց ըստ առն խորամ:

Իսկ երբեմն առանց խնդրոյ սեռի առնուն զայլ խնդիր. որպ, * Աշխատաւոր հայոց մեծաց ||. Ճառ. իէ: Ուր հայոց մեծաց է տրական խնդիր աշխատաւորէն. իսկ խնդիր սեռին զօրութբ դնի. որպէս եթէ ասացեալ էր. աշխատօղ բարեաց առ հայս.

Կանոն. Ը.

Ածականք կրաւորականահաղորդք ունելով զզօրութի ընդունելութեց յանգելոյ ՚ի չէ կամ ՚ի եոլ, առնուն զխնդիր սեռի ՚ի բացառական հոլովի. որպ, * Եղէգն շարժուն ՚ի հողմոյ ||. Ղուկ. է. 24: Ուր բառդ ՚ի հողմոյ՝ է խնդիր շարժունին. որպէս թէ ասէր. շարժեալ ՚ի հողմոյ:

Կանոն · Ժ ·

Ածականք չէզոքականահաղորդք հասարակօրէն զայնպիսի խնդիր առնուն, զորպիսի պահանջէն բայքն՝ ընդ որոց ունին զհաղորդութիւն ։

Ոմանք առնուն զվերջահոլովն տրական. որպէս * Անպարտականք մահու ոչ մահապատժի դատապարտութեան || Ղուկ · Ժ · Ուր մահուն է տրական խնդիր անպարտականին ։

Ոմանք զնախադրիւ տրական. որպէս * Դու բարերար, և ճշմարտասէր առ իմ մարդիկ || Մծբ · Յով · ԺԲ ։ Ուր բառս առ իմ մարդիկ՝ է խնդիր ճշմարտասիրին ։

Ոմանք զբացառական. որպէս * Մաքուր եղէց ՝ի մահուանէ՝ արձակել զմահու ըմբռնեալսն || Մովսէս ։ Ուր բացառական հոլովս ՝ի մահուանէ՝ է խնդիր մաքրին ։

Ոմանք՝ ( այլ սակաւք ) զպատմական. որպէս * Թանձրամիտք էին փարիսեցիքն, և անհոգք զհոգեկան խնդրոյն || Նոննոս · Ը · 40 ։ Ուր պատմական հոլովս զհոգեկան խնդրոյն՝ է խնդիր բառիս անհոգք ։

Ոմանք զգործիական. որպէս * Աղաղակին անդադար՝ անկատարք են բժշկութեան || Նոն · ԺԹ ։ * Ուր անդադարին է գործիական խնդիր աղաղակին ։

Ոմանք զներգոյական. որպէս * Քաղցրացեալք ՝ի հաստատութեան || Նոն · Գ · ... ։ Ուր ՝ի հաստատութեան է ներգոյական խնդիր ածական անուանս քաղցրացեալք ։

Ոմանք ՝ի ձեռն նախադրութեան. որպէս * Թալեալ են չարք խառնեալք ընդ բարիս յետ սուտ || Մծբ · ԺԲ ։ Ուր ընդ բարիսն է խնդիր խառնելոյն ։

Այլ աստ գիտելի է, զի ածականք չէզոքականահաղորդք երբեմն բայ ՝ի բուն խնդրոյն առնուն նաև զայլ խնդիր. որպէս * Երկնայնոյն ՝ի յերկրի հաղորդք չքնութեան . . . մեք դարձեալ || Ղուկ · ՀԷ ։ * Ուր երկնայնոյն է բուն տրական խնդիր հաղորդին. իսկ չքնութեան և ՝ի յերկրի՝ են երկրորդական և պատահական խնդիրք նը ։

Իսկ երբեմն զօրութեամբ ունելով զբուն խնդիրն, և կամ

փխանակ բուն խնդրոյ առնուն զայլ խնդիր, մանաւանդ 'ի հոլովն գործիական ։ որ. * Սէր վարուք՝ ազնուագոյն են ողորմութե|| ։ Նար ։ ծէ ։ Ուր վարուք է խնդիր բառիս սէր ։

Կան ևս բազում ածականք, որք միայն վն վայելչութե, կամ վն սովորութե փխանակ բուն խնդրոյ առնուն զխնդիր 'ի սեռական կմ 'ի տրական հոլովն ։ որ. * Աներկիւղ ամ խռովութեց կենաց յաւիտենականս ստանան || ։ Խոսրով ։ Ուր ամ խռովութեանց է խնդիր աներկիւղին ։

Գտանելի է դարձեալ, զի ածական անուանք բաղադրեալք մանաւանդ ան, թէպէտ ըստ բնութե իւրեանց զայլ խնդիր պահանջեն, բայց իբր 'ի բազում առնուն զբացառականն ։ որ. * Ո՛վ անարժանդ 'ի փրկութեց || ։ Նար ։ ը ։ Ուր 'ի փրկութենէ է բացառականն խնդիր անարժանին ։

Եւ ևս գտանելի է, զի ածական անուանք ինչ՝ որք նշանակեն զհայրենիս, հասարակօրէն առնուն զխնդիր 'ի գործիական կամ 'ի բացառական հոլովն ։ որ. * Աղբակիս՝ գաւառաւ մարզպի . . . . յինէն յանկուցանէ զկարայր || ։ Խոր ։ ա ։ 20 ։ Ուր գաւառաւն է գործիական խնդիր բառիս Աղբակեցի ։

Ա. Խնդրոյ ածականաց յանգելոց 'ի իչ ։

Այսպիսի ածականք բղխեն 'ի ներգործական բայից և են ։ և առնուն զխնդիր 'ի սեռական հոլովն իբր զխնդիր սեռի ։ որ. * Ի գերեզմանս իջէր եղծանիչ մահու || ։ Շար ։ կը ։ Ուր սեռական հոլովն մահու՝ լեալ է խնդիր ածական անուանս եղծանիչ ։

Այսպիսի ածականք երբեմն փխանակ սեռականի առնուն զհայցական ։ որ. * Եդաւն մեզ զգեղմն ընդունիչ զզօրն երկնային || ։ Շար ։ ա ։ Ուր հայցական հոլովն զզօրն երկնային՝ է խնդիր բառիս ընդունիչ, որ լեալ է ածական գեղմանն ։

Այլ գտանելի է, զի այսպիսի ածականք ուրեք որուեք

հանդերձ սեռական կամ հայցական խնդրով առնուն նաև
զայլ խնդիր՝ իբր զխնդիր բնութե ·

Ոմանք զվերջահոլով տրական · զր · * Եղեն աւետարանեցին մեզ դարձին և վերստին փրկութեն || · Ղամբ · ժե · Ուր դարձին և փրկութեան են խնդիր սեռի անուանս աւետարանելոյ · իսկ մեզն՝ է տրական խնդիր · որպ թէ ասէր · աւետարանեցին մեզ զդարձն և զվերստին փրկութին ·

Ոմանք զնախնդրիւ տրական · զր · * Ընծայեցուցանէին (զոստս՝) անձինս բարձրողին, և նորոգէին զերկիր յառաջին անձակերտութին || · Մամբրէ · Ուր հայցական հոլովս զերկիրն՝ է խնդիր սեռի նորոգելն · իսկ տրական հոլովս յառաջին անձակերտութեն՝ է խնդիր բնութե ·

Ոմանք զբացառական · զր · * Միայն ազատեսցէ զբնաւս յոչէից || · Նար · Գ · Ուր բառդ զբնաւս՝ է խնդիր սեռի ազատելն · իսկ յոչէիցն՝ բացառական խնդիր նր ·

Ոմանք զգործիական · զր · * Քաղցրաձայն հնչմամբ դարձուցել մոլորեալ հօտին || · Շնոր · Խ · Ուր սեռական հոլովս մոլորեալ հօտին՝ է խնդիր սեռի դարձուցելն · իսկ քաղցրաձայն հնչմամբն՝ է գործիական խնդիր ·

Ոմանք՝ (այլ սակաւք) զներգոյական, և զայն՝ իբր ընդ պատահման · զր · * Յահաւորն ատենի յայտնեսցէ իրաւամբք զմատակարարութին՝ որ առ մեզ || · Նար · ՃԺ · Ուր բառս զմատակարարութիւնն որ առ մեզ՝ է խնդիր սեռի անուանս յայտնեսցէ · իսկ յահաւորն ատենին՝ ներգոյական խնդիր ·

Ոմանք նախադրութբ · զր · * Աղօթքն է . . . զամն ընդ մարդկան հաշտեցուցել || · Սարգ · Ա · Պետ · Է · Ուր բառս զամ՝ է խնդիր սեռի հաշտեցուցելն · իսկ ընդ մարդկանն՝ նախադրութբ խնդիր ·

Դարձեալ ոմանք յայսպիսի անձականաց երբեմն զօրութ ունելով զսեռական կամ զհայցական խնդիրն՝ առնուն զայլ խնդիր · զր · * Զառ թշնամութի մարդին զբանս սիրեցին և գրեցին || · Ղամբ · ժե · Ուր բառս առ թշնամութի՝ է խնդիր բնութե անուանս մարդին · որոյ խնդիր սեռին

զօրութի՛ւ դնի · այս է՝ մարդոյ · ո՞չ թէ ասէր · սիրեցին
և գրեցին զբանս՝ որ զմարդն 'ի թշնամութե մարդէ :

Գտանին և քանի մի ածականք սակաւք յոյժ այսպիսի վերջաւորութիւ բղխեալք 'ի չեզոքական բայից · որպի են բաւքս ՝ Բնակէլ · կապաւէլ · պատուաւորէլ · եւ · որք երբեմն առնուն զխնդիր ընդ բայիցն ՝ և երբեմն փոխանակ նոցին զսեռականն · որ ՝ * Բնակելիք 'ի խաւարի տեսաք զլոյս գիտուն եկեալ հասեալ || · Խորհրդ · Ուր 'ի խաւարին է բուն խնդիր բաւիս Բնակելի :

Վա՜ լծորդաց ածական անուանց բաղդատականաց :

Սոքա չորեքկին առնուն զխնդիր : Երբեմն զսեռական · որ ՝ * Տէրունեան ժօնից գերագոյն || · Սահակ կթ · Ուր սեռական հոլովս աերաւնեան ժօնից՝ է խնդիր գերագոյն :

Երբեմն զբացառական · որ ՝ * Զբաղմանագոյն 'ի կենդանեաց զօձն՝ դնէ օրինակ իշխանին մահու || · Իգնատ · Ձ · 19 : Ուր բացառական հոլովս 'ի կենդանեաց՝ է խնդիր բաղմանագոյն :

Երբեմն զներգոյական · որ ՝ * Ուշ միայն նման ուղղի ՝ բայց ոգուլիս միայն կորագոյն յորդիս նի || · Է · Սնաց · 21 : Ուր ներգոյական հոլովս յորդիս՝ է խնդիր կորագոյն :

Երբեմն և՝ և բաղում անգամ նախադրութիս՝ քան · և ուրեք ուրեք ևս նախադրութիս՝ 'ի վե · որ ՝ * Թէև քան զգազանս լուագոյն իցէ՝ քան զոչխարսն հանդարտագոյն լինիցի || · Շնորհ · ընդհանր : Ուր քան զգազանս և քան զոչխարսն՝ են նախադրութի խնդիր բաւիցս լուագոյն և հանդարտագոյն :

Սոքա երբեմն առնուն զկրկին խնդիր ՝ մի՝ ընդ բաղդատականութե ՝ և մի ևս՝ ընդ նշանակութե դրականայն ՝ յորոյ ածանցին · որ ՝ * Զինչ քեզ տր քան զսուրին չարագոյն ||· Նար · Ճէ : Ուր չարագոյն առեալ է զերկուս խնդիրս ·

զմին ընդ բաղդատականութե՛, և է բառս՝ փոխ զարուն · և զմիւս ևս ըստ նշանակութեան դրականին իւրոյ, և է

բառս՝ փէփ ։

Իսկ երբեմն միայն ըստ դրականաց իւրեանց առնուն ըզխնդիր · որպէս, * Դարձեալ այլ ևս վկայութի նմանագոյն անհաւատութեան նց․ և ապարասանութեան ՝ի նոյն միտս դնէ առաջի || · Մարգ · ա · գլխ · 4 ։ Ուր տրական հոլովքս անհաւատութեան նոցա և ապարասանութեանն՝ են խնդիր նմանագունին՝ ըստ նշանակութե դրականի նր, որ է նման · զի և սա առնու խնդիր ՝ի տրական հոլովն ։

Եւ այս գիտելի է, զի նաև անուանքս՝ Բազում, յոլով · յաճախ · սակաւ · այլ · վերջին · եւ, գրեթէ ըստ բաղդատականաց առնուն զխնդիր ՝ի հոլովն բացառական, կամ սեռական, եւ․ որպէս, * Պսակօք և պատուօք մեծարեաց զբազումս ՝ի մոգուց || · Եղիշէ վարդ · ա ։

Եւ ևս գիտելի է, զի բազումք յածականաց ուրեք ուրեք իբր բաղդատական վարելով ընդ բաղդատական անուանց առնուն զխնդիր · որպէս, * Թագաւորայ վեհափառ, որ ոչ յուցաւ ՝ի դարս || · ընդ Թագաւորայ մեծափառագոյն · Նար · ԼԶ ։

## ԳԼՈՒԽ · Է ·

### Յաղագս համաձայնութե ածական անուանց ընդ գոյականաց ։

Ածական անուանք յարելով ՝ի գոյականս՝ յայտ առնեն զորպիսութի նոցին, զորս գոյականքն նշանակեն · որպէս յայտ է ՝ի գրելոյ յերկրորդ մասին · գլ · Է ։ Եւ քանզի պէսպէս յարին սոքա ՝ի նոսա, պէսպէս համաձայնին ընդ նոսին · որոյ վն դիպուք զեօթն կանոնս ։

Կանոն · Ա ։

Ածական անուանք յորժամ յետադասին գոյականաց, համաձայնին ընդ նոսա թուով և հոլովիւ · որպէս, * Որդւոյ

նենգաւորի բարի ինչ մի եղիցի ||. Առակ. ժէ. 13։

Այս 'ի սմին ածական անուն նենգաւորի՝ համաձայնեալ է ընդ գոյականի իւրում՝, որ ընդ բառս մարդոյ՝ թուով և հոլովիւ. զի որպէս մարդոյն է եզական, և վերջահոլովն տրական, սոյնպէս և նենգաւորին։

Սոյնպէս և եթէ բազումք լինեն յետադաս ածականքն, պարտին համաձայնիլ ընդ գոյականին թուով և հոլովիւ. որ. * Այն ինչ ծնեալ մանուկ իբրև անբան է և անխօս, թէպէտ և զկերպարանս մարդոյ բանաւորի և իմաստնոյ ունիցի ||. Մագ. ա. գլխ. 4։ Ուր երկոքին ածականքս բանաւորի և իմաստնոյ՝ համաձայնեալ են թուով և հոլովիւ ընդ գոյականին իւրեանց, որ է բառս մարդոյ։

Այլ դիտելի է նախ, զի ուրեք ուրեք յետադաս ածականք 'ի նախադրիւ հոլովս և յուղղականս յոգնական անուանց դնին երբեմն անհամաձայն. որ. * Զգաստս անապականս 'ի քէն ընկալայ ||. փխկ դնելոյ, զգաստս անապականս. Շար. ճժէ։

Գիտելի է երկրորդ, զի եթէ անկցի մասն ինչ բանի 'ի մէջ յետադաս ածականին և նախադաս գոյականին, որ ունիցի ևս նախ քան զինքն զայլ ածական, յետադաս ածականն իբր 'ի բազումս անհամաձայն դնի՝ վասն զօրութեան կրկնելոյ գոյականին. որ. * Եղական բնութիւնքս ընդ ախտիւ չարչարանաց անկանին. իմանալիքս հոգեկան կրիւք միայն, և մարդիկ՝ հոգեկան և մարմնական ||. Շնորհ։ Ուր անուանքս հոգեկան և մարմնական՝ որք են յետադաս ածական, եդեալ են անհամաձայն բառիս կրիւք, որ դըրեթէ զօրութեամբ կրկնի. որպէս թէ ասէր. իմանալիքս հոգեկան կրիւք միայն, և մարդիկ հոգեկան և մարմնական կրիւք։

Իսկ երբեմն այլազգոյ կանոնի նաև առանց ընդ մէջ մտանելոյ իրիք բառի՝ դնի անհամաձայն. որ. * Մատանի դրոշմեալ աջոյն հայրական ||. փխկ ասելոյ, աջոյն հայրականի, կամ հայրական աջոյ. Խոսրով։

Այսպիսի անհամաձայնութիւն յաճախ գտանի 'ի շարակա-

նի և յոտանաւորս՝ վս֊ յարմար ձևացուցանելոյ զոտս բա-
նիցն . որպ , * Ետես մովսէս զօրինակ կուսին 'ի սինա լե-
րեալ լուսովն անմատոյց || . ﬕ անմատոյց լուսով . Շար . Ա .
Այլ պարտ է զգուշանալ 'ի գործածութենէ այսպիսի ոճոյ,
բայց եթէ հարկ ոտից բանիցն ստիպեսցէ 'ի չափաբա-
նութիս :

Երբեմն ևս ուրեք ուրեք 'ի յարել ածականաց զկնի ան-
եզական գոյականաց՝ ըստ հոլովին դնին համաձայն, և ըստ
թուոյն անհամաձայն . այլ այս 'ի սակաւս յոյժ . որպ . * Քս
փառօք մեծաւ յարեաւ || . 'ի Շարականին . Կանոն . ԿԷ :

Դարձեալ գիտելի է, զի ածականք յանգեալք 'ի եան
'ի յետադասիլն՝ հասարակօրէն ոչ համաձայնին ըստ գոյա-
կանայն . որպ , * 'ի զօրութէ սբ և ամենակալ նշանին տե-
րունեան . . . հալածէր զբնակուն սանդարամետական դա-
սուն || . Մաշտոց : Ուր ածական անունս տէրունեան՝
թէպէտ և յետադասի նշանին, բայց առանց համաձայ-
նութեան դնի :

Այնպէս լինին երբեմն և անուանք ինչ յանգեալք 'ի ունի ,
մանաւանդ անունս արքունի . որպ , * Զայն 'ի տեղի նց յա-
րուցին զանունս անուամբ արքունի || . Խոր . Բ . 7 .

## Կանոն . Է .

Ածական անուանք յորժամ նախադասին գոյականաց, ոչ
համաձայնին ըստ նմ ոչ թուով և ոչ հոլովիւ . այլ դնին
այսպէս, որպ էին յուղղական հոլովն . որպ , * Անապա-
կան պսակաց արժանի եղեն || . Շար . ԾԲ : Ահա 'ի սմին
ածական անունս անապական՝ նախադասեալ գոյական ան-
ուանս պսակաց՝ ոչ ինչ համաձայնեալ է ըստ նմա . զի պս-
ակացն է տրական հոլովն, և յոգնակի . իսկ անապականն
է ուղղական, և եզակի :

Այնպէս է ևս՝ յորժամ նախադաս ածականքն իցեն բա-
զում . որպ , * Աներկբայ և անպղտոր ոգւով դրօշմեա-
ցուք զմեզ || . Խորհրդ : Ուր ածականքս աներկբայ և անպղ-

որ՝ առանց համաձայնութեան նախադասին գոյական անուանս
ոգւով ։

Այլ գիտելի է նախ, զի ածականք միավանկք և երկավանկք՝ որպէս են, մի · այլ · մեծ · փոքր · նոր · հին · ողջ · ամ · յոգունք · ամբողջ · բոլոր · ևն · բազում անգամ ՚ի նախադասին համաձայնին ընդ գոյականաց թուով և հոլովիւ · Օր․ * Մեծ հոգւով զօրացեալքս զխնդիր ՚ի միմեանց խորչիմք || · Լամբրոնացի · ՚ի ճառն հոգւոյ · Եկեղ ։

Ուրեք ուրեք նաև յոգնավանկ ածականք՝ մանաւանդ յանգեալքն ՚ի գոյն՝ համաձայնութիւն նախադասին գոյականաց ընդ պահանջելոյ վայելչութեան բանին · այլ ՚ի սակաւս յոյժ · Օր․ * ՚Ի ծագման արեգականն՝ ողորմագունեց փայլմանց լենի շիջումն || · Ընտանիր վկր ։

Դարձեալ պատահի ուրեք ուրեք, զի ՚ի բազում նախադաս ածականաց մին առանց համաձայնելոյ դնի, և միւսն համաձայնելով · մանաւանդ եթէ իցէ միավանկ՝ կամ երկավանկ, կամ վերբերական անուն, կամ թուական, և կամ բաղդատական · Օր․ * Գալիլէացիքն խօսէին զպարթևաց և զմարաց և զէլամացւոց լեզուն, և զայլոց հեռաբնակ ազգաց || · Իգնատ · Եւ · 48 ։ Ուր յերկուց ածականաց մինն՝ որ այլոցն՝ համաձայնեալ է ընդ գոյականին՝ որ ընդ բառիս ազգաց · իսկ միւսն, որ հեռաբնակ՝ ոչ ։

Գիտելի է երկրորդ, զի նախադաս ածականք ուրեք ուրեք միայն հոլովիւ համաձայնին անեզական անուանց, և ոչ թուով · Օր․ * Մի՛ վասն անցաւորիս կենաց կորուսանէք զյաւիտենական զկեանսն || · Շնորհ · ընդհանր ։ Ուր ածական անունս անցաւորիս՝ միայն հոլովիւ է համաձայնեալ ընդ գոյական անուանս՝ կենաց ։

Գիտել պարտ է և զայս, զի ածական անուանք ՚ի դերապանծ շարադրութիւն երբեմն հանդերձ խնդրով դնին՝ թէ ՚ի նախադասին, և թէ ՚ի յետադասին · Օր․ * Այս անհաս ՚ի հրեշտակաց իմաստութիւն այս՝ նորին յայտնեցաւ || · Լամբ · հատոր ։ Ուր անհասն է ածական նախադաս · իսկ ՚ի հրեշտակացն է խնդիր անհասին ։

Կանոն · Գ ·

Եթէ 'ի մէջ նախադաս անականի և յետադաս գոյակա-
նի անկցի բայ՝ կամ ընդունելութիւն, անականն իբր 'ի բա-
զմամս համաձայնի ընդ գոյականին թուով և հոլովիւ · օր ·
* Առաքելականայս աշակերտութեան բանից ||· Գրիգոր Նարե·
Ուր անականս առաքելականացն համաձայնեալ է թուով և
հոլովիւ գոյական անուանս բանից՝ վզի ընդ մէջ անկանելոյ
բային աշակերտեցան ·

Այլ բազում անգամ և առանց համաձայնութեան դնի ·
օր · * Սրովբէականն ձայնիւք թևօք || · փոխանակ ա-
սելոյ · սրովբէականօք ձայնիւք թևօք · Շար · ճէ ·
Իսկ երբեմն միայն ընդ հոլովին դնի համաձայն յանեզա-
կան անուանս · օր · * Անցեալ յարաժամ խաղաղութեան
պարապէ կենաց || · 'Ի Գիրս Պիտոյից ·

Այլ գիտելի է, զի եթէ 'ի մէջ նախադաս անականի և
յետադաս գոյականի դիցի այլ մասն բանի՝ որ չիցէ բայ,
կամ ընդունելութիւն, այլ՝ շաղկապ, կամ մակբայ, կամ ա-
նուն, ևն, անականն հասարակօրէն առանց համաձայնութեան
դնի · օր · * Որ չինեցեր բարձրագոյն զեկեղեցի քո խոր-
հրդեամբ || · Շար · ՆԷ · Ուր անականս բարձրագոյն՝
եղեալ է առանց համաձայնութեան ընդ գոյականի խորում,
որ է բառս խորհրդեամբ · ոպ եթէ դնէր առանց միջանկ-
ման իրիք բառի այսպէս · չինեցեր զեկեղեցի քո՝ բարձրա-
գոյն խորհրդեամբ ·

Իսկ երբեմն համաձայն դնի · օր · * Անկապուտ մնալ
'ի քահանայութեան սուրբ բերմանց || · Եփրեմ · Ծէ · 12 · Ուր
անականս 'ի քահանայութեան՝ համաձայնեալ է ընդ գոյականի խոր-
ում, որ ընդ բառիս բերմանց ·

Կանոն · Դ ·

Եթէ նախադաս անականն ունիցի զդիմորոշական տառ ·
երբեմն դնի համաձայն յետադաս գոյականին, և երբեմն

անհամաձայն , ըստ պահանջելոյ բառիցն , և ըստ վայելչութեան բանին ։

Համաձայն ․ որպէս , * Ըստ առաքելականիս խրատու մաղթեմ աղօթիցս բանս || ․ Խոսրով ։ Ուր նախադաս ածական անունս առաքելականն՝ ունելով զյօդ ս՝ դնի համաձայն գոյականին իւրում , որ է բառս խրատու ։

Անհամաձայն ․ որպէս , * Հանգոյն զվաստակեալս 'ի բազմանձնութիւն աշխատութեան || ․ Նար ․ ՁԶ ։ Ուր ածականս վաստակեալս՝ ունելով զդիմորոշական տառ՝ չէ համաձայնեալ ընդ գոյականի իւրում , այլ ընդ բառիս՝ յաշխատութեան ։

Կանոն ․ Է ։

Եթէ նախադաս գոյականքն իցեն բազում յատուկ անուանք եզակիք , յետադաս ածականքն թէ մի իցեն , և թէ բազում՝ պարտին լինել ըստ թուոյն յոգնական , և ըստ հոլովին համաձայն ․ որպէս , * Ողջոյն տաջիք պրիսկեայ և ակիւղայ գործակցաց իմոց || ․ Հռովմ ․ ԺԶ ․ 3 ։ Ուր յետադաս անունս գործակցաց իմոց՝ է յոգնակի ածական երկուց եզական յատուկ անուանց պրիսկեայ և ակիւղայ՝ համաձայն հոլովիւ ։

Այլ 'ի հասարակ անուանս՝ հասարակօրէն հոլովիւ միայն համաձայնին ․ որպէս , * Երարձ զնոսա տէր յերկրէ իւրեանց բարկութեամբ և սրտմտութեամբ և զայրացմամբ մեծայոյժ ․ և մերժեաց զնոսա յերկիր օտար || ․ Օրէն ․ ԻԹ ․ 28 ։ Իսկ եթէ ածականն իցէ նախադաս բազում գոյականաց ․ ոչ համաձայնի ընդ նոսա՝ ( ըստ որում աւանդեցաք յերկրորդ կանոնին ) ․ որպէս , * Սուրբ հայրն և ջրով շառաւիղին || ․ Յայսմաւ ․ Դեկտ ․ ԺԲ ։

Բայց երբեմն 'ի յատուկ անուանս համաձայնութեամբ դնին , մանաւանդ եթէ ունիցին զդիմորոշական տառ ․ որպէս , * Դու Աստուած ոչ եդեր ապաշխարութիւն վասն արդարոյն աբրահամու , իսահակայ և յակոբայ , որք ոչ մեղան քեզ || ․ Մանասէ ․ Ուր ածական անունս արդարոյն՝ եդեալ է յոգնակի , և

՚ի սեռական հոլովն՝ ըստ երից եղական գոյական անուանց՝ ուղղականաւ, ներականաւ և յոգնականաւ ։

Կանոն · Ղ ։

Եթէ ածականն իցէ նախադասեալ գոյականին, նախդիրն դնի ՚ի վերայ ածականին · որպէս, * Աղաչեմ զամենեսեան զարթնուլ ՚ի մահահրաւէր Թմբրութենէ կենցաղոյս ||· Շնորհալի · ընդհանր ։ Իսկ նախդիրն բացառական հոլովոյ ՚ի ըմբռութեան՝ եդեալ է միայն ՚ի վերայ նախադաս ածականինն, քան ՚ի վերայ ծածկադրութեցին ։

Եւ ևս եթէ նախադաս ածականքն իցեն բազում, և ունիցին զշաղկապդ և, զնախդիրն պարտ է դնել ՚ի վերայ առաջին ածականաց · որպէս ։ * Վասն մեղաց · · · անկաք ՚ի ցաւալից և ՚ի բազմածուփ կենցաղս յայս || · Խորհրդ ։ Իսկ նախդիրն ՚ի՝ եդեալ է ՚ի վերայ ածականացս ցաւալից և բազմածուփ ։

Իսկ եթէ յառաջ քան զշաղկապաւոր ածականսն կայցէ բառ ինչ, որպէս դերանուն, կամ միջական անուն, և կամ մակբայ, եւն, յորոց վերայ իցէ եդեալ նախդիրն, ոչ ևս է հարկ միշտ կրկնել զայն ՚ի վերայ յաջորդ ածականաց · որպէս, * Ուրեմն ՚ի ձեռաց ստայօդ և չարաթոյն բանից մոլորեալ են՝ ՚ի պանդոյ հայոց զգուշանալ || · Շնորհ ։

Ուրեք ուրեք ևս յայսպիսի շաղկապաւոր ածականս՝ Թէ և չգուցէ յառաջոյ այլ մասն բանի, նախդիրն դնի միայն ՚ի վերայ առաջնոյ ածականին · Թէպէտ և այս է արտաքոյ հասարակ կանոնի · որպէս, * Բնակեցան ներքոյ կողայ յարգաւանդահող և հայուէտ տեղիս || · Փոխանակ դնելոյ, յարգաւանդահող և ՚ի հայուէտ տեղիս · Խոր · Է · 8 ։

Այլ եթէ նախընթաց ածականքն իցեն առանց շաղկապի, նախդիրն իբր ՚ի բազումս դնի ՚ի վերայ առաջնոյն միայն · որպէս, * Հրաժարեցոյց ՚ի հեթանոսական անկարգ շատախօսութենէ || · Իգնատիոս Վրդ · Ծա · I ։

Իսկ երբեմն ՚ի վերայ ամենեցուն ևս դնի · որպէս, * Փոխա-

նակ հրեշտակային անկելոյ , որք կործանեցան յանձանց ՝ ի լուսեղէն սպասաւորութէ անտի , որդիք մարդկան հրեշտակային , և կայցին զտեղի նց || . Ագաթ ։

Երբեմն ևս նախդիրն ոչ միայն դնի ՝ ի վր նախընթացայ ածականին , այլ և ՝ ի վերայ յետադաս գոյականին . զր , * Երանի աղքատաց հոգւով . . . որք հոգւոր յուսմն զգեցան զմշտնջենաւոր զմեծութն || . Յաճախ . ճ ։

՝ Ի սոյն վերաբերի և այս . * ՝ ի քոյ անարատ ՝ ի կողդ ընկալար զխոցումն գեղարդեանն || . ՝ Ի շարականն . ձէ ։

Եւ եթէ յետադաս գոյականքն լինեն բզմք յօդեալք շաղկապաւս և , նախդիրն դնի ոչ միայն ՝ ի վր ածականին , այլ և ՝ ի վր երկրորդ գոյականին , և հետագայից նր . զր , * Զպատշաճ կարծիս և զգիտութի վս նր ոչ ունէին || . Իգնատիոս . էբ . 22 ։ Իսկ նախդիրն եդեալ է ՝ ի վր նախընթացայ ածականին , որ է բառդ պատշաճ , և ՝ ի վր երկրորդ յետադաս գոյականին , որ է բառդ՝ գիտութե ։

Բայց երբեմն և ՝ ի սակաւ տեղիս՝ ոչ դնի այսպէս . այլ միայն ՝ ի վր նախընթացայ ածականին . զր , * Տեսեալ զպաստիկ հէնս և գուոյթս բազմութ . . . յօգնութի զբարձր բազուկն տն մյ կարդային || . Յովհ . ձոբ ։ Իսկ նախդիրն եդեալ է միայն ՝ ի վր նախընթացայ ածական անուանս՝ պատշաճ ։

Այլ երբեմն արտաքոյ կանոնի դնի նախդիրն ՝ ի վր յետադաս գոյականին միայն , և ոչ ՝ ի վր նախադաս ածականին . և այս յաւէտ յոտանաւոր բանս . զր , * Անապական մբ զխաչն օրհնեսցուք || . փոխանակ ասելոյ , զանապական մբ զխաչն օրհնեսցուք . Շար . ձգ ։

Զայս վեցերորդ կանոն մերձեցո նաև առ նախադաս գոյականս . իբր զի եթէ գոյականն նախադասեսցի ածականին , զնախդիրն պարտ է դնել ՝ ի վր գոյականին . զր , * Զայր հաւատարիմ գործ է գտանել || . Առակ . ի . 6 ։ Իսկ նախդիրն եդեալ է ՝ ի վր նախընթացայ գոյականին միայն , քան ՝ ի վր անուանս՝ այր ։

Երբեմն կրկնի նաև ՝ ի վր յետադաս ածականին . զր , * Հեղին զարիւն զարդար շուրջ զըրբութեն || . Ա . Մակ .

ա · 39 ։ Ուր նախդիրն կրկնեալ է 'ի վ̄ր գոյականին և ածականին ։

Այլ եթէ յետադաս ածականքն իցեն բազում, նախդիրն իբր 'ի բազմամ դնի միայն 'ի վերայ նախադաս գոյականին · որ, * Զարս պատուականս և պիտանիս հաստատեր 'ի նահապետութիւս || · Յովհ · հոբ ։ Ուր նախդիրդ՝ եդեալ է միայն 'ի վ̄ր նախադաս գոյականին, որ է բառդ՝ զարս ։

Իսկ երբեմն դնի նաև 'ի վ̄ր երկրորդ յետադաս ածականին · որ, * Զայր զուարթ և զառատ սիրէ ա̄ծ || · Առակ · ԺԷ · 9 ։ Ուր նախդիրդ՝ եդեալ է 'ի վ̄ր նախադաս գոյականին, որ է բառդ այր · և 'ի վ̄ր երկրորդ ածականին, որ է անունս առատ ։

Եւ երբեմն՝ այլ սակաւ ուրեք՝ դնի միայն 'ի վ̄ր յետադասին · որ, * Ճանապարհ զարքունի գնասցուք || · փոխ̄ ասելոյ, զճանապարհ արքունի · Կոչ · Ժա · 19 ։

'Ի վախճան այսր կանոնի պարտ է գիտել, զի եթէ 'ի մէջ գոյականի և ածականի մտցէ բայ, նախդիրն պէսպէս կարէ դասիլ · զի երբեմն դնի 'ի վ̄ր նախադասին միայն · որ, * 'Ի ծայրագոյն ժամանեցաք մաքրութ̄ի || · Ղամբ · պտոս ։ Ուր նախդիրն եդեալ է միայն 'ի վ̄ր նախադաս ածականին, ք̄ 'ի վ̄ր ծայրագոյնին · ոչ թէ ասէր · ժամանեցաք 'ի ծայրագոյն մաքրութ̄ի ։

Երբեմն դնի 'ի վ̄ր երկուսին ևս · որ, * Կարեկցաբար մատուցեալ՝ զծայրագոյն յուսեր զխնամս || · Նար · ԾԵ ։ Ուր նախդիրն եդեալ է 'ի վ̄ր երկուսին ևս, ք̄ 'ի վ̄ր ածականին և գոյականին՝ 'ի միջի ունելով զբայդ ցուցեր ·

Իսկ երբեմն՝ թէպէտ և 'ի սակաւս՝ դնի միայն 'ի վ̄ր յետնոյն · որ, * Առաքելական առեր զպատիւ || · ք̄ առեր զառաքելական պատիւ · 'Ի ժամամուտս ։

Կանոն · Է ։

Եթէ ածականն զօրութ̄ ունիցի զգոյականին, դնի յայնպի-

սի հոլով և թիւ, և այնպիսի օրինակաւ, յորպիսի պարտ էր դնել գոյականին. վն որոյ և յամ հոլովս կարէ վարել առանձինն ըստ պահանջման բանին.

Երբեմն իբր յատկացուցիչ՝ 'ի սեռական հոլովի. որ, * Ծնանի խորհուրդ խաւարային զամ բարիս ||. Մծբ. Ը։ Ուր ածական անունս խաւարային՝ է յատկացուցիչ խորհրդոյն 'ի սեռական հոլովի. զի և գոյական նա այնպիսի լինէր, եթէ եդեալ էր ներգործութ. որգոն, ծնանի խորհուրդ առն խաւարչի զամ բարիս։

Երբեմն իբր յատկացուցանելի. որ, * Ոչ ապաքէն մե ընտրեալ պաշտաման աշխարհիս ||. Ցոհ. Է. 5։ Ուր ածական անունս պաշտաման՝ եդեալ է իբր յատկացուցանելի 'ի ձեռն անուանս՝ աշխարհիս։

Երբեմն իբր բացայայտիչ. այլ 'ի սակաւս. որ, * Համարակայ ամենեցուն օրէնս դնէ՝ մեծատանց և աղքատաց ||. Սարգ. յոհ. Ժ. Ուր ածական անուանքս՝ մեծատանց և աղքատաց՝ են բացայայտիչ բառիս ամենեցուն։

Երբեմն իբր բացայայտելի. որ, Վնկ եկիր յերկիր, զի զհեռաւորսն՝ զհեթանոսս, և զմերձաւորսն՝ զհրէայս 'ի մի պարգև բարեաց աւետաւորեսցես ||. Խոսրով։ Ուր ածական անուանքս զհեռաւորսն և զմերձաւորսն՝ են բացայայտեալք 'ի ձեռն գոյական անուանցս՝ զհեթանոսս և զհրէայս։

Երբեմն իբր անուն բայի. որ, * Արդարն յաւիտեան ոչ սասանեսցի. ||. Առակ. Ժ. 30։ Ուր արդարն է անուն բայիս՝ ոչ սասանեսցի։

Երբեմն իբր խնդիր բայի. որ, * Աչք նր 'ի տնանկս հայեն ||. Առակ. Ժ. 5։ Ուր ածական անունս 'ի տնանկս՝ է խնդիր բայիս հայեն։

Երբեմն իբր խնդիր ընդունելութե. որ, * Կատարօղ բարեաց ||. Հռոմ. Բ։ Ուր ածական անունս բարեաց՝ է խնդիր ընդունելութեանս կատարօղ։

Երբեմն իբր խնդիր անուան. որ, * Վայելչաշքեղացն այնոցիկ տարփմամբ . . . յառնիցիմք 'ի պարզ և յանստուեր ճոյաճ լուսոյ ճառագայթ ||. Շնորհ. հրէշ։ Ուր ածա-

կան անունս վայելչականացն այնպիսի՝ է խնդիր անուանս տարբերմամբ ։

Երբեմն իբր խնդիր նախադրութեն . որ , * Փոխանակ մահաբերին . . . ետուր զխաչ քո || . Շարակ . լա ։ Ուր անձական անունս մահաբերին՝ է խնդիր նախադրութեան փոխանակ ։

Երբեմն իբր պարզապէս կոչական . որ , * Եկա՛յք ժողովուրդք յօրհնութիւն նոր օրհնեսցուք զսո || . Շարակ . Է ։ Ուր ժողովուրդք դնի իբր կոչականապէս . ոչ թէ ասէր . ո՛վ լուսազգեաց որդիք մարդկան ։

Զայս ամենայն յայն սակս եդաք աստ , զի դիւրին լիցի ուսանողաց իմանալ և որոշել , թէ անձականք զօրութեամբ անելով զգոյականան՝ զիարդ լինին յատկացուցիչ , յատկացուցանելի , բացայայտիչ , ևն ։

Գոյական անուանք իբր ածականք ։

Գիտելի է , զի ուրեք ուրեք գոյական անուանք լինին իբր ածական յարին յանուանս . զորօրինակ , * Որ ապստամբ սիրտ . . . ՝ի յիշատակելն զայս՝ ոչ երկրպագէ առաջի նր || . Լամբ . պատ ։ Ուր գոյական անունս ապստամբ՝ դնի իբր ածական սրտին ։

Սոյնպէս վարին երբեմն և անուանք ազգաց . ևս և տեղկոյ . որ , * Յոյն լեզու ուսեալ ( Եղիազար ) պատմագրեաց զգործս Շապհոյ և Յուլիանոսի || . Խորէն . Է . 67 ։

Առ սոսա վերաբերին և այնք , որք յարին ՝ի բառդանուան . որ , * Եպիսկոպոսն անուն՝ ՝ի Հելլենացի լեզուէ է || . Լամբ . պատ ։ Ուր բառս Ելլենկոսն՝ դնի իբր ածական՝ բառիս անուան . և կ իբր բացայայտիչ ։

Վերացեալ անուանք փոխանակ ածականի ։

Գիտելի է , զի երբեմն փոխանակ ածականի դնին վերացեալ անուանք՝ իբր յատկացուցիչ . որ , * Հոգի քո

բարութեամբ առաջնորդեսցէ ինձ || · Կոչ · ծգ · 65 ։ Ուր անուանս բարութեան՝ որ է յատկացուցիչ բառիս հոգի, եդեալ է փոխ ածականի · որպէս թէ ասէր · Հոգի քո բարի առաջնորդեսցէ ինձ · որպէս գնի 'ի սաղ · ճխբ · 13 ։

Երբեմն այսպիսի վերջացեալ անուանք դնին համաձայնութեամբ հոլովի բուն գոյականին · որպ, * Զայնիւ քաղցրութեան երգելին || · որպ քաղցր ձայնիւ · 'ի շարականաց · լը ։

Գիտելի է և ս, զի երբեմն նաև այլ գոյական անուանք ինչ դնին փոխ ածականի իբր յատկացուցիչ · որպ, * Արջի 'ի մէջ եօթն աշտանակի ոսկւոյ || · որպ ոսկեղէն աշտանակի · Յայտնութեան · Ա · 1 ։

## ԳԼՈՒԽ · Զ ։

### Յաղագս համաձայնութեան ածական անուանց ընդ ածականաց ։

Զորեքկին համաձայնին ը̄ միմեանս ածական անուանք · Նախ՝ իբր ածական · որպ, * Իմաստուն խնկագէտք · Խարտասան ածանցնի · · · ամենայնաւէտն շաղակրատ · · · գծագրացեալ ագահ || · Նարեկ · ծէ ։ Ուր բառքս՝ խնկագէտք, ածանցնի, ամենայնաւէտն և գծագրացեալն՝ են ածական բառիս՝ իմաստուն, խարտասան, շաղակրատ, և ագահ ։

Երկրորդ՝ իբր խնդիր · որպ, * 'Ի մարմնի վարս ստացեալ անհամեմատ մաքրութեամբ || · Շար · մէ ։ Ուր մաքրութեամբն է որական խնդիր անհամեմատին ։

Երրորդ՝ իբր բացայայտիչ · այլ 'ի սակաւս · որպ, * Երկոքեանն՝ բարին և չարն 'ի միոյ իրայ (երբեմն) ունին ըղձոյանալն || · Սարգ · յոհ · 4 ։ Ուր ածականքդ բարին և չարն՝ են բացայայտիչ ածական անուանս երկոքեան ։

Չորրորդ՝ իբր յատկացուցիչ · այլ այս 'ի սակաւս յոյժ · որպ, * Յայտ առալ զանօրինականան կենդանութեան || · Արեոպագեցի վէց ։ Ուր ածական անունս կենդանութեան՝ է յատկացուցիչ ածականին զանօրինականան ։

Յայսմ տեղի՝ զորս ասացաք, թէպէտ ածականք ը̄ ածա-

կանս կապին ՝ բայց յամի եւ զօրութբ դնին գոյականք նոյին · որպէս յայտ է ՝ի գրելոյդ ՝ի նախընթացս գլուխն ·

կանոն · Է ։

Ուրեք ուրեք եւ համարին եդեալ իբր գոյական · որպ յասելն ՝ * Որ ելեր ՝ի Երուսաղէմ քաղաքէն || · ( Ղուկ · ԻԴ · ) անական անունս Երուսաղէմ՝ համարի իբր գոյական եդեալ · որում լեալ է յատկացուցիչ անական անունդ քաղաքին ։

## ԳԼՈՒԽ · Ը ։

Յաղագս համաձայնութե միջական անուանց · որք են ՝ Ընդականք ՝ հանգրականք ՝ վերբերականք ՝ հարցականք ՝ եւ մասնականք ։

Մերձ առ հասարակ՝ թէպէտ ընդ համաձայնութե այլոց անուանց վարին ՝ բայց քանզի ուրեք ուրեք փոքր մի այլազգ եւ դնին ՝ վասն այնորիկ արժան համարիմ ասել ինչ ինչ զսոցանէ ՝ի մասնաւորի եւ · խոստեցեալ նախ զխնդրառութե սոցին · զորմէ գիտելի է ՝ զի ՝ի մէջ սոցա՝ հանրականքն եւ վերբերականքն ոչ առնուն զխնդիր · բայց եթէ գուցէ ընդ պատահման ՝ եւ կամ վասն կարգի բանին · որպ ՝ի խոր · Ա · 4 ։

Իսկ թուականք ՝ հարցականք եւ մասնականք՝ հասարակօրէն՝ առնուն զխնդիր ՝ի հոլովն բացառական ՝ որպ · * Տէր մեր իբրեւ զմի ՝ի մէնջ շրջէր ընդ մեզ || · [illegible] ։ Որ թուական անունս մի՝ առեալ է բացառական խնդիր զբանդ ՝ի մէնջ ։

Ուրեք ուրեք եւ առնուն սոքա զներգոյական · այլ ՝ի սակաւս · որպ ՝ * ՝ի կարգի նահապետացն յաղագս [illegible] էր նոյ || · Մարգ · Է · գէտ · 3 ։ Որ ՝ի հարցին է ներգոյական խնդիր բանիս [illegible] ։

Այլ գիտելի է ՝ զի թուական եւ մասնական անուանք առնուն եւ երբեմն զխնդիր ՝ի սեռական հոլովն · այլ ՝ի սակաւս յոյժ · որպ ՝ * Եւ նա ՝ի մի նաւուցն || · Ղուկ · Է · 3 ։

Ուր սեռական հոլովս Նոցունց՝ է խնդիր միոյն ։
Երբեմն և թուական անուանք ՚ի յարլին ՚ի բառդ Նեա՝ առնուն խնդիր զնոյն ՚ի գործիական հոլովն · որ ՝ * Ընկան առաքեալքն առաքինիք ՚ի բոլանդր Թուով Երկոտասանն ||
Ագաթ ։ Ուր Բառաձայն է խնդիր բառիս Երկոտասան ·

Վասն Քանակական անուանց ։

Սոքա առ հասարակ միշտ իբր ածական վարին · և ըստ իմիք ըստ կանոնի ածականաց համաձայնին ընդ գոյականաց · յորս յարին · վասն որոյ կամեցեալ համառօտիւ անցանել զսոքօք՝ պարտ է գիտել ՝ զի ՚ի մէջ սոցա ընդհա-նրական · որպէս ՝ Մի · երկու · տասն · երկոտասան · քառասուն · եօթանասուն · հարիւր · երկերիւր · և այլն · յոր-ժամ յետադասին գոյականաց՝ հասարակօրէն համաձայնին ընդ նմա · որ ՝ * Արկանէր յանձուկ և ՚ի նեղութց վայրս ամ-բոցի միոյ || · Յովհաննէս հոր ։
Բայց երբեմն և առանց համաձայնութեան դնին · որ · * Մերձ է յեւեմ իբրև ասպարիզօք հինգ || · Ե · Մով · Ժա · 5 ։
Այլ ՚ի նախադրև հոլովս գրեթէ միշտ անհամաձայն դնին · որ ՝ * Յետ արշալոյ Թագրէ արտաշէս ամս Երեսնեւ-րեք · դարեհ՝ ամս Երեսուն · արշակ՝ ամս Իննսուն · ար-տաշէս՝ ամս քսան || · Խոր · Է · 66 ։
Իսկ ՚ի նախադասիլն՝ հասարակօրէն ոչ համաձայնին · որ ՝ * Երեսու իրօք փրկութի խնդրեն || · Խոսրով ։
Այլ ուրէք ուրէք համաձայնութբ և դնին · որ ՝ * Ոչ ոք կարէ Երկուց տերանց ծառայել || · Մատ · Զ · 24 ։
Թուական անուանք դասականք ՝ որպիսի են՝ Երկրորդ · երրորդ · եօթներրորդ · մետասաներորդ · և այլն ՝ յորժամ յետադասին անուանց՝ միշտ համաձայնին ընդ նմա · որ ՝ * Քանզի առէ ուրէք վա աւուրն Եօթներորդի այսպէս · և հանգեաւ Ած յաւուրն Եօթներորդի յամենայն գործոց իւրոց || · Եբր · Դ · 4 ։
Իսկ յորժամ նախադասին ՝ իբր ՚ի բազում անհամաձայն

դնին · որպ · * Յետ ժամուն ստեղծման ադամ || · Խոսր ·
Այլ երբեմն համաձայն դնին · որպ · * 'Ի չորրորդում պահու գիշերոյն գայ առ նոսա || · Մատթ · ԺԴ · 25 ։

Թուական անուանք հաւաքականք , որպիսի են՝ Երկոքեան , կամ երկոքին · չորեքեան , կամ չորեքին · եօթանեքեան · տասնեքեան · ևն · Համառօտեն համաձայնութ գոյականաց վարին , թէ 'ի նախադասին , և թէ 'ի յետադասին · որպ · * Զի ոչ եթէ երկոքեանքն ուսուք կաղայցեն , և ոչ յայտ լիցի || · Խոսրով ։

Թուական անուանք չափականք , որք են՝ Երրեակ · չորրեակ · եօթնեակ , կամ եօթներեակ · ութնեակ , կամ ութերեակ · յիսնեակ , կամ յիսներեակ · ևն · Նաև բազմապատկականք , որք են՝ Երեքպատիկ · տասնպատիկ · քանապատիկ · և այլն · Հազիւ երբեք յետադասին գոյականաց · այլ՝ Համառօտեն նախադաս լինելով յարին 'ի նմ՝ առանց համաձայնելոյ ընդ նմ · որպ · * Երկրագործութիս հանճարեղ խորհրդով լուսաւորէ · · · չորրեակ տարերցս խառնուածոյ լինել հմուտք || · Պիտոյից ։

Վասն հոմանուանց անուանցդ՝ Ամենեքեան , եւ ամենեքին · ընդ որս են եւ բոլորեքեան , եւ բոլորեքին ։

Սոքա իբր ածական վարին · և համառօտեն ինքնին 'ի գործ ածին՝ զօրութ ունելով գոյականին · որպ · * Ամենեքեան գրեթէ յընդունայնութի կենցաղոյս պշուցեալ նային || · Լամբրոնացի · 'ի Ծնն ։

Իսկ 'ի յարելն յանուանս և յընտանելութիս՝ և մանաւանդ 'ի դերանուանս՝ միշտ համաձայնին ընդ նոսա , թէ 'ի նախադասին , և թէ 'ի յետադասին · որպ · * Ամենեքեան քրիստոնէից լինել 'ի քս մի ազգ || · Լամբ · [illegible] ։

'Ի համաձայնութե այսոցիկ հանրական անուանց նախադասին իբր 'ի բազում կրկնի · որպ · * Զամենեսեան զնոսա այսու միով բանիւ աւետաւորէ || · Խոսրով ։

Այլ գիտելի է , զի յաճախ գործածութի հանրական

անուանց ը̅ անուանց և ը̅ ընդունելութեց՝ ծանուցանել զընթացս բանին ․ վն̅ և բազում անգամ ՚ի տեղի սորա դնեմք զբառդ ամենայն ․ զորոյ զգործածութե̅ արժան է գիտել ՝ զի սա յորժամ յայլ յեղակի ցուցական դերանուանս ՝ միշտ և յամի համաձայնի ը̅ նմ̅ ․ օր̅ ՝ * Վն̅ այսր ամ̅ ածցէ զքեզ ա̅ծ ՚ի դատաստան || Ժողով․ ժա̅․ 9 ։

Եւ յորժամ ՚ի յոգնականս յարի ՝ ը̅ թուոյն եզական դնի ․ զի ը̅ նշանակութե̅ն գոլով բազմաւորական՝ եզական ձայնիւ յոգնական համարի ․ օր̅ ՝ * Եւ մք̅ այսոյիկ ամենայն աւերախտ գտան || ․ Իգնատ ․ ա̅․ 54 ։

Իսկ յորժամ նախադասի անուան կամ ընդունելութե̅ ՝ հասարակօրէն ոչ համաձայնի ը̅ նմ̅ ․ օր̅ ՝ * Ամենայն վնասք և երկպառակութիւնք ՚ի տգիտութե̅ ՚ի ներքս մտանեն ՝ և ապականեն զոգիս մարդկան || Սարգ ․ յոհ ․ 4 ։

Բայց երբեմն միայն հոլովիւ համաձայնի ՝ մանաւանդ եթէ վարեսցի հանդերձ ցուցական դերանուամբ և կմ̅ եթէ անկցի ՚ի միջի բառ ինչ ․ օր̅ ՝ * Էր այսմ ամենայնի բարերարութե̅ց ոչ հաւատան || ․ Եղիշէ ․ է̅ ։

Այլ ՚ի յետադասիլն՝ ՚ի յեզականսն համաձայն դնի ․ օր̅ ․ * Առն ամենայնի գլուխ ք̅ս է || ․ ա̅ ․ Կորն ․ ժա̅ ․ 3 ։

Իսկ ՚ի յոգնականսն՝ անհամաձայն դնի ը̅ թուոյն ․ օր̅ ՝ * Արարածոցս ամենայնի արար խաղաղութի̅ || ․ Սարգ ․ ա̅ ․ պետ ․ 7 ։ Ուր ամենայնին յետադասեալ յոգնական բառն արարածոցս՝ եդեալ է ը̅ թուոյն անհամաձայն ընդ նմա ։

Այլ գիտելի է ՝ զի սա յորժամ նախդրիւ հանդերձ լինի ածական ՝ նախդիրն բազում անգամ կրկնի ՚ի վր̅ իւր ՝ և ՚ի վր̅ այնր՝ յոր յարի ․ օր̅ ՝ * Առնիցես զարդարութի̅ յամենայն ՚ի կեանս քո || ․ Տօբ ․ դ̅ ․ 6 ։

Վասն վերբերական անուանց ՝ որք են ՝ Այսպիսի ՝ այդպիսի այնպիսի ․ սոյնպիսի ՝ դոյնպիսի ՝ նոյնպիսի ․ այսքան ՝ այդքան ՝ եւն ։

Սոքա իբր ածական վարին ․ և ՚ի յետադասիլն միշտ հա-

մանածայնին ըստ կանոնի ածականաց ․ Թէպէտ և հազիւ ու-
րեք է յիշատակելի սա ։ Իսկ ի նախադասելին իբր ՚ի
բաղդման անհամաձայն դնին ․ որ ․ ＊ Ըղձամ տեսութեան
Աստուծոյ տնկոյ || ․ Գրիգոր Նարեկացի ։

Իսկ երբեմն համաձայն դնին ՚ի վերջահոլովս ․ որ ,
＊ Խաղաղութեանն ոգիք մեր յաստուծոյ դառն վտանգից || ․
Խոսրով ։

Պարածեալ՝ եթէ անկցի ՚ի մէջ բայ իբր ՚ի բաղդման
համաձայն դնին ․ որ , ＊ Որք աստուծոյ վարէին խորհըր-
դովք՝ շնորհօք , և երբեմն պատուհասիւ , վրիպեալ
այլա՝ զանձ տուժեցան || ․ Իգնատիոս ․ ԺԷ ․ 37 ։

Թէպէտ ուրեք ուրեք առանց համաձայնութեան ևս դնին ,
և կամ հոլովիւ միայն համաձայն ․ որ , ＊ Որք յաստուծոյ
վայելեմք բարութեց || ․ Ոսկ ․ Համար ․ ա ․ Ճառ ․ 45 ․ յոյժ ։
Նոյն ՚ի վերոյ՝ ՚ի վերջահոլովս ․ զի ՚ի յուղղական և ՚ի
նախդրիւ հոլովս յոգնականին ոչ երբէք համաձայնին ․ զի
ոչ լինի ասել ․ այսպիսիք բանք ․ յայսպիսիս իրս ․ զայս-
քանս ժամանակս ․ ևն ․ այլ՝ այսպիսի բանք ․ յայսպիսի իրս ․
զայսքան ժամանակս ․ ևն ։

Վասն հարցականաց անուանց , Ո՞ ․ ո՞վ ․ զի՞նչ ․ ի՞նչ ․ ե՞ր ․
ո՞ր ․ ո՞րքան ․ քանի՞ ․ ո՞րպիսի ․ զի՞նչպիսի ։

՚Ի մէջ սոյա բառքս՝ ո՞ և ո՞վ , յորժամ ՚ի գործ ածին
իբր անուն հարցական , իբրու դոյական վարին ․ որ ․ ＊ Ո՞
կարէ կալ առաջի դորա յանդուգն յարձակմանն || ․ Եղիշէ ։
Իսկ վն այլոց հարցականաց գիտելի է , զի զի՞նչն երբեմն
հանդերձ բայիւ վարի իբր դոյական , և կամ իբր նոյն ը՞
բային ․ որ , ＊ Զի՞նչ իցէ , որ լինելոց իցէ || ․ Իգնատ ։
Եւ երբեմն յարի յանուանս իբր ածական ՚առանց հոլով-
ման ․ որ , ＊ Զի՞նչ վայելուչ իցէ կերակրոյն , եթէ ան-
զգայեալ լսոց ուտիցեմ || ․ Նար ․ ԿԷ ։
Ըստ այսմ և հարցական անունս ե՞ւ երբեմն իբր դոյա-
կան վարի առանձինն , և երբեմն իբր ածական յարի յան-

ուանս · զք ՝ * Եւ արդ՝ չէ՞ինչ հայլին այս նմ՝ այլ թնուէ
պէտք || · Իգնատիոս վրդ · էա · 36 ։
Իսկ հարցական անուանքն՝ ո՞վ ՝ ո՞րքան ՝ քանի՞ ՝ ո՞րպի-
սի ՝ զի՞նչպիսի ՝ որք իբր ածական վարին ՝ հասարակօ-
րէն նախադասին անուանց · երբեմն առանց համաձայնելոյ՝
զք ՝ * Յո՞ր մահուանէ յո՞րպիսի կենդանութի փոխեցաք
սիրելով զեղբարս || · Սարգ · ա · յովհ · 6 ։
Բայց երբեմն համաձայնութբ եւս զնին ՝ մանաւանդ ո՞րն
եւ ո՞րքանն · զք ՝ * Որքան կորստեան եւ գեհենի ակնկա-
լուի ոչ է առաջի ձեր || · Շնորհալի · Բդբ ։
Որքանքեօք երկայնմտութբք համբերեսցես այսքանեաց
պարտուց || · Նարեկ · ՚ի բանն · ծզ ։

Վասն մասնական անուանց ՝ Ոմն · ոք · իմն · ինչ ։ ընդ որս են
եւ այլ ՝ մի իմն ՝ կամ մի ոմն · որ ոք · որ ինչ · ոչինչ · նմ
ինչ · որ ինչ միանգամ · եւն ։

Սոքա երբեմն ինքնին վարին ՚ի բանս իբր գոյականք · զք ՝
* Ոմն իշխէ ՝ եւ ոմն իշխի || · Խոսրով · ՚ի Մեկն · Ժամագր ։
* Որ ոք զախտն իշխանութբ կարէ սպանանել ՝ եւ զառա-
քինութիս կեցուցանել ՝ թագաւոր արդար է || · Սարգ ։
* Մի ոք յայլս մօրուսին փառս որսասցէ || · Լամբ · պատ ։
Այլ յորժամ վարին սք ընդ անուանց կամ ընդ ընդունե-
լութեց ՝ լինին իբր ածականք մասնաւորիչք նշանակուէ նց
զք ՝ * Աշխարհ իմն է բնութիւ || · Իգնատ ։ Ուր իմն է իբր
ածական ստորոգելին ՝ մասնաւորելով զնշանակութի նորա ։
Սոքա՝ բայց ՚ի բառէս ինչ՝ ՚ի յետադասին անուանց կմ
ընդունելութեց՝ երբեմն եւս ՚ի նախադասին ՝ եթէ իբր
մասնաւորիչ նշանակուէ նոցա վարեսցին ՝ հասարակօրէն
թուով եւ հոլովիւ համաձայնին ընդ նմ · զք ՝ * Զգաղթեալսն
անդրէն դարձուցանէ՝ բայց ՚ի նախարարէ ումեմնէ ՝ որոյ
անուն օտար կոչիւր || · Խորհ · Է · 74 ։ Ուր բառս ու-
մեմնէ՝ լեալ է իբր ածական մասնաւորիչ նշանակուէ ան-
ուանս ՚ի նախարարէ ՝ համաձայնելով ընդ նմա թուով եւ հո-

ըլլու :

Երբեմն ևս առանց իրիք համաձայնութեան դնին . որ . * Մեծի Տեառն յանկայար || . Կոչումն ընծայոյ . Ժ . 10 .

Իսկ Տեառն ՚ի յարիլն ՚ի յոգնակաւս , ուրեք ուրեք ըստ հոլովին դնի համաձայն , և ըստ թուոյն անհամաձայն . որ . * Առանց յանցանաց իրիք դատիք ( զՏէր ) || . Եզեկ .

Ասացի ՚ի վերոյ , եթէ իբր մասնաւորիչ նշանակութեանց վարեայլն . քանզի սոքա , ըստ որս և Տեառն , հասարակօրէն ՚ի յարիլն յանուանս և յընդունելութիւն՝ փոխն մասնաւորելոյ զնշանակութիւնս իբր ածական առնուն զնոսին խնդիր իւրեանց . որ , * Ոմանք ՚ի զօրականացն եկին ՚ի քաղաքն || . փոխն ասելոյ , ոմանք զօրականք . Մատ . Իը . 11 .

Ըստ այսմ վարին բաղում անգամ և թուական անուանք . ևս և անուանքս՝ բաղում , յոլով , սակաւ , ևն . որպէս յայտ է յօրինակաց եղելոց ՚ի խնդրառութեան նոցին :

Այլ աստ գիտելի է , զի ՚ի հայկական հոլովն յորժամ յետադասին Տեառն և Տէր , թէպէտ հասարակօրէն նախդիրն դնի ՚ի վերայ նախընթացին , բայց երբեմն դնի ՚ի վերայ սոցա միայն , և այն՝ յեզակաւնն . որ , * Ցղէին նախարար Տեառն , որոյ անուն օտայ կոչէր || . փոխն ասելոյ , զնախարար ոմն . Ագաթանգեղոս :

Գիտելի է ևս , զի ՚ի մէջ սոցա Տեառն և Տէր բաղում ուրեք իբր զարդ դնին . որ , * Ջրոյ փափաք արտաքոյ այսպիսւոյ Տեառն տեսանելիք սահմանի || . Խոր . Ա . 31 . Որ բառդ Տեառն՝ իբր զարդ դնի . զի կարէր առանց այնր ևս դնել այսպէս . Զքոյ փափաք արտաքոյ այսպիսի սահմանի տեսանելիք .

Դարձեալ գիտելի է , զի ուրեք ուրեք զօրութիւն դնին մասնական անուանց , և ՚ի խնդրոյն իմանին . որ . * Գուցէ սատակիցէ ՚ի նոցանէ ոք || . Ելից . ԺԹ . 22 . և 24 . Որ զօրութիւն կայ մասնական անուան , որոյ խնդիր է բառս ՚ի նոցանէ . որպէս թէ ասէր . Գուցէ սատակիցէ զոմանս ՚ի նոցանէ .

Վասն մասնական անուանց՝ Մին · երկաքանչիւր ՝ եւ իւ-
րաքանչիւր :

Սոքա իբր ածական վարին ՝ բազում անգամ զօրութ̄ ու-
նելով զգոյականն · որ ՝ * Մին ժամանակին ձայնակցի ՝ի յան-
ցանելն || · Լամբրոնացի · ՝ի Մեկն · պատ · 30 :
* Երկոտասանիցն աղօթիւք տօնողացս ողորմեա || · Շնոր · Ծնն :
* Իւրաքանչիւր ՝ի վ̄ր իւրոյ արմատոյ արձանսցի || · Լամբ · պատ :
Իսկ յորժամ յարին ՝ի գոյականս ՝ համարակօրէն նա-
խադասին նմ̄ ՝ եւ իբր ՝ի բազումս անհամաձայն դնին · որ ՝
* ՝ի մին կողմանէ գետոյն . . . բնակեցուցանէ || · Խորեն :
Բայց երբեմն եւ՝ այլ սակաւ ուրեք համաձայնութ̄ դնին ՝
մանաւանդ ՝ի դերանունս · որ ՝ * Ըստ մինոյ բանին
սոյն այս յայտնի ցուցանի || · Խոսրով :
Եւ եւս՝ եթէ բայ անկցի ՝ի միջի ՝ համարակօրէն համա-
ձայն դնին · որ ՝ * Բայց մինն ո՛չ է դանդաղելի ասել
օրինադրութ̄ || · ՝ի Գիրս Պիտոյից :
Ասացի ՝ի վերոյ՝ համարակօրէն նախադասելն · զի հա-
զիւ ուրեք յետադասելն ա՛ջ · եւ այն եւս գրեթէ առանց
համաձայնութ̄ · մանաւանդ իւրաքանչիւրն · որ ՝ * Այլեւ
զրօշից անգամ իւրաքանչիւր՝ տեղեկանայր ՝ի նմանէ || ·
Եղիշէ · Է : Որ իւրաքանչիւրն՝ եղեալ է առանց համա-
ձայնելոյ ընդ անուանդ՝ դրօշից :
Իսկ բառս մին՝ յոգնակի անուանց ո՛չ յետադասի · զի է
անյոգնական · այլ ՝ի յետադասիլ եզական անուանց՝ ը̄
հոլովին համաձայն դնի · որ ՝ * ՝ի գալուստ ամէն մինոյ
զօր հատանէր || · Ա · Մակ · Է · 28 :

ԳԼՈՒԽ · Ը :

Յաղագս համաձայնութեան դերանուանց ընդ դերանուանս :

Համաձայնութի դերանուանց ընդ դերանուանս յայտ
է ՝ զի եկեալ ս̄ց առ միմեանս համաձայն թուով
եւ հոլովիւ՝ վարին ՝ի բանս իբր նոյն ՝ որ իբրեւ մի դերա-

նոսն ։ Իսկ թէ ոյք են որս յարին , գիտելի է , զի 'ի մէջ այդ էական դերանուանս ինքն՝ յարի յայլ ևս դերանուանս՝ ըստ ուրաքանչիւր դիմաց նոցին , ( բայց 'ի ստացականաց ։

Եւ նախ՝ յարի յէականս ։ որ , * Զայլս խրատեմ , և ես ինքն անփորձ եմ || ։ Նարեկացի ։ 'ի բանն ։ ձԶ ։

Երկրորդ՝ յարի 'ի ցուցականս , և ուրեք ուրեք նաև 'ի յարաբերական սոյն ։ որ , * Սա ինքն զմեղս մեր բառնայ || ։ Կոչ ։ ծէ ։ 37 ։

Այնպէս յարին է միմեանս նաև ցուցական դերանուանք որ , * Սա այս արամ ։ ։ ։ ժողովէ զբազմութիւն ընտանի արանց քաջաց և աղեղնաւորաց || ։ Խոր ։ Ա ։ 12 ։

Սոքա երբեմն անհամաձայն ևս դնին , թէպէտև 'ի սակաւս ։ որ , * Սոյն սոյն նախ քան զայս՝ զանօրէն լեզուաւորեանց անեալ էին զերկրաւ || ։ Յովհաննէս ճառ ։

Գիտելի է , զի երբեմն նաև ստացական դերանուանք անականք յարին 'ի ցուցականս , ոչ իբր անական նոյ , այլ անուանոյն , յորս յարին ։ որ , * Ա՞ ինչ է քոյ այդ մեծ ուղղութիւդ || ։ Եղիշ ։ Է ։ Ուր դերանունս քոյ՝ է անական ուղղութեան , և ոչ այդորին ։

Այլ ևս պարտ է նկատել , զի յորժամ երկու դերանուանք յարին 'ի միմեանս , եթէ երկոքին ևս՝ և կամ միոյն իցէ էական , նախադիրն համարակօրէն դնի 'ի վր առաջնոյն ։ որ , * Զայս անձամբ անձին բազում անգամ ցիս ինքն ծանեայ || ։ Լամբրոն ։ թող ։ 37 ։

Թէպէտ ուրեք ուրեք 'ի վր երկրորդն ևս դնի ։ այլ այս 'ի սակաւս յոյժ ։ որ , * Եւ որ երևեցաւ զղջումն՝ ։ ։ ։ 'ի նոյն ցինքն յադամ , և 'ի ծնունդս նր || ։ Լամբ ։ համառօտ ։

Իսկ եթէ դերանուանք իցեն երեք , յորոց մին կամ երկուքն իցեն էական , կամ իբր էական , նախադիրն դնի 'ի վր առաջնոյն և վերջնոյն ։ որ , * Վս զի 'ի նոյն ինքն 'ի նա հաւատացաք և խոստովանիմք || ։ Սարգ ։ Ա ։ յովհ ։ 9 ։

Այլ եթէ դերանուանքն իցեն ցուցականք , նախադիրն դնի 'ի վր ամէն ։ որ , * 'Ի սոյն ցայս միտս երգեալ զերեանն միւսերորդ սաղմոսին || ։ Սարգ ։ Ա ։ դեփ ։ 9 ։

# ԳԼՈՒԽ · Թ.

## Յաղագս համաձայնութեան դերանուանց ընդ անուանց , եւ նոյն՝ Յաղագս համաձայնութեան էական դերանուանց՝ Ես · դու · ինքն · իւր ·

Դերանունք որոշեալ այլ եւ այլ են տեսակաւ · որ էական, ցուցական, ստացական, յարաբերական, եւ դիմորոշական, այլ եւ այլ օրինակաւ յարին յանուանս, եւ ըստ այնմ երկրակաւ համաձայնին · զորոյ կամեցեալ խօսիլ կարգաւ՝ ասասցուք նախ զհամաձայնութենէ էական դերանուանցս՝ ես, դու, ինքն, իւր · ը որս են եւ դերանունքս՝ միմեանց եւ իրերաց · ( Իսկ եւ ցուցական դերանունքս՝ սա, դա, նա, յորժամ 'ի գործ ածին էականապէս · )

Սոքա ամենին գոյականապէս վարին · եւ ըստ օրինակի գոյական անուանց՝ լինին անուն բայի, խնդիր բայի, եւ խնդիր ընդունելութեանց · որպէս ունիմք ասել յիւրեանց տեղիս · Եւ եւս՝ խնդիր նախադրութեանց · որպէս յայտ է յեդելոյ յառաջին մասին · Գլուխ · ԺԸ :

Իսկ 'ի յարելն յանուանս՝ լինին նախ՝ խնդիր անուանց գոյականաց եւ ածականաց · որպէս, * Ած Թշնամանացն քոց չէ՞ր եղեւ քեզ այդ || · Գէորգ · ԺԵ : Ուր դերանունդ քո՛ է խնդիր անուանս Թշնամանաց :

* Զիս առաւօտին չար մատուցօրէ || · Եղիշէ · գող · Ազ- րէստակէայ : Ուր դերանունս իմ՝ է խնդիր ածական անուանս չարատուօրէ : Եւ այս ունիս գտանել բազում օրինակս 'ի խնդրառութիւնս անուանց :

Երկրորդ՝ լինին յատկացուցիչ · որպէս, * Սիրտ իմ ուրախ եղեւ յամ վաստակս իմ || · Ժողով · Է · 10 : Ուր դերանունս իմ՝ ( որ է սեռականն դերանուանս՝ Ես ), երկիցս լեալ է յատկացուցիչ անուանցս՝ սիրտ եւ վաստակ :

Երրորդ՝ լինին բացայայտելի 'ի ձեռն գոյական անուանց համաձայնելով ընդ նմա թուով եւ հոլովիւ · որպէս, * Ես

իմաստութիւ բնակիմ 'ի խորհրդեան || · Առակ · Ը ·
Ուր իմաստութիւնն է բացայայտիչ դերանուանս Ես ։

Չորրորդ՝ յորին յածականս՝ ամենևին համաձայն նոցին թուով և հոլովիւ, թէ 'ի նախադասին՝ և թէ 'ի յետադասին · որպ ·, * Զմեզ զմեղաւորս արժանի արարեր փառաւորել զքեզ || · Յովհ · Ոսկ · ԾԸ ։ Ուր անունս զմե-ղաւորս՝ լեալ է ածական դերանուանս զմեզ՝ համաձայն թուով և հոլովիւ ։

Ըստ այսմ յորին սոքա բազում անգամ և յընդունելութիւնս՝ իբր յածականս՝ համաձայն նոցին · որպ ·, * Եւ զիարդ ես տառապեալս զմեծագոյն արարչագործութիւն հզօրին այ թուեցից || · Խոսրով ։ Ուր բառդ տառապեալս՝ լեալ է ածական դերանուանս Ես ։

Այլ գիտելի է, զի դերանունս ինքն՝ յորժամ հանդերձ ցուցական դերանուամբս նոյն՝ յորի յանուանս կամ յընդունելութիւնս, բազում անգամ իբր ածական վարի, երբեմն համաձայնութե̃, և երբեմն առանց համաձայնութե̃ · որպ ·, * Քանզի և նոյն ինքն քս վէմ անուանեցաւ || · Յովհաննէս Իմաստասէր · Գ ։

'Ի վերոյգրեալ օրինակսդ երկու ինչ արժան է նկատել · մի՝ զի այսպիսի դերանունք յամի նախադասին բացայայտչաց ինքեանց · իսկ ածականայն ուրեք ուրեք նախադասին, և ուրեք ուրեք յետադասին ։ Երկրորդ՝ զի նախդիրն իբր 'ի բազումս դնի 'ի վր երկուցն ևս, յ̃ 'ի վր դերանուան և անուան կամ ընդունելութե̃, և սակաւ ուրեք 'ի վր միոյն ։

'Ի վախճան այսպիսի դերանուանց զայս մի ինչ ևս արժան է առնուլ 'ի միտ · զի սոքա թէպէտ լինին յատկացուցիչ՝ այլ ոչ յատկացուցանելի ։ Եւ ներհակ այսմ՝ թէպէտ լինին բացայայտելի 'ի ձեռն գոյական անուանց, այլ ոչ լինին բացայայտիչ՝ բայց եթէ 'ի սակաւ տեղիս · որպ ·, * Եւ երկու կողմանցդ լինիցին մեզ՝ նոցա և ձեզ || · Շնորհ · Ընդհանր ։ Ուր դերանունքս նոցա և ձեզ՝ լեալ են բացայայտիչ անուանս երկուց կողմանցդ ։

Եւ ևս թէպէտ լինին սոքա խնդիր անուանց, ևս և ընդ-

ունելութեանց, և բայից, և նախադրութեանց, այլ ինքեանք ոչ ունին զխնդիր։ Եւ եթէ ուրեք երևեսցին ունել, այն է վասն բային՝ որ եղեալ է անդ կամ ներգործութեան, և կամ զօրութեան։

## ԳԼՈՒԽ. Ժ.

### Յաղագս համաձայնութեան ցուցական դերանուանց՝ Սա. դա. նա։

Սորա յորժամ հոլովին՝ սա, սորա. դա, դորա. նա. նոր. վարին գոյականապէս. և պէսպէս օրինակաւ ՝ի գործածին. որպէս ասացաք այժմ ՝ի նախընթացս գլուխն։ Իսկ ՝ի հոլովիլն՝ սա, սորին. դա, դորին. նա, նորին, կամ նորուն, վարին ածականապէս. և իբր ածականք յարին յառաջոյ յանուանս՝ համաձայնելով ընդ նմին թուով և հոլովիւ. և այս՝ համառօտաբար ՝ի հինգ հոլովս միայն։ Նախ՝ ՝ի սեռականն. որպէս, * Խօսեցան վասն սորին խորհրդոյ || . յմ̃ վասն այսր խորհրդոյ. Շնորհալի. ՝ի Բանաստեղծն։ Երկրորդ՝ ՝ի վերջահոլով տրականն. որպէս, * Եւ քանզի այս լուր սորին մասին կնքեցաւ և ճշմարտեցաւ առ այլս մահու, և ես վկայեմ, կրկին հաստատեալ || . Նար. ԺԵ։ Երրորդ՝ ՝ի գործիականն. որպէս, * Սովին ձեռամբ շինեմ և տապալեմ || . Սեբերիանոս Եմեսացի. Ճառ. Ե։ Չորրորդ՝ ՝ի պարառականն. որպէս, * Տապաստ արկից զամենեսին զդոսա ընդ նորին բազմաւ || . ՝ի Ճառընտիր։ Հինգերորդ՝ ՝ի ներգոյականն. որպէս, * Եկա՛յք ՝ի սորին վայրի զբօսնու ՝ի լուսոյ դադարեցուսցուք || . Ոսկ. ա. 10։ Իսկ յայլ հոլովս համառօտաբար իբր գոյական վարին. և եթէ հարկ լինի ածականապէս ևս վարել, ՝ի տեղի սոցա դնեմք զցուցական դերանուանս՝ Այս, այդ, այն. սոյն, դոյն, նոյն. որպէս տեսցի ՝ի ստորև։

Այլ գիտելի է, զի վերոյեղեալ դերանուանքդ երբեմն ընդ թուոյն անհամաձայն յարին յանուանս. որպէս, * Վս̃ սո-

րէն իւրայ ազատօրս մարգարէանայր || · Գէորգ · Խէ ·

Ասացաք ՚ի վերոյ՝ թէ սք ՚ի հոլովն, սա, սորին · դա, դորին, ևն, վարին ածականացեալս · և սակայն բազում ուրեք է այսմ հոլովման ևս վարին գոյականացեալս · որ, * Ցայտնեսցի և խղճք պաշտօնեայ իմոյ է ոքն || · Լուկ ·

## ԳԼՈՒԽ · ԺԱ ·

### Ցաղագս համաձայնութեան ցուցական դերանուանց՝ Այս · այդ · այն ·

Սորա միշտ իբր ածական վարին, բազում անգամ զօրութեն ունելով զգոյականն · որ, * Արդ՝ լսելով զայսոսիկ՝ է ո՛ւ ատուսել զարմանաս · է մեծատունն՝ որ տկարանան զայսոսիկ, եթէ է աղքատն պետրոս՝ որ հաւատովն մեծատուն էր՝ զայսոսիկ հրաշագործել || · Ոսկեբ · Հէգ · յոհ ·

Այլ յորժամ յարին սոքա յանուանս, ՚ի նախադասին՝ հասարակօրէն համաձայնին ընդ նմա թուով և հոլովիւ՝ բայց ՚ի բայառականաց յանգելոյ ՚ի է · որ, * Տես դու զքանչելի և զանձառ խորհուրդն՝ միշտ հանապազորդ յայսմ խորանի բնակեալ || · Ոսկ · ա · 10 ·

Բայց երբեմն ևս առանց համաձայնութեան դնին · որ, * Եւ այս ներգործութիւնքս եղիցին զմարմնոյս անմեղութիւն, զի կրեաց զհարկաւորսն || · Գրիգոր Նար ·

Երբեմն ևս միայն ըստ հոլովին համաձայնին, և ոչ է թուոյն · և այս յաւէտ յանեզական անուանս · որ, * ՚Ի մեր առէք զմեծութի այսր շնորհաց || · Ոսկբ · յոհ · 4 ·

Իսկ եթէ անկցի ՚ի մէջ բայ, գրեթէ միշտ համաձայնին · որ, * Իսկ որք այսոցիկ հետևին կրօնից, ամ ինչ նոցա ընդդէմ բաժանեալ է || · Իգնատիոս · Եէ · 23 ·

Ասացի ՚ի վերոյ՝ բայց ՚ի բայառականաց յանգելոյ ՚ի է · զի է այսմ հազիւ ուրեք համաձայնին սք, բայց եթէ կրկնեսցի նախդիրն, և կամ անկցի ՚ի մէջ մասն ինչ բա-

նի . որ ․ * Իսկ քահանայական կարգն ցոյցանէ ՚ի գործոյս որինչ է || . Լամբրոնացի . ՚ի մեկնութեան պատարագի ։

Իսկ յորժամ յետադասին սբ անուանց, հասարակօրէն համաձայնին ընդ նմա թուով և հոլովիւ . որ ․ * Արդարև քեզ են գանձեալ գաւելինքս այսոքիկ դժնդակք || . Նար . ը ։

Այլ ուրեք ուրեք և ոչ համաձայնին . որ ․ * Թեթևս կայր զաշխատութեամբս այն՝ սկիզբն || . Նարեկ . ջե ։

Իսկ երբեմն հոլովիւ միայն համաձայնին, և ոչ թուով . որ ․ * Երկոքումբք այսու նորայն քարոզեալ լինի զօրութ || . փոխանակ ասելոյ, այսոքիւք . Իգնատ . ը . 51 ։

Ի համաձայնութեան այսոցիկ դերանուանց հարկ է նկատել և զայս, զի ՚ի նախադասին սբ նախդիրն հասարակօրէն դնի միայն ՚ի վր սբ . որ ․ * Քաղաքով խորհրդով անդոյցին զայս անդս ըկս և ըզօրս || . Եղիշէ ։

Բայց երբեմն, այլ ՚ի սակաւս՝ դնի ՚ի վր երկոցուն ևս . մանաւանդ եթէ անկցի ՚ի միջի բառ ինչ . որ ․ * Կատարեցան աւուրք պենտեկոստէից յայսմ իսկ ՚ի քաղաքի || . Կոչ . ժե . II ։

Իսկ ՚ի յետադասիլ սբ նախդիրն միշտ և անվրէպ դնի՝ թէ ՚ի վր սբ, և թէ ՚ի վր անուանցն, բայց ՚ի նախդրէս առ . և այս՝ ՚ի վեց հոլովս ։

՚Ի նախդրիւ տրականի . որ ․ * Հեղ զորդեգրութեան քո ըզշնորհս յետքս յայս քեզ նուիրեալ || . Նար . ճէ ։

՚Ի հայցականի . որ ․ * Ընդ ամենայն ազգս առնէր զանկարգութիւն զայս (թգրն պարսից) || . Եղիշէ Վրդ ։

՚Ի բացառականի . որ ․ * Ուրախ ըր զհանգստութեամբս ապրեցուցեալ զիս յորոգայթէ յայսմանէ || . Յովհ . Իմաստ ։

՚Ի պատմականի . որ ․ * Նաև որ մարզպան Ծին լեալ էր . . . մեծապէս գոհ էր զառնէս զայսմանէ || . Եղիշ . ը ։

՚Ի պարառականի . որ ․ * Զոսկերօքս զայսոքիւք . . . լուսափայլեսցէ փառք սքանչելեաց նր || . Ճառընտ ։

՚Ի ներգոյականի . որ ․ * Թգր առնէս զնմն . . . որք թագաւորեցին ՚ի վր ախտից ՚ի կեանս յայսոսիկ || . Խորենց ։

Ըստ այսմ կրկնին հասարակօրէն և նախադրութիւքս ընդ և ընդ · որպէս * Դնել զնս յաւերակ և յանապատ · · · ընդ աւուրս ընդ այսմիկ || · Երեմ · ԻԵ · 18 ։
* Եւ եղև ընդ աւուրսն ընդ այնոսիկ ելանել միհրանայ յուս · և մոլորեցաւ ՚ի դժուարս լերանց || · Խոր · Բ · 83 ։

Որպէս և եթէ նախդիրքդ՝ ը , յ , և ՚ի , լիցեն եդեալ ՚ի վ͞ր նախընթաց անուանի , հարկ է կրկնել զնոսին , եթէ գոյականին անկեալ իցէ ՚ի մէջ անուանին և դերանուանն · որպէս * Գուցէ զգեղեցիկ պատմուճանս զայս պղծիցեմք || · Ոսկ · Ա · 9 ։ Ուր նախդիրդ զ՝ եդեալ է ՚ի վ͞ր անուան անուանս Գեղեցիկ , և կրկնեալ ՚ի վ͞ր դերանուանդ այս · յորոյ միջի է գոյական անունս պատմուճան ։

Ըստ այսմ և եթէ անկցին այք ՚ի մէջ նախադաս անուանն և յետադաս գոյականի , նախդիրն հասարակօրէն կրկնի ՚ի վ͞ր այց , և ՚ի վ͞ր անուանին · որպէս * Մի՛ վերջասցուք ՚ի հոգևոր յայս պատերազմէս · և մի՛ աղաժամանք երևեսցուք || · Սարգ · Ա · դեր · 10 · ճառ ։

Այսպէս հասարակօրէն · զի յայսպիսիս՝ երբեմն դնի նախդիրն միայն ՚ի վերայ նախընթաց անուանին · որպէս * Մի՛ ՚ի տակաւում այսմ ժամանակի զանձկախճանելի զխաւսն չամբեր || · Նար · ՀԷ ։ Ուր նախդիրդ ՚ի՝ եդեալ է միայն ՚ի վ͞ր անուան անուանս ՚ի տակաւում · և ոչ ՚ի վ͞ր դերանուանդ այսմ · զի գոյականն ն͞ր յետոյ դնի քան զնա · և ինքն կայ ՚ի մէջ անուանի և գոյականի ։

Բայց պարտ է գիտել , զի եթէ նախդիրն իցէ եդեալ ՚ի վ͞ր անուան իբրև ՚ի վ͞ր յատկացուցչի , ոչ է հարկ միշտ կրկնել զնոյն ՚ի վ͞ր դերանուանց ևս · որպէս * Աղնուագոյն գիտէր զաւաքինութեա այսորիկ ճանապարհն ամենատէրն մեր || · Սարգ · Ա ։ Յովհ · Է · ճառ ։

Թէպէտ ուրեք ուրեք յայսպիսիս և կրկնի · որպէս * Հայրցանէ , զի մեզ ուսուցէ զհամբերութի զառնն զայնորիկ || · Ոսկ · Ա · 35 ·

Իսկ վ͞ս նախդրիս առ՝ գիտելի է , զի սա ՚ի յոգնականս՝ երբեմն դնի ՚ի վ͞ր երկուցն ևս · և երբեմն՝ միանգամ թէ

բազում անգամ փոխի սր դնի նախդիրդ՝ յ ․ որպ ․ * Արդ՝ եթէ հանդերձեալ եմք խրել զքրիստոնեայս ելանել ՚ի կենցաղոյս ․ և մնասցեն առ Ած ․ հակառակօքն վարեա-յուք այն կոչչասցին այն այսոսիկ || ․ Սարգ․ Վ․ Յոհն․ 9 ։ Խակ յեղականն՝ համառակօրէն ոչ կրկնի ․ որպ ․ * Այս-պէս և այն օրինականս այս զգործս խոր առակաւ առա-ջի դնէ || ․ Խգնոր ․ Ծ ․ 30 ։

Այլ ևս գիտելի է ․ զի յորժամ անմիջապէս յետա-դասին սբ անուանն ․ յեզակի ուղղականն և ՚ի նախդրիւ հոլովս՝ դնի ՚ի վերջոյ դիմորոշական տառ ՚ի վր անուանն՝ յայն դէմն ․ յորում են դերանունանքն ․ որպ ․ * Այրն այս ոչ կամի զխաղաղութի ժողովրդեանս այսմիկ || ․ Մծբ ․ Ծէ ։ * Թուչունք այդ կալաւ խոր վայր բնակութե || ․ Պերոյեց ։ * Ընձուկ է Ճանապարհն այն Տաճրայ || ․ Խսորով ։

Ասայի՝ անմիջապէս ․ զի եթէ ՚ի միջի անկցի այլ մասն բանի ․ ոչ է հարկ դնել զյօդ ․ որպ ․ * Ընիրաւ դատք ( ՚ի մոքունս ․ և ) անիրաւութիւն մեր այս մերժեսցի զմեզ ՚ի բազմաց երկնային գանձուցն || ․ Խգնոր ․ Ծէ ․ 10 ։

Ասայի ևս՝ յեզակի ուղղականն նա ․ զի յայլ հոլովս և ՚ի յոգնականն երբեմն յօդ ոչ դնի ․ այլ այս ՚ի սակաւս ․ որպ ․ * Դարձեալ եկից առ քեզ ՚ի ժամանակի յայսմիկ ՚ի սոյն աւուրս || ․ փխն ասեյոյ ․ ՚ի ժամանակիս յայսմիկ ․ Ծնն ․ Ժը ․ 10 ։

՚Ի սակաւս՝ ասայի ․ զի բազում ուրեք յայսպիսիս ևս դնի յօդ ․ որպ ․ * Հալեսցի ՚ի հրոյս յայսմանէ ( որ ՚ի հա-ղորդութե ) գայթակղութիս մեր || ․ Նար ․ ԼԴ ։

Գիտելի է ևս ․ զի դերանունս այն՝ ուրեք ուրեք ՚ի վե-րեմ շարադրութիս ՚ի մէջ անկեալ երկուց բանից՝ իբր ածական նախընթացի կամ հետագայ անուան ․ և կամ այն-պիսի անուան՝ որ զօրութե դնի ․ վայելուչ իմն կարգէ զշարադրութիս բանից ․ որպ ․ * Եւ ՚ի նորումս երանելի ա-ռաքեալն՝ որ յափշտակեցաւ մինչև յերրորդ յերկինս ․ այն՝ որ ոչ ՚ի մարդոյ ընկալաւ զշնորհս առաքելութե ․ այլ Ածուստ ․ գրէ այսպէս ․ բարձէք զչարն ՚ի միջոյ ձերմէ || ․

Մագիստրոս : Ուր դերանունս այն՝ եդեալ է 'ի մէջ երկուց բանից իբր անձական անուանս՝ Եզեկիէլ մարգարէին :

Երբեմն յայսպիսի տեղիս զօրութիւն միայն համաձայնութեան՝ վայելուչ ևս . զոր . * Բամբասէին զբժշկին խոնարհելն առ աղքատացեալս , և զհովուին գնալն զհետ կորուսելոյ ոչխարին , այն որ բազմապատիկ եցոյց զխնամս մարդասիրութե || . փոխանակ ասելոյ , այնր հովուի՝ որ բազմապատիկ եցոյց նա . Նիւսացի . ծե . 1 :

## ԳԼՈՒԽ . ԺԲ.

### Յաղագս համաձայնութեան ցուցական դերանուանց՝ Այն . դոյն . նոյն :

Սոքա միշտ իբր անձական վարին . և զի յատուկ հոլովումն ոչ ունին , այլ միայն նախդրիւ հոլովին , յորժամ նախադասին անուանց , անհամաձայն դնին . զոր . * Զայնակից այն ուղղափառութեան է որ եկեղեցւոյս այ || . Գիրք թղթ :

Այլ աստ գիտելի է , զի այսոքիկ դերանունք՝ մանաւանդ նոյնն՝ հազիւ ուրեք անմիջապէս յետադասին անուանց . իսկ եթէ յետադասեսցին , պարտ է զնախդիրն կրկնել . զոր . * Եւ յորոգայթ 'ի նոյն անկցին || . Սաղ . ծթ .

Գիտելի է ևս , զի սք յորժամ յոգնականապէս վարին 'ի նախդրիւ հոլովս , միշտ գրեթէ զօրութիւն ունին զգուշականն . զոր . * Մի՛ ոք զայն առաջի դիցէ , եթէ մն զի նք ստեն երդմանցն՝ որ առ մեզ , պարտ է , զի և մեք առ նս զնոյն արասցուք || . Շնորհ . ընդհանր :

Ի վախճանի ցուցական դերանուանց նմին գիտել արժան է և զայս , զի սք առ հասարակ՝ դնին երբեմն 'ի բանս իբր թարմատար , կամ իբր բացայայտելի՝ 'ի ձեռն այնց բառից , յորս յարին յառաջոյ կամ զկնի . զոր . * Ամենայն ինչ՝ որ յայլ է , չէ նա մեր || . Իգնատ . ծէ . 12 : Ուր դերանունս նա՝ դնի թարմատարաբար , կ իբր բացայայտե-

ալ ՚ի ձեռն բառիս ամէնք. զոր առանց այնր ևս հնար էր գնել այսպէս. ամ ինչ որ յոհի է, չէ մեր.

## ԳԼՈՒԽ. ԺԳ.

Յաղագս համաձայնութեան սաստկական դերբայանց իմ. քոյ. մեր. ձեր. իւր, իւրոյ.

Սրգա միշտ անձնականաբար վարին. և յորժամ յարին յանուանս, ևս և յընդունելութիւնս, յայնժամ համաձայնին ընդ նոսա ՚ի վերջահոլովս, թէ ՚ի յետադասին, թէ ի նախադասին, և թէ անկցի ՚ի միջի այլ մասն բանի. որպէս * Զինարդ չըթամբք եմոյք զանձն իմ անիծից || Ղուկ. ԺԶ. Որք դերանունս եմոյք յետադասեալ բառիդ ընդհանրական համաձայնեալ է ընդ նմա.

Ըստ սոսա վերաբերի և այս. * Տր ՚ի տաճար սբ եղբարց. որ յերկինս յաթոռ եղբայր || Սաղ. Ժ. 5. Որք որպ անուանքդ ՚ի փոխարէն և յանուան եդեալ են ՚ի ներգոյական հոլովս, նոյնպէս և եղբայրն.

Այլ գիտելի է, զի բազում անգամ ՚ի տեղի սաստկական դերանուանն էական դերանուանց իբր յատկացուցիչ. որպէս * Թող զոխս սրտի քո || Մծբ. ԺԲ. Որք դերանունս քո՝ է սեռական հոլով էական դերանուանս քոյ. և է լեալ յատկացուցիչ սրտին.

Գիտելի է ևս, զի սաստկական դերանունք յորժամ նախադասին անեզական անուանց, ևս և պարզ յոգնականաց, բազում ուրեք միայն հոլովիւ համաձայնին ընդ նմ. որպէս * Ես փոխանակ ձեր մեռանիմ. և եմոյք չարչարանօքս զհայր իմ ընդ ձեզ ՚ի հաշտութի անեմ || Գրիգ. ճառն. Երբեմն ևս, այլ ՚ի սակաւս յոյժ՝ նաև ՚ի յետադասին դնին ընդ թուոյն անհամաձայն. և այս յաւէտ եղբ. որպէս * Եղին զնա ընդ հարս եղբարց || Յոհ. ճառն.

Առաջի ՚ի վերոյ համաձայնիլ սդ ՚ի ...

՚ի նախդրիւ հոլովս և յուղղականս ՚ի յոգնակին՝ միշտ անհամաձայն դնին · որ , * Ամենայն խորհուրդք իմ հաստատեսցին || · Եսայ · ԽԶ · 10 · և ոչ լինի ասել · խորհուրդք իմք ։

Սակայն երբեմն վն վայելչութ ինչ զդիմորոշական տառսն անուանց յուրեանս ընդունելով՝ ՚ի նախդրիւ հոլովսն և դնին համաձայն · որ , * Մի՛ սատակեսցես զժողովս խածանօղս , այլ՝ փոփոխեսցես՝ խլեալ զխոստան բանս || ·

Նար · ՃԷ ։

Այդքա լինին և ածական դերբայից նոյնն համաձայնութ , որով յարին յանուանս · որ , * ՚Ի բարեպաշտելս իմաւմ՝ գայթակղիմ || · Նար · ՀԳ ։ Ուր իմաւմն է ածական դերբայիս՝ ՚ի Բարեդաղութեն ։

Իսկ եթէ ուրեք ուրեք երևեսցի անհամաձայն , այն ոչ է ստացական դերանուն իբր ածական , այլ որպէս ՚ի վերոյ ասացաք , սեռական հոլով էական դերանուանց · որպ յասելն · * Զարդարանալս իմ և մեղանչեմ || · ( Նար · ՀԳ · ) դերանունս իմ՝ ոչ է ստացական , այլ էական · և եդեալ է աստ իբր անուն դերբայիս՝ յարդարանալս ։

Գիտելի է դարձեալ , զի ստացական դերանուանք երբեմն զօրութ ունելով զգոյականին՝ յայն հոլով դնին , յոր դնելի էր գոյականն , որպ ասացաք զածական անուանց · բայց յայնժամ յարի ՚ի նմ իբր ՚ի բաղումս դիմորոշական տառ · որ , * Ճանաչեմ զիմս , և ճանաչիմ յիմոցն || · Յովհ · Ժ · 14 ։

## ԳԼՈՒԽ · ԺԴ ։

### Յաղագս համաձայնութեան յարաբերականին դերանուանն՝ Որ ։

Յառաջ քան զխօսիլ զհամաձայնութե սորա՝ գիտելի է , զի սա ՚ի կարգս բանի զօրութբ ՚ի մէջ բերեալ զայլ մասն բանի՝ դնի ներգործութ ՚ի տեղի նր · որպէս զի մի կրկնեսցի մի և նոյն բառ ։

Արդ նախ առաջին՝ յարաբերէ սա զանուն, զդերանուն, և զընդունելութիւն. որ, * Ամենայն նիւթոյ՝ որ մարմին է, ապականութիւն հետևի || . Լամբերոն. առջն ։ Ուր որն յարաբերէ զանունդ՝ ամենայն նիւթոյ ։

Ուրեք ուրեք յարաբերէ սա նաև զբայ. որ, * Զանկեալ անասունն ՚ի խորխորատ՝ ՚ի վեր հանէք, որ կարի աշխատութիւն է || . Իգնատ. ծէ. 15 ։ Ուր բառդ որ՝ յարաբերէ զբայդ՝ ՚ի վեր հանէք ։

Երբեմն և յարաբերէ զամբողջ բան. որ, * Ո՛չ վատնեցի ՚ի հունձս արմտեայն, որով ՚ի մուտս ձեռն առուրցն խոտոլուն կերակրել պատրաստեցայց || . Նոր. կէ ։ Ուր որովն յարաբերէ զայս բան՝ ոչ վատնեցի ՚ի հունձս արմտեացն ։

Գիտելի է և, զի այս դերանուն երբեմն յարաբերէ զնախընթացն. որ, * Զի՞ք ինչ շնորհ, զոր առանց առաջնորդագո՞չ տայցէ ած || . Խորոտ. ։ Ուր բառդ զոր՝ յարաբերէ զնախընթաց անունդ շնորհ ։

Եւ երբեմն յարաբերէ զհետևեալն. որ, * Զոր վասն այլոյ կորստեան խօսիմք՝ անձամբ ՚ի նմին եմք || . Իգնատ. ծգ. 28 ։ Ուր զորն յարաբերէ զ՚ի վերջոյ եղեալ բառդ ՚ի նմին ։

Երբեմն և մնայ ՚ի մէջ յարաբերելի անուանն, և ՚ի մէջ բային նր, կամ յատկացուցչի նորին, և կամ ածականի նորուն, եթ. որ, * Ընդ քեզ բուսանին, զոր ը քեզ թաղեցեր, արդարութիւքն կամ մեղքն || . որ ը քեզ բուսանին արդարութիւքն կամ մեղքն || . զորս ը քեզ թաղեցեր. Խորոտ. ՚ի մէկն. ժամագրքի ։

Բազում անգամ և զօրութիւն ունի սա զյարաբերելին. որ, * Որ զմահ ոչ գիտէ, երկնչի ՚ի մահուանէ. իսկ որ գիտէ զմահ, ոչ երկնչի ՚ի նմանէ || . Եղիշ. ե ։ Ուր զօրութիւն կոյ բառս՝ նա. որպէս թէ ասէր. նա՝ որ զմահ ոչ գիտէ, երկնչի ՚ի նմանէ. իսկ նա՝ որ գիտէ զմահ, ոչ երկնչի ։

Համաձայնութիւն այսր դերանուան կրկնակի նկատի. Նախ՝

զի Թուոյ համաձայնի ը̄ այնմ , զոր յարաբերէ · զի ո-
րովհետև դնի ՚ի տեղի ն̄ր , զայնքան պարտի նշանակել ,
զորքան նայն նշանակէ · Ուստի եթէ յարաբերեալն միակի
նշանակեսցէ , պարտի դնիլ եզակի · որպ̄ , * Այն է տիրա-
պէս իմաստութիւն , որ գործով ուսուցանէ զիւրն իմաստութի̄ ·
այն է ը̄ ա̄յ վարդապետ , որ նախ առնէ , և ապա ու-
սուցանէ || · Սարգ · յակ · Է ։

Իսկ եթէ յարաբերելին իցէ բազմաւորական , յարաբե-
րականն դնի յոգնակի · որպ̄ , * Մի պատրեսցուք ՚ի հեշ-
տալեացս , որք կախարդեն զգայութի̄ս || · Սարգ · յակ · Ե · յորդ ։

Եւ քանզի բազում եզականք ևս ունին զզօրութի̄ յոգնա-
կանի , եթէ յարաբերեալքն լինիցին բազում եզականք ,
յարաբերականն ևս իբր ՚ի բազմաց յոգնակի դնի · որպ̄ ,
* Ցանկութի̄ն և ցասումն փառք է բանական հոգւոյն · · ·
որք ՚ի միաբանելն Ճոխացուցանեն զնա , և ՚ի բաժանելն
աղքատացուցանեն || · Լամբ · առ · ԾԷ ։ Ուր որք դնի
փոխ երկուց եզական անուանցս՝ ցանկութեան և ցասման ։

Իսկ եթէ յարաբերելին իցէ անեզական անուն , որովհե-
տև այն ը̄ նշանակութեան իբր եզական է , յարաբերա-
կանն ևս բազում անգամ եզակի դնի · որպ̄ , * Բաշխեաց
վէրքն՝ յորում կեայր տաժանաբար ( աղքատ ղազարն ) || ·
Իգնատ · ԾԷ · 22 ։ Ուր յորումն յարաբերէ զանունն վէրք ,
որ հասարակօրէն իբր անեզական վարի ։

Եւ ներհակ այսմ՝ եթէ յարաբերելին իցէ անուն հա-
րական կամ հաւաքական , ՚ի վարիլ ն̄ց իբր յոգնական՝
վասն գոլոյ նշանակութե̄ ն̄ց բազմաւորական , յարաբերա-
կան որն դնի յոգնակի · որպ̄ , * Ցա̄մէ՝ յորոց օրէնքն ա̄յ
հրաժարեցուցանեն զմեզ , պարտ է ժուժկալ լինել || ·
Շնորհ · ընդհանր ։

Ասացի՝ ՚ի վարիլն իբր յոգնական · զի եթէ իբր եզական
վարեսցին այսպիսի անուանք , յարաբերական որն ևս դնի
եզակի · որպ̄ , * Ամենայն , որ զչար գործէ , ատեայ զլոյս || ·
Յովհ · Գ · 20 ։

Այլ գիտելի է , զի ՚ի գիրս նախնեաց այս դերանուն

բազում՝ ուրեք ը̄ թուոյն զօրութիւն համաձայնի · քան-
զի բազում անգամ փոխանակ յոգնականին ունելոյ եզականն
դնի՝ գրեթէ յամ հոլովս , և մանաւանդ յուղղականին և
՚ի նախդրիւ հոլովսն · որ , * Են բազումք ՚ի մարդկանէ ,
որ երևին բազմաց , եթէ մեք են և առաքինիք · · · և
նախատանաց և ոչ միոյ համբերեն || · Առք · յոկ · զ ։
Ուր յարաբերականն որն ը̄ թուոյն ներգործութ̄ ոչ է
համաձայնեալ ը̄ յարաբերելոյն , որ է բառս Բազումք ·
այլ զօրութ̄ · զի եզական ձայնիւ եդեալ է իբր յոգ-
նականն ։

Եւ այս թէպէտ կարի յաճախեալ է ՚ի գիրս նախնեաց
մերոց , բայց մեզ պարտ է խնայելով վարել , մանաւանդ
յայնպիսի տեղիս , ուր կարէ ծագիլ շփոթութիւն մտաց
բանին ։ Քանզի և նախնիք մեր յայսպիսի տեղիս , նաև
՚ի պարզ բանս իսկ՝ երբեմն վարեին ևս և զյոգնականն ·
որ , * Եւ այս են առաքինութիւնք , որք առհասարակ հոգ-
ւոյ և մարմնոյ զխաղաղութիւն ՚ի գլուխ յօրինեալ կարեն
զպսակ || · Յովհ · Իմաստ · ա ։

Երկրորդ համաձայնութիւն այսր դերանուան նկատի յայսմ ,
զի յայնպիսի հոլովդ դնի , յորպիսի դնելի էր յարաբե-
րելին , եթէ եդեալ էր ներգործութ̄՝ ը̄ պահանջելոյ
բային կամ անուանն ։ Ուստի և՝

Երբեմն դնի յուղղական հոլովին՝ իբր անուն բայի · որ ,
* Յայտնի չար խորհրդոյն ոչ հաւանի հոգի , որ էառ
զճաշակ յուսոյ և սիրոյն այ || · Ղուկ · առաք · ծէ ։ Ուր որն
յարաբերելով զբառդ հոգի՝ եդեալ է իբր անուն բայիս
ոչ հաւանի · զի և յարաբերեալն , այս բառս հոգի՝ եթէ վերս-
տին եդեալ էր ներգործութ̄ , պարտ էր դնիլ այնպէս ։

Երբեմն դնի ՚ի սեռական հոլովին՝ իբր յատկացուցիչ ·
որ , * Առաքեցաք ը̄ նմա զեղբայրն ( այս զՂուկաս աւետա-
րանիչն ) , որոյ գովութիւն յաւետարանի անդ է ը̄ ամ եկե-
ղեցիս || · Բ · Կոր · Ը · 18 ։ Ուր բառդ որոյ՝ յարաբե-
րելով զանունդ եղբօրն՝ եդեալ է ՚ի տեղի նր իբր յատ-
կացուցիչ բառիս գովութեան ։

Յայսպիսիս՝ եթէ յառկայութեան ունիցի զնախդիր, հա-
մառակօրէն դնի այն ՚ի վր՟ յարաբերականին, մանաւանդ
թէ ՚ի վերայ երկուցն ևս. զր՟, * Սատակի ( կրասոս ՚ի
տիգրանայ ) ամ՟ զօրօքն հանդերձ . . . զորոյ գանձսն ժո-
ղովեալ տիգրանայ՝ դառնայ ՚ի հայս ||. Խոր. Բ. 16.
Ուր նախդիրս՝ զ, եդեալ է ՚ի վր՟ յարաբերականին.
որ է յառկայութիչ անուանս՝ գանձսն։

Երբեմն դնի յայլ հոլովս՝ իբր խնդիր բայի. զր՟, * Ժա-
ռանգութիւն է այ՟ ընդհանրական եկեղեցւոյ, զոր գնեաց քս՟
պատուական արեամբն իւրով ||. Լամբ. առղ. 78. Ուր
զորն յարաբերեալովն եկեղեցւոյն՝ եդեալ է իբր խնդիր բայ-
իս՝ գնեաց։

Երբեմն դնի իբր խնդիր անուան, կամ ընդունելութե՟, և
կամ նախադրութե՟. զր՟, * Յորոց ոմանք ծանօթութե՟
օրինին գրեալք՝ անդրէն կանգնեցան ||. Նար. ԾԲ. Ուր
յորոց է խնդիր անուանս՝ ոմանք։

Այլ սակայն ՚ի գեղապանծ շարադրութիւնս երբեմն այլ-
ազգ կարգի այս համաձայնութի՟. իբր զի յարաբերականն ոչ
դնի յայն հոլով՝ յոր դնելի էր յարաբերելին, կամ զոր
բայն և անունն պահանջէ, այլ՝ յայն հոլով, յոր առդէն
եդեալ է յարաբերելին, կամ զոր առդէն ունի։ Ըն՟ որոյ
յարաբերականն ոչ միայն թուով, այլև հոլովիւ համա-
ձայնի ըն՟ յարաբերելոյն. զր՟, * Առաջնորդեա ժողովր-
դեանն այնմիկ ՚ի տեղին, յոր ասացի քեզ ||. Ելից. ԼԲ.
34. Ցեառեաւ։ Ուր յարաբերեալ անունս ՚ի տեղին՝ եդեալ
է ՚ի տրական հոլովն. և ՚ի լինելն խնդիր բայիս ասացի՝
դնելի էր ՚ի հայցական հոլովն. վասն որոյ և յարաբերա-
կան յորն դնելի էր հայցականապէս. ( որպէս և դնի ՚ի տպա-
գրեալն) . որպէս, ՚ի տեղին՝ զոր ասացի քեզ։ Իսկ սակայն
աստ ոչ է եդեալ այսպէս, այլ՝ տրականապէս, վս՟
համաձայնելոյ հոլովիւ ևս ըն՟ յարաբերելոյն։

Եւ սմին հակառակ՝ երբեմն յարաբերելին դնի յայն հո-
լով, յորում է յարաբերականն որն, թէև այլ ազգ պա-
հանջիցէ բայն, և ըն՟ այսմ՝ ոչ եթէ յարաբերականն ըն՟

յարաբերելւոյն, այլ՝ յարաբերելին ընդ յարաբերականին համաձայնի թուով և հոլովիւ. որպէս * Ես զբանն՝ զոր խօսիք, մի մնասցէ առ ձեզ ||. Ժողովող. Աստ 'ի սմին բանի՝ անունս զբանն՝ դնելի էր յուղղական հոլովն այսպէս՝ և բանն՝ զոր խօսիք, մի մնասցէ առ ձեզ. զի է անուն բային՝ մի մնասցէ. բայց որովհետև յարաբերական որն ըստ պահանջման բային խօսիք՝ եղեալ է 'ի հայցական հոլովն, անուն բային ևս վասն համաձայնելոյ յարաբերական որին՝ եղեալ է յայն հոլով:

Զայսպիսիս երբեմն ընդ մէջ մտանէ թարմատարաբար դերանուն ինչ՝ առ 'ի պայծառ կացուցանել զբանն. որպէս * Զվէմն զոր անարգեցին շինօղքն, նա եղև գլուխ անկեան ||. Մատ. իա. 42: Ուր դերանունս նա՝ եղեալ է իբր թարմատարաբար յուղղական հոլովն, ընդ որում դնելի էր յարաբերելին. որգոն, վէմն, զոր անարգեցին շինօղքն, եղև գլուխ անկեան:

Երբեմն ևս՝ յարաբերելին դնի յայն հոլով, յոր դնելի էր յարաբերականն. և յարաբերականն դնի յայն հոլով, յոր դնելի էր յարաբերելին, ամենևին ներհակ միմեանց. որպէս * Զնոյն գրէ առ որս՝ 'ի Խուժաստան էին ժողովուրդք ||. Թուղթ. Վրդ: Ուր բառդ առ որս՝ դնելի էր յուղղական հոլովն. և բառս ժողովուրդք՝ դնելի էր 'ի տրական հոլովն՝ այսպէս, առ ժողովուրդսն, որք 'ի Խուժաստան էին. այլ սակայն ներհակ այսմ՝ առաջինն եղեալ է 'ի տրական հոլովն, և երկրորդն յուղղականն:

Բազում անգամ ևս պատահի, զի ցուցական դերանունն լինի զօրութեամբ յարաբերելի. և յարաբերական որն դնի յայն հոլով՝ յոր դնելի էր յարաբերելի դերանունն, թէ և պարտ էր այլազգ դնիլ. որպէս * Քաղցր է տէր՝ որոց ապաւինեալ յաւուր նեղութեան ||. ըստ այնոցիկ՝ որք ապաւինեալ. Նաւում. ա. 2:

Գիտելի է, զի բազում անգամ յարաբերական որն դնի իբր բացայայտելի. իսկ անունն իբր բացայայտիչ նորին՝ համաձայնեալ ընդ թուոյն և ընդ հոլովին. որպէս * Որում ոչ

կամեցեալ Հայկայ հնազանդել լինել Բելայ . . . գնայ յերկիրն Արարադայ ||. Խոր. Ա. 9. Ուր որական հոլովս Բելայ՝ լեալ է բացայայտիչ բառիս՝ որում.

Յայսպիսիս երբեմն առանց համաձայնութեան թուոյն և դնի որն. օր. * Յորժէ յամենեցունց յայսցանէ ազատ են ընծայելքն ||. Իգնատիոս. ԺԷ. 29. Ուր բառդ յամենեցունց յայսցանէ՝ որ յամ ախտից՝ լեալ է բացայայտիչ բառիս՝ յորժէ.

Երբեմն և յայլն ՝ի սա դերանուանք թարմատարաբար, կամ իբր զարդ. օր. * Երանեալ է այր, որոյ օգնութիւն իւր ՝ի քէն է ||. Սաղ. ՁԳ. 6. Ուր դերանունս իւր՝ դնի իբր զարդ, կամ իբր թարմատար ինչ.

Գրուելի է զգուշանալ, զի յարաբերական որն երբեմն առանց ունելոյ զզօրութիւն յարաբերականի՝ դնի յառաջոյ իբր անձական թուով և հոլովիւ համաձայն. օր. * Զի որք որում ախտի յաղթեսցին, զնորին դեն հալածեսցին ||. Պետր. Բ. Բ. Ուր բառդ որում՝ լեալ է անձական ախտին.

Զայս մի ինչ և արժան է գիտել, զի երբեմն տեղական մակբայք ինչ դնին ՝ի տեղի յարաբերականի. օր. * Արդ՝ մայր իմ յուղարկեաց զիս յառագաստ, ուր հրաւիրեցայ ||. որ յոր հրաւիրեցայ. Խոր. Հռէթ.

## ԳԼՈՒԽ. ԺԸ.

### Յաղագս դերանուանական յօդից՝ ս. դ. ն.

Ա յաղքիկ յօդք նախ յարին ՝ի դերանուանս իբր զարդ. օր. * Ինքն կորացեալ ամաչեսցէ (սատանայ.) ||. Եզեկ. Է. Ուր յօդս. եղեալ է իբր զարդ ՝ի վերայ դերանուանս՝ ինքն.

Այլ գիտելի է, զի բազում անգամ ՝ի յարիլ սոյա ՝ի դերանուանս ինչ հանդերձ յետոյ դնին. օր. * Քեզն յորժամ գայցէ, մի թէ աւելի ինչ նշանս առնիցէ՝ քան զոր սոյա առնէ ||. որ քան զոր սա առնէ. Յովհ. Է. 31.

Այլ 'ի յարաբերականս՝ ը̄ որում են յարաբերականք , ոչ յարին այս յօդք ։ զի ոչ լինի ասել ։ որս երեւին ։ որդ փառաւորեալ ես ։ որն խօսէր ։ որն առաքեալ ։ եւն ։ այլ որ երեւինս ։ որ փառաւորեալդ ես ։ որ խօսէին ։ եւն ։ որպ , * Մարդիկ մատակարարեն զայս , որք երեւինս ։ այլ Հոգին սբ տայ զայն , որ ոչն երեւի || ։ Կոչ ։ ընծայ ։ ծէ ։ 28 ։

Երկրորդ՝ յարին սոքա յանուանս ։ որպ , * Եթէ աշակերտ ես , վարդապետութեանն լեր || ։ Սարգ ։ ա ։ յովհ ։ 2 ։

Երրորդ՝ յարին 'ի բայս ։ որպ , * Մինչեւ արշաւեմ՝ առ 'ի յետոյսն հակամիտեմ || ։ Նարեկացի ։

Չորրորդ՝ յընդունելութիւնս ։ որպ , * Զայնես չլսողիս , եւ ոչ սրտմտիս ։ փութաս մեղկելոյս , եւ ոչ խափանիս || ։ Նար ։

Հինգերորդ՝ 'ի մակբայս ։ որպ , * Վա՜յ ժողովրդեան՝ որ շուրջ կան՝ առնեմ || ։ Նոննոս ։ 'ի Մեկն ։ յովհ ։ ծէ ։ 23 ։

Այսորիկ յօդք ուրեք ուրեք դնին փոխ միմեանց ։ քանզի ոչն դնի յերիս դէմս եւս ։ որպ , * Որպէս սկսաքս՝ 'ի նմին եւ կատարեսցուք || ։ Եղիշէ Վրդ ։ Գւ ։ է ։

* 'Ի գրելոյս ձեր ծանուցաւ || ։ Շնորհալի ։ 'ի Թուղթն ։

* Մարտիր ըն այնոսիկ՝ որ մարտնչին ընդ Ձեզ || ։ Եղիշէ ։

Այնպէս եւ դոն ։ որպ , * Առ ինչ արդեօք հրամայեսցես՝ քան թէ հրամայեցիդ || ։ Եղիշէ Վրդ Գւ ։ ա ։

* Զոր ասէքդ՝ յուցէք գործով || ։ Գէորգ Վրդ ։ Երոյ ։ 5 ։

* Որ նստինդ աւադիկ ամենքն առաջի քո || ։ Լամբ ։

Ըստ այսմ եւ նոյն ։ որպ , * Իսկ եթէ ոչ զայն առնիցեմք՝ զոր հրամայեցաքն , եւ զայն խօսիցեմք՝ զոր վարդապետեցաքն , ազատութեան օրինօքն եմք դատելոց || ։ Սարգ ։

* Զի՞որդ տատուցանես ինձ , եթէ առնու ոք զքոյդ՝ դու մի՛ պահանջեր , երբ դու զքոյն պահանջես || ։ Մծբ ։ ծը ։

* Որ մեռանին՝ արդարացեալ է 'ի մեղաց անտի || Հռովմ ։ զ ։

Սոքա երբեմն փոխ դնելոյ 'ի վր բուն անուան , կամ դերբայի , կամ խնդրոյ բային , եւն , դնին 'ի վր այլոյ բառից առ 'ի գեղեցկացուցանել զշարադրութիւն ։ որպ , * Զինչ գործեցից ողբալիս հոգի՝ յայնմ մեծի աւուր վտանգի || ։ փոխ ասելոյ , ողբալի հոգիս ։ Նար ։ հը ։

Այլ աստ գիտելի է , զի այսորիկ յօդք բազում անգամ

գնին ՚ի տեղի դերանուանց զօրութք յարելոյ յանուանս և յընդունելութիս և ՚ի բայս դէսպէս օրինակաւ . դր ,
* ՚Ի վեր ամբարձայ մոխիրս մերժելի || . փխկ ասելոյ ,
՚ի վեր ամբարձայ ես մոխիրս . կամ ՚ի վեր ամբարձայ
ես , որ եմ մոխիր մերժելի . Նարեկ . Է ։

Դարձեալ գիտելի է , զի սոքա՝ և յաւէտ ես նման՝ դընին երբեմն փխկ անուան , որ զօրութք իմնի . և այս՝ երրակի . Մի՝ յարելով ՚ի յատկացուցիչն՝ զօրութք իմացեալ անուանն . դր , * Ա՛յլ է մեր , և ա՛յլ է նորայն || .
փխ այլ է մեր կամք , ևն . Իգնատ . ԺԳ . 5 ։

Երկրորդ՝ յարելով յածականն . դր , * Զպղատոնականն համարձակագոյն այժմ բարբառիմ || . փխ զպղատոնական
բանն . Խորէն . Ա . 31 ։

Երրորդ՝ յարելով ՚ի խնդրին նախադրութեց , յորս իցէ եղեալ ներգործութ նախդիրդ՝ զ՝ զօրութք իմացեալ անուանն . դր , * Ընդ զօրս Հրեշտակաց միաբանական օրհնութք բարեբանեցէք ՚ի վր քերովբէիցն || . փխ բարեբանեցէք զնստեալն ՚ի վր քերովբէից . կամ զայն՝ որ է
՚ի վր քերովբէից . ՚Ի շարականսն . ԺԷ ։

Գիտելի է և , զի յօդսս՝ երբեմն դնի ամենևին Թարմատար . դր , * Ո՛չ գիտէ իմաստութք առաջնորդել , վն այնորիկ բազում անկարգութիւ մտանէ յեկեղեցի || . Շնորհ . ընդհանր ։ Ուր յօդս՝ դնի յաւելորդս իբր զարդ ։

# ԳԼՈՒԽ. ԺԶ.

## Յաղագս համաձայնութեան բայի ընդ անուան, ընդ դերանուան և ընդ ընդունելութեան.

Բայք կրկնակի համաձայնին ը̄ անուանս, ը̄ դեր-անուանս և ը̄ ընդունելութիս. Նախ՝ իբր ը̄ այնս, որք ասին անուան բայի. Երկրորդ՝ իբր ը̄ այնս, որք ասին խնդրեր բայի: Քանզի որովհետև բայք ցուցանեն զգործողութի կամ զկրողութի, ապ̄ հարկ է գործողութեց և կրողութեց ունիլ նախ՝ զգործօղ կամ զկրօղ. և երկրորդ՝ զեզր գործողութեց, կամ զենթակայ, կամ զպատ-ճառ, և կամ զգործի. Որպէս և բայից հարկ է ու-նիլ նախ՝ զանուն բայի, որ նշանակեսցէ զգործօղն որ̄ զո̄ր գործողութեց, կամ զկրօղն. և երկրորդ՝ զխնդիր բայի, որ նշանակեսցէ զեզրն կամ զենթակայն գործողութեց, կամ զգործին, և կամ զպատճառն, և կամ զայլ ինչ. որպ̄ յաւելն, * Բերան ամպարշտաց կլանէ զպատուհասս ||. (Առակ. ԺԹ. 28.) ՚Ի սմին բանի բայս կլանէ ունի զբեր-կուս անուանս. որոց առաջինն՝ որ̄ բերան՝ եղեալ է անուն բայի, և նշանակէ զո̄ր գործողն կլանելոյն. իսկ միւսն՝ որ̄ պատուհասս՝ եղեալ է խնդիր բայի, և նշանակէ զեն-թակայն՝ առ որ լինի գործողութի կլանելոյն: Իսկ անուն ամպարշտաց՝ է յատկացուցիչ բերանոյն: Այժմ նախ խօ-սեսցուք զառաջին համաձայնութե, որ̄ զանուանէ բայից. և ապա զերկրորդէն, որ̄ զխնդրոյ նոցին:

## Յաղագս առաջին համաձայնութեան բայից. Հատ

### Յաղագս անուան բայի:

Անուն բային է այն՝ որ նշանակէ զո̄ր գործողութեն. որ̄ զգործօղն կամ զկրօղն, որպ̄ յայտ է ՚ի վերոյ-գրելոյդ. և քանզի յատկապէս անուանք և դերանուանք և

ընդունելութիւնք կարգին նշանակել զգործօղն կամ զկրօղն , նոքա միայն յատկապէս լինին անուն բայի · որպ յայտ լիցի ՚ի յաջորդ գլխոյդ ։ Եւ զի աներեւոյթ բայք եւս երբեմն իբր անուն վարին , նք եւս լինին բազում անգամ անուն բայի · որպէս ունիմք ասել ՚ի ստորեւ ՚ի վերջ

Է կանոնին ։

Իսկ այլ մասունք բանի որոց ՚ի հետեւ պիտակաբար միայն կարեն վարիլ իբր անուն , անյատկապէս կարեն լինել անուն բայի · ՟Է որում են բառք ինչ ։ Եւ

Նախ՝ նախադրութիւն · որ , * Իբրեւն նախադիր է բանի ||· Լամբ · ՃԷ ։ Ուր նախադրութիւս իբրեւ՝ է անուն բայիս՝ է ։ Երկրորդ՝ մակբայն · որ , * Զայս՝ արդարօքն յայտ առնէ ||· Իգն · ԺԷ · 8 ։ Ուր մակբայս արդարօք՝ է անուն բայիս՝ յայտ առնէ ։ Երրորդ՝ շաղկապն · որ , * Զի եւսն այլ է , եւ եւսն այլ ||· Խոսրով ։ Ուր շաղկապս եւս՝ է անուն բայիս՝ այլ է · որպ եւ եւսն ։

Չորրորդ՝ միջարկութիւն · որ , * Ոհն՝ փափաքանաց՝ որում ոչ համանեմք , է տարապայց ապաշաւանաց ||· Լամբ · ԾԺԷ ։ Ուր միջարկութիւս ոհ՝ լեալ է անուն բայիս՝ է ։

Հինգերորդ՝ դիմաւոր բայն · որ , * Գիտեմն՝ ամենեցուն յայտ է ||· Նոննոս · Յովհ · 8 · 55 ։ Ուր բայս գիտեմ՝ է անուն բայիս՝ յայտ է ։

Վեցերորդ՝ նաեւ տառք՝ ՟Է որում վարին իբր բառ ինչ , լինին անուն բայի · որ , * Ճէն՝ Ճառագայթ առ ՚ի սըրբոյ՝ ասէ ծագեալ լուսոյ հանգէտ · · · · Պէն՝ պատուիրէ կալ անբամբաս ՚ի յայս չարեաց՝ յորում թէ կաս · · Թէթէն՝ տեռանց եւ իշխանաց՝ խրատ ընծայէ՝ իմաստութեց · · · Ցօն՝ ցուցանէ միւս բան խրատ · · · մի նախանձիր բնաւ ՟Ը մարդ · · · · Քէն՝ կատարումն է այս տառից՝ տայ անկունել աւուրն երից || · յա օրէ ։ Ուր տառքս՝ Ճէ · Պէ · Թէթէ · Ցօ , եւ Քէ՝ են անուն բայիցս՝ ասէ · պատուիրէ · ընծայէ · ցուցանէ · է ։

Այլ այժմ զսոքօք զանց արարեալ՝ դիցուք զհինգ կանոնս վն համաձայնութե անուան բայի ը բայի ։

Կանոն . ա ։

Եթէ բայն իցէ դիմաւոր , անուն բային պարտի դնիլ յուղղական հոլովի . որ , * Դադարեցին նեղութիւնք , և եհաս հանգիստ . լուծան սրտմտութիւնք , և ժամանեաց մխիթարութիւն || . Եզն . ճլ . 22 ։ Ուր անուանքս՝ նեղութիւնք , հանգիստ , սրտմտութիւնք և մխիթարութիւն՝ են անուն բայիցս՝ դադարեցին , եհաս , լուծան և ժամանեաց . և եդեալ են յուղղական հոլովի վասն դիմաւոր լինելոյ բայիցն ։

Իսկ եթէ բայն իցէ անդէմ , որպիսի են աներևոյթք . դերբայք և գրադէմք , անուն բային հասարակօրէն դնի ՚ի սեռական հոլովի . որ , * Այն է ժամանակ , յորում երանութիւն լինի . աղքատաց մեծանալ , և ազատաց մխիթարիլ , և հեզոց զերկրին երկիրն ժառանգել || . Եզն . ետ . 28 ։ Ուր անուանքս՝ աղքատաց , ազատաց և հեզոց՝ են անուն բայի ՚ի սեռական հոլովի՝ վն անդէմ լինելոյ բայիցս՝ մեծանալ , մխիթարիլ և ժառանգել . որք եթէ որոշեալ դիմօք կարգէին , անուանքն ևս յուղղական հոլովի դնէին . որգոն , աղքատք մեծանան . ազատք մխիթարին . և հեզք ժառանգեն զերկրին երկիրն ։

Ուրեք ուրեք ևս դնի յուղղական հոլովի . որ , * Հասեալ ՚ի թիկունս աներևոյթ օգնութիւնն՝ խորտակեաց յայտնապէս զգաղտնի պատերազմն || . Շար . հը ։ Ուր աներևոյթ օգնութիւնն է անուն բայիս հասեալ ՚ի թիկունս ։

Իսկ դերանունք դնին երբեմն նաև ՚ի տրական հոլովի , թէ առանձինն իցեն , և թէ յարեալք յանուանս . որ , * Յիշեսցի դքեզ ... ՚ի գալ քեզ զհետ սէրն իմ || . Երեմ . է . 2 ։ Ուր դերանունս քեզ՝ ՚ի տրական հոլովի լեալ է անուն բայիս ՚ի գալն ։

Այլ առ գիտելի է , զի յորժամ աներևոյթ բայք յարին ՚ի դիմաւորի բայս , անուանցն որ աներևոյթ բայիցս յամի դնի ՚ի տրական հոլովի , զի է միանգամայն ևս տրական խնդիր այնց դիմաւորի բայից . որ , * Արժան

է տառադարձութիւնն 'ի կարգի պահել զերկաքանչիւրսն ||·
Շնորհ · ընդհանր ։ Ուր տրական հոլովս տառադարձութեան ՝ որ
լեալ է խնդիր դիմազուրկ բայից ոչծան է ՝ եղեալ է
իբր անուն բայից 'ի նորին պահել ընդհանրութեանն ։

Այսպէս և 'ի տրական հոլովն դնի անուն բային դիմա-
զուրկ բայից ոչէութ էն ՝ եթէ չունիցի առ իւր զաներևոյթ ·
* Մարմնաւոր համարձակութեան մեզ պէտք են յայնժամ ||·
Մարկ · Ժ · յոհն · 4 ։ Ուր տրական անուանս որդիառամ հա-
մարջանութէ՛ է անուն բայից ոչէութ էն · իսկ մեզն է խնդիր
նր · ոչ թէ ասէր · որպիսի համարձակութիւն պիտոյ է մեզ
'ի դատաստանի ։

Գիտելի է դարձեալ ՝ զի անուն բային յարակատար և
գերակատար ժամանակայ ՝ և անցելոյ ստորադասականին
'ի յերրորդ դէմս եզականին ՝ մանաւանդ ներգործական
բայից՝ իբր 'ի բազում դնի 'ի սեռական հոլովն ՝ ըստ կար-
գի երից դիմաց ևս · որ ՝ * Եւ էր եղեալ է 'ի մտի
իմում՝ բազում՝ չարչարանօք կարօտել զձեզ 'ի կենաց ձե-
րոց || · Եղիշէ · Ե ։ Ուր սեռական դերանունս իմ՝ լեալ է
անուն բայից եղեալ է ։

Իսկ երբեմն՝ դնի յուղղական հոլովն · մանաւանդ 'ի չէ-
զոքական և 'ի կրաւորական բայս · որ ՝ * Աշխարհն հը-
պարտացեալ է ՝ և ոչ ինչ գիտէ || · Ժ · Տեմ · Զ · 4 ։ Ուր
աշխարհն է անուն բայից հպարտացեալ է ։

Նաև 'ի վերոյ՝ յերրորդ դէմս եզականին · զի յայլ
դէմս՝ և 'ի յոգնականս՝ անուն բային ոչ երբեք դնի 'ի
սեռականն ՝ այլ՝ միշտ յուղղականն · որ ՝ * Բայց ես և լու-
այս զարմացեալ եմ || · Կոչ · ծա · 13 ։

Արժան է աստանօր զայս մի ինչ ևս ծանուցանել · իբր
զի 'ի գիրս ինչ՝ ուրեք ուրեք անուն բային աներևոյթ բայ-
ից գոլ՝ փոխանակ դնելոյ 'ի սեռական կամ 'ի տրական
հոլովն ՝ դնի 'ի հայցականն · որ ՝ * Պահնակ ամրոցին
ամբաստան առ արքայի լինի իբր միաբանակար զնա գոլ բեր-
դին ( որ է ՝ եկեղեցւոյն չինել 'ի մեքենայ )|| · Ցուցն · նոր ։
Ահա 'ի սմա անուն բայից գոլ՝ եղեալ է 'ի հայցական

հոլովն , որ է բառդ՝ զնա ։ Այլ հնար է եւ ասել , թէ այսպիսի հայցական հոլով՝ է խնդիր սեռի բային , որ զնի յայսմ բանի . իսկ բառս գոլ՝ ուղղական խնդիր նորին ։ Զորմէ տես ՚ի գլ . ԺԵ . որ յաղագս աներեւոյթ բային ։ Այլ որպիսի եւ իցէ՝ չէ պարտ յաճախել զայս-
պիսի ոճ ։

Կանոն . Է ։

Եթէ բայն իցէ դիմաւոր , անուն բային պարտի թուով եւ դիմաւ համաձայնիլ ը̅ նմա . որ̅պ , * Ճշմարտութիւն ազա-տեսցէ զձեզ || . Յովհ . ը̅ . 32 ։ Ուր ո̅չ բայս ազատես-ցէ՝ ը̅ թուոյն է եզական , նոյնպէս եւ անուն բային , որ̅պ ճշմարտութիւն՝ է եզական . եւ ո̅չ բայն է յերրորդ դէմն , նոյնպէս եւ անուն բային՝ ՚ի ձեռն ն յօդին ։ Իսկ բառս
ըզձեզ՝ է խնդիր ազատելոյն ։

Բայց գիտելի է , զի այսպիսի յօդք որոշիչք դիմաց՝ բազում անգամ զօրութ̅ դնին , մանաւանդ յերրորդ դէմն . որ̅պ , * Դու զդու ո̅չ հանէ || . Եզնիկ . Ժա̅ ։ Ուր զօրութ̅
գոյ յօդս ՚ն . ո̅չ թէ ասէր . դեն ո̅չ հանէ զդու ։

Այլ սակայն յեզակի անձանց եւ յեզակի ընդունելութեան գրեթէ միշտ դնին այսոքիկ յօդք . որ̅պ , * ԸՆԿԵՐՆ
դիւրաւ մոլորի || . Լամբրոնացի . առ . 54 ։

Այլ ուրեք ուրեք առանց յօդի եւս դնին սք̅ , բայց ՚ի սակաւս . որ̅պ , * Երկնչի խոհեմն ՚ի հակառակութ̅է || .

ՄԾՔ . Ը̅ ։

Իսկ դերանուանք յիւրեանց ունելով զդէմս՝ ո̅չ կարօտին դիմորոշական յօդից , այլ առանց նց̅ համաձայնին . որ̅պ . * Նոյն է ասպա տանել ձուլեալ պատկերի , եւ մեղաց ախտի . որդ՝ Էս գնայի ը̅ այս Խանտարպարաց կորատեան հե-
տոյ խաւարի || . Նարեկացի . ՚ի բանն . ԺԱ̅ ։

Եւ թէպէտ յարաբերական դերանուանն չունի զորոշեալ դէմս , բայց զօրութ̅ ունելով զայն՝ յերիս դէմս եւս կարէ համաձայնիլ առանց յօդի . որ̅պ , * Տունկս դառնու-

տեսն՝ որ զգարշութի անառակ վարուց ծաղկեալ || . Նար . Է :

Այլ աներևոյթքն զոր յօդ և ոմանցին ՚ լինին անուն բայի մինչ յերրորդ դէմս . որ ՚ * Նստել վեհագոյն բնաւիցդ՝ ոչ է իմ ՚ այլ՝ քոյ || . Լամբ . ՚ի Ճէկն . պատ :
* Տիրել ամեն՝ խնայել տայ քեզ յամ || . Իմաստ . ԺԲ .
* Ողորմել՝ չթողու զարժանսն խնդրել || . Խոսրով :

Որքա բազում՝ անգամ առանց յօդի ևս լինին անուն բայի . մանաւանդ էական բայից . որ ՚ * Մեռանել ՚ի շարեայ՝ է հանճար || . Յոբ . ԻԶ . 28 : Ուր աներևոյթ բայս Մեռանել, առանց յօդի լեալ է անուն բայիս՝ է հանճար :

Ըստ այսմ լինին սք անուն բայի և բայարձակ դիմազուրկ բայից . որ ՚ * Առաջի մարդկան ձևանալ դիւրին է ՚ այլ ոչ առաջի այ || . Իփնով . Ա . 6 : Ուր ձևանալն է անուն բայիս դիւրին է . իսկ առաջին մարդկան սն՝ է խնդիր ձևանալոյն :

Այլ գիտելի է ՚ զի եթէ այսպիսի դիմազուրկք լինին յոգնական ՚ աներևոյթ բայն՝ որ իբր անուն բայի դնի ՚ զօրութբ է յոգնական . որ ՚ * Զի թէ կամք էին նոր ճորել ՚ բնաւ զինչ պէտք էին զայդեգործն առ այս գործածելոյ ունել || . Իփնով . ԺԵ . 6 : Ուր ճորելն և ունելն եզակի ձայնիւ են անուն բայիս՝ կամք էին և պէտք էին :

Կանոն . Գ :

Եթէ անուն բայն լինի բազում՝ եզակն՝ ըստ նոյն դիմաց ՚ բայն հասարակորէն դնի յոգնակի : Զի որովհետև յայնժամ որ գործողութիւն է բազում ՚ բայն ևս՝ որ նշանակէ զգործողութիւն ՚ պարտի դնել բազմաւորական . որ ՚ * Յուդա և եփրեմ օրհնեցան ՚ի յակոբայ || . Գէորգ . 17 : Ուր բայս օրհնեցան՝ եղեալ է յոգնակի . զի անուն բայն է բազում ՚ որ յուդա և եփրեմ :

Բայց բազում՝ անգամ ևս դնի բայն եզակի ՚ մանաւանդ ՚ի նախադասելն . և գրեթէ զօրութբ կրկնի . որ ՚ * Տեղայցէ ՚ի վր մեղաւորաց որոգայթ ՚ հուր և ծծումբ || .

Սաղ. Ժ. 7 ։ Ուր թէպէտ անուանք բային են բազում՝, մի է՝ որոգայթն, հուր և ծծումբ, բայց բայս տեղասցէ՝ մի տեղասցի, եղեալ է եզակի, և զօրութ̅բ կրկնեալ. որպէս եթէ եղեալ էր. տեղասցի ՚ի վ̅ր մեղաւորաց որոգայթ, տեղասցի հուր, տեղասցի և ծծումբ ։

Կանոն. ԺԳ ։

Եթէ անուն բային իցէ բազում ՚ի զանազան դէմս, բայն դնի ՚ի պատուականագոյն դէմն, այս է յայն դէմ, որ համեմատութ̅բ է առաջին. իբր զի եթէ մին յանուանց բային իցէ յառաջին դէմն, և միւսն յերկրորդն, կամ յերրորդն, բայն դնի յառաջինն. զի առաջին դէմն պատուականագոյն է քան զերկրորդն և քան զերրորդն. որ, * Ես և դու և ամ̅ բազմութիւնդ . . . աշակերտեսցուք ած̅ային գրոց ||. Եղիշ. Է. և ոչ լինի ասել՝ ես և դու և ամ̅ բազմութիւն աշակերտեսջիք, կամ աշակերտեսցին ։

Իսկ եթէ մին յանուանց բային իցէ յերկրորդ դէմս, և միւսն յերրորդն, բայն դնի յերկրորդ դէմն. զի երկրորդ դէմն պատուականագոյն է ք̅ զերրորդն. որ, * Ընդէ՞ր մեռանիք դու և ժողովուրդ քո || . Երեմ. ԻԷ. 13 և ոչ լինի ասել՝ մեռանին ։

Այլ գիտելի է, զի յորժամ պատուականագոյն դիմի բայն դնի զօրութ̅բ, յայնժամ միւս բայն դնի յայլ դէմս. որ, * Այլ թէ մեք՝ կամ հրեշտակ յերկնից աւետարանեսցէ ձեզ՝ աւելի քան զոր աւետարանեցաքն ձեզ, նզովեալ լիցի || . Գաղ. Ա. 8 ։ Ուր զօրութ̅բ գոյ բայ ը̅դ առաջին դիմաց. որպէս թէ ասէր. այլ թէ մեք աւետարանեսցուք՝ կամ հրեշտակ յերկնից աւետարանեսցէ ձեզ՝ աւելի քան զոր աւետարանեցաքն ձեզ, նզովեալ լիցի ։

Կանոն. ԺԴ ։

Եթէ անուն բային իցէ ը̅դ ձայնին եզական, իսկ ը̅դ նշանակութեան բազմաւորական, (որպէս են անուանք թուա-

կանք ) , բայն դնի յոգնակի · որպ , * Եթէ Երկոքա ողջոյն ՝ի մի երկանս , մին առնուցու , և միւսն թողուցու || · Մատթ · ԻԴ · 41 ։ Ուր բայս ԱՌՆՈՒՑՈՒՆ՝ եղեալ է յոգնակի · զի անուն բային է թուական բառս՝ Երկոքա ։

Իսկ եթէ անուն բային իցէ բառ հաւաքական , ( որպ՝ ԺՈՂՈՎՈՒՐԴ · ԱԶԳ , եւն ) , կամ հանրական , ( որպ՝ բառս ամ ) , և կամ կրկնակ , ( որպ՝ Մի Մի · ԱՅՐ ԸՆԿԵՐ · ԻՒՐԱՔԱՆՉԻՒՐ · ԱՅՐՈՒՁԻ · եւն ) , բայն երբեմն դնի յոգնակի վս՟ ունելոյ նշ՟ զնշանակութի բազմաւորական · որպ , * Գունդքն հայոց հասեալ անյանէլին մեծաւ զօրու՟ || · Եղիշէ Վրդ · Գ · * Հասանէին վաղվաղակի բազում և այլ այրուձի || · Եղիշ ·

Իսկ երբեմն՝ մանաւանդ թէ բազում անգամ՝ դնի եզակի · որպ , * ՝Ի թիկունս վաղվաղակի հասցէ գունդն հոռոմաստանեայց . . . սրտի միօք || · Ա · Մակաբ · Ը · 25 ։

Ըստ այսմ համաձայնին բայքն և Ը անեզական անուանս · զի երբեմն յոգնակի դնին · որպ , * Մեղք միայն բաժանեն և օտարացուցանեն յԱյ || · Սահակ Հայր ։ Ուր բայքս ԲԱԺԱՆԵՆ և ՕՏԱՐԱՑՈՒՑԱՆԵՆ՝ եղեալ են յոգնակի · որոց անուն բային է բառս՝ ՄԵՂՔ ։

Իսկ երբեմն դնին եզակի · որպ , * Մեղքն ստուգաբանին մեղկութի · և հոտումն մայց ՝ի խոտորնակ հեշտութին || · Լամբ · յաղագս անառակ որդւոյն ։ Ուր բայս ՍՏՈՒԳԱԲԱՆԻ՝ եղեալ է եզակի · որոյ անուն բային է բառս՝ ՄԵՂՔ ։

Երբեմն ՝ի հասարակ անուանս ևս այսպէս դնի · որպ , * Քեզ զինչ օգուտ է անկենդան նիւթոյն պատուէ կամ ընդդիմութե || · Լամբ · առէն ։ Ուր բայս ԶԻՆՉ ՕԳՈՒՏ Է՝ եղեալ է եզակի · թէպէտ և հասարակ անուանքս ՊԱՏՈՒԷՔ և ԸՆԴԴԻՄՈՒԹԻՒՆՔ՝ են յոգնական ։

՝Ի վախճան այսորիկ հինգ կանոնաց՝ գայս մի ինչ արժան համարիմ ծանուցանել · իբր զի բազում անգամ անուն բային դնի զօրութ · որպ , * Եթէ կամիս հետևիլ յիս , պատ հեա զբանս իմ || · Աւետ հարց · Է ։ Ուր անուննս բայիցս՝ ՉԱՐԻՍ և ՊԱՀԵԱ՝ զօրութբ դնի · որ է՝ ԴՈՒ ։

Իսկ երբեմն ներհակ այսմ՝ բայն դնի զօրութբ , և ա-

նուն բային ներգործութբ. որպ, * ՚ի փառաւորութէ դժուա-րին կիրք, և ՚ի խոնարհութէ հեշտալիք ||. որ ՚ի փա-ռաւորութենէ յառաջ գան դժուարին կիրք, եւ այլն. Խփնոս ։

## ԳԼՈՒԽ. ԺԲ ։

### Յաղագս երկրորդ համաձայնութեան բայից. նամ

### Յաղագս խնդրոյ բայից ։

Բայք յետ համաձայնելոյ ընդ այնս՝ որք ասին անուն բայի, և նշանակեն զոր գործողութեան, պահանջեն համաձայնիլ և ընդ այնս, որք ասին խնդիր բայի, և նշանակեն զեզրն կմ զընթակայն գործողութեան, կամ զպատճառ նորին, և կամ զգործի, եւ այլն ։

Որդ՝ յութն մասանց բանի՝ այնք լինին տիրապէս խնդ-րիր բայի, որք լինին յատկապէս անուն բայի. որ է՝ ա-նունն, դերանունն և ընդունելութին, ևս և աներևոյթքն, ընդ որս և դերբայքն. որպ յայտ լիցի ՚ի ստորև գրելոցդ ։

Իսկ այլ մասունք բանի նիւթապէս միայն կարեն լինել խնդիր բայի. և Նախ՝ նոյն ինքն դիմաւոր բայն. որպ, * Յաճախաբար դնէ զետուրն ինձ ||. Ոսկ. Է. 35 ։ Ուր բայս ետուր՝ ՚ի հայցական հոլովս լեալ է խնդիր բայիս դնէ ։

Երկրորդ՝ մակբայն. որպ, * Զայս գիտես՝ մի՛ յանյուսուն կարծիս ձգեր ||. Լամբ. ասդ. 87 ։ Ուր մակբայս գիտէ՝ է խնդիր բայիս մի՛ ձգեր. որպ թէ ասէր. յասելն զաւթի՝ միթէ՞ մեռելոց առնիցես սքանչելիս, մի՛ կարծիցես՝ թէ զաւիթ գիտէ ասելով՝ ունի կարծիս անյուսութեան ։

Երրորդ՝ միջարկութիւն. որպ, * Թառաչս և ողբս ՚ի նմա-նէ յառաջ բերեալ հաստատէ ||. Լամբ. ասդ. ճձը. 6 ։ Ուր միջարկութիւնս ողբ՝ է խնդիր բայիս յառաջ բերել հաստատէ ։

Չորրորդ՝ շաղկապն. որպ, * Ջետն խորոյ եդ ՚ի միջի ջերկուց օրինացն յայտ առնել ||. Սարգ. յոհ. Է ։ Ուր շաղկապս եւ՝ է խնդիր բայիս եդ ։

Հինգերորդ՝ նախադրութիւն . որ , * Զայս ամ (գոլու-
թիւն) տուեալ . . . . գլուխ գոլութեան զերկրի դնել || . Ովս ·
Ժ · 11 : Ուր նախադրութիւն երից է խնդիր բայիս դնել :
Վեցերորդ նաև տառք յօդեալք և հեգեալք կարեն լի-
նել խնդիր բայի . որ , * Հաւաքեալ փոխեցին ՚ի յոյն
լեզու (զե՛զմ՝ ինչ) , ոչ զայն՝ առ ժէ . և զայն և զնոյ՝
առ ֆէ . և զերեսն՝ առ էլ . և զլայ՝ առ ոէ || . Խոսր . Գ :
Այլ այսպիսի խնդիրք՝ յայտ է թէ ոչ են ՚ի յաճախ գործ-
ածութեան , քայց եթէ ՚ի մեկնութիւն բանից :
Դարձեալ երբեմն նաև ամբողջ բանք լինին խնդիր բայի .
որ , * Եւ ՚ի հնումն վայր տպաւորութեան օրինակաւ նկարա-
գրեցեր՝ զդարձարուքն առ իս , և ես դառնամ առ ձեզ || .
Նար · ԺԷ : Ուր բանս դարձարուքն առ իս՝ է խնդիր սեռա-
կանի բայիս նկարագրեցեր :
Այլ այդ՝ որովհետև բայք որպէսպէս են սեռին , որպէս-
պէս օրինակաւ խնդիրս պահանջեն : Ներգործական բայք ,
որպէս և համարակք և կրաւորականք՝ առնուն նախ՝ զխնդ-
իր սեռի . և երկրորդ՝ զխնդիր բնութեան : Իսկ այլ ամ՝
բայք առնուն զխնդիր բնութեան և եթ . զորոց առնմք խօսել
այժմ ՚ի մասնաւորի :

## ԳԼՈՒԽ · ԺԸ ·

### Յաղագս խնդրոյ սեռի՝ Ներգործականաց և Համարկաց բայից ·

Ներգործական բայք առ հասարակ առնուն զխնդիր սեռի ՚ի հայցական հոլովի . որ , * Զքարինս ողորկեսցեն ջուրք || . Յոբ · ԺԴ · 19 : Ուր հայցական անունդ քարինս՝ է խնդիր սեռի ներգործական բայիս ողորկեսցեն :
Նոյնպէս և համարական բայք՝ յորժամ վարին իբրև ներգործական , առնուն զխնդիր սեռի ՚ի հայցական հոլովի . որ , * Քանզի յիմարն յիմարութիւն խօսեսցի , և սիրտ նորա զնանրութիւն խորհեսցի || . Եսայ · ԼԲ · 6 : Ուր հայ-

ցական հոլովքս յիմարութ̄ և շնորհաբանութ̄ են խնդիր սեռի
հատուցական բայից՝ խօսելոյ և խորհելոյ ։

Այլ ևս գիտելի է, զի երբեմն այս խնդիր սեռի զօրութիւն դնի․ որպէս, * Երանելի այն ոչ է՝ որ ուսուցանէ․ այլ՝ այն, որ առնէ և ուսուցանէ ||․ Վարք հարց․ Է ։ Ուր զօրութիւն կայ խնդիր սեռին․ որ է՝ [illegible] այ․ որպէս թէ ասէր․ ոչ է այն երանելի՝ որ զբանն միայն ուսուցանէ․ այլ՝ այն, որ առնէ զայն, ևն ։

Երբեմն ևս խնդիրն նախընթաց բային լինի զօրութիւն խնդիր հետևեալ բային․ որպէս, * Մի գանձէք ձեզ գանձս յերկրի, ուր ցեց և ուտիճ ապականեն․ և ուր գողք ականահատանեն և գողանան ||․ Մատթ․ Զ․ 19 ։ Ուր բառդ գանձս՝ որ է խնդիր սեռի բային՝ մի գանձէք, լեալ է զօրութիւն խնդիր սեռի նաև յաջորդ բայիցդ՝ ապականեն և գողանան․ որպէս թէ ասէր․ ուր ցեց և ուտիճ ապականեն զայն, և գողք զնոյն գողանան ։

Դարձեալ՝ այս խնդիր սեռի երբեմն յայլմէ բայէ ևս խափանի․ որպէս, * Գիտէ Տէր ՚ի ժամու շնորհել զպիտոյսն ||․ Վարք հարց․ Է ։ Ուր բայդ՝ շնորհել ինքինն լեալ խնդիր բային գիտէ՝ արգելեալ է զխնդիր սեռի նր ։ Այլ զայսմանէ ունիմք խօսիլ ՚ի գլուխն ԼԵ, որ յաղագս աներևոյթ բայից ։

Գիտելի է դարձեալ, զի ներգործական բայք ինչ երբեմն զերկուս հայցական խնդիրս առնուն․ զմին՝ իբր խնդիր սեռի, և զմիւսն՝ իբր խնդիր բնութ̄․ Եւ զայն պէսպէս օրինակաւ ։

Երբեմն փոխանակ ուղղականի, մնացական բայքդ առնեմ և տանեմ․ որպէս, * Որդ՝ դու զո՞ առնես զքեզ ||․ փոխանակ ասելոյ, ո՞ առնես զքեզ․ Յովհ․ Ը․ 53 ։

Երբեմն փոխանակ տրականի․ որպէս, * Հարցից և ես զձեզ բան մի ||․ Փոխանակ ասելոյ, հարցից ձեզ զբան մի․ Մատթ․ ԻԱ․ 24 ։

Երբեմն փխն պատճառականի․ որպէս, * Եւ ուսուցանէր զնո

տուակօք Եզեկ. ԻԷ || . փխնկ ասելոյ, զբազում իրաց.

Այլ պարտ է զգուշանալ յայսպիսի ոճոյ ։ Մարկ. Դ. 2։

Երբեմն և փխնկ գործիականի. և այս՝ յուէտ յանորոշ հայցականս. զր, * Եւ որ արբուսցէ միում՝ ի փոքրկանցս յայսցանէ բաժակ մի ջուր ցուրտ միայն յանուն աշակերտի, ամէն ասեմ ձեզ, ոչ կորուսցէ զվարձս իւր || . Մտթ. Ժ. 42. փոխանակ ասելոյ, բաժակաւ. ուր զնի. Մարկ. Թ. 40։ Այսպիսի հայցական հոլովք՝ որք դնին փխնկ գործիականի, յաճախ ՚ի գործ ածին ՚ի յարաբերականս ներգործական բայից. զր, * Սէրն զոր սիրեցեր զիս, ՚ի նմ իցէ || . փխնկ սիրով որով սիրեցեր զիս. Յովհ. ԺԷ. 26։

Գիտելի է և, զի ոմանք ՚ի ներգործական և ՚ի հասարակ բայից երբեմն փխնկ հայցականի առնուն զխնդիր սեռի յայլ հոլովս. որպիսի են բայքս, Լսեմ. հաւատացնեմ. վկայեմ. ասեմ. երանեմ. մեղադրեմ. անիծանեմ. արգահատեմ. զաստիարակեմ. խնամարկեմ. հովուեմ. գթեմ. համբուրեմ. նենգեմ. առնում վայելեմ. ճաշակեմ. ուտեմ. ըմպեմ. և այլ ևս բազումք։ Եւ ևս՝ ունիմ. տանիմ. խոստովանիմ. խորհիմ. սկսանիմ. եւն.

## Օրինակ։

* Դու ոչ լուեր քո աղօթիցն, և զձայն կամիս՝ զի լսիցէ || . Ոսկ. ՚ի Մեկն Մտթ. ԺԵ. 28։ Ուր բայս լուեր՝ փխնկ հայցականի առեալ է խնդիր սեռի զտրական հոլովք աղօթիցս։ Ըստ այսմ է և ՚ի յաջորդ օրինակսդ։

* Եկն եհարց զողջունէ եղբարցն իւրոց || . Ա. Թագ. ԺԷ։

* Հայր վկայէր վերստին ծննդեանն || . Զաքար. Կաթ։

* Եւ զիմորդ տուոցէս անձին խմում մարդ՝ գրեալս Ը անմարդիս || . Նարեկացի. ՚ի Բանն. ԽԱ։

* Երանեմ մանկանցդ եկելոց ծառայել քեզ || . Մագիստ։

* Որ մեղուցեն անձին՝ գտցէ հանգիստ յամի || . Վրք. հարց։

Բայց պարտ է և գիտել, զի այսպիսի բայք ոչ միշտ այսպէս վարին. այլ՝ բազում անգամ և առնուն զհայ-

յական. զր, * Մի՛ խօսիր ընդ իս 'ի ծածուկ, և մի՛ լուեր զխորհուրդս լուսոյ 'ի մէջ խաւարի || . Եղիշ. ը.
* Զայս՝ ինքն ած վճռեցաց || . Խորենաց. 'ի ձեռն աղաւնացեց ։
* Դաւիթ երգոնէ զմարդ խորտակել 'ի տնէ || . Գող. լուա ։
* Որ անիծանիցէ զած՝ մեղս ընկալցի || . Ղեւ. իդ. 15 ։
* Խնամարհեցեր զորդիս ադամայ || . 'Ի շարականոց. կանոն. ե ։
Իսկ ներգործական բայքս՝ երկիրպագանեմ կամ երկըրպագեմ, յաղթեմ և սամանեմ, հասարակօրէն առնուն զխնդիր սեռի 'ի վերջահոլով տրականի. զր, * Երկըրպագեցուք ածային որ նշանիս || . 'Ի շարականոցն. զէ ։
* Զօրայոյս զմեզ, զի յաղթեցաք այնմիկ՝ որ յաղթահարեաց զբնութիւն մեր || . Իգնատիոս . վէր . ճ . 19 ։
* Ոչինչ կարեհին սամանել նմա || . Յովհ . կոր ։
Ըստ այսմ վարին բազում անգամ և բայքս՝ ստունգանեմ, պաշտպանեմ, ևն. զր, * Մինչյեւ այսօրդ առաջի կայ, մի՛ ստունգանեցաք պատուիրանին || . Սարգ . յակ . 10 ։
* Կամօք հօր և իւր ըն ածութեն՝ քս պաշտպանեցաց մարդկային փրկութե || . Լամբ . պաշ ։
Պարձեալ կան և բազում բայք չէզոքականք, և և կրաւորականք, որք ուրեք ուրեք իբր ներգործականապէս վարելով՝ խնդիր սեռի առնուն 'ի հայցական հոլովի. որպիսի են բայքս, Լռեմ . անցանեմ . յանցանեմ . առաջնորդեմ . սպասաւորեմ . թերահաւատեմ . բարեպաշտեմ . յաչաղեմ . խնայեմ . հառաչեմ . աղաղակեմ . աղօթեմ . մաղթեմ ։ Ցեղամ . ըղձամ . բաղձամ . հոգամ . յուսամ . խանդամ . փութամ . վստահանամ . զանխլանամ . հաւատամ . մարգարէանամ . տեղեկանամ . անգիտանամ . ոգիտանամ ։ Պատճառիմ, վստահիմ . արածիմ . հոտոտիմ . հաճիմ . օգտիմ . կարողիմ . տարակուսիմ . պարծիմ . հայիմ . նայիմ . ևն ։

## Օրէնք ։

* Եթէ տղայքդ լռեն զօրհնաբանութիւն, քարինքդ աղաղա-

կեսցեն || · Մաքբէ վերծանող · Ճառ Գալըստ :
* Ամենայն ինչ՝ որ անցանէ զչափն, չուայտութի է || · Իգն :
* Իսկ եղբայրն յանցեաւ զամենայն || · Վարք հարց · Գլ · Է :
* Ամենեցուն աղաւաղութ (զ) հաւատս || · Լամբ · 'ի սաղմ :
* Զհզօրին ձեռն իբր ապիկար թերահաւատէ || · Նար · Ճ :
* Զիւրեանց փրկութին յաղագէն || · Լամբ · 'ի հասարակն :
Այլ պարտ է խնայելով վարել զայսպիսի խնդիրս : Իսկ Թէ այսոքիկ բայք 'ի վարիլն չէզոքականապէս՝ զորպիսի խնդիրս առնուն, համդերձեալ եմք ցնել 'ի կանոնս չէզոքական բայից :

## ԳԼՈՒԽ · ՃԹ :

### Յաղագս խնդրոյ էութեան ներգործական բայից :

Բայց ներգործականք բայ 'ի խնդրոյ սեռին՝ առնուն նաև զխնդիր էութե 'ի պէսպէս հոլովս · և այս չորեքկին · Նախ՝ իբր բուն էութեան, որ և սոսի բառն ցուցեր էութեան · իր այնպիսի՝ զոր էութի բային իբ առաջին նշանակութե խուռն պահանջէ · Որգ բայս առաքել՝ իբ ինքեան պահանջէ առնուլ խնդիր էութե զնախդրիւ տրական · որ, * Առաքեաց առ մեզ զհովիւս իւր || · Մծբ :
* Առ խոստացեալս խոստացեալ Ճանապարհ առաքէ ած || · Ագաթ · Էա · 8 : Յորս նախդրիւ տրական հոլովքս՝ առ մեզ, և առ խոստացեալս՝ են բուն խնդիր էութեան բայիս առաքել :

Երկրորդ՝ իբր յարմարողական, կամ իբ յարմարութե · իր այնպիսի խնդիր՝ որ դնի 'ի տեղի բուն խնդրոյ էութե յարմար այնմ նշանակութե՝ զոր ունի բայն 'ի բանի անդ · Որգ եթէ բայս առաքել, որ իբ ինքեան պահանջէ առնուլ զնախդրիւ տրական, փոխանակ նր առնուցու զպարառական · կամ զայլ հոլով 'ի ձեռն նախադրութե · որ · * Հորդան իւրոյ զօրուն տուեալ՝ առաքէ զկողմամբք Ճուաշ գաւառի || · Յովհ · Կաթ : Ահա ես առաքեմ 'ի վր քո · · · չա-

նաձանձ || · Եզեկ · Է · 21 ։ Յորս բառքդ՝ չնորհմանց ։ և
՚ի վր̄ գս՝ եղեալ են փոխանակ բուն խնդրոյ տիրել բայ-
ին՝ իբր խնդիր յարմարական · ո՛ր յարմարեալ և եղեալ
՚ի տեղի բուն խնդրոյ տիրելոյն ։ մինչև ոչ ևս զօրութ̄
պահանջել զայն ։

Երրորդ՝ իբր Երկրորդական · ո՛ր այնպիսի խնդիր՝ զոր բայն
ը̄ բնութե̄ իւրում երկրորդաբար պահանջէ · Որ̄ բայս
տիրել՝ երկրորդաբար պահանջէ առնուլ զխնդիր ՚ի
հոլովս բայառական · որ ։ * Ազատեա ՚ի մեզ սր̄ զօգ-
նութի̄ ՚ի լերանէ սր̄յ քումմէ || · Հաք · ԽԷ ։ * ՚ի բար-
ձանց իւրոյ տիրեցոց հուր յոսկերս իմ || · Ողբ · Ա · 13 ։
Յորս բայառական հոլովքս՝ ՚ի լերանէ ։ և ՚ի բարձանց՝
գնին իբր երկրորդական խնդիր բայից՝ տիրեա ։ և
տիրեցոց ։

Չորրորդ՝ իբր պատճառական ։ կամ ը̄ պատահման · ո՛ր այն-
պիսի խնդիր՝ որ ը̄ պատահման դիպի բային · որ̄ նոյն տ-
տիրել բայն կարէ առնուլ ը̄ պատահման զխնդիր յայլ-
և այլ հոլովս ։ և կամ նախադրութբ̄ք ։ կամ դերբայիւք ·
որ · * Որ ասեսցուք քում գալստեանդ տիրեցեր յո̄ զո̄է
մարգարէսն || · Հաք · ՂԷ ։ Ուր ուղղական հոլովս տեղա-
ցոր՝ է պատահական խնդիր բայիս տիրեցեր ։

Ըստ այսմ և բայս գործածել՝ չորեքկին առնու զխնդիր ·
Նախ՝ ը̄ ինքեան՝ ՚ի նախադրիւ տրական · որ ։ * Գործա-
րեաց առ ինքն զբազմութի̄ զօրաց իւրոց || · Ակաբ ։
Երկրորդ՝ յարմարական՝ ՚ի պարառական հոլովն ։ կամ
նախադրութբ̄ · որ ։ * Ոչ կարէր զմիով տեղեաւ զզօրսն
գործածել || · Ճառընտ ։ * Զլինելը լնալը նահատակայն
շուրջ զիւրև գործածեցեր || · Եզեկէ · Է · * ՚ի գործածել
երկնաւորին զԹագաւորս ՚ի վր̄ նր̄՝ ձիւնասցին ՚ի սաղմոն ||·
Սաղ · ԿԷ · 15 ։
Երրորդ՝ երկրորդական՝ ՚ի բայառական հոլովն · որ ։
* Գունդս գունդս յամ աշխարհայն գործածեցեր || · Եզեկ · Է ։
Չորրորդ՝ պատահական՝ ՚ի պէսպէս հոլովս · Յուղղա-
կանն · որ ։ * Գործածէ զնա̄ Թագաւորս ՚ի վր̄ տերանց ||·

Ծանօթ · Ճ · I ։ ՚Ի գործիականն · որ ՚ * Բարի խոստմամբք
զանձն ՚ի մի վայր գումարէին · || Յովհ · հոբ ։

՚Ի ներգոյականն · որ ՚ * ՚Ի ժամանակի ասա խոսրովայր-քայ պալատից զօր բաղում գումարէր՝ առաքէր Հերոսակս
վարդանայ || · Յովհ · հոբ ։

Դերբայից · որ ՚ * Ջօրս եւ գումարեցէ տարապարտուց ՚ի վրն նշ՝ ջնջել զնա || · որ առ ՚ի ջնջել զնա · ա · Մով · է · 12 ։ Այնպէս խմա եւ վն այլոց ներգործական բայից ։

Բայց պարտ է գիտել ՚ զի ներգործական բայք երբեմն առնուն սոսկ զխնդիր բնութն ըստ ինքեան · երբեմն սոսկ երկրորդական · երբեմն սոսկ յարմարական ՚ եւ երբեմն սոսկ պատահական ։ Եւ եւ՝ երբեմն առնուն զխնդիր բնութն ըստ ինքեան հանդերձ երկրորդականաւ · եւ երբեմն հանդերձ պատահականաւ ։ Երբեմն եւ առնուն ըզխնդիր յարմարական հանդերձ երկրորդականաւ · եւ երբեմն հանդերձ պատահականաւ ։ Եւ այլ երբեմն զխնդիր երկրորդական հանդերձ պատահականաւ ։ Եւ զայսոսիկ մարթ է տեսանել ուրեք ուրեք յօրինակսն՝ զորս հանդերձեալ եմք դնել ՚ի ստորեւ · որոց յոմանս գտանի մի խնդիր միայն ՚ եւ յոմանս երկու ՚ եւ կ աւելի եւս ։

Իսկ առ ՚ի որոշել՝ թէ ներգործական բայք յոր հոլովս պահանջեն տիրապէս զխնդիր բնութն ըստ ինքեան ՚ դիցուք զերեքտասան կանոնս հանդերձ քանի մի օրինակօք ։ Եւ թէպէտ զորս կանոնադրեմք աստ՝ նոքին զայլ խնդիր եւս առնուն ՚ բայց այնոքիկ ոչ են բուն խնդիր · այլ կամ երկրորդական ՚ կամ՝ յարմարական ՚ եւ կամ պատահական · եւ առ ՚ի դիւրացուցանել զայս եւս՝ դիցուք օրինակս ինչ յարմարական եւ երկրորդական խնդրոց · զի նոքօք մարթասցի ուսանօղն եւ զայլսն իմանալ ։

Եւ թէպէտ նորավարժից դժուարին է որոշել զսոսա ՚ սակայն եթէ բարւոք առցեն ՚ի միտ՝ զորս դնեմք աստ ՚ յետ քաջ վարժելոյ՝ դիւրին լինի նց որոշել ։ Եւ եթէ չկարասցեն եւս որոշել՝ չէ ինչ · զի կարեն վն ամի ասել
խնդիր բնութն · եւ այնպէս վարել ։

Կանոն. Ժ.

Բայք՝ որք ասին առաջէն կոչեն, զի որք նշանակեն զգործողութիւն առնելոյ զիմն այս ինչ, կամ համարելոյ և կամ՝ անուանելոյ զիմն այսպիսի ինչ, առնուն զխնդիր բը-նութ. յուղղական հոլովն. և այս են սակաւ յոյժ, որք և հասարակօրէն դայլ խնդիր առնուն երբեմն զյարմարական կամ զերկրորդական. որպիսի են բայքս, Անուանեմ. Ձեռնադրեմ. Համարիմ. վարկանիմ. դաւանիմ. անուանեմ. յորջորջեմ. եւն.

Օրէնք.

* Այլ զմ մեղք . . . ձեղուար միայն տանէն զմարդն. իսկ ամբարտաւանութիւն ստորնոյ դլխովլն առնէ ||. Սարգ.
* Զահեակն հեթանոսայ՝ ով չետնադրեցէն ||. Ներսէս.
* Զեղբայրս չատագովս օրինայ՝ զտաչոնէչ նմին հոմարեմ ||. Լամբ. եկեղ.
* Բանս զկեանս աշխարհիս անուանէ ||. Յովհ. Իմաստ. Ժէ.
* Բան զնա աւետարանիչս յորջորջէ ||. Նանայ Ժ. Ι.

Ոմանք երկրորդաբար կամ ըստ պատահման առնուն զուղղական խնդիր. զր, * Զկէն քաջութեան մարտի իւրոյ՝ նշան յաղթութեան կանգնէր ||. Յովհ. կաթ. Ուր ուղղական հոլովս նշան՝ է երկրորդական խնդիր բայիս կանգնէր. իսկ բուն խնդիրն զօրութ դնի ՚ի ներգոյական հոլովն, այս է՝ ՚ի նմա.

* Դիցուք երկուց բաժանեալ ոմանս գլուխ անկեան և Թագաւոր զկէսն քն ||. Շնորհալի. Եղբ.
* Պատուական կենդանի զինքն մատուսցէ կենդանութ ան առաքինութ ||. Նոյնն. ընդհանր.

Ոմանք ևս յարմարաբար առնուն զուղղական. զր, * Իմաստասէրքն փոքր աշխ ասացեն զմարդ ||. Խոսրով. Ուր ուղղական հոլովս փոքր աշխ՝ է յարմարական խնդիր բայիս ասա-ցէն. որ աստ ունի զնշանակութիւն անուանելոյ. իսկ ինքն

պահանջէ առնուլ զխնդիր 'ի տրական հոլովն · որ , * Եւ
տաց ցնա · · · · և ես քեզ տաց || · Մատ · ԺԶ · 17 ։
Ըստ այսմ է տեսանել և 'ի յաջորդ օրինակդ , որք
թէպէտ ըստ ինքեան պահանջեն առնուլ զխնդիր յայլ հո-
լովս , բայց 'ի տեղի նորա առնուն զուղղական ։

* Պղտորութիւն կոչէ զասոփ կեանս ըստ մարգարէին , որ
զինքն և զմեզ հարսն դարձուցանելոց կոչէաց || · Խոսրով ։

* Աղօթ- ժողովել զնա մեծ քաղցրութեամբ բարուցն || · Խոր · Ե ·

* Կորուսեալն զանուանն քաղումն եփրաթու || · Է · Մատ · Ա · 36 ։

Այլ ասա գիտելի է , զի ներգործական բայք երբեմն
առնուն խնդիր զբայանուանս իւրեանց յուղղական հոլովն՝
'ի տեղի գործիականի · որ , * Եւ Եւաց եղեկիա լալին
մեծ || · որ լալով մեծաւ · Եսայ · ԼԸ · 3 ։

* Ըն զմարդիկ վերստին ծնանել ծնունդ անախտ և հոգև-
որական · և դու ո՞չ հիանաս || · Մարգ · Յոհ · Գ ։

Այսպիսի ուղղական հոլովք կարեն ևս համարիլ իբր
անորոշ հայցական՝ փոխանակ գործիականի եդեալ · որ է
տեսանել յայս բանս · * Ջհարուածս թշնամոյ հարի ըզ-
քեզ || · որ հարուածովք թշնամոյ · Երեմ · Լ · 14 ։

## Կանոն · Է ։

Բայք՝ որք ասին Երկդիմի կոչին , որ որք ունին զնշանա-
կութիւն տուչական կամ իբր տուողական , առնուն զխնդ-
ջահոլով տրական · որպիսի են բայքս , Տամ · ընծայեմ ·
նուիրեմ · պարգևեմ · շնորհեմ · աւանդեմ · մատուցա-
նեմ · պատրաստեմ · զոհեմ · մատակարարեմ · մա-
տուցանեմ · սեղանաւորեմ · բաշխեմ · արբուցանեմ · ջամ-
բեմ · բրդեմ ։ Տնտեսեմ · առատաձեռնեմ · պտղաբե-
րեմ · հատուցանեմ · մատնաւորեմ · օրինադրեմ · Թելա-
դրեմ · յանձնեմ · վաճառեմ · պարտիմ · մատնեմ · եւ ։
Եւ ևս՝ աւետեմ · քարոզեմ · վկայաբերեմ · ուսուցա-
նեմ · ծանուցանեմ յուշ առնեմ · պատուիրեմ · հրամայ-
եմ · ասեմ · երգեմ · նուագեմ · պատասխանեմ · խոս-

տանամ · ուխտեմ · խոստովանիմ · պայմանեմ · տնօրինեմ ։ Ցուցանեմ · յայտնեմ · նօթճեմ · նշաւակեմ · յաջողեմ · դիւրեմ · հաւասարեմ · յարմարեմ · սեփականեմ · աշակերտեմ ։ Կամիմ · սատարեմ · պատրաստեմ · յարդարեմ · հանդերձեմ · հորդեմ · լայնեմ · բանամ ։ Եւ այլ ևս բազում բայք՝ որք են նշանակութեամբ սոցին վարին ։

## Օրինակ ։

* Տուր իմաստնոյն պատճառս, և իմաստնագոյն ևս լիցի ‖ · Առակ · 9 ։
* Աւանդեաց ի կորոյ հնազանդելոյն խորհուրդս ‖ · Իմաստ ·
* Ձիրս ընծայից պայծառ պարգևաց ոսկենազգեան զարմից եղևնեցին ‖ · Նարեկ · ղէ ։
* Ըստ նմին օրինակի և առաքելոյն դասք աշակերտեցին հեթանոսաց զջուրն կենդանի ‖ · Իգնատիոս · ծ · 1 ։
* Հաւատարմանալ գտանէ զնոյն կարօտելոյ ‖ · Ղուկ · պատեւ ։
* Կամիմք յընչիցն ծառայութե ազատանալ, և խորհրդեան զգացութի մեզ օրինադրեն ‖ · Խոսրով ։

Ոմանք երկրորդ բնութեան և իբր են պատահման առնուն զկեր-ջահոլոյ տրական · որպէս · * Պատահէ ( զնա ) հատուցման ժամանակին ‖ · Իգնատ · ծէ · 14 ։ Ուր տրական հոլովս ժամանակի հատուցման՝ է երկրորդական խնդիր պատահելոյն · իսկ բուն խնդիրն զօրութեամբ ունի · այս է՝ յիշխանութե կարգեալ ։
* Ընկալան զսերմն բանին, և աճեցուցին զբարեաց արդիւնս տուողին սերմանն ‖ · Իգնատ · ը · 5 ։

Ոմանք են յորդորութե առնուն զկերջահոլոյ տրական · որպէս ·
* Բարի առնէ տէր բարեաց ‖ · Սաղ · ճէբ · 4 ։ Ուր բարեացն է յարմարական խնդիր առնելոյն · զի ինքն են իւքեան պահանջէ զուղղական · որպ եղաք ՝ի կանոնն · ա ։ Ըստ այսմ է և ՝ի յաջորդ օրինակսդ, որք թէպէտ են ինքեան զայլ խնդիր պահանջեն, բայց են այնր առնուն զկերջահոլոյ տրական · և այս՝ կամ վասն վայելչութե, և կամ վասն այլազգ նշանակութե ։

* Շրթանց և լեզուոյ ճնեղ դրունս աղաչեմք || · Շնորհ · ընդհ ։
* Լուսաւորեա ինձ զողորմութեան քո ճառագայթ || · Նար · Ճ ։

Ոմանք ևս՝ մանաւանդ թէ բազումք ՚ի բայից թէպէտ և չպահանջեն զխնդրիւ տրական, բայց է այնր առնուն երբեմն զվերջահոլով տրական իբր յարմարական · որ ·

* Մի յաւերժուր հեծութեամբ ցաւ || · փխնկ ասելոյ, մի յաւելուր զցաւ ՚ի հեծութիս · Նորէն · ԺԷ ։
* Որ խոնարհաւորն է, յոժարէ իւր զմեծարինս || · Մծէ · ԺԲ ։
* Արեգակնաբար ծագեմ տէր ումեք զպարգևան || · Սարգ ։

## Կանոն · Գ ։

Բայք՝ որք ասին Ներգործ Նորէ, թ որք նշանակեն ըղգործողութի ածելոյ զիմն առ այլ, առնուն զխնդրիւ տրական · որպէս են բայքս, Ածեմ · բերեմ · տանիմ · վարեմ · մուծանեմ · ձգեմ · ձկտեմ · մղեմ · արկանեմ · ընկենում · թափեմ · թօթափեմ · հեղում · զեղում · հոսեմ · ամամ · սրսկեմ · ցօղեմ · ծագեմ · ծաւալեմ · կարկառեմ · համբառնամ · յղեմ · յուղարկեմ · եա ։ Եւ ևս՝ ստիպեմ · տագնապեմ · հարկեմ · բռնադատեմ · նուաճեմ · պարտաւորեմ · դրդեմ · գրգռեմ · յորդորեմ · հրապուրեմ · հրաւիրեմ · համոզեմ · ամոքեմ · մարզեմ · կրթեմ · ուղղեմ · սահմանեմ · վերագրեմ · կատարեմ · համառօտեմ ։ Ամփոփեմ · ժողովեմ · հաւաքեմ · կապեմ · պնդեմ · կարգեմ յարեմ · յերիւրեմ · ագուցանեմ · մխեմ · վարսեմ · ներգործեմ · ընդունիմ · գրաւեմ · յանկուցանեմ · վիճակեմ · շրջեմ · թեքեմ · կործանեմ · շարժեմ ։ Փոխեմ · փոփոխեմ · փոխարկեմ · փոխակերպեմ · կրկնեմ · երկրորդեմ · յաւելում · յորդեմ · յաճախեմ · պատառեմ · հերձում · վատնեմ · ծախեմ · ցրուեմ · թքանեմ · բուրեմ · փչեմ · հնչեմ · կոչեմ · բարբառիմ · հարցանեմ ։ Եւ այլ ևս բայք բազումք՝ որք ըստ սոյին նշանակութե վարին ։

Օրինակ ։

* Խոստովանեսցին և վնասապարտ զանձն առնել ՝ի խոնարհութիւն անձէ զմեզ, և ՝ի զեղջս ՝ի պղծոյն || ։ Խոսրով ։
* Դնեք ոչ երբէք բռնութբ զոք զորբէն ՝ի կորուստ || ։ Եզնիկ ։
* Ոչ դադարեն մատուցանել զխոստովանութիւն յաւազաստ խաղաղութեան երկնաւոր հարսանարանին || ։ Շնորհալի ։ ընդհ ։
* ՝ի մահուանէ ՝ի կեանս զմարդիկ փրկեցեր || ։ Դաւիթ ։
* Իսկ որ ՝ի տիղմն մեղաց զանձինս ընկենուն, արտաքսեալ յայնմ լուսոյ՝ խաւարին ծածկին || ։ Խոսրով ։
* Կործանեսցէ առիս զաշխ ամենազօրն || ։ Նար ։ ՝ի Բանն ։ զէ ։
Ոմանք երկրորդական առնուն զնախդրիւ տրական ։ զի,
* Եւ հալածէ ( արտաքսեալ ) յայրապետոյ զնմ եղբայր իւր ՝ի գաւառս աքսորանի || ։ Խոր ։ Է ։ 58 ։
* Աճեցուցանէ զճաճանչ ճառագայթից ը երկիր ամ || ։ Կոչ ։
Ոմանք ը յորմորաբէ առնուն զնախդրիւ տրական ։ զի,
* Ո՞ իցէ ՝ի ձենջ մարդ՝ զոր խնդրեսցէ որդի իւր հաց, միթէ քա՞ր տայցէ նմա || ։ փոխանակ ասելոյ, յորմէ խնդրիցէ ։ Մատ ։ Է ։ 9 ։ և Ղուկ ։ ժա ։ 11 ։
* Մի ևս համարեսջիք զնոսա ՝ի մարդիկ || ։ Եսայ ։ ԻԲ ։ 8 ։
* Համբաւն ամբաստանեսցէ զմեզ ՝ի խոստովանն կրօնից || ։ Գրիգ ։ նար ։
Ոմանք ևս՝ մանաւանդ թէ բազումք ՝ի բայից փոխանակ վերջահոլով տրականի առնուն զնախդրիւ տրական՝ իբր զխնդիր յարմարական ։ զի, * Մատուցանէ ՝ի մարդիկ զպատուհասն և զշնորհս բժշկութե || ։ Յովհ ։ Իմաստ ։ ծը ։
* Ընդ մարդ խօսելով՝ զուշ մտաց հարկաւորապէս ընդ բարբառն ածեցուցեմք || ։ Լամբրոն ։ առաքն ։
* Պարտաւանեցին զնա ՝ի նիւթ խորհնին հաւատոյ || ։ Նոյն ։ տաթեւ ։

Կանոն ։ Ժ ։

Բայք՝ որք ասին չորրորդ խորհի, զի որք ունին զնշանակութիւն բայառոդական ։ ( այս է՝ բառնալոյ կամ առնլոյ զինչ յայլմէ ) , առնուն զխնդիր ՝ի հոլովն բայառական ։ որպէս

են բայք ․ Բառնամ․ առնում․ կորզեմ․ խլեմ․ յափշտակեմ․ կողոպտեմ․ գողանամ․ որսամ․ ստանամ․ գըտնեմ․ տուժեմ․ քաղեմ․ քանդեմ․ քերեմ․ խառնեմ․ կըթեմ․ հանեմ․ արձակեմ․ լուծանեմ․ ազատեմ․ փըրկեմ․ քերծում․ կեղեւեմ․ մերթեմ․ մերկեմ։ Ընտրեմ․ բաժանեմ․ անջատեմ․ որոշեմ․ քակեմ․ շորթեմ․ անջըրպետեմ․ հատանեմ․ մերժեմ․ փարատեմ․ հալածեմ․ նահանջեմ․ ընկրկեմ․ արգելում․ խափանեմ․ արտաքսեմ․ տարագրեմ․ վտարեմ․ վարատեմ․ զրկեմ․ զսպեմ․ վըրդովեմ․ սպառեմ․ ջնջեմ․ դատարկեմ․ եւն ։ Եւ ևս պարզեմ․ մաքրեմ․ սրբեմ․ քաւեմ․ նորոգեմ․ ապաքինեմ․ բժշկեմ․ կեցուցանեմ․ կենագործեմ․ արարչագործեմ․ շինեմ․ ձուլեմ․ տաշեմ․ կերպարանեմ․ կերպաւորեմ․ ստեղծանեմ․ ծնանիմ․ սկսանիմ․ բղխեմ․ ուտեմ․ ըմպեմ․ Պահանջեմ․ խնդրեմ․ հայցեմ․ մուրանամ․ զլանամ․ շահիմ․ ուսանիմ․ լսեմ․ ստուգեմ․ թարգմանեմ․ օրինակեմ։ Եւ այլ ևս բազում բայք՝ որք ըստ նշանակութեան սոյա վայրին ։

## Օրինակ ։

* Բարձէք ՚ի ձէնջ զչարութեան մախթութիւնս ձեր || ․ Եսայ․ Ա ։
* Եթէ առնուցուս զջուր ՚ի ծովէ, ոչ ինչ երեւի պակասութիւն նորա || ․ Մծբ․ ճառ․ Է ։
* Որ զբանս նորա պահէ, ելցէ ՚ի սրտէ զդժնդակ խնդս || ․ Ժողով ։
* Ջնջեա զմեղուցեալս մեր յամ ազգայինս շնորհօք || ․ Անանիա ։
* Ազնուագոյն խոնարհք զանձինս ՚ի նախանձու || ․ Մծբ․ Ը ։
* Մեքոք զձեր բաժինն ՚ի ձէնջ հատանելոց || ․ Եղիշէ․ Է ։
Ոմանք երկրորդէք առնուն զբայառականն․ որպէս․ * Արդարոց նշան ոչ ՚ի բարձանցն, այլ ՚ի խոնարհ || ․ Անանիա վրդ ։
* Ընկեցցէ յերկրէ զշրթունս նենգաւորս || ․ Մծբ․ Դ ։
* Յամուրլ վիմէն դեռ փնտռեցուցանէր || ․ Յովհ․ Իմաստ․ ԺԲ ։
Ոմանք ևս ըստ յորժամ առնուն զխնդիր բայառականն․ որպէս․ * Ջրոյն իւր յանկըրպէ ստացուածոյ անտի ընդ, և

Մեծաւ կարծէ || · Շնորհ · · Նազիանզ ։
* Հաստատեաց զՏն յանկերպարան նիւթոյ || · Իմաստ · ժա ։
* Զահ վառեաց զնա յառաւօտ լուսոյ անտի || · Ծննդ · ը ։

## Կանոն · Է ։

Բայք՝ որք առին հինգերորդ հոլով ՝ են որք ունին զնշանակութիւն պատմողական ՝ ( այս է՝ պատմելոյ ․ կամ խորհելոյ ինչ վասն իրք ) ՝ առնուն զխնդիր պատմական · որք են բայքս ՝ Գիտեմ · վիպեմ · ճառեմ · խօսիմ · ազդեմ · զեկուցանեմ · մրմնջեմ · գուշակեմ · աւետագրեմ · մատենագրեմ · համբաւեմ · հռչակեմ · բողոքեմ · վկայեմ · ամբաստանեմ · առակեմ · առասպելեմ · բարբառեմ · շաղփաղփեմ · եւն ։ Եւ ևս՝ խորհիմ · խոկամ · խորհրդածեմ · զմտաւ ածեմ · կարծեմ · իմաստասիրեմ · գիտեմ ։ Եւ այլ ևս քանի մի բայք՝ որք են նշանակութեան սոյն վարին ։

## Օրէնակ ։

* Պատմեսցուք կշռով զանպատումն փառութէ || · Սեւերեր · ...
* Մովսէս ինչ ոչ ճառեաց զհրեշտակաց լինելութէ || · Նոննոսի ։
* Հրեշտակք զնմանէ խօսեն պարծանօք || · Կոչ · ժգ · 24 ։
* Աղբեն ինքնակալին թէոդոսի ··· զշարժոյ || · Խոր · գ ։
* Զասահմանակից ազգացն ընկոսցանէ || · Գէորգ · Եպս · 5 ։
* Այս իմ է՝ զոր մրմնջէին զքէն առակօք || · Եզեկ · ժը ։

Ոմանք երկրորդականք առնուն զպատմական · զի ՝ * Ոչ գիտեք զճշմարիտն զմենջ իբրև զբամբասօղս մեր || · Աբր · հռոց ։
* Լուծգքէն մանուկ դու ՝ եթէ գտանդ երբեմն ելով այժմ հոլիւ դքեզ կայսրըն || · Մոփերոսաւ ։

Ոմանք ևս են յորժորգոնեան առնուն զպատմական · զի ՝
* Արք անօրէնք հուր հարին զքաղաքէ || · Աղթ · էն · 8 ։
* Հաներեն անուն չար զձէնջ վն որդւոյ մարդոյ || · Ղուկ ։
* Բիւր առասպելս յօրինեցին պարզ զնմանէ || · Խոր · Է · 70 ։

Կանոն · Ղ ·

Բայց՝ որք այսին վերջերութ հարթե, ՚ի որք նշանակեն ընդգծութեան առնելոյ զինչ իւիք՝ իբր գործեօք, կամ իբր միջնորդօք, առնուն զխնդիր գործիական. որպիսի են բայքս, Գործեմ. կոփեմ. հնձեմ. կշռեմ. փորձեմ. շօշափեմ. տեսանեմ. ըմբոշխնեմ. կերակրեմ. պարմանեմ. խնամեմ: Վարակեմ. ներկեմ. օծանեմ. մկրտեմ. ողողանեմ. լուանամ. արծարծանեմ. այրեմ. վառեմ. կիզում. խորովեմ: Ծոյեմ. վիրաւորեմ. խեթկեմ. գրթյեմ. սպանանեմ. սատակեմ. կոտորեմ. վատթարեմ. ջարանեմ. վտանգեմ: Կոծեմ. նեղեմ. խռովեմ. գանեմ. հարկանեմ. ձաղկեմ. չարդեմ. քանդեմ. պատժեմ. ահաբեկեմ. պարտեմ. յաղթահարեմ. ծանրաբեռնեմ. պղտորեմ. աղաւաղեմ. ապականեմ. թունաւորեմ. յաղեմ. համեմեմ: Զարդարեմ. պաճուճեմ. լուսաւորեմ. ծեփեմ. պատրուակեմ. հանուեմ. խնուեմ. ընուեմ. եւն: Եւ եւս՝ գովեմ. փառաւորեմ. մեծարեմ. պաշտեմ. ողջունեմ. քաջալերեմ. մխիթարեմ. խրատեմ. ողոքեմ. թախանձեմ. բամբասեմ. ստգտանեմ. իմանամ. դատիմ. կատակեմ. խաբեմ. պատրեմ. դաւաճանեմ. ըմբերանեմ. անգոսնեմ. նախատեմ: Եւ այլ եւս բազում բայք՝ որք առնըշանակութիւն սոյն հային:

Օրինակ:

* Աղաչեմք զձեզ եղբարք՝ առաւել եւ առաւելուլ ... եւ գործել ձեռօք ձերովք ||. Թեսաղ. Դ. 11:
* Լծակօք իմն կշռեր զհուր եւ զամենայն կենդանիս ||. Յովհ. հռե:
* Աչօք տեսանէր զտեսակալի տեսիլն || . Սարգ. Է. դեփ. 2.
* Կերակրեցէն զնա քաղցրութ բանին Ճշմարտութե || . Իգն. Ժ.
* Հոգւոյն ուղխից վտակօք ոռոգանէր (արարիչն) զարգաւանդ երկիր մտաց իմոց || . Յովհաննէս Իմաստ. Ա:
* Սգանանէ այր զընկեր իւր լեզուաւ || . Մծբ. Ճառ. ԺԲ.

Ոմանք երկրորդաբար և իբր ը դատաստանան առնուն զգոր-ծիական . որ , * Զի մի զպարզամիտս ՚ի ժողովրդոց պատիր բանիւքն յղեցեն ՚ի կորստեան իւրեանց խորխո-րատ || . Շնորհալի . ՚ի Թուղթն ընդհանրական .

* Զականջս նոցա ատամամբքն ՚ի բոց հրոյ || . Խոր . Է . 18 .

Ոմանք ը յարմարութեան առնուն զգործիական . որ , * Նուաւ ուսումն իշխանք նոցա զմարդասիրութի || . Եղիշ . Է .

* Միով գաւազաւ ճշմարտութեան դնդեցեն զմեզ || . Նոյն .

* Վարեսցէ զնս սրբութե և արդարութեբ || . Իմաստ . Ը . 3 .

Այլ գիտելի է , զի որովհետև գործողութիւնք համառա-կօրէն իւիք կատարին , բայց վն նշանակելոյ զգործողութիւն դրեթէ առ համարակ կարեն առնուլ զխնդիր գործիա-կան , մանաւանդ անցողականքն . որոց վն ոչ է հարկ տալ օրինակս .

Կանոն . Է .

Բայք՝ որք սակս ներներգործութեան հարկէ , որ որք նշանակեն ըստ ներգործել իւիք շուրջ զայլով՝ առնուն զխնդիր պարա-ռական . և այսք են սակաւ յոյժ . որք են բայքս , Պատել . պարապատել . շրջապատել . շուրջ փակել . յածել . փարել . զանցուցանել . եւն .

Օրինակ .

* Որ սիրեն զօրէնս , պատեն զինքեամբք պարիսպ || . Ագաթ .
* Շրջապատեալ զանձամբ խմով զսուգ դառնութե || . Ճառընտ .
* Շուրջ փակեալ զպարսպաւ զբոլոր քաղաքն || . Պատմ . աղէք .

Ոմանք՝ մանաւանդ թէ բազումք՝ ը յարմարութե առնուն զխնդիր պարառական . որ , * Զամենայն մնասս զիւր գոր-ծոյն զխորհրդականօքն արկանէր || . Եղիշէ վրդ . Գ .

* Ակ ծեր զխորհուրդ սքօղ զայնր քննութե || . Մծբ . ...

* Իսկ զգօսացելովքն , որ ՚ի հաւատս ոչ կամին գալ , ոչ՛ունայցէ զանձըն փայլատականցն ՚ի կիզուլ || Ագաթ .

Գիտելի է, զի ոմանք ՚ի ներգործական բայից զպարառական խնդիրն այնպէս սեռականեն ինքեանց, մինչև ՚ի տեղի խնդրոյ սեռի առնուլ զայն. որպէս, * Մի՛ որք յանմտայ . . . այպանեցէ զբանիւք մերովք || . Շնորհ. Ընդհ. Ուր պարառական հոլովս զբանիւք մերովք՝ եղեալ է իբր խնդիր սեռի ներգործական բայիս այպանեցէ: Ըստ այսմ է տեսանել և ՚ի յաջորդ օրինակսդ:

* Որ կատակէ զաղքատաւ, բարկացուցանէ զարարիչն նորա || . Առակ. ԺԷ. 5. ՚ի ձեռագիրս:

* Ապա թէ յաղթեսցէ ոք զմեօք . . . մեզ ինչ ոչ վնասէ, և ինքն ոչ օգտի || . Մծբ. Ճառ. ԺԸ.

* Եթէ արհամարհեսցեմք զնովաւ, հանէ առնու ՚ի մէնջ զոր-ետն մեզ || . Նոյնն. Ճառ. Է.

Գիտելի է և ս, զի երբեմն ներգործական բայք ինչ (մանաւանդ բայս խօսել), վն՟ յարելոյ ՚ի պէսպէս անուանս՝ իբր յանորոշ հայցականս՝ որովք իբր մի բայ վարին, առնուն զխնդիր ՚ի պարառական հոլովս. որպէս,

* Աղօթս առնէք զբանիւք հրամանաց իմոց || . Յուդիթ. Է.

* Մի՛ քինս առնիցէք զմերովք վէրկովքս || . Սարգ. Է. Թղթ. 3.

* Ո՛չ երբէք անփոյթ արարեալ զքոյոցն խրատու, այլ խնամ տարեալ հոգայց յամենայնի || . Խոսր. Ա. 8.

Կանոն. Ը.

Բայք՝ որք ասին անցորդ չորքէ, և որք ունին զնշանակութիւն առնելոյ կամ ունելոյ ինչ յիմիք ՚ի ներքս, առնուն զխնդիր ներգոյական. որպի՞ էն բայքս, Դնեմ. զետեղեմ. Թաղեմ. ծածկեմ. պահեմ. պարուրեմ. պարունակեմ. բովանդակեմ. հաստատեմ. հիմնեմ. կանգնեմ. կառուցանեմ. կայուցանեմ. տնկեմ. պատուաստեմ. սերմանեմ. բևեռեմ. յեռում. ընդելուզանեմ: Կրեմ. ունիմ. ամփոփականեմ. շտեմարանեմ. գանձեմ. ամբարեմ. ծրարեմ. յղանամ. տարրեմ. համակեմ. թանամ. տողորեմ. թաւալեմ.

ընկղմեմ . սուզեմ . թաթաւեմ . շաղախեմ . ևն ։ Եւ ևս՝ զատանեմ . արածեմ . յուզեմ . եփեմ . լեսում . կասում . աղամ . դրոշմեմ . կնքեմ . քանդակեմ . տպաւորեմ . նկարեմ . գրեմ ։ Եւ այլ ևս բազում բայք վերաբերեալք առ նշանակութիւն սոյս ։

Օրինակ ։

* Դիցուք զգանձս մեր յերկինս . զի յորժամ երթայցեմք անդ ՝ բերկրեսցուք և ուրախ լիցուք || . Մծբ . Է ։
* Մի երկարս ինձ զվէր մեղացս ՝ի յախտալից մարմինս ծածկեալցես || . Նարեկացի . ՝ի Բանն . ԽԸ ։
* Մի դառնասցես ՝ի գանձարանին զնուիրեալ իմ պարտուցս անօրէնութիւն || . ՝ի Նոյն ։
* Տնկեաց ՝ի նմին այգւոջ զորթս բերրիս || . Մծբ . Է ։
* Որ կամաւ կուրութիւն յինքն ներէ ՝ ոչ երբէք կարէ նա գալ յառողջութիւն || . Յովհաննէս Կոզ ։

Ոմանք ի կրաւորականաց՝ մանաւանդ թէ որ պատահմամբ առնուն զխնդիր ներգործական . որ ՝ * Մի Հոգի որ խօսեցաւ յօրէնս և ՝ի մարգարէս և յաւետարանս || . Սարգ . յուղ . յթղ ։
* Ծնանէին ՝ի սիրտս նոր զչարեաց պտուղն || . Մծբ . Ծնն . ԺԲ ։

Ոմանք որ յարմարութեամբ առնուն զներգործական . որ ՝ * Ո՛վ որ ՝ի սուգ տրտմութեան . . . մաշէր զանձն իւր՝ ոչ գիտելով ՝ եթէ յարութեան զուրախութիւն վայելից գրաւական ընդունելոց է || . Սարգ . ա . պետ . 4 . յթղ ։
* Զայնչափ չարչարանս եբերէր ՝ի մարմին || . Գող . Լուս ։
* Ցանձին խմում չգէժ յօժարութբ զտեգս և զնետս նոր կամաւ տգիտացեալս || . Շնորհալի . թղթ ։

Կանոն . ԻԵ ։

Բայք՝ որք ասին ներներգործական հարցին , են որք նշանակեն ըղներգործեալ լինել ընդ պարագայիւք իւիք , առնուն զխնդիր ՝ի ձեռն նախադրութեան ։

Ոմանք՝ նախադրութեամբս ընդ . որք են բայքս ՝ փոխանա-կել . փոխարինել . գրաւականել . կցել . կցորդել . դասել . միաւորել . միաբանել . ընել . զուգել . խառ-նել . խառնակել . խառնախառնել . զանգել ՝ կամ զան-գանել . շփոթել . հիւսել . անկանել . կարել . շղթայ-ել . բաբախել . հեգել . հաշտել . թուել . եւն .

## Օրինակ .

* Մի ընդ ստուերս այսր մթութեան զանճառելին ընդ լոյս փոխա-նակէր || . Նարեկացի . 'ի Բանն . ՀԶ .
* Ով բժիշկք զաւ 'ի յաճախ կերակրոյ բուսեալ ցաւս քաղցիւ բժշկեն . սոյնպէս եւ ( ա՛ծ ) ադամայ՝ որ 'ի փափ-կութեն ոչ եկայր՝ քիրտն ընդ այնր փոխարինէր || . Գէորգ . ԷԼ .
* Գրիգորաշխարհեցւո զմեծդ պարգեւ ընդ փոքու հաւա-տոյս || . Նարեկ . ԼԲ .
* Տուն ընդ տուն կցեմք . եւ ագարակ ընդ ագարակ խառնեմք || . Աւգոր .

Ոմանք՝ նախադրութեամբս 'ի վերայ . որք են բայքս ՝ Դնել ՝ կամ՝ դիզանել . բարդել . կուտել . սփռել . տարածանել . յորսայսել . տախտապարել . խարսխել . սրել ՝ կրճտել . բարուրել . հովանաւորել . տիրապետանել . եւն .

## Օրինակ .

* Ետես զշերտան 'ի վերայ սեղանոյն՝ զոր արար || . Գ . Թագ . ԺԶ .
* Զհոգս կենցաղոյս կապեսցէ 'ի վերայ անձանց || . Լամբ . տող . 68
* Զմարգարիտսն ցանեաց 'ի վերայ սրտանին || . Աւգր հուրց . Ե .
* Տարածեցէ 'ի վերայ իմ մութ անհնարին || 'ի Գէոր . գեղոյեց :

Բազում բայք եւ ոչ յոգնորդ առնուն զխնդիր 'ի ձեռն նախադրութեան . զք ՝ * Ընկղմեսցի ձեզ վարագոյրն 'ի մէջ սրբութեան ՝ եւ 'ի մէջ սրբութեան սրբութեանցն || . Ելից . ԻԵ . 33 .
* 'Ի ներքոյ ոտից մեր խաղոյ թագաւորաց զնա || . Գէորգ .
* Զգեցին զանձինս արտաքոյ մարմնեալ || . Լամբ . ...
* 'Ի վերայ աւազոյ շինուածս յիմարութեան կարգեցէ || . Նար . Ե .

Բազումք ևս երկրորդաբար՝ և իբր ըստ պատահման առնուն զխնդիր նախադրութեամբ ։ Որպէս ՝ * Զի՞ արդ ՝ ի մէջ նանրութեան զամբարշտացն աթոռս ամբառնայցէք || ։ Նար ։ Է ։
* Հերկեցէն հերկս արտաքոյ միջոյ || ։ Յովհաննէս կաթ ։
* Շինեաց զտուն իւր ՝ ի վերայ աւազոյ || ։ Մատթ ։ Է ։ 26 ։
* Կերպարանէ զճշմարտութիւն խորհրդոյն իմանալի աչաց առաջի || ։ Լամբրոնացի ։ ՝ ի մեկն ։ պատ ։

Կանոն ։ Ճ ։

Անցողական բայք հասարակօրէն զայնպիսի խնդիր բնութեան առնուն ՝ զորպիսի պահանջեն բայքն՝ յորոց բղխեն ։ Որպէս ՝ * Յեցուցանող զդրդուեալ եկեղեցի մեր ՝ ի գաւազանն երկաթի || ։ Լամբ ։ թղթն ։ Ուր յեցուցանելն բայն առեալ է խնդիր բնութեան զնախադրեալ տրական ՝ այն է՝ ՝ ի գաւազանն երկաթի ։ զի և չէզոքական բայս յենում ՝ յորմէ ելանէ յեցուցանելն ՝ զայնպիսի խնդիր բնութեան առնու ։ Որպէս ՝ * Սէր յանարգութեանց իւրում յենու ՝ ի միտս իւր || ։ Մծբ ։ ԾԸ ։

Կանոն ։ ՃԱ ։

Բայք բարդք և բաղադրեալք ՝ թէ ներգործականք ՝ և թէ չէզոքականք ՝ որոց նշանակութիւն չիցէ ըստ իմիք փոփոխեալ ՝ իբր ՝ ի բազում զայնպիսի խնդիր բնութեան առնուն՝ զորպիսի պահանջեն ՝ ի պարզ գոլն իւրեանց ։ Որպէս ՝ * Զամենայն բարեաց զտիպսն և զօրինակսն փութասջիք յանձինս ձեր նկարագրել || ։ Շնորհ ։ ընդհանր ։ Ուր բարդ բայս նկարագրել՝ առեալ է խնդիր բնութեան ՝ ի ներգործական հոլովս ։ զի և պարզ բայս գրել՝ զայնպիսի խնդիր առնու ։

Իսկ որք զայլ խնդիր առնուն՝ վերաբերին ՝ ի նշանակութիւն այնց բայից ՝ զորս եդաք՝ և դնելոց եմք յայլ կանոնս ։

Այլ վասն բայից՝ որք բարդին ՝ ի բառիցս Բանեմ և Բառնեմ ՝ դիտելի է ։ զի սոքա առ հասարակ երբեմն իբր ներգործական վարին ՝ և երբեմն իբր չէզոքական ։ Յորժամ իբր

ներգործական վարին, հասարակօրէն առնուն զխնդիր բնութեան ՚ի հոլովն տրական · զր, * Զմարմնոյն յատկութիւն երբեք ոչ խորշի պօղոս ԱՌԱՔԵԱԼՆ || · Գրիգ · նար ·
* Փարիսեցիքն ՉԱՐԱԽՕՍԵԼ սկսան զվարդապետն առ աշակերտսն || · Իգնատ · Է · 27 ·
Իսկ յորժամ իբր չէզոքական վարին, ընդ իւրեան պահանջեն զխնդիր ՚ի հոլովն պատմական · զր, * Պատկառեալ դիմօք համայնից ունօղս՝ զընտրից ՉԱՐԱԽՕՍԵՆ զմեռելոյն՝ քեզ կենդանեաց || · Նարեկ · ԾԴ ·
* Որ ՉԱՐԱԽՕՍԵՍՑԷ զհօրէ կամ զմօրէ՝ մահու վախճանեսցի || · Մարկ · Է · 10 ·
Բազում անգամ ևս առնուն զտրական · զր, * ԸՆԴԴԻՄԱԽՕՍԵՆ ևս նոյնն, եթէ բ՚ժիշկ նախ զանձն քո բժշկեա՛ յայդպիսի ցաւոց || · Շնորհալի · ՚ի Թուղթն ընդհանրական ·
Այլ գիտելի է, զի այսպիսի բայք՝ թէ իբր ներգործականք, և թէ իբր չէզոքականք՝ երբեմն առնուն զայլ խնդիր՝ կամ ընդ յարմարութեան, և կամ ընդ պատահման · զր,
* Պարտ և արժան է այս հաւաստելի գոլութեան ՆՈՒԱՃԵՆԵԼ զմեծ և զդիւցազնական աղէքսանդրոս || · Պլատոն ·
* ՄԵԾԱՄԵԾԷԻՆ ՚ի վր սահմանաց իմոց || · Սոփոն · Բ · 8 ·
* Զմեզ առաջի քո ՉԱՐԱԽՕՍԷՆ ( դևք ) || · Ղամբ · առղ · 26 ·
Եւ բազում անգամ ևս առանց խնդրոյ վարին, և կամ միայն խնդրովն սեռի · զր, * Համարձակախօսն զքարոզս ՃՇՄԱՐՏԱԽՕՍԷՐ զկուսին յղութիւն || · Մամբրէ Վերծանող ·
* Զնոյն և երջանիկն պօղոս ԽՕՍՏՈՎԱՆԻ || · Պլատոն ·

Կանոն · ԺԷ ·

Ներգործական բայքս՝ Զոքել · Ունել · Ընել · ևն, յորժամ յարին յայնպիսի անուանս, որք ունին զնշանակութի չափման · որ լայնութեան, երկայնութեան, կանգնոյ, կշռոյ, ևն, առնուն զնոյն իբր երկրորդական խնդիր ՚ի պէսպէս հոլովս ·
Երբեմն՝ մանաւանդ թէ բազում անգամ յուղղականն ·

որ ՝ * Եւ չափեաց զերկայնութիւն նորա քառասուն կանգուն ․ և զլայնութիւն քսան կանգուն || ․ Եզեկ ․ խա ․ 2 ։
* Արար բարձրութիւն պարսպին 70 կանգուն || ․ Յուդիթ ․ ա ․ 2 ։
* Եւ շինեաց ի կանգուն ․ ․ ․ զմի կողմանոյն || ․ Գ ․ Թագ ․ Զ ․ 16 ։
Երբեմն ՝ի բացառականն ․ որ ՝ * Եւ չափեաց զորմ տաճարին ՝ի վեց կանգնոյ ՝ և զլայնութի կողման տանն ՝ի չորից կանգնոյ || ․ Եզեկ ․ խա ․ 5 ։
Երբեմն ՝ի գործիականն ․ որ ՝ * Եւ չափեաց հազար չափովն զուխսն || ․ Եզեկ ․ խէ ․ 5 ։
* Ա՛ ․ ․ ․ խուղ ձիթենեաց հնգետասան մետղ || ․ Եւէց ․ 30 ․ 2 ։
Երբեմն յուղղականն և ՝ի նախադրիւ տրականն միանգամայն ․ որ ՝ * Եւ չափեաց զարահն յերկայնութիւն հարիւր կանգուն ՝ և ՝ի լայնութիւն հարիւր կանգուն || ․ Եզեկ ․ խ ։
Երբեմն ՝ի գործիականն և ՝ի նախադրիւ տրականն միանգամայն ․ որ ՝ * Եւ արարեալ զնա կանգնաւ յերկայնութիւն ՝ և կանգնաւ ՝ի լայնութիւն || ․ Եւէց ․ 30 ․ 2 ։

## Կանոն ․ ծզ ։

Ներգործական բայքս՝ Վաճառեմ ․ գնեմ ․ վարձեմ ․ ՝ի վարձու տամ ․ տամ ․ արժանեմ ․ եւ ․ և որք յարին յանուանս գնոյ ՝ առնուն զխնդիր ՝ի սեռական հոլովն՝ իբր զերկրորդական ․ որ ՝ * Վաճառեցին զՅովսէփ իսմայելացւոյն քսան դահեկանի || ․ Ծնն ․ լէ ․ 28 ։ Որ սեռական հոլովս գնոյն գնեցելոյն՝ է երկրորդական խնդիր վաճառելոյն ։ Ըստ այսմ է տեսանել և ՝ի սոսին ։
* Գնեաց զնա խնսուն դահեկանի || ․ Վարք հարց ․ ծէ ։
* Զոր վարձեաց 70 արծաթոյ || ․ Եփրեմ ․ դատ ․ Թ ․ 4 ։
* ՝Ի վարձու ետ զինքն Ճ արծաթոյ || ․ Նոյնն ․ դատ ․ ԺԷ ․ 10 ։
* Ո՞չ դահեկանի միոյ սակ արկեր ընդ իս || ․ Մատ ․ Ի ․ 13 ։
Այսպէս բայք երբեմն փոխանակ սեռականի առնուն զայլ հոլովս ․ կամ նախադրութիւնս ընդ ․ որ ՝ * Զեղբայր իւրեանց վաճառեցին՝ ընդ երեսուն դահեկանին || ․ Յեսուայ որդի ։

Իսկ բայքս՝ հարկանել, և զարկանել կամ զարկուցանել՝ իբր 'ի բազումս առնուն զնախդիրս սեռական իբրև զխնդիր յարմարական · որ, * Զմանկունս ծնեալ մեզ 'ի քաղդէ-
ացւոց սերմանէն՝ զկլիմ հարցանէ || · Լամբ · ատեն ·
* Զի մի երբէք հարցես զքարի զոտն քո || · Սաղ · 90 · 12 ·
* Յորժամ հանէ դեւն՝ ի մոլին զգետնի զարկանէ || · Գէորգ ·
* Յետս յետս տարեալ՝ զարկոյց զգետնի || · Խոսրով ·

Երբեմն նաև բայս թիկն ածել՝ առնու զայսպիսի խնդիր · որ, * Արտաշէս Թագաւորէ հայոց · · · և յառաջադէմ եղեալ՝ ոչ զերկրորդականն ունի գահ, այլ զաւագուն թիկն ածէ || · ի ջանայ հասանել յաւագուն · Խոր · Է · 10 ·

Ներգործական բայք անխնդիրք ·

'Ի վախճան խնդրառութեան ներգործական բայից գիտելի է՝ զի բազումք 'ի նոյն ոչ պահանջեն զխնդիր բնութեան · այլ շատանան միայն խնդրով սեռի · որպիսի են բայքս, Այլագունեմ · անկուշեմ · անձնաւորեմ · անտեսեմ · արժեմ · աւարեմ · բազափայլեմ · բեկբեկեմ · բոլորակեմ · գալարեմ · գեղգեղեմ · գլխակարգեմ · դիապատեմ · երկփեղկեմ · զգետնեմ · զեղծանեմ · զօրավարեմ · ընդաւազեմ · ընդոտնեմ · թևասքօղեմ · ժառանգեմ · խահրեմ · խարտեմ · խլխլեմ · խոհակերեմ · խուեմ · խրամատեմ · ծալեմ · ծակոտեմ · ծուատեմ · կամակորեմ · կառափնատեմ · կարթեմ · կարկեմ · կեղեմ · կուանեմ · կրկտեմ · համբտեմ · հանգուցեմ · հասարակեմ · հարստահարեմ · հենում · հիմնարկեմ · հրազինեմ · հրդեհեմ · ճախարակեմ · ճարտարեմ · ճենճերեմ · մաղեմ · մմլեմ · մռանամ · մխեմ · մորակեմ · յաջորդեմ · յիշեմ · յօտեմ · ներգևեմ · նշկահեմ · շերտեմ · շնչաւորեմ · պայազատեմ · պեղեմ · ստանձնեմ · վատեմ · վերտեմ · վիժեմ · վրիժակեմ · տափարակեմ · տօնախմբեմ · ցանցեմ · ցօղագնեմ · փապարեմ · փողեմ · քշտեմ ։ Եւ այլ ևս բազում բայք ։

## Օրինակ։

* Ոչ այժմ զերեսս այլազգեանցն ինձ || · Եսայ · ԾԲ ։
* Զանճառութիւն շնորհին ընդունել || · Նար · ԾԷ ։
* Մտանիցէք ժառանգել զերկիրն || · Օրէն · Է · Ա ։
Այլ գիտելի է, զի ս՛ք ոչ եթէ բնաւ ոչ առնուն ըզ-խնդիր բնութեն, այլ հասարակօրէն առանց խնդրոյ վարին· իսկ եթէ պատշաճողութի տեղւոյն պահանջեսցէ, առնուն եւ զպէսպէս խնդիրս· որ, * Մի որ · · · այլազգեանցն զգոյն երեսայ իւրոյ օտար դեղովք || · Ընդհ։
Գիտելի է եւս, զի բազումք 'ի ներգործական բայից թէպէտ եւ ըստ իմիքեան պահանջէին առնուլ զխնդիր բնութե· բայց երբեմն առանց այնր դնին· որ, * Զայս ատեացանեմ, և զիս ոչ խոստանեմ· այլոց քարոզեմ, և ես ոչ առնեմ· զայս վարդապետեմ, և ես 'ի խոր ննջեմ· զայս յորդորեմ, և ես հեղգ մնամ || · Խոսրով։

## ԳԼՈՒԽ · Ժ։

### Յաղագս խնդրոյ կրաւորական բայից։

Կրաւորական բայք առնուն զխնդիր սեռի 'ի հոլովս բացառական· որ, * Յաղթեցաւ ողորմութիւն յարդարութենէ || · Լամբ · ատեն ։ Ուր կրաւորական բայս յաղթեցաւ՝ առեալ է խնդիր սեռի զբացառական հոլովն յարդարութենէ · իսկ ողորմութիւն է անուն բայիս յաղթեցաւ ։
Ըստ այսմ և հասարակ բայք՝ յորժամ կրաւորականաբար վարին, առնուն զխնդիր սեռի 'ի բացառական հոլովս · որ, * Պետրոս՝ վէմ դաւանեցաւ յածեղէն բերանոյն || · Մամբրէ Վերծանող · Ճառ Ղազարու ։
Բայց գիտելի է, զի բազում անգամ կրաւորական բայք զօրութեամբ ունին զխնդիր սեռին · որ, * Ծագումն փառաց 'ի բեթղեհեմ քաղաքէ || · Պետրոս Սիւն ։ Ուր զօ-

ութիւն կայ բայառական հոլովս 'ի հոլովոց , կամ 'ի հը-րեշտակաց ։

Ըստ այսմ է և 'ի հասարակ բայս . որ , * Մեղք՝ որ խոստովանին , թեթևանայ . և որ ոչն խոստովանին , ևս քան զևս ծանրանայ || . այս մեղքն՝ որ 'ի գործողէն խոստովա-նեալ լինի , թեթևանայ . Եղ . Սարգ . յաճ . ժա ։

Երբեմն ևս կրաւորական բայք իբր չէզոքական վարելով ոչ պահանջեն զխնդիր սեռի . որ , * Հաւատով հաստատե-սցի սէրն Ճշմարիտ || . ՄԾԲ . Է ։ Որ բայս հաստատեն՝ դնի իբր չէզոքական . զի նշանակէ աւել հաստատութեան ծառայ . վասնորոյ և ոչ պահանջէ զխնդիր սեռի ։

Գիտելի է դարձեալ , զի կրաւորական բայք երբեմն փոխանակ բայառականի զայնպիսի խնդիր առնուն , որ ըստ իմիք համարինն այն իբր խնդիր սեռի . որ , * Զայն բարեաւն յաղթե , և ոչ չարեաւն || . փոխանակ ասելոյ , 'ի բարւոյն՝ և ոչ 'ի չարէն || . Լամբ . թղթն ։

Իսկ թէ զայսպիսի խնդիր բնութեամբ առնուն կրաւորական բայք , ոչ է հարկ գրել ինչ . զի զայնպիսի առնուն՝ զոր-պիսի պահանջեն ներգործականք իւրեանց . որ , * Նմա-նա ( այս քո ) յաշխարհի իբրև զգանձ՝ որ ծածկեալ իցէ յա-գարակի || . ՄԾԲ . Ճառ . Է ։

* Լոյս ոչ ծածկի 'ի խաւար , այլ՝ զխաւարն լուսաւորէ || . Յաճխ . Է ։

Յորս ոչ տեսանի՝ կրաւորական բայք առեալ են զայնպի-սի խնդիր՝ զորպիսի պահանջեն ներգործականքն ոց ։ Թէ-պէտ բազում անգամ առանց խնդրոյ իւրք ևս վարին . ոչ ասայաք զներգործականացն ։

## ԳԼՈՒԽ . ԻԱ .

### Յաղագս խնդրոյ Չէզոքական բայից ։

Չէզոքական բայք թէ ներգործականօրէք և թէ կրաւորա-կանօրէք՝ ոչ առնուն զխնդիր սեռի , այլ՝ զբնութ 'ի սկս-

պէս հոլովս ։ Եւ ոչ ասացաք զներգործականաց , այն-պէս և մեք չորեքկին առնումն զխնդիր ։

Նախ՝ զխնդիր բնութե ըստ Սեռականին , որ և առ ի՝ բառն խնդրե-լեր ․ որ այնպիսի՝ զոր բնութի բային 'ի նշանակութէ խնդրէ նախ պահանջէ ․ որ բայս գոյ՝ 'ի նշանակութէ խնդրէ նախ պահանջէ զնախնդրիւ տրական ․ որ , * Որ առնէ զճշմար-տութի՝ գայ առ լոյսն ‖ ․ Յովհ ․ գ ․ 21 ։ * Գայ 'ի լու-ութի կարգայ ‖ ․ Յռմ ․ ը ։ * Գայցէ յաշխարհու-թի գործակցութե հոգւոյն սբյ ‖ ․ 'Ի նոյնն ․ Ե ․

Երկրորդ զխնդիր բնութե յարմարականն ․ որ զայնպիսին՝ որ դնի 'ի տեղի բուն խնդրոյ՝ յայլ հոլով՝ քան զոր բնութի բային ըստ ինքեան պահանջէ ․ որ եթէ գոյ բայն փոխանակ առնելոյ զնախնդրիւ տրական՝ առնուցու զպարառական ․ որ , * Միշտ զերկրաւ գամք , և ըստ երկիր պշնումք ‖ ․ Խորհրդ ։ Սոր պարառական հոլովդ զերկրաւ՝ է յարմա-րական խնդիր բայիս գոյ՝ 'ի տեղի բուն խնդրոյ ․ մինչև ոչ ևս զօրութ դնիլ այժմ , կամ հանդերձ նախադր-ութե ․ որ , * Յանկարծակի գայցէ 'ի վր նր մահ ‖ ․ Ըռմ ․ ծէ ․ * Գայ առաջի մեծի Թագաւորին ‖ ․

Կոչ ․ ծգ ․ 46 ․

Երրորդ՝ զխնդիր բնութե երկրորդականն ․ որ զայնպիսին՝ զոր երկրորդաբար պահանջէ բնութի բային ․ որ բայս գոյ՝ երկրորդաբար կարէ առնուլ զբացառական ․ որ , * Գամ ես յամփոփ ‖ ․ Աղգոն ։ Սոր բացառական հոլովս յամփոփ՝ է երկրորդական խնդիր բայիս գոյ ․ իսկ բուն խնդիրն որ նախդրիւ տրականն , զօրութ դնի ․ Թէպէտև կարէր դնիլ ներգործութ ևս ․ որ յայս բան , * Գային առ նա յամ կողմանց ‖ ․ Մարկ ․ ա ․ 45 ․

Չորրորդ՝ զխնդիր բնութե պատահականն ․ որ զայնպիսին՝ որ ըստ ինքեան ոչ պատշաճի բնութե բային , այլ ըստ պատահ-մանն միայն , և կամ ըստ հեռաւոր ինչ պատշաճութե ․ որ եթէ գոյ բայն ըստ պատահման առնուցու զխնդիր 'ի հոլովն գործիական ․ * Կամաւորութ եկեր 'ի չարչարանս ‖ ․ Եւր ․ է ․ * Դու գաս 'ի վր իմ սրով և գեղարդեամբ

և ասպարաւ · և ես գամ 'ի վր̃ քո անուամբ տն̃ զօրութեանց || · Ա · Թագ · ԺԷ ։ 45 ։ Յորս գործիական հոլովքս՝ նշատարութեամբ ՝ որով ՝ գեղարդեամբ ՝ ընդ ՝ են պատահական խնդիր գոլոյն ։

Կամ նախադրութեամբ · որ ՝ * Բազում հիւանդութիւնք վասն մեղաց գան || · Գէորգ · Գ ։ * Յետ ծննդեանն նախախնամութեամբն այ̃ գայ ( մանուկն ) 'ի կատարելութիւն մարմնոյ և մտաց || · Յոհան · ԺԵ ։ Յորս բառքդ վն̃ մեղաց ՝ և յետ ծննդեանն՝ են պատահական խնդիր գոլոյն ։

Կամ դերբայիւք · որ ՝ * Խնդալով գայր 'ի տեղիքաջութեան || · Կոչ · ԺԳ · 9 ։ * Գայ փրկել · · · · և լուսաւորել զմիտս || · 'ի Նոյն · ԺԲ · 53 ։ Յորս դերբայքդ խնդալով՝ փրկել և լուսաւորել՝ որ 'ի փրկել և 'ի լուսաւորել՝ են պատահական խնդիր գոլոյն ։

Արդ՝ չեզոքական բայք երբեմն առնուն միայն զխնդիր բնութեան իւրեանց · երբեմն միայն յարմարական · երբեմն միայն երկրորդական ՝ և երբեմն միայն պատահական ։ Դարձեալ երբեմն առնուն զխնդիր բնութեան իւրեանց ՝ և կամ յարմարութեան՝ հանդերձ երկրորդականաւ՝ կամ պատահականաւ ՝ և կամ երկոքումբք ևս ։ Եւ երբեմն առնուն զերկրորդական հանդերձ պատահականաւ · որպ̃ տեսցի յօրինակաց եդելոց 'ի ստորև ։

Իսկ առ 'ի որոշել՝ թէ չեզոքական բայք յոր հոլովս առնուն զխնդիր բնութեան իւրեանց՝ դիցուք զհետասան կանոնս հանդերձ օրինակօք իւրեանց · յորս յարեսցուք և զօրինակս խնդրոց յարմարականաց և երկրորդականաց ։

Կանոն ՝ Ա ։

Չեզոքական բայք ոչ առնուն զխնդիր բնութեան ըստ իւրեանց յուղղական հոլովի ՝ այլ երկրորդաբար միայն ՝ կամ իւ̃ պատահման ՝ և կամ իւ̃ յարմարութեան · և այնք ևս սակաւ ։

## Օրինակ.

* Օրէնք ածայինն հայցեն բագաւոր ՚ի վ͞ր ամի || . Եզեկ . Գ.
Ուր ուղղական հոլովս բագաւոր՝ է երկրորդական խնդիր հոլոյն: Ըստ այսմ է տեսանել և ՚ի սոսին:
* Ընդէ՞ր (ով արծաթասէր՝) կառավարեցէք և ոգւոց մոտնեցէք ՚ի գերեզմանս և յայլոց ձեռս թողուցուս զկուռ քո խորտակել և բաժանել || . Սարգիս . ցոց . Է . ջորէ:
* Մի՛ վերջասցուք և մեք ծուլութե՛՝ ողորմեալն եղանել ըդեմ նո͞ր (՚ի ըդեմ սատանայի) || . Նոյն.
* Եւ նոքա ընդունեցին ՚ի վ͞ր մահու և զժողովոյ || . Անոն.

## Կանոն . Է.

Չեզոքական բայք՝ որք ունին զնշանակութի՛ ներգործական կամ հաղորդական, առնուն զվերջահոլով տրական. որպէս են բայքս, Հետևիմ. հաւանիմ. անսամ. հնազանդիմ. հպատակիմ. ապաւեմ. ակնունիմ. աչառեմ. ծառայեմ. արբանեկեմ. սպասաւորեմ. ընկերանամ. բարեկամանամ. ծանօթանամ. ընտելանամ. որդիանամ. փեսայանամ. հարսնանամ. քահանայանամ. տաճարանամ: Պիտոյանամ. արժանանամ. հաճոյանամ. հաւասարիմ. նմանիմ. պատշաճիմ. դիպիմ. պատահիմ. յաջողիմ. վիճակիմ. հաղորդիմ. բանեմ. օգտեմ. օգնեմ. օժանդակեմ. երաշխաւորեմ. ներեմ. ողորմիմ. խնամակալեմ: Կարօտիմ. փափաքիմ. ըղձամ. կանխամ. քաղցնում. ծարաւիմ. աղերսեմ. խելամտեմ. հմտանամ. տեղեկանամ. տգիտանամ. համբերեմ. հանդուրժեմ. երկայնամտեմ. ևն: Եւ ևս՝ տիրեմ. իշխեմ. առաջնորդեմ. զինուորիմ. զօրավարեմ. նախագահեմ. յաջորդեմ. երևիմ. յայգորեմ. երեկորեմ: Հակառակիմ. ընդդիմանամ. դիմադարձիմ. ընկրկիմ. հեստեմ. մեղանչեմ. սպառնամ. սաստեմ. խրոխտամ. պժգեմ. ժխտեմ. ստեմ. երախտեմ. Թըշ-

նամանամ · համբուրնամ · քաղցրանամ ։ Եւ այլ ևս բազում բայք՝ որք առ նշանակութի սոյա հային ։

## Օրինակ ։

* Զուերունի պատուէրն լքեալ՝ Թելադրութեան օձին հետևեալ || · Նարեկացի · 'ի բանն · ԻԲ ։
* Հրամանի նորա տեառն ամենայնի լինել || · Խոսրով ։
* Ծառայեսցէ անմիտն իմաստնոյն || · Առակ · ԺԱ · 29 ։
* Մարմնոյս սիրոյ ոչ տրտմեցի · · · · բնութեան կարեաց ոչ ողորմեցայ || · Նարեկ · 'ի բանն · ԿԵ ։
Ոմանք երկրորդաբար առնուն զվերջահոլով տրական · որ,
* Ծագեցաւ նմա արև՝ իբրև անց տեսիլն այ || · Ծնն · ԼԲ ։
* Ալիք ծածկեցին ինձ, և ես ոչ ծաղկեցայ || · Սարգ · յոհ · 7
Ոմանք Ե յարմարութե առնուն զվերջահոլով տրական · որ,
* Արթունք քհնյին զգուշասցին գիտութե || · Մաղաք · Բ · 7 ։
* Ծանրասցի գործ մարդկան, և այնմ հոգասցեն · և մի հոգասցեն 'ի բանս տարապարտս || · Ելից · Ե · 9 ։
Ոմանք ևս Թէպէտ Ե ինքեան պահանջեն առնուլ ըզնախդրիւ տրական, բայց փոխան այնր երբեմն առնուն ըզվերջահոլով · որ, * Մինչ հատման գլխոյն Յովհաննու, նա նա զնոյն սպասէր պայծառացուցանէր || · Նար · ՀԲ ։
* Մի տանջեսցէ քեզ երկիւղ կասկածանաց || · Մագիստրոս ։

## Կանոն · Գ ։

Չեզոքական բայք՝ որք ունին զնշանակութի առ այլ, (որ՝ որք ցուցանեն իբր զբերումն առ ինն), առնուն զնախդրիւ տրական · որպէս են բայքս, Գնամ · ընթանամ · դիմեմ · յարձակիմ · կանխեմ · առաւօտեմ · հասանեմ · զարգանամ · ձկտիմ · անցանեմ · նուեմ · Թռչիմ · խոյանամ · վերանամ · դառնամ · մերձենամ · յարիմ · յենում · մոտենամ · մխեմ · խոնարհիմ · իջանեմ · անկանիմ · կաթիմ · տեղամ ։ Աղաղակեմ · բողոքեմ · աղօթեմ · պաղատիմ ·

միջնորդեմ· խորախօսեմ· ապաւինիմ· հաւատամ· յուսամ· համարձակիմ· յանդգնիմ· երդնում· հայիմ· նայիմ· եւն։ Եւ եւս՝ սովորիմ· պարապիմ· պաղատիմ· հեղգամ· անկարանամ· զօրեմ· նահատակիմ· համբերանամ· հեծանեմ· աշտանակեմ· ջանամ· փութամ· խունիմ· յոլովիմ· յաւելում· եկեղեցանամ· որսամ· ցոլանամ· հոտոտիմ· վճարիմ· խնայեմ· անխայեմ· եւն։ Եւ եւս՝ ապշիմ· սքանչանամ· հաճիմ· յօժարիմ· բերկրիմ· ուրախանամ· ցնծամ· գթամ· պարծիմ· հպարտանամ· բարկանամ· դժուարիմ· խռովիմ· տրտմիմ· թախծիմ· փղձկիմ· նախանձիմ· զկծիմ· ագահեմ· անիրաւիմ· ստահակիմ· զաւածանիմ· տարակուսիմ· երկբայիմ· միամտիմ· կեղծաւորիմ· կերպարանիմ· ձեւանամ։ Եւ այլ եւս բազումք որք վարին ընդ նշանակութեն սոյա։

## Օրինակ։

* Գնաց մարդ 'ի տուն խեր յաւիտենից ‖ Ժողով. ԺԲ. 5։
* Դիմեալ աղաւնեաց յոստս ձեր ‖ Խորենացի. Ը. 5։
* Որ յուսայ 'ի մեծութին, կործանեսցի ‖ Առակաց ԺԱ. 28։
* Հեթանոսք դարձցին սրտիւք առ ած ճշմարիտ ‖ Անանիա։
Ոմանք երկրորդական առնուն զխնդիր սերական. ոպ,
* Ելեալ 'ի լեառն աւետարանական հաւատոյ. ‖ Լամբր.
* Աչք աստուածութեան անձին յամ շարժումն՝ 'ի լաւագոյնսն կամ 'ի վատթարագոյնս ‖ Շնորհ. ընդհանր։
Ոմանք ընդ յարմարութե առնուն զխնդիր սերական. ոպ,
* 'Ի պատուիրանս քո խոկացայց ‖ Սաղմոս. ՃԺԸ. 15։
* Ոչ կամեցաւ (աբրահամ) բնաւ առնուլ ինչ յաւարէ անտի՝ ախտացեալ 'ի նմն ‖ Իգնատիոս Ղկ. ԺԲ. 16։
Ոմանք եւս փոխանակ վերջահոլով տրականի առնուն ըզնախդրիւ տրական. ոպ, * Ոչ 'ի տուրսն. այլ 'ի տուօղն յաւէտ հայրօրէն ‖ Նարեկացի. 'ի Բանն. ԺԲ։
* 'Ի պէտս սրբոց հաղորդեցարուք ‖ Հռով. ԺԲ. 13։

## Կանոն · ԺԲ:

Չեզոքական բայք՝ որք ունին զնշանակութիւն յայլմէ, առնուն զխնդիր բայառական · որպէս են բայքս, Ելանեմ · ծագիմ · ստեղծնիմ · բուսանիմ · ծորիմ · սորիմ · յառնեմ · ոստնում · սարսնում · փախչիմ. Հրաժարիմ · հեռանամ · մեկնիմ · օտարանամ · խուսեմ · խոտորիմ · խորշիմ · վրիպիմ · սխալիմ · ստերիւրիմ · զարտուղիմ · մոլորիմ · տարաձայնիմ · պակասամբիմ · վտարանջեմ · անսաստեմ · պերծանիմ · ապրիմ · Ճողոպրիմ: Յուսահատիմ · պատկառիմ · ամաչեմ · ակնկորեմ · զգուշանամ · երկնչիմ · զարհուրիմ · սասանիմ · դողդողիմ · խեթեմ · խիթամ · եւն: Եւ եւս՝ տագնապիմ · տառապիմ · վտանգիմ · տապիմ · պապակիմ · գարշիմ · տաղտկանամ · Թուլանամ · ձեղմանամ · վհատիմ · վատիմ · սուաղիմ · նքթիմ · ցամքիմ · պարզիմ · պակասիմ · նուաղիմ: Զանխլանամ · ունայնանամ · դատարկանամ · Թերանամ · Թեթեւանամ · աղքատանամ · անչքանամ · անզաւակիմ · աղօտանամ · շիջանիմ · լռեմ · դադարիմ · կասիմ · յետնիմ · անհետանամ · մերկանամ: Լանամ · գոյանամ · բաղկանամ · մարմնանամ · մարդանամ · արդարանամ · առողջանամ · ամբողջանամ · խրթնանամ · յղջանամ · զգաստանամ · սթափիմ · զարթնում: Եւ այլք բազումք՝ որք զ՟նշանակութե սոցա վարին:

### Օրինակ:

* Եւ հուր մեղաց ՚ի կողէն ադամայ՝ հրդեհել զամ մարդկային բնութիս · Եւ ջուր ՚ի կողէն յի՟՝ շիջուցանել զամ հրդեհն անօրէնութե || · Սարգիս · Ա · Յովհ · 8 :
* Մեր աղօթից · · · ՚ի գլուխ **ելանէ** ՚ի միտս մտկն || · Խոսր:
* Ըմբարհաւաճել · · · **վրիպեցաւ** ՚ի փառացն || · Յաճախ:
* Եւ մեք **տնանկացաք** ՚ի բանիցն || · Սարգ · Է · թղթ · 6 :

Ոմանք **ներգործականք** առնուն զբայառական · որ, * Պի-

տանուտէր ամպոյն յանձրևէ անտի երկնէ || · Սարգ · յաճախ · 2 ։
* Հոգի 'ի ծառայութենէն այլ ունելով՝ ընդ ձեռամբ մնանէ աշխարհակալին || · Նոյնն · յով · 9 ։

Ոմանք ըստ յարմարութեան առնուն զբացառական · որպէս ,
* Սպառնացեալ յայսպիսի լուսոյ || · Սարգ · յով · 4 ։
* Կորուսան 'ի շաւղաց պաշտաման դիւցն || · Մծբ · ծէ ։

### Կանոն · Է ։

Չէզոքական բայք՝ որք ունին նշանակութիւն գոհանալոյ , կամ տրտնջելոյ , առնուն զխնդիր պատմական · և սոքա են սակաւ յոյժ · ընդ որս կարէ դասիլ և բայս հոգամ ։

### Օրինակ ։

* Գոհացեալ միշտ զաստուած ողորմութե նորա || · Խոսրով ։
* Տրտնջեցին ուղղիքն իւր · · · զմովսէսէ || · Թուոց · ԺԶ · 4 ։
* Չփառաւորիլ ոչ հոգայեն ( որք ) || · Սարգ · Է · պետ · 1 ։

Ոմանք երկբարբառեալ և ու պատահման առնուն զպատմական · որպէս , * Չկատարածէ աշխարհիս անհոգէ || · Գեորգ ։
* Յարբեր առաւել բանին զնմանէ || · Ղուկ · Է · 15 ։

Ոմանք ու յարմարութե առնուն զպատմական · որպէս , * Կարծ հոգաբարձութեան տըղայ · · · զնմանէ || · Ագաթ ։
* Բնութի մարդկան զերևելեայս խմնկալոյ || · Սեբեր · Գ ։

### Կանոն · Ը ։

Չէզոքական բայք՝ որք նշանակեն զգործողութի խուէ լինելի , առնուն զխնդիր գործիական · ոպէս են բայքս , ճոխանամ · պերճանամ · պճնեմ · փարթամանամ · ազնուանամ · գեղեցկանամ · պարարտանամ · ստուարանամ · լիանամ · ծալանամ · յագիմ · սնանիմ , Հաստանամ · բաւականանամ · զօրանամ · կենդանանամ · անդորրանամ · արիանամ · սրտապնդիմ · զմայլիմ · երանանամ ։

Եւ Ես՝ ծաղկիմ · պակիմ · անօսրիմ · կակղիմ · Հոտաւորիմ · պայծառանամ · փայլիմ · շառագունիմ · Թըմրիմ · Նիհարանամ · Թարշամիմ · Հիւանդանամ · մեռանիմ ։ Ախտանամ · վշտանամ · շլանամ · վատԹարանամ · աղտեղանամ · վարակիմ · տաժանիմ աշխատիմ · Ճգնիմ աղձատիմ · մատղիմ · շուայտիմ · ցնորիմ · տուայտիմ · քստմնիմ · պապանձիմ · զզածիմ · ջեռնում · Կաղամ · քայլեմ · կաքաւեմ · կայԹեմ ։ Եւ այլ Ես բազումք բայք՝ որք ե̅ սյ̅ նշանակուԹ̅ վարին ։

## Օրէնք ·

* ՚Ի ժամանակին յայնմիկ էր ծաղկեցեալ պանծալի աԹոռակալուԹ̅ սր̅յն գրիգորի մր̅ քրիստոսափոր || · Թովմ ։
* Քրոմլեք վ̅տակօք դժնեցայց · եղախտեօք մեծիդ յարգեցայց · աւազանին զգեստիւ պերճացայց || · Նար · կե ։
* Պարարտացան դաշտք արդարուԹ̅ · և փեղեցկացան անապատք մաքուր կուսուԹ̅ || · ՚Ի շարակնոցն · Հանգն · 70 ։
* Եւ այսպ̅ Ես մեր ծովացան արտասուօք || · Ցովհ · կաԹ ։
Ոմանք Երկերորդումն և իբր ե̅ դարձուածն առնուն զգործիական · ոպ̅ · * Կերպարանօք ատենին հալէմ || · Նար · կը ։
* Խանդակաւծ սիրոյն ԹըԹէի յարտասուս || · Լամբ · 53 ։
Ոմանք ե̅ յուրմորուէ առնուն զգործիական · ոպ̅ · * ԵԹէ որդւովք դործէս դու · գերի վարին նք̅ ՚ի քէն || · Մծբ ·
* Հիւանդոտ կենօք չոնչացեալէ || · Եղիշէ · Ե ։
Այլ գիտելի է · զի ոպ̅ ասացաք զներգործական բայից · նոյնպէս և չեզոքական բայք՝ գրեԹէ առհասարակ կարեն առնուլ զխնդիր գործիական ։

## Կանոն · Ժ ·

Չեզոքական բայք՝ որք ունին զնշանակուԹի շուրջ զայլով · առնուն զխնդիր պարառական · և սոքա են սակաւ յոյժ · որպիսի են բայքս · փարեմ · պատիմ · կամ պատեմ ·

պատառեմ · պարեմ · շրջապարեմ · շրջապատեմ · պարագայիմ · պարայածիմ · պարբերիմ · յածիմ ։ Եւ ևս՝ զանցանեմ · գերազանցեմ · ևն ։

## Օրինակ ։

* Ընկեալ ՚ի վր՝ փարէին զպարանոցաւ նր || · Վարք հարց ։
* Ոչ պատեցին զինև մառախուղք ՚ի ձօնելն զքեզ || · Նար ։
* Շրջապատեցան զինև այլեւք շարեաց || · ՚Ի գիրս պետոյ ։
Ոմանք ՟ը յորժորաւէ առնուն զպարառականն ՝ և այն յա- ւէտ ՚ի սովորութէ · ՟գր ՝ * Ծիծաղէին զինև յետինք || · Յոբ ։
* Խանդաղատեցաւ զնովաւ դուստրն փարաւոնի || · Ել՝ ՟բ · 6 ։
* Ո՞ տայր ինձ ընդունել զմարմինովն պետրոսի || · Սարգ · ՟ա ։
* Խորհուրդք բարեաց կղզացուցին զքև || · Աղոթ · ՟է ։

## Կանոն · ՟ը ։

Չեզոքական բայք՝ որք նշանակեն զգործողութի յիւրք կամ՝ ուրեք լինելի ՝ առնուն զխնդիր ներգոյական · որպիսի են բայքս ՝ կամ · մնամ · տևեմ · յամեմ · հանապազորդեմ · մշտնջենաւորեմ · արմատանամ · տարրանամ · արձանանամ · ամրանամ · յորջանամ · հաստատիմ · բնակիմ · բանակիմ · նստիմ · բազմիմ · ագանիմ · իջեւանիմ · պանդխտիմ · մակաղիմ · կողմանիմ · ննջեմ · հանդարտիմ · հանգչիմ · թագչիմ · սպահոլիմ ։ Դեգերիմ · շրջիմ · գգնամ · ճարակիմ · խարխափեմ · զբօսնում · տատանիմ · համակիմ · թաւալիմ · պտուտկիմ · խլրտիմ · գեռամ · սողիմ · լողիմ · ծփիմ · Եւ ևս՝ զբաղիմ · զեղխիմ · հեղձնում · խղճեմ · թշուառանամ · յիմարիմ · յամառիմ · կամակորիմ · խստանամ · թանձրանամ · նուաստանամ · կնճռիմ ։ Եւ այլևս բազում բայք առ այսոքիկ վերաբերեալք ։

## Օրինակ .

* Այս է միշտ հաստատուն կուռ՝ ի բարին || . Կիւրեղ . Երուս .
* Ուշ դիցես 'ի սահմանեալ ուխտին՝ որ 'ի մէջ նոցա || . Յովհ .
* Երանելի էաք, եթէ 'ի սմին իսկ յամէաք || . Եփրեմ .
* Ցերկրաւոր ցանկութեանց պարտի փախստական լինել, և յառաքինութիւն ամրանալ || . Սարգ . Է . դիմ . 4 .

Ոմանք երկրորդական և Բ դիմաւորն առնուն զներգործականն . զԲ , * Մոլորեցան նոքա յանապատի || . Սաղ . ՃԶ . 4 .
* Փոխանակեցաւ յանձն իւր ( մեծն վարդան ) . և քաջալերեաց զզօրս իւր || . Եղիշէ վրդ . Գլ . Ե .
* Վաստակեսցեն յայգւոջ անդր || . Մծբ . Ճառ . ԺԲ .

Ոմանք Բ յորդորական առնուն զներգործականն . զԲ , * Ուրեմն որդեգրութեան 'ի բանս իւր առաքեալ || . Լամբ . ատեն .
* Հեռացուցանեմ յերեսս , և 'ի խորհուրդս դեղանոյ || . Նար . ՀԱ .

## Կանոն . ԺԲ .

Չեզոքական բայք՝ որոց նշանակութիւն նկատի 'ի պարագայս իւրեք , առնուն զխնդիր 'ի ձեռն նախադրութեց . Ոմանք՝ նախադրութբս ընդ . որպէս են բայքս , Կռուիմ . ոգորիմ . մարտնչիմ . գօտեմարտիմ . մրցիմ . պատերազմիմ . կագիմ . մաքառիմ . ընդհարկանիմ . գժտիմ . վիճիմ . հակաճառեմ . խաղամ . կենցաղավարիմ . թարթափիմ . հծծեմ . հաշտիմ . միաբանիմ . միաւորիմ . յոդիմ . շարակարգիմ . ոգեխառնիմ . նոյնանամ . ամուսնանամ . դաշնաւորիմ . անդրադարձիմ . ևն .

## Օրինակ .

* Յորժամ բռնութբ հաշտեցաւ ընդ նմա , նա 'ի բայ քանդի . և մեք 'ի պատուհասէ չարչրիմք || . Եղիշ . Գ .

* Իբրև եռեւս զպատանայ նախանձու բորբոքեալ, Թոյլ եւ անձնիշխանին ընդ անձնիշխանին ոգորել || · Եզնիկ ։
* Մարտեաւ ընդդէմ Թշնամին || · Ժամագիրք ։
* Ընդ ծովեզերեան ալիքն պատերազմին || · Գրիգ Տաթեւն ։

Ոմանք՝ նախադրութբս ՝ի վերայ · որպէս են բայքս, կոծիմ · զզջամ · ապաշխարեմ · մորմոքիմ · հեծեծեմ · ողբկիզիմ · խանդաղատիմ ։ Հսկեմ · շշեմ · շոգամ · ծածանիմ · գըր-գամ · գլոհեմ · յոխորտամ · գոռոզանամ · բռնանամ · միապետեմ · Թագաւորեմ · իշխանանամ · հոլանամ · եւն ։

## Օրինակ ։

* Կործանեցին ՝ի վերայ դորա Թագաւորք երկրի || · Յովբ · ԺԲ ։
* Մորմոքէին մանուկ ՝ի վերայ բանին՝ զոր ասէր || · Գործ · Է ։
* Հեծեծեցաւ ՝ի վերայ վիրաւորաց հոգւոց || · Սարգ · Ա · Պետ ։
* Ողբկիզեցին ՝ի վերայ Թշուառութեան որդւոց || · Նոյն · Ա · Պետ ։

Բազում՝ բայք եւ որք ստացեալ ներգործական բայից՝ ընդ յարմարութե առնուն զխնդիր նախադրութե · որ, * ԵԹէ տեսանիցէ զմեզ (նա) զհոգս մեր զնմ ՝ի նա ընկեցեալ, ոչ առնէ անտես, այլ հոգայ վն մեր || · Սարգ · Ա · Պետ ։
* Յաւէտ մեղանչեցաւ ՝ի վերայ իմ արքայութեանս այ || · Նար · Ա ։
* Առաջի անձանց Թաւալէին հանձարեղք || · Գէորգ · Ե ։
* Արտաքոյ բնութեան այլայլեցաւ || · Լամբ · հաւատ ։

Բազումք եւ երկբայականք եւ իբր ընդ պատահման առնուն զխնդիր ՝ի ձեռն նախադրութե · որ, Համբերեցէ դու վն քոյ, որք քն համբերէր վն քո || · Կիւրղ հաւատ · Է ։
* ԵԹէ զայլս կոտորելով ՝ի վերայ ածային օրինացն՝ պարծանս անձանց ժառանգեցայք · · · որչափ եւս առաւել եԹէ մեք մեռանիմք ՝ի վերայ մեծի վկայութե նն || · Եղիշէ · Է ։
* Եւ և նա ընդ առաջնոյ ՝ի պատուհասի պատուիրանի || · Աղոթ ։

Այլ գիտելի է, զի որք ստացեալ ՝ի խնդրառութե ներգործական բայից ՝ի հոլովս · Գ · ամ բայից հնար է առնուլ զխնդիր ՝ի ձեռն նախադրութե՝ կամ ընդ յարմարութե եւ կամ ընդ պատահման · որոց վն ոչ է հարկ յաճախել օրինակս ։

Կանոն · Ձ ·

Բայք չէզոքականք, կամ որք իբր չէզոքական վարին, յորժամ յարին յանուանս աւուրց և ժամանակաց, առնուն զնոսին խնդիր փոխանակ ներգործականի ՚ի հայցական հոլովն՝ իբր զխնդիր պատահական, կամ երկրորդական · որ, * ՚Ի հաղորդութենէն զամ մի ողջոյն, և զևս բազումս հրաժարէն || · Լամբ · ՚Ի ՃԿԱ · պատ ։ Ուր հայցական հոլովքս՝ զամ մի ողջոյն, և զևս բազումս՝ են պատահական խնդիր չէզոքական բայիս հրաժարէն ։ Ըստ այսմ է տեսանել և ՚ի յաջորդ օրինակսդ ։

* Առ ջրհեղեղաւն զամն ողջոյն տապանակեալ կայր երկիր || · Սարգիս · վրդ · ՚Ի ՃԿԱ · Ե · դպր · 5 ·

* Ամառնային գործ պատերազմին դառնութեն զերկուս ամս || · Եղիշէ վրդ · Գլ · Ը ·

Որպ չէզոքականացս ասացաք, սոյնպէս իմա և զներգործականաց և զկրաւորականաց, նա և զէականաց · զի սք ևս ՚ի յարիլն յայսպիսի անուանս՝ առնուն զնոսին ՚ի հայցական հոլովն · որ, * Կեցցէ անձն իմ, օրհնեսցէ զքեզ զամ աւուրս կենաց իմոց || · Շար · ՃԾԷ ·

* Փակեցան երկինք զերիս ամս և զվեց ամիս || · ՚Ի նոյն · Ե ·

* Գետնաշխարհիք ճնէին զինն ամ և զվեց ամիս || · Եզեկ · Ե ·

Այսպիսի խնդիրք բազում անգամ առանց զայլ դնին · որ, * Եկաց ( յունիկ ) ՚ի հայրապետութեն ամս Է || · Յովհ ·

Այլ ևս գիտելի է, զի որովհետև այսպիսի խնդիրք ունին զզօրութի ներգործականի, բազում անգամ ՚ի ներգործական հոլովն դնին, մանաւանդ ՚ի դասական անուանս, և յայնս՝ որք հանդերձ յատկացուցչաւ դնին · որ, * Յամս չորս անարգաբար թագաւորեալ հայոց՝ շապհոյ, հասանէ նմա համբաւ հիւանդութեն հօրն || · Խոր · Գ · 56 ·

* Համբերեցի ներդուեց մեծի յոյս 30 ամս || · Պետր Հայր · ԺԷ ·

Գիտելի է ևս, զի այսպիսի խնդիրք երբեմն դնին նաև յայլ հոլովս ՚ի պահանջելոյ բանին · որ, * Արդարքն կռապաշտութեն չանայան || · Ա · ՚Ի բազում ժամկս · Կոչ · Է ·

* Քաջասէրն տանջեալ պահեալ սէն գրիգոր՝ զխնծումն (պահոյն) 'ի խոստոյ առնէր || · Խոսրով Ճառ․ ողջ ։

## Կանոն · ԺԶ ։

Բայք չէզոքականք՝ ես և կրաւորականք յորժամ յարին յայնպիսի անուանս՝ որք են արմատք կամ ածանցեալք յայնց բայից, իբր 'ի բազում առնուն զնոսին 'ի Հայցական Հոլովն · որպէս, * Նախանձեցայց ես զբարուք նախանձն || · Մովսէս · առ պետրոս հռե ։ Ուր Հայցական Հոլովս վերաբերաց նախանձն՝ է խնդիր բայիս Նախանձեցայց · և ունի զզօրութի գործիական Հոլովի · որպէս թէ ասէր · նախանձելով բարի նախանձու ։ Ըստ այսմ է տեսանել և 'ի յաջորդ օրինակսդ ։

* Եթէ կամիս ով մարդ մեծանալ զանկշռելի մեծութեն, ես յուցանեմ զօրինակն || · Սարգ · յոհ · 9 ։

* Պատնէցաք 'ի թգ՝րէն զանթառամ զպսակն || · Շար · ԺԶ ։

* Թէպէտ զչարչարեն չարչարեն, սակայն նեղին և տագնապին || · Սարգ · յոհ · 3 ։

Ըստ այսմ լինի և 'ի յարաբերականս արմատոյ բայից · որպէս, * Ընկալցին զանարգանս խուրեանց մոլորութեն՝ զոր մոլորեցան || · Եզեկ · ԽԴ · 13 ։ Ուր բառս զոր՝ յարաբերելով զանունդ մոլորութե՝ որ է ածանցեալ յարմատոյ մոլորել բային, լեալ է նմա խնդիր՝ ունելով զզօրութի գործիական հոլովի · որպէս թէ ասէր · մոլորութեամբն՝ որով մոլորեցան ։

Այսպիսի Հայցական հոլովք արմատոյ բայից՝ դնին երբեմն առանց զոյգ իբր անորոշ Հայցական, կամ իբր ուղղական՝ բազում անգամ ունելով Ը խուրեանս զբառդ՝ մեծ · որպէս, * Տրտմեցաւ յոյժ տրտմութի մեծ || · Յի տրտմութ մեծաւ · Յովնան · Դ · 1 ։

* Հխանդացաւ (աշտա) հիւանդութի մեծ || · Յովհ · հոբ ։

Երբեմն ևս բայք ինչ փասն փայելչութեն և եթ յարեալ յայլ անուանս՝ որք չեն արմատ այնց բայից, առնուն զնոսին խնդիր եւութեն 'ի Հայցական Հոլովն · և այս երբ

բակի · Նախ՝ յորժամ անունն ունի զմերձաւորութիւն ինչ՝
կամ զկերպարերութիւն առ նշանակութիւն արմատոյ այնր բայ-
ին՝ որոյ լեալ է խնդիր · որպէս ՝ * Մի՛ ննջեսցուք զքունն
զայն ՝ որոյ կատարածն մահ է ‖ · փխ այնու քնով ՝ որոյ
կատարածն մահ է · Սարգ · յով · Ծ · յոբչ ։
* Ցաղագս որոյ պէտք են ՝ զի և զճրագունս գիտութեան
պայծառ ունիցին ՝ զի մի՛ խաւարեալք տգիտութ՝ նմբեռ-
ցեն զմեղայն քուն ‖ · Իգնատիոս վրդ · Ժէ · 35 ։

Երկրորդ՝ յորժամ անունն չունի ինչ մերձաւորութիւն ը
արմատոյ բային · որպէս ՝ * Զթագաւորն տեսանէ ՝ և սիրով
մերձեցեալ ՝ի նա՝ զանշառ ողջունելին ողջունեաց ‖ · Լամբ ·
Յուղ · 30 ։ Ուր բառս զողջոյն ողջունութեան՝ չունելով ինչ
նշանակութի ողջունելոյ բային՝ լեալ է նր խնդիր բնութ ։

Այլ պարտ է զգուշութի՛ վարել զայսպիսի ոճ ։

Երրորդ՝ յորժամ արմատ բային ՝ի ձեռն այլոյ իրիք բա-
ռի զօրութ՝ դնի · որպէս ՝ * Եւ եթէ հոգւոյն աշակերտաց
զայսոսիկ ախտանաւք ՝ զո՞ս արդեօք կարասցուք ազատել
յայսպիսի ախտից ‖ · Սարգ · յով · Ը · յոբչ ։ Ուր արմատ
բայիս ախտանաւք ՝ որ է բառս ախտ՝ եդեալ է զօրութ
՝ի ձեռն բառիդ զայսոսիկ · և նովաւ լեալ է խնդիր նր ·
ոպ թէ ասէր · զայսոսիկ ախտս ախտանամք ՝ փխ այսպիսիւք
ախտիւք ։

Այլ աստ գիտելի է ՝ զի և կրաւորական բայս պահան-
ջեն՝ երբեմն առնուլ զխնդիր բնութ՝ ՝ի հայցական հոլովս
որպէս ՝ * Իսկ զպտուղ աղօթից յամ ժամու պահանջեմք յայ ‖ ·
Խոսրով · ոպ թէ ասէր ՝ պահանջիմք յայ յամ ժամ տալ
զպտուղ աղօթից ։

Ըստ այսմ պատահի երբեմն և ՝ի բայսդ՝ ողջունեմ ՝ հրա-
մայեմ և խրատեմ · որպէս ՝ * Քահանի և զուրն ՝ի պօղոսէ ողջ-
չեմք ‖ · փխ ՝ի սոյն ողջունիմք · Խոսրով · յաղագս ։
* ՝ի սորինայնոյն հրամայեն ( վերին հրեշտակք ) զդրանցն
՝ի վեր համբարձումն ‖ · փխ հրամային ՝ի համբառնալ
՝ի վեր կղրունս · Շնորհալի · ՝ի նննջեցեալս հրեշտ ։
* Զայս օրինակ պարսաւանաց ծաղու ամ՝ ասուեք յամ-

ածնոյ բանից Երգոցն || . փխ յայս օրինակ պարսաւանաց խրատեմք . Իգնատ . է . 25 ։ Այլ պարտ է զգուշանալ յայսպիսի ոճոյ ։

Գտանելի է և ս, զի բայքս՝ Գնամ, Երթամ, ընթանամ և ուղևորեմ, 'ի յարկն 'ի բառս՝ ճանապարհ, ուղի, պողոտայ, ևն, թէպէտև պահանջեն առնուլ զնա 'ի նախադրիւ տրական, բայց բազում անգամ և ս առնուն 'ի հայցական . որ, * Անխափան և զօրաւոր՝ զառաքինութեան գնան ճանապարհ || . փոխանակ ասելոյ, ընդ ճանապարհ առաքինութեան . Խոսրով ։

* Սգոյլ և տրտմութբ Երեմայեն զերկայնութի ճանապարհին || . փոխանակ ասելոյ, յերկայնութի ճպհին . Եղիշէ . ը ։

* Ոչ տան թոյլ ընթանալ զառաքինութե ուղին || . փխ ընդ առաքինութե ուղին . Լամբ . առղ . ճեր ։

* Սնախատակ տքնութբ ուղևորեէին զանկարծ պողոտայն || . փխ ընդ անկարծ պողոտայն . Յովհաննէս կաթ ։

## Չեզոքական բայք անկանոնք ։

Ի վախճան խնդրառութեան չեզոքական բայից գիտելի է, զի բազումք 'ի սոցանէ առանց պահանջման խնդրոյ վարին . որպիսի են բայքս, Ազախանամ . ալեւորիմ . այտնում . անամօթիմ . անհամիմ . անմահանամ . առանցեմ . առասպարիմ . առկայծիմ . ուանանամ . բթիմ, կամ բթանամ . գաղախանամ . գինեհարիմ . գլանամ . գծծիմ . գօսանամ . դաշտանամ . եղկանամ . երախայանամ . երաշտանամ . զառամանամ . թոթովեմ . ժանգիմ . լաւանամ . լեռնանամ . լուսազգենում . խայծիմ . խեւիմ . խղխայթիմ . խմորիմ . խոհեմանամ . խոպանանամ . խուճապիմ . խօթանամ . ծառանամ . ծերանամ . ծերատանամ . կայծակեմ . կանաչիմ . կարկաչեմ . կարճամտիմ . կաւանամ . կնճռանամ . կոշտանամ . կորդանամ . հեզանամ . հիգանամ . հնանամ . ձորձիմ . ղօղանջեմ . ճաղատանամ . ճայթեմ . ճռնչեմ . մանկանամ . մոլեգնիմ . յաւակնիմ . նիւթանամ . շաչեմ . շա-

ռաչեմ · չինչիմ · չարագնիմ · պագիմ · պարթևանամ · պարսկանամ · ջահանամ · սալանամ · սեպանամ · սղիմ · սորկանամ · վայրագանամ · վատասրտիմ · վիժանամ · վիշապանամ · տարաժամիմ · տեւեխիմ · րաբունանամ · ցաւագնիմ · ցօղանամ · փայլականամ · փապարիմ · փռնչեմ · քաշահնչեմ · օթագնամ ։ Եւ այլ ևս բազումք ։

## Օրէնք ։

* Վա զի զկսկծեցուցիչ բնութիւն աղին 'ի բաց եղաք, և անհամեցաք, նորին աղագաւ կոխան եղաք՝ և այսպէս կատականայ ամ՛ աշխարհի || · Սարգ · յաշ · Է · ցորդ ։
* Սուրբ առաքելոյն եղեցուք, և նոյա պարտնոյքն ոչ ձանձրացան || · Եղիշէ վրդ · Գլ · Գ ։

Այսպիսի բայք թէպէտ ընդ ինքեան ոչ պահանջեն զխնդիր, բայց երբեմն ընդ պատճառի տեղւոյն՝ կամ ըստ այլ ինչ նշանակութեան վարեալ, կարեն առնուլ զպէսպէս խնդիրս · որ, * Աղանձօրհնեցաք առ ամենեսեան || · Եղեմ ։ * Վատթարացեալք եղեցաք յամ՛ առաքինութեանց || · Լամբ ։

Բազում չէզոքական բայք ևս թէպէտև ըստ ինքեան պահանջեն զխնդիր, բայց երբեմն ներգործութեան ոչ առնուն զայն, այլ զօրութեան միայն · որ, * Որքան զգալին կերաւ, խմանալին պակասէ || · Լամբ · առղ · ԺԵ ։ * Ամենայն՝ որ հպարտացաւ, խոնարհեցաւ || · Մծբ · Ե ։

## ԳԼՈՒԽ · ԺԲ ։

### Յաղագս խնդրառութեան Դերբայական բայի ։

Վասն խնդրառութեան սճ պահուռ է գիտել, զի այն բայք՝ որք առին ընդ պատահման դիմազուրկ · որպէս՝ ըղտանոյ · մտանոյ · յաճախէ · հանէ · պատահէ · ցիոնէ · ևն ։ ևս և այն բայք՝ որք առին ընդ պատճառի դիմազուրկ · որպէս՝ մարթէ · հատանէ · հարկէ · գոյէ · ևն , առնուն

զխնդիր ՚ի վերջահոլով տրականն ․ որ ․ * Եւ լռութեանց ՚ի քեբրոն ||․ Ե․ Թագ․ Ե․ 32 ։ Ուր բայս լռութեան առեալ է տրական խնդիր զբառդ նոցա ․ իսկ ՚ի քեբրոնն է պատահական խնդիր ․ և անուն բային դնի զօրութ․ այս է՝ օրն ։ Ըստ այսմ է և ՚ի սոսին ։

* Վա՛ աղնորիկ մրրգաւանց գիշերին || ․ Մծբ ․ ճառ ․ ծը ։

* Եթէ զմտորձն իսկութ՛ ցուցից՝ յաճախէ ինձ երկնից || Նարե ։

* Ցանկայ նմա վա՛ անկելոյն ՚ի հուր || ․ Եզնկ ․ նէ ։

Գործեալ՝ և այն բայք ․ որք ասին բայարձակ կամ՝ ըստ ինքեան դիմաւորուկ ․ որպ՝ վայել է ․ պատշ է ․ ևն ․ առնուն զվերջահոլով տրական ․ որ ․ * Վայելէ ծառայիցն այ միշտ օրհնել զնա || ․ Խոսրով ։ Ուր ծառայիցն այ՝ է տրական խնդիր բային վայել է ․ իսկ աներևոյթ բայս միշտ օրհնել՝ է անուն բային ։ Ըստ այսմ է և ՚ի սոսին ։

* Անդրէն է եպիսկոպոսին հայրութ և գութ լինել առ հնազանդեալ ժողովուրդսն՝ որպէս զգործակալս բռնաւորաց || ․ Ընդհանրակ ․ ընդհանր ։

* Իմաստասիրին պարտ և արժան է ազատամիտ լինել ՚ի նախանձու է || ․ Սարգ ․ յակ ․ Ե ։

Այսպիսի բայք երբեմն առանց խնդրոյ դնին ․ որ ․ * Պարտ է մեծաւ զգուշութ այսմիկ տանել հոգ || ․ Յոհն ․ իմաստ ․ ծգ ։ Ուր բայս պարտ է՝ առանց խնդրոյ դնի ․ իսկ աներևոյթ բայս՝ հոգ տանել այսմիկ մեծաւ զգուշութ՝ է անուն բային ։

## ԳԼՈՒԽ․ ԻԳ ։

### Յաղագս խնդրառութեան էական բայից ։

Էական բայք հասարակօրէն առնուն զխնդիր յուղղական հոլովն ․ որ ․ * Այգին փշաբեր՝ փշալից եղև || ․ Մծբ ․ Է ։ Ուր փշալիցն է ուղղական խնդիր էական բային եղև ․ իսկ այգին փշաբեր՝ է անուն բային ։

* Ես ծնորթն Աշմարիտ ․ և հայր իմ մշակ է || ․ Յոհն ․ ծե ։

Այլ ասա պարտ է նկատել, զի եթէ էական բայք ՚ի-
ցեն յոգնակի, ուղղական խնդիրն բազում անգամ դնի
եզակի · գր · * Դուք էք աղ երկրի || · Մատ · Ե · 13 ·
Բայց երբեմն և դնին յոգնակի · գր · * Պսակք ունկն-
դրողացն բազմապատիկք են || · Վարք հարց · Գլ · Է ·
Այսպիսի ուղղական խնդիրք՝ ուրեք ուրեք դնին և ՚ի
նախդրիւ տրականին · գր · * Ես եղէց ձեզ ՚ի Հայր, և
դուք եղիջիք ինձ յուստերս և ՚ի դստերս || · Փոխանակ
ասելոյ, ես եղէց ձեզ հայր, և դուք եղիջիք ինձ ու-
ստերք և դստերք · Բ · Կոր · Զ · 18 ·
Գիտելի է, զի էական բայք յորժամ յարին յայնպիսի
անուանս՝ որք ունին զնշանակութիւն ժամանակաց, չափուց և
գնոց, առնուն զնոսին խնդիր ՚ի սեռական հոլովի · գր ·
* Նոյ էր ամաց վեցհարիւրոց, և ջրհեղեղ ջուրցն եղև
՚ի վերայ երկրի || · Ծննդոց · Է · 6 ·
* Գետինն չորեքհարիւր սատեր արծաթոյ է || · Ծնն · ԻԳ ·
Այսպիսի սեռական հոլովք անուանց ժամանակաց եր-
բեմն յառաքական բայս և յարին՝ իբր պատահական խըն-
դիր նց · այլ այս ՚ի սակաւս · գր · * Եւ վախճանեցաւ
յովսէփ ամաց հարիւրևտասանց || · Ծնն · Ծ · 25 ·
Գիտելի է և, զի անուանք չափուց և կշռոց յայլ հո-
լովս և լինին խնդիր էական բայից ·
Երբեմն յուղղականն · գր · * Եւ երկայնութիւն նր (էր)
իննսուն կանգուն || · Եզեկ · ԽԱ · 12 ·
Երբեմն և յուղղականն և ՚ի տրականն միանգամայն · գր ·
* Եւ գրան սրահին փարագոյրք (էին) քսան կանգուն
՚ի բարձրութիւն || · Ելից · ԻԷ · 16 ·
Իսկ երբեմն ՚ի բայառականն · գր · * ՚Ի քառասուն
կանգնոյ էր տունն || · Գ · Թագ · Զ · 17 ·
Երբեմն և ՚ի գործիականն, մանաւանդ եթէ զօրութք
դիցի բայն · գր · * Եւ Թանձրութի ձուլոյն Թզաւ || · Է · [illegible] · [illegible] ·
Իսկ վս այլոց խնդրոց էական բայից ոչ է հնար որոշա-
կի կանոն դնել · զի ը պատհանջման բանին և ը զօրութե

անուանցն՝ յորս յաւելուն ՝ առնուն զխնդիր 'ի զանազան հոլովս՝ բազում անգամ իբր երկրորդական ։

Երբեմն առնուն պարզապէս զսեռական · որ͞պ ՝ * Այս վերլին իմաստութեան էր || · Իգնատ · յառաջէ ։ Ուր սեռական հոլովս վերջին իմաստութեան՝ է խնդիր բային էր · իսկ դերանունդ այս է անուն բայի ։

Երբեմն առնուն զներջահոլով տրական · որ͞պ ՝ * Սրբութեան սրտին հաճելի եղեն նմա աղօթք || · Մծբ · ͞ք ։ Ուր տրական հոլովս նմա՝ է երկրորդական խնդիր բային եղեն · իսկ աղօթքն է ուղղական խնդիր ։

Երբեմն զնախնդրելի տրական · որ͞պ ՝ * Բազմապատիկ են առ այս սէրն բանք || · Իգնատ · ծէ · 9 ։ Ուր նախնդրելի տրական հոլովդ առ այս՝ է երկրորդական խնդիր բային են ։

Երբեմն զբացառական · որ͞պ ՝ * Քանզի 'ի մարմնոյն ք͞սի եմք մեք ՝ և անդամք յանդամոց նո͞ր || · Մծբ · ͞ե ։ Ուր բացառական հոլովքս 'ի մարմնոյն և յանդամոց՝ են երկրորդական խնդիր բային եմք ։

Երբեմն զպատմական · և այն՝ յաւէտ ը͞ն յարելոյ յանուանս ինչ ՝ որք զպատմական խնդիր պահանջեն · որ͞պ ՝ * Որ ուրասցի զիս առաջի մարդկան ՝ յուրացող եղէց և ես զնմանէ առաջի հօր իմոյ որ յերկինս է || · Եզնկ · ͞գ ։ Ուր պատմական հոլովս զնմանէ՝ է խնդիր բնութեան բային եղէց՝ ը͞ն յարելոյ նո͞ր 'ի բառդ յուրացող ։

Երբեմն զգործիական · որ͞պ ՝ * Եւ եղիցին գործք արդարութե͞ն խաղաղութե͞բ || · Եսայ · լբ · 17 ։ Ուր գործիական հոլովս խաղաղութեամբ՝ է խնդիր բային եղիցին ։

Երբեմն զպարառական · որ͞պ ՝ * Բազում ամիսս էր զնովաւ || · Ոսկ · ͞է · 17 ։ Ուր պարառական հոլովս զնովաւ՝ է խնդիր բային էր ։

Երբեմն զներգոյական · որ͞պ ՝ * Միշտ 'ի գայթակղութե͞ն են որք նոյա || · Խոսրով ։ Ուր ներգոյական հոլովս 'ի գայթակղութեան՝ է խնդիր բային են ։

Երբեմն նախադրութե͞բ · որ͞պ ՝ * Ընքն ընդ ապականութե͞բ են || · Եզնկ · ͞ը ։ Ուր ընդ ապականութեամբն է նախադրութե͞բ խնդիր բային են ։

# ԳԼՈՒԽ · ԻԴ ։

## Գիտելիք ինչ ՝ի վր̄ խնդրոյ բայից ։

Կան ինչ ինչ գիտելիք ՝ի վր̄ խնդրոյ բայից ، զորս
պատշաճ դատեցաք կարգել յայս գլուխ առան-
ձինն ، առ ՝ի տալ զնոցանէ որոշ ինչ տեղեկութի ։ Վն̄յ

Գիտելի է նախ ، զի բայք բազում անգամ յարելով
յանուանս ինչ՝ իբրև մի վարին ընդ նոսա ، և առնուն խըն-
դիր հաղորդական · ո̄ր այնպիսի՝ որ ոչ սոսկ բային հա-
մարի ، և ոչ լոկ անուանն · այլ՝ երկոցուն միանգամայն · և
այս՝ թէ ՝ի ներգործականս ، թէ ՝ի չէզոքականս ، և թէ
յէականս ։

՝Ի ներգործականս · ո̄ր ، * Գիրկս արկի կենցաղոյս սիրոյ||·
Նար · Է ։ Ուր վերջահոլով տրական հոլովս կենցա-
ղոյս՝ է խնդիր գիրկս արկանելոյն ։

՝Ի չէզոքականս · ո̄ր ، * Խրատեալ զաստի կենայս զմ̄
ինչ ՝ի բաց ընկենուլ ، և անտի կենայն միայն պատկառ-
կալ || · Իգնատ · ԺԷ · 32 ։ Ուր վերջահոլով տրական հո-
լովս անտի կենացն՝ է խնդիր պատկառ կալոյն ·

Յէականս · ո̄ր ، * Կցորդ լեր հեզութե̄ ուսմանաւորս
տկարութե̄ || · Նար · ԿԷ ։ Ուր վերջահոլով տրական հո-
լովս տածմանաւորս տկարութե̄՝ է խնդիր կցորդ լինելոյն · իսկ
հեզութե̄ն է երկրորդական խնդիր նորին ։

Երբեմն ևս բայք ինչ յարեալք ՝ի մակբայս ، կամ ՝ի
նախադրութիս՝ իբր մի բայ վարելով ը̄ նմ̄ ، ը̄ պահան-
ջելոյ նշանակութե̄ նց առնուն զխնդիր հաղորդական · ո̄ր ،
* Հեռի են յա̄յ՝ հեռացեալքն յերկրեղէնք || · Խոսրով ·
Ուր բացառական հոլովս յա̄յ՝ է խնդիր հեռի լինելոյն ։

Գիտելի է երկրորդ ، զի յորժամ բազում բայք գան
՝ի միասին ، խնդիրն մօտագունին հետևի · ո̄ր ، * Նե-
ղեալ անձինք օրհնեն և գոհանան զա̄յ՝ զերծեալք ՝ի վը-
տանգից || · Իգնատ · ԺԳ · 12 ։ Ուր խնդիր բային՝ ո̄ր պատ-
մական հոլովն զա̄յ՝ եղեալ է ը̄ բնութե̄ այնր բայի՝ որ

մօտ է նմա, այն է՝ բայս գործական. և ոչ այնր՝ որ հեռի
է 'ի նմանէ, այն է՝ բայս օրհնէն.

Բայց երբեմն՝ այլ սակաւ ուրեք հեռաւորին բային հե-
ռաւոր խնդիրն. որ, * Աւուրն վնասին զնա || . Ղեւտ. ԻԶ ։
Որ դայլակամ հոլովմունս ոչ է եղեալ խնդիր այնր բայի՝
որ մօտ է նմա, որ է՝ գործէն. այլ այնմ, որ հեռի է
'ի նմանէ, որ է՝ առէն. որպէս թէ ասէր. աւուրն զնա և վնասին ։

Գիտելի է երրորդ, զի յորժամ բազում բառք նախ-
դրիւ լինին խնդիր բայի, նախդիրն դնի 'ի վերայ առաջին խնդ-
րոյ. որ, * Եւ այսպէս մանկանցն հարսանեացն խա-
բէութիւն զանձինս նոյն մատնէր 'ի բանս և 'ի կապանս և 'ի
պատիժս մահու || . Յովհաննէս հռոմ ։

Իսկ երբեմն՝ այլ սակաւ ուրեք դնի 'ի վերայ առաջնոյն միայն. որ, * Ես խօսիմ արդարութիւն և իրաւունս փըր-
կութեան || . փոխանակ ասելոյ, ես խօսիմ զարդարութիւն և
զիրաւունս փրկութեան . Եսայ . ԿԳ . 1 ։

Երբեմն և՝ այլ դուն ուրեք դնի 'ի վերայ յետնոյն միայն.
որ, * Ես ցնա թագ և պատմուճան և զմատանին զնր || .
փոխանակ ասելոյ, ես ցնա զթագ և զպատմուճան և զմա-
տանին իւր . Ա . Մակ . Է . 15 ։

Գիտելի է չորրորդ, զի եթէ խնդիր բային ևս ունի-
ցի զխնդիր՝ եղեալ նախ քան զինքն, և կամ զայլ ինչ
բառ, նախդիրն հասարակօրէն դնի 'ի վերայ նորին, որ 'ի վերայ
խնդրոյ խնդրոյն. որ, * Զյորոլույնէ մարքեալն զարդա-
րեսցէ օթևան քեզ տէր || . Մաղաք ։ Աւուր տառոց՝ Ե, որ
է նախդիր բառիս մարքեալն՝ եղեալ է 'ի վերայ խնդրոյ նոր.
որ 'ի վերայ բառիս յորոլույնէ՝ որ նախադասեալ նոր քան զմար-
քեալն ։ Ըստ այսմ է տեսանել և 'ի յոսին ։

* Պարծեցուցանես 'ի պայծառութիւն բոլոր տեսակի զբե
ղանծայեալսն || . որ զպանծայեալսն քե . Նար . ԶԷ ։

* Որ բանիւ միայն ունէր զառ 'ի յայծ խոստովանութիւն,
այլ ոչ գործով, այնպիսւոյն հաւատն մեռեալ է || . որ
որ բանիւ միայն ունի զխոստովանութիւն առ այծ, այնպիսւ-
ւոյն հաւատն մեռեալ է . Շնորհալի . ընդհանր ։

* Զ՚ի քոյդ լրութէ ՚ի մեզ փրկութի և օծելութի գե-րաբնակէ սնախազեկուցեր || . զնախազեկուցեր զփրկու-թիւնն, որ եղև ՚ի մեզ ՚ի քոյդ լրութէ . Նար . ղդ՟ . կճղէ . 8 .

Իսկ երբեմն դնի ՚ի վր՟ երկուց կամ բազմաց ևս . զր,
* Որք զօր ՚ի քո՟ չչարչարանս յանձն առեալ համբերե-ցին քո՟ միաշտէր հայրապետաց || . ՚Ի Շարակնոցն . Նահան . ՃՃ՟
* Որ զխառնակցի հօր հոգւոյդ զուածոյն զար ՚ի քէն հո-վանացեալ այսօր հանգուցեր ՚ի լոյսն անմատոյց || . ՚Ի Նոյն . ՉԷ .

Յայսպիսիս՛ սրբէք սրբէք նախդիրն դնի ՚ի վր՟ յետնոյն միայն, զր ՚ի վր՟ բուն խնդրոյ բային . զր, * Զի՛ կոծիս և աշխարես անգիտանալով առ քեզ ընծեալն յիմ || . զր զընծեալն առ քեզ յիմ . ՚Ի Ժամագրքէն .
* Եւ ՚ի ծանրութէ մեղաց զաշխատեալս ապահովեմ ողոր-մութե քով || . Ժամագրքէ .

## ԳԼՈՒԽ . ԻԵ .

### Յաղագս Աներևոյթ Բայից .

Զոր ինչ ասացաք զբայից, և զխնդրառութեց նոցին, զայն զմ՟ պարտ է իմանալ և զաներևութից, զի որս և զդերբայից, զի որում են բայք . որպ՟ յայտ է յօրինակաց եդելոց ՚ի վերոյ . Իսկ յաղագս լինելոյ սոց՟ անուն բայի և խնդիր բայի՛ խօսեցաք ՚ի Գլ . ԺԸ , և ԺԷ . Մնայ մեզ այժմ խօսել զսոցանէ՛ զի լինելոյ սոց՟ խնդիր բնութե, և զի այլ ինչ մասնաւոր ծանօթութեց .

Արդ՛ սոքա, զր աներևոյթ բայք՛ բազում անգամ լինին պատահական և երկրորդական խնդիր բայից իբրև դեր-բայ, զօրութե ունելով զնախդիրն ՚ի կամ առ ՚ի, ՚ի տրական հոլովն . զր, * Ուսանանաց տիրել, և զօրանայ յաղթել || . Իգնատ . ցասմղէ . Ուր տեսնել է խնդիր Երա-նելոյն, և յաղթել զօրանալոյն, իբր դերբայ . որոց

նախդրին եդեալ է զօրութբ̄ · որպ̄ թէ ասէր · բռնանայ
՚ի տիրել , և զօրանայ առ ՚ի յաղթել .

Երբեմն ևս աներևոյթ բայք՝ մանաւանդ չէզոքականքն՝ լինին ուղղական խնդիր ներգործական բայից · ըր̄ , * Հուպ առ միմեանս եդեալ ( զփարիսեցին և զմաքսաւորն՝ ) զմինն մծ̄ ամբարտաւանութեն̄ ը̄ չարս պատմէ · և զմիւսն մծ̄ խոնարհութեն̄ արդարացեալ վկայէ || · Եփրեմ · ծը̄ · 10 : Ուր բառս զմիւսն՝ է խնդիր սեռի բային վկայէ · և արդարանալն է իբր ուղղական խնդիր նր̄ · իսկ մծն խոնարհութեն̄ է խնդիր արդարանալոյն :

Ըստ այսմ՝ լինին բազում ուրեք և աներևոյթ բայքս, լինել և գոլ · և այս յաճախ ՚ի ներգործականս · ըր̄ , * Ամ̄ զի ՚ի նմանէ լուան նոքա լինել զդուռն , և անձուկ զՃանապարհն՝ որ տանի ՚ի կեանսն || · Եփրեմ · ծփ̄ · 23 : Ուր բառքս զդուռն և զՃանապարհն՝ են խնդիր սեռի բային լուան · բառս ՚ի նմանէ՝ է բացառական խնդիր նորա : աներևոյթ բայս լինել՝ է ուղղական խնդիր : իսկ նեղն և անձուկն են ուղղական խնդիր լինելոյն :

* Եւ իմացեալ գիտացաք զաւր սկայազօր ախոյեանն գեղեցիկ զհայկն գոլ որդի Թորգոմայ || · Յովհ · կոթ :

Ուր հայկական հոլովս՝ զաւր սկայազօր ախոյեանն գեղեցիկ զհայկն՝ է խնդիր սեռի բային իմացեալ գիտացաք : գոլ՝ է ուղղական խնդիր նր̄ : իսկ բառս որդի Թորգոմայ՝ է ուղղական խնդիր գոլոյն :

Յայսպիսի բանս՝ հայկական հոլովք՝ որք դնին իբր խնդիր սեռի ներգործական բայից , համօրէն լինել ևս զօրութբ̄ անուն բայի աներևոյթ բայիցն՝ որք դնին իբր ուղղական խնդիր :

## Արգելչական խնդրոյ բայից .

Աներևոյթ բայք բազում անգամ ՚ի բազում տեղիս լինին արգելիչ խնդրոյ բայից · իբր զի՝ ը̄ առ... եղեալ դիմաւոր բայի՝ արգելուն զխնդրառու-ի

նորա · զի ինքնին լեալ խնդիր բային՝ ինքեանք առնուն զխնդիրն ըստ պահանջելոյ բնութեան իւրեանց · որ ՝ * Որ խոստացար տալ զվիճակս արքայութեան երկնից երանելոյն պետրոսի || · Հոմ · ԺԶ · Որ աներևոյթ բայս տալ՝ է առաջ եկեալ զխնդիր բայիս խոստացար՝ լեալ է նմին իբր խնդիր ՝ և արգելեալ է զխնդրաութիւն նորին · և ինքն է առեալ խնդիր սեռի զբառդ՝ վիճակս արքայութ երկնից · նաև խնդիր բնութեան ՝ զբառդ՝ երանելոյն

պետրոսի ։

Նաև գիտելի է նախ ՝ զի արգելիչ խնդրոյ լինին՝ նախ ներգործական աներևոյթք՝ ներգործական բայից · որ ՝ * Խնդրել ընդունել զպատիւն իւր փրկչական այս մեծ օր || · Յովհ · Եմաւ · Ե ։ Որ ներգործական աներևոյթ բայս ընդունել՝ է արգելիչ խնդրոյ ներգործական բայիս խնդրել · և ինքն է առեալ խնդիր զբառդ՝ պատիւն իւր ։

Երկրորդ՝ չէզոքականք՝ չէզոքականաց · որ ՝ * Ջանա- յցուք մտանել ընդ նեղ դուռն || · Ղուկ · ԺԳ · Է ։ Որ չէզոքական աներևոյթս մտանել՝ է արգելիչ խնդրոյ չէզոքական բայիս ջանայցուք · և ինքն առեալ է խնդիր զբառդ՝

ընդ նեղ դուռն ։

Երրորդ՝ ներգործականք՝ չէզոքականաց · որ ՝ * Ցանկ ացեալ էր պատրաստել պատճառս հնարից ինքեան փրկութե || · Նար · ԼԵ ։ Որ ներգործական աներևոյթս պատրաստել՝ է արգելիչ խնդրոյ չէզոքական բայիս ցանկացեալ ։

Չորրորդ՝ չէզոքականք՝ ներգործականաց · որ ՝ * Մովսէս արգելեաց մտանել ՝ի պարգևական երկիր || · Սարգ · ցոհ · Է ։ Որ չէզոքական աներևոյթս մտանել՝ է արգելիչ խնդրոյ ներգործական բայիս արգելեաց ։

Գիտելի է երկրորդ ՝ զի երբեմն աներևոյթ բայն լինի արգելիչ՝ խնդրոյ սեռի միայն ՝ և ոչ խնդրոյ բնութե որ ՝ * Ոչ մեզ տանել զպարտաւորութիւն Ճշմարտութե || · Քամեգիր ։ Որ աներևոյթ բայս տանել՝ արգելեալ է ըզխնդիր սեռի բայիս տաս · և ոչ զբնութեն՝ որ է բառս մեզ ։

Գիտելի է երրորդ ՝ զի երբեմն արգելիչ խնդրոյն նա-

խառնասի դիմաւոր բային ։ որպէս * Հաստատեսցէ փութայր զկայս մխաբանութեան սիրոյ նշ || . Յովհ · Հու ։ Ուր արգելիչ խնդրոյն՝ այն է հաստատեսցին՝ նախադասեալ է բայիս փութայր ։

Եւ երբեմն ևս՝ խնդիր արգելչին նախադասի քան զդիմաւոր բայն ՝ որ անկանի ՝ի մէջ արգելչին և ՝ի մէջ խնդրոյ նորա ։ որպէս * Զանեզերս բաւեսցին ընդունել շնորհօք Հոգւոյն սբյ || . Իգնատ · յառաջբ ։ Ուր խնդիր սեռի աներևոյթ բայիս ընդունել՝ որ է արգելիչ խնդրոյ ՝ եդեալ է նախ քան զդիմաւոր բայս բաւեսցեն ։ իսկ խնդիր բնութեան եդեալ է զկնի ։ զոր մարթ էր դնել այսպէս ։ բաւեսցեն լնուլ զանեզերս շնորհօք Հոգւոյն սբյ ։

Գիտելի է չորրորդ ՝ զի բազում անգամ միոյ բայի լինին բազում արգելիչք խնդրոյ ։ որպէս * Փութային վաղվաղակի զօր ծաղկեցին ՝ գտանել հաղորդել || . Եղիշ · Է ։ Ուր երկոքին աներևոյթքս ևս՝ ծաղկելն՝ հաղորդել՝ են արգելիչ խնդրոյ բայիս փութայաւ ։

## ԳԼՈՒԽ · ԻԶ ։

### Յաղագս Դերբայից ։

Դերբայք են աներևոյթ բայք հոլովեալք իբր անուն ։ Մէ թէպէտ միշտ ունին զզօրութիւն բայի ՝ բայց որովհետև իբր անուն հոլովին՝ գրեթէ ը օրինակի գոյական անուանց վարին ։

Ունի և իբր գոյական անուն՝

Նախ՝ լինին յատկացուցիչ ։ որպէս * Որ ունի ականջս լսելոյ՝ լուիցէ || . Մատ · ԺԱ · 15 ։ Ուր դերբայս լսելոյ՝ է յատկացուցիչ ականջաց ։

Երկրորդ՝ լինին բացայայտիչ ։ որպէս * Յերկոսին զօրաւոր է՝ ՝ի պատմելն և ՝ի ճարտարաբանելն || . Գէորգ · Կէ ։ Ուր դերբայքդ ՝ի պատմելն և ՝ի ճարտարաբանելն՝ լեալ են բացայայտիչ անուանդ յերկոսին ։

Երրորդ՝ լինին խնդիր նախադրութեանց ։ որպէս * Մի կըշ-

տամբերեայց յուսկբէ վասն օրհնելոյ զպատմանայական սերմա-
նեաւ անկարգութեամբ || . Ղուկ . Է . Հարց . ԺԵԵԲ .

Չորրորդ՝ լինին խնդիր անուանց . զբ ՚ * Եւ քանզի ոչ գտայ արժանի գործելոյ ՚ի փառս Ը սրբոյն դաս ... ՚ի կարգն երկրորդ դիմեցից՝ զնմանիան իմ յիշատակել || . Նար . Ղ ։ Ուր դերբայս գործելոյ՝ հանդերձ խնդրով իւրով ՚ ( որ է՝ ՚ի փառս Ը սրբոյն դաս ) ՚ է տրական խնդիր անուանս արժանի ։

Հինգերորդ՝ լինին խնդիր բայի . երբեմն իբր բուն խնդիր բնութեան . զբ ՚ * Ներեա գնելոյն ըստ քում պատուիրանի || . Ղուկ . ՚ի ԺԵ . պ ։ Ուր դերբայս գնելոյն՝ է բուն խնդիր բնութեան բայիս Ներեա ՚ի տրական հոլովն . իսկ ...՝ է անուն բայի գնելոյն . և ... պատուիրանին՝ է խնդիր նորին ։

Երբեմն ևս՝ մանաւանդ թէ բազում անգամ լինին խնդիր երկրորդական ՚ և յաւէտ ևս պատահական . զբ ՚ * ՚Ի Թագաւորել Ճշմարտութեան՝ լուսայէ մեր կարծեցուցանօղ զօրութիւ || . Դանիէլ ... ։ Ուր դերբայս ՚ի Թագաւորել՝ է երկրորդական և պատահական խնդիր բայիս լուսոյէ ։

Այլ ասա դիտելի է ՚ զի բազում անգամ ՚ի գերադասն շարադրութեան դերբայք ՚ի վերջոյ գնին ՚ի գործական հոլովն՝ առ ՚ի չքնաղ լինծայեցուցանելոյ զբանսն . զբ ՚ * Ա՛ զի որք բժշկեանն ( մարմնաւորապէս՝ ) զմարմինն և եթ բժշկեն ՚ առ հոգւոյն բժշկութիւ շահ և ոչ մի ինչ ցուցանելով || . Մարգ . ... ։

Գիտելի է ևս ՚ զի ներգործական դերբայք երբեմն փոխանակ հայցական հոլովի առնուն զխնդիր ՚ի սեռական հոլովն ՚ որ համարին ... իբր ... յատկացուցիչ . զբ ՚ * Եւ յոլսէփ յերկրին եգիպտոսի ոչ ՚ի պահել ... այլ ... իւրով արդար կոչեցաւ || . ՄԾԷ . ԾԷ ։ Ուր դերբայս ՚ի պահել առեալ է փոխանակ հայցականի զսեռական հոլովն՝ ... ։

Այլ պարտ է զգուշանալ յայսպիսի ոճոյ ։

# ԳԼՈՒԽ · ԻԶ ·

## Յաղագս համաձայնութեան ընդունելութեանց ՚ի հատուածս ։

Ընդունելութիւնք՝ թող զյանգեալն ՚ի լոյս, կրկնակի համաձայնին ընդ անուանս ։

Նախ՝ իբր խնդիր · որ, * Դատապարտօղք՝ զՔս ոչ խոստովանողաց || · Հռոմ · Ժ ։ Ուր ընդունելութիւն խոստովանողաց՝ է խնդիր ընդունելութեան դատապարտօղք ։ Իսկ հայցական հոլովս զՔս՝ է խնդիր սեռի խոստովանողաց · որպ թէ ասէր · դատապարտօղք այնոցիկ՝ որք զՔս ոչ խոստովանին ։

Երկրորդ՝ իբր ածական · որ, * Գրգռեալ տրտմօք . . . տաղտկացեալ աշխատօք || · Նար · ԽԶ ։ Ուր գրգռեալն է ածական տրտմօքն, և տաղտկացեալն՝ աշխատօքն ։

Իսկ ՚ի յայլս յանուանս՝ բազում օրինակաւ համաձայնին ընդ նոսա ։ Նախ՝ իբր խնդիր · որ, * Փառաւորեսցուք զփեսայութիւն · վերօրհնեալդ գովիչ || · Նար · Գով · Կուս ։ Ուր փառաւորեսցուքն է խնդիր անուանս զփեսայութիւն · և վերօրհնեալդ՝ խնդիր անուանս գովիչ

Երկրորդ՝ իբր յատկացուցիչ · որ, * ՚Ի պատերազմողն կարգ զինքն համարեցաւ || · որ ՚ի կարգ պատերազմողի · Իգնատ · ԺԶ · Ց ։ Ուր ընդունելութիւն պատերազմողն՝ է յատկացուցիչ անուանս ՚ի կարգ ։

Երրորդ՝ իբր բացայայտիչ և բացայայտեալ · որ, * Որդւոյն այլ առեալ ՚ի հօրէ՝ ՚ի ծնողէն իւրմէ՝ դատել զմարդն, որ ոչ պաշտեսցին զհայր, դատի զնա || · Աղգուն ։ Ուր ընդունելութիւն ՚ի ծնողէն՝ է բացայայտիչ անուանս ՚ի հօրէ ։

Չորրորդ՝ իբր ածական՝ ածական անուանց · այլ այս ՚ի սակաւս · որ, * Ո՛չ միաբանին հաւատացեալք ընդ ձաղկողսն աղանդոց, և ո՛չ թագաւորք՝ ընդ կաղեալ բռնաւորս || · Մծբ · ԺԲ ։ Ուր ընդունելութիւն աղանդոց՝ է ածական

անուանս յորջորջեն . և կոչեալն՝ քահանայութիւն :
Հինգերորդ՝ որ օրինակի գոյական անուանց՝ առնուն երբեմն զանականս . որ * , Անհանճարք խնդրողն՝ յանձն վրիպի || . Իմաստ . ձԷ : Ուր ընդունելութիւն քնքշոց՝ առեալ է ինքեան անական զանունդ անհանճարոց .
Դարձեալ լինին ոք ևս և անուն բայի , և խնդիր բայի , և խնդիր նախադրութեց . որպէս տեսցուք այլուր . որ որում է տեսանել և ՝ի սոսին . որ , * Մի՛ լիցուք այլոց բժիշկք չարաչար կերպոք ցեխոց || . Սարգ . յոհ . 9 . յորդ :
Իսկ թէ ոք զիարդ իբր անական համաձայնին ընդ գոյականաց , և կամ զորպիսի խնդիր առնուն , տեսցուք ՝ի յաջորդ գլուխսդ ՝ի մասնաւորի :

## ԳԼՈՒԽ . ԽԸ .

### Յաղագս ընդունելութեանց յանգմանց ՝ի ող :

Սոքա միշտ իբր անական անուն վարին , ունելով ևս զզօրութիւն բայիցն՝ յորոց բղխեն . որ որոց ևս երբեմն առնուն զխնդիր . իսկ թէ զիարդ , յայտ լիցի ՝ի յաջորդ կանոնսդ .

#### Կանոն . Ա :

Ընդունելութիւնք ներգործականք յանգեալք ՝ի օղ՝ առնուն զխնդիր սեռի ՝ի սեռական կամ ՝ի հայցական հոլովն՝ որ պահանջելոյ վայելչութեան տեղւոյն :
՝Ի սեռականն . որ , * Դատաւոր կայ գիտօղ ամի || . Ընդրէ . ընդհանք . Ուր ընդունելութիւն գիտօղ՝ առեալ է իւր խնդիր սեռի զբառդ ամի՝ ՝ի սեռական հոլովն :
՝Ի հայցականն . որ , * Եւրանի թէ գոնեայ անագան ճանաչէաք , կամ ՝ի բժշկութիւն միտէաք . և ոչ քնքշողոցն զճշմարտութիւն՝ ընդդէմ զինէաք || . Լամբ . պատ :
Ուր հայցական հոլովս զճշմարտութիւն՝ է խնդիր ընդունե-

ըութեւս խնդրողաց .

Ոմանք յայսպիսի ընդունելութեանց փոխանակ սեռականի և հայցականի՝ առնուն զխնդիր սեռի յայլ հոլովս՝ ըստ բայիցն, յորոց բղխեն . որ, * Ընթերցայք զգիր յընդդիմադրութե ամբարշտութեանցն զքէն առ մեզ || . Ղևոնդ . Եղբ . Ուր զքէն՝ դնի փոխանակ խնդրոյ սեռի, որ փոխանակ հայցականի . իսկ առ մեզն՝ տրական խնդիր բնութե ամբարշտութեանցն .

* Աղքատօղէ զբարեօք՝ և օգտաժողովք || . Մծբ . ծն . Ուր զբարեօքն դնի փոխանակ խնդրոյ սեռի աղքատօղէին .

Կանոն . Ժ .

Ընդունելութիւնք ներգործականք յանգեալք ՚ի ող՝ բայց ՚ի խնդրոյ սեռի առնուն երբեմն զխնդիր բնութե . և զայն՝ կամ ընդ իւքեան, կամ՝ ընդ յատկութե, և կամ իբր երկրորդական՝ ընդ պահանջելոյ բայիցն՝ յորոց բղխեն .

Ոմանք առնուն զկերպ հոլովոյ տրական . որ, * Նախապատմօղ մարգարէից զխոնարհելդ քո յերկնից || . Ղուկ . Ճլէ . Ուր բառս զխոնարհելդ՝ է խնդիր սեռի նախապատմօղէն . իսկ մարգարէիցն՝ է տրական խնդիր նորա .

Ոմանք զնախնդրիս տրական . որ, * Ցանկալախնդան փառաւոր հաղորդութե զմեզ հրաւիրօղ երջանիկ նշան || . Նար . ղէ . Ուր բառս զմեզ՝ է խնդիր սեռի ընդունելութեան հրաւիրօղ . իսկ բառս ՚ի հաղորդութեան անկախան փառաւոր՝ է բուն խնդիր բնութե .

Ոմանք զբացառական . որ, * Ջուր ՚ի յերկնից առեալ իջեալ կենսատուն կերակուր՝ զնորն ուխտ և նորոգօղն զմեզ ՚ի մեղայն եղծմանէ || . Ցոյց . եմաստ . Ե . Ուր եղծմանէ է խնդիր սեռի ընդունելութեան նորոգօղ . իսկ բառս յեղծմանէ մեղացն՝ է խնդիր բնութե :

Ոմանք զգործիական . որ, * Կոխան ( եղէ ) . . . ճարտարօղացն զիս ախտիւք || . Սարգ . յակ . Է . յորդ . Ուր բառդ զիս՝ է խնդիր սեռի ճարտարօղացն . իսկ ախտիւքն՝ խնդիր

բնութեան ։

Ոմանք ընդերգոյական, որ, * Անիծեալ՝ դնօղն զյոյս 'ի մարդ ||. Երեմ. ԺԷ. Ուր բառդ զյոյս՝ է խնդիր սեռի դնողին. իսկ 'ի մարդն՝ ներգոյական խնդիր նը ։

Ոմանք ևս 'ի ձեռն նախադրութե. որ, * Հաւանեցուցանէր (Հոգին) . . . տալ զարինս վկայականս ընդ արեան առաջնոյ վկային, և զհայր ընդ արարածս հաղորդութեանցն ||. Մարգ. Ա. դէտ. 2. Ուր բառս զհայր՝ է խնդիր սեռի հաղորդութեանցն. իսկ ընդ արարածս՝ նախադրութե խնդիր նը ։

Որպէս ուրեք ևս ոմանք յայսպիսի ընդունելութեց ընդ յարմարութե՝ և կամ իբր ընդ պատահման առնուն զխնդիր յուղղական հոլովն. որ, * Վա՜յ զմարմինս դարդարեալ կերակուր որդանցն անմահից, կատարեալն Թոմասորայ զխա՛րդ Համբերէցից ||. Նար. Է. Ուր բառդ զմարմինն՝ է խնդիր սեռի դարդարեալ. և ուղղական հոլովդ կերակուր՝ է պատահական խնդիր նը. իսկ որդանցն անմահից՝ է սերական խնդիր. որպէս թէ ասէր. վա՜յ ինձ՝ որ պարարեցի զմարմինս իմ որդանցն անմահից կերակուր. և զխա՛րդ Համբերէցից կատարեալ ստամոքս ընդ Թոմասորայ ։

Այսպիսի ընդունելութիք երբեմն զխնդիր սեռին զօրութ ունելով՝ առնուն միայն զխնդիր բնութեան. որ, * Հաւան . . . . զօտար ազդեցմունս՝ 'ի մահ հիւանդին ||. ընդ կիրթողին զմեզ 'ի մահ. Նարեկ. 'ի բանն. ԺԸ.

Կանոն. Գ.

Ընդունելութիք չէզոքականք յանգեալք 'ի օղ՝ առ հասարակ զայնպիսի խնդիր առնուն, զորպիսի պահանջեն բայքն՝ յորոց բղխեն ։

Ոմանք առնուն զվերջահոլով սերական. որ, * Ջրոյտեսանեմք պարզ ական մնայ լուսաւորութե խոհական մասին փոփոխօղ ||. Ընթրի. Բղխ. Ուր բառդ խոհական մասին՝ է խնդիր փոփոխօղին 'ի սերական հոլովն ։

Ոմանք կնախդրիւ տրական · որպ · * Ուղղութիւն հայեցօղն 'ի գիրս՝ արտաքոյ մեղաց դատապարտութեան || · Հռոմ · յայս ։
Ուր բառդ 'ի գիրս՝ է խնդիր հայեցողին ։

Ոմանք եւս զայլ հոլովս · որպ · * Յերկիւղէ ինչ՝ ոչ զան-գիտող || · Մակար · առ պետրոս ժամ ։ Ուր բացառական հոլովս յերկիւղէ՝ է խնդիր ոչ զանգիտողին ։

Վասն համաձայնութեան այսպիսի ընդունելութեանց ընդ գոյա-կան անուանց՝ գիտելի է , զի սոքա որովհետեւ միշտ իբր ածական լինին , ըստ կանոնի ածական անուանց համաձայ-նին ընդ գոյականաց · որպ · * Մի լինիր ընկեր առն ճորչա-ցողի · և ընդ բարեկամի շաղփաղփողի մի բնակեր · գուցէ ու-սանիցիս զճանապարհս նորա || · Առակ · իբ · 24 ·

## ԳԼՈՒԽ · ԻԹ ·

### Ցուցակ ընդունելութեանց յանգելոց 'ի եալ ·

Այսպիսի ընդունելութիւնք յորժամ հոլովին՝ միշտ իբր ածական վարին , թէև ներգործութեան յունի-յին զգոյական ընդ խնդրանս · որպ · * Դժուարին է յանձնեցելոցն 'ի սովորութիւն մեղաց՝ ապաշխարել || · Հռոմ · առդ · ճէ ։ Ուր ընդունելութիւն յանձնեցելոցն՝ եդեալ է իբր ածական · որոյ գոյականն զօրութեամբ կայ · որ է՝ մարդկան ։

Իսկ եթէ առանց հոլովելոյ գիցին , երբեմն իբր բայ վարին , և երբեմն իբր անուն ։ Զորոյ գիտելի է , զի եթէ սոքա ներգործականապէս առցին , միշտ իբր բայ վա-րին՝ ոչ զդրոշմեմս · որպ · * Զլրբութիւն հակառակորդին ըմբերանեալ անմռնչեցուցեր || · Նար · 90 ։ Ուր ընդունելութիւն ըմբերանեալ՝ դնի իբր դրոշմեալ բայ · որոյ խնդիր է բառս՝ զլրբութիւն հակառակորդին · իսկ անուան բայն դնի կրաւոր · որ է՝ [illegible] , կամ [illegible] ։

Եւ թէպէտ գտանին ուրեք ուրեք այսպիսի ներգործա-կան ընդունելութիւնք , որք եդեալ են իբր անուն՝ ունելով միանգամայն և զզօրութիւն բայի , բայց յոյժ սակաւ են նո-

քին · և այնք են իբր փոխանակ օղը · որ ՝ * Եթէ փոխեսցէ հնդիկ զմորթ իւր ՝ և ինձ զխայտուցս իւր ՝ և դուք կարօղ լինիցիք գործել զբարիս՝ ուսեալքդ զչարիս || · Երեմ · ԺԳ · 23 ։ Ուր ներգործական ընդունելութիւնս ուսեալքդ՝ եդեալ է իբր ածական դերանուանս դուք · իսկ բառդ զչարիս՝ է խնդիր ուսելոյն ։

Իսկ եթէ այսպիսի ընդունելութիւնք կրաւորականապէս առյին ՝ ՚ի գործ ածին անխտիր · զի երբեմն իբրև զբայ վարին · որ ՝ * ՚Ի խորս մեղաց ծովու թաւալեցեալ ննջիմ || · Շար · Ճէ ։ Ուր կրաւորական ընդունելութիւնս թաւալեցեալ դնի իբրև բայ · որոյ խնդիրն է ՚ի խորս մեղաց ծովու · իսկ անուն բային դնի զօրութբ · որ է՝ եմ ։

Այլ երբեմն մանաւանդ թէ բազում անգամ իբրև ածական անուն վարին · որ ՝ * Մահ ոչ իմացեալ՝ մահ է · մահ իմացեալ՝ անմահութի է || · Եղիշ · Է ։ Ուր ընդունելութիւնք ոչ իմացեալ և իմացեալ՝ են ածական անուանս մահ · մինն առաջնոյն · և միւսն երկրորդին ։

Իսկ համաձայնութի սց նկատի ըստ կանոնի համաձայնութե ածականաց՝ թէ ՚ի նախադասին ՝ թէ ՚ի յետադասին ՝ և թէ անկեալ իցէ ՚ի մէջ այլ մասանց բանի · որ ՝ * Ոչ այլ ինչ այնպէս զքեզ սիրելի առնէ այ ՝ ոպ փտեալ և տաղտկանեալ անդամոյն յիւր դարման տանել և յառողջութի ածել || · Սարգ · Ա · Թղթ · 6 · յոբ ։

Որպէս զկրաւորական ընդունելութեանցդ ասացաք ՝ սոյնպէս իմն և զչէզոքականաց · զի և նք ՚ի գործ ածին անխտիր ։ Երբեմն վարին ոպ զբայ · և ունին զզօրութի դերբայի · որ ՝ * Եւ անդ յածծ խրախճանեալ սբ ածարանակ զօրացն հայոց՝ կատարեցան ՚ի քս || · Թովմայ Վրդ ։ Ուր ընդունելութիւնս խրախճանեալ՝ դնի իբրև զդերանդէմ բայ · որոյ անուն բային է բառս զօրացն · իսկ խնդիրն է՝ յածծ ։

Իսկ երբեմն և բազում անգամ իբր ածական անուն վարին · որ ՝ * Անձն ցոփեալ զխորիսխ և զմեղր արհամարհէ · բայց անձին կարօտելոյ՝ և դառն իբրև զքաղցր թուի || · Առակ · ԻԷ · 7 ։ Ուր ընդունելութիւնդ ցոփեալ՝ է ածական անձին ։

Համաձայնութիւն սց եւս ընդ անուանց՝ է ՟Ը կանոնի համաձայնութեան ածականաց՝ թէ ՚ի նախադասելն, թէ ՚ի յետադասելն, և թէ անկեալ իցէ ՚ի մէջ այլ մասն բանի. որ, * Նոյն զօրութիւն և այսօր ծագեաց ուրեմն ՚ի խաչելոյ մտաց քո. և բացան աչք կուրացելոց հոգւոյդ ||. Եղիշէ վրդ. գլ. Է.

Վասն խնդրառութեան ընդունելութեանց յանգելոց ՚ի եալ, ոչինչ պիտոյ է գրել. զի զայնպիսի խնդիր առնուն՝ զորպիսի պահանջեն բայքն, յորոց բղխեն. որպէս յայտ է ՚ի վերոյգրելոցդ. յորս յաւել և զհետագայդ: * Հայեցեալ զխաղաղութիւն Աշխարհիս վկայք սրբոյ եկեղեցւոյ՝ նեղելոց յանօրինաց բռնութենէ ||. Հոր. Դ. Ուր բայականն հոլովս ՚ի բռնութենէ անօրինաց՝ է խնդիր սեռի կրաւորական ընդունելութեանդ նեղելոց. իսկ ինքն է տրական խնդիր բային հայեցեալ:

Այլ պարտ է գիտել, զի ոմանք ՚ի կրաւորական ընդունելութեանց առնուն ուրեք ուրեք փոխանակ բայականի, եւս և փոխանակ բուն խնդրոյ բնութեան առնուն զխնդիր ՚ի սեռական հոլովի. որ, * Իրաւացուցեալ զնմա զօրութիւն հերքեցելոյ ընդունելութեան առ երկնայինս և առ երկրաւորս ||. փոխանակ ասելոյ, հերքեցելոյս յընդունելութենէ. Նար. ԽԶ.

Ըստ այսմ եւս և չէզոքականք երբեմն փոխանակ բուն խնդրոյ առնուն զսեռական կամ զտրական. որ, * Եւ յուսանն քո օտարացուցեալ բարերարից, և զօրացուցեալ ամենակալից ||. փոխանակ ասելոյ, օտարացեալք ՚ի բարերարէդ, և զօրացեալք յամենակալէդ. Նար. 70.

Այլ զայսպիսի տեսակ խնդրառութեան ոչ է պարտ յաճախել. ապա թէ ոչ՝ նսեմանայ միտ բանին:

Սոքա երբեմն ՟Ը բաղդատական անուանց եւս առնուն ըղ-խնդիր. ՟Ը որս և յանգեալքն ՚ի չի. որ, * Հնազանդեցելոյն ՚ի մարդկանէ՝ թէ և ՚ի մահ աշխատութեան, սակայն առողջութեան յաւուրս թեթևանան ||. Յովհ. Կթղ. Ուր ընդունելութեանդ հնազանդեցելոյ՝ իբր անուն բաղդատական,

առեալ է խնդիր ՚ի բայսաւական հոլովն. որ է բառդ ՚ի մորթենէ.

## ԳԼՈՒԽ. Լ.

### Յաղագս ընդունելութեանց յանգելոց ՚ի ըի.

Վասն ընդունելութեանց՝ որք յանգին ՚ի ըի, գիտելի է, զի սոքա իբր ածական վարին. և ՚ի յարին յանուանս՝ ըստ կանոնի ածական անուանց համաձայնին ընդ նմա, թէ ՚ի նախադասին՝ և թէ ՚ի յետադասին. որպէս, * Փոխանակ պահելոյ լուսոյն՝ ներկանելոյ լուսոյն ճառագայթիւք զօրութեն խնդրեն լուսաւորել զմեզ || .
Յովհ. Ոսկ. ԺԵ.

Վասն խնդրառութեան սոյա գիտելի է, զի սոքա համարակորէն առնուն զխնդիր ՚ի հոլովն տրական. որպէս, * Երջանկութիւն խոստացելոյն մեզ երկրի || . Նար. ԺԷ. Որ մեզ երկրին՝ է տրական խնդիր ընդունելութեանս խոստացելոյ.

Իսկ երբեմն սոքա յայսպիսի ընդունելութեանց որպէս պահանջելոյ բային, և կամ որպէս պատահման՝ առնուն զխնդիր ՚ի հոլովն բայառական. մանաւանդ եթէ իցեն բաղադրեալ մասնականքս՝ ըստ. որպէս, * Թէ չէր ՚ի քէն առնեալ ուղեցն երկնային, ոչ էր պատրաստեալ ընձեռելեացն ՚ի շնորհաց մեր հաղորդութիւն || . Նար. Գով. Կաթ. Որ բառս ՚ի շնորհաց՝ է խնդիր ընձեռելեացս, որ է ածական հաղորդութեանն.

Ոմանք ևս յայլ հոլովս. բայց այս ՚ի սակաւս. որպէս,
* Գինի նոր ՚ի տիկս նորս արկանելի է || . Ղուկ. Ե. 38.
* Արդարութիւն առ բազումս զարմանալի է || . Վեցօր.

Այլ գիտելի է, զի այսպիսի ընդունելութիւնք երբեմն ունելով զզօրութիւն օրէն՝ առնուն զխնդիր ՚ի սեռական հոլովն՝ իբր զխնդիր սեռի. որպէս, * Ահա Աստուած օգնական իմ, և տէր ընդունելի հոգւոյ իմոյ || . Սաղ. ԾԳ. 6. Չեռագր. Որք սեռական հոլովս հոգւոյ իմոյ՝ է խնդիր սեռի ընդունելու-

նելութեամբ ընդունելի․ որպէս թէ ասէր․ ընդունօղ հոգւոյ իմոյ, կամ՝ ընդունօղ զհոգի իմ։

Երբեմն եւ առնուն զհայցական․ որ․ * Եւ տուն զարծաթն զպատրաստեալն ՚ի ձեռս գործելեաց զգործս կահի տանն տն || ․ որ գործողաց զգործս են․ Դ․ Թագ․ ԺԲ․ 11։

Գտանելի է եւ, զի այսպիսի ընդունելութիւնք ՚ի վերինն իբր դիմազուրկ բայ՝ ունելով երբեմն զզօրութիւն ներգործականի, առնուն զխնդիր հայցական՝ արտաքոյ հասարակ սովորութեան․ որ․ * Դուստր սիոնի ծնեալ է զմեզ եկեղեցի || ․ Սահակ հայր։ Ուր հայցական հոլովս զմեզ եկեղեցի՝ է խնդիր սեռի ընդունելութեանս ծնեալ։

Իսկ վն ընդունելութեանց՝ որք յանգին ՚ի լոց՝ գիտելի է, զի ոք միշտ իբր բայ վարին․ որպէս ասացաք յերկրորդ մասին․ գլ․ եր․ երես․ 258․ տես անդ։

## ԳԼՈՒԽ․ ԼԱ․

### Յաղագս համաձայնութեան պատասխանւոյ՝ ընդ հարցման։

Յորժամ ՚ի բանս պատասխան լինի իմիք հարցման, հարկ է՝ զի պատասխանին համաձայնեսցի հարցմանն՝ գոնէ զօրութեամբ։

Այս համաձայնութիւն, նախ՝ նկատի ըստ հոլովին․ որ․ (հրց)․ Զի՞նչ է կաթուղիկէն․ (պատասխանի)․ Տիեզերական․ զի ամ եկեղեցիք ուղղափառաց՝ որ ըստ տիեզերս են, մի են․․․ զոր և առաքելական կոչեմք || ․ Խաչատուր։ Այլ ազգ եւ․ * Որո՞վ խնդրել մարթ է զՏէր։ (պտ)․ Եթէ ոչ խոնարհութեամբ և հեզութեամբ || ․ Արտ․ հաւց․ ԺԶ։

Իսկ եթէ ըստ թուոյն եւ համաձայնեսցի պատասխանին, այն է ըստ պատահման․ որ․ * Որո՞վք շիջուցանեմք զհուրն։ (պտ)․ Արտասուօք՝ յորոց պօղոս զգուշացուցեալ՝ ասելով՝ զհոգին մի շիջուցանէք || ․ Լամբ․ պտմ։

Երկրորդ՝ նկատի ըստ զօրութեան նշանակութեան բառիցն․

իբր զի՛ պատասխանին լինի այնպիսի բանիւ, որ համաձայն գտցի զօրութեան հարցմանն, թէ ըստ որպիսութեան, թէ ըստ տեղւոյն, և թէ ըստ ժամանակին, եւ այլն . ոպ երևի յօրինակսդ՝ որ զկնի :

* Որ հաւատայ, եթէ յանձ բնակէ, և անձ 'ի նմա, այլ իմն ճանապարհ պարտի ընտրել անձին իւրում . ( հց ) . Զո՞րպիսի ճանապարհ : ( պն ) . Զոր նայն գնայ : ( հց ) . Եւ զո՞ր արդեօք ճանապարհ գնայ նա : ( պն ) . Զնեղն և զանձուկն, զխոնարհութեան և զհեզութեան, զնախատանաց և զքամահանաց || . Սարգ . ա . յովհ . 2 :

Դարձեալ . * Ուստի՞ արդեօք կոչեաց ( զմեզ Աստուած ) . ( պն ) . 'Ի վհաց, 'ի փորձանաց, 'ի ճանապարհաց և 'ի յանկոց . ( հց ) . Եւ ո՞ւր արդեօք կոչեաց : ( պն ) . 'Ի հրեշտակական պատիւ, 'ի սրովբէական սրբութիւն, յանձնութեան փառս || . Սարգ . է . պետ . 1 :

Այլազգ ևս . * Զկենդանացի ոգին հարցեալ, ո՞ւր սահմանեք սպարտայ : Նէ ընկղմին յորժամ առէ . Ցայսմ վայրի || . Պլտոյ :

Այլ ասա գիտելի է, զի բայն՝ որ ներգործութեան դնի 'ի հարցման, իբր 'ի բազում զօրութեան գտանի 'ի պատասխանին . ոպ է տեսանել 'ի վերոյգրեալսդ . յորս յաւել և զսոսա :

* Զի՞նչ է այն՝ զոր համբերձեալ ես ծանուցանել մեզ երանելիդ : ( պն ) . Ոչ փոքր ինչ առէ, և ոչ յերկիր անկեալ, այլ Աստուծոյ խորհրդակցութեան արժանաւոր || . Սարգ . է . պետ . 5 :

Եւ երբեմն ևս փոխանակ այնր բանի՝ որ լինելոյ էր բուն պատասխանի հարցմանն, դնի բան ինչ՝ իբր բացայայտիչ զօրութեան իմացեալ բանին . ոպ, * Զի՞նչ է զոր կարդայերն : ( պն ) . Զիս առէ խնդրեցի, և զսոյն աղաչեմ : ( հց ) . Եւ ո՞ր է այն : ( պն ) . Բնակել ինձ 'ի տուն տեառն, և շուրջ զսեղանովն քո երգել || . Խոսրով :

Գիտելի է ևս, զի բազում անգամ հարցումն դնի առանց պատասխանւոյ . ոպ, * Ընդէ՞ր մերժեցար 'ի պը-

զոյն շնորհաց՝ իբր զադամ ՚ի ծառոյն կենաց || · Նար · ԽՂ ·
* Որ արդեօք զպարշապարս ոտին կարուսցես · և կամ յոր վստահութեան զաչս իմ յառեսցես || · Նար · ԿԸ ։
Այսչափ ինչ բաւական լիցի վս՟ համաձայնութեան պատասխանւոյ ը̅ հարցման ։

## ԳԼՈՒԽ · ԼԲ ։

### Յաղագս կազմութեան բանի, և պէսպիսութեան շարադրութեանց ։

Ի համաձայնութենէ մասանց բանի կազմին պէսպէս շարադրութիւնք բանից · ոմանք սակաւաբառք, և ոմանք բազմաբառք ։

Սակաւաբառք կազմին ՚ի սակաւ բառից՝ գոնէ յերից · որ ՚ի բայէ, յանուանէ բային, և ՚ի խնդրոյ նորին · որ, * Յաբեթ ծնանի զԳամեր · Գամեր ծնանի զԹիրաս · Թիրաս ծնանի զԹորգոմ · Թորգոմ ծնանի զՀայկ || · Խոր · Ա · Դ ·
Որ յիւրաքանչիւր հատուածս կան երեք բառք · որ անուն բայի, բայ, և խնդիր ։

Բայց երբեմն մին յերից առնի պակաս · որ, * Թմբրեցոյց ծուլութիւն || · որ Թմբրեցոյց զադամն ծուլութիւն · Նար · ԽԵ ։ Ընկալ զաղեալս || · որ դու ընկալ զաղեալս · Նար · ԽԷ ։ * Անցեալն անյայտ || · որ անցեալն է անյայտ · Նար · ԾԷ ։

Իսկ բազմաբառք կազմին ՚ի բազում բառից՝ այլևայլ եղանակաւ շարայարելոց ը̅ միմեանս · որ իբր խնդիր, իբր յատկացուցիչ, իբր բացայայտիչ, իբր ածական, եւն · որ յայտ է ՚ի բազում օրինակաց եդելոց ՚ի քերականութեան աստ · և յայտնի ևս ցուցցի ՚ի յաջորդ օրինակացդ ։
Արդ՝ այսպիսի շարադրութիւնք՝ թէ բազմաբառք և թէ սակաւաբառք՝ երրակի կարեն կազմիլ, Պարզ, միջակ, և խրթին ։

Պարզ շարադրութիւն ասի այն, որ կազմի ՚ի դիւրին շա-

բայարութե՛ ընտել և սովորական բարուց · և է դիւր-
ըմբռնելի ամենեցուն ։ Եւ այս ունի զերկուս տեսակս · ո-
րոց մին կոչի գեղջուկ և աղաւաղ · և այս՝ կամ վն ան-
պատշաճ շարայարութե կարգի , և կամ վասն խորթ բա-
ռից · որպի են գրեանք ինչ՝ զորոց զհեղինակսն չէ արժան
յիշատակել աստ ։ Իսկ միւսն ասի՝ հարթ և հեշտ ·
որպի են շարադրութիք յայսմաւուրաց , և հարանց վարուց ·
և ևս մեկնութի երգոց երգոյն՝ արարեալ Նարեկացւոյն ·
եսայեայ մեկնութի գէորգ վարդապետի · պատարագի մեկ-
նութի յոհաննու արճիշեցւոյ · սաղմոսամեկնիչն վար-
դան վարդապետի · ևն ։

Միջակ շարադրութի ասի այն , որ կազմի ՝ի վայելուչ
շարայարութե ընտիր բառից · և չէ դիւրըմբռնելի ամ
մարդոյ ։ Եւ սա ունի զհինգ տեսակս · որոց Առաջինն
ասի՝ ստորին · որպի են շարադրութիք զաքարիայ կաթու-
ղիկոսին ՝ի մեկնութիս երգոց երգոյն , և ՝ի մեկնութե
մատթէի , և ՝ի ճառս ինչ · գրիգորի արշարունեաց եպիս-
կոպոսի ՝ի մեկնութե գրոցն կիւրղի · պատմութիք սամու-
էլի երիցու · ևն ։

Երկրորդն ասի՝ պատկանաւոր , ըստ որում յայլոց ազ-
գաց երևի պատկանեալ լեզուի մերում · որպի են շար-
ադրութիք թարգմանեալ գրոց · այս է՝ կոչումն ընծայութե
սրբոյն կիւրղի · մեկնութիք սբ գրոց՝ յոհաննու ոսկեբե-
րանին · մեկնութի յոհաննու՝ արարեալ նոննոսի իմաստա-
սիրի ասորւոյ · գիրք պարապմանցն կիւրղի աղեքսանդրա-
ցւոյ · գործք գրիգորի ածաբանին · գործք սրբոյն բար-
սղի · գործք սեբերիանոսի եմեսեան · մեկնութի յոբայ յի-
սիւքիոսէ · ճառք , և մեկնութի յեսուայ , դատաւորաց
և թագաւորաց՝ արարեալ խուրի եփրեմի · ճառք թէո-
փիլոսի եպիսկոպոսի անկիւրեայ · և այլ ևս գիրք և
ճառք բազումք՝ սրբոց հարց՝ թարգմանեալք ՝ի մեր լեզու ։
Ընդ որս դասի և գիրքն սբյն յակոբայ մծբնայ հայրա-
պետի · բայց ոչ երևի՝ յայս գործ նի բազում խորդութիք
շարադրութեց մուծեալ են յանհմուտ գրչաց և յանխո-
հեմ իմաստակաց ։

Երրորդն սահ՝ ազնիւ և ընտիր ․ որպիսի են շարադրութիւնք մեծին խոսրովու ․ Թովմայ վարդապետի՝ աշակերտին Եղիշէի ․ եզնիկայ կողբացւոյ ․ մաշտոց վարդապետի ․ արիստակիսի վարդապետի ․ անանիա վարդապետի ․ պետրոսի սիւնեաց եպիսկոպոսի ․ աբրահամու մամիկոնէից եպիսկոպոսի ․ միսայէլի եպիսկոպոսի ․ գրիգորի վկայասիրի ․ յովհաննու երզնկացւոյ ․ եւն ։ Եւ ևս՝ շարադրութիւնք գրոյն՝ որ կոչի յաճախապատում ․ ասացեալ հօր մերոյ սրբոյն գրիգորի լուսաւորչի ։

Չորրորդն սահ՝ շքեղ և պանծալի ․ ոպի են շարադրութիւնք եղիշէի ․ իգնատիոսի ․ և սարգսի ։ Ընդ որս և յովհաննու մանդակունւոյ ․ զորոյ թէպէտ ոչ ունիմք աստ առ մեզ զճառսն զ յիշատակեալսն ՝ի յովհաննու կաթ” ․ բայց հայելով ՝ի վեհապանծ վայելչութի բանից սորա՝ որ ՝ի դէսպէս աղօթս ժամակարգութե մերում ․ յայտնի տեսանեմք ․ թէ՝ և այլ ճառ շարադրութիւնք սորին կարի իմն պանծալի են և շքնաղ ։

Ցայս կարգ դասին և շարադրութիւնք սբ գրոց ․ յորս իւրաքանչիւր գիրք՝ մի քան զմի սքանչելի և յարգոյ երևին ․ և առաւել ևս եօթն սոքա ․ 1 ․ պատմութի յուդիթայ ․ 2 ․ գործք առաքելոց ․ 3 ․ գիրք իմաստութե ․ 4 ․ առակաց ․ 5 ․ մարգարէութի եսայեայ ․ ոճ և ողբոյն ․ 6 ․ երկոտասան փոքր մարգարէից ․ 7 ․ թուղթքն պետրոսի ․ ոպ և թուղթքն պօղոսի առ եբրայեցիս ։

Հինգերորդն սահ՝ գեղապանծ և վսեմ ․ որպիսի են շարադրութիւնք ներսեսի լամբրոնացւոյն ․ և ներսեսի շնորհալւոյն ։ որոց կազմութիւնք՝ քան զամ հիւսուածս բանից գեղազանց գտանին յոյժ ․ ընտիր և վայելուչ բառիւք ․ քաջայարմար դասաւորութբ ոճից ․ և վսեմական շքեղութե կարգի խօսից ․ մինչև յաւէտ արժան է կոչել զնոսին յօրինուածս ոսկեշար տողից՝ քան քերթուածս գեղեցիկ տառից ։

Ցայս կարգ վերաբերի և շարադրութի գրիգորի կաթուղիկոսի՝ մականուանելոյ տղայ ։

Խրթին շարադրութի ասի՝ այն, որ կազմի ՚ի մանուածոյ շարայարութե ընտիր կամ մթին բառից. զոր իմաստնոյ միայն է իմանալ: Եւ սա ունի զերիս տեսակս. որոց Առաջինն ասի՝ Հոյակապ. որպիսի են շարադրութիք Նարեկացւոյն. և յոլովանուն իմաստասիրին. և քանի մի կանոնք ՚ի շարականի. եւս և բանք ինչ ՚ի զանազան գըրուածս: ընդ որս կարէ դասիլ և շարադրութին յոլովանուն կաթուղիկոսին. և գիրքն մակաբայեցւոց:

Երկրորդն ասի՝ դժուարին. որպիսի են շարադրութիք մովսէսի խորենացւոյն. ագաթանգեղոսի. մամբրէի վերծանողի. դաւթի անյաղթին՝ ՚ի ճառ խաչին. սահակայ կաթուղիկոսի. եւն:

Երրորդն ասի՝ մթին. որպիսի են ոմանք ՚ի թղթոց գրիգորի մագիստրոսի. և տունք ինչ բանից եւս ՚ի պէսպէս գրուածս, ՚ի գիրս պլատոնից, ՚ի շարականս, ՚ի Նարեկն, ՚ի խորենացին, ՚ի գիրս յոլովանուն իմաստասիրի, և այլն:

Այլ գիտելի է նախ, զի յասել մեր աստ՝ շարադրութի պարզ, միջակ և խրթին, նկատեմք ըստ արուեստի քերականութե, և ոչ ըստ ոճոյ ճարտասանութե. զի ճարտասանք հայելով ՚ի ձեւս և ՚ի փոխաբերութիս բանից՝ որոշեն զերիս տեսակս ոճոյ շարադրութեց. զորս կոչեն պարզ, միջակեան և վսեմական: Իսկ քերականք հային ՚ի կարգաւորութիս բառից, և ՚ի պարզութի և ՚ի խրթնութի նոցա, և ըստ այնմ որոշեն: Ուստի երբեմն շարադրութի ինչ ըստ քերականաց պարզ՝ կամ միջակ՝ ՚ի ճարտասանից համարի վսեմ և խրթին. որպիսի է այս բան. * Նետք հինից և տէգ մն տեղային ՚ի մեզ ||. Յովհ. Կոզ: Եւ ներհակ այսմ՝ երբեմն շարադրութի ինչ ըստ քերականաց խրթին՝ ՚ի ճարտասանից համարի պարզ. որպիսի է այս բան. * Քանզի զեղման ՚ի վր մեր փրկչին ճոխահայ տուան նշանակք՝ գոհութին սուրբ և միւռոնն սրբարար ||.

Լամբ. տրսն:

Գիտելի է երկրորդ, զի ՚ի կարգել մեր աստ զվեցակեա

մատենագիրս ՚ի մի դաս, ոչ կամիմք ցուցանել, թէ քերթուածք սոցա միօրինակ են. այլ թէ սոքին յայս դաս վերաբերին, և նոքին յայն ։ Բայց ՚ի համեմատէն առ միմեանս՝ այլևայլութիւն բազում գտանի ՚ի մէջ նոցա ։ որպէս ՚ի բաղդատել ընդ միմեանս զշարադրութիւնս եղիշէի և սարգսի, որք ՚ի մի դաս չքեղ շարադրութեանց դնին, կազմութիւն միոյն ուրեք ուրեք պարզ երևի քան զմիւսոյն ։ Եւ սարգսին քան զեղիշէին ։ Ըստ այսմ խմա և վասն այլոց ։

Գիտելի է երրորդ, զի յիւրաքանչիւր վերոյիշեալ գրեանս կարեն գտանիլ երրեակ տեսակք շարադրութեանց ևս ։ որպէս ՚ի գիրս Նարեկացւոյն՝ որ ՚ի գլուխ խրթին շարադրութեանց դասի, գտանի ուրեք շարադրութիւն միջակ, և ուրեք պարզ ։ և ՚ի գիրս Լամբրոնացւոյն՝ որ ընդ միջակս դասի, գտանի ուրեք շարադրութիւն պարզ, և ուրեք շարադրութիւն խրթին ։ Եւ ևս ՚ի մի և նոյն գիրս, որպէս ՚ի գիրս Խորենացւոյ, որ համարի ընտիր, է ուրեք՝ ուր գըտանի շարադրութիւն գերապանծ. և է ուրեք՝ ուր ստորին ։ Նոյնպէս և ՚ի Թարգմանեալ գիրս՝ ուրեք ուրեք գտանի Ջարադրութիւն վսեմ, և ուրեք ստորին ։ Ըստ այսմ և յայլ գիրս. որպէս տեսցի յօրինակսդ, որ դնի ։

## Օրինակ պարզ շարադրութեան ։

* Զոմն իմաստասէր ՚ի հացկերոյթ կոչեցին. և նա
» իբրև եմուտ ՚ի տուն՝ և բազմեցաւ, նայեցեալ ՚ի վեր
» և ՚ի վայր և ՚ի չորեսին կողմունս տանն՝ ետես զանա-
» զան գունովք զարդարեալ, և ազգի ազգի երանգօք
» պայծառացեալ. ապա լցեալ զբերանն խխով՝ եթուք
» յերեսս տանուտեառնն ։ Եւ իբրև հարցեալ եղև,
» թէ ընդէ՞ր արարեր զայդ, պատասխանի ետ, և ա-
» սէ. և զինչ միթէ առնելի. զոր դուք պատուեալ էիք՝
» և ես պատուեցի. և զոր դուք ոչ էիք պատուեալ,
» և ես ոչ պատուեցի ։ Հայեցայ յամենայն տունս, և տեսի
» զարդարեալ և պատուեալ ամենայն, և ոչ կարացի թը-

›› քանել․ Իսկ զերեսս տանուտեառնն տեսի անպատիւ՞
›› զի ոչ էր զարդարեալ առաքինութեամբ զներքին մարդն․
›› վասն որոյ և անարգ թուի։ Եւ արդ՝ եթէ այսոքիկ արտա-
›› քինք, որ զճշմարիտ աստուածածանօթութիւն ոչ գիտէին,
›› այսպիսի իմն նախանձ ունէին բարեաց գործոց՝ և ա-
›› ռաքինասէր վարուց, ապա ո՞րչափ ևս առաւել մեզ
›› պարտ է բազում զգուշութիւն և փոյթ ունել յառա-
›› քինութիւս․ որք մեծագոյն շնորհաց արժանացաք գալը-
›› տեամբն Քրիստոսի, և պատուական խաչին փրկագործութեամբն ||․

Խոսրով․ ՚ի Մեկնութեան Ժամագրքին։

Դարձեալ․ * Գնային երբեմն մեծն Թէոփիլէ եպիս-
›› կոպոսն և իշխան ոմն առ հայրն արսէնիոս՝ լսել ՚ի
›› նմանէ բանս կենաց։ Իսկ ծերն լռեաց փոքր մի․ և
›› ապա ասէ ցնոսա․ եթէ ասացից ինչ ձեզ՝ պահէ՞ք զնոսա․
›› և նք ուխտեցին պահել։ Ասէ ցնոսա ծերն․ ո՛ւր և
›› լուիցէք զկայն արսէնիոսի՝ մի՛ բնաւ մերձենայք ՚ի տե-
›› ղին յայն ||․ Վարք հարց․ Գ․

* Բազում Թագաւորք և Թագուհիք ըստ ա̅ իւրեանց կա-
›› մայն գնային․ և ՚ի յետին օր մահուան իւրեանց ապա-
›› շաւելով ելին յաշխարհէ ||․ Նար․ Երգ․

* Իսկ արդ՝ եթէ այն, որ զամենայն պատուիրանսն կատա-
›› րեաց, և համարեցաւ՝ թէ արար ինչ, խոստանի գտաւ․
›› ապա զինչ կրեսցեն, որք ոչինչ արարին, և փքացեալ
›› մեծամեծս խորհին ||․ Իգնատ․ ԺԷ․ 10․

## Օրինակ Վերջոյ Շարադրութեան ․

* Տուք ինձ հրաման՝ գեղեցիկ յանդգնութեամբս, և օրի-
›› նակսն այ վրէժխնդրութե՝ լինել եզր ՚ի միջի ձերում․
›› ունկն դիք քաղցրութե, և լուարո՛ւք զընթերցուած
›› օրինաց || Լամբրոնացի․ յառաջաբանութեան։

* Մարտ մեր հասարակաց՝ լիցի առ հասարակաց մեր
›› թշնամին սատանայ․ իսկ առ եղբարս՝ հանդարտք ու-
›› սաք լինել հանապազ․ մանաւանդ զի՝ և նա բազում

„ անգամ ՝ի խոնարհութենէն պատկառէ · եթէ զարմատ չա-
„ րին սա յաղթահարէ ՚ քանի՞ առաւել զմերունեալն
„ ՝ի նմանէ զմիտս մեր նուաճէ ․․․ Եթէ սիրեմք՝ և
„ զայն չափեմք ՚ ՝ի սէր վայելեմք · եթէ ոխս և ատե-
„ լութիւ զկշիռն ընդունիմք ։ Երկեցուցանէ զմիս և ա-
„ ռակաւոր բանիւ ՚ որ յաղագս ծառայից · ինքն ՝ի սնէն
„ թագում ընկալաւ ՚ և առ ծառայակցին տկարութիւնե-
„ րել ոչ կամէր · ելեալ աստ խեղդէր զնա · և նա զեր-
„ կայնմտութիւ աղերսէր · իսկ զի ոչ կամեցաւ ՚ պատ-
„ ժեցաւ · նոյնպէս աստ արասցէ և ձեզ հայրն իմ՝ երկ-
„ նաւոր ‖ · Ղուկ · ոսկէն ։

* Եւ արդ՝ զօր օրինակ առաստաղն նշան՝ աւետիս տայ
„ արեգակնն ծագման · այսպէս և շարժումն կամաց
„ ձեր յայտնեն՝ գուշակէ զհաշտութեն այ զսկիզբն
„ ը՛ եկեղեցւոյ իւր սբ ‖ · Շնորհալի · ՚ի Ընդհանրականն ։

* Որ յաղագս հակառակին յաղթելոյ խօսեսցի զբանն ՚
„ որ զի փառս որսասցի ՚ի մարդկանէ իբրև զ յաղթօղ՝
„ վաճառական է այնպիսին բանին այ՝ և ոչ սպասաւոր ·
„ և հարկանող վիրաւորեալ անդամոյն քի՝ և ոչ պա-
„ տող ‖ · Շնորհալի · Ընդհ ։

* Բազում իրաւանց առաւելութի է՝ զպատմապարտս՝
„ դատաւորս նատուցանել իւրոց երախտեացն ՚ և նոյա
„ ապերախտութեն ‖ · Գէորգ Վրդ · Է ։

* Ամենայն ուրեք տկարութիւ յանդիմանի ՚ յորժամ
„ զօրաւորագոյնն մերձ իցէ · Որպէս աչաց տկարութի յան-
„ դիմանի յարեգակնան լուսոյ · և մարդկային ոգւոյ
„ մտքրութի յածայինան մերձեալ ։ Ըստ որում և եսայ-
„ իաս զփառսն այ տեսեալ ՚ և զսերովբէիցն սրբասա-
„ ցութիւն լուեալ՝ առ այնպիսի մտքրագոյնս զինքն հա-
„ մեմատեալ՝ ասէ · վա՜յ ինձ ՚ զի ես այր տառապեալ
„ եմ ՚ և պիղծ շրթունս ունիմ ։ Այսպէս է տեսանել
„ ամենայն ուրեք ՚ առ որս այն երևեցաւ ‖ · Իգնատիոս
Վրդ · ՚ի Ղկն · գլուխ · Է · 8 ։

* Զինչ օգուտ ՚ի փարթամութենէն իցէ ՚ յորժամ ՚ի ցան-

» կուՏ այնմ՝ որ ոչ ունի, իբրև զկարօտ ոք չարչարի.
» Եւ սոսկապէս ազատ է, և նմին ար՝ որ զնմ՝ ար-
» համարհեսցի, և 'ի վերոյ եանց քան զերկնելիս. և ոչ
» 'ի միջի ըմբռնեալ յախտէ՝ յերանելի կեանս կեայ
» առանց հոգոց և ցաւոց, որ զխոսն չարչարեն || . Իգ-
նատիոս . ԺԵ . 16 .

* Անյագ է 'ի չարիս նենգաւորն, և երբէք հերիք ոչ
» առնէ. և թէ 'ի դրախտէն խաբեբայն՝ առս զմեզ ընկեց
» յերկիր անիծից, և ընդ ծառայութե գրաւեաց. ա-
» պա աստի յորժամ խաբիցէ՝ ո՞ւր կամիցի ընկենուլ,
» եթէ ոչ յանդունդս դժոխոց || . Խոսրով . Ճաշոց .

* Իբրև ետես թշնամին, եթէ անկեր մնաց ինքնազօր նա-
» հապետն, ապա այլ զէն առեալ 'ի ձեռս՝ նոկալաւ ո-
» գորել յաղթել նմա. զանառակութեն սուսեր շող-
» ցուցանէր՝ հրեշտակ լուսոյ կարծեցուցանելով զինքն.
» որոյ ընդդէմ սպառազինապէս զբահաւորեալ (որին),
» ամբակուռ զինու խոնարհութեն զսայր սուսերի նր
» բեկեցուցեալ՝ անգործ դարձուցանէր || . Աղեքսանդր . Վեր .

* Եթէ ոք կարի առաւելեալ իցէ աշխարհական մեծու-
» թե և մեծ աղքատագոյն, այնպիսին ողորմելի է քան
» զբազումս. որք և ունենեւք իսկ՝ ոչ միայն 'ի չափա-
» ւոր մարդիկ, այլ որ մեծն է քան զնմ՝ թագաւոր՝ ե-
» թէ ոչ ունի զխոնարհութի անթառամելի իւր, ոչ կարէ
» 'ի լիճակին իւրում վայելուչ կալ. Իսկ եթէ, առ
» մարդկաւորս այսպէս, ո՞րչափ ևս առաւել առ հո-
» գևորն: Բոլոր մարդկոյս՝ հոգին է կենդանութի. իսկ
» մարդկոյ և հոգւոյ՝ միտք են կառավար. և որպ առ մի
» մարդ, այսպէս և առ բոլոր աշխարհս: Թագաւորն
» ոչ միայն զիւրն տայէ պարտիս, այլև որոց եղև պատ-
» ճառ 'ի կորուստ || . Եղիշէ Վարդ . Է :

* Էր երբեմն (շապհոյ և տոռմից) զհետ երամակաց
» ցուոց յանդգնագոյնս արշաւել Է խորտաբորտս և Է
» վիմուտ տեղիս. յորմէ կասել սկսաւ շապուհ: Իսկ
» տոռմնյ մոկացւոյ եպերեալ զնա՝ ասէ. գնա՛ գնա՛ ան-

,, որդեակ պարսից, եթէ այր իցես. և նա ասէ. դու ես-
,, Թիչէր. զի 'ի քաղաքս դիւաց է շահատակել։ Դար-
,, ձեալ յայլում ժամու դիպեցաւ 'ի շամբս կինճ որ-
,, սալ հրով. և շապհոյ ոչ համարձակեալ 'ի թաւուտ
,, քաջարշաւ լինել' շրջապատէր հուրն. և նոր զհայեց-
,, ուածսն յերկուս բաժանեալ' այսր անդր բերեալ լի-
,, նէր երիվարաւն։ Միւսանգամ ասէ առոմ. անօրդիք
,, պարսից' ահա հայր քո և ած, և ՔՆ'ն զանգիտես։
,, Իսկ շապուհ ասէ. Թողեալ 'ի բաց զկատակերգ' յան-
,, ցանել ՔՆ հուր պալձո զբեզ, որ և ես զկնի քո.
,, քանզի յառաջէին ձիս իմ խրտչի։ Յայնժամ այպա-
,, նեալ զնա առոմ' ասելով, միթէ այդ քաջն իցեն'
,, զի ես յառաջեցից։ և արդ' եթէ դու զմեկայիս կո-
,, չես դիւազգիս, ես զասպանեալն կոչեմ կնամարդիս։
,, Եւ մերձակեալ զերիվարն' իբրև ՔՆ հովիւ ծաղկանց
,, անցանէր ընդ հուրն' զերծուցանելով զշապուհ ||.

Խոր. Գ. 55։

Այս շարադրութիւն պալղի այսպէս. Առոմ նախարար մի-
կայի և շապուհ արքայորդի պարսից սասանեան' զնային
երբեմն 'ի միասին յորս յուռւց. և 'ի դիպիլ նոցա 'ի խոր-
տաբորտ և 'ի ըլիմուտ տեղիս' ակսաւ շապուհ յետս կալ.
իսկ առոմ եպերեալ զնա' ասէ. եթէ այր իցես' յառաջ
գնա. և նա ասէ. դու գնա, զի դեւք միայն յայսպիսի
քարուտ տեղիս կարեն անվտանգ ընթանալ։ Յայլում ժա-
մանակի եւս գնային սոքա 'ի միասին' որսալ հրով զկինճս
'ի շամբուտ տեղիս. իսկ շապուհ ոչ կարելով ընդ շամբսն
դիւրաւ ընթանալ և անցանել, շրջապատեալ հուր զնո-
վաւ և զառոմաւ, որ ՔՆ նմա. յայնժամ շապուհ զարհու-
րեալ, և զհայեցուածս աչացն շրջշրջեալ' երիվարաւն
տարուբերէր աստ և անդ' զտանել զելս փախստի։ Ասէ
ցնա առոմ. դու զհուրն իբրև զած պաշտես. ահա ՔՆ էր
'ի հրոյդ երկնչիս։ Իսկ շապուհ ասէ. 'ի բաց թող այժմ
զկատակդ. և յառաջեա դու անցանել ընդ մի կողմն
հրոյդ. քանզի ես ոչ կարեմ յառաջել. զի ձին իմ

խրատու ։ Յայնժամ՝ ծաղր արարեալ զնա սատանայ՝ ասէ . յորժամ՝ ը̄ քարինս գնայաք՝ ասէիր ، ես ոչ կարեմ ، դու գնա . զի դժուար է ը̄ քարինս ընթանալ . և այսու զմեզ զմոնկայիս կոչեցեր դիւազգի . մինչ և այժմ ընդ քարի՞նս ունիս ընթանալ . ո՞չ ապաքէն հուր է այդ՝ զոր տեսանես . արդ՝ եթէ դու յայնժամ կոչեցեր զմոնկայիսն դիւազգի ، այժմ ես զասասանեանդ կոչեմ կնամարդի ։ Իբրև զայս ասացեալ՝ մտրակեաց ուժգին զերիվար չարհոյ և զիւր . և այնպէս անցին ը̄ հուր՝ իբրև ՚ի վ̄ր ծաղկանց ընթանալով ։

## Օրէնք խրթին գործադրութեան ։

* Որ առ պատուիրանադրեալն ոչ ձկտի հասանել կա-
„ նոն ، նա յահեկակողմանն դանդաղէ խոտորեալ ճա-
„ նապարհի . իսկ որ յառաւելագոյնն ձկտի հրամայե-
„ ցելոյն հասանել ، զաջակողմանն այնպիսին տենչայցէ
„ փտանել զխոտորումն ։ Մինն յանդգնաբար յապաշ-
„ խարութե հասելով վտանգս՝ յառաւել պնդութե
„ յանյուսութե ընկղմի խորս . և միւսն՝ անչափաբար ը̄-
„ արձակել թողութե յուսով՝ զբովանդակ զերկիւղն ՚ի
„ բաց լուծանէ զկապ ։ Իսկ որ յերկաքանչիւրոյն զանգի-
„ տել հրաժարիցէ ծայրայեղ խոտորմանց ، ( նա ) միջին
„ իմն արդարակ և անստերիւրող ճանապարհաւ բերցին .
„ յորմէ ոչ փոփոխեսցին նախահարցն հաստատեալ սահ-
„ մանք . ( այս է՝ ) ոչ տերունականն առուր զապաշխարութե
„ ՚ի վ̄ր ածել զիսիր . և ոչ նմանօրէն սմա զծոմականսն
„ դատարկայունացն և փափկայունացն զուարս . և
„ ոչ դարձեալ յառ գերազանցագոյն նշ ումեք մերա-
„ նալ եյանել . որպէս թէ՝ ը̄ անգործութի և ը̄ բերանա-
„ լուծութի խառնել և զբնոյն խորութի և գգինէ ճանապարհն
„ որովայնամոլութի . իսկ ՚ի տօնականսն՝ ծանրաբեռնութեն
„ ՚ի ներքոյ դնանիլ տկար բնութես ، մարմնասպան լինելով
„ յաւէտ՝ քան թէ աղաստապան . և ՚ի կքել մարմնոյն

›› գտանել հոգւոյն զվհատութեան տարակուսանս ||.

Յովհաննէս Իմաստասէր · Ե ։

Այս շարադրութիւն պարզի այսպէս · Որ ոչ ձիրս հասանել առ պատուիրանադրեալ կանոնսն , նա խոստովանեալ դանդաչէ յահեկակողման Ճանապարհի · իսկ որ նկրտի հասանել յառաւելագոյնն քան զհրամայեալսն , այնպիսին տենչայ գտանել զաջակողման խոստովանն ։ Մինն յանդգնաբար հոսելով 'ի վտանգս ապաշխարութե' ընկղմի 'ի խորս անյուսութե' վն առաւել պնդութեան պահոցն · և միւսն յուսով թողութեան առաւել քան զչափն ընդարձակեալ' 'ի բաց լուծանէ զբովանդակ կապ երկիւղին ։ Իսկ որ զանգիտեալ հրաժարեսցէ յերկաքանչիւր ծայրայեղ խոստովանսն , այնպիսին բերիցի (իմա կայ') միջին իմն ուղիղ և անսասանիւր Ճանապարհաւ · և այսու ոչ փոփոխին սահմանք հաստատեալք 'ի նախահարցն մերոց · որոց կամք այս էր , ոչ ածել 'ի վն տէրունական աւուրց զխիստ ապաշխարութե · Նմանապէս և ոչ դատարկացուցանել և ոչ փափկացուցանել զծոմական աւուրս · և ես' մի ումեք վերանալ 'ի գերազանցագոյնն քան զօրս , (իմա չափազանց գտանիլ 'ի սոսին) · այլ թէ 'ի միւսն անգործ յաւուրս տօնից , և 'ի լուծանելն զպահս' խառնել 'ի սոսին զխոր քուն և զգինեձան որովայնամոլութի · Ներհակ այսմ 'ի տրտմականսն , (իմա յաւուրս պահոց) տկար բնութեան դնել 'ի ներքոյ մեծի ծանրաբեռնութե · որով լինի այնպիսին յաւէտ մարմնասպան քան թէ ախտասպան · և 'ի տկարանալ մարմնոյն' գտցէ հոգին զտարակուսանս վհատութե ։

* Շնորհաձիր էին և հոգւոյնն ընդունակ ընտրեալքդ և
›› ներանձնացեալքդ այցելու , ըստ հայցման հաճութեան
›› բարեսէր կամաց երջանիկիդ , և գրութե նամակի ձե-
›› ռամբ պատճենի' յօրինեալ շարադրեցի զպատմութեանս
›› գովեստ և զճառս ներբողենի ։ Նկարեալ հաստատեալ
›› 'ի գեղ պատկերի դիմաց սրբեսոի սպիտակափայլ
›› լուսափառ դաշտի քարտենիդ · մորակեալ յնթայս
›› սն ասպարիսի պչրթունս գրչիս , անշունչ խօսողիս ,
›› անքայլ ընթացողիս , անձայն հնչողիս , անդուլ պատ-

„ մօղիս , և անսայթաքելի քարոզչիս ։ Եւ արձանայուցի
„ ՚ի սմին անջինջ յիշատակ զանուն տենչալի ձերումդ
„ կոչման տր ստեփաննոս , լերինդ մօկայ հզօր դիտա-
„ պետ || ․ Նորբէնոշէ․ Եյէշոփ․ տո․ տօէփ ։

## ԳԼՈՒԽ․ ԼԳ․

### Յաղագս լուծման պէսպէս շարադրութեանց ․

Լուծումն շարադրութեանց է որոշումն իւրաքանչիւր բառից մի բանի` ը զանազան պաշտօնին նց , իբր անուն բայի , իբր բայ , իբր խնդիր բայի , իբր մակբայ , իբր յատկացուցիչ , իբր բացայայտիչ , իբր ածական , ևն ։ Արդ` թէպէտ յառաջելոցս ցուցս վայր կարէ ուսանողն ինքնին լուծանել գրեթէ զամենայն շարադրութիւնս , բայց առ ՚ի օգնել ևս նոյա` մանաւանդ տկարացն , և դիւրացուցանել զաշխատանս նոցին , դիցուք աստ քանի մի օրինակս ․ և լուծցուք զնոսին ։

### Լուծումն դարձ շարադրութեան ։

* 1 , Յարտաքնոյն իմաստասէր ոմն տուն շինեաց ․ 2 , և
„ գեղազարդ ոմն ասաց ցնա , ծեփեա՛ զտուն քո , զի ե-
„ կեալ գեղեցկացուցից զնա զանազան նկարուք պատկե-
„ րաց , և անկուածոց յօրինուածովք ։ 3 , Ասէ իմաս-
„ տասէրն , եկ յառաջ նկարեա՛ , և այս ՚ի վերայ ծե-
„ փեցից ․ 4 , զի պատշաճին ծածկելն է բարուք` քան
„ թէ յայտնելն || ․ Խօսրով ․ Ժամագիր ։

Յայսմ բանի , յառաջին հատուածն` ածական անունդ Իմաստասէր` է անուն բայի ․ որոյ դոյականն դնի զօրութեամբ ․ որ է` այր ոմն իմաստասէր ։ Ոմն` է մասնական անուն մասնաւորիչ նր ․ որ անուանս իմաստասէր ։ Յարտաքնոցն` է բացառական խնդիր մասնական անուանս ոմն ։ Շինեաց` է բայ ։ Տուն` է խնդիր սեռի բային շինեաց ․ և է անորոշ հայցական ․

Յերկրորդ համարն, Երն է շաղկապ բաղհիւսական. Դե-
ղագործ է անուն բայից տառց ։ Այն՝ է մասնական անուն՝
որպէս յառաջին տան ։ Խնդիր սեռի տառց բային՝
զօրութ. դնի ․ յդ է՝ ասաց զայս ․ այս է՝ ծեքեա զտառն քոյ։
Ցնա՝ է խնդիր բնութե. աւէմին ։ Ծեքեա՝ է բայ հրամայական․
որոյ անունն դնի զօրութ. ․ յդ դա ։ Զտառն՝ է խնդիր
սեռի ծեքելոյն ։ Վերոյ՝ է ստացական դերանուն և լեալ է
ածական տառն ։ Զի՝ է շաղկապ պատճառական ։ Ընթեր՝
է բայ պրադէմ, կամ ընդունելութի. խըր բայ եղեալ,
որոյ անուն բային դնի զօրութեամբ, յդ է՝ էմ ։ Գեղեցկա-
ցուցէ՝ է բայ, որոյ անունն դնի զօրութեամբ, յդ եա ։
Զնա՝ է խնդիր սեռի գեղեցկացուցանելոյն ։ Ընթերտ՝ և
յօրինուածողէ՝ են խնդիր բնութե. նորին ։ Զանագան է ա-
ծական բառիս նկարուք ։ Գործերոց՝ է յատկացուցիչ նոր։
Աննկուածոց՝ է յատկացուցիչ բառիս յօրինուածողէ ։
Յերրորդ համարն, Խնառառեքն՝ է անուն բայից առէ, ո-
րոյ խնդիրն դնի զօրութ. ․ յդ է՝ ասէ յնա զայս լինչ,
(որ է հետևեալ բանն) ։ Եղէ է չեզոքական բայ, որոյ
անունն դնի զօրութ. ․ յդ դա ։ Նկարեա՝ է բայ ներգոր-
ծական, որոյ խնդիր սեռին դնի զօրութ. ․ յդ զտառն ․
Ցառաջ՝ է մակբայ ժամանակական նկարել բային ։ Եւ՝ է
շաղկապ ։ Ծեքեսցես՝ է բայ ներգործական ․ որոյ անունն
է՝ էս ․ և խնդիրն դնի զօրութ. ․ յդ զոյն ։ Աղպ՝ և ՝ի վեր
են մակբայ ծեքել բային ․

Չորրորդ համարն, Զի՝ է շաղկապ պատճառական ․
Ծածկել և յայտնել՝ են անուն բայից Եթերտ է։ Զգօր-
ջելեան՝ է խնդիր սեռի ծածկելոյն և յայտնելոյն ․ Վեպնեքնն
է շաղկապ նախընտրական ՝ի մէջ երկուց բայիցս ծածկել և
յայտնել ։

## Լուծումն միջոյ հարցմանց ։

* I, Յորժամ զարեգակնս զայս տեսանեմք յետ բա-
ւ, զում աւուրց ամպոյ և մառախղոյ, լնդամք և ուրա-

՚՚ խանամք . 2 , այս որքան խնդութիւն , որպիսի ցնծութիւն
՚՚ ոչ ձնանի այնմ . 3 , որ յետ ՚ի բաց դնելոյ զամպ մար-
՚՚ մնոյս՝ և զխաւար կենցաղոյս՝ վճիտ լուսով զարարիչն
՚՚ արեգականս տեսանիցէ՝ զանաղօտ լոյսն , զանճառ գե-
՚՚ ղեցկութիւն , զ յաւէժական ցնծութիւն || . Սարգիս
Վարդապետ . յաղ . Գ :

Ի սմա՝ յառաջին համարն , անուն բային դնի զօրութբ . ի ձեռ : [illegible]՝ է բայ ներգործական : Զարեփակն՝ է խնդիր սեռի : Զայս՝ է ցուցական դերանուն . և է ածական արեփակին : Յորժամ՝ է մակբայ ժամանակական : Ցեա՝ է նախադրութիւն : Աչաւորց՝ է սեռական խնդիր նախադրութեան : Բացեալ՝ է ածական աչաւորց : Աչ մոյ և մաա-խաղոյ՝ են յատկացուցիչ աչաւորցն : և այս նախադրութիւն համդերձ խնդրով իւրով լեալ է պատահական խնդիր [illegible] : [illegible] և [illegible]՝ են բայ չէզոքական . որոյ անունն է՝ զօրութբ իմացեալ դերանունն՝ ձեռ : իսկ խնդիրն դնի զօրութբ . ի է՝ [illegible] :

Երկրորդ համարն , [illegible] և ցնծութիւն՝ են անուն կրաւորական բային [illegible] . որոյ խնդիր սեռին դնի զօրութբ ի [illegible] : իսկ բառդ [illegible]՝ է խնդիր բնութեան : [illegible]՝ է շաղկապ մակաբերական : [illegible] և [illegible]՝ են հարցական անուանք . որոյ մին է ածական խնդութեան , և միւսն՝ ցնծութեան :

Երրորդ համարն , Որն յարաբերէ զդերանունդ [illegible] , որ է ՚ի վերջ երկրորդ համարոյն . և է անուն բային [illegible] : Զարարիչն՝ է խնդիր սեռի [illegible] : [illegible]՝ է խնդիր սեռի [illegible] : Եւ անունք [illegible]՝ է բացայայտիչ բառիս՝ [illegible] լոյսն , [illegible] գեղեցկութեան , [illegible] ցնծութեան : Յորս [illegible] է ածական լուսոյն , [illegible] է ածական գեղեցկութեան . յաւէժականն է ածական ցնծութեան : Վ [illegible] է խնդիր բնութեան բային [illegible] . ուր [illegible] է ածական լուսոյն : Ցեա՝ է նախադրութիւն . որ համդերձ խնդրով իւրով լեալ է պատահական խնդիր [illegible] բային : ՚Ի [illegible]՝ է դերբայ . և է լեալ խնդիր նախադրութեան : Զամպ՝ և [illegible]՝ են խնդիր սեռի

՚ի քաց շինելոյն ։ Մտերմոյս՝ է յատկացուցիչ անդրոյն՝ ե-
դեալ փոխանակ բայականի ։ Ներհայեցողոյս՝ է յատկացուցիչ
խոստքին ։

## Լուծումն խրթին շարադրութեան ։

* Առաքեալքն զյոլով ժամանակս ՚ի տաճարին զառ ՚ի
'' քնէ նոյուն կատարէին աւանդեալ խորհուրդս՝ եթէ
'' զաղօթից՝ եթէ զհաղորդութե || ։ Ցուցմունք նմանութեանց ։
՚Ի սմին բանի՝ Առաքեալքն՝ է անուն բայի ։ Կատարէին՝
է բայ ։ Խորհուրդս՝ է խնդիր սեռի կատարել բային ։
Աւանդեալ՝ է կրաւորական ընդունելութի ։ և է լեալ ա-
ծական խորհրդոյն ։ Առ ՚ի քնէ՝ է խնդիր սեռի ընդունել-
ութեան աւանդելոյ ։ Նոյուն՝ է որակական խնդիր բնութե նր ։
մր ընդունելութե ։ և նախդիրն զ՝ փոխանակ դնելոյ ՚ի մր
ընդունելութեան աւանդելոյ , որ է ածական խորհրդոյն՝ ե-
դեալ է ՚ի մր խնդրոյ նորին , որ է բառս առ ՚ի քնէ , մր
լինելոյ նր նախադաս ։ ՚Ի տաճարին՝ է երկրորդական խնդ-
իր բայիս կատարէին ։ Զյոլով ժամանակս՝ է պարագայական
խնդիր նր ։ որ յոլովն է ածական ժամանակին ։ Զաղօթից
և զհաղորդութե՝ են յատկացուցիչ խորհրդոյն ։ յորս
նախդիրդ զ՝ կրկնեալ է մր զարդու ։ Եթէ՝ և եթէ՝ են
շաղկապք ։ Եւ այս բանի պարզի այսպէս ։ Առաքեալքն ՚ի
բազում ժամանակս կատարէին ՚ի տաճարին զխորհուրդս
հաղորդութե և աղօթից զաւանդեալսն նց ՚ի քնէ ։

Դարձեալ օրինակ ։ * I , Որ մեր վարժարանք ՚ի Թա-
'' գաւորական պատրաստեալ հրամանաւն և կամ յոյժ
'' փառաց և պարգևաց յառաջացելոյն ջիմնասոս ։ 2 ,
'' որ մանաւանդ մանկաբարոյիցն են առաւելագունի պատ-
'' ճառ փութոյ կրթութե || ։ Շնորհ ։ Բղբ ։
՚Ի սմա՝ յառաջին հատուածին , Որն է հարցական մակբայ ։
Վարժարանք՝ և յոյժ փառաց և պարգևաց՝ են անուն բայի
ցն , որ աստ զօրութբ դնի ։ Մեր՝ է յատկացուցիչ Վար-
ժարանացն ։ Պատրաստեալ՝ է կրաւորական ընդունելութի ,

և լեալ է անձական վերջաւորութիւն՝ հոլովիւ միայն համաձայնեալ ընդ նմա, և ոչ թուով՝ վասն անորոշ ձևացուցանելոյ զնոյն ։ ՝Ի Բազմաւորական հրամանաց՝ է խնդիր սեռի ընդունելութեն . ուր Բազմաւորականն է անձական հրամանաց ։ Եւ չամ է շաղկապ բաղհիւսական ։ Փառաց և դարձեաց՝ են յատկացուցիչ ցոյցին ։ Յառաջնոցելոցն՝ է չէզոքական ընդունելութե ՝ի սեռական հոլովի . և է լեալ խնդիր զօրութե իմացեալ էական բային ։ Յեմոփ՝ է խնդիր նր

ր յառաջնոցելոցն .

Յերկրորդ համարն, Որն յարաբերէ զբառսդ փառաց և դարձեաց . և եզական ձայնիւ դնի փոխանակ յոգնականի՝ իբր որք . և է անուն բային էն ։ Մանաաւանդ՝ է մակբայ ։ Պատճառ՝ է ուղղական խնդիր բային էն ։ Փառաց՝ է խնդիր սեռի պատճառին ։ Աստուածպաշտութե՝ է անձական փառացն ։ Կրթութե՝ է յատկացուցիչ նր, ր փառաց ։ Մանեբերոյեցն՝ է տրական խնդիր պատճառին ։

Եւ այս բան պարզի այսպէս . Որք են մեր վարժարանք պատրաստեալք ՝ի թագաւորական հրամանաց , և կամ յոյս թէ յառաջացեալքն յիմաստս՝ ընդունելոց են զփառս և զպարգևս . թէպէտ և այսպիսի փառք և պարգևք՝ մանաւանդ առ մանկաբարոյսն պատճառեն զառաւելագոյն փոյթ կրթութե .

## ԳԼՈՒԽ. ԼԴ.

### Յաղագս Յարմարագրութե.

Յարմարագրութիւն է ուղիղ գրութի բառից ՝ի ձեռն յատուկ տառից , և պատշաճ կարգումն բանից ՝ի ձեռն յարմար կէտից և նշանաց ։ Ուստի երկու պաշտօնք են յարմարագրութե .

Առաջինն է՝ զիւրաքանչիւր բառ գրել իւր սեփականն տառիւ . զր , Անօթ , և ոչ Անօտ . գոհար , և ոչ քոհար . թանձր , և ոչ թանցր . ը այսմ և այլքն . զորս ոչ է հարկ

գրել յերկար․ այս թէ ո՛չ պարտ էր զմի բառ ներ-
գործութեամբ դնել աստ ։ Իսկ եթէ կամիս զմի սոյն տե-
ղեակ լինել, պիտոյ է քեզ պարապել յընթերցումն գրոյ,
և ՚ի քննութիւն բառից․ ևս հայել յաճախ ՚ի բառ-
գիրքն, ուր որոշ եդեալ կան իւրաքանչիւր բառք ըստ
բուն տառից իւրեանց ։

Այլ եթէ տեսցես ՚ի հին ձեռագիրս ինչ այլազգ եդեալ․
զը, փոխանակ ընկերի՝ ընկեր․ փոխանակ ընծայելոյ՝ ըն-
ծայել․ ևն․ զայն ոչ կարես առնուլ քեզ կանոն․ զի այն
այլայլութիւն ոչ է ՚ի բնական հնչմանէ տառից, այլ յար-
տասանութենէ գրողացն․ զի ՚ի գաւառս ինչ այլազգ ունելով
զարտաքերութիւն՝ այլազգ ունին զհանգամանս հնչման
տառից․ և վասն այնմ արտասանեալ յօդեն զբառս ։ Յորմէ
եմուտ ՚ի լեզու մեր սովորութիւն այն, որով լծորդատառք
փոխան միմեանց դնին անխտիր․ չայ՝ փոխանակ ջէի․
գեմ՝ փոխանակ կենի․ ձայ՝ փոխանակ ծայի․ ևն ։ Որոց
լիագոյնս կարես տեղեկանալ ՚ի բառարանէ ՚ի մեկնութիւն
իւրաքանչիւր տառից ։

Երկրորդ պաշտօն յարմարագրութեան է՝ զիւրաքանչիւր բան
ուղիղ և որոշ կարգել, թէ ըստ բառիցն, և թէ ըստ հատ-
ուածոյ բանիցն․ թէ ըստ պարբերութեան, և թէ ըստ տրո-
հութեան ։ Իսկ այս լինի ՚ի ձեռն կէտադրութեան, նշանադր-
ութեան և պատուադրութեան․ զորոց խօսեսցուք կարգաւ ։

## Վասն կէտադրութեան ։

Կէտադրութիւն է ուղիղ կարգումն բառից և բանից ՚ի
ձեռն կիտից ։ Իսկ կէտքն են գիծք ինչ որոշիչք հատ-
ուածոյ բանից, և կարգի բառից․ և են երեք ։

Առաջինն անուանի ստորակէտ․ և է այս ( , ) և դնի սա
հասարակօրէն ՚ի վերջ անկատար բանից և կամ այնպի-
սեաց՝ որ թէպէտ յինքեանս համայն կատարեալ, բայց
համեմատութեամբ այլում բանի՝ որոյ են հատուած, են իբր ան-
կատար ։ Սա լինի ևս միջակէտ ենթ տառին, յորժամ

իբր նախդրիւ վարի . զի , ՝ի տուն , ՝ի տան , ՝ի տանէ ․ ևն ։ Երկրորդն առ ի միջակէտ . և է այս ( . ) և դնի սա ՝ի վերջ այնպիսի բանից , որ թէպէտև են կատարեալ , բայց դեռևս չեն վերջացեալ . յորոյ և հազիւ երբեք սկսանի գլխագրով այլ բան ։

Իսկ երրորդն առ ի վերջակէտ , որ է այս ( . ) և սա դնի ՝ի վախճանի կատարեալ բանից վերջացելոյ . յորոյ հասարակօրէն գլխագրով , կամ երկաթագրով սկսանի այլ բան ։ Եւ ահա երեքին սք յայտնի երևին յառաջիկայ օրինակդ ։

* Որք վիրաւորին ՝ի պատերազմի առ մերում , դեղ նց ապաշխարութիւն է . զոր դնեն ՝ի վերայ վիրաց խոցեանց , և ողջանան ։ || . Մծբ . Յոտ . Է ։

* Եթէ ՝ի տկարան խիղճմտեցից , վատնիմ ՝ի պնդակայն . և զի՞ պիտոյ են ինձ առաքինութիւնք ։ || . Նար . ԿԵ ։

* Ազգ երթայ , և ազգ գայ . և երկիր յաւիտեան կայ || . Ժող . Ա . 4 ։

Արդ նկատել արժան է , զի յորժամ բազում անուանք կամ բայք աւելի քան զերկուս՝ անմիջապէս շարայարին զհետ միմեանց , եթէ նախընթացն նոյին դիպի առանց շաղկապի ևս , հասարակօրէն դնի ՝ի միջի ստորակէտ , կամ դնէ բութ . զի , * Խորամանկ , մեքենաւոր և արուեստական է ախոյեանն մեր . բայց զէն նր տկարագոյն է քան զմեր || . Մծբ . Է ։

* Զոյգծառազգեստ , աստուածապարթ և ծաղկազարդ արտօն օրինադրեցին նորածնելոյն || . Խոր . Վերջ ։

* Մանուկս մղանչական՝ անխրատական և վարատական . տնտեսս մահապարտական՝ տարտամական և անգործական || . Ներսէշնոր . ՝ի Քահն . ԾԷ ։

* Աղաւաղեցաւ , բարձաւ , տեղի ետ այս բարեկարգութիւն ՝ի մէնջ՝ ո՞չ կարծեմ , ՝ի վաղ ժամանակաց || . Լամբ ։

* Բանակեցան՝ բոլորեցան՝ զետեղեցան , և յամ կողմանց անդր ժողովեցան , || . Եղիշէ . Գ ։

Ասացի՝ աւելի քան զերկուս . զի եթէ երկու միայն իւ-

չեն, ոչ է հարկաւոր դնել զստորակէտ, այլ՝ ոչինչ, և կամ առ առաւելն՝ զբութ ․ Օր ․ * Խաղային գնային այնուհետև ՚ի վէմ պահակին հնոցն, ուր ունէին բունուք պարսիկք ․ առնուին՝ քանդէին զպահակն ‖ ․ Եղիշ ․ Է ։
* Խոտեն՝ անարգեն զճշմարիտ օրէնսն ․ և զչարն կամաւ ողջունեն ‖ ․ Լամբրոնացի ․ ՚ի Ճեհն ․ սաղ ․ ճծը ։
* Ե՞րբ իցէ, զի ելից ՚ի թանձրաստուերդ ձանձրալի մարմնոյս ‖ ․ Եղիշէ ․ Ը ։
Իսկ եթէ շաղկապաւ յարեսցին, թէ երկու իցեն՝ և թէ աւելի, ոչ է հարկ դնել զստորակէտ, այլ՝ կամ զբութ, և կամ ոչինչ ․ Օր ․ * Կրկնէր և երեքկնէր զանսուտ երդնումն ‖ ․ Եղիշէ ․ Դ ։
* Ամենայն գնայցէ և փարոց և իրաց՝ ՚ի շամիլ պարտ է կալ, և ոչ խոտորել՝ ոչ յաջ և ոչ յահեակ ‖ ․ Նար ։
* Զուխտն աղեղան եդ ՚ի յամպս միջնորդ ը̄ ա̄ծ՝ և ը̄ երկիր՝ և ը̄ ա̄մ մսեղի ‖ ․ Մծբ ․ ծա̄ ։
Այլ եթէ յայսպիսի շարայարեալ շաղկապաւոր բառսդ յարեսցին այլ բառք իբր բացայայտիչք, կամ իբր յատկացուցիչք, կամ իբր ածականք, կամ իբր խնդիրք, եւն, յայնժամ դնի ստորակէտ, կամ բութ ․ Օր ․ * Եկն ՚ի միասին սիմոն պետրոս, և Թովմաս անուանեալն երկուորեակ, և Նաթանայէլ՝ որ ՚ի կանայ գալիլեացւոց, և որդիքն զեբեդեայ, և այլք յաշակերտաց նորա երկու ‖ ․ Յովհ ։
* Բարձցէ ՚ի հրէաստանէ և յեմէ զայր հզօր, և զկին զօրաւոր ․ զզօրութի հացի, և զզօրութի ջրոյ ‖ ․ Ես ․ Գ ։
* Յարգեն զթշուառութի, և պարսաւեն զյաջողուածս ․ ծաղր առնեն զանուն բախտի, և զփառաւորութիւն այլառնեն յոյժ ․ սիրեն զանշքրութի հանդերձից, և յարգեն զանարգն բան զպատուականս ․ գովեն զմահ, և պարսաւեն զկեանս ‖ ․ Եղիշէ ․ Ե ։
Եւ եւս արժան է նկատել, զի ՚ի բանս յորժամ յարին զինչևիցէ շաղկապք, պարտ է ը̄ պահանջելոյ շաղկապման բառից և բանից դնել զկէտ ․ որոյ զօրինակսն կարես

գտանել կարգաւ յառաջին մասին · Գլ · Է ։

Արդ՝ որպէս հարկ է քերթողին ՚ի շարադրելն ինչ ՚ի կիր առնուլ զպայմանիկ կէտս ըստ յարմարութեան տեղւոյն · սոյնպէս և ս հարկ է ընթերցողին կամ խօսողին կշռել զիւրաքանչիւր անդամ՝ և պարբերութիւն խօսից · և տրոհմամբ բանից ՚ի ձեռն ընչաւութեան արտասանել · ՚ի ստորակէտս՝ զխոնարհումն ձայնին կախ թողլով՝ իբր կատարելի · ՚ի միջակէտս՝ զձայնն հատանելով՝ իբր ըստ իմիք կատարեալ · և ՚ի վերջակէտս՝ զձայնն և զբանն վերջացուցանելով՝ իբր ամենևին աւարտեալ ։

Գտանին դարձեալ՝ և այլ երկու տեսակք գծից · որք երբեմն ՚ի գործ ածին ՚ի շարադրութիւս · որոց մինն ասի փարէնթէզիզ · կամ փակագիծ · և է այս · ( ) · և սա ՚ի մէջ բանի զմանաւոր բան ինչ և կամ բառ պարագրէ · մինչև առանց ընթեռնլոյ զայն՝ ամբողջ մնալ իմացուածոյ միւս բանին · յորոց միջի զետեղեալ կայ · օր · * Առցուք՝ ( թէ ախորժէք ) · նախ զօրէնս այ ՚ի ձեռս մեր · և ընթերցցուք || · Լամբ · ատէն ։ Ուր ահա այս բան՝ թէ ախորժէք՝ որոշեալ է փակագծիւ · առանց որոյ կարէ իմացուած միւս բանին մնալ ամբողջ · որգոն · առցուք նախ զօրէնս այ ՚ի ձեռս մեր · և ընթերցցուք ։

Երկրորդն ասի ենթամնայ · և է այս՝ — · և սա զերկուս տարակոյս վանկս միոյ բառի յարէ ՚ի մի ։ Եւ այս յայնժամ լինի · յորժամ մի վանկ բառին է ՚ի վերջն նախընթաց տողին · և միւսն ՚ի սկիզբն յաջորդ տողին · որպէս է տեսանել ՚ի սմին · * Որ յուսով մեղանչէ · անցայս կորնչի || · Սարգ · Է · ճառ · 5 ։ * Աւելորդ է ՚ի վեր ասցելն երկրորդել · այլ միայն զմեծս զարտուղի և անհամեմատս ըստ ընթացս այսուհետև փոքր ինչ քննել || · Լամբ ։

Այլ նկատել պարտ է · զի մի վանկքն թիւր անջատեսցին ՚ի վերջս տողից · այլ ըստ պահանջման վաղառութեան · ուսոյ և այնպիսի վանկք՝ որք բաղաձայնիւ սկսանին · յանջանին՝ բաղաձայն նշ ոչ է դնելի ՚ի վերջն տողից · այլ

՚ի սկիզբն յաջորդ տողին ։ Որոյ թիւր է այս անջատումն՝ թագաւո-րել · տես-ի · գնայ-աք · օրհն-եալ · երկ-եաւ · անկ-իւն · լաւութ-իւն · փառաւկ-յին · ևն ։ Այլ պա՛րտ է դնել այսպէս ՝ թագաւո-րել ՝ կամ թագա-ւորել · տե-սի · գնա-յաք · օրհ-նեալ · եր-կեաւ · ան-կիւն · լաւու-թիւն · փառաւկ-յին · ևն ։ Սոյնպէս և յայնպիսի բառս՝ յորս ւ տառն իբրև վէվ հնչէ ՝ ո՛չ է պարտ անջատել այսպէս՝ ստեղ-ծուած · պա-տուել · ՚ի նախ-ան-ձուէ · լո-ւանալ · ևն · այլ՝ այսպէս · ստեղծ-ուած · պատ-ուել · ՚ի նախանձ-ուէ · լուա-նալ · ևն ։

Այլ եթէ երկու ձայնաւորք ՚ի զկնի միոյ դիպեսցին ՝ պա՛րտ է զկնին ՚ի ձայնաւորայ ՚ի վերջ նախընթաց տողին դնել ՝ և զմիւսն ՚ի սկիզբն յաջորդ տողին · որ ՝ բաղա-ամ · մարի-ամ · մի-այն · գաբրի-էլ · էմմանու-էլ · առնէ-ին · լու-ին · սիմէ-ովն · է-ակ · կայ-աք · մնայ-աք · բայ-իւ · քոյ-ին · գոյ-իւք · ևն ։

Սոքա եթէ զկնի ունիցին զայլ վանկ ՝ այլազգ ևս բաժա-նին · որգոն ՝ բաղաա-մայ · մարիա-մու · գաբրիէ-լին · էա-կան · միայ-նակ · ևն ։

Եւ ևս յայնպիսի բառս՝ յորս ԷԲ տառն զօրութի՛ է ե-դեալ ՝ յանջատելն զայնս՝ ԷԲն իբր ՚ի բազումս դնի ներ-գործութի՛ · որ ՝ փը-տութի · դը-նել · զը-նել · ըս-կսանիլ · ըղ-նա · ևն ։

Այլ գիտելի է ՝ զի բառք բարդեալք կամ բաղադրեալք առանց միջանկեալ տառի՝ այլազգ անջատին ՝ ըստ սկզբ-նաւորութե՛ պարզից ՝ յորոց զօդին ՝ թէև ձայնաւոր տառիւ սկսեսցին · որ ՝ ուրախ-արար · կամ ուրախա-րար · դժուար-իմաց · բարե-ատեայ · պար-աւուտ · բայ-որոշէլ կամ բայո-րոշել · դեր-անուն · ան-ահ · ան-եղ · այլ-երախտ ՝ կամ այլե-րախտ · ևն ։

Իսկ որք միջանկեալ տառիւ բարդին ՝ սկզբնաւորութե՛ բաղա-ձայնից անջատին · որ ՝ Ջուա-բանել · կենա-գործել · ևն ։

Վասն նշանագրութեան ,

Դ բարբառս մեր կան նշանք ինչ , որովք յատկութիւնք հնչմանց տառիցն որոշին ՚ի ձեռն արուեստի առոգանութեան ըստ ոլորակին , ըստ հագագին՝ և ըստ ամանակին . և են եօթն . թաւ , որ է այս ‾ . սուղ , որ է այս ∘ . սուր , որ է այս ՛ . բութն , որ է այս ՝ . շեշտ , որ է այս ՛ . երկար , որ է այս ˜ . պարոյկ , որ է այս ՙ : Ընդ որս դասի և ստորակէտն , որ նման է պարոյկի , և կոչի ևս երբեմն պարոյկ , որ և է այս ՞ :

Սոքա անուանին ևս՝ սուղանշան . սղանշան . թաւանշան . բթանշան . շեշտանշան . երկարանշան . պարոյկանշան . և ոլորակաձև : Զորոց եթէ կամիս տեղեկանալ , տես ՚ի քերականութեան Հօր մերոյ ամենապատիւ Մխիթարայ աբբայի , նաև ՚ի հին քերականութիւնս : Բայց քանզի սոքա ՚ի գործ ածին նաև ՚ի շարագրութիւնս՝ առ ՚ի կարգաւ զետեղել և որոշել զբառս և զեղանակ բանից , ըստ այսմ ունիմք աստ խօսել զսոցանէ , ՚ի բաց թողեալ զսուղն և զսուրն , զի սոքին ՚ի չափմանս ոտից միայն են պիտանիք :

Թաւն ՚ի գործ ածի ՚ի գրուածս ՚ի վերայ ւ-ի տառին միայն , յորժամ ւ-ն իբրև մէկ հնչէ՝ զինի ձայնաւոր տառիւ՝ է , և ո . օր . Անիւէ . Թիւէ . անուէօք . Թուէոյ . շինուած . պատուէլ . ևն :

Իսկ եթէ զինի այլոց տառից յարելոյ հնչեսցէ իբր մէկ՝ ոչ երևի հարկաւոր ներգործութեան դնել զթաւ . զի յայնժամ ինքնին յայտնէ զհնչումն իւր . օր . Հաւ . կանխաւ . մանաւանդ . աւետիք . դաւիթ . եւայ . դեւ . սիրելոյ . մնասնոյ . հոգւոյ . բարւոք . ևն :

Ըստ այսմ ևս ՚ի յարինս զինի ե-ի տառին իբրև մէկ՝ թեպէտ ՚ի միավանկ և յերկավանկս բառս թաւ դնի , բայց ՚ի բազմավանկս ոչ է հարկ դնել . օր . Համառօտիւ . բազմապատիւ . ևն : և սակայն եթէ բազմավանկքն ունիցին ՚ի վերջոյ զգիր ինչ , հարկ է դնել զթաւ . օր . Համառօտիւք . բազմապատիւք . ևն :

Բութն դնի նախ՝ ՚ի վերայ թուական անուանց դասականաց ,

յորժամ վարին իբր մանկբայ. և կամ յորժամ ունիցին զյօդ առանոյ լինելոյ խնդիր բայի, և կամ անական. որ, * Երկու մխիթարութիւն մեզ նիւթէ ( դաւիթ ). նոր ոչ լքանել ՚ի բարեգործութենէ. զի այս խնամոքն նոյն յաջողի, և հրեշտակաց զօրավիգն լինելով։ Եւ երկրորդ՝ ՚ի յուղղելն զնոյն ոչ հպարտանալ. զի ոչ թէ մերով զօրութեամբ, այլ նորա օժանդակութեամբ ՚ի գլուխ ել, և կատարեցաւ ||.

Լամբ. առղ. ձէ։

* Առաջին աշակերտն սանդղոյս այսորիկ՝ հաւատն է, որ զառաքինութիւն ծնանի. և երկրորդն՝ առաքինութիւն. երրորդն՝ գիտութիւն. չորրորդն՝ ժուժկալութիւն. հինգերորդն՝ համբերութիւն. վեցերորդն՝ աստուածպաշտութիւն. եօթներորդն՝ եղբայրսիրութիւն. ութերորդն՝ սէրն ||.

Սարգ. Է. պետ. 2։

Ասացի՝ յորժամ վարին իբր մանկբայ եղ, զի եթէ իբրև անական վարեսցին համդերձ գոյականաւ, և կամ յօդիւ իբր խնդիր բայի, ոչ է պիտոյ բութ դնել. որ,
* Առաջինն մարդն՝ յերկրէ հողեղէն. իսկ երկրորդ մարդն՝ ար յերկնից ||. Ա. Կորն. ճե. 47։
* Ընդէ՞ր բնաւ առաքեալն զառաջինն եթող, և զերկրորդն սկսաւ ||. Ոսկէբ. Ա. I։

Երկրորդ՝ դնի բութ ՚ի վ(երայ) շաղկապիս՝ այլ. դարձեալ. արդ. և արդ. իսկ արդ. այլ արդ, կամ բայց արդ. եղ. որ, * Ո՛չ եթէ զամ ինչ զոր խորհեսցի մարդ՝ առնել կարօղ է, այլ՝ զոր թոյլատրեսցանէ ած ||. Վարք հարց. Է։
* Դարձեալ՝ եթէ ՚ի նաւ ելեալ որ՝ ընդ անձին ալիս կամիցի ճանապարհորդել ||. Իմաս. ժբ. I։
* Արդ՝ ո՞ւր են իմաստունքն քո ||. Եսայ. ժթ. 12։
* Եւ արդ՝ հայեաց յերկինս ՚ի վեր ո՛վ մարդ, և յերկիր ՚ի խոնարհ ||. Սարգ. Ա. պետ. 8. յարդ։
* Իսկ արդ՝ մեք առանց ամ(ենայն) եկեալ իցեմք յերկիրս յայս՝ տալ ԸՏ սմա պատերազմ ||. Եսայ. Լզ. 10։

Երրորդ՝ դնի բութ ՚ի վ(երայ) դերանուն բանից՝ ՚ի լինելն հեռի գլխաւոր բայից. մերթ ևս ՚ի մօտ լինելն. որ.

* Արդ՝ էր մի՞ զկերպարանս ծառայութեան թողեալ՝ դատաւոր և քննիչ նստիս օրէնսդրին || . Սարգ . յոհ . Է :
* Զուարթագին դիմօք և հանեստ բանիւք յառաջ մատուցեալ՝ տային պատասխանի թղթին || . Եղիշէ . Է :

Սոյնպէս ևս եթէ դրադէմն յետադասեալ իցէ, պարտ է դնել զբութ ՚ի վերջ նախընթաց բանին. Թէպէտ յայսպիսիս երբեմն ստորակէտ ևս դնի. որ, * Արդեօք մի՞տի՞ց ՚ի խորախնամութիւն խորանին լուսոյ՝ քո առաջնորդեալ || . Նարեկացի . ՚ի բանն . ԻԷ :
* Վաղարշակ յետ այսպիսեաց արութեանց և քաջութեանց և բարեկարգութեանց մեռանի ՚ի Մծբին, թագաւորեալ ամս ԻԲ || . Խոր . Է . 7 :

Իսկ եթէ դրադէմքն իցեն բազումք հեռիք ՚ի միմեանց՝ կարգեալ իւրեանց զկնի, և կամ՝ մին յառաջոյ՝ և միւսն յետոյ, ՚ի մին դնի բութ, և ՚ի միւսն ստորակէտ. որ.
* Իսկ նա ոչ կայեալ հեղգ չարին՝ գայր չար զկեանս իւր ՚ի նոյն թողեալ, ինքն չուէ գայ առ մեզ || . Յովհ:

Ոչ զդրադէմս առաջ, զնոյն խիմ և զդերբայսն բանից. որ, * Եւ արդ՝ որո՞ց ընտրոյ արժանաւոր վարկանելով զիս՝ մատչիմ աղերսել || . Նար . ԻԴ :
* Մարդկային բնութիւն մարմին գոլով՝ անմարմին ունի զթշնամի և չարախօս || . Լամբ . պատ :

Այլ եթէ զկնի դրադէմ և դերբայսն բանից միջանկեալ ինչ պատահեսցի, յայնժամ՝ յետ դնելոյ զբութ ՚ի վերայ դրադիմին՝ պարտ է դնել նաև ստորակէտ ՚ի վերջոյ միջանկեալ բանին. որ, * Եւ տեսեալ պիղատոսի՝ թէ ոչ ինչ օգնէ, այլ՝ առաւել խռովութիւն լինի, առեալ ջուր՝ լուաց զձեռս առաջի ժողովրդեանն || . Մատ . ԻԷ :

Զորրորդ՝ բութ դնի երբեմն ՚ի մէջ այսպիսի բառից ևս, յորս կարէր դնել ստորակէտ. որ, * Որ խոնարհի՝ խոնարհեցուցանէ զիւր ևս. և որ ոչ խոնարհի՝ խոնարհի ՚ի դիւաց || . Լամբրոնացի . ՚ի մեկն . առ . ԾԻԳ :
* Մի՛ որ՝ որ չար իցէ՝ յուսայցի անպարտելի լինել || . Յոբ :

Շեշտն դնի նախ՝ 'ի վերջ հրամայական բայից · որ , * Հնազանդեա՛ սիրով · աղօթեա՛ յուսով · աշխատեա՛ հաւատով · և պայծառացի՛ր յերկնաւոր հարսանիսն || · Ներս ։

* Արձանացի՛ր 'ի յոյսն , մինչդեռ ժամանակս 'ի ձեռս է · մատի՛ր առ արքային ահաւոր , մինչդեռ 'ի շնորհայն յաթոռ է · հաւատով գտանել շնորհս 'ի դէպ ժամանակի օգնականութեան || · Լամբրոն · աղօթ ։

Այլ պարտ է գիտել , զի եթէ հրամայական բային ունիցի յառաջ քան զինքն զայլ իմն բառ , ը͞ս որում 'ի մէջն լինի վարի , յայնժամ դնելի է շեշտն 'ի վ͞ր նախընթացի բառին · որ , * Յա͞մ ժամ ուրախ լերուք · անդադար աղօթս արարէք · · · · · յամենայն իրաց շնորհս 'ի բաց կացէք || · Ա · Թեսաղ · Ե · 16 ։

Եւ ևս՝ եթէ հրամայականն ունիցի նախ քան զինքն զարգելական մասնիկս՝ մի , թէ առ ընթեր՝ և թէ հեռի , յայնժամ զշեշտն պարտ է դնել միայն 'ի վ͞ր արգելական մասնկան ։ որ , * Յիմաստութիւն քո մի հպարտանար · · · մի՛ լինիր իմաստուն յաչս անձին քո || · Առակ · Գ · 5 ։

Երբեմն ևս վ͞ն զգուշութեան դնի շեշտ 'ի վերջ անուանց ինչ , որք էական բայիւ վարին , կամ որք էական բայի ուղղական կամ սեռական խնդիր լինին · որ , * Պատահեմ 'ի ձեզ որդեակք || · Բ · Թեսաղ · Գ · 4 ։

* Լա՛ւ է անզգամութեան համբերել քաջութ͞ե || · Իմաստ ։ 4 ։

Ըստ այսմ լինի հատուածօրէն և 'ի բայարձակ դիմազուրկ բայս · որ , * Պիտոյ է արօրադրել զա͞մ ոգւոյ ա͞ծային երկիւղիւն , և զսերմն բանին կենաց ընդունել · և այսպէս պտղաբերել ա͞յ || · Խոսրով ։

Երկրորդ՝ դնի շեշտ 'ի վ͞ր առաջնոյ վանկի 'ի կոչական անուանս , յորժամ առանձինն վարին · զի թէպէտ 'ի մեր լեզու ա͞մ բառք 'ի վերջին վանկն շեշտին , բայց 'ի կոչականս՝ յառաջինն · որ , * Յուդա՝ համբուրելով մատնես զորդի մարդոյ || · Ղուկ · ԻԲ · 48 ։

* Որդեակ զօրէնս իմ մի՛ մոռանար || · Առակ · Գ · 1 ։

Այսպէս՝ յորժամ առանձինն վարին · զի եթէ կրկնեսցին՝ շեշտն ըստ հանճարոյ դնի · Երբեմն ՚ի վերջին վանկն · զոր՝
* Աբրա՛մ աբրա՛մ || · Ծննդ · ԻԲ · 1 · և 11 ։
* Մովսէ՛ս մովսէ՛ս · և նա ասէ · զի՞ է || · Ելից · Գ · 4 ։
* Ո՛վ սողո՛ն սողո՛ն՝ գեղեցիկս բարբառեցար՝ ոչ երանել զբարեբախտութին մարդոյ մինչև ՚ի վախճան || · Խոր ։
Իսկ երբեմն յառաջին վանկն · զոր ՝ * Խօսեցաւ ընդ Իսրայէլի ՚ի տեսլեանն գիշերոյ ՝ և ասէ · յա՛կոբ յա՛կոբ || · Ծննդ · ԽԶ · 2 ։
* Դա՛նիէլ դա՛նիէլ՝ արի՛ ա՛ռ զծաղիկ || · Դան · ԺԳ · 36 ։
* Մա՛րթա մա՛րթա ՝ դու հոգաս և զբազում իւիք զբաղեալ ես · բայց աստ մի ինչ պիտոյ է || · Ղուկ · Ժ ։
Այս ՚ի սոսին շեշտն թէպէտ յառաջին վանկն դնի ՝ բայց հնար էր դնել ՚ի վերջին վանկն ևս ։ և ներհակ այսմ ՚ի վերոյգրեալսն ՝ յորս շեշտն ՚ի վերջին վանկն եդաւ ՝ հնար էր յառաջին վանկն դնել ։
Եւ ևս եթէ կոչական անուանք վարեսցին մասնկամբքս ո՛ և ո՛վ ՝ ըստ որում են կոչականականք ՝ շեշտն դնի ՚ի վե՛ր այսոց մասնկանց · զոր ՝ * Նմանո՛ղ եղերուք ո՛ հովիւք առաջին հովուայն արդարոյ || · Մծբ · Ժ ։
* Վասն քո մարդ եղև քս ՝ և եկն յաշխարհս՝ ո՛վ մարդ ՝ զի փրկեսցիս դու || · Վարք հարց · Է ·
Իսկ եթէ կոչական անուանն զկնի կամ առաջի իւր ունիցի զայլ անուն ՝ կամ զդերանուն ՝ ևն ՝ շեշտն դնի ՚ի վերջին վանկն նախընթացին · զոր ՝ * Սիմոն յովնանու՝ սիրե՞ս զիս առաւել քան զդոսա || · Յովհ · ԻԱ · 15 ։
* Ծագեա՛ ՚ի յիս զլոյս քաւութե՛ արքայ երկնաւոր || · Նար · ԺԷ ։
* Օգնեա՛ ինձ բարի վշտակից || · Նոյնն · ԺԶ ։
Եւ ևս եթէ կոչականքն միոյ՝ իցեն բազումք առանձինն առանձինն ՝ շեշտն դնի ՚ի վերջին վանկսն · զոր ՝ * Տէ՛ր իմ տէ՛ր ՝ տուի՛չ պարգևաց ՝ ինքնաբո՛ւն բարի · · · · փառաւորեա՛լ · անքնի՛ն · անե՛ղ · ահարկո՛ւ · սոսկալի՛ · հզօ՛ր · սաստի՛կ · անտանելի՛ · անմերձենալի՛ · անըմբռ-

եղն · ԾԶ || · Նար · Գ ։

Եւ դարձեալ՝ եթէ կոչականն՝ի վարիկն առանձինն՝ ունիցի զդիմորոշական տառ , չեշտն դնի՝ի վերջն · որ ,
* Բան ինչ է ինձ ընդ քեզ՝ իշխանդ || · Դ · Թագ . Ը · 5 ։
* Հաշտեալ եմ ընդ քեզ տառապեալդ և խախտեալդ , մինչև միսիթարեսցիս || · Եսայ · ԾԴ · 11 ։
* Ուսարուք լսել նեղեալքդ || · ՚ի Նոյնն · ԽԵ · 19 ։

Երրորդ՝ դնի չեշտ երբեմն՝ի վերայ ոմանց բացասական և ստորասական մասնկաց · և՝ի վերայ բառից՝ չէ · մերթ և ս՝ի վերայ բառից՝ առ , ըստ , նա , յորժամ վարին էական բային · որ , * Ո՛չ նախանձի խաւար ընդ աղջամուղջ || · Մծէ · Ը ։
* Քա՛ւ՝ի քէն սաել զայս || · Նոյնն · ԾԷ ։
* Այո՛ լուաւ և դատեցաւ || · Լամբ . առ · ՃԺԶ ։
* Ամէն ասեմ ձեզ , թէ ո՛չ գիտեմ զձեզ || · Մատ · ԻԵ ։
* Զի՛ք ակնառութեան առաջի ա՛յ || · Կողոս · Գ · ԻԵ ։
* Սա՛ է անմահութեան պտղոյն պտղաբերիչ || · Յովհ · Իմաս · Ը ։
* Դա՛ է որդի իմ ընտրեալ || · Ղուկ · Թ . 35 ։
* Նա՛ է Ճշմարիտ ած և կեանք յաւիտենական || · Ա · Յովհ ։

Երբեմն և մայրթ է դնել չեշտ փոխանակ ողորակի՝ի վերայ հարցական բառից՝ ըստ պահանջման տեղւոյն · որ ,
* Փութայաւ ուսանել՝ թէ քանի՛ իցեն պարագլուխ քաջ նահատակացն · · · զի՛նչ անուանք իւրաքանչիւր Համհազարայն իցեն · · · ո՛ ոք՝ի նոյանէ յերկրայս կայցէ · և կամ ո՛ ոք զանձն՝ի մահ դնելով գուն գործիցէ || · Եղիշ · Ը ։

Երկարն՝ի գործ ածի՝ի բանս հեգնականս , ողբականս , ցաւակցականս , զարմացականս · ԾԶ · որ , * Վա՛հ՝ որ քակէիր զտաճարն , և զերիս աւուրս շինէիր զնա , ապրեցո՛ զքեզ || · Մար · ԻԵ · 40 ։
* Մեղա՛յ մեծիդ բարերարութե , անարգս մեղայ || · Նար ։
* Ողորմի՛մ ողորմիմ սիրելեաց ձերոց , և բազում անգամ ողորմիմ անձանց ձերոց || · Եղիշէ Վրդ · Գ ։
* Հիանա՛մ՝ թէ ի՛բր ոչ այրիմ · ապշի՛մ՝ թէ ո՛րպէս չյափշտակիմ || · Նարեկացի · ՀԳ ։

Այլ յայսպիսիս՝ հնար է ևս փոխանակ երկարի դնել շեշտ ՝ մերթ ևս պարոյկ ՝ և կամ ոչինչ ՝ ըստ առոգանելոյ բանին ։

Պարոյկն դնի յայնպիսի բանս՝ որք զկիրս հոգւոյն յայտնեն · որպէս են այն բանք՝ որք հասարակօրէն 'ի ձեւս միջարկութեանց առաջի դնին · զորոյ զօրինակս կարես տեսանել յառաջին մասին · Գլ · Իա ։

Ոլորակն՝ որ նմանութի ինչ ունի ընդ պարոյկին ՝ մանաւանդ թէ՝ երբեմն պարոյկ ևս կոչի ՝ դնի Նախ՝ 'ի վր հարցական մակբայից · որ ՝ * Զի՞ բնաւ պիտոյ են մեզ անցաւոր կեանքս || · Եղիշէ Վրդ · Է ։

* Վն է՞ր լամք զմեռեալն ՝ մինչ օգուտ և ոչինչ || · Ոսկ ։

* Հի՞մ արտմիս անձն իմ կործանեալ · · · կամ ընդէ՞ր զիս խռովես || · Նարեկացի · 'Ի Բանն · Իզ ։

Երկրորդ՝ դնի 'ի վր հարցական անուանց · զորոյ զօրինակս տես յերես · 314 ։

Երրորդ՝ դնի 'ի հարցական բանս՝ 'ի վր այնր բառի ՝ որով հարցումն լինի · որ ՝ * Երկայնամի՞տ միայն լինիցի առ նոսա || · Ղուկ · ԺԸ · 7 ։

Այսպէս ևս եթէ 'ի հարցական բանս դիցի մակբայ երկբայական փոխանակ հարցականի ՝ ոլորակն դնի 'ի վր այնր բառի ՝ որով 'ի մէջ բերի հարցումն · և ոչ 'ի վր մակբային · որ ՝ * Մի թէ տկարանայցէ՞ առ 'ի յայդ բան || · Ծննդ · ԺԸ ։

* Մի թէ բանից գիտութիւնք ի՞նչ իցեն վարդապետութիւնս, և կամ ճարտարութիւնք մարդկան || · Կոչ · ԺԷ · 20 ։

* Արդեօք տեսից զվայելչութի ընտանիդ քո պայծառութեան || · Նարեկացի · 'Ի Բանն · ԻԵ ։

Չորրորդ՝ դնի 'ի վերայ առաջնոյ վանկի վարանական շաղկապից՝ գէթ · գոնէ · գոնեայ · որպէս երևի յօրինակս որ յառաջին մասին · Գլ · Է · Երես · 158 · տես անդ ։ Թէպէտ 'ի սոսա բազում անգամ փոխանակ ոլորակի շեշտ միայն դնի · որ ՝ * Արդ՝ գէթ անագան երբէք դիմեսցուք առ լոյսն մեր քս || · Խոսրով ։

* Ոչ եմ արժանի գոնէ զհովանին պետրոսի տեսանել ՝ թող թէ զնա իսկ գլխովին || . Սարգ . ա . դէտ . 12 .
* Եկա՛յք եղբարք գոնեայ անագան և մեք զանձինս աշխատեսցուք || . Լամբ . 'ի ծնն . դար ։

Այլ գիտելի է ՝ զի բազում անգամ 'ի տեղի ոլորակին դնի պարոյկ . և 'ի տեղի պարոյկին՝ ոլորակ . և երբեմն ևս 'ի տեղի երկարին՝ ոլորակ ՝ կամ պարոյկ . ևս և շեշտ . և 'ի տեղի ոլորակին կամ պարոյկին՝ երկար ՝ ըստ առոգանելոյ զբանսն ՝ որպէս և յիշեցաք 'ի վերոյ ։

## Վասն պատուագրութեան ։

Գտանին և այլ չորս գիծք ՝ որք կոչին տեսակք պատուագրութեան . որոց առաջինն ասի ՊՏՆ . և է այս ՝ ~ . և սա միայն փոխան այբի դնի 'ի մէջ միոյ բառի . ո՛չ 'ի ըսկզբան ՝ և ո՛չ 'ի վերջոյ ՝ այլ՝ 'ի միջի . որպ ՝ ք՛ղք . ա՛մ՛չեմ . ճա՛շ՛կեմ . բոլ՛որ՛կեմ . խա՛ղ՛ղյեալ . եւն ։ Այլ զայս չէ՛ պարտ յաճախել ՝ բայց եթէ հարկն ստիպեսցէ 'ի կարգել զտողս բանից ։

Երկրորդն ասի ԵՐԿՈՐԵԱԿ . և է այս ՝ " ։ և սա դնի նախ՝ 'ի վր բառի փոխան ձայնաւոր տառի եղելոյ 'ի մէջ բառին . որպ ՝ խ"ն"րհութի . ս"վ"րեալ . եւն ։ Այլ բարուոք ևս է յայտնի տեղիս բնաւ ոչ առնուլ 'ի կիր զայս նշան ։ Դնի երկրորդ՝ 'ի վերջ կիսատ բառից ինչ ՝ զորս հնար իցէ ընթերցողին իմանալ . որպ ՝ Ղուկ". Յովհ". Լամբ". եւն . յն . Ղուկաս . Յովհաննէս . Լամբրոնացի . եւն ։

Երրորդն ասի ՔԱՐԴ ՝ որ և պատիւ կոչի ՝ երբեմն ևս քաշ . և է այս ՝ ‾ ։ և սա դնի 'ի վր բառի՝ երբեմն փոխան ձայնաւոր և բաղաձայն տառից ինչ այնր բառի . որպ ՝ ած . ամ . եմ . իէլ . երդ . չրդ . մրդ . խրհդ . ժմկ . փխկ . եւն ։ Իսկ երբեմն փոխան ձայնաւոր տառից միայն մանաւանդ փոխանակ այբի . որպ ՝ քհնյ . պտճռ . սհմն . սկւ . րզմ . պրտւոր . խնրհուն . ժղվրդ . եւն .

Զորրորդն ասի նշանագիրք. որ դնի փոխանակ միոյ ամ-
բողջ բառի. և սոքա են կրկին տեսակք: Ոմանք կազմին ՚ի
բաղադրութենէ գրոյ. որպիսի են սոքին.

| | |
|---|---|
| ա̅ր, այսինքն. | ն̅ն, նայլն. |
| զ̅ր, զորօրինակ. | կ̅, կամ. |
| ը̅դ, ընդ. | ք̅, քան. |
| ը̅ս, ըստ. | ս̅ն, այսպէս. ն̅ն: |

Իսկ ոմանք կազմին յայնպիսի գծից, որք ոչ դասին ը̅դ
գիրս լեզուի մերոյ. և բայց ՚ի նշանագրէս Ծ՛ ոչ են ՚ի
գործածութե̅. վ̅յ և մեք աւելորդ վարկաք գրել զայնս
աստանօր:

Ընդ սոսա դասի և փակագիրն. որ է գիծ ինչ բաղադ-
րեալ ՚ի բազում գրոյ, որք կազմեն զյատուկ անուն մար-
դոյ: Սորա ևս են կրկին տեսակք. որոշ, և անորոշ:
Որոշ ասին, յորժամ սկզբնատառն յատուկ անուան ամ-
բողջ նկարի ՚ի սկիզբն փակագրին: Իսկ անորոշ ասին,
յորժամ սկզբնատառն յատուկ անուան ոչ ամբողջ նկարի
՚ի սկիզբն փակագրին, այլ՝ ը̅ս կիսոյն միայն:

Այսչափ ինչ շատ լիցի յաղագս քերականութե̅. յոր
թէպէտ հնար էր ինչ ինչ ևս յաւելուլ, բայց առ խոր-
շելոյ յերկարութենէ՝ զայսքանս բաւական համարեցաք: Այլ
սակայն արժան ևս վարկաք ՚ի վախճան գործոյս կարգել
զհամառօտութի̅ ինչ քերականութե̅, առ ամփոփ ունե-
լոյ առաջի զսահմանս և զբաժանմունս մասանց բանի, և
զկանոնս համաձայնութե̅ ն̅ց:

Աւարտ երրորդ մասին.

# ՀԱՄԱՌՕՏՈՒԹԻՒՆ

## ՔԵՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ.

Ցուցեալ առաջին դնին սահմանք և բաժանմունք և պարագայք մասանց բանի. և կանոնք համաձայնութեան նոցա ընդ միմեանս։

### ԳԼՈՒԽ. Ա.

*Թէ զի՞նչ իցէ քերականութիւն, և որք իցեն գլխաւոր ուսանելիք ՚ի նմա։*

Քերականութիւն է արուեստ ուղիղ խօսելոյ՝ և անսխալ շարադրելոյ։

Գլխաւոր ուսանելիք ՚ի քերականութեան՝ են չորք. գիր, վանկ, բառ, և բան։

Գիրն է գիծ ինչ նշանակիչ տառի։ Իսկ տառն է հընչումն ինչ յօդելի և հեգելի. զի յօդի ընդ այլում հնչման. և հեգեալ ընդ նմա՝ հնչէ զկատարեալ ձայն։

Վանկն է ձայն ինչ, որ միով հնչմամբ ելանէ ընդ բերան մարդոյ՝ բաղկացեալ ձայնաւոր և բաղաձայն տառից, որգոն, * մա. զէն. եա։

Բառն է ձայն նշանակական. այսինքն այնպիսի ձայն, որ կարողէ ՚ի նշանակել ինչ։ Եւ բաժանի յութն ազգս. անուն, դերանուն, բայ, ընդունելութիւն, նախադրութիւն, մակբայ, շաղկապ, և միջարկութիւն։

Բանն է շարամանութիւն բառից՝ յայտնօղ տրամախոհութեան մտաց ։ Եւ է կրկին ․ կատարեալ ՝ և անկատար ։

Կատարեալն է ՝ որ անթերի յայտնէ զդատմունս մտաց ․ օր ՝ * Թագաւոր արդար կանգնէ զաշխարհ || ։

Իսկ անկատարն է ՝ որ տայ զսկզբնաւորութիւն իմանալոյ ըզ-դատմունս մտաց ՝ բայց ոչ աւարտէ ․ օր ՝ * Եթէ անսայ-ցես || ․ յոր թէ յաւելցի բայ ինչ ՝ կատարի ․ օր ՝ * Ե-թէ անսայցես ՝ աղերսեմ || ։

Մասունք բանի են ութն ազգ բառից ․ անուն ․ դերանուն ՝ բայ ՝ ընդունելութիւն ՝ նախադրութիւն ՝ մակբայ ՝ շաղկապ ՝ և միջարկութիւն ։

## Յաղագս անուան ։

Անունն է մասն բանի ՝ որով իրն յորջորջի ․ կամ է՝ այն-պիսի բառ ՝ որով իրն ասի այս ինչ ։ Կամ որ զէութիւն իրին նշանակէ ․ օր ՝ * Ծառ ․ լոյս ․ երկիւղ ․ չար ․ ևն ։

Անունն բաժանի յերկուս ՝ ՚ի գոյական և յածական ։

Գոյական անունն է ՝ որ ինքնին վարի ՚ի բանս ՝ և նշանա-կէ զիրս էական ՝ կամ իբր էական ․ օր ՝ * մարդ ․ հայ ․ սէր ․ օրհնութիւն ․ ևն ։ Եւ բաժանի ՚ի յատուկ ՝ ՚ի հասարա-կան ՝ և ՚ի յընդհանուր ։

Յատուկն է ՝ որ կարգեալ է՝ զմիոջէ միայն ասիլ ․ օր ՝ * Մովսէս ․ Սիոն ․ Նեղոս ․ ևն ։

Հասարականն է ՝ որ զհասարակեալ իրս իբրև զմի նշանա-կէ ․ օր ՝ * գունդ ․ ժողով ․ շեղջ ․ ևն ։

Ընդհանուրն է ՝ որ զհասարակ ինչ բազմաց՝ նշանակէ ․ օր ՝ * ծաղիկ ․ գլուխ ․ բարութիւն ․ ևն ։

Ածական անունն է ՝ որ ինքնին ոչ վարի ՚ի բանս ՝ այլ անջէ յարիլ ՚ի գոյականս՝ իբր յայտնիչ որպիսութեան օր ՝ քաղցր ․ դառն ․ բարձր ․ սակաւ ․ մեծ ․ փոքր ․ մ ․ արդար ․ ևն ․ որք յարելով ՚ի գոյականս վարին ․ ՝ * քաղցր ջուր ․ դառն պտուղ ․ բարձր աշխա-տանք ․ սակաւ ժամանակ ․ ևն ։

Այլ սք բազում անգամ զօրութիւն ունին զգոյականսն ․ օր․ * մեծն 'ի փոքուն ճանաչի ||․ որ մեծ իրն 'ի փոքու իրի ։ * անզգամն անգոսնէ զխրատ հօր ||․ որ այր անզգամ ։ * աղբիւր կենաց յայ՟ բերան արդարոյ ||․ որ բերան առն արդարոյ ։

Ածական անունն բաժանի յերիս ՝ 'ի դրական ՝ 'ի բաղդատական ՝ և 'ի գերադրական ։

Դրականն է ՝ որ ցուցանէ զորպիսութիւն կամ զորքանութիւն իրին պարզապէս՝ առանց ճոխացուցանելոյ՝ կամ նուազեցուցանելոյ ․ օր․ * բարձր ․ խոնարհ ․ աղտեղի ․ պայծառ ․ սուրբ ․ մաքուր ․ վեհ ․ զօրաւոր ․ ևն ։

Բաղդատականն է ՝ որ բաղդատելով զիւր ընդ այլում իրի՝ ցուցանէ զորպիսութիւն նորին աւելեալ կամ նուազեալ քան զմիւսոյն ․ օր․ * բարձրագոյն ․ խոնարհագոյն ․ ևն ։ կամ ՝ * ևս աղտեղի ․ ևս պայծառ ․ ևն ։

Գերադրականն է ՝ որ ցուցանէ զորպիսութիւն իրին յոյժ աւելեալ՝ կամ յոյժ նուազեալ քան զայլսն ․ օր․ * ամենասուրբ ․ ամենամաքուր ․ ևն ։ կամ ՝ * ևս վեհագոյն ՝ ևս զօրաւորագոյն ․ ևն ։

## Յաղագս պարագայից անուան ։

Պարագայք անուանց են այնք ՝ որք յանուանս մտանեն՝ իբր հետևութիւն որպիսութեան նոցա ․ և են վեց ՝ սեռ ՝ ձև ՝ տեսակ ՝ թիւ ՝ հոլով ՝ և հոլովումն ։

Սեռք անուանց են որոշմունք գոյական անուանց ըստ նշանակելոյ նոցա զսեռս իրաց ։ Եւ են չորս ․ արական ՝ իգական ՝ հասարակ ՝ և չէզոքական ։

Արականն է ՝ որ նշանակէ զարու ․ օր․ * Գրիգոր ․ Աբգար ․ հայր ․ քեռի ․ ցուլ ․ քաղ ․ ևն ։

Իգականն է ՝ որ նշանակէ զէգ ․ օր․ * Եսթեր ․ Հեղինէ ․ մայր ․ հանի ․ կով ․ մաքի ․ ևն ։

Հասարակն է ՝ որ միով ձայնիւ նշանակէ զարու և զէգ ․ օր․ * զաւակ ․ կորիւն ․ ձի ․ արջ ․ ևն ։

Չեզոքականն է, որոյ նշանակեալն ոչ արու է, և ոչ էգ. որպ. * Հուր. այգի. մատն. մեծութիւն. եւն :

Ձևք անուանց են որպիսութիւնք նց՝ ըստ պարզութեան, ըստ բարդութեան և ըստ բաղադրութեան: Աստի և անուանք ըստ ձևոյն երեք են. պարզ, բարդ, և բաղադրեալ :

Պարզ անունն է, որ ոչ է զօդեալ ընդ այլում՝ նշանական բառի, այլ կայ յինքեան միայնակ. որպ. * լոյս. բարի. գօտի. բան. լի. ձեռն. աղօթք. արիւն. եւն :

Բարդն է, որ յերկուց նշանական բառից զօդեալ է 'ի մի անուն. երբեմն 'ի ձեռն տառիցս՝ ա, ե, է, ի, օ. որպ. * լուսատու. բարեկրօն. գօտեմարտ. բանիբուն. լիալի: Եւ երբեմն առանց այսպիսի տառից. որպ. * ձեռնատու. աղօթկեր. արիւնեբուղխ. եւն :

Ընդ բարդս դասին և քանի մի անուանք. որք յերից բառից զօդին 'ի մի անուն, և կոչին յարաբարդք. որպ. * երեքտասանամեայ. նորակերտապանծ. Հրաշխնամել. եւն :

Բաղադրեալն է, որ յառաջոյ զօդեալ ունի զանշան մասնիկ ինչ. որպ. * անձայն. ապերախտ. դժեղ. համաձայն. տարադէպ. եւն :

Տեսակք անուանց են որպիսութիւնք նոցա ըստ նախնական և ըստ ածանցական նշանակութեան: Աստի և անուանք երկու են ըստ տեսակին. նախագաղափար, և ածանցական: Նախագաղափար՝ կամ նախատիպ անունն է, որ կայ յառաջին նշանակութեան իւրում, կամ յայնմ որպիսութեան, զոր ինքնին նշանակէ. որպ. * աւանդ. բան. հուր. հող. կոյս. երիցապետ. անմիտ. եւն :

Ածանցական անունն է նոյն նախատիպ անունն 'ի ձեռն ածանցակերտ մասնկանց կերպարանեալ, և անցեալ յայլ ինչ եղանակ նշանակութեան. որպ. * աւանդութիւն. բանաւոր. հրային. հողեղէն. կուսանոց. երիցապետական. եւն :

Ոմանք յայսպիսի անուանց երբեմն 'ի կրկին մասնկանց ածանցին, և կոչին կրկնածանցական. որպ. * Թագաւորական. ազգականութիւն. եւն :

Ածանցականակերտ՝ կամ ածանցիչ մասնկունք են բազում.

ներգոյն ․ * ած ․ ակ ․ իկ ․ ուչ ․ ին ․ ի ․ այի ․ ային ․ եան ․
ական ․ աւոր ․ ոյ ․ ու ․ ութիւն ․ եղէն ․ Եւն ։

Իսկ տեսակք ածականաց են երեսուն ․ Հայրանունական ․ ազգական ․ տեղական ․ Եւն ․ որպէս դնի ՚ի մասն ․
Բ ․ Գլ ․ Է ․ երես ․ 195 ։

Թիւք անուանց են միութիւն և բազմաւորութիւն նշանակութ- անուանց ըստ ձայնին ։ Եւ են երկու ․ եզական ․ և յոգնական ․ կամ միաւորական ․ և բազմաւորական ։ Եզականն է ․ որ ըստ ձայնին զմի իր նշանակէ ․ որգոն ․ * սեղան ․ բեռն ․ ատամն ․ վարթար ․ անձեղ ․ Եւն ։ Իսկ յոգնականն է ․ որ ըստ ձայնին զբազումս նշանակէ ․ որգոն ․ * սեղանք ․ բեռինք ․ ատամունք ․ Եւն ։

Հոլով անուանց է այսպէս փոփոխումն մի և նոյն անուան ՚ի սկիզբն ․ կամ ՚ի վերջն ․ և կամ յերկոսին միանգամայն ․ և է տասն ․ ուղղական ․ ո՛րգոն ․ գործ ․ սեռական ․ ո՛րգոն ․ գործոյ ․ Եւն ։

Հոլովմունք անուանց են այսպիսութիւնք վերջաւորութեց սեռական և գործիական հոլովից ․ և են քսան ․ չորեքտասանքն հասարակ ․ իսկ վեցքն յատուկ ։

Ըստ այսօրինակ վերոյգրեալ վեց պարագայիցդ՝ բառս հողով՝ է անուն գոյական ․ ըստ սեռին՝ չէզոքական ․ ըստ ձեւոյն պարզ ․ ըստ տեսակին՝ նախատիպ ․ ըստ թուոյն՝ եզական ․ ըստ հոլովին՝ գործիական ․ և ըստ հոլովմանն՝ հոլովի որպէս գետ ․ գետոյ ․ գետով ։

Դարձեալ՝ բառս զգլխաւորականս՝ է ածական անուն դրական ․ ըստ սեռին՝ հասարակ ․ կամ անսեռ ․ ըստ ձեւոյն՝ բարդ ․ ըստ տեսակին՝ նախատիպ ․ ըստ թուոյն՝ յոգնական ․ ըստ հոլովին՝ հայցական ․ և ըստ հոլովմանն՝ նախդրիւ և եթ հոլովի ։

## Յաղագս դերանուան ։

Դերանունն է մասն բանի ․ որ փոխանակ անուան դնի ․ և առ որոշեալ դէմս վերաբերի ։ Եւ բաժանի ՚ի հինգ

տեսակս · որք են , էական · ստացական · ցուցական · յարաբերական , և դիմորոշական ։

Էականն է , որ գոյականապէս նշանակէ զդէմս իւրն · որք են սոքա · * ես · դու · ինքն · իւր , իւրեան ։

Ստացականն է , որ ածականապէս նշանակէ զիւրն որոշեալ դիմաց · որպիսի են սոքա · * իմ · քո · մեր · ձեր · իւր , իւրոյ ։

Ցուցականն է , որ յանդիման ցուցանէ զիրն յերրորդ դէմս ըստ կարգի · որպիսի են սոքա · * սա · դա , նա · այս , այդ , այն · սոյն , դոյն , նոյն ։

Յարաբերականն է , որ զօրութիւն յառաջ բերեալ ՚ի բանի զնախընթաց կամ զյաջորդ բառն՝ դնի ՚ի տեղի նր , յոր հոլով և պահանջեսցէ բանն · և է բառս՝ որ ։

Դիմորոշականք են երեքին տառքս այսոքիկ՝ ս · դ · ն · որք իբր յօդք ինչ յարելով ՚ի մասունս բանի՝ որոշեն զդէմն նոցա ։

## Յաղագս պարագայից դերանուան ։

Պարագայք դերանուանց են հինգ · տեսակ , դէմք , թիւ , հոլով , և հոլովումն ։

Տեսակք դերանուանց են երկու , որպէս և անուանցն , նախատիպ՝ և ածանցական ։

Նախատիպք են սոքին · * իմ · քո · մեր · ձեր · իւր · ինքն · և այլն ։

Իսկ ածանցականք են սոքին · * մերային · քոյին · ձերոյին · իւրական · ինքնաւոր · ինքնութի · և այլն ։

Դէմք դերանուանց են յայտարարութիւնք որոշեալ անձանց · և են երեք · առաջին , երկրորդ , և երրորդ ։

Առաջին դէմքն է այն , յորմէ է բանն · զօրօրինակ , ես ։

Երկրորդ դէմքն է այն , առ որ է բանն · զօրօրինակ , դու ։

Երրորդ դէմքն է այն , զորմէ է բանն · զր , նա · ինքն ։

Ըստ երրորդ դէմն վերաբերելին և դէմք այլոց դերանուանց , թէ ստացականաց և թէ ցուցականաց · թէ-

պէտ 'ի մէջ նոցա ևս զատանի կարգ դիմաց ․ զի ոմանք նը-կատին ըստ առաջին դիմաց , որպէս՝ իմ՝ մեր , և այլն ․ ո-մանք ըստ երկրորդին , որպէս՝ քո , ձեր , և այլն ․ և ոմանք ըստ երրորդին , որպէս՝ իւր , իւրային , և այլն ։

Թիւք դերանուանց են երկու , եզական և յոգնական ։

Եզականն է՝ որ իբրև զմի իր դիմաւոր նշանակէ ․ որպէս , * ես ․ դու ․ մեր ․ ձեր ․ և այլն ։

Յոգնականն է՝ որ իբրև զբազում դիմաւորս նշանակէ ․ որպէս , * մեք ․ դուք ․ մերք ․ ձերք ․ և այլն ։

Հոլով դերանուանց է պէսպէս փոփոխումն մի և նոյն դերանուան յինքեան ․ որպէս , * դու , քո , քեզ , զքեզ , 'ի քէն , զքէն , քև , զքև , 'ի քեզ , ով դու ։

Հոլովմունք դերանուանց են պէսպիսութիւնք հոլովից նոցա ․ որպէս , * ես , իմ ․ դու , քո ․ նա , նորա ․ և այլն ։

Ըստ այսորիկ վերոյեղեալ հինգ պարագայից՝ բառս ինև՝ է դերանուն էական ․ ըստ տեսակին՝ նախատիպ ․ ըստ դիմին՝ վերաբերի առ առաջինն ․ ըստ թուոյն՝ եզական ․ ըստ հո-լովին՝ գործիական ․ և ըստ հոլովմանն՝ հոլովի , ես , իմ , յինէն , ինև , և այլն ։

Դարձեալ՝ բառս 'ի ձերոց՝ է դերանուն ստացական ․ ըստ տեսակին՝ նախատիպ ․ ըստ դիմին՝ կարգաւ երկրորդ ․ ըստ թուոյն՝ յոգնական ․ ըստ հոլովին՝ բացառական ․ և ըստ հո-լովմանն՝ հոլովի որպէս՝ իմ , իմոյ , յիմոյ , և այլն ։

## Յաղագս Բայէ ։

Բայն է մասն բանի , որ զառս , կամ զկիրս , և կամ զլինելութիւն իրաց ընդ ժամանակաւ նշանակէ՝ ըստ որոշեալ դիմաց ․ որպէս , * հեղում ․ փոխիմ , գնամ ․ լինիմ ․ ևն ։

Բայք բաժանին յերկուս , յէական և յառքական ։ Էա-կանք են , որք նշանակեն զլինելութիւն իրին ընդ ժամանակաւ ․ և են չորեքին սոքա , * եղանիմ ․ լինիմ ․ եմ , և գոլ ։ Իսկ առքականք են , որք նշանակեն զառնել ինչ կամ

զկրել · որպիսի են այլ նմ բայք · զր, * գրեմ · ջեռ-
նում · արձակիմ · և այլն :

Ուղղակի բայք բաժանին ՝ի կանոնաւորս, և յանկանոնս : Կանոնաւորք են, որք ՝ի խոնարհիլն անփոփոխ մնան ձայնիւ, անթերի ժամանակաւ՝ և անպակաս դիմաւ · որպիսի են սոքին · * գործեմ · աղամ · թողում · հաշտիմ ·
և որ ըստ սոքօք :

Իսկ անկանոնք են, որք ամբողջապէս ոչ խոնարհին, այլ կամ պակասին ՝ի ժամանակս ինչ, և յայլոց լրանան · և կոչին պակասաւորք · և են սոքին · * ուտեմ, կերայ · ըմպեմ, արբի · լսեմ, լուայ · Ճանաչեմ, ծանեայ · ունիմ, կալայ · երթամ, չոգայ : Կամ այլայլին ձայնիւ · և կոչին զարտուղիք · և են սոքին · * առնեմ, արարի · դնեմ, եդի · տամ, ետու · մեղանչեմ, մեղայ · յառնեմ, յարեայ · գամ, եկի : Եւ կամ ըստ պատահման պակասին յառաջին և յերկրորդ դէմսն · և կոչին դիմազուրկք · և են սոքին · * յաջողէ · լուսանայ · թուի · հարկ է · և որ
ընդ սոքօք :

## Յաղագս պարագայից բայի :

Պարագայք բայից են այնք, որք մտածին ՝ի վերայ բայից՝ իբր հետևմունք որպիսութե նորա · և են ինն · սեռ, ձև, տեսակ, թիւ, դէմք, ժամանակ, եղանակ, խոնարհ-
մունք, և լծորդութիւնք :

Սեռք բայից են որոշմունք նշ ըստ առնից և ըստ կրից · և են չորք · ներգործական, կրաւորական, հասարակ, և
չէզոքական :

Ներգործականք են, որք նշանակեն զներգործել իւրն
առ կրօղն · զր, * այրեմ · վառեմ · ևն :

Կրաւորականք են, որք նշանակեն զկրել իւրն ՝ի ներ-
գործողէ · զր, * այրիմ · վառիմ · և այլն :

Հասարակք են, որք միով կրաւորական ձայնիւ մերթ նշանակեն զներգործել իւրն առ այլ, և մերթ զկրել

լինի յայլմէ ․ զր ՝ * տանիմ ․ ծնանիմ ․ և այլն ։

Չէզոքականք են ՝ որք զներգործութիւն գործողին յինքեան ՝ի գործօղն նշանակեն ՝ և ոչ ինչ ՝ի ներգործողէ առ կրօղ ։ Եւ են կրկին ․ ներգործականերպ ՝ և կրաւորականերպ ՝ կամ ձայնակրականն ։

Ներգործականերպ չէզոքականք են ՝ որք ընդ ներգործական բայից խոնարհին ․ զր ՝ * դիմեմ ․ կնամ ․ զբօսնում ․ և որ ընդ սոքօք ։

Ձայնակրականք են ՝ որք ընդ կրաւորական բայից խոնարհին զր ՝ * աշխատիմ ․ սնանիմ ․ փախչիմ ․ և որ ընդ սոքօք ։

Ձեւք բայից են որոշմունք նոցա ընդ պարզութեան ՝ ընդ բարդութեան և ընդ բաղադրութեան ․ և են երեք ․ պարզ ՝ բարդ ՝ և բաղադրեալ ։

Պարզն է ՝ որ առանց բաղկացութեան ընդ այլում բառի՝ զնշանակութիւն առնից և կրից պարզապէս յայտ առնէ ․ զր ՝ * բերեմ ․ կիզեմ ․ և այլն ։

Բարդն է ՝ որ զոդեալ ընդ այլում նշանակական բառի՝ ըզկրկին իմաստս առնից կամ կրից ՝ի մէջ բերէ ․ զր ՝ * ընծայաբերեմ ․ բոցակիզեմ ․ և այլն ։

Բաղադրեալն է ՝ որ բաղկանայ բաղադրական մասնկամբքս ՝ առը ․ ըստ ․ ան ․ տար ․ տ ․ և այլն ․ զր ՝ * աւետառաքեմ ․ խոյզեմ ․ անպատուեմ ․ տարամերժեմ ․ տգիտանամ ․ և այլն ։

Տեսակք բայից են որակութիւնք նոցա՝ նկատեալք ընդ նախնական և ըստ ածանցական նշանակութեան իւրեանց ․ և են երկու ․ նախագաղափար ՝ և ածանցական ։

Նախագաղափարք՝ կամ նախատիպք են ՝ որք նշանակեն միայն զառս գործողին ․ զր ՝ * յառնեմ ․ լամ ․ յենում ․ պատկառիմ ․ և այլն ։

Ածանցականք են ՝ որք ոչ միայն զներգործութիւն առնողին ՝ այլև զգործել կրողին նշանակեն ․ զր ՝ * յարուցանեմ ․ լացուցանեմ ․ յեցուցանեմ ․ պատկառեցուցանեմ ․ եւն ։

Թիւք բայից մասնին ընդ եզակութեան և ըստ յոգնականութեան նոցա ․ և են երկու ․ եզական ՝ և յոգնական ։

Եզակական է, որ նշանակէ զմիակի գործողութիւն, կամ կրելութիւն միոյ. օր. * վառեմ. վառիմ. և այլն։

Յոգնական է, որ նշանակէ զբազում գործողութիւնս, կամ կրելութիւնս բազմաց. օր. * վառեմք. վառիմք. ևն։

Դէմք բայից են, որք ցուցանեն զգործողութիւն լինել որոշեալ անձին. և են երեք. առաջին, երկրորդ, և երրորդ։

Առաջին դէմքն է այն, որ ցուցանէ զգործողութիւն այնր, յորմէ է բանն. օր. * տամ. ետու. և այլն։

Երկրորդ դէմքն է այն, որ ցուցանէ զգործողութիւն այնր, առ որ է բանն. օր. * տաս. ետուր. և այլն։

Երրորդ դէմքն է այն, որ ցուցանէ զգործողութիւն այնր, զորմէ է բանն. օր. * տայ. ետ. և այլն։

Ժամանակք բայից են. որք ցուցանեն զառս կամ զկիրս լինել յայս ինչ ժամանակի. և են երեք. ներկայ, անցեալ, և ապառնի։

Անցեալն քառակի նկատի. զի՝ իբր անկատար, իբր կատարեալ, իբր յարակատար, և իբր գերակատար. և ըստ այսմ ժամանակք բայից ասին լինել վեց. ներկայ, անկատար, կատարեալ, յարակատար, գերակատար, և ապառնի։

Եղանակք բայից են պէսպէս աստիճանք կամ կերպք նշանակելոյ նոյն զառս և զկիրս. և են չորք, սահմանական, հրամայական, ստորադասական, և աներևոյթ, կամ անորոշ։

Խոնարհմունք բայից են պէսպէս փոփոխութիւնք մի և նոյն բայի ՚ի զանազան վերջաւորութիւնս, և ՚ի դէմս, և ՚ի ժամանակս, թէ ըստ եզականին, և թէ ըստ յոգնականին. օր. * պահեմ, պահես, պահէ. պահեմք, պահէք, պահեն. պահէի, պահէիր, և այլն։ Եւ սոքա այնչափ են, որչափ են փոփոխութիւնք մի և նոյն բայի։

Լծորդութիւնք բայից են պէսպիսութիւնք վերջաւորութեանց սահմանականի ներկային. և են չորք. առաջինն յանգի ՚ի եմ. օր. գործեմ։ երկրորդն՝ ՚ի ամ. օր. աղամ. եր-

ըորդն ՚ի ում. որպէս, թողում ։ չորրորդն ՚ի իմ. որպէս, հաշտիմ ։

Ըստ վերոյգրեալ ինն պարագայիցդ՝ բառս այս ողայր՝ է բայ կանոնաւոր. ըստ սեռին՝ ներգործակերպ չէզոքական. ըստ ձևոյն՝ պարզ. ըստ տեսակին նախատիպ. ըստ թուոյն՝ եզական. ըստ դիմին՝ երրորդ. ըստ ժամանակին՝ անկատար. ըստ եղանակին՝ սահմանական. ըստ խոնարհմանն՝ խոնարհի ըստ երկրորդ լծորդութեան՝ որպէս ընթանամ. ընթացայ, ընթանալ ։

Դարձեալ՝ բառս զարթուցին՝ է բայ կանոնաւոր. ըստ սեռին ներգործական. ըստ ձևոյն՝ պարզ. ըստ տեսակին՝ անցողական. ըստ թուոյն՝ յոգնական. ըստ դիմին՝ երրորդ. ըստ ժամանակին՝ կատարեալ. ըստ եղանակին՝ սահմանական. ըստ խոնարհմանն՝ խոնարհի ըստ առաջին լծորդութեան՝ որպէս մատուցանեմ, մատուցի, մատուցին ։

## Յաղագս ընդունելութեան ։

Ընդունելութիւն է մասն բանի, որ նշանակէ զիրն յանելութեան, կամ ՚ի կրելութեան. և մերթ զատ՝ կամ ընդկիլս ընդ ժամանակաւ ։ Եւ է չորս՝ ըստ չորից վերջաւորութեանց՝ օղ, եալ, լոց, լի. որպէս, * գնօղ. գնեալ. գնելոյ. գնելի ։

Պարագայք ընդունելութեանց են վեց. սեռ, ձև, տեսակ, և ժամանակ՝ ըստ բայից. թիւ, և հոլով՝ ըստ անուանց, Եւ ըստ այսոցիկ պարագայից՝ բառս ՚ի լուսաւորեալց՝ է ընդունելութիւն յանգեալ ՚ի եալ. ըստ սեռին՝ կրաւորական. ըստ ձևոյն՝ բարդ. ըստ տեսակին՝ նախատիպ. ըստ ժամանակին՝ անցեալ. ըստ թուոյն՝ յոգնական. ըստ հոլովին՝ բացառական. և հոլովի որպէս գետ, գետոյ, ՚ի գետոյ ։

## Յաղագս նախադրութեան, մակբայի, շաղկապի, և միջարկութեան.

Նախադրութիւն է մասն բանի, որ 'ի յարին յանուանս ցուցանէ զպարագայս ինչ իրին, զոր անունն նշանակէ։ Ոմանք 'ի նախադրութեանց են հոլովակերպք. որգոն, * 'ի, յ, առ, առ 'ի, ց, ը̃, զ։ Եւ ոմանք հոլովառուք. որգոն, * ըստ. քան. վասն. 'ի վերայ. 'ի ներքոյ. և այլն,

Մակբայն է մասն բանի, որ զպարագայս գործողութեանց նշանակէ. որգոն, * ուր. երբ. զիարդ. միթէ. ահա. ևն. և ունի երեսնեւերեք տեսակս.

Շաղկապն է մասն բանի, որ յարէ ընդ միմեանս զմասունս բանի, նաև զոյն իսկ զբանս. որգոն, * և. իսկ. թէ. զի. ևն. և ունի վեշտասան տեսակս։

Միջարկութիւն է մասն բանի, որ զներքին կիրս հոգւոյն յայտ առնէ. որգոն, * ով. աւաղ. վահ. և այլն. և ունի վեշտասան տեսակս։

# ԳԼՈՒԽ․ Բ․

## Ցաղագս համաձայնութեան մասանց բանին ։

Համաձայնութիւնք մասանց բանի են կապակցութիւնք նոցա ընդ միմեանս՝ առ 'ի կազմել զբան ։ Այս կապակցութիւնք լինին ութն եղանակաւ ․ Նախ՝ անուան ընդ անուան ։ Երկրորդ՝ դերանուան ընդ դերանուան և ընդ անուան ։ Երրորդ՝ բայի ընդ անուան , ընդ դերանուան և ընդ ընդունելութեան ։ Չորրորդ՝ ընդունելութեան ընդ անուան և ընդ դերանուան ։ Հինգերորդ՝ նախադրութեան ընդ անուան , և ընդ այնս՝ որք իբր անուն հոլովին ։ Վեցերորդ՝ մակբայի ընդ բայի , և ընդ այնս՝ որք ունին զզօրութիւն բայի ։ Եօթներորդ՝ միջարկութեան ընդ բանի ։ Ութերորդ՝ շաղկապի ընդ բանի , և ընդ մասունս նորա ։

## Ցաղագս համաձայնութեան անուան ընդ անուան ։

Անուանք որոշեալ կամ գոյական են , և կամ ածական , 'ի գալ սոցա առ միմեանս՝ հարկ է , զի կամ գոյականք ընդ գոյականաց համաձայնեսցին , կամ ածականք ընդ ածականաց , կամ գոյականք ընդ ածականաց , և կամ ածականք ընդ գոյականաց ։

Արդ՝ գոյական անուանք երրակի կարեն համաձայնիլ ընդ գոյականաց ։ Նախ՝ իբր բացայայտիչ ։ Երկրորդ՝ իբր յատկացուցիչ ։ Երրորդ՝ իբր խնդիր ։ Քանզի՝

Նախ՝ յորժամ հարկ լինի 'ի բանս յայտ առնել զնշանակութիւն անուան իրիք , թէ յինչ միտս դնի , կամ փոխանակ որոյ նշանակէ , յարեմք 'ի նոյն զայլ անուն առանց շաղկապի՝ թուով և հոլովիւ համաձայն նմին ․ և այն լինի նմա բացայայտիչ ․ որպէս , * Եւ առեալ հրեշտակին զամբակում՝ տարաւ զնա 'ի քաղաքն բաբիլոն || ․ Ուր գոյական անունդ Բաբիլոն՝ է բացայայտիչ անուանս 'ի քա-

ղաքն ․ զի յայտ առնէ՝ թէ անուանս քաղաք՝ իմացեալ լինի սաստ Երուսաղէմ, և ոչ Նինուէ, կամ Գազա ։

Նոյնպէս և յայս բանս, * Որ շինեցեր զտուն քո զեկեղեցի խնամութի հօր յմ ||․ անունս եկեղեցի՝ է բացայայտիչ անուանս տուն քո ․ զի յայտ առնէ, թէ բառիս տուն՝ իմացեալ լինի սաստ եկեղեցին ․ և ոչ թէ ապարանք ինչ, և կամ այլ ինչ շինուած ։ Ըստ այսմ և անունդ յմ՝ է բացայայտիչ անուանս խնամութե հօր ։

Երկրորդ՝ յորժամ հարկ լինի ՚ի բանս յայտ առնել, թէ արդեօք նշանակեալն անուան իրիք՝ որո՞յ է, կամ որո՞ւմ յատկանայ, յարեմք ՚ի նոյն զայլ անուն՝ (և մերթ ՚ի տեղի անուան զդերանուն, կամ նաև զընդունելութի և զդերբայ, ) ՚ի սեռական հոլովի ․ և այն լինի նմա յատկացուցիչ ․ որպէս, * Լուարուք մանկունք զխրատ հօր || ․ Ուր անունս հօր՝ է յատկացուցիչ անուանս խրատ ․ զի ցուցանէ, թէ խրատն այն՝ հօր է, և ոչ օտարի, կամ թշնամւոյ ․ Նոյնպէս և յայս բանս, * Արեգական լոյս խաւարեցաւ || ․ անունս արեգական՝ է յատկացուցիչ անուանդ լոյս ․ զի ցուցանէ, թէ այն լոյս՝ արեգական է, և ոչ ճրագի, կամ հրոյ, և կամ այլոյ իրիք աստեղ ։

Իսկ եթէ պիտոյ լիցի յայտակիս նախդիր դնել, պարտ է յարել զայն ՚ի նախընթացն, թէ յատկացուցիչ իցէ այն, և թէ յատկացուցեալ ․ որպէս, * Զիմոյդ պատմեցից ըզթիւ մեղաց իմոց || ․ * Կալցուք յանձինս զհրեշտակային սրբութի || ։ Այս նախդիր երբեմն կրկնի ՚ի վերայ երկուցն ևս, մանաւանդ եթէ անկցի ՚ի միջի բայ ․ որպէս, * Զկենացն եսուր զհաց || ։

Երրորդ՝ յորժամ հարկ լինի գոյական անուանց առնուլ զխնդիր՝ յարեմք ՚ի նոսա զայլ անուն, ( կամ ՚ի տեղի անուան զդերանուն կամ զընդունելութի, ) իբր խնդիր նո՛ց ըստ պահանջելոյ նշանակութե նոցին ։ Վասն զի ոմանք ՚ի գոյական անուանց ունելով զհաղորդութի ընդ բայից՝ ուրեք ուրեք պահանջեն խնդիր առնուլ ըստ որպիսութե բայիցն ․

տրակսի են բայանուանք ․ իսկ թէ զխնդիր , դիցուք զերիս կանոնս ։

Կանոն ․ Ա ․ Ընդունանք , որք ունին զհաղորդութիւն ընդ ներգործական բայից , առնուն զխնդիր սեռի ՚ի սեռական հոլովի , և մերթ ՚ի հայցականին ․ որպէս , * Զգման ձեռին ․ փչմամբ զհոգին ։

Եւ երբեմն ևս հանդերձ խնդրով սեռի առնուն նաև զխնդիր բնութեան յայնպիսի հոլով՝ զորպիսի պահանջեն բայքն , ընդ որոց ունին զհաղորդութիւն ․ որպէս , * Ձգման ձեռին ՚ի ծառն ․ փչմամբ ՚ի նա զհոգին ։

Կանոն ․ Բ ․ Ընդունանք , որք ունին զհաղորդութիւն ընդ կրաւորական բայից , առնուն զխնդիր սեռի ՚ի բացառական հոլովի ․ որպէս , * առաքմամբ ՚ի հօրէ ։ Եւ երբեմն նաև զխնդիր բնութեան ․ որպէս , * առաքմամբ ՚ի հօրէ յաշխարհ ։

Կանոն ․ Գ ․ Ընդունանք , որք ունին զհաղորդութիւն ընդ չէզոքական բայից , զայնպիսի խնդիր առնուն՝ զորպիսի պահանջեն բայքն , որոց հաղորդին ․ որպէս , * գալստեամբ ՚ի տաճարն ․ հրաժարումն յաշխարհէ ։

Յաղագս համաձայնութեան գոյական անուանց ընդ ածականաց ։

Համաձայնութիւն գոյական անուանց ընդ ածականաց՝ է ըն-նելն նոցա խնդիր ածականաց՝ համաձայն նշանակութեան նոցին ․ վասն զի բազումք յածականաց և օրինակի գոյականաց՝ ունելով զհաղորդութիւն ընդ բայից , առնուն երբեմն զխնդիր՝ ըստ այսպիսի երից կանոնաց ։

Կանոն ․ Ա ․ Ածականք ներգործականահաղորդք՝ ( այս է որք ունին զհաղորդութիւն ընդ ներգործական բայից , ) առնուն զխնդիր սեռի ՚ի սեռական հոլովի ․ որպէս , * ժառանգորդ արքայութեան ․ մատակարար շնորհաց ․ կործանիչ մեհենաց ։ Այլ որք ՚ի իչ յանգին , երբեմն փոխանակ սեռականի՝ առնուն զհայցական ․ որպէս , * փարատիչ զխաւար տգիտութեան ․ լուցիչ զաշխարհ ամ ։

Այսպիսի ածականք երբեմն բայ ՚ի սեռական կամ ՚ի

Հայկական լեզուոյ՝ առնուն նաև զայլ լեզուիր՝ ա̄ պա-հանջելոյ բայից, ը̄ որոյ ունին զհաղորդութի. զ̄ր,
* մատակարար շնորհաց ազգի մարդկան. փարատիչ՝ի մտաց զխաւար տգիտութե̄ :

Կանոն. Բ. Ածականք կրաւորականահաղորդք՝ առնուն զխնդիր սեռի 'ի հոլովն բացառական. զ̄ր, * դիւրա-շարժ 'ի հողմոյ. անքննելի 'ի մարդկանէ :

Կանոն. Գ. Ածականք չեզոքականահաղորդք՝ հասարակօ-րէն զայնպիսի խնդիր առնուն, զորպիսի պահանջեն բայքն՝ որոց հաղորդին. զ̄ր, * հաւասար հրեշտակաց. գորո-վագութ առ որդիս. մաքուր 'ի մեղաց. զօրաւոր բանիւք. մշտատև յաղօթս :

Իսկ անուանք բաղդատականք այլազգ առնուն զխնդիր. երբեմն 'ի սեռական հոլովն. զ̄ր, * գերագոյն քերովբէ-ից : Երբեմն 'ի բացառականն. զ̄ր, * վսեմագոյն յիշ-խանաց : Երբեմն 'ի ներգոյականն. զ̄ր, * տկարագոյն յա-նասունս : Երբեմն և՝ մանաւանդ թէ բազում անգամ՝ նախադրութբս քան. զ̄ր, * բարձրագոյն քան զերկինս :
Նոյնպէս և անուանք թուականք և մասնականք և հարցա-կանք հասարակօրէն առնուն զխնդիր 'ի բացառական հո-լովն. զ̄ր, * երկու 'ի նոցանէ. ոմն 'ի հարց. ո՛վ 'ի մարդկանէ :

### Յաղագս համաձայնութեան ածական անուանց ընդ գոյականաց :

Ածական անուանք յարեալ 'ի գոյականս՝ յայտ առնեն զորպիսութի իրացն՝ զոր գոյականքն նշանակեն. և քան-զի պէսպէս եղանակաւ յարին սք̄ 'ի գոյականս՝ պէսպէս համաձայնին ը̄ նմ՝ ա̄ վեց կանոնաց :

Կանոն. Ա. Ածական անուանք՝ յորժամ յետադասին գոյ-ականաց, համաձայնին ը̄ նմ թուով և հոլովիւ. զ̄ր,
* Ծառայք իմաստունք տիրեսցեն տերանց անմտաց || :

Կանոն. Բ. Ածական անուանք յորժամ նախադասին գոյ-ականաց, ոչ համաձայնին ը̄ նմ՝ ոչ թուով և ոչ հոլո-

վիւ , թէ մի իցեն և թէ բազում · որ , * Ունայն բանիւք ընդդէմ զինին Ճշմարիտ և ողջամիտ վարդապետութե || ։ Իսկ միավանկ ածականք՝ երբեմն համաձայն դնին · որ ·

* սրբոյ պատարագին · Նորոյ կտակարանաց ։

Կանոն · Գ · Յորժամ 'ի մէջ նախադաս ածականի և յետադաս գոյականի անկանի բայ , կամ ընդունելութի , ածականն հասարակօրէն համաձայնի ը գոյականին՝ թուով և հոլովիւ · որ , * Երկայնագունից կարօտիմք բանից || ·

* Ընծայնով զինեալ փութը || ։

Այլ երբեմն անհամաձայն ևս դնի · որ , * Գերակայ եհաւ իշխանութե || ։ * 'Ի զգայական ծածկեալ լուսոյ || ։

Կանոն · Դ · Եթէ նախադաս ածականն ունիցի զխնդրողական սառ , հասարակօրէն թուով և հոլովիւ համաձայնի ը յետադաս գոյականին · որ , * Գոհացարուք ըՏր

մարդասիրէն այ || ։

Իսկ երբեմն առանց համաձայնութե դնի · որ , * Որ տիրականդ իշխանութե հաղորդս արարեր զմբ զաւքելն || ։

Կանոն · Ե · Եթէ նախադաս գոյականքն իցեն բազում , յետադաս ածականն դնի ըս թուոյն յոգնական , և ըստ հոլովին համաձայն · որ , * Ողջոյն տաջիք անդրանիկեայ

և յունեայ ազգականաց իմոց || ։

Կանոն · Զ · Եթէ ածականն իցէ նախադասեալ գոյականին , կամ գոյականն ածականին , նախդիրն դնի 'ի վր նախադասին · որ , * Դարձո զիս 'ի չար սովորութէց իմոց 'ի բարի սովորութի || · * Ապականեն զբարս քաղցունս՝

բանք չարք || ։

Եւ ևս՝ եթէ նախադաս ածականքն կամ գոյականքն իցեն բազում , և ունիցին զշաղկապդ և , նախդիրն դնի 'ի վր նոյ · որ , * Որ զհակառակասէր և զդժնդակ վարս ուղղեսցէ · · · զարտաքեկին կարգ ունի || · * 'Ի յայրս և

'ի փապարս խաւարայինս բնակեր || ։

Եւ եթէ նախադաս ածականն կամ գոյականն իցէ մի , իսկ յետադասքն իցեն բազում , նախդիրն ոչ միայն դնի 'ի վր նախընթացին , այլ և 'ի վր երկրորդ և երրորդ

յետադասին . օր , * 'ի չար խորհրդոց , 'ի բանից և 'ի գործոց փրկեա՛ զիս || . * Զայր արիւնահեղ և զնենգաւոր պիղծ առնես դու տէր || : Որքէք ուրեք ևս ոչ գտնի . օր , * Փայլեցոյց զամ ուղղութիւն և յաջողութիւն || . * Զարդարեցեր նորօք զտիեզերս 'ի զգեստ լուսափայլս և նորափետուրս || :

### Յաղագս համաձայնութեան ածական անուանց ընդ ածականաց :

Ածական անուանք չորեքկին համաձայնին ընդ միմեանս . Նախ՝ իբր ածական . օր , * Աղանդաւոր խորհրդատու || : Երկրորդ՝ իբր խնդիր . օր , * Հրաւիրատուք ողորմութեանց || : Երրորդ՝ իբր բացայայտիչ . օր , * Ուսուցանէ զմեզ այնպէս լինել , ( օր ) հեզ և խոնարհ || : Չորրորդ՝ իբր յատկացուցիչ . օր , * Դժուարինք չէնցաղանաց՝ դիւրինք նմա երևին || :

### Յաղագս համաձայնութեան դերանուանց :

Դերանուանք հնգապատիկ են . էական , ցուցական , ըստացական , յարաբերական , և դիմորոշական : 'Ի մէջ սոցա էական դերանունս ինքն՝ բաղում անգամ յարի յայլ դերանունս՝ համաձայն թուով և հոլովիւ . և իբր մի վարի է նոսա . օր , * ես ինքն . դու ինքն . նա ինքն . սոյն ինքն . որ և ինքն . և այլն :

Սոյնպէս յարին է միմեանս և ցուցական դերանուանք . օր , * սոյն սա . դոյն այդ . նոյն այս . և այլն :

Էական դերանուանքս՝ ես , դու , ինքն , նա , ( ևս և ցուցական դերանուանքս՝ սա , դա , նա , էականապէս վարեալք ) , 'ի գործ ածին իբր գոյական . և ըստ գոյական անուանց , Նախ՝ լինին յատկացուցիչ . օր , * զկեանս իմ . զտուն քո . է իւր կամաց . բանք սր . գիրք դր . վարք նր : Երկրորդ՝ լինին խնդիր անուանց , ևս և ընդունելութեանց և նախադրութեանց . օր , * անմոռաց յիշեմ . խնամօղ ինքեան . վասն նորա :

Երրորդ՝ լինին բայականացեալք 'ի ձեռն անուանց՝ Համաձայն թուով և հոլովիւ. որպ, * Ես որ խօսեցայ ||. * 'ի մէնջ յաջակերտայս քան փառաւորի պաշտօնն այդ ||:

Չորրորդ՝ յարին յածականս և յընդունելութիւնս՝ Համաձայն թուով և հոլովիւ. որպ, * Ամ քաւեա զիս զմեղաւորս ||. * Ձեզ ներելոյդ հանգիստ ||:

Ցուցական դերանունքս՝ սա, դա, նա, յորժամ հոլովին՝ սա, սորին, սմին. դա, դորին, դմին. և այլն. հասարակօրէն իբր ածական վարին՝ համաձայն ընդ գոյականաց՝ 'ի հինգ հոլովս միայն. 'ի սեռականն. որգոն, * սորին խորհրդոյ: 'ի վերջահոլով տրականն. որգոն: * դմին կանոնի: 'ի գործիականն. որգոն, * նովին բանիւ: 'ի պարառականն. որգոն, * զսովին տեղեաւ: 'ի ներգոյականն. որգոն, * 'ի դմին տան:

Ցուցական դերանունքս՝ այս, այդ, այն, իբր ածական վարին. և 'ի յարելն յանուանս՝ հասարակօրէն համաձայնին ընդ նոսա թուով և հոլովիւ, որպ. * այսր տեսութեան. այդմ պաշտաման. յաշխարհին յայնմիկ. և այլն: Այլ սակաւ ուրեք անհամաձայն ևս դնին. որպ, * այս պատկերաւս. յայդ նեղութենդ. խորհրդոյն այն. և այլն: Եւ եթէ նախադաս անուանն նախդիր ունիցի, նախդիրն միշտ և յայլ կրկնի նաև 'ի վր այսոցիկ դերանուանց. որպ, * Դու ես ապաւէն իմ 'ի նեղութենէ յայսմանէ ||. * փոխանակ զի արարեր դու զբանդ զայդ . . . օրհնելով օրհնեցից զքեզ ||. * Եւ եղև ընդ աւուրսն ՟Ը այնոսիկ ել հրաման յօգոստոս կայսերէ ||:

Ցուցական դերանունքս՝ սոյն, դոյն, նոյն, հասարակօրէն նախադաս լինելով անուանց վարին. և զի սոքա միայն նախդրիւ հոլովին, առանց համաձայնութեան յարին 'ի նն. որպ, * 'ի սոյն դատաստանաց. 'ի դոյն սենեկի. զնոյն չարչարանաց. և այլն:

Ստացական դերանունքս՝ իմ, քո, մեր, ձեր, նորա՝ նոցա, միշտ իբր ածական վարին. և 'ի յարելն յանուանս՝ միշտ համաձայնին ընդ նոսա, թէ 'ի նախադասելն՝ և թէ 'ի

յետադասիլն · ( բայ ՝ի չորից յոգնական հոլովից ՝ որք
են՝ ուղղական ՝ հայցական ՝ նախդրիւ տրական ՝ և ներ-
գոյական ) · օր̄ ՝ * ՝ի տան հօր իմոյ օթևանք բազում
են || · * Տան քում վայելէ սրբութի || · * Մի գայթակ-
ղեսցին բազումք մերով գայթակղութե̄ս || · * Տեսանեն
զքաջութի ձերոյ նահատակութեդ || · * Ներհակ իւրոյն
վարդապետէ օրինաց || ։

Այլ բազում ուրեք փոխանակ ստացական դերանուանց՝
դնին սեռական հոլովք էական դերանուանց՝ իբր յատ-
կացուցիչ · օր̄ ՝ * Իշխանութե̄ք քո զօրացան || · * Բա-
րեխօս իւր ուխտաւորացս || · և այլն ։

Ասացի՛ բայ ՝ի չորից յոգնական հոլովից · զի ՝ի նորին
միջոց անհամաձայն դնին · օր̄ ՝ * Ծառայք իմ · և ոչ իմք ·
* զվաստակս քոյ · և ոչ քոյս · * Ը̄ դրունս ձեր · և ոչ
ձերս · * ՝ի տունս մեր · և ոչ մերս ։

Յարաբերական դերանունս ոք՝ ՝ի յարաբերելն զանուն ՝
կամ զդերանուն՝ համաձայնի ընդ նմա ըստ թուոյն · օր̄ ՝
* Լուր որդեակ հօր քո ՝ որ ծնաւ զքեզ || ։

Իսկ ըստ հոլովին՝ դնի յայն հոլով՝ յոր դնելի էր յարա-
բերելին · և այս՝ կամ իբր անուն բայի ՝ կամ իբր խըն-
դիր ՝ կամ իբր յատկացուցիչ ՝ և այլն · օր̄ ՝ * Ամ օ-
թևան է անձին՝ որ յապաշխարութե̄ն իցէ || · * Սակաւ ողոր-
մութե̄ն՝ զոր արարեր ՝ զբազմապատիկ պարտն՝ զոր պար-
տէիր ՝ թողցէ քեզ Ած || · * Ո՛չ կարէ կրել նա յոգի
իւր զբանս անմխւթս ՝ որոյ միտք ծանրացեալ իցէ ՝ի նիւ-
թոյ երկրի || ։

Այլ գիտելի է ՝ զի սա երբեմն յարաբերէ փոխընթացի ·
օր̄ ՝ * Երանեալ է այր՝ որ համբերիցէ փորձանաց || ։
Երբեմն զհետևեալն · օր̄ ՝ * Որ ստեղծ զշունչս ամ̄ն ՝
նա գիտէ զամ̄ || ։ Եւ երբեմն զօրութե̄ ունի զյարաբե-
լին · օր̄ ՝ * Որ սիրէ զկեանս՝ խնայէ ՝ի բերան իւր || · ը̄
նա՝ որ սիրէ ։

Դիմորոշական յօդքս ՝ ս ՝ դ ՝ ն ՝ յարին յանուանս ՝ ՝ի
դերանուանս ՝ ՝ի բայս և յընդունելութիւնս ՝ և երբեմն նաև

յայլ մասունս բանի՝ առ որոշումն դիմաց. որպէս, * տանս. քոյդ. ասէն. 'ի տառապելոյս. և այլն։

Այլ երբեմն դնին սոքա փոխանակ միմեանց. որպէս, * Ես զոր առէս՝ այս է ||. * Ո՛չ յիշէս՝ զոր ասացից քեզ ||. * Զոր առնեմն և արարից ||. * 'Ի մի՛տ առ՝ զոր խօսիմն ||.

## Յաղագս համաձայնութեան բայի։

Բայք կրկնակի համաձայնին ընդ անուանս, և ընդ այլ մասունս բանի. նախ՝ իբր ընդ այնս, որք ասին անուն բայի. երկրորդ՝ իբր ընդ այնս, որք ասին խնդիր բայի. որպէս յայս բանս, * Կայէն սպան զհաբէլ ||. բայս սպան՝ համաձայնի ընդ երկուց անուանցս կայէն և զհաբէլ։ Որոց առաջինն կոչի անուն բայի. և ցուցանէ զտէր գործողութեան սպանանելոյն. այսինքն զսպանօղն. և այն է անունն՝ կայէն։ Իսկ երկրորդն կոչի խնդիր բայի. և ցուցանէ զենթակայն գործողութեան սպանանելոյն. այսինքն զսպանեալն. և այն է հայցական հոլովն՝ զհաբէլ։

Սոյնպէս և յայս բանս. * Տրտնջօղն՝ թերահաւատ է ||. բառս տրտնջօղն՝ է անուն բայի. էն՝ է բայ. թերահաւատն՝ է խնդիր։ Այլ թէ սոքա զիա՛րդ պարտին համաձայնիլ, դիցուք զպէսպէս կանոնս։

## Կանոնք վասն անուան բայի։

Կանոն. Ա. Եթէ բայն լիցի դիմաւոր, անուն բային դնի յուղղական հոլովն. որպէս, * Տրդատ յաղթեաց հուչէի ||. Ուր վասն դիմաւոր գոլոյ բայիս յաղթեաց, անուն բային՝ որ է բառս տրդատ՝ եդեալ է յուղղական հոլովն։ Իսկ եթէ բայն լիցի անդէմ, անուն բային իբր 'ի բաղումն դնի 'ի սեռական հոլովն. որպէս, * Յաղթահարեալ տրդատայ զհուչէ՝ պատուեցաւ 'ի դիոկղետիանոսէ ||. Ուր սեռական հոլովս տրդատայ՝ է անուն բայիս յաղթահարեալ։ Այլ

երբեմն յուղղական հոլովն ևս դնի · իբր ՝ * Եւ մուշեղ առեալ զզօրս իւր՝ խաղայ յարևելս ||:

Սոյնպէս ևս եթէ բայն իցէ յերրորդ դէմս յարակատար և գերակատար ժամանակի, և անցելոյ ստորադասականին՝ յեզականն, անուն բային իբր ՝ի բազում դնի ՝ի սեռական հոլովն · իբր ՝ * Թողեալ է իմ · տեսեալ էր քո · լուեալ իցէ նր̅ : Իսկ երբեմն դնի յուղղականն · իբր ՝ * Թողեալ է արքայ · տեսեալ էր իշխանն · գնացեալ իցէ պահապանն :

Կանոն · Է · Եթէ բայն իցէ դիմաւոր, անուն բային համաձայնի ը̅ նմա թուով և դիմաւ · իբր ՝ * Ծոխս աղքատացայ || · Ուր որպէս դիմաւոր բայս աղքատացայ՝ ը̅ թուոյն է եզական, և ըստ դիմին՝ յառաջին դէմն · նոյնպէս և անուն բային, որ է ծոխս՝ ը̅ թուոյն է եզական, և յառաջին դէմն ՝ի ձեռն յօդիդ՝ ս · որպէս թէ ասէր, ես Ծոխս աղքատացայ :

Այլ այսպիսի յօդ՝ երբեմն զօրութե̅ դնի, մանաւանդ յերրորդ դէմն · իբր ՝ * Գայթակղեսցին չարք առաջի բարեաց · և ամպարիշտք կողկողեսցին առ դրունս արդարոյ ||:

Կանոն · Ը · Եթէ անուն բային իցէ բազում ը̅ նոյն դիմաց, բայն հաւաքակօրէն դնի յոգնակի · իբր ՝ * Անդրէաս և Փիլիպպոս ասեն ցյս̅ ||: Բայց երբեմն ՝ի հաւաքակ անուանս դնի ևս եզակի · իբր ՝ * Նախանձ և հակառակութի̅ խռովեցոյց զԹագաւորութիս ||:

Կանոն · Թ · Եթէ անուն բային իցէ բազում ՝ի զանազան դէմս, բայն դնի ՝ի պատուականագոյն դէմն · և քանզի առաջին դէմքն է պատուականագոյն քան զերկրորդն, և երկրորդն քան զերրորդն, յայսպիսիս՝ բայն դնի յայն դէմն, որ պատուականագոյն է · իբր ՝ * Ես և դու գնացաք ՝ի միասին || · * Ժողովեսջիք անդր դու և զօրք քո ||:

Կանոն · Ժ · Եթէ անուն բային ը̅ ձայնին իցէ եզական, իսկ ը̅ նշանակութե̅ն բազմաւորական, ( որպիսի են ան-

ուանք Թուականք , ) բայն դնի յոգնակի ․ որպ , * Լաւ են երկու քան զմի ‖ ․ * Ընկան 'ի նոյանէ քսան հազար այր ‖ ։

Իսկ եթէ անուն բայից լիցէ հաւաքական , բայն երբեմն դնի յոգնակի ․ որպ , * Գունդ զօրացն դարձան ‖ ․ * Ազգ եկին 'ի հիւսիսոյ ‖ ։ Եւ երբեմն եզակի ․ որպ , * Ցրուեցաւ գունդն ‖ ․ * Ծառայեաց ժողովուրդն ‖ ։

Այլ աստ պարտ է գիտել , զի երբեմն անուն բայից զօրութեան դնի ․ որպ , * Մերժեցին զկարգս մարմնական կենցաղոյս ‖ ․ Ուր զօրութիւն խնդրի անուն բայից , որ է ։ Եւ ներհակ այսմ՝ երբեմն բայն դնի զօրութեան ․ որպ , * Դէպ ժամանակ՝ այժմու կեանքս ‖ ․ Ուր զօրութիւն գոյ բայս՝ է ։

## Կանոնք վասն խնդրոյ բայից ։

Բայք ներգործականք և կրաւորականք առնուն զկրկին խնդիր ․ որ է զխնդիր սեռի , և զխնդիր բնութեան ։ Իսկ չէզոքականք , ընդ որս և էականք՝ միայն զխնդիր բնութեան ․ որպէս տեսցի յառաջիկայ կանոնսդ ։

Կանոն ․ Ա ․ Ներգործական բայք առնուն զխնդիր սեռի 'ի հայցական հոլովի ․ որպ , * Մեզ ծածկէ զճառագայթս արեգական ․ և զլոյս խաւարէ յոլով կերպիւ ‖ ․ Ուր հայցական հոլովս զճառագայթսն՝ է խնդիր սեռի բայիս ծածկէ ․ և հայցական հոլովս զլոյս՝ է խնդիր սեռի բայիս խաւարէ , որ խաւարեցուցանէ ։

Կանոն ․ Բ ․ Կրաւորական բայք առնուն զխնդիր սեռի 'ի բացառական հոլովի ․ որպ , * 'Ի Տնէ ուղղին գնացք առն ‖ ․ Ուր բացառական հոլովս 'ի Տնէ՝ է խնդիր սեռի կրաւորական բայիս ուղղին ։

Կանոն ․ Գ ․ Բայք ներգործականք և կրաւորականք բայց 'ի խնդրոյ սեռի՝ առնուն երբեմն զխնդիր բնութեան ըստ պահանջելոյ նշանակութեան իւրեանց՝ 'ի պէսպէս հոլովս ․ ոմանք 'ի տրականն , ոմանք 'ի բացառականն ․ և ոմանք

յայլ ․ որպ ՝ * Կոչեաց անօրէն իշխանն զՎասակ առ ինքն ՝ և խոստացաւ նմա մեծութիւն բազում ․ զի քակեսցէ զուխտն Հայոց ՚ի միաբանութենէ ՝ և հաստատեսցէ յնսին զհրաման թագաւորին || ։

Այսպէս ․ ․ Չեզոքական բայք առնուն զխնդիր բնութեան ընդ պահանջելոյ նշանակութեան իւրեանց՝ ՚ի պէսպէս հոլովս որպէս ասացաք ներգործականաց ։ որպ ՝ * Վասակ՝ որ օտարացեալն էր ՚ի սիրոյն քսի ՝ հնազանդեցաւ ողոքանաց անօրէն իշխանին ՝ և մալոեաւ հնարիւք ընդ բազումս ․ և որք հաւանեցան նմա ՝ իջին ընդ նմա ՚ի դժոխս || ։

## Ցուցակ աներեւոյթ բայից ։

Աներեւոյթ բայք որովհետև իբր անուն հոլովին ՝ ՚ի գործ ածին երբեմն իբրև անուն գոյական ․ և լինին անուն բային ՝ խնդիր բային ՝ խնդիր անուան ՝ խնդիր ընդունելութեան ․ և այլն ։

Իսկ յորժամ իբր բայ վարին ՝ լինին բազում անգամ արգելիչ խնդրոյ բային ․ որպ ՝ * Ոչ կամիցի զանձն իւր կեցուցանել ՝ կորուսցէ զնա || ․ Ուր աներեւոյթ բայս կեցուցանել ինքնին խնդիր լեալ կամելոյն՝ արգելեալ է զխնդիր նր ․ և ինքն է առեալ զխնդիրն ․ որ է բառդ զանձն իւր ․ որպէս ՝ թէ ասէր ՝ որ կամիցի զկեցուցումն անձին իւրոյ՝ կորուսցէ զնա ։

Երբեմն ևս լինին սոքա տրական խնդիր բային՝ իբր դերբայ՝ զօրութբ ունելով զնախդիրդ ՚ի կամ առ ՚ի ․ որպ ՝ * Ժողովեցին ժողովուրդք բազումք՝ լսել և բժշկիլ ՚ի հիւանդութեանց իւրեանց || ․ այս առ ՚ի լսել ՝ և ՚ի բժշկիլ ։

## Ցուցակ համաձայնութեան ընդունելութեանց ։

Ընդունելութիւնք յանգեալք ՚ի օղ՝ միշտ իբր ածական անուան վարին ․ և ընդ կանոնի համաձայնութեան ածականաց յարին ՚ի գոյականս ․ որպ ՝ * ՚Ի բանս կայ ՚ի դժրօղ բերանոյ|| ․

* Սակաւ օգտեն խրատք՝ առն բարկացողի ||։

Մոքա ՚ի վարիլն ներգործականապէս՝ առնուն զխնդիր սեռի ՚ի հոլովն սեռական՝ կամ հայցական. զբ, * Խորհամօղ արարածոց ||. * Ընդունօղք զբանն կենաց ||։

Երբեմն առնուն նաև զխնդիր բնութե ըստ պահանջելոյ բայիցն, յորոց բղխեն. զբ, * Քեզ որդւոյ չնորհօղն մեզ զկեանս՝ փառք ||. * Նորոգօղք տիեզերաց ՚ի նախահօրն յանցանաց ||։

Իսկ որք վարին չէզոքականապէս, ըստ բայիցն՝ յորոց ելանեն, առնուն զխնդիր. զբ, * Համբերօղ վշտաց||. * Հայեցօղ յօձն պղնձի ||. * ՚Ի մեղաց զգուշացօղ ||։

Ընդունելութիւնք յանգեալք ՚ի եալ՝ եթէ ներգործականապէս առցին, իբր դերադէմ բայ վարին. զբ, * Առեալ զթշնամին՝ խորտակեցին ||։

Իսկ եթէ կրաւորաբար՝ կամ չէզոքականապէս առցին, երբեմն վարին իբր զդերադէմ բայ. զբ, * Քաջալերեալ ՚ի բանից նր՝ յաղթեցին թշնամեաց ||. * Իջեալ մարմնով ՚ի գերեզման՝ զկապեալ հոգիսն փրկեաց ||։ Եւ երբեմն վարին իբր անձական անուն՝ ըստ կանոնի համաձայնութե անձականաց. զբ, * Որ փակեալ դրամբք երեկոյին՝ երեւեցար մետասանից ||. * Մի բարկանալ եղբօր մեղուցելոյ ||։

Այսպիսի ընդունելութիւնք զայնպիսի խնդիր առնուն, զորպիսի, պահանջեն բայք իւրեանց. զբ, * Հաստատեալ զանձն յանախտ կեանս՝ առաքինանայր ՚ի ճգնութիւն ||. * Նահատակք պանծալիք՝ և սիրեցեալք ՚ի յերկնաւոր հօրէն ||. * Օգտակար է դարձելոյ առ նա ||։

Ընդունելութիւնք յանգեալք ՚ի լոց՝ իբր բայ վարին՝ յաւելով յէական բայս. և առնուն զայնպիսի խնդիր, զորպիսի պահանջեն բայք իւրեանց. զբ, * Տալոց է ամենայն զահագին իւր վճիռ ||. * Արդարք յափշտակելոց են ամպովք ՚ի հրեշտակաց յերկինս ||. * Տեսանեմ միշտ զօրն զայն՝ յորում ՚ի դատաստանն գնալոց եմ ||։

Ընդունելութիւնք յանգեալք ՚ի չի՝ վարին իբր անձական. և ըստ համաձայնութե անձականաց յարին ՚ի գոյական. զբ,

* Խոնարհեցայց 'ի չարչարանս՝ չարչարելի բնութ մարդկան ||. * Պատմօղ լինել պետրոսի և յովհաննու սիրելոյ ||։

Եւ տաքս հաստատակօրէն առնուն զխնդիր 'ի տրական հոլովն. որ, * Գոհելիք եմ, և բաղձալիք վերնոյն պետութեանց ||։

## Յաղագս կազմութեան բանի ։

'Ի համաձայնութենէ մասանց բանի կազմի բան. երբեմն 'ի բազում բառից, և երբեմն 'ի սակաւուց՝ գտանի յերից. այսինքն՝ 'ի բայէ, յանուանէ բային, և 'ի խնդրոյ նորին. որ, * Հայր ծնանի զորդեակ ||. Ուր հայրն է անուն բային. ծնանին բայ. զորդեակն խնդիր։ Այլ երբեմն մի 'ի սոցունց զօրութեամբ դնի. որ, * Ես վրիպեցայ ||. * Ես անհամբեր ||. * Յուսամ առ քեզ ||. որ ես վրիպեցայ 'ի բարւոյն. ես եմ անհամբեր. դու յուսամ առ քեզ.

Իսկ երբեմն այլ մասունք բանի ևս յարին 'ի սոսա, ևս և բազում անուանք՝ ըստ զանազան պաշտօնի. որ կամ յատկացուցիչ, կամ բացայայտիչ, կամ ածական, են. որոց վասն եղեալ աստ զերիս համառօտ օրինակս՝ լուծցուք զնոսին կարգաւ՝ 'ի դիւրութիւն և 'ի յուսումն համբակաց ։

Օրինակ. ա. * Գանձ ցանկալի հանգիցէ 'ի բերան իմաստնոյ. այրք տգէտք կլլեն զնա ||. Առակ. իա. 20 ։ 'Ի սմա՝ գանձն է անուն բային ։ Ցանկալի՝ է ածական նորա ։ Հանգիցէ՝ է բայ ։ 'Ի բերան՝ է ներգոյական խնդիր բային ։ Իմաստնոյ՝ է յատկացուցիչ բերանոյն ։ Այրք՝ է անուն բային. Տգէտք՝ է ածական նորա ։ Կլլեն՝ է բայ ։ Զնա՝ է խնդիր սեռի նորա ։

Օրինակ. բ. * Որդեակ իմ՝ մի՛ նախանձիր ընդ չարս. և մի՛ ցանկանայցես կալ ընդ նոսա ||. Առակ. իդ. 1 ։ 'Ի սմա՝ որդեակն է կոչական անուն ։ Իմ՝ է ստացական դերանուն. և է լեալ ածական որդեկին ։ Մի նախանձիր՝ է բայ. որոյ անունն զօրութեամբ դնի. որ՝ դու ։ Ընդ չարս՝ է

խնդիր նորա ։ Եան է շաղկապ ։ Մէ՛ է մակբայ ։ Ցանկանայցես՝ է բայ · որոյ անունն է նոյն զօրութ(իւ)ն իմացեալ դերանունն · այս է՝ դու ։ Կալ՝ է արգելիչ խնդրոյ նր · ի ցանկանալոյն ։ Ընդունել՝ է խնդիր կալոյն ։

Օրինակ · Գ · * Հրեշտակք երկնից փափաքին հանդիսի կատարման սորա · որք ՚ի մահուն իւրեանց կենդանացան · ելին ՚ի կամաւն երկնից · յառնեցան ՚ի գունդ զուարթնոյն ‖ · Շար · ՃԺԷ ։ ՚Ի սմա՝ Հրեշտակք՝ է անուն բայի ։ Երկնից՝ է յատկացուցիչ հրեշտակաց ։ Փափաքեն՝ է բայ չեզոքական ։ Հանդիսի՝ է նորա խնդիր բնութեան ՚ի տրական հոլովի ։ Կատարման՝ է յատկացուցիչ հանդիսին ։ Սորա՝ է յատկացուցիչ կատարման ։ Որք՝ յարաբերէ զդերանունս սորա · և է անուն բայիս՝ կենդանացան · ելին և յառնեցան ։ ՚Ի մահուան իւրեանց՝ է երկրորդական խնդիր բայիս կենդանացան · որոյ բուն խնդիրն զօրութեան դնի ՚ի գործիական հոլովի · այս է՝ հոգւով ։ Իւրեանց՝ է յատկացուցիչ մահուան ։ Ելին՝ է չեզոքական բայ ։ ՚Ի կամաւն՝ է խնդիր նորա ։ Երկնից՝ է յատկացուցիչ կամացն ։ Յառնեցան՝ է ևս չեզոքական բայ ։ ՚Ի գունդ՝ է խնդիր նր ։
Զուարթնոյն՝ է յատկացուցիչ գնդին ։

# ՅԱՒԵԼՈՒԱԾ ·

Յետ ՚ի միտ առնլոյ ուսանողաց զհանգամանս մասանց բանի · և զքերականական կանոնս · ևս և յետ սակաւուք վարժելոյ ՚ի լուծումն շարադրութեց · եթէ ցանկան բարւոք ևս տեղեկանալ ուղղութեան հայկազեան լեզուի · և ճաշակել զքաղցրութիւն քերթողական արուեստի · պիտոյ է նոցա յիւրեանց ևս կազմել զշարադրութիւն բանից ։ Իսկ առ սկիզբն առնել այսմ՝ հարկ է նոցա զառաջինն՝ համառօտ ինչ աշխարհաբառ բանս դարձուցանել ՚ի գրաբառն · և ապա նոյնն առ սակաւ սակաւ զարգանալ ։ Այլ որպէս զի զարթիցէ ՚ի սիրտս նոցա փոյթ ՚ի սոյն յաճախելոյ՝ պատշաճ համա-

րիմ դնել աստանօր առաջի նոցա քանի մի աշխար-հաբառ խօսս՝ ( իբր աշխարհաբառ ոճոյ ) և յեղուլ զնոսին 'ի գրաբառն՝ հայելով յիմացուած նոցին ։

Հատընտիր համառօտ բանք յաշխարհաբառէ 'ի գրաբառն ։

ա · Հըմի՞ս ջէր յառաջըն կը դնեմ իմ հոգուս օրհնած բաներըն · կը-սորվըցընեմ ջէզ իմ խօսքերըն ։

* Ահաւասիկ առաջի առնեմ ձեզ զհոգւոյ իմոյ զպատ-գամս · ուսուցից ձեզ զբանս իմ || · Առակ · ա · 23 ։

բ Աղաչանօք ջէզ ախպէրներ , մըտ դնէք իմ մխիթարական բանին ։

* Աղաչեմ զձեզ եղբարք անսալ բանիս մխիթարութեան || · Եբր · ժգ · 22 ։

գ · Իմաստութիւն լսեցէք , ու իմաստուն դարձէք ։

* Լուարուք զիմաստութիւն , և իմաստունք լերուք || · Առակ · ը ։

դ · Դուք մէկ դնելու փոխարէն , կուզէ՞ք հրաման տալու ։

* Դուք փոխանակ լսելոյ՝ հրամանատու կամիք լինել || · Մովսէ ։

ե · Դուք պէտք քիչ խօսէք , ու շատ իմանաք ։

* Պարտ է ձեզ սակաւ բարբառել , և շատ իմանալ || · Նեղ ։

զ · Մեք՝ ինչ որ հրամանոց եղեր մեզ , պէտք տանինք , դէ-պաղը գէո բարձր տեղէն ջէր ականջըն կանչելով · այսու-հետեւ տանելն կամ չտանելն յամէն մարդու կամքն է ։

* Մեք՝ զոր հրամայեալն է մեզ՝ արասցուք , աղաղակելով՝ որպէս դէտ 'ի բարձր դիտանոցէ 'ի լսելիս ձեր · այ-սուհետեւ առնելն և ոչ առնելն 'ի կամս ազատութեան իւրաքանչիւր անձին է || · Շնորհ · ընդհանր ։

է · Չըլլինի որ ջէր միջէն մինն թամպալութեան համար՝ ագիտութեան կուրութեն սիրէ ։

* Մի ոք 'ի ձէնջ սիրեսցէ զկուրութիւն տգիտութեան յա-ղագս ծուլութեան || · Շնորհ · ընդհանր ։

ը · Ով որ անօգուտ բաներու կհետեւին , խելքէ պակաս են ։

* Ոյք զհետ երթան զնանրութեան , պակասամիտք են || · Առակ · ժբ · 11 · ջեռակը ։

Ե. Ով որ իմաստնոց հետ նստի, իմաստուն կլինի ։

* Որ գնայ ընդ իմաստունս, իմաստուն եղիցի || Առակ. ԺԳ ։

Զ. Անփոյթ մարդն կծուոյ 'ի ձեռ կարօտութեան ։

* Ընհողն 'ի կարօտութե եղիցի || Առակ. ԻԳ. 23 ։

Է. Միամիտ մարդն յամէն բանի կհաւատայ ։

* Անմեղն հաւատայ ա՛մ բանի || Առակ. ԺԴ. 15 ։

Ը. Վատ մարդն երբ նախատինք կու կերէ, չէ ամաչելեց ։

* Թէպէտ և նախատի վատն, ոչ ամաչէ || Առակ. Ե ։

Թ. Խորագէտ մարդն իւր անպատուութիւն կծածկէ ։

* Թագուցանէ զանարգանս իւր այր խորագէտ || Առակ ։

Ժ. Բարկացող մարդն առանց մտածելոյ կփորձէ ։

* Բարկամիտն գործէ առանց խորհրդոյ || Առակ. ԺԳ ։

ԺԱ. Ծանր խօսքն կպատճառէ բարկութիւն ։

* Բան խիստ յարուցանէ զբարկութի || Առակ. ԺԵ. 1 ։

ԺԲ. Երկայնամիտ մարդն էն լեզուոյ քան ըն զօրեղն. ով որ իւր բարկութեն յաղթէ, էն լեզուոյ քան ըն որ քաղաք առնէ ։

* Լաւ է այր երկայնամիտ քան զհզօր ... և որ յաղթէ բարկուե՛ք քան որ առնուցու զքաղաք հզօր || Առակ. ԺԶ ։

ԺԳ. Մէն պատճառ յերանելոյ էն անձն, որ կամք երբեկամ հրաժարէ ։

* Պատճառս խնդրէ այր, որ կամիցի քակել 'ի բարե-կամաց իւրոց || Առակ. ԺԸ. 1. ֆետագը ։

ԺԴ. Աղքատն անձն որ ընկերաց հետ երկուք կվարվի, տէ-վեր հետ խաղաղութէ ունի ։

* Աղքատն որ՝ որ առ ընկերս բարկուե վարի՝ առ դեւս խաղաղութի ունի || Սիրք. յոհ. Գ. յորդ ։

ԺԵ. Ով որ իւրն ունի եար ընկերի հետ, տրդնաւորոյ առաջ-նայն հետ ։

* Որ ոխս ունի ընդ ընկերի, դաշնաւոր է սատանայի || Ներսէս ։

ԺԶ. Ի նկատէս այ հետ մեծութեան կանաչութեան էն անձն, որ դե-վերի հետ դաշնակից է ։

* Զի որ առ ամ սիրով միաբանութի ունիցի, որ դիւաց դաշնակից է || Սիրք. Ա. յորդ. 7 ։

ԺԷ. Զնոյ այլ էր. որ 'ի բնէ ազնուերու պատճառն լաւ կերպե-ցոյց այս, որպէս ունին ։

* Ձեռք են՝ որ այնպէս նկարագրէ զպատկեր աշակերտին քում, ոչ սէրն || Մարգ. ա. յաղագս. 7.

Է. Սէրն ոչ չափ ունի ոչ սահման.

* Սիրոյ սահման և չափ ոչ է || Լամբ. Եպիսկ.

Ը. Ընկերը սիրելով Այ սէրը կատարուի.

* Սիրովն ընկերին սէրն Այ կատարի || Մարգ. ա. յաղագս. 7.

Թ. Ով որ եղբօր սիրոյ համար անձն չխնայէ, անոր եղբօրն ինչքին ի՞նչպէս կխնայէ.

* Որ յանձն չխնայիցէ սակս սիրոյ եղբօրն, յինչսն զի՞արդ խնայեսցէ || Մարգ. ա. յաղագս. 6.

Ժ. Ով որ իր անձին կորուստին համար հոգ չտանի, այլոց փրկութեան համար ի՞նչպէս հոգ կտանի.

* Որ զանձին կորուստ անփոյթ առնիցէ, վասն այլոց զի՞արդ հոգ փրկութեան լինիցի || Խոսրով.

ԺԱ. Ինչպէս չէ կարելի մէկ աչքով երկինքն նայիլ և մէկ աչքով երկիր, այնպէս ալ մարդոյ միտքն չի կրնար Այ բան խորհիլ և աշխարհի.

* Որպէս ոչ կարելի է միով ակամբ նայել յերկինս՝ և միւսովն յերկիր, այնպէս միտք ոչ կարեն հոգալ զԱյն և զաշխարհիս || Վարք հարց. Է.

ԺԲ. Ած սէր է. և ամենուն առջևն իր պարգևն դրեց. և կուզէ որ ամենքն խլեն զայն. և կբարկանայ նոցա վերայ, որ չփափաքին առնուլ զայն յօժարութեամբ.

* Աստուած է սէր, և ամենեցուն առաջի եդ զպարգևս իւր. և կամի՝ զի ամենեքեան յափշտակեսցեն զայն. և բարկանայ այնոցիկ՝ որ ոչ մեծաւ յօժարութեամբ փափաքին առնուլ || Իգնատ. ծա. 5.

ԺԳ. Ով որ բարւոյ փոխարէն չար կհատուցանէ, չարն նորա տանէն չի պակասելոց.

* Որ հատուցանէ չար փխնկ բարւոյ, չար 'ի տանէ նորա մի՛ պակասեսցէ || Առակ. ԺԷ. 13.

ԺԴ. Մեր օրինաց ընդդէմ նենգաւորութիւն առնել ընդդէմ տերանց.

* Ատելի է օրինաց մերոց նենգաւորութիւն տերանց || Շնորհալի. ընդհանր.

ե . Տկարքն հզօրագոյններէն կզգուշանան :
* Տկարքն զգուշանան ՚ի հզօրագունիցն || . Մոմբէր :

զ . Որովհետեւ թշնամիներու մէջն ենք միշտ , շատ զգուշութեան պէ-տք ունինք մենք :
* Ա՜ զի ՚ի մէջ որոգայթից շրջիմք , նախ իւր բազում արթնութեան մեզ պէտք են || . Սարգ . ա . յոհն . 5 :

է . Ամենքերնիս խոր քնով քնացած ենք . և ճշմարտութիւնը մեզ երազի երեւոյթ նման :
* Խոր ՚ի քուն ննջեմք ամենեքեան . և երազ թուի մեզ ճշմարտութիւն || . Եղեգ . խր :

ը . Զաւակներն զօրաց հայրերը կ'ըսեն . և իմաստուն վարդապետը իր աշակերտները հայրերը որ առաքինութե գործեն :
* Փող յորդորէ զզօրս ՚ի պատերազմ . և իմաստուն վրդ՝ զաշակերտս իւր ՚ի գործ առաքինութե || . Նեղոս :

թ . Որպէս զրահ հագնողին նետ չի դպչիր , այնպէս ալ անախտին չի խոցուիր տրտմութենով :
* Որպէս զրահաւորն նետս ոչ ընդունի , նոյնպէս անախտն ոչ խոցի ՚ի տրտմութե || . Նեղոս :

ժ . Փահլէվանի պէս մերկցիր . և իւղով օծուէ . որ թշնամւոյ ձեռքերը քեզ հետ չկարենան :
* Մերկեա՛ց իբր զմեծամարտիկ , և օ՛ծ իւղովն քեզ · զի մի՛ կուռեսցին ՚ի քեզ ձեռք ախոյեանին || . Եղեգ . խը :

ժա . Աշխատող կրօնաւորն նման է անխոնջ փահլէվանի , որ միջէն չը բռնուիր :
* Միայնակեաց անխոնջ ըմբիշ է մարկ , որ ոչ զմիջոյ ըմբռնի || . Նեղոս .

ժբ . Ակնածութե յետեւէն գնալով շատ մարդիկ ճշմարտութե ճանապարհէն մոլորեցան :
* Ակնածութե ամենայն ծառայելով մոլորեցան ՚ի ճշմարտութեն ճանապարհէն || . Լամբ . եկեղ .

ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ

# ՑԱՆԿ

Հարկաւոր փնտռելեաց պարունակելոց յերկրորդ և յերրորդ մասին այսր ժողովածուութեան՝ ըստ կարգի այբուբենից .


Ածական անուն . 182 . 298 . 309

Ածականք առանց գոյականի . 182 . 306

Ածանցական անուն . 193

Ածանցական դերան" . 224

Ածանցականակերպ մասնիկք . 193

Աներևոյթ բայ . 247

Անկանոն բայ . 231

Անկատար ժամանակ . 240

Անուանական հոլով . 211

Անուն . 180 . 278

Անուն բայի . 337

Անցեալ ժամանակ . 239

Անցողական բայ . 237 . 365

Ապառնի ժամանակ . 240

Առքական բայ . 231

Արգելիչ խնդրոյ . 393

Բաղադրեալ անուն . 192

Բաղադրեալ բայ . 235

Բաղդատական ածականք . 184

Բայ . 230 . 345

Բան . 177 . 407

Բանք յռամկաբառէ ՚ի գրաբառն . 464

Բառ . 176

Բարդ անուն . 190

Բարդ բայ . 235

Բայայայտիչ . 278

Բացառական հոլով . 213

Բղխմունք բայից . 253

Բութ . 428

Գերադրական ածականք . 184

Գերակատար ժամ՛կ . 240

Գիր . 169

Գլխաւոր մասունք քերականութե . 169

Գոյական անուն . 180 . 277

Գոյականք իբր ածկն . 308

Գործիական հոլով . 213

Դերանուն . 221 . 317

Դերբայք . 249 . 395

Դէմք բայից . 239

Դէմք դերանուանց . 225

Դիմորոշականք . 223 . 334

Դրադէմ բայք . 241 . 401

Դրական ածականք . 183

Եղանակ բայից . 242

Ենթամնայ . 426

Երկար . 433

Էական բայ . 230 . 387

Էական դերան՛ · 221 · 319

Ընդհանուր կամ հա-
սարակ անուն · 181
Ընդունելութիւն · 255 · 397
Ընդունել՛ն եալ · 258 · 401
Ընդունել՛ն լի 259 · 404
Ընդունել՛ · լոց · 258
Ընդունել՛ · ող · 257 · 398

Թիւ · 428
Թիւք անուանց · 207
Թիւք բայից · 238
Թիւք դերանուանց · 226
Թիւք ընդունելութեց · 256
Թուական անուանք · 186
310 · 311

Ժամանակ բայից · 239
Ժամանակ ընդունե-
լութեց · 256

Լծորդութիք բայից · 251
Լուծմունք շարադրու-
թեանց · 418

Խնդիր ածական ան-
ուանց · 291
Խնդիր ածականայ յան-
գելոց ՚ի ին · 295
Խնդիր բաղդատականն
անուանց · 297
Խնդիր բայի · 345 · 390
Խնդիր բնութ՛ կրաւոր-
ական բայից · 370
Խնդիր բնութ՛ ներ-
գործական բայից · 350
Խնդիր գոյակն ան-
ուանց · 286
Խնդիր դիմազուրկ
բայից · 386
Խնդիր էական բայից · 387
Խնդիր թուական ան-
ուանց · 310
Խնդիր հարցական ան-
ուանց · 310
Խնդիր մասնական ան-
ուանց · 310
Խնդիր չէզոքական
բայից · 370
Խնդիր սեռի ներգոր-
ծական և հասարակ
բայից · 346
Խոնարհմունք բայից · 250
Խոտորմունք խոնարհ-
մանց բայից · 254
Խրթին շարադրութ՛ · 410

Կազմութիւն բանի · 407
Կանոնաւոր բայ · 231
Կատարեալ ժամանակ · 240
Կետադրութիւն · 423
Կոչական հոլով · 214
Կրաւորական բայ · 232
Կրկնածանցական ա-
նուն · 207

Համաձայնութ՛ ածա-
կան անուանց՝ ընդ-
ածականայ · 309

Համաձայնութիւն ածական անուանց՝ ընդ գոյականաց · 298
Համաձայնութիւն անուանց ընդ միմեանս · 277
Համաձայնութիւն բայից · 337
Համաձայնութիւն դերանուանց ընդ անուանս · 319
Համաձայնութիւն դերանուանց ընդ միմեանս · 317
Համաձայնութիւն ընդունելութեց · 397
Համաձայնութիւն միջական անուանց · 310
Համաձայնութիւնք մասանց բանի · 276
Համառօտութիւն քերականութե · 437
Հայցական հոլով · 212
Հանրական անուանք · 186 · 218 · 312
Հասարակ բայ · 232
Հարցական անուանք · 185 219 · 315 · 310
Հարցումն և պատասխանի · 405
Հաւաքական անուն · 181
Հոլովմունք անուանց · 215
Հոլովք անուանց · 210
Հոլովք և հոլովմունք դերանուանց · 226
Հոլովք ընդունելութեց · 256
Հրամայական եղանակ · 245

Ձեք անուանց · 190
Ձեք բայից · 235
Ձեք ընդունելութեց · 256

Մակբայ · 263
Մասնական անուանք · 185 218 · 220 · 315 · 310
Մասունք բանի · 179
Միջակ անուանք · 183
Միջակ շարադրութիւն · 408
Միջին անուանք · 185 · 310
Միջակէտ · 424
Միջարկութիւն · 274

Յաճախութիւն բայից · 236
Յատկացուցիչ 282
Յատուկ անուն · 181 · 28[illegible]
Յարաբարդ անուն · 192
Յարաբերական դերանուն · 22[illegible] · 228 · 328
Յարակատար ժամանակ · 240
Յարմարադրութիւն · 422

Նախագաղափար կմ նախատիպ անուն · 192
Նախագաղափար բայ · 237
Նախագաղափ" դերան" · 224
Նախադրութիւն · 260
Նախդիր ածականաց · 304
Նախդիր դերանուանց՝ այս · այդ · այն · 323
Նախդիր ՚ի բացայայտիչս · 281

Նախդիր 'ի յատկա- ցուցիչ · 283
Նախդիր խնդրոյ բայ- ից · 391
Ներգործական հոլով · 214
Ներգործական բայ · 232
Ներկայ ժամանակ · 239
Նշանագիր · 436
Նշանագրութ՟ · 428

Շաղկապ · 271
Շեշտ · 431

Ոլորակ · 434
Ուղղական հոլով · 211

Չեզոքական բայ · 232

Պատմական հոլով · 213
Պատուագրութ՟ի · 435
Պարագայք անուանց · 187
Պարագայք բայից · 231
Պարագայք դերան- ուանց · 223
Պարագայք ընդունել՟ · 256
Պարառական հոլով · 213
Պարզ անուն · 190
Պարզ բայ · 235
Պարզ շարադրութ՟ի · 407
Պարոյկ · 434
Պէսպիսութ՟ի շարա- դրութ՟եց · 407

Սահմանական եղա- նակ · 242
Սեռական հոլով · 211
Սեռք անուանց · 187
Սեռք բայից · 232
Սեռք ընդունելութ՟եց · 256
Ստացական դերա- նուն · 222 · 227 · 327
Ստորադասական եղանակ · 246
Ստորակէտ · 423

Վանկ · 174
Վերացեալ անուանք փոխ՟ ածականի · 308
Վերբերական ան- ուանք · 185 · 313
Վերջակէտ · 424

Տառ · 169
Տեսակք անուանց · 192
Տեսակք բայից · 237
Տեսակք դերանուանց · 224
Տեսակք ընդունելութ՟եց · 256
Տրական հոլով · 211

Ցուցական դերա- նուն · 221 · 226 · 321 322 · 326

Փակագիր · 436
Փարէնթազիզ, կամ փակագիծ · 426

Քերականութ՟ի · 169

Օրինակ պէսպէս շա- րադրութ՟եց · 411

# ՑԱՆԿ

Գլխոց խորագրութիւնք մասանց քերականութեան ։

## ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՀԱՅԿԱԶԵԱՆ ԼԵԶՈՒԻ ։

## ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ ։

Յաղագս գործածութեան մասանց բանի ։ 3

ա. Յաղագս հոլովման անուանց ։ 3
Յաղագս հասարակ հոլովման անուանց ։ 5
բ. Յաղագս յատուկ հոլովման անուանց ։ 38
գ. Յաղագս հոլովմանց միջակեան անուանց ։ 44
դ. Յաղագս հոլովման դերանուանց ։ 50
ե. Յաղագս խոնարհմանց բայից ըստ չորից լծորդութեանց ։
Եւ նոյն՝ յաղագս խոնարհմանց էական բայից ։ 56
զ. Խոնարհմունք ներգործական բայից ըստ առաջին լծորդութեան ։ 61
է. Խոնարհմունք անցողական բայից ։ 71
ը. Խոնարհմունք ներգործական բայից՝ ըստ երկրորդ լծորդութեան ։ 76
թ. Խոնարհմունք ներգործական բայից՝ ըստ երրորդ լծորդ՛ ։ 85
ժ. Խոնարհմունք ներգործակերպ չէզոքական բայից՝ ըստ առաջին լծորդութեան ։ 93
ժա. Խոնարհմունք ներգործակերպ չէզոքական բայից՝ ըստ երկրորդ լծորդութեան ։ 97
ժբ. Խոնարհմունք ներգործակերպ չէզոքական բայից՝ ըստ երրորդ լծորդութեան ։ 105
ժգ. Խոնարհմունք ձայնակրական բայից ։ 108
ժդ. Խոնարհմունք հասարակ բայից ։ 114
ժե. Յաղագս խոնարհմանց անկանոն բայից ։ 118
ժզ. Յաղագս խոնարհմանց պակասաւոր բայից ։ 125
ժէ. Խոնարհմունք դիմաւորակ բայից ։ 133

ԺԸ. Յաղագս նախադրութեանց ։ 136
ԺԹ. Յաղագս մակբայից ։ 143
Ի. Յաղագս շաղկապաց ։ 155
ԻԱ. Յաղագս միջարկութեանց ։ 163

## ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

*Յաղագս շարակարգութեան մասանց բանի ։* 136

Ա. Յաղագս քերականութեան, թէ զինչ իցէ, և քանի՛
գլխաւոր մասունք նորա ։ 169
Յաղագս գրոյ ։ 169
Բ. Յաղագս վանկի ։ 174
Գ. Յաղագս բառի ։ 176
Դ. Յաղագս բանի ։ 177
Ե. Յաղագս անուան. թէ զինչ և քանի պատահմունք իցէ ։ 180
Զ. Յաղագս պարագայից անուան. Եւ նոյն՝ յաղագս սեռից. 187
Է. Յաղագս ձեւոց անուանց ։ 190
Ը. Յաղագս տեսակաց անուանց ։ 192
Թ. Յաղագս թուոց անուանց ։ 207
Ժ. Յաղագս հոլովից անուանց ։ 210
ԺԱ. Յաղագս հոլովմանց անուանց ։ 215
ԺԲ. Յաղագս դերանուան. թէ զինչ և քանի պատահմունք իցէ ։ 221
ԺԳ. Յաղագս պարագայից դերանուանց. 223
ԺԴ. Յաղագս բայի. թէ զինչ և քանի պատահմունք իցէ ։ 230
ԺԵ. Յաղագս պարագայից բայից. Եւ նոյն՝ յաղագս սեռից. 231
ԺԶ. Յաղագս ձեւոց բայից ։ 235
ԺԷ. Յաղագս տեսակաց բայից ։ 237
ԺԸ. Յաղագս թուոց, և դիմաց բայից ։ 238
ԺԹ. Յաղագս ժամանակաց բայից ։ 239
Ի. Յաղագս եղանակաց բայից ։ 242
Յաղագս սահմանական եղանակի ։ 242
Յաղագս հրամայական եղանակի ։ 245
Յաղագս ստորադասական եղանակի ։ 246
Յաղագս աներեւոյթ եղանակի ։ 247
ԻԱ. Յաղագս խոնարհմանց և լծորդութեանց բայից, և
եղծմանց նոցին ։ 250

ԻԲ · Խոտորմունք ինչ ՚ի խոնարհմանս բայից · 254
ԻԳ · Յաղագս ընդունելութեան · Եւ զի՞նչ իցէ, և քանի պարագայք նորա · 255
ԻԴ · Գիտելիք ինչ ՚ի վ՟ ընդունելութե՟ց ՚ի մասնաւորի · 257
ԻԵ · Յաղագս նախադրութեան · 260
Այսն խնդրառութե՟ նախադրութե՟ցն, ընդ · ըստ · ըստու · որպէս · ան · 262
ԻԶ · Յաղագս մակբայի · 263
ԻԷ · Յաղագս շաղկապի · 271
ԻԸ · Յաղագս միջարկութեան · 274

## ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ ·

*Յաղագս համաձայնութե՟ մասանց բանի ·* 276

Ա · Յաղագս համաձայնութեան գոյական անուանց ընդ գոյականաց՝ երբ բացայայտիչ, կամ
Յաղագս բացայայտչի · 278
Բ · Յաղագս համաձայնութե՟ գոյական անուանց ընդ գոյականաց՝ երբ յատկացուցիչ · կամ
Յաղագս յատկացուցչի · 282
Գ · Յաղագս համաձայնութե՟ գոյական անուանց ընդ գոյականաց՝ երբ խնդիր · կամ
Յաղագս խնդրոյ գոյականաց · 285
Դ · Յաղագս համաձայնութեան գոյական անուանց ընդ ածականաց · կամ
Յաղագս խնդրոյ ածականաց · 291
Այսն խնդրոյ ածականաց յանգելոց ՚ի իչ · 295
Այսն խնդրոյ ածական անուանց բաղդատականաց · 297
Ե · Յաղագս համաձայնութե՟ ածական անուանց ընդ գոյականաց, 298
Գոյական անուանք իբր ածականք · 308
Աներացեալ անուանք փոխանակ ածականի · 308
Զ · Յաղագս համաձայնութե՟ ածական անուանց ընդ ածականաց, 309

Է. Յաղագս համաձայնութեան միջական անուանց, որք ասին թուականք, հանրականք, վերբերականք, հարցականք, և մասնականք. 310
Վասն թուական անուանց. 311
Վասն հանրական անուանցն՝ ամենեքեան, և ամենեքին, ընդ որս են և իւրաքանչիւրեան, և իւրաքանչիւրքին. 312
Վասն վերբերական անուանց, որք են, այսորիկ, այդորիկ, այնորիկ. սոյնորիկ, դոյնորիկ, նոյնորիկ. այսքան, այդքան, և այլն. 313
Վասն հարցական անուանցս, ո՞. ո՞վ. զի՞նչ. ի՞նչ. և կամ՝ ո՞ր. ո՞րքան. քանի՞ ո՞րպիսի. զի՞նչպիսի. 314
Վասն մասնական անուանցս, ոմն. ոք. իմն. ինչ։ ընդ որս են և ոք, մի իմն, կամ մի ոմն. որ ոք. որ ինչ. ոչինչ. ամ ինչ. որ ինչ միանգամ. և այլն. 315
Վասն մասնական անուանցն՝ միւս. երկոքանչիւր, և իւրաքանչիւր. 317
Ը. Յաղագս համաձայնութեան դերանուանց ընդ դերանուանս. 317
Թ. Յաղագս համաձայնութեան դերանուանց ընդ անուանց. և նախ՝
Յաղագս համաձայնութեան էական դերանուանցն՝ ես. դու. ինքն. իւր. 319
Ժ. Յաղագս համաձայնութեան ցուցական դերանուանցն՝ սա. դա. նա. 321
ԺԱ. Յաղագս համաձայնութեան ցուցական դերանուանցն՝ այս. այդ. այն. 322
ԺԲ. Յաղագս համաձայնութեան ցուցական դերանուանցն՝ սոյն. դոյն. նոյն. 326
ԺԳ. Յաղագս համաձայնութեան ստացական դերանուանցն՝ իմ. քո. մեր. ձեր. իւր, իւրոյ. 327
ԺԴ. Յաղագս համաձայնութեան յարաբերական դերանուանն որ՝ 328
ԺԵ. Յաղագս դիմորոշական յօդիցն՝ ս. դ. ն. 334
ԺԶ. Յաղագս համաձայնութեան բայի ընդ անուան, ընդ դերանուան և ընդ ընդունելութեան. 337

Յաղագս առաջին համաձայնութե էակաց · նաև
Յաղագս անուան էակի · 337
ԺԷ · Յաղագս երկրորդ համաձայնութե էակաց · նաև
Յաղագս խնդրոյ էակաց · 345
ԺԸ · Յաղագս խնդրոյ ուստի ներգործէին և հասանէ էակաց · 346
ԺԹ · Յաղագս խնդրոյ էութե ներգործական էակաց · 350
Ի · Յաղագս խնդրոյ ն[illegible]արական էակաց · 369
ԻԱ · Յաղագս խնդրոյ [illegible]ղոտական էակաց · 370
ԻԲ · Յաղագս խնդրութե դիմաւորէ էակաց · 386
ԻԳ · Յաղագս խնդրութեան եղական էակաց · 387
ԻԴ · Գիտելիք ինչ ՚ի վերայ խնդրոյ էակաց · 390
ԻԵ · Յաղագս աներեւոյթ էակաց · 392
Արգելիք խնդրոյ էակաց · 393
ԻԶ · Յաղագս դերէակաց · 395
ԻԷ · Յաղագս համաձայնութե ընդունելութեց ՚ի հասարակէ · 397
ԻԸ · Յաղագս ընդունելութեց յանգելոց ՚ի օղ · 398
ԻԹ · Յաղագս ընդունելութեց յանգելոց ՚ի եալ · 401
Լ · Յաղագս ընդունելութեց յանգելոց ՚ի ել · 404
ԼԱ · Յաղագս համաձայնութե պատասխանւոյ ընդ հարցման · 405
ԼԲ · Յաղագս նշանակէ բանի, և պէսպէսութե շարադրութեց · 407
Օրինակ պարզ շարադրութեան · 411
Օրինակ միջակ շարադրութեան · 412
Օրինակ խրթին շարադրութեան 416
ԼԳ · Յաղագս լուծման պէսպէս շարադրութեանց · 418
Լուծումն պարզ շարադրութեան · 418
Լուծումն միջակ շարադրութեան · 419
Լուծումն խրթին շարադրութեան · 421
ԼԴ · Յաղագս յարմարագրութեան · 422
Վասն կէտադրութեան · 423
Վասն նշանադրութեան · 428
Վասն պատուադրութեան · 435
Համառօտութի քերականութե · 437
Յաւելուած · 463
Հարցմունք համառօտ էանք յաղագս ... ՚ի
գրաբառ : 464

Книги твоје

Свѣт[illegible] [illegible] авалимое

в Книги

Лаврен[illegible]

По кинду с лаврниото

Грешникови Зидан[illegible]

L0032504